

ԷՒԱԿԱՏԱՐ ՎԱՐՔ

ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑ

Որք կան 'ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց։

Յօրինեալ վաւերական բանիւք ճառընդրաց մերոց և այլոց աղգաց, հանդերձ ծանօթութիւնք։

'Ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաչակերտութէ մեծին Մխիթարայ Աբբայհօր։

Հրամանաւ Տ՚ն Տ՚ն Սրեփաննոսի Ագոնց՝ Աբբայի և Արքեպիսկոպոսի։

Արդեամբք ա՚ծասէր Մանուկ Աղայի Կարնեցւոյ մահտեսի Ա՚ծատուրեան։

ՀԱՏՈՐ Ի։

Միջոց Խաչին 'ի կիսոյ և անդր՝ ցԳիւտ խաչ։

'Ի Գրիգորիսէ աղոճանից կթղկսէ՝ մինչ 'Ի Դեմետրիոս և 'ի բասիլիսկոս։



1813. ԻՎԵՆԵՏԻԿ. ՃՄԼԲ։

Ի Վանս Սբ՚յն Ղազարու։

A/1023



Լուսաւորիչն ազգին մե բոյ.
Ճգնիւր ի լեառն սե պուհոյ:

ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ

Սբ̄յն Գրիգորիսի աղուՀանից կԹղ̄կսի։

Հ. սեպտ. 30. և մարտ. 6։ Ճառընտիր Ը. երես. նԺԲ = նիդ. և Գ. ամկԹ = ամհԵ։
Յովհ. երշնկացի. գով։



ԸՐԱՇԱԼԻ ԳԻՒՏ նշխարաց՝ սբ̄յն գրիգորիսի, ոյր վ՚ս առանձին տօն սահմանեցաւ յեկեղեցի հայաստանեայց և աղուՀանից, եղև յամի տ̄ն իբր 489. հարիւր և քառասուն եօթն ամօք յետոյ քան զկատարումն նր̄, ը̄ օրինակիս ը̄ այսմիկ։ Յաւուրս մարզպանութ̄ն հայոց՝ մեծին վահանայ մամիկոնէի, և թ̄գրութ̄ն զենոնի կայսեր յունաց, թագաւորէր յաղուՀանից Ծին ՚ի սերնդոց հայկազունեաց բարեպաշտն վաչագան կմ վաչական որդի վաչէի որդւոյ արս վաղենայ, այր առաքինի և գովելի յոյժ։ Սա բաց յայլոց Ծաշէն գործոց, և ՚ի գեղեցիկ տնտեսութ̄ց ՚ի պայծառութ̄ի եկեղեցւոյ, մեծա՚պ տենչանօք ցանկացաւ դտանել

զնշխարս լուսաւորչին աղուհանից , ՆՊ ՆԲյն
գրիգորիսի առաջին կաթուղիկոսի աղուհա-
նից՝ թոռին ՆԲյ հօրն մերոյ գրիգորի լուսա-
ւորչի , գիտելով զնոյն յորդոր մեծ լինել բա-
րեպաշտութեան բնակչաց Ծին իւրոյ ։ Արդ՝
թէպէտև տեղեկացեալ գիտէր արքայ գրա-
ւոր և անգիր աւանդութ , թէ յետ կատար-
ման ՆԲյն գրիգորիսի 'ի վատնեան կամ 'ի
վատնիանեան դաշտի յեզր կասպից ծովուն՝
աշակերտք նր բերին և թաղեցին զմարմին
նր 'ի փոքր սիւնիս յամարաս գիւղն մօտ յե-
կեղեցին հիմնարկեալ 'ի մեծէն գրիգորէ լու-
սաւորչէ և զարդարեալ 'ի նմին գրիգորիսէ ,
բայց կամ նոքին իսկ՝ որք թաղեցին , աննշան
արարեալ էին զտեղին , զի մի՛ բարձցի յօտա-
րաց , և մի՛ ոտնակոխ լիցի հինից , և կամ 'ի
բազմութէ ամոց անցելոց անյայտ իմն եղեալ էր ։
Ապա խորհուրդ կալեալ թագաւորին ԸԲ իւ-
րոյ դրան երիցունս՝ հնարս ինչ գտանել վՆ
գիւտի խնդրոյն , որում էրն ցանկացօղ , կո-
չեաց զվանաց երէց գեղջն ամարասայ , և
հարցանէր՝ թէ կա՞յ ինչ նշան գերեզմանի
ուրուք առ եկեղեցեաւն ։ Եւ նա ասէ . յո-
լով են գերեզմանք մերձ յեկեղեցին . բայց
տեղին է աւերակ՝ ոտնակոխ լեալ յերեսաց
հինախաղաց ժամանակին ։ Յայնժամ խոր-
հեցաւ ՆԾասէր թգրն , և ասէ . եթէ զհող
տեղեացն 'ի բաց հրամայեմ պեղել , գուցէ
տակաւին ոչ գտանի մարմին ՆԲյն 'ի բազմու-
թէ գերեզմանացն . այլ պարտ և արժան է
ապաստան լինել յաղօթս և 'ի պահս , և

հայ-

հայցել միաբան յամենողորմն Աստ՝ որ տայ ա-
ռատապէս զտուրս բարիս այնոցիկ , որք ձըշ-
մարիտ հաւատով խնդրեն ։

Այս նոյնժամայն առներ հրովարտակ թագաւո-
րէ ամ կողմանս իւրոյ հրոսէնն օրհնակ զայս ։
Ես եհաս առնես և երիցս առնես և սարկաւագս առնես
և անապատաւորս և զոլորը ուխտ եկեղեցւոյ
ողջոյն ։ Յուշ լիցի առնեցուն ձեզ՝ անյա-
պաղ գալ ժողովիլ առ մեզ՝ պաշտել և պա-
հել և աղօթս առնել առ մարդասէրն Աստ ,
զի շնորհեսցէ ինձ զանձկալի գիւտ մեծի
գանձին ծածկելոյ՝ առաքելագործ լուսա-
ւորչին մերոյ գրիգորիսի ։ ողջ լերուք ։

Ապա այսպիսի հրաման արքային ընկալեալ
ամ եղեալ և քահանային՝ չոյ առնելին կղե-
րիկոսաք , հանդերձ նշանաւոր խաչի և եկե-
ղեցական զարդուք , և առհասարակ հասա-
նելին փութապես ի սեպհական գիւղն ար-
քունի՝ դուստրական կոչեցեալ ։ քանզի և պա-
տուհաս մեծ ի վէր կայր՝ որոյ գանդաղելոյն
գալ ։ և անդ աւուրս երիս յոքնահռչակ կա-
տարելին զհիշատակ Աստ ։ ուր և ինքնին Թա-
գաւորն Աստ բարեպաշտ սովորութենն ոտնա-
կացաւթէ սպասաւորեր սեղանոյ եկեղեցա-
կանացն ժողովելոց ։

Այլ ի կատարել կանոնին այնմիկ՝ կամ եղև
արքային առնուլ ընդ իւր մանն ի նշխարաց սբոյ
Հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի , և զփառա-
ւոր կուսանացն Հռիփսիմեայ և գայիա-
նեայ , զորս բերեալ էր յաղաշանս Աստ
Թէ , որ և մատեհաս երեց՝ աշակերտ երա-

նելւոյն յովհաննու մանդակունւոյ, և եդեալ
էր 'ի գեօղն դարահոճ՝ կնքեալ մատանեաւ
իւրով. վ̄ն̄յ առաքեաց զնա ինքն զտ̄ր մատթէ
հանդերձ այլովք երիցամբք՝ բերել զայն
ն̄բ նշխարս 'ի բանակն. զի միջնորդութ̄ն նո-
ցին յաջողեսցէ ա̄ծ զկատարումն փափաքա-
նաց իւրոց:

Եւ 'ի մերձենալ նոցա 'ի գիւղն դուտական՝
ը̄առաջ ելանէր ն̄բ նշխարաց նա ինքն բա-
րեպաշտ թագաւորն հանդերձ քն̄ասէր դըշ-
խոյիւն և ա̄մ բազմութ̄ն ժողովելոյ՝ 'ի ձայն
սաղմոսաց յիւրաքանչիւր դասուց և բուր-
մամբ խնկոց՝ հանդերձ խաչիւք և աւե-
տարանօք. և մերձեալ անձամբ առ երէցն՝
որ զնշխարս բարձեալ ունէր, սպասաւորէր
յարգու̄ն ինքնին թագաւորն. մինչև ածին
զն̄բ նշխարսն 'ի հանգստարան ն̄բյն զաքա-
րիայ և պանդալէոնի, ֆ̄ 'ի վկայարանն՝ ուր
կային և նշխարք ինչ երկոցունց ն̄բցս: Յայն-
ժամ զուարճացեալ թագաւորն վաչական,
և վստահ լեալ յիւր մեծահաւատ խնդիրն
և 'ի մաղթանս ժողովելոցն՝ ասէ առ ամե-
նեսեան. գիտեմ հաստատուն, զի տայ
ինձ ա̄ծ 'ի ձեռն մեծացս այսոցիկ ն̄բց զնըշ-
խարս ն̄բյն գրիգորիսի:

Առնոյր այնուհետև թագաւորն զբազմու-
թիւն ժողովոյն, և ա̄մ շքով մեծահանդէս
թափորոյ ճանապարհ առնէր յաւանն ամա-
րաս. և զի էր ժամանակն գարնանային ան-
ձրևաբեր հոսմանց, կամեցաւ թ̄գրն թո-
ղուլ 'ի դուտական զՆատիկինն ֆ̄ զթագու-
հին.

հին. բայց նա ո՛չ հաւանեցաւ, այլ մեծաւ
փութով փափագեալ՝ զկնի ընթանայր 'ի
խնդիր սբ̄յն։ Եւ էր 'ի մէջ թափորոյն բար-
ձեալ 'ի պաշտօնէից դեսպակ ն̄բ գանձուց
հնգեցունց սբ̄ցն. այն է գահաւորակն՝ յո-
րում եդեալ կային նշխարք ն̄բ լուսաւորչին,
հռիփսիմեայ, գայիանեայ, զաքարիայ և
պանդալէոնի, զարդարեալ թ̄գրական հան-
դերձիւք և անուշահոտ ծաղկօք և խնկե-
նեօք, արտաքոյ պատեալ շիկակարմիր մոր-
թով, և 'ի վ̄ր յարմարեալ սպիտակ կտա-
ւով. և խաչ ոսկի մեծագնի ակամբք յօրինել՝
'ի վ̄ր դեսպակին, և դասք պաշտօնէից բակ
առեալ զնովաւ խաչ 'ի ձեռս՝ անհատական
բարբառով նո՛ւագէին զփառաբանութի̄ ա̄յ
'ի պատի՛ւ սբ̄ցն։

Ընդ որս երգակից լեալ և լիակատար հա-
ւատով ա̄ծասէր արքայն՝ երթայր առ դես-
պակին ե̄պսօք հանդերձ։ Եւ էր պատո՛ւէր
եդեալ յարքայէ հաւանութ̄ ե̄պսացն՝ ան-
սո՛ւաղ կալ ամենեցուն մինչև յերեկոյ, և
յայնժամ հացի՛ միայն վ̄ճարել զպէտս կե-
րակրոյն. զի աղօթիւք և պահօք արժանաս-
ցին զխնդրելին գտանել զդանձ. ո̄պ և եղև
իսկ սքանչելի տեսլեամբք հանդերձ։

Յղեալ էր թագաւորն յառաջագոյն զմատ-
թէ դարահոճայ երէցն այլ ևս քահանայիւք
և պաշտօնէիւք 'ի տեղի մի սոհ կամ սոհառ
կոչեցեալ՝ գիշերապաշտօն առնել յեկեղե-
ցին, որ կոչիւր գիսայ կ̄մ որոգիսայ, և անդ
պատարագ մատուցանել 'ի պատի՛ւ յիշատա-

կի ն̄բց ։ Եւ մինչդեռ զառաւօտին կատա-
րէին պաշտօն յոտն կալով՝ նիրհեաց մատթէ
երէցն ։ և լսէր ձայն ուժգին՝ որ ասէր ։ ըզ-
սո՞ւրբն խնդրէք զգրիգորի՞ս ։ գտանէք յա-
րևելս կոյս եկեղեցւոյն ։

Եւ դարձեալ 'ի հասանել արքային բազմու-
թ̄ի ժողովոյն 'ի դուտական աւանէ 'ի գեօղ
մի արածանս անուն, անդ յովէլ սարկաւագն
այր պարկեշտ ըմբռնել 'ի քնոյ ը̄ առաւօտն՝
տեսանէր յանուրջս, իբրև թէ բահ ունիցի
յուս իւր ։ և խնդրիցէ զտեղի գերեզմանին
գրիգորիսի ։ Եւ ահա նոյն ինքն ն̄բն գրիգո-
րիս ը̄առաջ ելեալ նմա յաբեղայի կերպա-
րանս՝ այլ 'ի սպիտակ զգեստ, ասէ ։ զի՞նչ
խնդրես ։ և յասել յովէլայ սարկաւագի,
թէ արքայ և ա̄մ ժողով ե̄պսաց և բովան-
դակ գունդն աղո՛ւանից զգրիգորիս խըն-
դրեմք, և ո՛չ գիտեմք՝ ո՞ւր իցէ, կալաւ սբ̄ն
զձեռանէ սարկաւագին, և ակն յայտնի ըզ-
տեղին ցուցեալ՝ ասէր ։ զոր խնդրէքն՝ աստ
գտանի ։ և հրամայէր բրել զտեղին ։ Յայն-
ժամ նաթան երէց՝ եղբայր սարկաւագին,
և միւս երէց գեդէոն անուն բրէին զայն տե-
ղի, մինչդեռ յովէլ իջեալ 'ի ծունկս՝ դի-
տէր զգուշուբ̄ ։ և գտեալ զնշխարսն՝ սկսան
գնալ խնդութ̄ի ։ Բայց տեսանէր յովէլ,
զի 'ի տեղւոջ անդ կայր բլրիկ մի փոքրիկ,
և խաչ 'ի վ̄ր ն̄ր ։ և երթեալ երանելին գրի-
գորիս 'ի բլուրն՝ կայր առ խաչին հուպ ։ և
ձայնեալ զկնի երիցանցն՝ ասէր ։ կողքս և
զստկունքս դեռ ևս 'ի տեղւոջս են, առէք
'ի

'ի ձեզ. և նոցա անդէն դարձեալ՝ առին և
զայն։

Յայնժամ զարթուցեալ յովէլայ սարկաւա-
գի 'ի քնոյ՝ պատմեաց արքայի զտեսիլն. և
թէպէտ չէր տեսեալ ն̄ր̄ յառաջագոյն զա-
մարաս գիւղն, բայց 'ի ձեռն յայտնութ̄ն
եղելոյ հաստատէր՝ թէ գիտեմ զտեղին։
Նոյն̄պս և մատթէ երէց եկեալ պատմեաց
արքայի զիւր տեսիլն, որով ծանուցաւ մի և
նոյն տեղի։ Զուարճացե̄լ այնուհետև ար-
քայն՝ վաղվաղակի առաքէր զմատթէ երէց
և զյովէլ սարկաւագ յամարաս նախ քան
զիւր երթալն. և ն̄ց հասեալ անդր՝ գտին
զտեղին նշանակեալ 'ի տեսլեան։ Եւ մինչ-
դեռ սպասէին գալստեան թագաւորին և ո-
րոց ը̄ նմա, ետես յովէլ սարկաւագ միւս
ևս տեսիլ յայնմ տեղւոջ, զի կային արք
չորք ծերագոյնք 'ի ձև աբեղայի, և գրիգո-
րիս մանկագոյն 'ի զգեստս սպիտակս ը̄ ն̄ս,
շուրջ կացեալ զտեղեաւն՝ զոր բրել հրաման
եառ։ Եւ յահէ ն̄ց պակուցեալ յերկիր ան-
կաւ սարկաւագն. և յորժամ կանգնեցաւ
և կամէր հարցանել ինչ, նոքա եղեն անե-
րևոյթ։

Իսկ թագաւորն և ա̄մ բանակն՝ որ ը̄ նմա,
հասեալ յագարակ մի քարուէճ կոչեցեալ,
անդ կատարէին զպաշտօնն գիշերոյ։ Յայնմ
վայրի 'ի նիրհել թագաւորին՝ եղև առ նա
ձայն, զի ասէր. զոր դու հայցես աղաչա-
նօք, անդ երևեցաւ. և 'ի միտ էառ արքայ՝
թէ յամարաս ևս երևեալ է ն̄բն այնոցիկ,

զորս

զորս անդր առաքեաց յառաջագոյն. վ̄ս որոյ փութայր հասանել 'ի տեղին: Յայնժամ և յովել քահանայ անապատաւոր՝ որ էր ը̄ արքայի, պատմեաց նմա, թէ տեսի և ես յայսմ գիշերի, զի 'ի նոյն տեղւոջ ամարասայ աղբիւր մի ելանէր 'ի նրբագոյն ականէն, և յառաջ խաղացեալ՝ յոյժ յորդագոյն լինէր. ը̄ որ զարմացեալ կայի, թէ յայս նիշ տեղւոջ բնաւ ջուր ոչ էր, և զիա՞րդ յորդագոյնս գնայ:

Եւ եղև 'ի չու՞ել բանակին 'ի քարուիճայ, իբրև մօտ եղեն յամարաս, տեղաց անձրև սաստիկ. և 'ի կոխելոյ բազմութ̄ն երիվարաց զերկիր՝ դժու՞արագնալի եղև ճանապարհն որոց ճեպէին զկնի ն̄ց: Ընդ ք̄ս̄ասէր արքայն՝ քաջ և արի հաւատով իջեալ յերիվարէն՝ շրջէր 'ի մէջ բանակի ե̄պսաց և այլոց եկեղեցականաց. և ոչ թոյլ տայր ն̄ց իջանել յերիվարաց, այլ հանդարտիկ և ը̄ կարգի հրամայէր գնալ. և թու՞էր ինքեան՝ թէ 'ի վ̄ր փափուկ ծաղկանց ընթանայցէ, և ո՛չ 'ի կաւի, և 'ի տղմի. և փառս անձին համարէր սպասաւորել դեսպակի ն̄բցն՝ որ շքեղազարդ երթայր 'ի մէջ բանակին:

Եւ իբրև հանդերձեալ էին մտանել յամարաս գիւղ, անյագ փափաքմամբ վառեալ արքայն 'ի սէր ն̄բյն՝ ո՛չ հանդուրժեաց անցանել ը̄ կամուրջն, որ կազմեալ էր 'ի վ̄ր փոքրիկ գետոյ խաղացելոյ ընդ մէջ շինին, այլ ինքնին կայսերակերպ զգեստուքն իջե̄լ անցանէր ը̄ ջուրն, և անցուցանէր զդեսպակ

ն̄բցն՝

Տըրդն՝ ոչ Թողացուցեալ զսպասաւորութի՛ւն
յայլոց ։ Այս հասեալ՝ մա՛ր բաղմութի՛ւն՝ ի
նշանակեալ տեղին ը երեկս՝ անդէն հարին
զխորանն ալքունի ։ և ամենեքեան ծնրա-
դրուեցա՛ւ՝ ի ինդրուածս լինելին , և ապաստի՛ն
հաւատով գտանել զինդրելին՝ ի վաղուհան
աւուր ։

Յայնմ՝ վայրկ՛ի խօսել ալքային ընդ երիցու
գեղջն և ը ծերս տեղւոյն , իբրև եհարց
զնո՛ա՝ Թէ զի՞նչ ինչ աւանդութի՛ւն կայցէ առ
ձեզ վա՛ն նշխարաց Տրդն գրիգորիսի , նոքա
սկան պատմել և ասել ։ Յոր ոմն այր Ճգնա-
ւոր և յոյժ առաքինի վարուք՝ որ ունէր զ ը ը-
նորհ առաքելական , և բազմաթան աշխատու-
թի՛ւ դարձոյց՝ ի հեթանոսութի՛ւ՝ ի քրիստո-
նէութիւն զմեծ գաւառ մի հին արձախոյ՝
պարզկանք կուռեցեալ , սա բազում անգամ
եկեալ այսր յամարաս՝ կատարեր զկիզուտակ
Տրդն գրիգորիսի ։ և ասէր երկիցս և երիցս
առաջի բազմաց , Թէ Թագաւոր հաւատա-
ցեալ յառնելոց է յաղո՛անից հին ։ նա առ-
նէ խնդիր տեղւոյս , և Տը՛ն նշխարացն գրի-
գորիսի ։ Վարձեալ այլ ոմն անասլատական
հիւր եկե՛ւ առ մեզ՝ կամեցաւ տնջել՝ ի բլրա-
կիգ ։ և՝ ի քնոյն յարուցեալ՝ իսկ և իսկ կազ-
մեաց խաչ , և կանգնեաց՝ ի տեղւոջդ , պատ-
ուէր տուեալ չբառնալ ոումեք զայն , այլ աչ-
գոյն և երեկոյն անխափան առնել ազօթս
խնկարկութի՛ւ ։ զի մեծամեծ աքանչելիք տե-
սանեմ՝ ասէ՝ ի տեղւոջս յայսմիկ ։
Ասկ յետոյ եկեալ ոմն՝ ի խաբեբայից յաբե-

ղայն կերպ , և մնդրդասերումեն գտեալ ՚ի
միջի՝ դողայաւ ղբաժակ մի մեծագին . զոր
վաճառեալ՝ տայ զդին նր ՚ի թոշակ գպրո-
ղին, ուր ուսանէր . և ապա տեսանէ յանուրջս
գողն այն , զի առ խալին կանգնելոյ յանա-
պատաւորէն նստեալ կայր ՚ի վր գերեզմա-
նի եպս մի ահագին տեսլեամբ , որ ետ հրա-
ման որոց մերձն կային կապել զինքն և տան-
ջել ուժգին : Ւյս յարուցեալ գողոյն ՚ի քնոյ՝
գտաւ ստուգապէս հարուածեալ, մինչև բազ-
մաց ցուցանել զմարմին իւր կապուտակեալ
՚ի սաստիկ գանից . և ՚ի կրկնիլ նոյն հար-
ուածոց օր ըստ օրէ՝ գնաց ՚ի տէր քաղաքն եՀմ
գտանել զուժգումն տանջանացն. բայց և անդ
կրեալ զնոյն անցս առաւելագոյն ևս՝ լուեաւ
ձայն , զի ասէր . չՀք քեզ Հնար զերծանիլ ՚ի
պատուհասէդ , եթէ ոչ երթեալ խոստովա-
նեսցիս ՚ի տեղւոջն՝ ուստի զբաժակն գողա-
ցար . վՀղ դարձ արար անդրէն յամարաս , և
խոստովանեալ վանաց երիցուն զմեղս իւր ,
և վճարեալ եկեղեցւոյ զդինս բաժակին ,
պատմեաց զնմա՝ անցս՝ որք անցին ընդ նա .
եցոյց և զտեղին՝ ուր գՀարուածան էառ , յո-
րում էր խաչն առ գերեզմանի եպսին . և
ինքն այնուհետև բժշկեցաւ ՚ի ցաւոյն , և
ազատեալ ՚ի պատուհասէն՝ գնաց ՚ի տեղի
իւր : Ւյս այլ ևս քաղում ախտաժկտք և
ջերմնոտք ՚ի նմին վայրի ՚ի ձեռն լոկ հողոյն
ընդունէին զառողջութիւն . ոՀ և անդէորդք
անզաւակք ՚ի քաղում գիւղից գային ուխ-
տիՀ ՚ի տեղին , և առեալ Հող Հաւատով՝ որ-

դե-

դեծնուն հանդիպէին ։

Մինչդեռ զայս ա̄մ պատմէին առաջի արքայի ծերքն ամարասայ, յառաջ մատեաւ և խոճկորիկ անուն կողմնապահ տեղւոյն, որ և արժանացեալ էր տեսանել զն̄բն զաքարիա և զպանդալէոն 'ի ցրի աւանի, և պատմեաց զնոր տեսիլն՝ որ եղև նմա 'ի նմին աւուր. զի յորժամ 'ի քուն կայի ասէ զհասարակ աւուրբ, տեսի արս եօթն սպիտակազգեստս առ դրան եկեղեցւոյ, և ասեմ ցն̄ն. օրհնեա՛լք դուք արք ը̄է՞ր ոչ ցուցանէք զնշխարս ն̄բյն գրիգորիսի. զի 'ի մեծի ճգան կայ արքայ և ա̄մ ժողովն, և ոչ գիտեմք զստոյգն ։ Եւ տուն պ̄ինի միաբան, և ասեն. նշան ինչ ո՞չ տեսեր ։ Եւ ես ասեմ. ո՛չ ։ Յայնժամ մի յեօթանցն առաջնորդեալ ինձ՝ էած 'ի տեղի մի, ուր երկիրն էր պատառեալ, և 'ի ներքս երևէր ճրագ լուցեալ, և բոց ճրագին բաժանեալ յերկուս ։ Յորմէ 'ի միտ առեալ իմ, թէ անդ է մարմին ն̄բյն, ասեմ ցայրն՝ որ զտեղին եցոյց. Երթամ պատմեմ արքայի զիրսդ. և նա ասէ. ե՛րթ պատմեա՛ ։ Բայց իբրև եկի 'ի պալատն արքունի, թո՛ւէր ինձ՝ թէ 'ի քուն կայ արքայդ, և ոչ իշխեցի զարթուցանել. և անդրէն դարձայ առ այրն, և պատմեցի նմա՝ թէ չկամեցայ ազդել արքայի, զի 'ի քուն կայ. և այրն այն ասէ ցիս. յորժամ զարթիցէ արքայ, ասասջի՛ր. և ինքն ոտամբն զպատառո՛ւածն կամեցաւ ծածկել, և արգելուլ զլոյսն ։ Յայնժամ բուռն հարեալ իմ զառնէն՝ արգելուի զնա, ասելով.

մի

մի առներ՝ մինչև արքայ տեսցէ. իսկ նր ոչ հաւանեալ՝ անյայտեաց զտեղին, և ասէ. դու պատմեսցես արքայի. և առժամայն զարթեայ 'ի քնոյ։

Զայս ամ լուեալ բարեպաշտ արքային վաչականայ՝ անցուցանէր զգիշերն զայն յաղօթս հսկմամբ յաղօթս ամ բազմութն հանդերձ. և ը այգանալն ամ ժողովն եկեալ 'ի տեղին՝ արարին մեծահանդէս պաղատանս միաբանական բարբառով։ Եւ ապա առաքինասէր թագաւորն հոլանեալ՝ էառ բահ 'ի ձեռն, և քաջապէս սկիզբն արար բրելոյ, և այլքն եղեն գործակից. և նոյն ինքն թագուհին թգրական զգեստուքն կրէր ըզհողն ջերմեռանդն փութով. նոյնպէս և եպսունք և քահանայք, ևս և նախարարք և կանայք նախարարաց իւրաքանչիւր զգեստուք կրէին 'ի դուրս զհողն պեղեալ։

Եւ յոյժ խորագոյնս փորեալ՝ ոչ գտին ինչ զառաջինն. զի խոտորեցան 'ի կողմն հիւսիսոյ, և ոչ գիտէին՝ թէ նշխարքն յարևելից կուսէ էին. որով թէպէտև առ ժամն լքանէր թգրն տրտմութ, բայց ապա քաջալերեալ հաւատով՝ ասէ. անսխալ է ամենակալին այ բան, երկուց և երից ժողովելոց 'ի նր անուն՝ վաղվաղակի գտանել զխնդիրն, թող թէ այսչափ ժողովելոցս 'ի բոլորեցունցն այ յանուն. հաստատուն գիտեմ՝ որ ոչ անփոյթ արարեալ մերժիցէ զմեզ ամօթով։

Յայնժամ հրամայեաց դնել առաջի բրածին զնշխարս նբցն՝ զորս բերեալ էր ը բա-

նակին, և սկիզբն առնել բրելոյ յարևելից կուսէ. և ահա փութանակի պատահեցան ցանկալի գանձուն. զի գտին զտապան ն̄բյն հանդերձ խորանաւ, և լցան անպատում հրճուանօք արքայն և որք ը̄ նմա. և ամբոխն ը̄ լսելն՝ թէ եղև գիւտ ն̄բ նշխարացն, առ հասարակ զեղեալ դիմել՝ի տեղին՝ կամէին քակել զբովանդակ կազմուն գերեզմանին և զխորանն. մինչև արտաքս ելանել թագաւորին, և հազիւ ուրեմն հանդարտեցուցանել զնն։

Իսկ՝ի բանալ գերեզմանին, և յերևիլ նշխարացն, անընդելական իմն հոտ անուշութ̄ բուրեալ՝ ծածկեաց զյոլով խնկարկութ̄ցն զազնուութ̄ի. ը̄ որ՝ի զարմացման լեալ արքայ՝ հարցանէր որոց մերձն կային, թէ՝ և ձեզ հարկանի՞ անուշիցս այս հոտ, ոպ̄ ինձս. ն̄ք ետուն պ̄խնի, թէ նոյնդ և մեզ. և առ հասարակ փառաւոր առնէին զտուօղն այնպիսի մեծագոյն բարեաց։

Նստաւ այնուհետև թագաւորն՝ի վ̄ր երկրի առ գերեզմանի ն̄բյն, և հրամայեաց բերել՝ի պատուական և՝ի զանազան սպասուց արքունի. և եդել զսապատակն՝ի վ̄ր ծնկաց իւրոց՝ յոյժ երկիւղածու̄ սպասէր ը̄ունել զն̄բն՝ի գոգ իւր. և երիցունքն հանեալ զնշխարսն՝ հաւաքէին՝ի սապատն՝ի վերայ ծնգաց ա̄ծասէր թագաւորին։ Ըրդ բաց՝ի նշխարաց ն̄բյն գրիգորիսի նշանակելոյ յանուանէ, գտան՝ի տապանի ն̄ր և երկու շիշք ապակիք. ՝ի միումն կայր յարենէն ն̄բյն զա-

քարիայ հօրն յովհաննու կարապետին, զոր բերեալ էր եւստաթէի առաքելոյ յաղուանս, և 'ի միւսումն 'ի նշխարաց ս̄բյն պանդալևռնի բժշկին, զոր բերեալ էր ս̄բն դրիգոր լուսաւորիչն մեր, և տուեալ թոռին իւրում

գրիգորիսի ։

Իբրև հանին զայս ա̄մ 'ի դուրս, մի առ մի ողջունէին համբուրիւ՛ յարգութե̄ ա̄մ բազմութի̄ն. և թագաւորն կնքեալ զա̄մն արքայական մատանեաւ՝ պահէր զգուշութ̄ 'ի սապատի մինչև ցվաղիւ՛ն ։ Դատաւ և միւս այլ ապակի մի 'ի գերեզմանի անդ՝ յորում կայր հեղանիւթ ինչ ըմպելի. այլ ո՛չ յայտնէ պատմութի̄ն՝ թէ զի՞նչ այն էր ։ Իսկ 'ի վաղիւ՛ անդր հրամայեաց թագաւորն լուանալ անոյշ գինւով զնշխարս ս̄բյն գրիգորիսի 'ի մէջ ոսկեղէն մաղզմայից, և ցամաքեցուցանել յարևու՝ եդեալ 'ի վ̄ր թ̄գրական վառին իւրոյ ։

Յայնժամ գողացաւ մասն ինչ 'ի նշխարաց անտի աբեղայ մի 'ի վանացն ամարասայ. իսկ ս̄բն գրիգորիս երևեցաւ մեծավայելուչ փառօք այլոյ ումեմն, և ասաց զեղեալ գողութի̄ն և զանուն աբեղային. որ և հարցեալ յարքայէ՝ խոստովան եղև, և եբեր եդ առաջի ն̄ր զխորեալ մասնն ։ Յետ այսորիկ հրամայեաց թագաւորն տալ մասն իւրաքանչիւր ե̄պսաց 'ի նշխարաց ս̄բյն՝ առ 'ի բաշխել վիճակելոցն իւրեանց. և մեծագոյն ինչ մասն անդէն յամարաս եթող. և զմնացեալն առ իւր պահեաց ։ Եւ մինչչև էր մեկնել 'ի տեղ-

ւոյ

ւոջէն՝ հրաման ետ արկանել հիմն նորոյ մատրան՝ի վ̄ր գերեզմանի ն̄բյն, և փութապէս աւարտել, և կոչել զմատուռն զայն՝ ն̄բ գրիգորիս։

Իսկ այր մի ժանտ՝ի քարակրաց հայհոյեաց վ̄ս աշխատութ̄ն զնահատակն ք̄ն՝ ասելով, մեզ նեռն յայտնեցաւ գրիգորիսն այն. և իսկոյն եհաս նմա պատուհաս յ̄այ. զի հարաւ զգետնի, և յետս դարձան երեսք ն̄ր. և ոչ զերծաւ՝ի լլկանաց անտի զաւուրս բազումս, մինչև եկե̄լ արտասու՛օք՝ի գերեզման ն̄բյն՝ խնդրեաց զթողութ̄ի. և առեալ հող՝ի տեղւոյն՝ բժշկեցաւ։ Այլ յառաջադոյն անկաւ ահ մեծ՝ի վ̄ր ամենեցուն, և ամենայն փութով գործէին զշինու՛ած մատրանն։

Եւ՝ի կատարիլ ա̄մի՝ յաւուրն չորրորդի մատուցեալ զփրկական խորհուրդ պատարագի՝ի տեղւոջն, չու՛էր ա̄մ բանակն ը̄ առաջին կարգադրութեան հոգևոր ուրախութ̄ք. և եպիսկոպոսացն օրհնեալ զխառնիճաղանճ բազմու̄ն՝ հրամայէին գնալ յիւրաքանչիւր տեղիս։ Իսկ թագաւորն տարեալ ընդ իւր զդասս ե̄պսաց և երիցանց և պատու՛ական արանց մինչև ցքարուէճ յօթի տեղի, գոհութ̄ի և շնորհակալութ̄ի մատուցանէր եկելոցն՝ի ն̄ր հրամանն և՝ի գործակցու̄ի գիւտի նշխարաց ս̄բյն գրիգորիսի. և փառս վերառաքէր ա̄յ շնորհողին զցանկալին ամենեցուն։

Եւ նց միաբան օրհնեալ զթագաւորն՝ թա-

գուհեաւն հանդերձ և ա̄մ դրամբն, ասէին. զա̄մ բարի՝ զոր խնդրես դու յա̄յ 'ի ձեռն ս̄բյն գրիգորիսի, տացէ քեզ. և շնորհեսցէ մեզ զբարեպաշտութի̄դ ը̄ երկայն աւուրս, լինել խաղաղութ̄ բ 'ի շինութի̄ ծի և 'ի փառազարդութի̄ եկեղեցեաց՝ առաւելագոյն փութով օրը̄օրէ. և զվախճան ձեր կնքեսցէ քս̄ի խոստովանութ̄ բ կենարար ա̄ծ՝ նորին հայրն երկնաւոր:

Եւ առեալ թ̄գրին ը̄ իւր զաւագ ե̄պսապետն շուփխաղիշոյ, որ և շուփհաղիշէ կաթողիկոս աղու̂անից և արքե̄պս պարտաւայ, եկն 'ի սեպհական գիւղն դուտական. և անդ հանգոյց զմասն ինչ 'ի նշխարաց սբ̄յն՝ մեծագին իւղովք անուշիւք օծեալ, կատարելով զյիշատակ ն̄ր փառօք: Եւ էր սորին վաչականայ արքայի դուստր մի դեռաբոյս՝ խնջիկ անուն՝ սիրելի յոյժ յաչս հօր իւրոյ. մինչև շինել և դաստակերտ յանուն ն̄ր. ետ և նմ մասն 'ի նշխարաց սբ̄յն՝ դնել 'ի դաստակերտի անդ, և կատարել պատու̂ով ամ ը̄ ամէ զյիշատակ սբ̄յն:

Լառ արքայ և ինքեան մասն մի, զոր միշտ 'ի բանակի շրջեցուցանէր ա̄մ յարգութ̄ բ ը̄ նշխարաց զաքարիայ և այլ ս̄բց. և զմնացեալսն 'ի նշխարաց կնքեալ մեծաւ զգուշութ̄ բ եդ 'ի պահեստի. մինչև կատարեցաւ վկայարանն՝ զոր ետ շինել 'ի դուտական աւանի յանուն ս̄բյն պանդալևոնի. և անդ փոխեաց զշիշն՝ ուր կային նշխարք նորա, ը̄ նմին և զմասն 'ի նշխարաց սբ̄յն գրիգորի-

րիսի, կարգեալ անդ պաշտօնեայս 'ի սպաս
սբ̅ցն ։

Եւ ինքն ա̅ծասէր Թագաւորն երկիցս ան-
գամ 'ի տարւոջն կատարէր զյիշատակ ն̅բյն
գրիգորիսի՝ զերիս երիս աւուրս. յայտ է Թէ
նախ 'ի պատիւ̀ կատարման ն̅ր̅, և երկրորդ
'ի յիշատակ գիւտի նշխարաց ն̅ր̅. և զնոյն
առնել պատուի̀րէր ամենեցուն՝ որոց ետ
մասն 'ի նշխարաց ն̅բյն ։ Եւ նոյն գեղեցիկ
սովորութի̀՝ որ̅պ̅ս յաղուի̀անս, նոյնպէս և 'ի
հայս եկաց մ̅նաց հաստատուն մինչև ցայս-
օր. այս է՝ երկիցս 'ի տարւոջ տօնախմբել
զյիշատակ ն̅բյն գրիգորիսի աղուի̀անից կա-
թողիկոսի, 'ի փառս ա̅յ՝ որ փառաւորէ զն̅բս
իւր, և փառաւորեալ է 'ի ն̅ն̅ յաւիտեան ։



Վ՚ԵՐ՝Ի ՍՐԲՈՑ

Հարցն մերոց՝ Թաթլոյ, և Վ՚արոսի. և Թումասու։

Հ. սեպտ. 30. և դեկտ. 30։

Ա՚ՆՄԵՐԹԻ՚ՆՔ 'Ի ՄԵՐ-մնի՝ անարատ քաղաքավարութ՚ի և հրաշալի ճգնու՚ի, կըրկին հարազատք ը՚ն մարմնոյ և ը՚ն հոգւոյ, ՆԲ հայրն մեր Թաթուլ, և աւագ եղբայրն իւր Վ՚արոս, աշակերտք էին ՆԲ հայրապետաց մերոց Թարգմանչաց՝ սահակայ և մեսրովպայ, սնեալք կատարեալ գիտութ՚ի և առաքինութ՚ի 'ի ձեռս նց՚, և ա՚միւ հետևօղք վարուց նց՚։ Ա՚ք զկնի փոխման ՆԲ վ՚դպաց իւրեանց տեսեալ զհրդեհ դառնու՚ե հայոց Նին յերեսաց կրակապաշտ ազգին պարսից՝ փոյթ էին ը՚ն կարի շիջուցանել զբոցն անօրէնու՚ե, ձեռնտու լինելով ուխտապահաց, յանձանձիչ նեղելոց, և խրատիչ ստահակելոց։

Ա՚յլ յետ կատարման ՆԲց վարդանանց՝ որք զարիւնս իւրեանց հեղին 'ի նորոգումն եկեղեցւոյ, յորժամ կալանաւորեցան 'ի պարսից երիցադոյնքն յաշակերտս ՆԲն յովսէփ

և

և ն̄քն ղևոնդ, և պատուական նախարարքն վարեցան յօտարուի̄, այնուհետև բազումք յերկիւղածաց փախչէին Թաքչէին յամուր տեղիս, զի մի՛ հաղորդ լիցին գործոց անհաւատից և ուրացելոց 'ի ն̄ս յարելոց. մինչ զի յոլովք յանծանօթ վայրս կատարեցին ըզկեանս խստամբեր ճգնութ̄ք ։

Յորոց միջի իբրև աստեղք լուսափայլք երևեցան երկու այս եղբարք Թաթուլ և վարոս. քանզի առանձնացեալ 'ի սահմանս գաբեղենից մերձ 'ի քաղաքն կաղզուանայ՝ բնակեցան 'ի տեղին վիշապաձոր կոչեցեալ՝ 'ի մէջ ահագին և դժուարին քարանձաւաց, ուր աղգի աղգի գազանք և վիշապք որջացեալ էին. այլ յայնմ հետէ հալածեցան անտի աղօթիւք ն̄ցն ։

Զայն տեղի իբրև յա̄յ պատրաստեալ 'ի բնակուի̄ իւրեանց համարեցան երանելիքն. և 'ի մերձակայ հովտաց գտեալ բանջարս և միրգս վայրի՝ նովիմբք շատանային. և առաւելապէս հոգևոր կերակրով զանձինս պարարէին. և զսրբանուէր աղօթս իւրեանց հանապազորդ ըստ նմանութեան հոգեղէն զուարթնոցն յերկինս առաքէին՝ պատարագ բանական, զոհ անմարմին, ողջակէզ անկիզելի, զենումն անվախճան, և ընծայ բոլորանուէր՝ անուշահոտ և հաճոյական ա̄յ քան զա̄մ խունկս և զսպանդս ստուերական օրինաց, անթերի կատարելով զասացեալն 'ի մարգարէէն. վ̄ս քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք ո̄պ զոչխար 'ի զենումն ։

Յետ կալոյ ժամանակս ինչ գեղեցիկ միա-
բանութ՟ն երկոցունց ը՟ միմեանս՝ խորհուրդ
'ի մէջ առին զառաւելագոյն փութոյ բուռն
հարկանել կատարելու՟ն, բնակելով 'ի զատ
'ի միմեանց երկոցունց կամաւ. և այնպէս
ն՟ն վարոս վ՟ն առաւել սիրոյն ա՟յ որոշեցաւ
'ի թաթլոյ, և միայնացաւ հեռագոյնս ու-
րեք յայլ քարանձաւ. զի դժուարակռիւ լի-
ցի մենամարտիցն պատերազմ ընդդէմ դի-
ւացն գնդի, և զի առաւել վարձուց արժա-
նասցին 'ի ք՟ն ա՟յ, և ա՟ծ միայն լիցի մխի-
թարու՟ի իւրեանց՝ հատանելով զառ 'ի մի-
մեանց տեսութ՟ն սփոփանս:

Այնուհետև սաստկագոյն յարուցանէր պա-
տերազմ ը՟դէմ առանձնականաց հակառա-
կորդն արդարութ՟ն. և ն՟ք առաւել քաջա-
պէս արիացեալք յաղթօղ լինէին մենամար-
տու՟ն. և առնուին զօրութ՟ի 'ի վերին շնոր-
հացն, և տեսու՟ս անձառելիս: Մինչ զի
զմեծին և զերանելոյն անտոնի զառաքինու-
թ՟ս յինքեանս բերելով՝ հանապազ մարտ
եդեալ ը՟ դիւացն կռուէին և յաղթէին. և
հատուցումն բարի 'ի ք՟ն ը՟ունէին:

Զայսօրինակ կրօնաւորեալ բազմաժամա-
նակեայ աւուրբք՝ կային անյայտ 'ի մարդ-
կանէ. մինչև յայտնեցաւ զառաջինն յորսոր-
դաց ն՟ն թաթուլ, և հռչակեցաւ համբաւ
սքանչելի առաքինու՟ն ն՟ր ը՟ գաւառն. ուս-
տի փութով մարդիկն անդր հասանէին 'ի
տեսիլ ն՟ր ճգնաւորին թաթլոյ. և նովին 'ի
նախանձ բարի բերեալք՝ աշակերտեցան նմ

յոլովք սիրով ։ Եւ անդէն վաղվաղակի հիմն
արկեալ շինեցին եկեղեցի 'ի մօտակաց վայ-
ելուչ վայրի , և խուցս պատշաճաւորս ճգնա-
ւորաց . և արարին վանս միաբանակեցաց՝
կարգել՝ իւրեանց հայր և առաջնորդ զայրն
ա՜յ զթաթուլ . յորմէ և անուն տեղւոյն կո-
չեցաւ թաթլոյ վանք ։ Ուր հոգեբուղխ խրա-
տուք ո՜ք հօրն , և ա՜ծահաճոյ կարգաւորու՜ք
ն՜ր վարժեցան դասք առաքինեաց յա՜մ գե-
ղեցիկ կրօնս բարեպաշտութ՜ե ։

Այլ առաւել գտաւ քան զամենեսին մի ոմն
յեղբարց անտի , որոյ անուն էր Թումաս
կմ թովմաս , անմեկնելի պաշտօնեայ վ՜դպին
իւրոյ , յոյժ բարեսէր , ա՜ծապաշտ և երկիւ-
ղած , հեզ և խոնարհ , հանդարտ և հնա-
զանդ , ամենեցուն հլու և կամարար յա՜մի .
միանգամայն և հետևօղ կարգաց և կրօնից
կատարեալ ճգնութ՜ե մեծին թաթլոյ խա-
չակրօն խստամբերութ՜ք ։ Զայսպիսի յա-
ռաջադիմութ՜ի թումասու տեսեալ երանե-
լին թաթուլ՝ ուրախ եղև յոյժ . և խորհե-
ցաւ հաստատել զնա առաջնորդ վանացն 'ի
տեղի իւր . զի ինքն ցանկայր 'ի միայնութ՜ե
վճարել զլնթացս իւր ։

Ա՜ոյ ժողովեալ զեղբարսն՝ յայտ արար ն՜ց ,
թէ այսուհետև զսիրելի եղբայրն մեր զթու-
մաս ծանիջի՛ք ձեզ հայր հասարակաց . և ը՜
ձեռամբ ն՜ր հնազանդ լինիջիք յա՜մի՝ անվե-
հեր փութով 'ի ծառայութիւն ա՜ն և 'ի սէր
առ միմեանս . և ա՜ր ինքնին օգնական լիցի
նմա և ամենեցուն ձեզ ։ Ապա յառաջ կո-
չեալ

ՀՈԳԻՆ ՅԻՍ , ԱՅՍՊԷՍ ԱՍԵԼՈՒ .

Ա ՈՂԵԱՒԿ ԻՄ ԹՈՒՄԱՍ , ԱՅՍՕՐ ԿՈՉԵԱՑ ՔԵԶ
ՀՈԳԻՆ ՅԱՒԱՔՆՈՂՈՒԹԻՆ ԵՂԲԱՐՑ ՔՈՅ .
ԱՐԴ՝ ԵՐԿԱՅՆԱՒԻՍ ԼԵՐ ԵՒ ՈՂՈՐՄԱԾ ԸՆԿՆԱՄ
ՆՈՒԼԵԼ ՀՕՐՆ ԵՐԿՆԱՒՈՐԻ . ԶԻ ՉԱՀԵԼ ԿԱՐԱՍ-
ՑԵՍ ՁԵՌՔԲԱՐԱԾ ՔՈ , ԵՒ ԴՈՒ ԱՊԱԿԻՍ Ի՛ ՔԵԶ ։
Ա՛Ռ ՅԱՆՈՒՆԴ ԵՍ ԿՈՉԵՑԵԱԼ , ՆՈՅՆԱՊԷՍ ԵՒ Ի՛ ՔՈ
ԴՈՐԾԴ ԼԵՐ ։ Ա ՈՒՐ ԱԲ ԱՌԱՔԵԼԵՑՆ ԱՕՂՈՒԱԿ Ի՛ ՔՈ
ԼՐԱՑԵԼ ԶԱՇԱԿԵՐՏԱՑԱՆ ԼՐԱՑԱՔԵՐ . ՈՐ ԱՄԵՆԵ-
ՑՈՒՆՑ ՀԻՒՄԱՆԴՈՒԹԻՆ ԻՆՔՆ ՎՀՏԱՆԱՅՐ , ԵՒ ՈՉՔ
ՀՐՈՒԱԼ ԱՅՐԵՐ ԴԱՒՆԱԿԱԿԻՑ ԱՂԵՏԻՆ ։ Ա. ՇԱ-
ԿԵՐՏ ԵՍ ԵՐԿՆԱՒՈՐ ՀՕՐՆ . ՆՄԱՆ ԼԵՐ ՆՄԱ ։
Ի՛ԱՐ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԵՍ . ԵՒ Ի՛ ԴՈՐԾՈՅՆ ՄԻ ՎԵՐ-
ՋԱՆԱՐ ։ Ա. Ի՛ ԲԱՐԵՁԵՒՈՒԹԵՑ ՕՐԻՆԱԿ ՁՔԵՐ
ՅՈՅՑ ԵՂԲԱՐՑՆ ։ Ա ՁԱՂՈՒՔ ԼՐԱՑԵԱ , ԱՐՐԱՎ
ՄԻԽԹԱՐԵԱ , ՅՈՒՆՈՎ ԴԱՐՄԱՆԵԱ ։ Ա ՁԱՒԻՆ
ՎԻԱՅ՝ ԴՈՐԾՔՆ Է , ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ՝ ՀՆԱՑՈՒ-
ԱԾՈՒԹԻՆ ։ Ի՛ԱՑԱՒ ԿԱՑ , ԵՒ ԵՐԿԱՅՆԱՒԻՍ
ԼԵՐ ԱՄ ԱԽԱՅԱՆԱՑ ԵՂԲԱՐՑՆ Ի՛ ԲԱՆ ԵՒ Ի՛ ԲԱՆ
ԴՈՐԾ ։ Ա՛ՅՑ ԿԱՄԱՊԱՇՏԻՑՆ ԱՄԵՆԵՒԻՆ ՄԻ՛
ԱՆԱՐԱՐ , ԵՒ ՈՉ ՍԱԿԱԾ ՄԻ . ԶԻ ԱՄԵՆԵՒԻՆ ՕՏԱՐ
Է Ի՛ ՄԱՐՄՆՈՅՆ ՔԱՒ , ԵՒ ՉԷ Ի՛ ԴՈՐԾ ԱՅ ԵԿԵԼ ։
Ա՛ՐԴԵՒԱԿ ԶՈՐ ԻՆՉ ՅԵՂԲԱՐՑՆ ՔՈՅ ՊԱՀԱՆՋԵՍ ,
ԶԱՅՆ Ի՛ ՔԵԶ ՅՈՅՑ ։ Ա՛ԱԿԱԾ ԽՕՍԵԱՑ , ԵՒ ՅՈԼՈՎԼ
ԱՐԴԻՒՆԱՑՈ . ՔԱՐՈԶ ԶԳՈՒՐԾԴ ՅՈՅՑ ։
Ա. ՌԱՋՆՈՐԴՆ ԾՆՕՂ Է ԵՒ ԲԺԻՇԿ . ԵՒ ՀԻՒՄԱՆԴԱ-
ՑԵԱՆՆ ԿԱՐՕՕՏ Է ՍԻՐՈՅ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԵ ։ Ա՛Ր-
ԴԵԱԿ , ՈՐ ՍԽԱԼԷ , ԵՒ ԷՒ Ի՛ՐԱՆ ՍՈՎՈՐՈՒԵՑ , ՄԻ՛
ՊԱՏ

պատժեր զնա . այլ հոգեւոր ցաւակցութիւնբ
բժշկեաւ : Ո՛ մանկապոյնն՝ ի հնազանդու-
թիւն կրթեաւ , եւ յաշխատասիրութիւն :
Ո՛ ծերոն՝ ի աղօթս , եւ ի ձեռագործս , եւ ի
բանս խրատուս առ մանկապոյնն : Հոգեւոր
առաջնորդն՝ ածային հուր է , լուսաւորիչ՝
մաքրիչ և ջեռուցիչ . զապականարատ ախտն
այրէ , զդիջութիւնն ցամաքեցուցանէ , կրօ-
նաւորական հանդիսիւբ քննէ , և ոմն զոմանց
՚ի բուն անատակ սրբութիւբ զեղբայրն ՚ի ձգ-
ձայէ . և ինքն ծագաւորէ ՚ի վէր տանն քա-
ղաքաց : Ահա և գինի՝ կրօնաւորաց ոչէ ու-
տել . այլ ձաշակելի է որոց պէտք են : Ո՛ր
յախտ հիւծանութեան անկանի , զբնական
կարգն ծուլացոյ , և զսովորական դարմանն
ըստ պիտոյիցն առատացո : Հաւելորդին մի՛
անսար , որ չէ մեր : Պիտոյ է ժուժկալել՝
ոչխարի հնար է . յուսով ապօթել , հաւատով
աշխատել , զոհութիբ ձաշակել : Ո՛րդեակ
նզովք մի՛ եւլցե ըստ բերան քո : Ո)ձպէտև եղ-
բայր է , կամ որդի , ՚ի մի մահիճ մի՛ննջեսցեն :
Ո՛ր խեղճ ունիցի՚ի մտի , չէ պարտ աղօթել , ոչ
ձաշակել և ոչ ննջել : Ո՛ր երդնու , որ չէ մեզ
օրէն , արտաքոյ սրբութեանցն լինի ըստ չափոյ :
Ո՛ի խառներ ըստ խրատն բարկութիւն . զի մի
ընկղմեսցի սխալեալ եղբայրն ՚ի բարկութիբ
խրատուն : Ո՚ձատկէն իւր մտացն և խորհր-
դոցն և կամացն՝ ոչ թշնամուդ զգուշանայ :
Ո՛րդեակ յորժամ՚ի մահիճն քնոյ ելանես ,
այնպես հաստատեա զխորհուրդս և զբանս՝ որք ՚ի տան-

տես

տես ընթանան : Ընեռեաւ զքեզ յերկիւղն
այ . և այծ զմտաւ զերկիւղ պատասատանին :
Երկիւղին ննջեաւ . և զարթուցեալ օրհնեաւ
զայծ , և զոհացիր զայ , որ պահեաց զքեզ՝ի
գիշերային խաւարասէր գարէն : Զուարթացիր
՝ի տեղի աղօթիցն . և ծնրադրեաւ երիցս անգ
գամ , և աւետի . և ապա՝ի ծունկս անկեալ ,
և զերեսդ՝ի յերկիր եդեալ՝ հայցեաւ քեզ
օգնութիւն՝ի տէ այ . և ապա սկսիր զկանո
նեալ սաղմոսն : Ընդունիր զայծ՝ բանալ զբե
րանդ , և բարբառել զայն՝ զոր այծ սիրէ : Այ
պղտորեր զխորհուրդդ սրտի քո . մի ընարձա
կեր զբանդ . մի թողացուցաներ զձեռագդ .
մի դառնար յարևմուտս , որ չէ քեզ սահման .
մի պարարեր զանդ զրջածութիւբ : Ո՛ երբոր
զգայարանագդ անդակուզմ քաջութիւբ անդեալ
վառեաւ . այլև զբուխանդակ եղբայրութիւնդ
քաջալերութիւբ զինեաւ : Այլ է պատերազմին ,
և որք յաղթեն՝ պսակին . Թոյլքն և անա
րիքն ոչ յաղթեն և ոչ պսակին , և ոչ բնաւ
պատերազմին :

Որդեակ իշխանութիւբ մի վարիր առ եղբարդ .
և զոր դու ոչ կարես առնել , զայն յեղբարցն
մի պահանջեր : Ո՛ մի ոք միայն մի առաքեր
՝ի վանացն՝ի քան , այլ՝ երկու . զի վայ է մի
ումն՝ի ձանապարհին . եթէ գլորեսցի , մի
կանգնեսցէ զնա . զի շատ միասք լինին՝ի
միոյն : Եղբայր ոք՝ որ ախտանայ հոգւով ,
թէպէտև բազում բժշկութիբ պէտս ունի ,
՝ի սրբութէն միայն արկել . և այլ ամ կարգն
ե եղբարդ լեզի : Երկիւղածն՝ի սիրոյն ա

ռա

ռաւել պատկառի՛ քան ՚ի պատուհասէն ։ Օ գեհան (լեցի) , որպէս և հանդիսիլ ։ և յաւէն՝ որ զվտանգն բառնայ ։ Օ որ դու կեղ- բարցն պահանջես , ծերոցն զնոյն հատո ։ զի մի՛ անկանիցիս յերկնաւոր ջնորհացն՝ զկամս զ- քո պաշտելով ։ (՚Ի՛ կատարել) զպատարա- գին ապօթան և զերեկոյինն՝ պարապեցո՛ ըզ- ձեռն քո յաշխատութիւն ։ Որ գոհութի՛ աշ- խատին , արժանի են նո՛ր խորհրդեանն ։ և ապանջօղն բնաւ իսկ ո՛չ ։

Որդեակ յորժամ եղբայր ոք ստահակիցի , մի՛ անփոյթ առներ զնո՛ր կորստեամբն ։ համ քերեա՛ նո՛ր չար վարուցն և առեւլի գործոցն ։ ոչ և քո պարզ հոգիդ ախտակից լինի մարմ նոյդ ։ Ո՛չ բաւական համարիր զհամբերելն միայն , այլ ձեռն տուր , և ջանա յարուցա- նել զնա ։ և յաղօթելն քո արտասուէա՛ զե- նո՛ր ։ Ո՛ռանձինն յանդիմանեա՛ , առաջի՛ ծե- ծոց աղաչեա՛ , ՚ի մէջ եղբարցն խրատեա ։ յուշ արա նմա զլիառս արդարոցն , և զանա- ջանս մեղաւորացն ։ առաջի՛ դիր նմա զահեղ դատաստանն, և զարհուրեցո՛ զնա գեհենոյն տանջանաւք ։ Թերեւս հնար լիցի նմա գառ- նալ ՚ի ստահակութէն ։ Օ այս քո արար , և մե՛զ ուսոյց ։ և ա՛մ առաջնորդ՝ որ այսքան երկայնամիտ ե՛ , քա՛ի՛ ե՛ նման ։ ապա թէ՛ ան- փոյթ առնե՛ , չազատի՛ ՚ի պատուհասէ ։ Օ եր- կիւղածն մեծարեա՛ , զի արժանի է ։ և զտա- հակն սիրով խրատեա՛ , զի հիւանդ է ։ Ո՛յ- գոն և երեկոյին զխոստովանութի՛ պահան- ջեա՛ ։ Օ ծաղը և զկատակ և զցոփաբանութի՛

աշ-

արգել։ Զառանձին կամն ատեա՛, թէ-
պէտև բարի՝ է։ Զմանկունս մի՛ ժողովեր.
ապա թէ ոչ՝ դիւրեաւ յաղթիս։
Որ զինքն ուրացեալ է, և 'ի լուծ պատուի-
րանացն մտել՝, բառնալ պարտի զխաչն քն՝ի։
Չէ՛ պարտ ընտրութի՝ առնել հրամանաց ա-
ռաջնորդին, այլ անսալ երկիւղիւ՛։ Տե՛ս, զի
պետրոս չօգտեցաւ յընտրութէ՝ն (յոտնա-
լուայն)։ Զոր լուար յինէն, և տեսեր յիս,
և ուսեալ ես 'ի ն՝ք գրոց, և ստացեալ ունիս
վարս, զնոյն և հաստատուն կալ, ա՝մ բարե-
ձևութ՝ք պահեալ զչափ և զկէտ։ Յորժամ
սակաւ մի անցանես ը՝ սահմանն, աւելիքն
պակասեն։ Որ զպատուիրանն պահէ, հա-
մարձակ կայ առաջի ա՝յ, և ասէ. զորս ետուր
ցիս ա՝ր, ո՛չ կորուսից 'ի նոցանէ. և ապա թա-
գաւորէ զանսահման մեծութի՝ն։ Արդ զօ-
րացի՛ր և քա՛ջ լեր ո՛րդեակ. և հոգին ն՝ք վե-
րակացու լիցի եղբարցդ քև։
Զայս ա՝մ իբրև լուաւ երանելին Թումաս
'ի ն՝ք հօրէն Թաթլոյ, ետ պ՝ինի ցածութ՝ք,
և ասէ. Թողուի՛ արա ինձ հա՛յր ն՝ք, և ա՝ր
իմ հոգևոր, զի սակաւ մի խօսեցայց առաջի
քո։ Ահագի՛ն է դատաստան առաջնորդին.
և ես ոչ կարեմ ը՝դիմանալ հրամանաց քոց։
Բաւական է ինձ 'ի փրկութի՝ սպասաւորու-
թի՝ քում սրբութե՝դ. զի այր տգէտ եմ և
տխմար, և չկարեմ շահել զոք։
Ասէ Թաթուլ. Ը՝ն հաստատուն պահէ՛ 'ի
քեզ զոր ունիսդ։ Որ տկար և տգէտ չէ, չը-
կարէ ազատիլ 'ի գեհենոյն։ Զի որ ա՝յ 'ի
պէտք

պետք է , այդ զօրաւոր է ՚ի քեզ և լինի ։ աշխարհի զօրութիւնն և գիտութիւնն հեռի լեցի ՚ի քէն ։ Որ երկնչի յայ , և երկնաւոր փառացն ցանկայ , նա բիւրուց առաջնորդութիւն առնէ ։ Արմնաւոր գիտուն և զօրութիւն հակառակ է կամացն այ ։ Օ՚պատուիրանն կամքն կատարէ և յօժարութիւնն , և ոչ թէ գիտութիւնն և զօրութիւն ։ Ղաջնորդունն ընտրութիւն է այ , և ոչ հեռացումն , թէ պահեսցէ զպատուիրանն ։ իսկ եթէ աներկիւղ է , թէպէտև միայն քնակէ , չօգտի ինչ ։ Ո՚ր՞բեք տկարութիւք մարմնոյ ընտանացան (կիք ընտրեցան) այ , և առաջնորդութիւք պսակեցան ՚ի քնէ այ ։ ՚Ի խրատէս մի զարհուրիր ոդեակ ։ և դու խրատ նմա տուր՝ որ ունիցի պէտս խրատու ։ Որ խրատու պէտս ոչ ունի , նմա գաւազան լաւագոյն է քան զխրատ ։ Ղաղցր է մեղրն , բայց ախտացեալոյն չնաա է ։ օգտակար է խրատ , և կարի լաւագոյն ։ բայց որ զդէմն յարևմուտան ունի , նմա օգուտ ոչ է ։

Ա ստուած եմ ՚ի հոգին ՚ոբ , որ առաստացոյց յաւուրբեալսն զնորն իւր , նոյնպէս և ՚ի քեզ հեղցի ։ զի և դու զգործս ՚ոն գործեացես ։ Օ՚ձմբ հեռի ՚ի միմեանց , այլ հանապազ տեսանելմբ զմիմեանս ։ և ՚ոծ զմեզ տեացէ և զեղբարսդ ՚ոմ ։ Ղու զոր պակասուքի գիտես ՚ի քեզ , զայն՝ հնազանդութիւնն ընու ։ Օ՚ր զձանապարհս՝ որ ըն աջմէ են , գիտէ ՚որ և ձանաչէ ։ Ըրթ , և ՚որ եղիցի ըն քեզ ։ Օ՚ր առացի քեզ ոդեակ , հաստատ բա-

նիբ

նիւ աւարտեմ. Ո՞ սէր և զերկայնուն մտաց
քնուն ար՛ք ե՞զ, և զերկիւղն այ գործա-
կից. և զամ առաքինութե՛ դիւրեաւ կա-
տարես:

Ո՞յս ամ խօսեցաւ ընդ Հայրն Թաղթուլ,
(և ոպ երևի՛ եղծող և գրով,) յառաջին ա-
նապատի իւրում՝ ուր զվանան շինեաց. և
յետ կարգելոյ զթումաս՛ ի տեղի իւր՝ ա-
ռանձնացաւ՛ ի նոր մենարան՛ ի տեղի կոչե-
ցեալ մայրոյ ձոր. և անդ ոպ զանմարմին՝
զառանձնական հանդիսան իւր կատարէր.
մինչև հասեալ՛ ի խոր ծերուն՝ փոխեցաւ յՅե
՛ի նոյն մենարանին մայրոյ ձորոյ. ուստի
բարձին զնո՛ր մարմին երանելոյն, և տարեալ
՛ի վանս հանգուցին ընդ արժանեացն մեծաւ
պատո՛վ:

Նակ երանելին Թումաս արժանաւոր յաջորդ
եղեալ վիճակին իւրոյ յառաջնորդութե՛ վա-
նացն, քաղաքավարեր ընդ այսյամ առաքինու-
նութե՛ն՝ զհետ երթեալ ամի՛ խրատու և
վարուց նը հօրն Թաղթլոյ. և ամ բարեձևու-
թե՛ զարդարեր զմիաբանուն ուխտին, քնա-
կեցուցանելո՛վ՛ ի նմա զբազմութի՛ եղբարց
միաբանից ընդ այ. և կեցեալ հրեշտակակրօն
վարուք ամս բազումս՝ եհաս՛ ի բարիսք ծե-
րութե՛, և խաղաղութե՛ հանգեաւ՛ ի ք՛ս. և
եղաւ մեռ՛ձ հօրն Թաղթլոյ:

Նակ սքն վարոս յետ մեկնելոյ յառանձնուն՛
՛ի նըյն Թաղթլոյ՝ քնակեալ էր՛ ի քարանձաւ
լերինն՝ որ կոչիւր դէպ մայրի, խոտաքուտ
եղեալ, և վայրի մրգօք շատացեալ ժամա-

նակս բազումս, անծանօթ 'ի մարդկանէ և ծանուցեալ յա̅յ. մինչև գտին և զնա արք ոմանք ը̅ խնամոցն ա̅յ. և խնդութ ը̅ լցեալ 'ի տեսանել զայրն ա̅յ՝ կոչէին զանուն նորա գիւտ. այլև զտեղի ն̅ր̅ շինեցին վանս միայ-նակեցաց, որ անու՛անեցաւ գիւտի վանք. և անդ ևս բազմացան կրօնաւորք և փառաբա-նիչք ա̅յ ը̅ առաջնորդութ ը̅ ս̅բ հօրն վարո-սի. որ և կատարեալ զընթացս իւր ա̅մ ա̅ծա-հաճոյ կարգօք, լի աւուրբք և արդեամբք փոխեցաւ յՆէս յանանց կեանսն ։

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Միանձանց՝ Անտոնի և Կրօնիդեայ ։

Հ. սեպտ. 30 ։ Ճառընտ. Բ. երես. նի̅դ = նլ. և Ջ. խդ̅ = ծղ̅ ։ Զ ենոբ. և Յովհ. մամիկոնեան ։

ԵՐԿՆԱՀԱՆԴԷՍ հրեշտակք յերկրի՝ սրբասնել միանձունքն Անտոն և Կրօնի-դէս՝ էին վանականք անու՛ա-նիք 'ի մէջ յունաց՝ յՆին կեսարու կապա-դովկացւոց ։ Ուր իբրև եկն ս̅բ լուսաւորիչն մեր գրիգոր, և ձեռնադրեցաւ 'ի ս̅բ̅յն ղևոն-

դեայ, ընտրեաց զերկոսին զսոսա, և հաւա-
նեցոյց գալ ըն իւր յԾն հայոց մեծաց՝ հան-
դերձ քանի մի աշակերտօք իւրեանց. զի լի-
նիցին ինքեան գործակից 'ի ծաղկեցուցա-
նել զկարգ միանձնական 'ի հայաստան Ծ, և
ոպ փորձ և կիրթ անձինք՝ լինիցին վարժա-
պետք հոգևորք դասուց կրօնաւորաց։

Արդ բերեալ զնն նբյն գրիգորի մինչև յեր-
կիրն տարոնոյ, հիմնարկեաց անդ զեկեղե-
ցի և զվանս յանուն նբյ կարապետին 'ի տե-
ղին իննակնեան կոչեցեալ. որ և անուանե-
ցաւ գլակայ վանք յանուն զենոբայ եպսի ա-
սորւոյ՝ գլակ մականուանելոյ, որ եղև ա-
ռաջին առաջնորդ այնր վանաց։ Անդ եթող
առ նմա և զերկոսին միայնակեացսն զանտոն
և զկրօնիդէս. որք պայծառացուցին զեկե-
ղեցի նբ կարապետին, և զմիաբանս ուխտին
կրթեցին յամ բարեկարգութիւն կրօնաւորա-
կան վարուց։ Եւ օր քան զօր բազմացան
անդ արք ընտիրք աշակերտեալք ըն ձեռամբ
նբցս. թող զորս 'ի սկզբան անդ նա ինքն նբն
գրիգոր եթող 'ի տեղւոջն կրօնաւորս բե-
րեալս 'ի կեսարիոյ քառասուն և չորս. և զե-
պիփան աշակերտն անտոնի և կրօնիդեայ
հաստատեաց հայր վանաց՝ իբրև տեղապահ
զենոբայ եպսի. որ և յետոյ զբուն իսկ զա-
ռաջնորդութիւն ընկալաւ զկնի մահուն զե-
նոբայ։

Իսկ երանելիքն անտոն և կրօնիդէս հոգևոր
վերակացութեան և դաստիարակութեան միայն ուշ
ունէին. և հանապազորդեան պաշտաման

աղօ-

աղօթից 'ի տանն ա̅յ, և տքնութ̅ և ժուժ-
կալութ̅ հպատակ կային. և օրինակաւ վա-
րուց իւրեանց քան բանիւք կրթէին և զայլս
'ի ճգնողակն վարս. և երբէք երբէք առանձ-
նացեալ 'ի մերձակայ անտառ՝ ճգնէին յա-
ռանձին խուղս։ Ա̅ռ որս և ը̅ պարապոյ ժա-
մանակի յայց ելանէր ն̅ք լուսաւորիչն, և ու-
րախ լինէր 'ի տեսանել զն̅ն. և և ս քան զև ս
յորդորամիտ գործէր զինքնայորդոր փոյթ
ն̅ց յա̅մ առաքինի վաստակս։ Եւ ոչ այսչափ
միայն, այլև 'ի գրել ն̅քյն գրիգորի շնորհա-
գիր նամակ շնորհակալութ̅ առ ն̅քն ղևոն-
դիոս վ̅ն ը̅ունելոյ 'ի պարգևի մասին զնըշ-
խարս ն̅քյ կարապետին և զմարմին ն̅քյն ա-
թանագինեայ, մեծամեծ գովուի̅ս արձանա-
գրեաց և զերկոցունց միանձանցս, ո̅պ թէ
և զն̅ն հանգէտ նշխարաց ն̅քց ունիցի յ̅ծին
հայոց, այսպէս ունելով բանին։

* Իսկ զերկուս կենդանի վկայսն ք̅ն՝ զոր
,, դու յղեցեր ը̅ ի՝ զանտոն և զկրօնիդէս,
,, Թողի 'ի տեղիսն՝ ուր գիսանէսն (կուռք)
,, կործանեցաւ, զոր տեղի իննակնեանն կո-
,, չեն։ Որոց կէտ եդեալ զվարս իւրեանց
,, ծի. զի խաչել̅ իսկ են զմարմինս իւրեանց
,, ը̅ ք̅ն՝. և արդ մնան վ̅ն բազմաց փրկուե̅։
,, Զորս իբրև զանգիւտ մարգարիտս հա-
,, մարիմ զն̅ն տու̂եալ ինձ ‖։

Ո̅պ և ն̅քն ղևոնդ 'ի պ̅ինին առ ն̅ք լուսաւո-
րիչն ասէ. * Եւ 'ի ն̅քյն անտոնէ (ընկերէն
,, կրօնիդեայ) առաւել ուսցիս զվարս ճրգ-
,, նուե̅, որ ոչինչ պակաս է 'ի հրեշտակաց ‖։

Եւ եղեւ յետ ամաց ինչ՝ յորժամ տրդատ արքայ և ՆԲն գրիգոր գնացին յողջոյն մեծին կոստանդիանոսի այն ինչ դարձելոյ 'ի հաւատս, 'ի դառնալ իւրեանց 'ի հռովմայ յամի ՇՆ իբր 319, եկեալ 'ի հայս, և հասեալ յիննակնեան տեղիս 'ի վանս գլակայ, խնդիր արարին ՆԲյն անտոնի և կրօնիդեայ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. այս ամ մի է՝ զի ոչ եմք տեսեալ զՆՆ։ Եւ տրտմեցաւ թագաւորն յոյժ. զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա։ Իսկ ՆԲն գրիգոր առաքեաց խնդրակս 'ի խուցս առանձնութեան նոցա զալբիանոս եպս հարքայ հանդերձ երկու սարկաւագօք, տուեալ նց խրատ, թէ յառաւօտուն պահու ելանեն յանտառէն 'ի բլուրս ուրեք. և դուք անդ կացէք զգոյշ, զի մի զձեզ տեսեալ փախիցեն. և նց երթեալ՝ ոչ կարացին գտանել զաւուրս չորս։

Իսկ 'ի լուսանալ աւուրն հինգերորդի լուան զձայն սաղմոսերգութեան նց, զի գային յանտառէն յարևելից կուսէ 'ի քաղցրահամ աղբերէն՝ դէմ եդեալ 'ի տեղին, որ կոչիւր արևու բլուր. զի անդ էին դարափոր խցկունք նց։ Եւ իբրև մերձեցան 'ի գլուխ բլրոյն, սկսան անդ սաղմոսել այսպէս. լսելի՛ արա ինձ առաւօտուց զողորմութիւն քո, զի ես 'ի քեզ ՇՐ յուսացայ. իսկ ալբիանոս ասէ. հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ. յայնժամ զտեղի առին անտոն և կրօնիդէս. և աղօթեալ անդ՝ նստան ԸՆ եպսին։ Ասէ անտոն ցալբիանոս. բարի՛ եկիր ճանապար-

պարհնդրդ խաղաղութեան. և նա ասէ. բարի
և խաղաղութեի՛ք ձեզ միշտ. այլ և օթե-
ւանք հոգւոյն սրբ. այլև աւետիք ձեզ, զի
որդի գրիգոր և արդասի՛ք գնակութեան ձեր
եկեալ են, և յայժ ինդրկին զձեզ։ Ասէ ն՛ք
ասեն. նաև ձեզ և՛ առաւել ուրախութի՛ք և
աւետիք, զի այսպիսի բարիք ա՛ծ՛ի ձեռս
ժամանակի յայտնեաց, և զատանայ կոր-
ծանեաց, զհոգևոր խաղաղութի՛ն ՝ի պար-
գևել սրարիչն յաւիտենից։

Այս իսկոյն առաքեաց ալբիանոս զսարկաւա-
գունն առ հայրապետն աւետաւորս՛ի վանս
գլակայ. և որդի գրիգոր արձակեաց առ տըր-
դատ աւետաւորս՛ի ստորոտ արձան լերինն
զնոյն սարկաւագունան։ Օ՜ որ լուեալ տըր-
դատայ՝ լի եղև յոյժ ուրախութի՛ք, և փու-
թացաւ գալ՛ի վանսն հանդերձ գլխաւորօքն,
այլ՛ի տեղւոջն՝ ուր զաւետիսն ետուն նմա,
հրամայեաց վեմս ժողովել՛ի կարկառ ե-
րեսելն, որ կոչեցաւ՛ի քնակչաց տարոնոյ՝ ա-
ւետաց խաչ։

Յայնմ վայրի յառաջեաց որդի գրիգոր եր-
թալ՛ի տես անտոնի և կրօնիդեայ, առեալ
ընդ իւր զդասս պաշտօնակից և զնչան տրու-
նեան խաչին՝ հանդերձ քահանայիւք և ա-
նուշահոտ խնկօք. ուր ձայն ուրախութի՛ք
պաշտօնակիցն զանտառան հնչեցուցանէր։
Յորմէ մերձ եղեն սոքա՛ի բլուրն՝ ուր կային
անտոն և կրօնիդես, ն՛ք ընտաք փութացան
գալ՝ որպ հայրապետին. և միաբան եղեալ
՛ի բլուրն՝ աղօթեցին։ Այս կետ ողջունին՝

միւսանգամ ասէ ցնս̄ նբն գրիգոր. բարեօք
գտաք զձեզ և խաղաղութ բ̄՝ առաւօտք բա-
րեաց. և ն̄ք ասեն. բարի եկիր արուսեակդ
արդարութ̄ , որ զտիեզերս լուսաւորես՝
մշակ առանց ամօթոյ 'ի քս̄է , և աշտանակ
բարձրագոյն քան զերկինս ։ Եւ այսպիսի
բանիւք սիրոյ և հոգևոր մեծարանաց իջին
'ի բլրոյ անտի , որ յայնմ հետէ կոչեցաւ ա-
ւետեաց բլուր , և եկին 'ի գլակայ վանս ։
Եւ 'ի մտանել ն̄ց յեկեղեցին՝ հանդիպեցաւ
ն̄ց ա̄ծասէր թագաւորն տրդատ , և ծունր
եդեալ հայցէր օրհնիլ 'ի կենդանի ն̄բցն յան-
տոնէ և 'ի կրօնիդեայ. և յարուցեալ ձե-
ռամբ ն̄ց՝ համբուրեաց զն̄ս ։ Ապա եկեալ
նստան առաջի վկայարանին. և ն̄ք բազում
վ̄դպութ̄ բ̄ խօսէին ը̄ արքայի և ը̄ նախա-
րարս ն̄ր , գովելով զփոյթ ա̄ծպաշտութ̄ ն̄ց ,
և ուսուցանելով և ս քան զև ս առաւելուլ 'ի
սրբութ̄ կրօնս ։ Իսկ թագաւորն մեծ գո-
հութ̄ ա̄յ մատուցանէր. և կացեալ 'ի տեղ-
ւոջն զաւուրս տասն և հինգ՝ ապա յետ այ-
նորիկ գնաց 'ի բուն կայեանսն արքունի 'ի
վաղարշապատ քաղաք ։
Իսկ ն̄բն գրիգոր եկաց այլ և ս աւուրս տա-
սըն. և ապա գնաց շինեաց վկայարան և
վանս 'ի ստորոտս լերինն տորոսի. ուր հան-
գոյց զնշխարս առաքելոցն՝ զորս եբեր 'ի
հռովմայ. վ̄ն̄յ և կոչեցաւ տեղին առաքել̄ք.
ո̄պ և յանուն եղիազարու եղբօրն զենոբայ ,
զոր կարգեաց առաջնորդ տեղւոյն , կոչեցաւ
եղիազարու կ̄մ ղազարու վանք ։

Յետ

Յետ ամաց ինչ անցելոց՝ յորժամ վախճա-
նեցաւ վենոբ գլակն կոչեցեալ՝ հայր գլակայ
վանացՙ կացեալ յառաջնորդութեանն ամն ի,
Ի տասներորդ ամի յաջորդին նոր եպիփանու
եկն ՚ոբն դրիգոր առ անտոն և կրօնիդէս՝
քնակել առ նմա յանապատին. և եղև առ նմա
իբրև ամիսս երիս յաւետեաց բլուրն։ Ասէ
նմ Հանին անտի՝ ասելով. գնա յանծանօթս
ուրեք, զի մի աստ փառասիրութեն մատու-
ցանեն քումմ արքութեդ. և ՚ոբ հայրն մեր
երթեալ քնակեցաւ Ի լեառն սեպուհոյ Ի
մանեայ այրսն. ուր յետ իբր եօթն ամաց
փոխեցաւ առ քն, մինչդեռ տակաւին կեն-
դանի էին անտոն և կրօնիդէս. որք և կե-
ցին զկնի այլ ևս ոչ սակաւ, փայլեալ նշա-
նագործութեբ՝ բժշկելով զհիւանդս և զդա-
ւադրս անուամբ ՚ոն։

Սոքա տեսին և գլվախձան աշակերտի իւ-
րեանց եպիփանու՝ որ վարեաց զառաջնոր-
դութեն գլակայ վանացն սոն Ը. որումմ յա-
ջորդեաց ստեփաննոս աշակերտ նորին եպի-
փանու ամն ժԸ։ ՚ի սորա չորրորդ ամին, այն
Ե յամի ՚ոն իբր 355, և Ի վերջին ամի կա-
թողիկոսութեն ՚ոբն վրթանիսի՝ վախճանե-
ցաւ ՚ոբն անտոն. և յետ երկու ամաց սբն
կրօնիդէս. կացեալք զառաջինն ամս հնգե-
տասան Ի բուն յիննակնեան վանս գլակայ,
որ և վանք ՚ոբ կարապետին. և ապա այլ ևս
ամս քառասուն Ի մերձակայ անտառն նոյն
վանացՙ. ղորոց զպատուհասական մարմինս բե-
րեալ թաղեցին Ի վանս անդ գլակայ Ի մէջ

դրախտին՝ ոտկաւ ինչ Հեռագոյն լեկեղեց-
ւոյն ըս Հարաւոյ կուսէ : Գնեղեցիկ Հանգի-
պեցաւ և այն , զի մի և երկու ամաւ յետոյ
քան զիջխումն Տըջն անտանի և կրօնիգեայ
՝ի Հայս՝ եղև վախճան և սբ Հօրն անտանի
անապատականի յեգիպտոս , որ էր նոյ ժա-
մանակակից և Տասակակից : (1)

XXXX

ան ձեզնից ոչ ոք ինձ մեղադրել կարող է ։ Եթե ես ճշմարտությունն եմ ասում, ինչո՞ւ դուք ինձ չեք հավատում ։ Ով Աստծուց է, նա Աստծու խոսքերն է լսում ։ Դուք չեք լսում, որովհետև Աստծուց չեք ։

Հրեաները նրան պատասխանեցին ։ Մենք չէ՞ որ ասում էինք, թե դու սամարացի ես և դևահար ։ Հիսուսը պատասխանեց ։ Ես դևահար չեմ, այլ պատվում եմ իմ Հորը, իսկ դուք անարգում եք ինձ ։ Ես իմ փառքը չեմ փնտրում ։ Կա Մեկը, որ փնտրում է և դատում ։ Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ ։ Եթե մեկը պահի իմ խոսքը, նա երբեք մահ չի տեսնի ։

Հրեաները նրան ասացին ։ Հիմա գիտենք, որ դևահար ես ։ Աբրահամը մեռավ, մարգարեները՝ նույնպես, իսկ դու ասում ես ։ Եթե մեկը պահի իմ խոսքը, նա երբեք մահ չի ճաշակի ։ Մեծ է՞ս դու մեր հայր Աբրահամից, որ մեռավ ։ Մարգարեները՝ նույնպես մեռան ։ Ո՞վ ես դու քեզ համարում ։

Հիսուսը պատասխանեց ։ Եթե ես ինքս իմ մասին վկայեմ, իմ վկայությունը ճշմարիտ չէ ։ Իմ մասին վկայում է Հայրը, որի մասին դուք ասում եք, թե մեր Աստվածն է ։ Դուք չեք ճանաչում Նրան, իսկ ես ճանաչում եմ Նրան ։ Եթե ասեի, թե չեմ ճանաչում Նրան, ձեզ նման սուտասան կլինեի ։ Բայց ես ճանաչում եմ Նրան և պահում եմ Նրա խոսքը ։ Ձեր հայր Աբրահամը ցնծաց, որ կտեսնի իմ օրը ։ Տեսավ և ուրախացավ ։

Հրեաները նրան ասացին ։ Դեռ հիսուն տարեկան չես, և Աբրահամը տեսե՞լ է քեզ ։

Հիսուսը պատասխանեց ։ Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ ։ Մինչև Աբրահամը չծնվեց, Ես կամ եմ ։

Այդ ժամանակ նրանք քարեր վերցրին, որ Նրա վրա նետեն ։ Բայց Հիսուսը թաքնվեց և դուրս եկավ տաճարից ։

ԻՆՉՊԵՍ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ

Աջց Աօթն Խոտաձարակաց ։

Հ. ԱՆԳՈ. 30 ։ Նաահ. Օ. ՅԷ = ՅԷ ։ Յու-
հաննէս Մաիքոնեան ։

Ի ՈՐՋԱՐՈՒԱՐՈՐ ԹԱՒՈՒՄ, եօթն աջ Ձգնաւորքս լուսաւորչիս փայլ վարուք՝ խորհրդով ասին ի շարականացն նման լինել եօթն նաեւիւ մոլորակաձեւ երկնից կամարաց ։ զի էին արդարև լուսաւորք ընտրեալ տարածիկ վառ

վտարանդութ՝ բ՝ յանապատի մոլորեալք, 'ի խնդիր լինելով կամակատար լինել արարչին իւրեանց, ուր և կամք իցեն նմա ցուցանել ինքեանց տեղի հանդարտութ՝ ե. և ա՝ծ էած զն՝ս յանապատ ՝սբյն անտոնի և կրօնիդեայ. վ՝սյ և ընդ ն՝ս եղեն տօնելի, թէպէտև բաղում ժամանակաւ յետոյ էին քան զն՝ս:

Արդ՝ 'ի վախճան վեցերորդ դարու, 'ի ժամանակս որմզդի պարսից արքայի և որդւոյ ն՝ր խոսրովու, և յաւուրս մօրիկ կայսեր յունաց, առ որովք զմարզպանութ՝ի հայոց ՝ծին ունէր սմբատ բագրատունի՝ բազմայաղթն կոչեցեալ, և զառանձին իշխանութ՝ի կամ զմարզպանութ՝ի տարոնոյ վարէր քաջն մուշեղ՝ գործակից ունելով զգայլ վահանն, պայծառացաւ յոյժ վանք ՝սբյ կարապետին 'ի մուշ տարոնոյ՝ որ և գլակայ վանքն: Զի զկնի ութամեայ առաջնորդու՝ ե հօրն բասլի կարգեցաւ 'ի տեղի նորա հայր վանաց՝ աշակերտ նորին թոդիկ, այր ՝սբ և ճգնաւոր, որդի մեծատան և ազնու՛ական. որ ձեռն էարկ վերստին շինել զհին վանսն և ը՝արձակել. և բազում արս ընտրեալս և ճգնաւորս 'ի բանաւոր փարախ անդր ժողովեաց՝ թը՛ով իբրև երեք հարիւր իննսուն և ութ:

Եւ այնչափ մեծացաւ անուն ՝սբյ ուխտին գլակայ, մինչև չորք արք խոտաճարակք անու՛անի ճգնաւորք 'ի սահմանաց յունաց (կմ 'ի մասնէ բաժնի յունաց, ուր նստէր յովհան կթ՝ղկս բագարանցի,) անդր եկին հասին. զորս բազում մարդասիրութ՝ բ ընկալեալ ՝սբ

հօրն

հօրն Թոդկայ՝ պատուհեաց զնս իբրև արս ընտրեալս յայ. և նց հաճեալ յոյժ ը բարեկարգութի տեղւոյն՝ կամեցան մօտ'ի վանսն առնել զճգնարանս իւրեանց. և զի հաճոյ Թուհեցաւ նոցա վայրք տեղեացն անտառին՝ բնակեցան 'ի նմա։

Իսկ յետ երկուց ամսոց դալստեան նց լուհան և այլք ոմանք երեք 'ի կողմանց սագաստանի, և եկին 'ի վանս գլակայ. և 'ի շրջիլն 'ի մերձակայ վայրս՝ հանդիպեալ չորից խոտաճարակաց, յաւելան և ինքեանք 'ի նս, և դադարեցին 'ի նմին անտառի բազում ճգնութ ը և խոտաբուտ կենօք, որոշեալք յամ մարմնական գրգանաց, և 'ի խաչ հանեալ զանձինս իւրեանց կենդանւոյն ը քսի։ Եւ երբէք երբէք գային 'ի վանս առ սբ հայրն Թոդիկ՝ շահելով 'ի նմանէ, և շահեցուցանելով զեղբարս հոգևոր բանիւք և օրինակաւ իւրեանց. միանգամայն և հաղորդ լինէին սբ խորհրդոյն. և անդրէն դառնային 'ի ճգնարան իւրեանց. և այսպիսի ածահաճոյ վարուք կեցին ամս քսան։

Եւ եղև յետ այնորիկ 'ի յարձակիլ խոսրովու 'ի վր փոկասու կայսեր յունաց՝ 'ի վրէժ արեանն մօրկայ, կոչեաց և զմուշեղ մամիկոնեան լինել իւր նիզակակից. և յոչ առնուլ նր յանձն՝ բարկացաւ Թագաւորն. և 'ի դառնալ իւրում 'ի յունաց յաղԹուբ և բազում աւարաւ, առաքեաց զմիհրան զքեռորդի իւր՝ աւերել ասպատակուբ զերկիրն տարոնոյ, և զմուշեղ ձերբակալ առնել։ Իսկ միհ-

բան Թէպէտև չկարաց ինչ ստնանել մու-
շեղայ, բայց գունդ մի 'ի զօրաց միհրանայ
գտեալ իւրեանց առաջնորդ՝ խաղացին գալ
հասանել 'ի գլակայ վանս, կոտորել զաբե-
ղայս, և կողոպտել զսպասս եկեղեցւոյ։
Տեղեկացել եօթն խոտաճարակաց վ՚ս հա-
սանելոյ հինին մերձ յինքեանս, աճապարել
եկին 'ի վանս, և փախուցին զմիաբանս առ-
հասարակ յամուրն ողկան. միայն զսպասա-
ւոր եկեղեցւոյն և զհայր վանացն զԹոդիկ
մնացուցին առ ժամանակ մի 'ի տեղւոջն. և
ինքեանք հաղորդեալք մարմնոյ և արեանն
քս՚ի՝ զտեղի կալան յեկեղեցւոջ անդ. զի մի
անբնակ գտել հինից զտեղին՝ 'ի խնդիր լի-
ցին բնակչացն. և եթէ վտանգ 'ի վ՚ր հաս-
ցէ, յանձն առին սիրով դնել զանձինս 'ի վ՚ր
եղբարց, և մեռանիլ վկայական մահուամբ
'ի ձեռաց անհաւատից՝ վ՚ս բարւոյ բովան-
դակ ուխտին։ Եւ յետ աղօթելոյ լռուբ՚ յե-
կեղեցւոջ, մին 'ի նոցանէ՝ որ կոչիւր Թէոմն,
էառ տոմս, և գրեաց զաղօթական բանքս՝
զոր զկնի միաբան մատուցին, տարածեալ
զձեռս իւրեանց առաջի ս՚բյ սեղանոյն։
Տ՚ր ա՚ծ զօրութ՚եց, և արարիչ յաւիտենից,
որ ստեղծեր զմարդն 'ի պատկեր քոյոյ բա-
րերարութ՚եդ, և կացուցեր զնա իշխան 'ի
վ՚ր երկրի, և ետուր նմա զփառս և զպատիւ՛
յաւիտենական և անմահ։ Ընդ որ մախա-
ցեալ բանսարկու՛ին՝ կործանե՛աց զնա 'ի փա-
ռացն. ը՚ որում եմուտ մեղք յ՚ծ, և 'ի մե-
ղացն մոռացումն, և 'ի մոռացմանէն կորուստ

յաւիտենական. ուստի զորդեգրութիւն՝ որ ը̄ ա̄յ էր, ջնջեցաք պատրանօք մեղացն. և փրկուե՛ ճանապարհն բարձեալ եղև, և մահ թագաւորեալ։

Իսկ դու ա̄ր բարերար գթացար 'ի ստեղծ-ու՛ածս ձեռաց քոց, և առաքեցեր զմիածին որդիդ քո 'ի փրկութի՛ արարածոց քոց. որ եկն և ծնաւ 'ի կնոջէ 'ի մեր նմանութի՛ս. և ոչ ունելով իւր զմեղս՝ դատապարտեաց զմեղս 'ի մարմնի իւրում, և ելոյծ զանէծս 'ի վ՛ր խաչին. և ոչ ծառայելով ն՛ր ապակա-նացու քնութի՛ս՝ ելոյծ զապականութի՛ մա-հու՝ 'ի գերեզմանի դնելով. և իշխան գոլով 'ի վ՛ր մահու՝ զմահ գերեաց, և զդժոխս աւերեաց, և զարգելել՛ն ազատեաց, և ճա-նապարհ յերկինս ուղղեաց՝ առաջնորդելով ամենեցուն յառաջին անմահական վիճակն։

Օ այս ա̄մ արարեալ՝ զմարմինն իւր ետ ա̄մ հաւատացելոց 'ի կերակուր, և զարիւնն յըմ-պելի. և զմահ ն՛ր պատմեն ա̄մ հաւատա-ցեալք, և զմահն՝ որ վ՛ս անու՛ան նորա, առ ոչինչ համարին, և՛ զանձինս իւրեանց մատ-նելով տանջանաց վ՛ս երկնային յուսոյն հա-տուցմանց։ Ա՛ս՛յ և մեք այսօր ը̄ նոցայն նա-խանձելով՝ մ՛ատնեմք զանձինս մեր 'ի մահ վ՛ս փառաւորեալ անու՛անդ քո. զի դու իսկ ասացեր, թէ որ զիս պաշտիցէ՝ 'ի հալածանս կացցէ։

Արդ աղաչեմք զքեզ, մի՛ տար զեկեղեցի քո ն՛բ 'ի ձեռս անօրինաց. զի մի՛ ասիցեն՝ թէ ո՞ւր է ա̄ծ ն՛ց, յոր յուսացան ն՛ք։ Յի-

չեա՛ ՝որ զդենուն արեան որդւոյդ քո , և փրկեա՛ ՝ի ձեռաց նեղչաց զՀաւատացեալսն անմահից քո : Մարգո՛ ՝որ զժողովուրդս քո . Հովուեա՛ և բարձրացո՛ մինչև յաւիտեան : Պարսպեա՛ ՝որ խնամատար աչօք քով , տալով օգնական նաև ՝ի նեղուե ՝ի դէպ ժամանակի : Զգեա՛ ՝որ զամբաձածուկ աջ քո ՝ի վէր բանալով փարախս այսորիկ , և մի տար զժառանգութիւնս քո (՝ի) բնակութիւն անՀաւատից . այլ եղիցի ձեռն քո ՝ի զօրացուցանել զՀաւատացեալսս , և որ դաւանեն զանուն քո խոստովանութիւնս առաջի ազգաց օտարաց : Պարգեւեա՛ ՝որ զյաւիտեանսն ՝ի քէզ , և փրկեա՛ յոգւոյ թշնամւոյն , որք ապաւինին ընդ Հովանեաւ եկեղեցւոյս այսորիկ սրբ : Տնօր անձանց մերոց ժառանգութիւն ՝ի վերինդ քո յԵՀՄ . զի վէմ քո մեռանիմք զօրհնապազ . և զանձինս մեր փեսկ անչափական մարգասիրութիւնդ քո ՝ի տանջանս մատնեցաք . այլ ինչ ոչ ունիմք պարտուցդ այդօրիկ զՀարուստն , քայց միայն յՀի սատ զնեղութիւն կրել :

Լուր ՝որ ազօթից մերոց , և խնդարձեցո՛ զոնկն քո ՝ի մաղթանս ծառայից քոց՝ բարեխօսութիւնդ ՝որ կարապետիս և մկրտչիս քո . և ազաչանաւք սորա պահեա՛ զեկեղեցի հաւատացելոց անդրդուելի և անսասանելի . զի Հաստատուն կացցէ Հիմն Հաւատոյ ՝ի վերայ Հիման առաքելական և մարգարէական քոյ թողութեանդ , մինչև երևեսցիս ՝ի դատաստան Համարէն Տի : Լսելի՛ փառք քո ՝որ ՝ի տաճարի սատ , զոր ընտրեցեր Հիմնարկութիւն սրբ

գրե-

գրիգորի՝ բնակութիւն ոբ կարապետիս. և կաց-
ցէ մնասցէ փառք ոբյ երրորդութեդ 'ի տեղ-
ւոջ աստ։ Առաքեա՛ տր զօգնութիւն 'ի բար-
ձանց. զի որք գայցեն 'ի սա վ՚ն կարեաց ան-
ձանց իւրեանց, ողորմեսցիս և բժշկեսցես
յիւրաքանչիւր ախտիցն. բայց եթէ կամք
իցեն քո թողուլ 'ի ցաւսն, զի աշխատեալքն
մարմնով՝ ապրեսցին հոգւով 'ի հանդերձել
աւուրն։

Եւ որք հաւատով յիշեսցեն զանուն ոբ եկե-
ղեցւոյս 'ի նեղութեան իւրեանց կամ 'ի վիշտս
կամ յանձկութիւնս չարեաց, կամ 'ի լլկանսն այ-
սոց, կամ 'ի գետավիժութիւն, կամ 'ի գազանա-
բեկութիւն, կամ 'ի վիհս անհնարին որոգայթից,
դու տր ա՜ծ մեր լուսիցես ն՜ց մարդասիրութ՜բ
քով, և ողորմեալ զերծուսցես զն՜ն. զի քո
արարածք են։ Մի՛ վ՚ն մեղաց նոցա դատեր
զն՜ն, այլ գթութ՜բ քո խնայեա՛, և մարդա-
սիրութ՜բ քո ողորմելով բժշկեա՛, որ աննա-
խանձ ամենեցուն մատակարարես ը՜ն իւրա-
քանչիւր պիտոյից։

Ընկա՛լ տր զաղաչանս մեր, և տո՛ւր շնորհս
բնակչաց սր՜, որ ը՜ն պանդուխտ կենաց գնայ-
ցեն 'ի կեանս յայսոսիկ, և ո՛չ ըստ մարմնոյ
քնքշանաց. Թո՛ղ զյանցանս ն՜ց բարեխօսութ՜բ
ոբ կարապետիս, և մեր հեղման արեանս.
գրեա՛ զն՜ն յորդեգրութ՜ն սբ՜ցն 'ի լոյս։ Այո՛
աղաչեմք, զի և մեղաւորաց ողորմեսցիս 'ի
կալ առաջի ոբ եկեղեցւոյս, և յունել բա-
րեխօս զոբ կարապետս. և մեր նահատա-
կութ՜ս հաշտեսցիս ը՜ն նն. և մի՛ անտես առ-
ներ

ներ զաղաչանս մեր , և զմեղաւորացն Թո՛ղ զմեզ , և զվիրաւորացն ողջացո՛ զվէրս • Ա՛րք ՚ի կենդանւոյ Իւրեանց ապաւինեցան յայս տեղի , և զորձեցին բարիս առ այս եկեղեցիս , դու հատո՛ նց բարեխօսուԹ՚ը նը կա՛տարեսցես ։

Ա՛նասցէ ու՛ր փառք և զօրուԹի՛ քո՛ ի վե՛ր վ՚ի՛ս այսորիկ • ոմ՛ յառաջ հիմնարկեցար սա քան զմե՛զ եկեղեցիս Հայաստան՚ի , և են՚ փառք մեծուԹի՛դ շուրջ զսուրբ , սոյնպէս և մնասցէ ՚ի սմա , մինչև գայցես ՚ի նորո՛գել զերկիր • և յայնժամ գտանիցես զսա նորոգ և անապականուԹի՛ զարդարեալ՝ ոմ՛ զխորանն՚ի հնուա՛ն ներքոյ և արտաքոյ ։ Ա՛յլ և զմեր մահս ընկալ՚ի հաճոյս քոյոյ ու՛ր Թի՛դ • զի դու կարօղ ես յա՛մի • և քեզ փառք յաւիտեանս ։

Ա՛ն ը ասել երանելեացն զամէնն՝ եկն ձայն յերկնից , որ ասէր • եղիցի՛ ձեզ որպէ՛ս և կամիք • և որք ծառայեսցեն ինձ ը՛ ձերում ասացեալոյդ՝ հատուցից նը՛ հատուցումն բա՛ րեաց յաւուրն այցելուԹե՛ • և զմեզ Թողից նը՛ • վ՚ի՛ զի մարդասէր եմ՛ առ ա՛մ դարձեալ • և դուք եկայք՚ի տեղիս լուսաւորս , զոր պատրաստեցիք ձերով ձգնուԹի՛դ ։ Ա՛ն լուե՛լ զայս՝ երկրպագեցին սո՛ց սեղանոյն ։

Ա՛ն արտաքս ելե՛լ պօղիկարպոս մին՚ի նո՛ցին՝ գնաց առաջի խաչին կանգնելոյ արտաքոյ վանացն , և սկսաւ անդ աղաչե՛լ զնո՛ց վ՚ի խաղաղուե՛ ՏԻ , և զեկեալ Թշնամին խորտակելոյ , և աղքատացն ՏՆալոյ ՚ի տեղիս իւրեանց ։

րեանց։ Յայնմ վայրի յանկարծակի հասին
անդր զօրքն պարսից. և իբրև տեսին զպօ-
ղիկարպոս, վաղվաղակի հատին զպարանոց
ն՝ր, և ընկեցին առաջի խաչին։ Եւ ինքեանք
եկին փութապէս 'ի դուռն եկեղեցւոյն, և
տեսեալ զայլսն ձեռնատարածս՝ սուր 'ի վ՝ր
եդեալ կոտորեցին։

Եւ էին անու՛անք համօրէն ՆԲ ճգնաւորացս
խոտաճարակաց՝ այսոքիկ։ Ա. Թէոմնաս։
Բ. Պօղիկարպոս։ Գ. Սիմէոմն։ Դ. Յով-
հաննէս։ Ե. Եպիփան։ Զ. Դեմառիոս։
Է. Նարկեսոս։ Սոքա եօթանեքեան կա-
տարեցան 'ի զօրացն պարսից յամի ՇՆ իբր
604. և 'ի թու՛ին հայոց ծԳ. յամսեանն քա-
ղոց՝ որ օր Դ էր; (որ և 'ի ժամանակին յայն-
միկ անկանի 'ի ի՝ր օր հոկտեմբերի,) յաւուր
հինգշաբաթու յիններորդ ժամու։

Եւ մնացին բարբարոս զօրքն 'ի վանս անդ
զայն գիշեր մինչև յառաւօտն, եդեալ 'ի
մտի կողոպտել և զեկեղեցին և աւերել.
այլ ՇՆ՝ր փակեաց 'ի նոցանէ զդուռն եկե-
ղեցւոյն, և ոչ կարացին գտանել. և սկսան
մրճօք հարկանել այսր անդր, և ոչինչ օգ-
տեցան. և ապա ըմբռնեալք յարհաւրաց և
զարհուրեալք իբրև այսահարք փախեան
տագնապաւ 'ի տեղւոջէ անտի։

Իսկ նշխարք ՆԲցն անկեալ կային անթաղ
զաւուրս երիս. և յետ երից աւուրց եկն
սպասաւոր եկեղեցւոյն, և հայրն Թոդիկ՝ (որ
կային 'ի Թաքստի,) տեսանել զիրսն. և
գտին զն՝ն կատարե՝լ, և յարտասուս եղեալ

լացին յոյժ ։ Ապա կոչէ՛ և զայլ միաբանսն, և առէ՛ զնշխարս նց՝ իջուցին 'ի մէջ դրախտին 'ի կողմն հարաւոյ, և անդ եդին զնոսա առ անտոն և կրօնիդէս, նշան խաչի կանգնեալ 'ի վ՛ր նց ։ Բայց քաջն մուշեղ մամիկոնեան իբրև լուաւ զկատարումն ՆԲ խոտաճարակացն, առ մեծութ՛ն սրտցաւուն՛ն անկաւ 'ի մահիճ զերիս աւուրս. ապա քաջալերեալ 'ի տ՛ր բարեխօսութ՛ն նց՝ վանեաց և կոտորեաց զպարսիկս 'ի ձեռն հնարից գայլոյն վահանայ. որով միւսանգտմ եղև հանդարտութիւն յերկրին տարոնոյ՝ աղօթիւք և արեամբ ՆԲ ճգնաւորացս ։ Եւ արդարև նախ ը՛ն հայցման ՆԲ լուսաւորչին՝ բարեխօսութ՛ն ՆԲ կարապետին, և ապա ը՛ն թախանձանաց եօթն խոտաճարակացս, եկաց մնաց յա՛մ դարս անխափան ուխտ մեծի կարապետին և մկրտչին՝ առաւել պայծառ քան զա՛մ վանորայս հայաստան Ծին 'ի սկզբանէ մինչև ցայժմ ։



Ա. Կ. Ը.

Վ. Կ. Ա. Յ. Ա. Բ. Ա. Ն. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Սբ̄յն Անանիայ առաքելոյ ։

Հ. հոկտ. 2 ։ Յ. հոկտ. 1 ։ Լ. յունվար. 25 ։ Բոլլանդ յովհ. անդ 'ի Բ̄ հատ. յնվ. էջ. 913. և 1151 ։ Մետափր. առ սուրիոսի. հոկտ. 1 ։ Հարտ և մէկնիչ ։ (1)

Ա. Ն. Ո. Ի. Ա. Ն. Ի. Ն. Յ. Ա. Շ. Ա. կերտս, և երևելին 'ի մէջ դասուց ընտրելոց նբ առաքեալն անանիաս՝ մի էր յեօթանասուն և երկու աշակերտացն քն̄ի. բայց միանգամայն աշակերտ ասի և նբ առաքելոցն պետրոսի և անդրէի՝ իբրև գործակից նց̄ 'ի բազում իրս. մինչև ձեռնադրիլ նմա 'ի վիմէն հաւատոյ եպ̄ս դամասկոսի (2), որ կարծի լինել երկիր ծննդեան նր̄ ։ Իւ էր անանիա փառացի մարմնով, այլ յոյժ հեզ և հանդարտ սրտիւ՛, լի հոգւով ա̄յ, առատ 'ի բանս և զուարթ 'ի գործս ։

Իսկ կատարեալ գովութի̄ նր̄ բովանդակի 'ի գործս առաքելոց, 'ի պատմել անդ սբ̄յն զուկայ, եթէ զիա՛րդ երևեցաւ նմա տ̄ր, և ընտանի բանիւ՛ հրաման ետ երթալ գտանել զսօղոս՝ զայն ինչ եկեալն 'ի դամասկոս,

կոս, և մկրտել զանօթն ընտրութեան. այն՝ որ 'ի տեսլեան զնորուն իսկ անանիայի զկերպարանս տեսեալ՝ սպասէր գալստեան նր 'ի բժշկել զինքն 'ի կուրութեան հոգւոյ և մարմնոյ. և թէ որպէս անվեհեր խնդրեաց և ընկալաւ անանիա 'ի տնէ որդիական համարձակութիւն զլուծումն տարակուսանաց իւրոց, ըստ որում խիթալի էր ամենեցուն անուն սօղոսի. և ապա տիրաբար չոքաւ քարոզեաց նմա, և դարձոյց զսօղոսն 'ի պօղոս. քանզի ձեռն եդեալ լուսաւորեաց զխաւարեալ աչս նր, և մկրտեաց զնա, և զօրացոյց լինել քարոզ ճշմարտութեան. մինչ զի վդպին հեթանոսաց ածապարգև վարժապետ ճանաչի մեծն անանիա, և ըստ նմին ամ արդեանց վաստակոց նր հաղորդ:

Սորին վս և պօղոս ինքնին յատենի հազարապետին յանդիման ամ հրէից յեէմ (3) պարծանօք պատմէր զդարձ իւր 'ի ձեռն անանիայի, ասելով. * Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրինաց, վկայեալ յամ բնակչաց՝ որ 'ի դամասկոս հրէայքն էին, եկն եկաց առ իս, և ասէ. սաւուղ եղբայր 'ի վեր հայեաց: Եւ ես նոյնժամայն 'ի վեր հայեցայ 'ի նա. (այս է, բացան կուրացեալ աչք իմ, և տեսի զնա.) և նա ասէ ցիս. ած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ՝ ճանաչել զկամս նր, և տեսանել զարդարն, և լսել բարբառ 'ի բերանոյ նր. զի եղիցիս վկայ նր առ ամ մարդիկ՝ որոց տեսերն և լուար. և արդ զի՞ հեղգաս. արի՛ մկրտեա՛ց և լուա՛

ըզ-

զմեզս քո՛ի կարդալ զանուն նը՛ ։ Եւ այս ասելոյ
՛ի նա զբօց · իսկ վկայաբանք առանդեն զորս
գիտեի՝ այսպէս ։

Արդ՝ սը՛ առաքեալն անանիա Թէպետև զա-
Թոռ իւր ունէր ՛ի դամասկոս , ուր կային ա-
շակերտք և հաւատացեալք ոչ սակաւ , բայց
ստէպ քարոզէր զաւետարանն և ՛ի շրջակայ
տեղիս երկրին ասորւոց և պաղեստինացւոց ,
առնելով նշանս և սքանչեսիս անուամբն քրի՛
հալածանօք հանդերձ յերեսաց հրէից և հե-
Թանոսաց զամն բաղումն ։ Այս եղև ՛ի շրջիլ
նը՛ քարոզուք յԵլեւԹերուպօլիս (որ Թարգ-
մանի ազատ քաղաք) և ՛ի շինս նը՛ , կալան
զնա կռապաշտք բնակեալք յաւանն բեԹա-
գաւրայ՝ յարևմտից յորդանանու , որ և ըստ
ոմանց բեԹաշեմի՝ միով մլռնաւ հեռի յԵ-
լեւԹերուպօլսոյ յիջանելն ՛ի գաղղ · և կա-
ցուցին առաջի դատաւորի տեղւոյն , որ կո-
չիւր լիկիանոս կամ զուկիանոս , այր Թշնամի
յոյժ անուանն քրի՛ , և սնդագոյն ջատա-
գով չՀածոցն՝ զորս կայսերքն պաշտէին ։ (4)
Ա՛ա զառաջինն քաղցրութը խօսել սկսաւ ընդ
առաքելոյն անանիայ , և ասէ · ո՛վ այր դու ,
տեսանեմ զքեզ սքանչելատեսիլ՝ իմաստուն
և հանճարեղ · արդ եԹէ լսիցես ինձ , քա-
զում բարութեց հանդիպիս դու · հապա մա-
տիր և զոհեա ՛ծոցն , և մի կորուսաներ
զանձն քո չարչարանօք ։ Պետրոս եւ ՛ն անա-
նիա , և՛ասէ · կռոց ես ո՛չ զոհեմ , և խու-
և համր բազնաց երկիր ո՛չ սպագանեմ , որ
բնակարան են դիւաց · այլ երկիրպագանեմ

յն՝ի քն՝ի տ՝ն իմոյ և ա՝յ ճշմարտի, որ եղև մեզ լոյս գիտութ՝ե, զոր և աչօք իսկ մերովք տեսաք. զի նա եկն մարմնով յ՝ն, և ազատեաց զմեզ 'ի մոլորութ՝է կռոցն. վ՝ս՝յ և ես պատրաստ եմ 'ի տանջանս և 'ի մահ, քանթողուլ զճշմարտութ՝ի և մոլորիլ զհետ խաբէուն։ (5)

Բարկացաւ դատաւորն, և ասէ. կարծեմ թէ 'ի մեծութ՝ի և 'ի զօրութ՝ի մարմնոյդ յուսացեալ՝ իշխես ոգորիլ ը՝ տանջանաց. որով և իմաստութ՝ի քո յանմտութ՝ի բերի։ Ապա ասէ առ դահիճսն. մերկացուցէք զդա, և հարէք չարաչար։ Իսկ առաքեալն ամբարձեալ զաչս և զձեռս յերկինս՝ ասէր. Տր յ՝ն քն՝ ա՝ծ զօրութ՝եց, մի՛ երբէք 'ի վարմս իւր թակարդեսցէ զիս թշնամին. այլ արժանի եղէց և ես չարչարիլ վ՝ս քո, և զարդարիլ պսակաւ քով, համադասեալ ը՝ ընտրեալ աշակերտս քո կենօք և մահու։

Յայնմ վայրի դահիճքն անողորմ հարկանէին զթիկունս սբ՝յն չոր արջառաջլօք. և քարոզն աղաղակէր. հնազանդ լեր դատաւորին, և զոհեա՛ դից հզօրաց։ Իսկ ն՝բն ոչինչ տայր պ՝խ՝նի, և ոչ համարէր ինչ զցաւս մարմնոյն առ սէրն քն՝ի։ Դարձեալ սկսաւ դատաւորն ողոք բանիւք հրապուրել զնա. այլ կշտամբեալ 'ի ն՝բյն վ՝ս լրբուն՝ն՝ ետ կախել զնա զփայտէ, և քերել զմարմինն երկաթի քերչօք մինչև յոսկերս, և ջահիւք խանձողել զվէրսն։

Մինչդեռ յայն տանջանս էր երանելին, ասէ

սէ ցնա դատաւորն . մինչև յե՞րբ ոչ հնազան-
դիս ինձ , և չառնուս յանձն մեծարել զան-
մահ դիս՝ զորս ինքնակալն պաշտէ ։ Պ՞ինի
ետ անանիա . զի՞ ստիպես զիս 'ի բերան ան-
գամ առնուլ զսնոտիս և զմեռելոտիս և ըզ-
գարշելիս, որ են ձեռագործք մարդկան փայ-
տեղէնք և քարեղէնք և պղնձիք . և ո՞րպէս
ոչ առնուս 'ի միտ զանմտութի՞ բանաւորաց՝
որք զանբանս և զանշունչս ա՞ծական անու՛ամբ
պատու՛են , և զարարու՛ածս իւրեանց արա-
րիչս կարդան և յուսան 'ի ն՞ս ։
Յայնժամ զամօթի հարել՞ դատաւորին՝ ետ
հանել զնա արտաքոյ քաղաքին և քարկոծ
առնել . և ո՞բ առաքեալն ասէր 'ի ժամ կա-
տարմանն . ո՛վ թ՞գր թ՞գրաց և տ՞ր տ՞րանց
ընկա՛լ քեզ 'ի պատարագ ը՞ունելի զզոհ ան-
ձին իմոյ 'ի փառս անու՛անդ քում սբ՞յ . և
այնպէս աւանդեաց զոգին ։ Իսկ զմարմին
սբ՞յն ծածկեալ ը՞ քարամբք 'ի բացի՝ եկին
և բարձին աշակերտք և ծանօթք ն՞ր , և տա-
րեալ թաղեցին 'ի հայրենի ժառանգութե՞
ն՞ր 'ի դամասկոս՝ յամի տ՞ն իբր 70 ։
Տուն ո՞բ առաքելոյն անանիայի 'ի դամաս-
կոս յիշատակի և 'ի զանազան մատենագրաց
յետին դարուց . որք ասեն , թէ եկեղեցի
շինեցաւ այն յանուն փրկչին , և առաքելոյ
ն՞ր անանիայի . այլ զկնի այլազգիք արարին
զայն իւրեանց մզկիթ ։ Իսկ պատու՛ական
նշխարք ն՞ր , ո՞պ ասի , եդան զառաջինն 'ի
դամասկոս յապարանս յուդայ՝ ուր ագաւ
պօղոս . և անդ ևս շինեցաւ տաճար գեղե-

ցիկ. այլեւս՝ ժամանակաց փոխադրութեան
՚ի հռոմ. ուր գլուխ սքին ցուցեալ լինիցի
երբեմն ՚ի տաճար՝ սքին պօղոսի, և այլ նըշ-
խարք ինչ յեկեղեցւոջ սրբուհւոյն բրաքսե-
տայ. բայց կարելւոյ է՝ կայսրն, որ և
արքայ բոյեմիոյ, խնդրեաց և էառ ՚ի հռոմ-
մայ զգլուխ սքյն անանեայ, և ոսկւոյ և ար-
ծաթով զարդարել՝ եւ յընծայ եկեղեցւոյն
բրակայ:

XXXX

չփոթեալ ղբանս պօղոսի՝ որ 'ի գործ. իզ. ը գրելոցս 'ի իբ։

(4) Են՝ որք կարծեն, թէ կոչեցեալն 'ի Լ. լիկինիոս. 'ի Հ. լիկիանոս. և 'ի Յ. լուկիանոս, իցէ նա ինքն ղուկիլիոս բաստոս դատաւոր հրէաստանի կարգեալ 'ի հռովմայեցւոց յայնմ դարու։

(5) Հ. ը հանրապէս ասէ զսբյն. * և այլ բազում բա-
„ նիւք յանդիմանեաց և անարդեաց զպաշտամունս նց ||։
զոր մետափրաստէս ը իւրումն ոճոյ ը լայնէ. որ չէ
օտար 'ի ճշմարտութէ, այլ՝ ձև հռետորական նկարա-
գրուե. յայտ է և յայլ ձևոց բանից նր. զր 'ի գրելն՝
թէ դատաւորն հրամայեաց քարկոծել զսբն, մերձ դնէ
և զայս, թէ՝ քանզի և դտուրն իսկ ինքնին քար էր, այս
է քարասիրտ. և թէ՝ սբն հանդերձեալ քարկոծիլ,
փիսկ քարանց զլեզու իւր արձակեաց ը դէմ կռոց՝ ասե-
լով. ածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն.
որ էր սովորական տուն սաղմոսի 'ի բերանս համօրէն
վկայից։

ՏՕՆԱԽՄՐՈՒԹԻՒՆ

Սբց Երկոտասան վդպաց. և առանձին յի-
շատակ ծբյն Յռեթէոսի։

Հ. հոկտ. 1. վս ժբ վդպաց։ Իսկ վս յռեթէոսի. Հ.
հոկտ. 1. Յ. Լ. հոկտ. 4։ Դիոնէս. արիսպագ.
և այլք բանիւ նր։

ԵՐԿԻՆՔ ՅԵՐԿՐԻ ՃԱ-

նաչի եկեղեցի ծբ, յորում արե-
գակնաբար ծագեն դասք առա-
քելոց՝ ոպ լուսացնցուղ շառա-
ւիղք արեգականն արդարութէ. նորին զա-
ր ու-

րութիւն և դասք մարգարէից ըն նմանութեան լուսնի լուսատու լինէին 'ի գիշերի ստուերական օրինաց՝ մինչև 'ի ծագումն առաւօտու, որոյ աւետաւոր եղև արուսեակն գեղեցիկ՝ ոբ կարապետն յովհաննէս։ Երկոցունց դասուց հետևօղք գտան 'ի նմանութիւն աստեղաց հաստատուն՝ դասք լուսաւոր ոբ վդպաց 'ի նորումս. 'ի դէպ եկեղ պօղոսեան առածի, թէ զորս եդ ած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվդպս։

Արդ քանզի սահմանեալ է թիւ առաքելոց և մարգարէից, ըն նմին և օրէն եղև յանուանէ տօնախմբել զնս յեկեղեցւոջ ըն աւուրց աւուրց, թող զհամախումբ յիշատակ տօնից նց. իսկ երամք ոբ վդպաց չանկանին ըն թըւով, զր անթիւ են և հոյլք աստեղաց. սորին վս խորհրդով եղև ընտրել զերևելիս 'ի նոցանէ երկոտասան թուով ըն համարոյ առաքելոց, և ըն նմանութեան երկոտասան աստեղատանց՝ որք կենդանատեսակք վերաձայնին. և առնել 'ի մեզ զառանձին տօն յիշատակի նց՝ յաւուր տօնի մեծին անանիայի, որ զառաքելական և զմարգարէական և ըզվդպական պաշտօն միանգամայն յանձին բերէր, գոլով աշակերտ քոի, և վդպ վդպին հեթանոսաց։ Եւ այս անուանք են ժբ վարդապետաց ըհանուր եկեղեցւոյ. (1)

ա. Սբն դիոնեսիոս արիսպագացի՝ աշակերտ պօղոսի, և առաքելական հայր, զօրաւոր դրով և բանիւ, ծանուցեալ դլուխ ածաբանու

նութեան յետ յովհաննու ա՟ծաբան աւե-
տարանչի։

Բ. Սբ՟ն յռեթէոս աթենացի, ընկեր՝ միան-
գամայն և վ՟դպ դիոնեսիոսի, յոգնահան-
ճար և հոգիաբուղխ բերան. որ յօրինեաց
զա՟ծաբանական տարրութի՟ս, ր՟ զսկզբունս
և զհրահանգս, և զայլ խորիմաց ճառս և
օրհնութի՟ս։

Գ. Սբ՟ն սեղբեստրոս հռովմայ հայրապետ,
պայծառացուցիչ հաւատոցս քրիստոնէութե՟
'ի դարձման մեծին կոստանդիանոսի, և 'ի
գումարման առաջին տիեզերական ս՟բ ժո-
ղովոյն՝ իւրով ձեռնարկութ՟բ և սահմանա-
դրութ՟բ։

Դ. Սբ՟ն աթանաս աղեքսանդրացի՝ հզօր ա-
խոյեան ուղղափառութե՟ ը՟դէմ քս՟ամարտ
հերետիկոսաց, ազդու բանիւ՛ և գրով՝ բա-
զում հալածանօք հանդերձ։

Ե. Սբ՟ն կիւրեղ ե՟էմացի՝ պայծառ քարոզ
ճշմարտութե՟ ը՟դէմ հրէից և հեթանոսաց
և ա՟մ աղանդաւորաց, և հրահանգիչ և լու-
սաւորիչ բազմութ՟ եկելոցն 'ի հաւատս ճշ-
մարտութե՟. այն ինքն է հեղինակ գրոցն՝ որ
կոչի կոչումն ընծայութ՟, և թղթոյն առ կոս-
տանդ կայսր վ՟ս երևման ս՟բյ խաչին յե՟էմ։

Զ. Սբ՟ն եփրեմ խորի ասորին՝ աշակերտ ս՟բյն
յակոբայ մծբնացւոյ, ճգնութ՟բ և վ՟դպու-
թ՟բ փայլեալ, հոգելից մեկնիչ հին և նոր
կտակարանաց, ճառաբան և ներբողասաց 'ի
տօնս տ՟րունականս և 'ի ս՟բս ա՟յ՝ հանդերձ
աղօթական բանիւք բազմօք։

Է.

Է. Սէն բարսեղ կեսարացի եօթնալոյսն, այր կորովամիտ և իմաստայեղց, եօթնարփին շնորհաց հոգւոյն Ը՛ունական. անխոնջ 'ի գրաւոր վաստակս բազումս՝ 'ի ջաղխումն հերեսիովտաց և 'ի հաստատութի՛ ուղղափառաց. նոյն և զարդարիչ եկեղեցական պաշտամանց և աղօթից, և օրինադիր կարգաց կրօնաւորուն՛ ։

Ը. Սէն գրիգոր նազիանզացի՝ ա՛ծաբան կարդացեալ, լի հոգւով ա՛յ, և ըմբերանիչ հոգեմարտից և ա՛մ հերձուածողաց բարձրագոյն և անհրաժեշտ վ՛դպութ՛ բ. որոյ բազում են արդիւնք 'ի հաւատս ուղղափառուն՛ գրովք և գործովք ։

Թ. Սէն գրիգոր նիւսացի՝ եղբայր մեծին բարսղի՝ նորին համանման գիտուբ՛ և առաքինութ՛ բ, գեղեցկախօս և նրբախօս գրով և լեզուաւ. որ արար բազում ճառս և մեկնութ՛ս իմաստալիցս, և բազմօք աշխատ եղև 'ի պայծառութ՛ եկեղեցւոյ յաւուրս երկրորդ տիեզերական ժողովոյն ։

Ժ. Սէն եպիփան կիպրացի՝ այր ճգնաւոր և նշանագործ, առաքելական հոգւով բազմարդիւն յեկեղեցւոջ, հանդերձ ազգի ազգի գրաւոր վաստակօք ։

Ժա. Սէն յովհան ոսկեբերան՝ տիեզերալոյս վ՛դպ, արեգակնափայլ ցոլացել՛ յ՛ը հանուր տիեզերս. հայր համատարած ը՛ պօղոսի, և բազմավաստակ գրով քան զա՛մ հարս. որ ծովացոյց զվ՛դպութ՛ իւր ոսկեղէն բերանով, և գետահետեաց անդուլ դրչութ՛ բ. որ կայ

պահի

պահի 'ի գանձ եկեղեցւոյ։ Սա կոչի և ա-
պաշխարութեան վ՞դպ, զի մեծաւ մասամբ
վ՞դպուի՞ ն՞ր է քարոզական՝ 'ի պէտս վարուց
ուղղութ՞ե, եթէ՛ 'ի ճառս և եթէ՛ 'ի մեկնու-
թի՞ս ն՞բ գրոց։

ժ՞բ. Սբ՞ն կիւրեղ աղեքսանդրացի՝ կրկին
հոդւով լցեալ մեծին աթանասի և գրիգորի
ա՞ծաբանի, քաջ ախոյեան ուղղափառաց ը՞-
դեմ մարդադաւանին նեստորի յաւուրս եր-
րորդ տիեզերական ժողովոյն՝ գրով և բա-
նիւ՛. ո՞պ և ա՞մ հերձու՛ածոց կարկիչ իմաս-
տուն գրութ՞բ. Թո՛ղ և զմեկնուի՞ս և զճառս
յորդորականս։

Արդ Թէպէտ՝ և այլ անհամար վ՞դպք եղեն
յեկեղեցի ա՞յ յառաջ և զկնի քան զսոսա՝
ականաւորք սրբութ՞բ և քարոզութ՞բ բանին
գրաւոր և անգիր, բայց առաւել յառանձին
ազգս իւրեանց լուսածագեցին. գ՞ր 'ի մեզ
երանելի հայրն մեր ն՞բ գրիգոր լուսաւորիչ
և որդիք և թոռունք ն՞ր, և ն՞բ թարգմանիչք,
և յարևմուտս ն՞բն ամբրոսիոս, օգոստինոս,
հերոնիմոս, և մեծն գրիգոր. իսկ երկոտա-
սանեքին նախանշանակեալ ն՞բ վ՞դպք՝ եղեն
պայծառացուցիչք համօրէն եկեղեցեաց, որ
ը՞ ա՞մ տիեզերս, իբրև աստեղք լուսափայլք։
Եւ զի աստղ քան զաստղ առաւել է փառօք,
ը՞ նմին և չորեքին 'ի վ՞դպս եղեն առաւել
գերանշոյլ՝ ը՞ թու՛ոյ չորից աւետարանչաց.
ֆ՞ են աթանաս և կիւրեղ, բարսեղ և գրի-
գոր ա՞ծաբան. և այս ը՞ ա՞ծաբանական հան-
դիսի. ապաթէ ոչ՝ 'ի կարգի քարոզութ՞ե մի
միայն

միայն ճանաչի բերանն ոսկի։

Զայս ամ հոգեպարգև ձիրս և զառաքինի վարս միոյ միոյ 'ի ոբ վդպացս ուրոյն ուրոյն գտանես ճառեալ յաւուր տօնի իւրաքանչիւրոցն ըս կարգի տօնացուցին մերոյ։ Միայն զմիոյ 'ի նոցանէ ցս զյռեթէոսի՝ զառանձին յիշատակ պարտ և արժան է յայսմ վայրի նշանակել. զի այս իսկ է սեպհական տեղի տօնի նր 'ի սկզբան հոկտեմբեր ամսոյ առ ամ եկեղեցիս. և 'ի մեզ իսկ գլխովին՝ յայսմ վայրի 'ի պատիւ երեսաց նր զոյգ ըն նմին է կարգեալ և տօնախմբութիւն երկոտասան վդպաց միանդամայն, զոր ոչն է տեսանել առ այլս։ Արդ որչափ ինչ տեղեկուի կայցէ մթին յղգս ոբյն յռեթէոսի առ վկայաբանս, ունի այսպէս։

Յռեթէոս կմ հերոթէոս, (որ յունարէն գրի իէռօթէոս, և թարգմանի ածանուէր), էր աթենացի՝ մին 'ի խորհրդականաց ատենին արիսպագեայ, և վդպ մեծին դիոնեսիոսի արիսպագացւոյ՝ յառաջ քան զնա աշակերտեալ ճշմարտութե. մինչև լինել մի յերևելի աշակերտաց՝ գործակից առաքելոց և պատուական յաչս նց. զի էր այր լի հոգւով, յոգնահանճար գիտուբ և իմաստազեղ բանիւք։ Ձեռնադրեցաւ եպս յառաքելոց անտի. և 'ի հաւատալ դիոնեսիոսի արիսպագացւոյ և այլոց ոմանց յաթէնս 'ի ձեռն ոբյն պօղոսի՝ սա ինքն յռեթէոս եղև առաջին հրահանդիչ նց 'ի ոբ հաւատս։ Հովուեաց առ ժամանակ մի զաթոռն աթենացւոց յառաջ

ռաջ քան զդիոնեսիոս. և ապա նաև զեկե-
զեցի սպանիացւոց. ոպ̄ աւանդութի̄ է առ
նս̄ վաղեմի։

Իսկ յաւուր փոխման ա̄ծամօր կուսին գտաւ
յեէ̄մ՚ի ս̄ըն սիոն ը̄ այլ առաքեալս. և շար-
ժեալ՚ի հոգւոյն՝ խօսեցաւ արժանաւոր գո-
վեստ ներբողենի՚ի վ̄ր տիրամօր, դաւանե-
լով զնա ա̄ծածին և կոյս, և գեղեցիկ հռչա-
կելով զանզուգական պատիւ՛ ա̄ծամայրուե̄
նր̄՝ վսեմական վդ̄պութ̄ը և բարձրագոյն
ա̄ծաբանութ̄՚ի վ̄ր անճառ խորհրդոյ մար-
դեղութ̄ե բանին. որով և զդասս առաքելոց
զհրեղէն լեզուսն զարմացոյց. կմ ոպ̄ այլք
իմանան՚ի բանից դիոնեսիոսի, հրաշալի եր-
դըս յօրինեաց ներբողականս յօրհնաբանութ̄ի
տ̄ն և տիրամօրն։ Գրեաց և զայլ խորին ա-
ռասացութ̄իս ա̄ծաբանականս, ը̄ որում բա-
զում գովութ̄ը նշանակէ ս̄ըն դիոնեսիոս.
զորոյ զբուն իսկ զբանս արժա՛ն է լսել ըստ
յունական սկզբնագրին, ՚ի գիրս ա̄ծային
անու՛անց. գլ. Է. բնաբ. 9։

Քանզի խօսելով դիոնեսիոսի զանճառութ̄է
մարդեղութ̄ բանին ա̄յ՚ի կուսական արգան-
դի, և զայլ գործոց հրաշափառ տնօրէնութ̄
նր̄՝՚ի վ̄ր բերէ զվկայութ̄ի վդ̄պին իւրոյ ս̄ըյն
յռեթէոսի այսպէս. * Բայց այսոքիկ և՛ առ
՚ի մէնջ այլուրեք բաւականապէս ասացան,
և՛՚ի բարեփառ առաջնորդէն մերմէ (՚ի յռե-
թէոսէ) յա̄ծաբանական իւր տարրութ̄իսն
օրհնաբանեցան յոյժ գերաբնապ̄. զոր նայն
մասամբ՚ի սրբազան ա̄ծաբանիցն էառ (յա-

ռա-

ռաքելոց), և մասամբ 'ի հանճարեղական պատգամացն (յա̄ծաշունչ տառից) խուզարկութիւն ստացաւ՝ 'ի բազում մարզութիւն 'ի նոս և 'ի դեգերանաց. և մասամբ յա̄ծայնագոյն իմն փչմանէ ճաշակեաց, ոչ միայն ուսեալ, այլև կրեալ զա̄ծայինսն, և յընդակցութիւն առ նոս՝ եթէ այսպէս պարտ իցէ ասել, առ անուսանելին և խորհրդական միութիւն և հաւատ նոցին բացակատարեալ: Եւ զի զբազում և զերանական տեսութիւս հզօր մտաց նոր սուղ բանիւ՝ առաջի դիցուք, այսպա̄ս ասէ յաղագս յոսի 'ի ժողովեալսն իւր յա̄ծաբանական տարրութիւս.

,, Ամենեցուն պատճառն և ամենալցուցիչ՝ յոսի ա̄ծութիւն է. որ զմասունս՝ բոլորութիւն համաձայնս պահէ. և ինքն ո՛չ մասն և ո՛չ բոլոր ելով՝ և՛ բոլոր է և՛ մասն, ոպ̄ պարունակօղ յինքեան զա̄մ՝ և՛ զմասն և՛ զբոլոր, և գերունակ և նախունակ: Կատարուն իսկ է յանկատարսն ('ի մարդկայինս՝) ոպ̄ կատարողապետ. իսկ անկատար 'ի կատարեալսն (յա̄ծայինս)՝ ոպ̄ գերակատար և նախակատար: Տեսակ տեսակարար յանտեսակսն՝ ոպ̄ տեսակապետ. անտեսակ 'ի տեսակսն՝ ոպ̄ գերատեսակ: Լութիւն 'ի բոլոր էուն անապականաբար ընդմտել, և գերէական՝ յա̄մ էուն տարորոշեալ: Բոլորից պետութեաց և կարգաց սահմանիչ, և ա̄մ պետուն և կարգի գերադրական: Եւ չա՛փ է էիցս, և յաւիտեան. և 'ի վեր քան զյաւիտեան, և յառաջ քան զյաւիտեան: Լի 'ի կարօտեալսն.

դերալըսական՝ ի լցեալն ։ Ընձառ, անպա-
տուհաս, դեր քան զմիտս, դեր քան զկեանս,
դեր քան զէութիւն. գերաբնապէս ունի ըզ-
գերաբնութիւն, և գերագոյապէս զգերագոյու-
թիւն ։ Ո՛չ թէպէտ և միչև՝ ի քնութիւն մեր եկն
՝ի մարդասիրութիւնէ, և ստուգապէս գոյա-
ցաւ (ըստ մեզ), և այլ՝ գերագոյնն ածէ իրա-
գործեցաւ, ուր՝ ի քաւութիւնէ մասին են այս
ձևք բանից՝ որ առ մեզ՝ ի վեր քան զմիտս և
զբան նուճադեալք, այլ առ այսոքիւք (տա-
կաւին) ունի զգերաբնութիւն և զգերագոյու-
թիւն ։ Ա՛յ միայն անայլայլելի և անշփոթելի
օրինակաւ կցորդ մեզ եղև՝ ոչինչ կրելով՝ ի
գերալրութիւնէ իւրում յերեսաց անպատում
խոնարհութեաս, այլ զի և որ քան զամ նորս
նորահրաշ, ՝ի քնաւորականն մեր էր գերա-
քնական. և յորս ըստ գոյութիւնէ՝ գերագոյա-
կան. զամ զմերս առ՝ ի մէնջ գեր՝ ի վեր ք
զմեզ գերունական ։ ։ Յայս վայր են բանք
յոհեթէոսի մեծի՝ աթենացւոյ ածաբանի ։
Ո՛ւր և զյարգ պատկառանաց և պատուոյ՝
զոր տայ յոհեթէոսի դիոնեսիոս՝ ինոյն գիրս
ածային անուանց. ։ գլ. գ. բնաբ. 2. և 3.
* Ա՛ւ այս և աս (ասէ) թերևս պիտանատուութիւնէ
արժանի. զի ուր բարեփառ առաջնորդն մեր
յոհեթէոս զածաբանական տարրութիւնս գե-
րաբնապէս ժողովեալ է, մեք՝ ոչ թէ ոչ բա-
ւական իցեն այնոքիւք, զայլս ևս՝ և զառա-
ջիկայդ շարագրեցաք ածաբանութիւն ։ Պա-
քէն եթէ էր նոր բուռն հարեալ կարգաւ՝ ի
գործ արկանել զամ ածաբանական իրողու-

թիւն, և մասնաւոր բացայայտութիւնք ան-
ցեալ ընդ համօրէն ա̅ծաբանութիւն դլխա-
ւորումն, ոչ արդեօք յայսքան մոլեգնութիւն
կմ խօլականութիւն եկեալ էր մեր, որ՝պս թէ
կամ նրբատես քան զնա և ա̅ծայնագոյն վար-
կանել մեզ ձեռն արկանել յա̅ծաբանա-
կանս, և կմ երկիցս անգամ զնոյնս յաւե-
լորդս ասելով վայրաբանել. միանգամայն և
անիրաւիլ առ վ՝դպն և բարեկամն մեր, և առ
մեզ իսկ՝ որ յետ ա̅ծայնոյն պօղոսի՝ի նորուն
հրահանգեցաք բանից, զբարեփառութիւն ն՝ր
և զտեսութիւն և զյայտնաբանութիւն յանձինս
մեր յափշտակելով: Այլ քանզի նա ար-
դարև զա̅ծայինսն երիցաբար ճառել՝ զկար-
ճառօտ մեզ և զտեսողական սահմանս ար-
տադրեաց, և՝ի միում պարունակօղս բազ-
մաց, որպէս և զիարդ կարողութիւն իցէ մեզ
և որոց ը̅ մեզ վ՝դպքն են նորակատար ան-
ձանց, հրաման առաք պարզել և որոշել ը̅
մեզ համաչափ բանիւ՝ զտեսողական և զմիե-
ղէն հաւաքմունս գերահանճար զօրութիւն
առնն այնորիկ: Եւ դու ինքն (ո՛վ տիմոթէէ)
բազում անգամ զմեզ՝ի սոյն յորդորեցեր, և
զբուն իսկ զգիրսն (յռեթէոսի) ո՝պ կարի
խորիմաց անդրէն առ մեզ յղեցեր: Սմին իրի
և մեք զնա՝ որ՝պս կատարելոց և երիցագոյն
մտաց վ՝դպ, որոց՝ի վերոյ են քան զբազումս,
որոշեմք, իբրու երկրորդ իմն պատգամս և
ա̅ծաճաշակ բանից հետևօղս. իսկ որոց ը̅
մեզ են՝ մեք ը̅ մերումս չափու զա̅ծայինսն
աւանդեսցուք: Զի եթէ կատարելոցն է

հաս-

հաստատուն կերակուր, դովին կերակրելն
զայլս՝ որքանո՞յ արդեօք իցէ կատարելութ̄ե
գործ. . . . Մ՝ինչ զի ո՛չ երբէք առ այսպիսի
մեծ արեգակն ը̄դիմահայել ձեռնարկեցաք.
քանզի այսպէս մեք անձամբ անձին իրադէտ
եմք. . . . նոր և ոչինչ՝ ի ներքս ածել յանդըգ-
նելով, այլ մանրամասն խուզմամբք որո-
շելով և արտայայտելով զնրբին տեսութ̄ի
համառօտեալսն յիսկապէսն յեռոթէոսէ (ի̄ր
յ̄ածանո՛ւէր առնէ)॥։

Իսկ 'ի խօսել դիոնեսիոսի 'ի գլ. ՃԿ. ԷՆԱԲ.
13, կամ 14. յաղագս տարփման ա̄ծային սի-
րոյն՝ ասէ. * Ո՞ այսոսիկ և բարեփառն մեր
նո՛ւիրակատար ա̄ծայնաբար պատմեաց 'ի
տարփողական օրհնաբանութ̄ի̄ն. զորս ոչ է
անտեղի յիշել, և ո̄պ սրբազան ինչ գլուխ 'ի
վ̄ր դնել բանիս մերոյ՝ որ յաղագս տարփ-
ման॥. և բերէ երիս հատո՛ւածս յօրհնաբա-
նութ̄եց անտի յռեթէոսի, յորս խորին տե-
սութ̄ ճառէ նա, թէ զիա՛րդ սէրն ունի զզօ-
րութ̄ի միաւորական. և թէ քանիպատի՛կ է
սէրն. և թէ սէրն ա̄ծային յ̄այ ծաւալի առ
ա̄մ էս, և ա̄վ և յ̄ած փոխադարձի իբրև յա-
ռաջին աղբիւր և 'ի վերջին նպատակ սիրոյ
վ̄ն անսահման բարութ̄ե իւրոյ։ Իսկ վախ-
ճան ն̄բյն յռեթէոսի եղև յաթէնս կամ 'ի
սպանիա խաղաղակն հանգստեամբ 'ի քն̄։ (2)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ա ԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Տօնացոյցք ոչ յիշեն մի առ մի զանուանս ժք վճռից. այլ միայն յայսմաւուրքն. ըստ որոյ եդաք և մեք։ Բայց գրիչք ոմանք լեհայիք տեսեալ՝ թէ յամ հին տօնացոյցս կայ առաջնոր յիշատակ ժք վճռից ըստ անանիայ առաքելոյն, և ոչ չասացեալք անուամբք՝ զորս ընդրկնակեն՝ ի յայսմաւուրց, յաւելուն այսպիսի ինչ մտացածին. * և ըստ ոմանց ասեն, թէ յեհմէ (կամ յեհմ) երկոտասան վճիռք էին՝ ի միում տեղի բնակեալ, ի չար թագաւորացն՝ ի միում աւուր նահատակեցան ||։ որ կարօղն է առնել, առցի։

(2) Զի առնելն և այն եղանակ բանից յետնոցն՝ ի բոլանդեանց, որք՝ ի 4. հոկտ. ի կարգի սրց վերածելոց յալ ժամանակ՝ ասեն. * Հերոթէոս՝ ի յոլով սրբազան ցուցակս յունաց, և՝ ի նոցանէ նաև յայժմու հռոմէականն՝ յօրս յայս գրի։ Բայց հերոթէոս իբրու կէղծեալ ըստ ևեթ համարեալ է՝ ի բաղում գիտաւորս՝ բաց՝ այսու հիմամբ, զի ոչ՝ ի հռոմէականն փոքր, և ոչ յայլ դասական վկայագիրս յիշի. և ամ յիշատակուածքն՝ որ վնտռեն կայ, նախ զառաջինն ծագեցաւ՝ ի գործոց ընծայելոց ոչ բարւոք, ոմն ասեն, դիտնեսիոսի արիսպագացւոյ։ Վայ այն ինչ՝ որ սահմանելի է զհերոթէոսէ, գիտաւորաբար կախի զայնմ գտտաւանէ՝ որ զայնց գործոց առնելի է. և ըստ նմին զհերոթէոսէ՝ եթէ արդեօք ըստ սքոս դասելի իցէ սա, զի պողպատն լինցի ճառել յօրն, յոր զայն՝ ի վեր գիտնեսիոսի արիսպագացւոյ ուղիմք ածել. 9. հոկտ ||։ Ահա այսպիսի խեղաթիւր ընթացիւք յետնոց վերջոտնեցաւ պատուական գործն այն. և չէ հասեալ՝ ի կէս հոկտեմբերի՝ մնաց դադարեալ զայգ ըստ միաբանութեանց. և գժուարագիւտ է հատորն այն, յոր կամին առաքել զընթերցօղս. բայց չէ ինչ մեզ պիտոյ. զի զինչ ուղին խօսել պաշարեալքն յայսպիսւոյ ոգւոյ, և ըմբռնելքն՝ ի ցանցս նոր կրկնոցաց, որոց և ինքեանք աշակերտիլ կամին։

Զի տեղւոյս յերկարել զբանս. այլ միայն զայս ասեմք. զիրկն ձեռնարկդ՝ ի վերայ. իսկ արդ՝ ոչ միայն այժմու հռոմ-

հռովմէականն, այլև յունաց և հայոց սրբազան ցուցակք՝ ի սկզբանէ և այսր ածնելն ընդ գիտեն զյունեթէոս, ապա՝ ի զուր է նորաձև կարծիս երկբայութեանն՝ ի վեր հանել։ Դրձիզ ընդ ձեռնարկս. իսկ սրդ՝ բազմապոյնք՝ ի գիանաւորաց են հաստատիչք գրոց գիոնեսիոսի. ապա են հաստատողք և սրբոյն յունեթէոսի։ Որք թողից զայն, զի որք հանեն՝ ի ձեռաց պղծեն յունեթէոս, կորուսանեն և զնոքն գիոնեսիոս. զի ոչ աւելի հաւատան վարուց նոր՝ քան գրոց նր։ Թողեալ զայմ, շատ լեցին ընդէմ յոհան արանցդ յետնոց՝ համօրէն նախնիք յոհանց, որք միօրինակ հաստատուն ունին զսրբոյն գիոնեսիոսի և զյունեթէոսի։ Աղուճանի է և՝ ի յեաինս նոյն կարգի պետրոս հալէպիքս, որ առանձին քննութիւն յօրինեաց զվարս սրոյն գիոնեսիոսի. ուր և հաստատէ, թէ սրն յունեթէոս եղև նախ եպս աթենացւոց, և ապա սպանիացւոց. զորմէ ասէ յուլովագոյն լեցի բան՝ ի վարս նորին յունեթէոսի, այլ ոչ անկաւ այն՝ ի ձեռս մեր։

ԿԱՏԱԼՈԳՈՍ ՍՐԲՈՑՆ

Մատաթիայ առաքելոյ։

Ն. գլուխ. 4։ Յ. օգոստ. 9։ Լ. գլուխ. 24։
Բուլանդեանն հինաւկնիոս՝ ի Ձ. հատ. գլուխ. էվ.
431 = 454։



ՅԱՐԱՒԱԿԱՆ ՆՈՒ

երջանիկ յիսուսաքեղ, ընտրելն
ի դասս ընտրելոց աշակերտաց
նր՝ Մատաթիա կամ Մատա-
թիաս, (որ ըստ յունաց գրի Մատթիա կամ

մատթիաս, և ըն լատինացւոց մաթիաս,) էր
'ի ցեղէն ռուբենի կմ յուդայի՝ բեթղեհէ-
մացի, կրթեալ 'ի մանկութէ առ ոտս սի-
մէոնի օրէնսուսոյց վդպի կմ սիմոնի քահա-
նայապետի 'ի գիտութի՝ օրինաց և 'ի վարս
բարիս. և ապա ընտրեալ 'ի փրկչէն 'ի թիւ
եօթանասուն և երկու աշակերտաց: Իսկ
յետ համբառնալոյ տն՝ ընտրեցաւ վիճա-
կաւ մետասանից ըն վերին յայտնուե 'ի դա-
սակցութի՝ առաքելոց փոխանակ յուդայի
իսկարիովտացւոյ որդւոյն կորստեան. և ըն-
կալեալ զհոգի նբ՝ առաքելաբար քարոզեաց
ըն տիեզերս, և կատարեցաւ ոպ զայլ առա-
քեալս վն անուանն տն: Այլ թէ որպս կմ
զիարդ, արժան է լսել զաւանդս այլևայլ
վկայագրաց:

Յայսմաւուրքն մեր ունի աստանօր այսպէս.
* Յետ յարուե և համբարձմանն քնի՝ պետ-
րոս պետն առաքելոցն քնի, և վէմն հաւա-
տոյ ասաց ըն առաքեալսն. Եղբարք, չէ պարտ
թէ նուազի թիւս մեր խորհրդական, զորս
ընտրեաց տրն մեր երկոտասան. և յուդա
մատնիչն գնաց 'ի տեղի իւր, ըն սաղմոսին՝
եղիցին բնակութիք նց աւերակ. և զկարգ
նորա առցէ այլ ոմն: Եւ ընտրեցին երկուս
յեօթանասուն և երկու աշակերտաց. զով-
սէ (որ և յովսէփ բարսաբաս՝ յուստոս կոչե-
ցեալ), և զմատաթիա. և կացեալ յաղօթս՝
արկին վիճակս. և ել վիճակն մատաթեայ.
և համարեցաւ ըն մետասան առաքեալսն փո-
խանակ յուդայի: Եւ յիջանել հոգւոյն նբյ
'ի

'ի վերնատունն՝ էառ զհոգին ՆԲ հրեղէն լեզու՛աւ ԸՆ այլ առաքեալս ։ Եւ գնացեալ յեթէոպիա քարոզել զքՆ, և արար նշանս 'ի վՐ հիւ՛անդաց և այսահարաց. շինեաց եկեղեցիս, և կարգեաց քահանայս և պաշտօնեայս քՆի. և անդէն կատարեցաւ 'ի քՆ յՆ ‖ ։

Կամ ոՆ գրէ այլուր՝ 'ի յունիսի. 30. * Սա քարոզեաց զքՆ յեթովպիա և յեգիպտոս և յայլ բազում գաւառս. և հասեալ յերկիրն մարդակերաց՝ (զոր և այլք զմատթէոսէ պատմեն), և անդ կատարեցաւ ։ Եւ այլք ասեն՝ թէ յերկիրն սպարտիացւոց քարկոծեալ, և 'ի ծով ընկեցեալ, բերաւ մարմինն 'ի բիւրիտոն, որ է բալբաք քաղաք սողովմոնի ‖ ։

'Ի սոսին վերածին և գրեալքն 'ի յայսմաւուրս յունաց և 'ի ժամագիրս նՆ, թէ ՆԲն մատաթիա չոքաւ յեթէովպիա. (որ յոմանց արտաքին, և յոմանց ներքին եթովպիա կոչի. և յայլոց առաջին կմ երկրորդ եթովպիա ասի). և յետ լուսաւորելոյ զբազումս՝ անդ կատարեցաւ գանիւք և տանջանօք, կմ կախեալ զփայտէ ։ Սոյնօրինակ խօսին և ոմանք 'ի հռովմայեցւոց. բայց շատք ևս այնք են 'ի նոցանէ, որք զայլ և այլ աւանդուՐս հաստատեն՝ ԸՆ հաւաքելոյ բոլլանդեանց ԸՆ օրինակիս ԸՆ այսմիկ ։

Հասարակ կարծիք արևմտեայց այն է, թէ թէ ՆԲյն մատաթեայ վիճակեալ էր 'ի քարոզութԻ հայրենիք նՐ հրէաստան, և թէ անդ

կատարեցաւ 'ի վախճանի 'ի հրէից. բայց նախ
շրջեցաւ ասեն և յայլ տեղիս. ըս ոմանց՝ յե-
թէովպիա ափրիկեցւոց մինչև յծն բարբա-
րոսաց մարդակերաց. և ըս այլոց՝ յծն կող-
քիսաց 'ի սահմանս եւքսինեան պոնտոսի՝
մօտ 'ի տրապիզոն և 'ի փասիս գետ. ուր 'ի
սեբաստուպօլիս քաղաքի դնի լինել կատա-
րումն նր, և գերեզման նր մօտ 'ի տաճարն
արևու:

Իսկ այլք գրեն, թէ 'ի մակեդոնիա էանց.
ուր 'ի քարոզել ասեն առաքելոյն զհաւատս
քնի և զսրբութի վարուց՝ անսաստ գտեալ հե-
թանոսաց՝ ետուն նմա բաժակ դեղեալ, որ
պատճառէր զկուրութի աչաց. այլ յըմպել
նր անուամբն քնի, և յոչն վնասիլ՝ այլք և
կամեցան փորձել զնոյն ըմպելին, և կուրա-
ցան. զորս լուսաւորեաց առաքեալն՝ ոգիս
իբրև երկերիւր և յիսուն. բայց նք խրա-
տեալ 'ի դիւէն՝ դարձեալ խնդրէին զառա-
քեալն սպանանել որպս խափանիչ կռոց. և
նա կայր 'ի մէջ նոցա, այլ նք ոչ տեսանէին
զնա. մինչև յետ երից աւուրց կամաւ տայ
զանձն 'ի ձեռս նց. և արկանեն զնա կապա-
նօք 'ի բանտ. ուր եկեալ դիւաց՝ ոչ իշխէին
մերձենալ 'ի նա, և կրճտէին զատամունս 'ի
վր նր: Յայնժամ երևեցաւ տրն լուսով
մեծաւ, և քաջալերել զառաքեալն իւր՝ ե-
բաց զդուռն, և հրամայեաց ելանել և քա-
րոզել անդրէն: Բայց յընդդէմ դառնալ ո-
մանց խստութք՝ պատառեցաւ երկիր, և ե-
կուլ զնս. ոյր վս բազմութիք դարձան 'ի տր:

Յետ

Յետ այսորիկ դարձ առնէ առաքեալն 'ի հրէաստան, և անդ կատարի քարկոծմամբ և գլխատմամբ՝ ըստ առանձին աւանդութ՝ն տրեվիրեան վկայաբանութ՝ն, զոր պինդ ունին բազումք 'ի լատինացւոց ։ Բանզի միայնակեաց ոմն 'ի վանաց ն՝բյն մատաթեայ՝ որ յաւգուստա քաղաք տրեվիրայ ե՝պսական նահանգին գերմանիոյ 'ի ժ՝ք դարու, տեղեակ յունական և եբրայական դպրութ՝ց, հետաքննեալ գտանէ առ հրէայս իւրոյ ժամանակի զմատեան ինչ եբրայական, յորում 'ի կարգի այլոց աւանդութ՝ց 'ի վրէժխնդրութ՝ի մովսիսական օրինաց՝ գրեալ կայր և այս պատմութ՝ի ։

Յաւուրս անանայ կ՝մ անանիայ քահանայապետի հրէից, առ որով սպանաւ արդարն յակոբոս եղբայր ա՝ն կոչեցեալ, շրջէր մատաթիա աշակերտն յ՝ի 'ի պաղեստին, և քարոզէր զք՝ս ա՝ծ ։ Եւ 'ի մտանել ն՝ր 'ի ժողովրդանոցն գիսղակայ քաղաքին գալիլեացւոց, և յուսուցանել յօրինաց և 'ի մարգարէից զեկեալ հասեալ մեսիայն, միաբանեցան հրէայք, և կապեալ զնա բերին յե՝էմ առ քՀնյապետն և առ ծերս, և ասեն. Ձեզ անկ է քննել զայրս զայս՝ որ կիրթ է յօրէնս մովսեսի, այլ հակառակ նմին տեսանի. Ք՝զի աշակերտ է յ՝ի՝ որ զանձն իւր որդի ա՝յ քարոզէր ։ Իսկ ատեանն խնդրեաց 'ի նոցանէ վկայս վնասու ն՝ր. և ն՝ք մատուցին արս երկու, որք վկայեցին, թէ գտաք զդա՝ զի ժողովս կուտէր 'ի գալիլեա, և զմովսէս և ըզ-

մար-

մարգարէս Թողեալ՝ զմի քարոզեր զնազով-
բեցին։

Այլ քահանայապետն յանդիմանեաց զմա-
տաթիա իբրև զնուազարար, և ուսուցիչ նո-
րաձայն վիշտուԹե՛ արտաքոյ օրինաց և մար-
գարէից. զի մարգարէքն ասեն զայ պատ-
գամն խօսեցան. իսկ իմ նազովբեցին ան-
ձամբ յանձնէ կամեցաւ նոր օրինս տալ ՚ածա-
բար, և իշխեաց անգոնել զքահայապետս
և զգպիրս և զօրինականս. զոր ոչ աք ՚ի մար-
գարէիցն գործեաց։ Այդ տամք քեզ պա-
րապ խորհելոյ, զի ՚ի քաց կացցես ՚ի մոլոր
ուսմանեդ. ապա Թէ ոչ՝ մահապարտ գտա-
նիս քրիստոնեայ անուամբ նազովբացոց։
Չայնժամ ամբարձեալ մատաԹեայ զձեռս
իւր յերկինս՝ ասէ. Այլք եղբարք՝ ոչինչ է
պիտոյ երկայնել լինձ բանս առ ձեզ. զի ոչ
որպէս կարծեք՝ ՚ի քաւուս է անուն քրիստո-
նէուԹե՛ն, այլ՝ պարծանաց. ոչ և մարգա-
րէն ասէ, կոչեցից ծառայից իմոց անուն նոր։
Այս եԹէ լսեք ինձ, յայտնի կացուցից, եԹէ
ոչ մատացածին առասպելս քարոզէիք, այլ
զՀմարտուԹե՛ն օրինացն աւետարանեալ ՚ի
կանուխ ժամանակաց, և առ մեզ ՚ի լրումն
եկեալ. զի ստուերք էին հին օրէնքն և նշա-
նակ հանդերձեալ խորհրդոցն քոնի յիսի. ա-
պա Թէ ոչ՝ զինչ օգուտ էր ազատուիլն մար-
մնոյ ՚ի ձեռաց փարաւոնի, եԹէ կայաք
մեռեալք հոգւով ՚ի գերուԹե՛ն ըստ ձեռամբ ան-
մարմին Թշնամեացն. զինչ զատիկն իցէ՝ զոր
կատարէք ըստ հնոյն, եԹէ ոչ ՚ի մեծ խորհուրդ
լինչ

ինչ հայեցուցանիցէ. միթէ զենումն գառին և սրսկումն արեան զբարաւորաւ դրաց՝ ազատիցէ՞ զոք 'ի սատակմանէ, եթէ չէ օրինակ գառինն ա̅յ և հեղման արեան նորա 'ի խաչի, յ̅ս̅ի ասեմ՝ որ ք̅ս̅ն կոչեցաւ. և 'ի գլուխ հանել զասացեալն յեսայեայ՝ իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ, և ը̅ անօրէնս համարեցաւ ։ Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ մատաթիաս՝ քաղելով զօրէնս և զմարգարէս ը̅ օրինակի նախավկային ։

Իսկ քահանայապետն իբրև լուաւ զանունն յ̅ս̅ի, լի եղև ցասմամբ, և ասէ. տեսանե՞ս, զի 'ի քակտումն օրինաց բերիս. եթէ ո՞չ գիտես, զի գրեալ է. եթէ ոք մարգարէ կամ երազահան յարիցէ յի̅է̅լի՝ դարձուցանել զձեզ յօրինաց տ̅ն ա̅յ ձերոյ, մեռցի՛ այրն այն ։ Պ̅ի̅նի ետ մատաթիաս. յ̅ս̅ ք̅ս̅ ո՛չ լոկ մարգարէ է, այլ՝ տ̅ր մարգարէից, և ա̅ծ որդի ա̅յ կենդանւոյ. և ես ծառայ ն̅ր̅, և վկայ ճշմարտութ̅ե̅ ն̅ր̅ մինչև 'ի մահ ։ Յայնժամ ելիից քհ̅նյապետն զականջս իւր, աղաղակեաց և ասէ. հայհոյեաց, լուիցէ՛ զօրէնս և ը̅ նմին կորիցէ. զայս ասացեալ՝ ետ ընթեռնուլ զբանն ղևտական գրոց. այր ոք այր՝ որ անիծանիցէ զա̅ծ, մեղս ընկալցի. զի անուանեաց զանուն տ̅ն, մահու մեռցի. քարընկէցութ̅ ը̅ քարկո՛ծ արասցեն զնա ա̅մ ժողովուրդն. և յաւել ասել. բերան քո խօսեցաւ հակառակ քո, արիւն քո 'ի գլուխ քո եղիցի ։

Յայնժամ առեալ տարան զնա հրէայքն 'ի տե-

տեղի մի՝ որ կոչիւր բեթլասքիլա, այն է տուն քարկոծելոց. և յասել մատաթեայ զսաղմոսն, ե՞րբ եկից երևեցայց երեսացդ ա̄յ, եդին զձեռս 'ի վ̄ր̄ նորա երկոքին սուտ վկայք, և նախ ինքեանք ընկեցին զքարինս 'ի նա: Յայնժամ խնդրեաց մատաթիա, զի երկու այն քարինք առաջինք պահեսցին և թաղեսցին ը̄ նմա՝ 'ի վկայութի̄ նց̄: Ապա ա̄մ բազմու ք̄ քարկոծ արարին զնա. և մինչչև մեռեալ էր, սակրով հարին զգլուխ նր̄ ըստ օրինի հռովմայեցւոց. կմ ը̄ այլոց՝ նախ 'ի փայտ հանին, և ապա գլխատեցին. և այնպէս կատարեցաւ ն̄ք առաքեալն մատաթիա յամի ա̄ն իբր 60, կամ 65: Յայս վայր վ̄ն կատարման ն̄քյն մատաթեայ ը̄ այլ և այլ աւանդից հին և նոր վկայագրաց: Յորս երևի ինչ ինչ խառնեալ ընդ աւանդից՝ որ զն̄քյն մատթէոսէ աւետարանչէ, որպէս տեսցի 'ի վարս նր̄. գուցէ և ը̄ պատմութե̄ ն̄քյն ստեփաննոսի. զի մաթիդիս՝ որ է յունարէն աշակերտ, երևի շփոթե̄լ ը̄ յատուկ անու՛ան մատթէի և մատաթեայ:

Պատմութի̄ նշխարաց սբ̄յն մատաթեայ:

Յորժամ ա̄ծասէր դշխոյն հեղինէ մայր մեծին կոստանդիանոսի շրջէր յուխտատեղիս ն̄ք երկրին, եգիտ անդ և զմարմին ն̄ք առաքելոյն մատաթեայ՝ ը̄ ոմանց յե̄էմ, և ը̄ այլոց 'ի բիւրիտոն քաղաքի (այն է պէրութ). և առե̄լ տարաւ զայն կմ առաքեաց՝ 'ի մեծն հռովմ.

հռովմ. ուր յետ սակաւուց եդաւ 'ի տաճար
ն̄բ ա̄ծածնին՝ աւագ մարիամ կոչեցեալ, զոր
շինեաց լիբերիոս հայրապետ՝ որ նստաւ յամի
տ̄ն 353. և նորոգեալ ը̄արձակեաց քսեստոս
երրորդ՝ որ նստաւ յա̄մի 432։ Եւ ցարդ և ս
անդ ասի լինել պատու՛ական գլուխ ն̄բ առա-
քելոյն. իսկ մարմինն եդեալ կայր ասեն եր-
բեմն անդէն 'ի ներքոյ աւագ բեմին՝ ը̄ ծի-
րանի վիմով. ը̄ որոյ և 'ի կամարն շինեալ
անդանօր առ պասքաղէս հայրապետաւ, որ
նստաւ յամի 817, դրոշմեցան ոսկեքար տա-
ռիւք այս բանք. * 'Ի ն̄բ մատրանս ամփո-
փեալ կան մարմինք ն̄բցն՝ մատաթեայ առա-
քելոյ, հերոնիմոսի վ̄դպի, և կուսանացն
հռոմուլայ և հռեդեմպտայ ‖։

Այլ զկնի ժամանակաց անցելոց նշխարք
ն̄բյն մատաթեայ մեծաւ մասամբ փոխադրե-
ցան և գտան 'ի գերմանիա. քանզի՝ թող
զմանրիկ մասունս սփռեալս 'ի զանազան տե-
ղիս, երևելի մասն հաստատուբ̄ ասի լինել
'ի վանս ն̄բյն մատաթեայ 'ի տրեվիր, այս է
յարու՛արձանս աւգուստայ քաղաքի կայսր-
ընտիր ե̄պսարանին տրեվիրայ. մինչ զի տրե-
վիրացիք պնդեն 'ի ձեռն հին յիշատակարա-
նաց և կոնդակաց, թէ նա ինքն դշխոյն հե-
ղինէ հաւանուբ̄ ն̄բյն սեղբեստրոսի յղեալ
իցէ զմարմին ն̄բյն մատաթեայ հանդերձ այ-
լովք հոգևոր ընծայիւք 'ի տրեվիր. (քանզի
և ունին աւանդութի̄ իմն զհեղինեայ տրե-
վիրացի լինել, որ է ը̄ այլոց դրեպանացի 'ի
բիւթանիոյ)։

Արդ

Ա՛րդ զիարդ և է օրինակաւ՝ բերեալ եդաւ երբեմն անդ ՚ի տրեվիր մարմին Տ֊ն մատաթեայ ՚ի տաճար Տ֊ն եւքարիստի առաջին ենգի տեղւոյն . քայց իբրև անցին դարք , ոտնակոխ եղև երկիրն այն յազգէ փռանկաց, վանդալաց , Հոնաց , և նորմանաց . և ՚ի մոռացմունս եղև առ յետինս , թէ ո՛ր ամիսքիէ կայցեն նշխարք Տ֊ն առաքելոյն , մինչև ՚ի ժամ դար : Յորում ժամանակի՝ ոմն պատմէ նահանջանակէ միայնակեացն տրեվիրացի մեծաւոր ժամանակաւ , ՚ի խնդրելէ Հենրիկոսի կայսեր երկրորդի յաքսէ եկեղեցւոյն տրեվիրայ Ը այլ նշխարաց և զմասն ինչ յոսկերաց Տ֊ն մատաթեայ , հարկ եղև վե սասանկուԹե արքունի հրամանին բերել զտեղին , ուր գուշակեին լինել զտապան առաքելոյն . և ահա նոյնժամայն բուրեաց հոտ անուշոԹե , մինչև զմայլել ամենեցուն անդ եղելոց: Այս եղև ՚ի մատչել Թէոդորիկոսի էշխանաւզուն եպսկն վիրտուսայ՝ որ էր որդի դքսին լոԹարինգիոյ , տարադէպ համարձակուԹե կորզել զմասն յոսկերաց Տ֊ն առաքելոյն ՚ի պէտս կայսեր և վե իւր և այս ,յետս Ը կրօնին քաղաքեցաւ . մինչ զի և մասն պատուհանան զգեստու Տ֊ն պատառեալ՝ ՚ինայ ՚ի տապանի անդ . այլք ասեն , Թէ յանկարծակի փակեցաւ տապանն , և դրօշակ հանդերձի եղեսկն ՚ինայ ՚ի ներքս . զոր Հարկ եղև ՚ի բաց կարել : Յայնժամ սասանեալ և այլոց եղեսայ՝ ընտրեցին զոմն յառաքինի երիցանց , որ զնշխարս Տ֊ն խոնարհաբար ջոշափէ՝ յերիս մատունս

քաշ

քաժանեաց, և զետեղեաց դաղտ ը̄ երիւք խորանօք. այլ զմեծ մասն եթող 'ի ներքոյ բեմի ն̄բ ա̄ծածնին. զի թէ բարձցի յումեքէ մասն մի՝ մ̄նասցեն այլ մասունք. թող զմասն՝ որ առաքեցաւ առ կայսրն. զորմէ լռութի̄ է առ պատմիչս։ Բայց այլ ինչ զարմանալիք պատմին աստանօր, թէ ցորչափ եկեաց քահանայն այն՝ որ շօշափեաց զնշխարս ն̄բյն մատաթեայ, 'ի լինել բանից զն̄բ առաքելոյն առաջի նորա՝ սկսանէր իւղ կաթել մատնեմատն երկոցունց ձեռաց ն̄ր̄. զոր և յականատեսից լուեալ է իմ ասէ գրօղն անանուն։ Կամ ո̄պ գրէ այլ կրօնաւոր 'ի նոյն վանաց ն̄բյն մատաթեայ՝ լամբերտոս անուն ժամանակակից առաջնոյն, ցորչափ խօսէր այն քահանայ ը̄ ումեք զն̄բյն մատաթեայ, մատունք աջոյ ձեռին ն̄ր̄ մերձեալք երբեմն 'ի նշխարս ն̄բյն՝ սկսանէին կաթել, ո̄պ թէ յիւղ մխել̄ իցեն։

Յետ առաջնոյս այս գիւտի նշխարաց՝ իբրև անցին ամք իբր ութսուն, աբբայն եբէրհարդոս նորոգեաց զեկեղեցին զայն ն̄բյն եւքարիոսի. և յայնժամ 'ի վեր ել մեծ մասն նշխարաց ն̄բ առաքելոյն մատաթեայ բուրմամբ անուշահոտուե̄՝ 'ի ներքոյ խորանի ն̄բ ա̄ծածնին՝ յարձ ձեայ տապանակի, հանդերձ արձանագրութ̄ բ̄ 'ի վ̄ր̄ կ̄ձեայ տախտակի՝ յունական գրով և լատին բարբառով. * Ս̄բ̄ ,, մատաթիաս առաքեալ ‖։ Եւ քանզի ցայն վայր իբրու թաքուն կայր ն̄բ գանձն այն, և յայնմ հետէ հանդիսացաւ, նմին իրի կարգեցաւ

ցաւ 'ի տրեվիր յիշատակ այսր գիւտի նշխարաց ս̄բյն մատաթեայ, որ օր քսան էր սեպտեմբերի՝ յա̄մի տ̄ն 1127։

Գրի 'ի նոյն միանձանց վանաց ս̄բյն մատաթեայ և այս, թէ քանի մի ամօք յառաջ քան զվերջին գիւտ նշխարաց ս̄բ առաքելոյն՝ ետես ս̄բ ծերունի ոմն նորին ուխտի տեսիլ սքանչելի, զի 'ի մէջ վանացն ծագէր աստղ մի լուսապայծառ՝ որ լուսաւորէր զբովանդակ քաղաքն և զգաւառն տրեվիրայ։ Եւ դարձեալ տեսանէր, զի 'ի ներքուստ բեմի ա̄ծածնին բղխէր աղբիւր յորդառատ, որ արբուցանէր զա̄մ քաղաքն. նոյնպիսի տեսիլ ցուցաւ և միում 'ի քաղաքացւոց։ Ապա 'ի յայտնիլ նշխարաց ս̄բյն մատաթեայ 'ի վանս անդ 'ի ներքոյ այնր բեմի՝ ստուգեցաւ 'ի միտս լսողաց խորհուրդ տեսլեանն. քանզի և յայնմ հետէ յաճախեցին անդ սքանչելիք ս̄բ առաքելոյն 'ի վ̄ր հաւատացելոց, որք հաւատով դիմէին առ նա յա̄մ կարիս հոգւոյ և մարմնոյ, և ը̄ունէին զհայցուածս իւրեանց. այլ 'ի մասնաւորի յառաջ բերեն բոլլանդեանք 'ի զանազան մատենագրաց զհրաշս զայսոսիկ։

Սքանչելիք սբ̄յն մատաթեայ 'ի տրեվիր 'ի ծ̄բ դարու։

Լամբերտոս անուն ոմն աղորեպան տրեվիրացի՝ մտեալ 'ի նաւակ ը̄ վերներոսի որդւոյ իւրոյ մանկան տղայոյ, գնաց յաղօրիս իւր՝ որ կայր 'ի մէջ գետոյն մոսելլայ. և յելանել իւրում 'ի տուն աղօրեաց՝ եթող

անհոգուբ զտղայն 'ի նաւակի. և նա մինչ-
դեռ խաղայր ձեռամբ և ցպով ը̄ ջրոյ՝ գե-
տավէժ եղև և կորեաւ ։ Իսկ հայր նր̄ յետ
կատարելոյ զկարևոր գործ իւր յաղօրիս՝ իբ-
րև դարձաւ 'ի նաւակ անդր, և ոչ եգիտ
զտղայն, 'ի միտ էառ զեղեալսն յանզգաս-
տութ̄է իւրմէ. և կական բարձե̄լ լայր զկո-
րուստ մանկանն. մինչև ժողովիլ շինականաց
'ի գետափն և հարցանել զպատճառն ։ Իբրև
իմացան զչար պատահումն, տեսեալ զայրն
յուսահատ՝ որ կամէր գետընկէց առնել
զանձն և կորնչիլ ը̄ որդեկին, խրատ ետուն
նմա դիմել առ ս̄բ առաքեալն մատաթիաս
փայլեալ սքանչելեօք. զի նա գտանէ ասեն
հնարս անգիւտ կորստեան զաւակիդ ։ Իւ
'ի կարդալ նորա զանուն ս̄բյն մատաթեայ,
ետես զմարմին մանկանն յերեսս ջուրց գե-
տոյ. փութացաւ էառ զայն 'ի նաւակ, և
եհան 'ի ցամաք ոպ̄ 'ի թաղել զդի մեռելոյն.
յայնժամ ուխտեաց ս̄բյն մատաթեայ, զի
թէ կենդանացուսցէ զորդին, տացէ զնա նմա
'ի ծառայութ̄ի. այն ինչ բանքն 'ի բերանն
էին, յարեաւ մանուկն, և հոսե̄լ ը̄ բերանն
զաւելորդ ջուրն՝ գտաւ ողջ ամենևին. և
յայնմ հետէ եկաց 'ի ծառայութ̄ի ուխտի
ս̄բյն մատաթեայ ։

Սոյնպ̄ս և պատանեակ մի 'ի տեմելշայ գեղ-
ջէ հեղձե̄լ 'ի յորձանս նոյն գետոյն մոսել-
լայ՝ կենդանացաւ 'ի ձեռն ս̄բյն մատաթեայ,
'ի դիմել առ նա հաւատով մօր պատանւոյն ։
Դարձեալ մանուկ մի 'ի թեմէն կողոնիոյ 'ի

գիւղն ն̄բյն սևեռիանոսի մեռաւ 'ի ծանր հիւ՛անդութ̄ է. զոր իբրև պատեցին ը̄ օրի-նի, և պահէին զայն գիշեր՝ թաղել ը̄ առա-ւօտն, մայրն յա̄մ սրտէ գոչեաց առ ն̄բն մա-տաթիա. և ահա յանկարծակի յանդիման ա̄մ ժողովելոցն յարեաւ մանուկն. մինչև յահի լինել ամենեցուն, և փառաւոր առ-նել զքն̄ ա̄ծ, և զն̄բ առաքեալն ն̄ր̄:

Անդամալոյծ մի 'ի կողմանց արդեննայ ան-տառին գաղղիոյ՝ լու՛եալ զսքանչելիս ն̄բյն մատաթեայ 'ի տրեվիր, յեցաւ 'ի գաւա-զանս՝ որ ընդ անթովք, և հաւատով յուղի անկեալ՝ յերիս եօթնեակս եհաս անդր. և մտեալ 'ի վանս ն̄բ առաքելոյն՝ իբրև ոչ կա-րաց յամբոխէ մերձենալ 'ի տապան ն̄բյն, մեկուսի կայր յաղօթս. և ը̄ կատարել ըզ-հայցու՛ածս իւր՝ գտաւ բոլորովին ողջացել:

Զայն իբրև ետես կին մի անդամալոյծ, և նա՝ սկսաւ հաւատով խնդրել 'ի ն̄բյն մատա-թեայ զբժշկութ̄ի. և ողջացաւ նոյնպէս:

Ըստ սմին օրինակի բազում և այլ ախտա-ժէտք, ցաւագարք, և լուսնոտք գային 'ի տապան առաքելոյն, և բժշկէին:

Յաւուր միում յորժամ բազմուի̄ք ուխտա-ւորաց ելանէին անտի, այլք՝ որք կամէին 'ի ներքս մտանել, հարցին ցն̄ն և ասեն. եթէ արդա՛րև ճշմարի՞տ իցէ համբաւ սքանչելեաց ն̄բյն մատաթեայ: Առ այս ետ պի̄նի ոմն յանզգամաց, և ասէ. բովանդակն է խաբե-բայութ̄ի և գիւտ շահասիրութ̄ն վանակա-նաց և կղերց: Յայնժամ սաստեցին նմ մեր-

ձա-

ձաւորք, և ասեն. զգոյշ լեր, գուցէ պատ-
ժիս 'ի ն̄բ առաքելոյն ո՛վ չարալեզու. իսկ
նա պնդեալ կայր 'ի բանս իւր։ Եւ ահա նոյն-
ժամայն մոլեգնեալ 'ի դիւ՛էն՝ պատառեաց
յանձնէ զհանդերձս իւր, և ելեալ 'ի գրաստ
մի՝ վարեցաւ սանձարձակ յանկոխ վայրս լե-
րանց և մացառաց, զհետ վաղելով ն̄ր և խո-
զից. իսկ ծանօթք ն̄ր 'ի խնդիր ելեալ նորա
զաւուրս երկու՝ գտին զգրաստն մխեալ 'ի
տղմուտս. բայց զնա ոչ գտին. և այնպէս 'ի
կորուստ եղև հոգւով և մարմնով։

Իմմոն այր հողագործ 'ի գեղջէն պունդերի-
քայ՝ 'ի տօնի ն̄բյն յովհաննու մկրտչի դնայր
յուխտ 'ի վանս սբ̄յն մատաթեայ հանդերձ
կնաւ իւրով և որդւով. և անկեալ զճանա-
պարհայն 'ի ձեռս զօրականաց բրունիքոսի
բռնաւորի՝ եդաւ 'ի բանտ երկաթի կապա-
նօք. յայնմ վայրի որդին զերծաւ փախըս-
տեամբ. իսկ կինն 'ի բաց արձակեալ՝ գնաց
լալագին 'ի կատարել զուխտն, և պաղատէր
առ սբ̄ն մատաթիա ազատել զայր իւր. նոյն-
պէս և այր նորա կարդայր 'ի բանտի առ ն̄բ
առաքեալն։ Եւ ահա յանկարծակի խորտա-
կեցան ինքնին շղթայք, և գտաւ այրն ար-
ձակ. ը̄ որ զահի հարաւ և ինքն իմմոն. և
իմացեալ զսքանչելիսն ա̄յ՝ զօրացաւ. այլ
քանզի վարանէր՝ եթէ զիա՛րդ անցանիցէ ը̄
մէջ զօրաց, ապաւինեալ 'ի սբ̄ն մատաթիա՝
էարկ զանձն ը̄ պարիսպն 'ի դուրս, և անվնաս
իջեալ 'ի վայր՝ զերծաւ 'ի ձեռաց թշնամեաց։
Յամի տ̄ն 1131. անկաւ հուր 'ի վանս ն̄բյն

մատաթեայ. և կրօնաւորքն հազիւ՛ զանձինս
ապրեցուցեալ՝ հոգային վ̄ն նշխարաց ն̄բ ա-
ռաքելոյն. բայց ոչ մերձեցաւ հուր 'ի տեղի
տապանի նորա: Օ՛այն տեսել՝ բազմութե՛
ամբոխին՝ յետ դադարելոյ հրոյն ասեն այր
ցընկեր իւր, եկա՛յք բարձցո՛ւք աստի զմար-
մին առաքելոյն. զի թէ հաճոյ էր նմա բնա-
կել աստ, ոչ թողոյր զհրդեհն. սովին խոր-
հրդով կամէին յափշտակել զնշխարս սբ̄յն.
և անցուցել՝ պարանս՝ սկսան ձգել զտապան
նորա արք իբրև հարիւր. բայց հազիւ՛ հազ
մարթացան բերել մինչև 'ի դուռն եկեղեց-
ւոյն, և ահա լուծան լքան. ուր 'ի վ̄ր հասել՝
արանց երկիւղածաց՝ դադարեցուցին զն̄ն 'ի
խորհրդոյ անտի. և ինքեանք դիւրաւ դար-
ձուցին զտապանն 'ի տեղի իւր՝ ոգիք երկո-
տասան: Նոյն տապան է, որ կայ ասեն ցարդ
'ի նոյն վանս ն̄բյն մատաթեայ, թէպէտև
փոփոխեալ ը̄ն կազմածոյն և ը̄ն զարդուց յա-
պա ժամանակս. այն է տապանակ 'ի կիպա-
րիս փայտէ՝ ագուցեալ 'ի մէջ վիմափոր և
արծաթապատ տապանի. յորոյ վ̄ր դրոշմել՝
կայ այս̄պս. * 'Ի տապանի աստ պահի մար-
մին ն̄բյն մատաթեայ առաքելոյ, ընդ կիսոյ
մարմնոյ ն̄բյն փիլիպպոսի ‖: Թո՛ղ և զայլ
բազմութի՝ նշխարաց եղելոց 'ի վանս անդ,
զորս պարգևեաց եւգինէոս երրորդ 'ի դառ-
նալ իւրում 'ի գաղղիոյ 'ի հռովմ յամի 1148.
յորում ժամանակի օրհնեաց զնորաշէն կմ
զնորոգել՝ տաճար ն̄բյն մատաթեայ 'ի տրե-
վիր, նու՛իրելով զխորանն՝ որ կառուցեալ է
'ի

ի, ի միջավայրն վանայ ի վէր տապանի նորա,
ի պատիւ ոգւոյ խաչին և ոգւոց առաքելոցն մա-
տաթեայ և յակոբայ եղբօր նոն :

Այլ և ասի և միւս հռչակաւոր վանք ի գերմա-
նիս՝ շինեալ յամի նն 1340, որ կոչի վանք
ճորոյ կամ ճոր սրբոյն մատաթեայ. և ես պատ-
մութի հինգերորդ նորա աքանչելեօք առա-
քեալն այսպիսի : Պարոն վեռներ կամ վա-
ներ ոմն ամլոցին մերոզեայ յուլիակեան գք-
աուլէ գերմանիոյ ի կողմնեան Թեմի՝ յե-
լանել իւրում յոյս երէից՝ կամեցաւ հանգ-
չիլ ի ծովածաւալ ի մէջ անտառախիտ մայ-
րեաց. և գքնուլանկել տեսանէ առաջի իւր
այր ոմ մեծահասակ՝ վայելչագեղ՝ երկայնա-
մօրուս ի գլեսաս ձիւնափայլս. և առ նմին
անհամար բազմութի կրօնաւորաց կարգին
խաչակրաց : Եւ մինչդեռ սկսուցեալ կայր
պարոնն ըստ տեսլին, ասէ ցնա այրն՝ որ երևե-
ցաւ. Ձանաչես զիս. պինդ ետ աղնուականն.
ոչ տր. ասա աղաչեմ, ո՞ես դու և ոյք էցեն
խաչակրեայ եղբարքս՝ որ գ.քև : Եւ նա ասէ.
ես եմ առաքեալն մատաթիա՝ ոմ յերկոտա-
նից անտի, վիճակաւ ընտրեալ ի տեղի
մանկլին անկեալ յառաքելական դասէն.
և առաքեցայ առ քեզ ի պատմել զկամս ոյ.
քանզի հաճեցաւ որ ըստ գործս ողորմութե-
քո, և յիշեաց զաղօթս քո. արդ այս կաւիք
էն ոն, զի ի տեղւոջ՝ յորում ննջեցեր, շի-
նեսցես վանս ի պատիւ անուանն իմոյ, և
քնակեցուսցես ի նմա զկրօնաւորս կարգին՝
զոր տեսանեաղ ըստ իս :

Եւ զայս ասացեալ՝ անյայտ եղև. նոյն տեսիլ ցուցաւ և եղիսաբեթի տիկնոջ պարոնին 'ի տան. վ՞ս որոյ իբրև եկն ը՞ երեկս այրն 'ի տուն, և սկսաւ պատմել կնոջ իւրում զիրսն, լուաւ 'ի նմանէ զնոյն տեսիլ. և երկոքեանն 'ի զարմացման եղեալ՝ կոչեցին զտաներէց իւրեանց զայր գիտնաւոր. և յայտնել՝ նմա զոր տեսինն, հարցանէին խորհուրդ 'ի նմանէ՝ թէ զի՛նչ արասցեն: Ասէ քահանայն. տեսէ՛ք, մի՛ գուցէ երազ ինչ երևութացաւ պատահական. և 'ի հաստատել նց՝ թէ ուրոյն ուրոյն տեսաք զտեսիլդ ստուգութ՞ը, ասէ ցնոսա. խնդրեցէ՛ք աղօթիւք, զի եթէ յա՞յ իցէ տեսիլն այն, միւսանգամ երևեսցի ձեզ ն՞բն մատաթիա, և ինքնին ուսուսցէ զօրինակ շինութ՞ե վանացն: Եւ ն՞ք արարին ը՞ բանի երիցուն. և 'ի նմին գիշերի երևեցաւ ն՞բ առաքեալն երկոցունց միանգամայն, և ասէ. զի՞ է՝ զի թերեհաւատեցայք ընդ բանս իմ, և կմ ը՞էր յերկու՛ացայք ը՞ հրամանն՝ զոր ետու ձեզ: Ապա ասէ ցայրն. արի՛ վաղվաղակի ձեռն 'ի գո՛րծ արա 'ի կատարել զփափաքն իմ. կառո՛ վանս 'ի տեղւոջն՝ զորմէ ասացի քեզ. և կարգեա՛ անդ զմիանձունս կարգի ն՞բյ խաչին՝ ծառայել ա՞ն զցայդ և զցերեկ: Օ՝ այս ասաց, և եղև 'ի նոցանէ աներևոյթ. ապա երևեցաւ և երիցուն, և յանդիմանեաց զնա՝ ասելով. զիա՞րդ իշխեցեր դու ցնորս կարծել զտեսիլն ցուցեալ յա՞յ. և արդ եթէ ոչ 'ի բաց կացցես 'ի խորհրդոյ այտի, լուծցես զվրէժս յանդգնութ՞ե:

Եւ

Եւ ահա ը̄ այգն առաւօտու եկն երէցն առ
պարոնն, և պատմեաց արտասու՛օք՝ զոր ե-
տեսն և զոր լու՛աւ։ Յայնժամ ա̄մ իրօք հաս-
տատեալ քարեպաշտ իշխանին վեռներայ՝
անդանդաղ փութով ետ արկանել հիմն եկե-
ղեցւոյ յանուն սը̄յն մատաթեայ 'ի նշանա-
կեալ տեղւոջ անտառին. և զնովաւ շինեաց
վանս կրօնաւորաց 'ի կարգէ ս̄բյ խաչին ընդ
կանոնաւ ս̄բյն օգոստինոսի, կարգեալ և
հասս տարևորս 'ի պէտս ն̄ց, և տու՛եալ ըն-
ծայս մեծամեծս տաճարի ս̄բյն, 'ի փառս
քս̄ի ա̄յ մերոյ, և 'ի պատիւ՛ ս̄բ առաքելոյն
մատաթեայ։

Յիշեն զսուտ աւետարան յօդեալ յօտարաց
յանուն մատաթեայ առաքելոյ՝ որոգինէս
ճառ ա̄. 'ի ղկ. և կղեմէս աղեքս. յաճախ.
գ̄. և է̄. և եւսեբ. պատմ. եկեղ. գ̄. 23.
և ն̄. ոպ̄ կային և այլ սուտ աւետարանք յա-
նուն ոմանց ոմանց յառաքելոց։

Ը ընտրութի՛ մատաթեայ յառաքելութիւն
ոմանք յարևմտեան վկայագրաց ուրոյն յի-
շատակեն 'ի մայիսի 12. քաց յօրէ կատար-
մանն՝ զոր կատարեն 'ի փետր. 24. և 'ի նա-
հանջ ամս 'ի 25. որպ̄ս և մեդիոլանեցիք 'ի
փետր. 7. որ 'ի յայսմաւուրս մեր դնի 'ի
փետր. 4. և առ յոյնս յօգոստ. 9։ Ա. յլ
տօնացոյցն մեր վերածեալ է զնա յայս միջոց
տօնից առաքելոց և աշակերտաց. Թո՛ղ զյի-
շատակ ընտրութ̄ ն̄ր՝ առանց եկեղեցական
պաշտաման, իբրև յարմարուբ̄ նշանակեալ
յաղգիս յութերորդ աւուր համբարձման,

որ կոչի էբինային վէճաք. որպէս և զօր համ-
բարձմանն ասելիք վէճաք կոչեն. առ որս և
սովորութիւն է վիճակըմնկեցուն առնել յայն
ժամ իւրաքանչիւր անձին՝ բարեմաղթութիւն
խմիք. այլ լաւ ևս լիներ մաղթել առաւել
զբարեխօսութիւն սրբոյն մատաթեայ, զի նո-
վաւ լինիցի և մեզ հասանել մասին վիճակի
աջոյն՝ի լոյս. և ասել ընդ մարգարէին, վի-
ճակք եղեն ինձ ընտիրս, և ժառանգաւո-
իմ հաճոյ եղև ինձ. եղիցի եղիցի։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աձին Բառնաբայ առաքելոյ։

Ն. Յ. Լ. յունիս. 11։ Ղաբնա. Ի. ճ՚ծդ = ճծը։ Ե. Օ. ճկ = ճեաք։ Թռուլան-
պեանն էաբէպրոտ. ՚ի ե հատ. յունիսի. էզ.
421 = 460։ Յովհաննէս Մարկոս. ս Ղեւիտացոյն
էկպրացոյն։ [1]

ՎԱՐԴԱՊԵՏՍՆ ՊՕՂՈՍ

սի՝ պանծալին յաշակերտս՝ ա-
ռաքեալ անուանէ վերապատ-
ուհեալ՝ զոն բառնաբաս, այլ
զուարթամիտ և լի հոգւով՝ զալ և հաս-
տալ՝ ընդ գրոց, հր՚ի վեւտահան աղգէ՝ ուս-
տի

տի մովսէս և ահարոն և սամուէլ (2), ծնել 'ի կիպրոս կղզւոջ, և սնեալ և վարժեալ հրէական օրինօք։ Եւ էր առաջին անուն նր̄ եդեալ 'ի ծնողաց յովսէփ՝ 'ի յիշատակ մեծի նահապետին յովսեփայ. իսկ յետոյ կոչեցաւ յառաքելոց բառնաբաս, որ թարգմանի որդի մխիթարութե̄, ՝ի այր քաջայարմար 'ի մխիթարել զամենեսին 'ի տ̄ր. ոպ̄ և անդըստին 'ի մանկութե̄ էր կայտառ և զուարթաբարոյ և աջողակ յա̄մի։

Եւ ունէին ծնօղք նր̄ կալուածս գիւղից ոչ միայն 'ի կիպրոս, այլև յեէ̄մ. որ ոչ միայն մեծութե̄, այլև բարեպաշտութե̄ նշանակ էր առ հրէայս, որք նիւթապէս իմանային զառ 'ի յեսայեայ ասացեալն. Ա՛յսպ̄ս ասէ տ̄ր, երանի՛ որ ունիցի զաւակ 'ի սիոն, և ընտանեակք (կամ տուն և տեղի) իցեն նորա յեէ̄մ. նմին իրի որ միանգամ ձեռնհաս էին՝ ջանային ունել կալուած ինչ կամ ստացուած յեէ̄մ։

Արդ իբրև աճեաց յովսէփ՝ որ և բառնաբաս, ածեալ զնա ծնողացն յեէ̄մ՝ ետուն յուսումն օրինաց և մարգարէից առ ոտս գամաղիէլի օրէնսուսոյց վդ̄պի. առ որում ուսանէր յայնժամ և սօղոս տարսոնացի 'ի ցեղէ բենիամենի, որ կոչեցաւն պօղոս։ Ա՛յ և 'ի ժամէն յայնմանէ եղև սերտ ընտանութի̄ 'ի մէջ բառնաբայ և պօղոսի իբրև ուսումնակցաց. որ զմիմեամբք ելանէին յուսման, և այր քան զընկեր յառաջադէմ լինէին, և նպաստամատոյց իրերաց։ Եւ 'ի լնուլ բառ-

նա-

նաբայ զընթացս՝ ամ ուսմանց՝ չև էր հասել
'ի քսանևհինգամեայ տիս. վ՞ն այն չէր տա-
կաւին կարգեալ 'ի պաշտօն տաճարի ը՞ն օրի-
նաց. բայց ստէպ կանխէր 'ի տաճարն պա-
հօք և աղօթիւք. և էր գովելի առ ամենե-
սին առաքինի վարուք և իմաստութ՞ իւրով:
Յաւուրսն յայնոսիկ սկսաւ յ՞ս փրկիչն Ն՞ի
և վ՞դպն երկնաւոր առնել և ուսուցանել.
և տեսել բառնաբայ զ՞ածահրաշ սքանչելիս
ն՞ր 'ի պրոբատիկէ աւազանին, և բազմագոյն
ևս 'ի տաճարին, և լուել զ՞ածային վ՞դպու-
թի՞ նորա, լի եղև զարմացմամբ. և մատու-
ցեալ անկաւ առ ոտս նորա, և հայցէր օրհ-
նիլ 'ի նմանէ. և ա՞րն մեր՝ որ տեսանէր ըզ-
սիրտս ամենեցուն, ընկալաւ մարդասիրա-
պէս զբառնաբաս ը՞ն բարի հաւատոց նորա,
և լիաձեռն օրհնութ՞ ձգեաց զնա 'ի հաղոր-
դակցութի՞ անսպառ գանձուց շնորհաց իւ-
րոց. որով և յայնմհետէ վառեցաւ սիրտ
նորա 'ի սէրն յ՞սի:

Եւ եկեալ փութապէս 'ի տուն ազգականին
իւրոյ մարիամայ մօրն յովհաննու մարկոս կո-
չեցելոյ, (որ 'ի մեզ եղբօրորդի կոչի բառ-
նաբայ, և յայլոց քեռորդի ն՞ր,) յորդորեաց
և զմարիամ գնալ և տեսանել զսքանչելիսն
յ՞սի, և հրաւիրել զնա 'ի տուն իւր. զի սա՛
է ասէ ըստ բազմաց վկայելոյ, ևս առաւել
գործոց իւրոց, մեսիայն՝ որ գալոցն էր. և
մարիամ արար ը՞ն բանիցն բառնաբայ. որ՞պս
երկար գրէ յաւանդուէ աղեքսանդր կիպրա-
ցի. որ և համարի՝ թէ տունն մարիամայ լել
ի-

իցէ յայնմ հետէ սովորական ասպնջական յ՞ի և աշակերտաց ն՞ր. և թէ այն իցէ վերնատունն սիոնի, ուր կատարեաց տ՞րն մեր և զվերջին ընթրիսն. ո՞պ և անդ եղև գալուստ հոգւոյն ս՞բյ յօրն պենտեկոստէի։ (3)

Արդ իբրև ընտանացաւ բառնաբաս ը՞ յ՞ի, և հաւատաց 'ի նա իբրև 'ի ճշմարիտ մեսիայ, ապա յընտրել տ՞ն մերոյ զեօթանասուն և երկու աշակերտս՝ 'ի կարգ ն՞ց ընկալաւ և զբառնաբաս, մանաւանդ թէ ը՞ առաջինս 'ի նոցանէ դասեաց, ը՞ որում հասարակաց կարծիք են առ հին մատենագիրս. են և ոմանք՝ որք կարծեն, թէ իցէ արտաքոյ թո՛ւոյ եօթանասնից՝ յետ համբարձման փրկչին յաւելեալ յառաքեալսն։ Ոայս գիտեմք, զի ն՞բն ղուկաս 'ի գործս առաքելոց բազմօք յիշատակէ զն՞բն բառնաբաս իբրև զմի յառաջին և 'ի գլխաւոր աշակերտաց, և քաջ իսկ նշանակէ զերևելի առաքինութի՞ս ն՞ր և զառաքելական վաստակս։ (4)

Բանզի նախ զառաջինն երանելիս յովսէփ բառնաբաս եղև բարի օրինակ աւետարանական աղքատութե՞ 'ի վաճառել անդ զգիւղ իւր հայրենի որ յե՞էմ, և 'ի դնել զգինս ն՞ր առ ոտս առաքելոց (5). և ապա գործակից եղև պօղոսի յ՞ամ մեծամեծ ջանս ն՞ր. այլ որ մեծն է, բազմօք աշխատ եղև յառաջագոյն և վ՞ս դարձին պօղոսի։ Ոի ո՞պ գրեն ճառընտիրք մեր, ը՞ իմիք և աղեքսանդր կիպրացի, յորժամ սօղոս առիւծացե՞ հալածէր զեկեղեցի ա՞յ, ուսումնակիցն ն՞ր ն՞բն բառնաբաս՝

բաս՝ քանզի համարձակ էր առ նա, միանդա-
մայն և կորովի ճարտարաբան, դրէր թուղթ
առ սօղոս 'ի բաց կալ 'ի հալածելոյ զեկեղե-
ցին ա̅յ. և բազում օրինակօք և բանիւ՛ և
գրով ողոքէր և աղաչէր դադարել յայնպիսի
յամառութ̅է. և թէպէտև անհաւան գտա-
նէր զնա, բայց տակաւին առանց վհատելոյ
զհետ լինէր նմա ա̅մ զօրութ̅բ: Իսկ սօղոս
ծաղր համարէր առ ժամն զխրատս բառնա-
բայ, ո̅պ թէ պատրեալ իցէ նա զհետ առն
միոյ անծանօթի՝ որդւոյ հիւսան՝ անգէտ
եղելոյ 'ի դպրութ̅է, և խայտառակ մահ-
ու՛ամբ խաչի բարձելոյ 'ի կենաց. միայն խը-
նայէր 'ի բառնաբաս իբրև 'ի մտերիմ սիրելի
իւր, այլ ոչ դադարէր 'ի հալածելոյ զայլս 'ի
պաշտօնէիցն ք̅ն̅ի, մինչև յօրն յայն՝ յորում
փայլեցին շնորհքն ա̅յ 'ի վ̅ր̅ ն̅ր̅՝ 'ի գնալն 'ի
դամասկոս. և 'ի սաստկութ̅է լուսոյն պա-
կասեալ յաչացն՝ ապա մկրտութ̅բ ստանայր
զտեսութ̅ի իմանալի և զգալի լուսոյն միան-
գամայն: Բստ ճառընտրաց՝ 'ի ճանապարհի
անդ առ նմա գտաւ և բառնաբաս, թերևս
'ի մեղմել զնա և 'ի խափանել 'ի խորհրդոյ
ընթացից իւրոց. և նա ինքն զձեռանէ պօ-
ղոսի կալեալ՝ տարաւ 'ի դամասկոս. ո̅պ և
յետ մկրտելոյ նորա յանանիայ առաքելոյն՝
եղև նմա ուրախակից, և յորդոր 'ի համար-
ձակ քարոզութ̅ի ճշմարտութ̅է:

Եւ 'ի յիշեցուցանել անդ բառնաբայ առ պօ-
ղոս զշնորհսն ա̅յ՝ որք եղեն առ նա, ասի՝ թէ
անկաւ պօղոս յոտս բառնաբայ, և ասէ ար-

տաս-

տասուն՛օք. Թո՛ղ ինձ առաջնո՛րդդ լուսոյ՝ և ճշմարտութե՛ վ՛դպ, եղբա՛յր իմ բառնաբաս. քանզի ստուգութ՛ ՚ի վ՛ր հասեալ եմ, եթէ ճշմարիտ են բանք քո՝ զոր խօսէիրն ը՛ իս յառաջագոյն. վ՛ս՛յ զոր յառաջն հայհոյէի և որդի հիւսան կոչէի, զնոյն այժմ դաւանեմ

միածին որդի ա՛յ կենդանւոյ ։

Յետ այսորիկ ՚ի մեկնիլ պօղոսի ՚ի դամասկոսէ յարաբիա, և ՚ի դառնալ անդրէն ՚ի դամասկոս, բառնաբայ շրջեալ ՚ի մերձակայ տեղիս քարոզութ՛ ՚ի դարձին էած ը՛ իւր զպօղոս յե՛էմ. կմ՛ ՚ի լինել իւր յե՛էմ՝ եկն անդր և պօղոս, և յարեցաւ ՚ի նա. և բառնաբայ առեալ զնա՝ ած առ առաքեալսն, և ընտելացոյց զնա աշակերտաց՝ որք երկնչէին ՚ի նմանէ վ՛ս գոլոյն յառաջագոյն հալածիչ. բայց բառնաբայ կացուցեալ զնա յանդիման պետրոսի և յակոբայ՝ պատմեաց ն՛ց, ո՛րպէս ՚ի ճանապարհին ետես զտ՛ր, և զի խօսեցաւ ը՛ նմա. և զի ՚ի դամասկոս համարձակեցաւ յանուն յ՛սի, և որ հալածիչն էր՝ հալածեցաւ և հալածի ։ Եւ յայնմ հետէ բառնաբաս և պօղոս յա՛մի գործակից էին միմեանց ՚ի քարոզութ՛ աւետարանին ՚ի հրէաստան և արտաքոյ ։

Յայնմ ժամանակի ՚ի մկրտել պետրոսի ըզկուռնելիոս հարիւրապետ ՚ի կեսարիա՝ բացաւ դուռն հաւատոյ և հեթանոսաց. և ըսկսաւ տարածիլ հօտն փոքրիկ ՚ի հեռաւոր տեղիս և մեծանալ. զի թէպէտև յառաջագոյն ոմանք յաշակերտաց ցրու՛ելոց ՚ի պատ-

ճառս

Ճառս հալածանաց՝ որ եղև առ ստեփաննոսիւ՛, սերմանեցին զբանն կենաց մինչև 'ի փիւնիկէ և 'ի կիպրոս և 'ի մեծն անտիոք ասորւոց, բայց տակաւին առ հրէայս և եթ աւետարանէին, և ոչ առ հեթանոսս։ Ապա ոմանք 'ի նորոգ աշակերտելոց անտի՝ որ էին արք կիպրացիք քաղաքակիցք բառնաբայ և կիւրենացիք, համարձակեալ տ̄բ յանտիոք՝ սկսան աւետարանել և յունաց, ֆ̄ հելլենացւոց հեթանոսաց զհաւատս քս̄ի, և դարձուցին զբազմութի̄ նց̄ առ տ̄ր։

Լու եղև բանս այս յականջս եկեղեցւոյն՝ որ յեէ̄մ, և առաքեցին յօգնականութի̄ նց̄ զբառնաբաս՝ իբրև իմաստուն վերակացու և արթուն հովիւ՛՝ զօրաւոր բանիւք և արդեամբք. և նա եկեալ յանտիոք, և տեսել̄ զշնորհսն ա̄յ՝ ուրախ եղև ը̄ դարձ հեթանոսաց. և մխիթարէր զամենեսին՝ յօժարութբ̄ սրտի կալ նց̄ 'ի տ̄ր. զի էր այր զուարթամիտ և լի հոգւով ս̄բվ և հաւատովք. և քարոզութբ̄ նր̄ և առաջնորդութբ̄ յաւելաւ ժողովուրդ բազում տ̄ն։

Յայնժամ զմտաւ ածեալ բառնաբայ՝ եթէ շնորհք դարձուցանելոյ զհեթանոսս առաւելապէս տուեալ է պօղոսի, գնաց անձամբ 'ի տարսոն՝ խնդրել զպօղոս. և գտեալ զնա՝ էած յանտիոք. ուր զամն ողջոյն միաբան խորհրդով և փութով ը̄ ա̄յ՝ ժողովէին զբազմութի̄ 'ի տեղի մի իբրև յեկեղեցի և ուսուցանէին. մինչև կացուցանել 'ի մէջ հեթանոսաց առանձին հօտ և եկեղեցի հաւատացելոց.

ցելոց ։ և անդ եղև նց նախ կոչել քրիստոնեայս ցր քնեանս՝ զաշակերտեալսն 'ի հաւատս քնի ։

Ապա 'ի գուշակել ագաբոսի մարգարէի ըզսովն մօտալուտ, բառնաբաս և պօղոս ժողովեալ զտուրս հաւատացելոց մեծատանց անտիոքացւոց՝ բերին ոպ նուիրակութբ յեէմ 'ի պէտս եղբարց բնակելոց 'ի հրէաստան ։ և դարձան անդրէն յանտիոք ։ Եւ յայնժամ ը իւր եբեր անդր բառնաբաս և զեղբօրորդին իւր կմ զքեռորդին զյովհաննէս՝ որ կոչեցեալն էր մարկոս ։ քանզի և ինքն իսկ մարկոս 'ի նմին ժամանակի էր աշակերտեալ առաքելոց, և երկնաւոր տեսլեամբ ընկալել զփոփոխութի անուան իւրոյ ։ ոպ դրի 'ի բերանոյ նորին մարկոսի 'ի ճպհորդուիս բառնաբայ ։

Եւ մինչդեռ երևելիքն յաշակերտս իբրև մարգարէք և վդպք կային յանտիոք 'ի պաշտաման տն՝ աղօթիւք և պահօք հանդերձ, յայտնուբ հոգւոյն նբյ որոշեցան բառնաբաս և պօղոս երթալ և յայլ տեղիս 'ի քարոզութի ։ Եւ իջեալ նախ 'ի սելևկիա՝ ունելով իւրեանց պաշտօնեայ զյովհաննէս մարկոս, յետ երից աւուրց նաւեցին 'ի կիպրոս ։ և աւետարանէին ը ամ կղ զին ։ ուր և դարձուցին 'ի տր զսերգիոս պօղոս զփոխանակ բդեշխին ։ Եւ ապա դարձեալ մտին 'ի նաւ, և եկին 'ի պերգէ քաղաք պամփիլիոյ ։ ուստի մեկնեցաւ 'ի նոցանէ մարկոս, և գնաց 'ի տուն իւր յեէմ ։

Իսկ

Իսկ պօղոս և բառնաբաս եկին յանտիոք պի-
սիդեայ, և անտի յիկոնիոն, քարոզելով ըզ-
բանն տն՝ բազում հալածանօք հանդերձ. և
'ի բժշկել պօղոսի 'ի լիւստրա քաղաքի լի-
կայոնացւոց զ'ի ծնէ կաղն, ձայն բարձին
ժողովուրդքն, և ասեն. ածք նմանեալք
մարդկան՝ իջին առ մեզ. և կոչէին զնս ան-
ուամբք չածոց իւրեանց, զբառնաբաս դիոս
ձայնելով, և զպօղոս՝ հերմէս. զի պօղոս էր
առաւել համարձակ 'ի խօսել զերկնաւոր
պատգամս. վոյ նմանեցուցանէին զնա հեր-
մեսի, որ և մեռկուռիոս դեսպան դից հա-
մարեալ առ հեթանոսս. և զբառնաբաս վս
փառացի տեսլեանն և զուարթ բարոյիցն՝
միանգամայն և վս երիցութեան ըստ հասակի
քան զպօղոս՝ դիոսի նմանեցուցանէին, այն
է զևս կմ արամազդ հայր անուանեալ դից.
որ ըս կարծեաց հեթանոսաց ոչ գնայր ուրեք
առանց ունելոյ ըս իւր զհերմէս ոպ թարգ-
ման և իբրև բերան իւր. և ահա իբրև այս-
պիսիս ոմանս համարեցան լիւստրացիք զսբ
առաքեալսն. նմին իրի և քուրմ մեհենին
դիոսի՝ որ կայր առաջի քաղաքին, ետ բազ-
մութեան բերել ցուլս և պսակս 'ի դուռն քա-
ղաքին, և կամէր զոհս մատուցանել պօղոսի
և բառնաբայ իբրև ածոց։ (6)

Յայնժամ պատառեցին սբ առաքեալքն ըզ-
հանդերձս իւրեանց, և արտաքս վազել յամ-
բոխէն՝ մեծաձայն եդին վկայութիւն, թէ մեք
չեմք ածք, այլ՝ մարդիկ տկարք իբրև զձեզ.
և եկեալ եմք քարոզել ձեզ յետս կալ յայդ-

պիսի մոլորութիւն բազմ ա̅ծութիւն ։ Եւ յետ սերմանելոյ զբանն ա̅յ 'ի կողմանսն յայնոսիկ և յայլ բազում տեղիս՝ դարձան անդրէն յանտիոք ։ Եւ 'ի յարուցանել անդ ոմանց ղխնդիր վ̅ս թլփատութիւն՝ ը̅դէմ կացին պօղոս և բառնաբաս ։ և եկեալ յեէ̅մ՝ առաջի արկին զիրսն ժողովոյ առաքելոց և երիցանց ։ և զսահման ժողովոյն բերին անդրէն յանտիոք, և բարձին զհակառակութիւն հրէամիտ անձանց ։

Յետ կալոյ զժամանակ ինչ 'ի կողմանս անտիոքացւոց՝ պօղոս յուշ արար բառնաբայ դառնալ միւսանգամ 'ի տեղիսն, յորս քարոզեցին զբանն ա̅ն, տեսանել՝ թէ որպէս ունիցին ։ Եւ քանզի յայնժամ դարձեալ էր մարկոս յեէ̅մէ յանտիոք, կամեցաւ բառնաբաս տանել և զնա ը̅ իւրեանս իբրև զառաջինն ։ իսկ պօղոս չկամէր, զի մի՛ ո̅պ յառաջն՝ մեկնեսցի 'ի նոցանէ ։ Եւ եղև գժտութիւն 'ի մէջ նց̅ վ̅ս բանիս այսորիկ, այս է անմիաբանութիւն կարծեաց (7) ։ զորոյ զլուծումն այսպէս գտին հանգոյն աբրահամու և ղովտայ ։ զի պօղոսի առեալ իւր գործակից զշիղա՝ կամեցաւ երթալ այց առնել կողմանցն ասորւոց և կիլիկեցւոց ։ և բառնաբայ առեալ ը̅ իւր զմարկոս՝ կամեցաւ երթալ յայցելութիւն կիպրացւոց ։ Եւ վ̅սկ ս̅բն ղուկաս՝ որ մի էր 'ի գործակցացն պօղոսի, յայնմ հետէ զպատմութիւն պօղոսի և եթ գրէ 'ի գործս առաքելոց ։ իսկ զբառնաբայ՝ զորմէ նա ոչինչ այլ յիշէ, գտանի առանձին պատմութիւն

գրեաւ իբրև՝ ի յոլհանանէ առաւ գործակից
նը. զոր քաղեն և այլ հինք մատենագիրք և
վկայաբանք առ հաստատուն. և ունէր այնպէս։
Իբրև միաբան հաստատեցին ազգս և քառ-
նաբաս մեկնիլ ի միմեանց, ծուռնր եդեաւ
կացին յաղօթս, և երկոքեանն իսկ յարտա-
ուս ցնդեաւ վ՚ս քաժանելոյ ի միմեանց՝
լային սգացաւուն՝ և առին եղբայր ցեղ-
քայր։ Յարուք էր ան՝ ոմն միաբան զանձինս
եդաք միմիք ի մահ, նոյնպէս և միաբան ըն-
ծայակցուն՝ կատարել զկնե՚ս ան՝ ի մէջ
մարդկան. այլ որ յաջողեաց զընծայս ի-
րաքանչիւր ի բարին։ Ու յատել ազգս ըն-
ծ

արբուլեն . և անդ ցուցցի քեզ՝ թէ ուր ու-
րեք առաջի կայցէ քեզ վկայութիւն :
Ա.պա ողջունեաւ բառնաբաս զտէրս՝ և ըս
մտրմաւ՝ ի լաւուդիկէ . ուր գտեալ նաւ՝ կա-
մէր անցանել՝ ի կիպրոս . և յընդդէմ գառնալ
հողմոյն՝ վարեցան՝ ի կողմն պամփիլիոյ՝ ի
քաղաքն կորնթոս , որ և կոչակեսիոն . անդ
՝ի ծովեզերին հանգեան առ փոքր մի . և ոչ
կամեցաւ բառնաբաս երևել՝ ի քաղաքին . զի
ընդ պօղոսի տեսեալ էր բնակչաց քաղաքին
զնա միշտ , և ոչ առանձինն . այլ երբեմն հա-
սին յանեմաուրիոն քաղաք կիլիկեցւոց , ուր
ոչ ոք Քրիստոնեայ զնա , եւ արտաքս հանեալ
ձակ :
Եւ հարցեալ անդ յերկուց արանց հե-
նոսաց , եթէ ոյք իցեն և ուստի գան , արար
բառնաբաս պինդ . եթէ արդարև կամիցիք
գիտել , թէ ուստի եմք , ՚ի բաց ընկեցէք
յանձանց՝ զոր ունիք զհանդերձս . և ես ըզ-
զեցուցից ձեզ հանդերձ նոր՝ որ ոչ երբեք
մաշի , այլ յաւէտ ժամ պայծառ է : Եւ նոքա զար-
մացեալ ընդ բանն՝ հարցանէին , զինչ այն
զգեաւ էին զոր խոստացաւ տալ նոցա : Յայն-
ժամ առեալ բառնաբաս . եթէ խոստովան լի-
նիք զմեզ ձեր , և կարդեսջիք ըստ պաշտօ-
նեայս ինն իմոյ յի քէն , առնուք զզգեաստն
զայն՝ որ անապականն է յաւիտեան :
Եւ նոքա ՚ի զղջումն եկեալ ՚ի ջնարհաց ած հոգ-
ւոյն՝ անկան յոտս նոր , աղաչէին և ասէին .
զայդ : Եւ բառնաբաս ընկալեալ զնոսա՝ ու-

սոյց զՃանապարհն Ճշմարտութեան. և ապա
իջուցեալ յաղբիւր մի մօտակաց՝ մկրտեաց
զնս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ. և
գիտացին արքն յանձինս՝ զի զգեցան զպատ-
մուՃանն սբ. և 'ի նշանակ այսմ էառ բառ-
նաբաս զվերարկու յովհաննու մարկոսի, և
արկաւ զմիով 'ի նոցանէ. և զիւրն ետ ընկե-
րի նր: Եւ արքն մատուցին նմա զինչս իւ-
րեանց. այլ վաղվաղակի ետ զայն բառնա-
բաս աղքատաց. որով և նաւաստեաց եղև
շահ մեծ: Իսկ 'ի մեկնիլ բառնաբայ և յով-
հաննու 'ի տեղւոջէ անտի՝ մին յարանց ան-
տի կոչեցեալն 'ի մկրտուեն ստեփաննոս՝ կա-
մեցաւ գալ զկնի նոցա. այլ ոչ թողացոյց
բառնաբաս. զի թերևս նք ևս լինիցին անդ
առիթ դարձի այլոց 'ի քաղաքակցաց:

Զկնի ամի այսորիկ հասեալ բառնաբայ և
մարկոսի 'ի կղզին կիպրոսի՝ մտին նախ 'ի
տեղին կոչեցեալ կրոմիակ. և գտեալ անդ
զերկուս 'ի պաշտօնէից զտիմոն և զարիստոն՝
ագան առ նս. և զի տիմոն ըմբռնել էր սաս-
տիկ ջերմամբ, եդին ձեռս 'ի վր նորա, և
վաղվաղակի փարատեցին 'ի նմանէ զջերմն՝
կարդալով զանունն յսի: Եւ էր բառնաբայ
առեալ 'ի մատթէոսէ աւետարանչէ զգիրս
աւետարանի, որ էր ըս ոմանց սկզբնագիրն,
և ըս այլոց օրինակն՝ զոր ինքնին բառնաբաս
անընդմիջապէս էր ընդօրինակեալ. յորմէ
քարոզէր ժողովրդեան զածային վդպութիւն
քսի և զգործս նորա. և զնոյն աւետարանն
սբ դնէր 'ի վր ամ հիւանդաց, և բժշկէր
զամ

զամ ախտս ։

Ի շրջիլ բառնաբայ և մարկոսի 'ի տեղիս տեղիս կիպրոսի՝ ընթացակից եղև նոցա և տիմոն, որ բժշկեցաւ. մինչև եկին 'ի գիւղն լամպադիստայ, ուստի էր ինքն տիմոն ։ Ընդ ասպնջական եղև նց երակլիոն՝ որ 'ի տամաս քաղաքէ կիպրացւոց, յառաջագոյն աշակերտեալն պօղոսի և բառնաբայ 'ի կիտուան կմ 'ի կետեայց քաղաքի, և կոչեցեալն 'ի մկրտուն երակլիդէս ։ Եւ յայնժամ բառնաբաս և մարկոս ձեռնադրեցին զնոսա եպս կիպրոսի. և հաստատեցին 'ի տր զայլ ևս զաշակերտեալսն. և յանձն արարեալ զնս տն՝ եկին 'ի հինն պափոս. ուր յարեցաւ 'ի նս և այլ ոմն 'ի պաշտօնէից ռոդոն անուն ։ Բայց բարեյեսու սուտ մարգարէն՝ որ և եղիմաս մոգ, պատուհասեալն 'ի նմին քաղաքի 'ի պօղոսէ շլացութ առ ժամանակ մի, իբրև գիտաց զգալուստ բառնաբայ անդրէն, ետ հալածել զնա 'ի քաղաքէն ։

Եւ բառնաբեանք չոքան յայլ տեղի կոչեցեալ կուրիոն. անդ տեսեալ բառնաբայ ըզհեթանոսական խաղս լրբուն արանց և կանանց՝ դարձաւ և սաստեաց նց. և յարհամարհել նց զբանս առաքելոյն՝ նոյնժամայն հատուածել մասն մի'ի լեռնէն որ անդ կայր, ցիր և ցան կացոյց զնս. ոպ և զոմանս խեղացոյց, և զոմանս ևս սպան ։

Յետ այսորիկ եկեալ բառնաբայ և որոց ը նմա 'ի գիւղ մի մօտակաց՝ ագան 'ի տան արիստոկղիանոսի, որ յանտիոք քաղաքի սըրբեալ

բեաւ էր՝ ի բորոտութենէ իւրմէ՝ ի ձեռն պօղոս
սի և բառնաբայ, և ձեռնադրեաւ՝ ինոցանէ
եպիս՝ յղեաւ էր՝ ի հայրենի գիւղն իւր՝ որ՝ ի
կիպրոս, աշակերտել զհեթանոս տեղւոյն։
ն, ուր անուն էին՝ ի քաղաքն ամաթուս. այլ
ոչ ոք ընկալաւ զնա անդ, բայց միայն այրն
կին մի աղքատութեամբ հիւրընկալեաւ
զնա առ ժամն։ Եւ անդի բարեյաւուն յամ
տեղիս հասանէր իւրով արբանեկօք, և յա
րուցեալ գբազմութենէ հրէից ընդեմ բառնա
բայ՝ ոչ սայր նմա տեղի. իսկ բառնաբաս
թօթափեր զփոշի ոտից իւրոց, և գնայր քա
ղաքն՝ ի քաղաք. մինչև յետ բազմ վաստակոց՝ ի
քարոզութեանն՝ գալ նմա՝ ի տալա
մինա գլխաւոր քաղաք կիպրացւոց. ուր մը
տեալ՝ ի ժողովարան հրէից՝ մօտ՝ ի տեղին
կոչեցեալ բիբլիա, սկսաւ ուսուցանել զնա՝
մեկնեալ՝ ի նոր ամենեցուն զաւետարանն
մատթէոսի։
Եւ մինչդեռ ոչ սակաւք՝ ի ժողովրդենէն
մատադիրութեաւք աշակերտէին բանիցն Ձշմար
տութե, եկն եհաս անդր յետ երկուց աւուրց
բարեյաւուն Թշնամին յամ արդարութե. և զայ
րացեալ ամբոխ ամենայն յամ բազմութե հրէից,
և խնդրէր ունել զբառնաբաս, և մատնել
հիւպատոսի դատաւորին տազանինայ։ Եւ
մինչդեռ յայս մտաց խորհրդի կային հրէայք,
ըմբան՝ եթէ իշխան ոմն բարեսէր յաղգակա
նութենէ ներոնի կայսեր՝ հասեալ է՝ ի կիպ
րոս. և խնդրացեալ Թէ նա կոչեսցէ զբառ
նաբաս՝ ի ձեռաց իւրեանց, (մանաւանդ
զի

զի [illegible] եղեալ՝ ի հրամանէ Տեառն ասէ
եղիցի՛ ինձ ըստ բանի քում։ Եւ մեկնեցաւ ի նմանէ
հրեշտակն։ Եւ նա յարուցեալ յերկրէ, և աչս իւր
բացեալ՝ ոչ ինչ տեսանէր. և առեալ զձեռս նորա
տարեալ՝ մտուցին զնա յԴամասկոս։ Եւ էր աւուրս
երիս ոչ տեսանելով, և ոչ կերեալ և ոչ արբեալ։
Եւ էր աստ աշակերտ մի յԴամասկոս, որում անուն
էր Անանիա. և ասաց ցնա Տէր տեսիլեամբ։ Եւ
նա ասէ՝ Ահա ես եմ, Տէր։ Եւ Տէր ասէ ցնա՝
Յարուցեալ երթ յորոշեալ ճանապարհն, որ կոչի
ուղիղ, և խնդրեա յաւազանի Յուդայի զՏարսեցի
անուն՝ զՍաւղոս. ահա աղաչէ։ Եւ ետես տեսիլ
մարդոյ Անանիայ անուն մտանելոյ առ նա, և
դնելոյ ի վերա նորա զձեռս, զի դարձցի ի տես-
ութիւն։ Պատասխանի ետ Անանիա և ասէ՝ Տէր,
լուայ ես ի բազումաց զայրէ զչարեացն, որ ինչ
արար սուրբոց քոց յԵրուսաղէմ։ Եւ ոչ միայն
աստ իշխանութիւն ունի կապել զամենայն կո-
չեցեալս զանուն քո։ Եւ ասէ ցնա Տէր՝ Երթ,
զի սկեւռակ ամանի է ինձ այս մարդ, տանել զա-
նուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց և
որդւոց Իսրայէլի։ Եւ ես ցուցից նմա, որչափ
պարտ է նմա զի՛ ինձ չարչարեսցի։ Եւ գնաց
Անանիա, և մտանէր ի տունն, և դնէր ի նա զձեռս
և ասէ՝ Սաւղոս եղբայր, Տէր առաքեաց զիս, զՅի-
սուս որ երեւեցաւ քեզ ի ճանապարհին, յորում
գայիր, զի դարձցի ի տեսութիւն, և լցցիս Հո-
գւով Սրբով։ Եւ անդէն անկան ի նմանէ իբրեւ
զթեփս աչաց նորա, և ետես զտեսութիւն։ Եւ
յարուցեալ՝ մկրտեցաւ։ Եւ առեալ կերակուր՝
զօրացաւ։ Եւ եղեւ Սաւղոս ընդ աշակերտսն
որ յԴամասկոս աւուրս ոմանս։ Եւ անդէն
քարոզէր զՅիսուս ի ժողովարանսն՝ եթէ նա է
Որդի Աստուծոյ։ Եւ զարհուրեցին ամենայն
որ լսէին, և ասէին՝ Ոչ այս է արդեօք որ
սպանանէր յԵրուսաղէմ զկոչեցեալսն զանուն
Յիսուսի, և հոս եկն այդ նպատակաւ զի կա-
պեալ տարցէ զնոսա առ քահանայապետսն։
Սաւղոս ևս աւելի զօրանայր, և շլացուցանէր
զհրեայսն որ բնակէին յԴամասկոս՝ հաստա-
տելով եթէ նա է Քրիստոս։ Եւ յետ աւուրց
բազմաց խորհուրդ արարին հրեայքն սպան-
անել զնա։ Եւ ծանեան Սաւղոսի զխորհուրդ
նոցա։ Եւ էին դռնապանք եւս ևս և գիշերս
յանդիման դրանցն, զի սպանցեն զնա։ Եւ
առեալ աշակերտքն նորա զնա գիշերի, իջու-
ցին զնա ի պատուհանէ՝ ի զամբիւղի մի կա-
խեալ զնա ի պարսպէն։ Եւ եկեալ Սաւղոս
յԵրուսաղէմ՝ փորձէր զերկրորդ աշակերտսն
երթալ ընդ նոսա։ Եւ ամենեքին երկնչէին
ի նմանէ, չհաւատալով եթէ նա իցէ աշա-
կերտ։ Եւ Բառնաբաս առեալ զնա՝ տարաւ
առ առաքեալսն, և պատմեաց նոցա զճանա-
պարհն զոր տեսեալ էր զՏէր, և եթէ խօսե-
ցաւ ընդ նմա, և որպէս յանդիման դրանցն
Դամասկոսի համարձակեցաւ յանուն Յիսուսի։
Եւ էր ընդ նոսա մտանելով և ելանելով յԵ-
րուսաղէմ։ Եւ համարձակեցաւ յանուն Տեառն
Յիսուսի, և խօսէր և հարցանէր ընդ հելլենա-
ցիսն։ Եւ նոքա ջանային սպանանել զնա։
Եւ գիտացեալ եղբարքն՝ իջուցին զնա յԿե-
սարիա, և առաքեցին զնա յԹարսոն։ Եւ
եկեղեցիքն ունէին խաղաղութիւն յամենայն
Հրէաստանի և յԳալիլեա և յՍամարիա, և
շինէին զանձինս՝ երկնչելով յՏեառնէ, և
յամենայն ժամ լցեալ էին մխիթարութեամբ
Հոգւոյն Սրբոյ։ Եւ եղեւ Պետրոս անցեալ
ամենայն կողմանս, եկն առ սուրբսն որ բնա-
կէին ի Լուդ։ Եւ գտեալ անդ մարդ մի ա-
նուն Էնէաս, որ պառկեալ էր ութ ամ ի մահ-
ճի, որ ծանր էր ի ցաւոց։ Եւ ասէ ցնա Պետ-
րոս՝ Էնէա՛ս, բժշկէ զքեզ Յիսուս Քրիստոս,
յարիր և սարկ զանկողինդ քո։ Եւ անդէն յա-
րեաւ։ Եւ տեսին զնա ամենեքին որ բնակէին
ի Լուդ և ի Սարոն, որ դարձան առ Տէր։

և գտեալ նաւ՝ նաւեցին յաղեքսանդրիա ե-
գիպտոսի. և անդ քարոզէին զբանն ա̅յ։
Արդ կատարումն ս̅բյն բառնաբայ՝ ո̅պ ասի,
գրեալ 'ի յովհաննէ մարկոսէ ը̅ օրինակիս ը̅
այսմիկ, եղև յաւուր շաբաթու, որ օր ժ̅է
էր պաւնի ամսոյն եգիպտացւոց, և յունիսի
ժ̅ա ը̅ հռովմայեցւոց. որ ը̅ ոմանց համարի
լինել յամի ա̅ն 53. և ը̅ այլոց 60, կ̅մ 70։
Իսկ յաղագս մարկոսի, զորմէ ունիմք ասել
'ի վարս մարկոսի աւետարանչի, և յովհան-
նու մարկոս կոչեցելոյ, յաւելուն գրել աս-
տանօր իբրև զմիոյ ճառընտիրք մեր և յայս-
մաւուրք հայոց և յունաց, թէ յետ կատար-
ման ս̅բյն բառնաբայ՝ մարկոս և ընկերք ն̅ր
եկին յեփեսոս. և գտեալ անդ զպօղոս՝ պատ-
մեցին նմա զմահն բառնաբայ. և ն̅ր լուեալ՝
բազում արտասուօք ելաց դառնապէս։ Եւ
յետ աւուրց ինչ առաքեաց պօղոս թղթով
զմարկոս 'ի հռովմ առ պետրոս առաքեալն.
զոր ընկալեալ պետրոսի՝ արար իւր յորդե-
գիրս. և հրաման ետ նմա գրել զաւետա-
րանն ս̅բ՝ որ ըստ անուան իւրոյ է. և ապա
ձեռնադրեաց զնա ե̅պ, և առաքեաց յա-
ղեքսանդրիա և յա̅մ եգիպտոս։ Սոյնօրինակ
խօսին և այլք ոչ սակաւք 'ի հին և 'ի նոր մա-
տենագրաց։

Կայ և կաթողիկէ թուղթ ինչ՝ որ կրէ զա-
նուն ս̅բյն բառնաբայ, եթէ իցէ ն̅ր, որպէս
կարծեն իբրև ստոյգ որոգինէս և կղեմէս
աղեքսանդրացի, և ը̅ նմին յառաջ բերեն
վկայութի̅ս 'ի թղթոյ անտի. զոր եւսեբիոս
և

և Հերոնիմոս ը̄ անյայտս դասեն. այլ յայսր ա̄մի վ ը̄ Հերոնիմոս վկայէ զայնմ թղթոյ յանկաւոր դոլ 'ի շինութի̄ եկեղեցւոյ, և զբառնաբաս անցուցանէ 'ի համար եկեղեցական մատենագրաց. և ցարդ ևս գտանի թուղթն այն բառնաբայ յունարէն՝ լատին թարգմանութ ը̄ հանդերձ 'ի կարգի գործոց առաքելական հարց։ Այլ է և ստայօդ աւետարանն բառնաբայ կոչեցեալ, և յիշատակեալ յառաջնոց անտի իբրև խոտան. որ չերևի իսկ 'ի միջի։

Օ ն̄բն բառնաբաս, թո՛ղ զկիպրացիս՝ որք իրաւամբք պարծին նովաւ, այլև միդուլեցիք և բրիքսացիք՝ ֆ̄ միլանցիք և պրեշացիք յիտալիա, ունին իւրեանց առանձին պաշտպան, և առաքեալ իւրեանց անու՛անեն, ունելով հիմն 'ի բանից ն̄բյն կղեմայ հռովմայ հայրապետին, և յայլոց աւանդուե̄ց արևմտեայց։ Քանզի գրե̄լ կայ 'ի գիրս վերծանութե̄ց կղեմայ, և երկրորդեալ 'ի կղեմենտեան համառօտուե̄, թէ յետ հնչելոյ համբաւոյն ք̄ն̄ի փրկչին մերոյ մինչև 'ի հռովմ՝ յառաջ ք̄ զգնալ պետրոսի և պօղոսի անդր, եկն եհաս յանկարծակի բառնաբաս, և կացեալ 'ի հրապարակին հռովմայ՝ քարոզեաց զք̄ն̄ որդի ա̄յ արարչին երկնի և երկրի։ Յայնժամ ոմանք ը̄դէմ դարձան, այլք անփոյթ արարին, և կէսք ծաղր համարեցան զասացեալսն. բայց կղեմէս հռովմայեցի պատմօղ բանիցս լու՛աւ նմա. և յետ ժամանակաց նաւե̄լ յարևելս՝ ել յաղեքսանդրիա. և գտե̄լ

զբառնաբաս՝ զնաց զկնի նր̄ 'ի կեսարիա պա-
ղեստինոյ, և աշակերտեցաւ պետրոսի ։
Արդ յաւելու այլ մատենագիր հին 'ի վր̄
պատմուես, թէ յորժամ 'ի հռովմ էր բառ-
նաբաս՝ լուեալ զականաւոր քաղաքէն միդու-
լեայ, որ է մեդիոլան, դիմեաց անդր՝ ըն-
թացակից ունելով զս̄բ այրն ա̄յ անատազոն
կմ անատէլոն և զայլ ևս դործակիցս. և անդ
քարոզեալ զաւետարանն՝ 'ի սուզ ժամանա-
կի դարձոյց զբազումս 'ի տ̄ր. վ̄ս̄յ միդուլե-
ցիք առաջին լուսաւորիչ իւրեանց Ճանաչեն
զս̄բն բառնաբաս, և զաշակերտ նորա զս̄բն
անատէլոն ե̄պս. որոյ առանձին յիշատակ
լինի առ լատինս 'ի սեպտ. 24 ։ Եւ քանզի
մարմին ս̄բյն անատէլոնի է 'ի պրեշիա մինչև
ցայսօր, հաստատի սովիմբ ասացեալն նոյն
մատենագրի (որ կարծի լինել 'ի վեցերորդ
դարու), թէ ս̄բն բառնաբաս առաքեաց զնա
'ի միդուլեայ և 'ի բրիքսիա, ձեռնադրելով
զնա ե̄պս և հրաման տալով հովուել զայնո-
սիկ կողմանս, և ասելով՝ թէ եկեղեցին մի-
դուլեայ՝ զոր եսս նախ հիմնարկեցի, ծանի-
ցի միշտ իբրև գլխաւոր աթոռ եկեղեցական
բարձրութ̄ե, և մայրաքաղաք այլոց եկեղե-
ցեաց եղելոց 'ի դաւառի աստ ։ Իսկ յաղագս
նշխարաց ս̄բյն բառնաբայ՝ որք ասին փոխա-
դրեալ 'ի միդուլէ, յիշեսցուք 'ի կարգիս ։

Պատ-

Պատմութիւն գիւտի և ֆոխադրութիւն նշխարաց սբյն Բառնաբայ ։

Զկնի կատարման ՆԲ առաքելոյն բառնաբայ մնացին նշխարք ոսկերաց նր ծածկեալ յանծանօթս զամս իբր չորեքհարիւր՝ մինչև 'ի հինգերորդ դար ցաւուրս զենոնի կայսեր. յորում ժամանակի ԸՆ գրելոյ աղեքսանդրի կիպրացւոյ՝ որ համարի իբրու ժամանակակից, սկսան լինել երևելի երևելի նշանք 'ի տեղւոջն՝ ուր թաղեալ կային նշխարք ՆԲյն բառնաբայ մօտ 'ի սաղամինա, որ և կոստանդիա քաղաք կիպրացւոց. քանզի այսահարք գոչէին ԸՆ անցանելն ընդ այն տեղի, և ազատէին յայսոց չարաց. և բազումք յախտաժէտաց, ոՊ և կաղք և անդամալոյծք, յագանիլն 'ի տեղւոջ անդ՝ բժշկէին. մինչև բնակչաց երկրին կոչել զգիւղն զայն տեղի առողջութիւն ։

Ընդ այն ժամանակս պետրոս կնափևս բրռնաւոր պատրիարգ անտիոքայ հարստահարէր զինքնագլուխ աթոռն սաղամինայ կիպրացւոց՝ կամելով արկանել զայն ԸՆ իւրով իշխանութԲ՝ հակառակ կանոնաց ՆԲ ժողովոյն եփեսոսի, ուր հաստատեցաւ աղատութԻ աթոռոյն կիպրոսի 'ի պատիւ ՆԲյն բառնաբայ ։ Եւ զի կնափևս 'ի կայսրն էր ապաստան՝ առ բարեկամութԵն, զոր ունէր ԸՆ զենոնի իսաւրացւոյ նախ քան զինքնակալութԻն, կոչեաց արքունի հրամանաւ զանթեմիոս

միոս զեպատապետն Կիլիկացւոց գալ ՚ի զատ
յանդիման կայսեր ՚ի կոստանդինուպօլիս ։
Իսկ անթեմիոս այր առաքինի , բայց երկչոտ ,
անկաւ ՚ի վարանս . զի երթալ ոչ համարձա-
կեր , գուցէ ոչ կարիցէ բան առ բան վիճել
յատենի ընդ բուռն ոտիկ . և զերթալն չար
համարէր իբրև նշանակ պարտաւորութե ։
Ապրդեւ յայս ծուխս խորհրդոյս էր նա ,
երևեցաւ նմա ՚ի տեսլեան գիշերոյ՝ միան-
գամ և երկիցս և երիցս՝ ոմն ահեղատեսիլ
և սքանչելի կերպարանօք և ձառագայթաւոր
ձակ պայծառութ ՚ի զարդ քահանայական ,
և քաջալերեաց զնա երթալ աներկիւղ ՚ի
Թգրեսիլ քաղաքն , զի ոչինչ չար լինիցի քեզ
առ , այլ փառօք դարձցիս անտի . քանզի ար
հուանի լիցի քեզ վասն՝ ծառայի իւրոյ ։ Եւ
յառեալ անթեմիոսի , խակ դու ոմն ես արբ իմ ,
որ զայսոսիկ խօսիս ընդ իս , լուար ինձանէ . ես
եմ բառնաբաս աշակերտ հին մերոյ Յի քի ,
որոշեալն Հոգւով սրբով յառաքելոցն Հեթա-
նոսաց ընդ առաքելոյն պօղոսի անօթոյն ընտ-
րութե ։ Եւ այս լիցի քեզ նշան . երթ ար-
տաքոյ քաղաքին յարևմուտս կոյս ասպարէզս
հինգ՝ ՚ի տեղին անուանեալ առաղջութե .
զի ՚ի ձեռն իմ ներգործել սուբ զքանչելիան
՚ի տեղւոջն յայնմիկ . և ըրեացես ընդ կեռասի
ծառով (կամ ընդ եղջերենեաւ) , և գտանիցես
այր , և տապանակ ՚ի նմա . յորում կայ մար-
մինս իմ , և աւետարանն ինքնաձեռն [8] , զոր
առի ՚ի ՚ռոմ առաքելոյն և աւետարանչէն մատ-
թէոսէ . և քանզի ոտիկք քո փառաբանեն

՚է

'ի վեր և 'ի վայր, թէ առաքելական է ա-
թոռն անտիոքայ, և դու տուր պիսնի, թէ
և իմս աթոռ է առաքելական, և զառաքելն
ունիմ առ իս։

Յայնժամ յարուցեալ անթեմիոսի՝ ժողո-
վեաց զեկեղեցին, և ել խաչանիշ զարդուք
և քաղում սպասուք 'ի տեղին՝ որ ցուցաւ նմ.
և արարեալ աղօթս՝ հրամայեաց բրել զտե-
ղին. և ահա յետ փոքր մի փորելոյ՝ գտին
զայրն խցեալ վիմօք, զորս 'ի բաց թաւա-
լեալ՝ գտանէին զտապանակն. և բացեալ
զայն՝ տեսին զնշխարս ն̄բ և փառաւոր առա
քելոյն բառնաբայ, որ բուրէր զհոտ անու-
շից հոգևորական շնորհաց. գտին և զաւե-
տարանն 'ի վ̄ր լանջաց նորա եդեալ։ Ապա
համբուրիւ՛ երկրպագեալ՝ ահիւ՛ և դողու՛բ
կնքեցին 'ի ժամուն զտապանակն կապարաւ,
և գնացին 'ի տեղիս իւրաքանչիւր. բայց ե-
պիսկոպոսն կացոյց 'ի տեղւոջն պաշտօնեայս
և արս երկիւղածս՝ փառաբանել զա̄ծ առա-
ւօտին և երեկորին օրհներգու՛բք։ Եւ ինքն
առեալ ը̄ իւր զոմանս յե̄պսաց իւրոց՝ փու-
թացաւ գնաց 'ի թագաւորեալ քաղաքն, և
ագաւ 'ի հայրապետանոցի։

Իբրև պատմեցաւ թագաւորին գալուստ ն̄ր,
հրաման ետ պատրիարգին լսել ժողովով ըղ-
դատ երկոցունց կողմանց, և զարժանն սահ-
մանել։ Ընդ 'ի պնդել պետրոսի կնափոսի՝
թէ աթոռս անտիոքացւոց է պատրիարգա-
կան և առաքելական, վ̄ոյ և ա̄մ շրջակայ
գաւառաց կիպրոսիւ՛ հանդերձ պարտ է ը̄
նովաւ

նովաւ անկանիլ, իրաւունս տային ունկն-
դիրք բանից նր։ Իսկ անթեմիոս լուռ կայր
պահ մի. ապա եբաց զբերան իւր, և ասէ.
ապաքէն և մերս աթոռ՝ առաքելական ճա-
նաչի անդստին 'ի սկզբանէ, և ինքնագլուխ
ազատութիւն պատուհեալ, և հաստատեալ 'ի
ժողովս. Թող զի և առաքեալն բոլորամար-
մին առ մեզ է՝ երիցս երանելին 'ի բարեհամ-
բաւ նբս մեծն բառնաբաս, նորոգ սքանչե-
լեօք մեզ յայտնեալ։ Զայս իբրև ասաց,
ոչ մնաց տեղի դիմախօսաց. և ժողովեալ
եպսունքն լռեցուցին զվէճն կնափոսի, և
սկսան ուրախակից լինել անթեմիոսի։
Իբրև լու եղև բանս այս յականջս զենոնի
կայսեր, կոչեաց փութանակի առ ինքն զե-
պիսկոպոսունս կիպրոսի, և հարցանէր յան-
թեմիոսէ վն յայտնութեան նշխարաց նբ առա-
քելոյն բառնաբայ. և լուեալ զամն կարգաւ՝
ուրախ եղև, զարմացեալ յոյժ ըն մեծութիւն
շնորհացն նոյ, զի 'ի ժամանակս թգրութեան
իւրոյ զայնպիսի սքանչելիս եցոյց ածն։ Յայն-
ժամ 'ի բաց արձակեաց զպետրոս կնափոս
յանտիոք, պատուհէր տուհեալ մի ևս խուել
զեպսապետն կիպրոսի վն բանին այնորիկ։
Եւ առ երանելին անթեմիոս ասէ թագա-
ւորն. արդ որովհետև յաւուրս քո նբ քահա-
նայապետութեան հաճեցաւ տրն մեր յն քն
յայտնել զիւր նբ առաքեալն բառնաբաս,
հրաման տուր վաղվաղակի բերել այսր ըզ-
գտեալ աւետարանն նբ, շնորհ մեծ առնե-
լով այսու մասամբ ինձ որդեկիդ քում. զի

և

և զիս յայմհետէ ունիցիս յանմի լսող հայ-
րումն քումմ։

Այս անթեմիոս ոչ կարաց ընդեմ դառնալ ։
առաքեաց զմի յիշելոց իւրոց ընդ հաւատա-
րիմ պաշտօնեի Թագաւորին ։ և առեալ զե-
րին զաւետարանն՝ զոր ի կոստանդնուպոլիս ,
որոյ տուփն էր խնկենի յանուշահոտ փայ-
տէ ։ Այրդ առեալ զայն Թագաւորին և համ-
բուրեալ՝ ետ պատել ոսկւով, և դնել ի պա-
տատան ։ ուր պահի մինչև ցայսօր՝ ասէ աղեք-
սանդր կիպրացի ։ և ի մեծի հինդշաբաթու-
զատկին ամի սոյնու ընթեռնուն զաւե-
տարանն յաղօթարանի պալատան ։ Այս զան-
Թեմիոս եղեալ բազում պատուհով և պարգևօք
մեծարեալ արքայի՝ արձակեաց ի տեղի իւր ,
հրաման տուեալ շինել տաճար յանուն Աջոյն
քառնաբայ ի տեղւոջն , ուր գտան պատուա-
կան նշխարք նորա ։ և բազումք ևս ի մեծա-
մեծաց ետուն ինչս ի շինուածն եկեղեցւոյն ։
Այկեալ անթեմիոսի ի կիպրոս՝ կատարեց տա-
ճար հոյակապ ի պատիւ Աջոյն քառնաբայ ,
և առ նովաւ քնակարանս միաբանակեաց
կարգելոց ի պաշտօն Աջոյն առաքելոյն , և մե-
ծանախատ հիւրանոցս ։ մինչև ընդարձակուածն
շինուածոյն լինել որպս քաղաք մի փոքրիկ ։
Լակ զարկին կամ զտապանակին յորում էին
նշխարք Աջոյն քառնաբայ , հանգոյց յոյժ
Աջ սեղանոյն՝ ի տեղի առանձին յարմարեալ
ի կձեայ սեանց , և յօրինեալ արծաթի զար-
դուք ։ Այս լինէր անդ տօնախմբութիւն մեծ
յաւուր յիշատակի Աջոյն քառնաբայ ի յունե-
սի

ան ժա՝ քաղցեալք ուխտաւորացն , որք գային
յամ կողմանց . և այնչափ սքանչելիք լինէին
ի տապանակ՝ որ առաքելոյն , մինչև առեալ
զերկին , ոչ քաւեն թուղթք ի գրել զնոսին
ամ առ ամ . վայ և զայսօրինակ ինքեն զնեերքո-
ղեան՝ որք . * Այս Թադէաւորաց փառք , քա-
հանայից ուրախութիւն , և ժողովրդոց ցնծութիւն .
առ նեղելոց մխիթարութիւն , աշխատելոց դիւ-
րութիւն , անյուսից յոյս , լքելոց օգնականու-
թիւն , օտարաց սիրելութիւն , հիւծանոցաց առող-
ջութիւն , ողջոց պահպանութիւն . ազգիւր ջնար-
հաց հոգևորաց , եկեղեցւոյ պարիսպ , ուղ-
ղափառաց հաստատութիւն , հաւատացելոց
ամրութիւն , պարծանք ամ տիեզերաց ։ Նա
եղև այս ամ յամի ՚ռն երբ 478 կիւ 488 ։

Ո՞ այնու ժամանակաւ փոյթէր յարևմտեան
բեռնիգնոս արքեպս մեդիոլանու՝ այր սբ և
առաքինի . որ ընկալաւ առն ի պարզևէն մա
սին մասն լինել ի մոխրոյ և ի հնչեարաց սքան
քառնապատոյ ի կիսրացւոց անտի . այլ ի յե-
տոյ գարս պատուն լինել փոխադրուեցեալ
քաղաք կիսրոսի , և տիրեաց հայմօրէն կղզ-
ւոյն . յայնժամ յուշկապնէս եպատպետ տեղ-
պետն , ըստ յառաջ բերելոյ քալկեդոնեանց
ի պլակիդոսէ պուկինեելոյ այսպէս ։ Յամն
՚ռն 648 , մասէն զօրավարն հագարացւոց՝ (որ
զկին եղև ամրատեաւ ,) եառ զաղամինա
քաղաք կիսրոսի , և տիրեաց հայմօրէն կղզ-
ւոյն . յայնժամ յուշկապնէս եպատպետ տեղ-
ւոյն փախեաւ ի կիսրոսէ հանդերձ մեծա-
մեծօք երկրին , և եկեալ նստաւ ի յուստինա-

ու-

ունել ը̄ իւր բաց յայլոց ս̄ք սպասուց և ըզ-
պատուական նշխարս սբ̄յն բառնաբայ. զորս
յետ ժամանակաց փոխադրեցին անտի այլք
'ի մեդիոլան իտալիոյ. Թէպէտև եղանակն
անյայտ ։

Այս ինչ յայտնի է, զի կայր 'ի մեդիոլան 'ի
վաղ ժամանակաց հին եկեղեցի յանուն սբ̄յն
նաբորայ և կելսոսի կմ̄ փելիքսի. որ անկաւ
'ի ձեռս կրօնաւորաց մինորից յա̄մի տ̄ն 1256.
և սբ̄ 'ի նորոգելն զայն տաճար՝ կոչեցին յա-
նուն ս̄բյն փրանկիսկոսի կարգապետի իւ-
րեանց. և գտին անդ ը̄ այլ նշխարս սբ̄ց և
ղգլուխ սբ̄յն բառնաբայ առաքելոյ. ո̄պ և
ունէին 'ի յիշատակարանաց ուստեք և յա-
ւանդութ̄ից ծերոց, Թէ 'ի տաճարի անդ 'ի
ներքոյ սեանն՝ որ բազմութ̄ ճրագաց լու-
ցելոց էր ծխոտեալ և կիսայրեաց, Թաղել̄
կայցէ գլուխ ս̄բյն բառնաբայ՝ հանդերձ մոխ-
րով մարմնոյ ն̄ր 'ի հուր արկելոյ. վ̄ս̄յ բրել̄
զտեղին՝ գտին զայն նշխարս 'ի տապանակ
մի արճճեայ 'ի ներքուստ երկաթապատ 'ի
խորափտի. ուստի ել և ջուր ցուրտ և յստակ
յառողջութ̄ի հիւ̂անդաց ։

Յայնժամ զմանրել̄ նշխարս և զմոխիրս ե-
դին տապանակաւն 'ի վ̄ր խորանի մատրան
նու̂իրելոյ անդանօր յանուն սբ̄յն բառնա-
բայ, որ յետոյ կոչեցաւ փրանկիսկոսի. իսկ
զպատու̂ական գլուխ առաքելոյն՝ որ երևէր
կարմրագոյն և ո̄պ Թարմ, առին 'ի մէջ ար-
ծաթի և ոսկեզօծ ամանոյ, և եդին 'ի խո-
րանի սարկաւագանոցին. ուր 'ի խուռն ըն-

Թանալ ժողովրդեան 'ի տօնի սբ̄յն և յայլ տօնական աւուրս՝ քահանայք մատուցանէին 'ի համբոյր նց̄ զգլուխ սբ̄յն, կմ'ի վերայ գլխոյ իւրաքանչիւրոց դնէին զգլուխ ն̄բ առաքելոյն՝ արժանի լինել օրհնութ̄ն նորա։ Յետ այսորիկ յամի 1571, 'ի միւսանգամ նորոգել զշինուի̄ եկեղեցւոյն, ն̄բ ե̄պս քաղաքին կարոլոս բոռոմեան վերստին խուզարկեալ զնշխարս ն̄բց՝ որք կային 'ի խորանս խորանս, ամփոփեաց և՛ս վայելուչ յիւրաքանչիւր դիրս. իսկ զմոխրախառն նշխարս ն̄բյն բառնաբայ հանդերձ սկաւառակաւն հանգոյց ը̄ նորաշէն խորանաւ մատրան ն̄ր 'ի վ̄ր երկաթի վանդակաց, ընդ որովք էին նշխարք սբ̄ցն նաբորայ և փելիքսի։ Արդ քանզի մեծահանդէս շքով և թափորով եղև այս վերջին փոխադրութ̄ի, կարգեցաւ 'ի հրամանէ նորին սբ̄յն կարոլոսի օրն այն՝ որ էր ժ̄ե սեպտեմբերի, տարեկան յիշատակ առ միդուլեցիս. զի և ն̄բն բառնաբաս ճանաչի մի 'ի գլխաւոր պաշտպանաց քաղաքի նց̄։

Բայց յառաջ կմ զկնի՝ մասն ինչ 'ի գլխոյ ն̄բյն բառնաբայ սփռեցաւ և 'ի շրջակայ տեղիս իտալիոյ. և իւրաքանչիւր եկեղեցիք՝ յորս էր մասն մի սկաւառակին եդեալ 'ի գլխաձև անօթ, համբաւէին առ իւրեանս ունել զգլուխ առաքելոյն բառնաբայ. և ը̄ այսմ ասի՝ թէ նշխարք գլխոյն կան յեդեննա գիւղ բերգոմացւոց, և 'ի ն̄բն մարինոս տիկենացւոց, և 'ի գենու̂ա լիգուրացւոց. ոա̄

և

և՛ ի կրեմոնա՝ կզաւակն հանդերձ ատամնամբք :
Նակ՛ ի մեդիոլան քաց յերևելի մանէ սկսա-
ռատակին՝ ասէին ունել յեկեղեցւոջ նըն
քառնաբեայ կրօնաւորք կոչեցեալք յանուն նո-
րին քառնաբիտք , և զայլ նշխար առանձին
պարգևեալ՛ ի նըն կարօտեսք քոռոմեան :
Նայս աւանդք են նահանգին իտալիոյ՝ որ
կոչի ինսուբրիա • Թող զայլ մասունս նշխա-
րաց նըն քառնաբեայ , որք ասին լինել՛ ի տո-
ւոնա գաղղիոյ , ՛ի քոնոնիա իտալիոյ , ՛ի
տոռնակ բելգիոյ , ՛ի պաւարիա , ՛ի բրաբա ,
՛ի գաղղիոյն՝ ՛ի վիճակին հռոմոյ , ՛ի նեա-
պօլիս , և ՛ի փլորենտիա • զորոց բազում են
քան զաս յիշատակագրես :

XXXX

կարծեցեալոյ. բայց լուծանէ զաստրակոյս առնդ Հաուբէն՝ ասէլ մեր՝ որ մեկն գրէ, Թէպէտև այրեցին զմարմինն աբէյն, բայց ՚ի շնչանիլ բոցոյն մնացին նշխարք ՚ի մեծաՀ մեծ ոսկերացն նմ։

Երկրորդն է գործ ալէքսանդրի միայնակեցի կխարայ. որ է ըստ մասին ներբողեան պատմական՝ չինեալ ՚ի վեր պատմուեն յովհաննու մարկոսի, և ըստ մասին պատմութի գիտուն նշխարաց աբէյն բառնալոյ առ ջենոնիւ։ Զսորա վկայութի այնպագոյն գոգցեա ունի բաբելպրոք քան զմարկոսին. և վն գրելոյ սորա՝ Թէ ամբոխք մարմին բառնալոյ գոտա առ ջենոնիւ, Հանէ զնախապրիչ չնչին տարակոյսն. և ջանայ Հաստատել՝ Թէ ալէքսանդրոսա այս պարսի լինել ՚ի ջ կի՚ի ջ գարս. որ չէ մեզ անՀաւանելի։ Եւ պարզաբար՝ այնչափ մանրակրկիտ կխտ քննութի՚ս առնէ ՚ի վեր երկոցունց նշանակել գործ ծոց մարկոսի և ալէքսանդրոսի՝ յատուկ ոճոց գրութեան նց և ՚ի ցրուման դիմախոսութեց ոմանց, մինչ զի չմնայ մեզ աշխատութի՚ն ՚ի Հետաքննել զնոսա և Հս։

Բայց զարմանք են, զի չէ՛ դիտեալ այրն կորովատես և զայս ինչ յայտնի, Թէ յատաջագոյնն ընծայեալ յովհաննու մարկոսի՝ կայ և ՚ի սկզբան վկայաբանութե աբէյն փոկասու հայրապետի, ոչ միայն ՚ի ձառընտրի մերում հայերէն, այլև առ նոյն բոլանդեանս յատնարէն։ Ա-պաքէն տեսաք ՚ի վկ՚՚ փոկասու զայս սկզբնատրութի։

* Քանզի բազում անգամ (անվեհեր. ըստ ճ. Ա) ՚ի
,, գալատեացն փրկչին յաւ քոյ քոյ գթասիրի և խնամատարի,
,, և հզօրի և բժշկի և հովուճի և վիճակի, ոչ և այլ, ըստ-
,, հոչակաւոր և գանձաւ, զոր և զանարատ խորհուրդն
,, ընկալեալ քրիստոնէից, և կնքեալ (ըստ՚ն. զանարատ
,, խորհուրդն, ունելացն զոյան արբութի՚, և կնքելոց
,, քրիստոնէից) ՚ի ձեռն բազմաց և մեծամեծ նեղու-
,, Թե՛ց... կարևոր Թուեցաւ և մեզ... ՚ի ձեռն գրոցս
,, նշանակել ձեզ ՚ի գրքարդ ||. ևն։ Եւ ահա տեսանեմք
և ասա, զի այսպէս սկսանի ձայնորդութի բառնալոյ՝
պրեալ ոսկ ՚ի յովհաննէ մարկոսէ. * Քանզի ՚ի գալատե-
,, նէ փրկչին մերոյ յաւ քոյ քոյ, անվեհերի և գթասիրի և
,, հզօրի և բժշկի, գանձաւ և զոր և զանարատ խոր-
,, հուրդն, ունելացն զոյան արբութի՚, և կնքելոց քրիս-
,, տոնէից, հայեցայ և տեսի ես, և ծառայեցի մաս-
,, դիւթութի՚, կարևոր համարեցայ՝ զոր տեսի և լուայ
,, զխորհուրդս պատմել։ Եւ յովհաննէս հետևոլսկից
,, (իբ պաշտօնեայ) բառնալոյ և ոչղոսի առաքելոց ||. ևն։

Ար-

Արդ քանզի բոլլանդեանք՝ որոց անկ էր խուզարկութիւն այսպիսի կնճռոյ, չեն միտ եդեալ այսմ կարևոր բանի, մեք մերով մաստմբ այսպէս լուծանել ունիմք զդժուարութիդ, թէ գրիչն վկայաբանութեան սբյն փոկասու է հետևօղ գրչի պատմութեան բառնաբայ. իբրզի անխախտելի մնայ հեղինակութիւն մարկոսի յովհաննու, յորմէ գողացեալ է զայս յառաջաբան գրիչն փոկասեան. զորոյ և զայլ ծանրագոյն յանցանս գողութեան նշանակեցաք 'ի տեղւոջ իւրում, զի զբազում ինչ ըստ օրինակէ և 'ի վկայաբանութեան զամպէոսի և զամպէուհւոյ. և այսմ ևս չեն ուշ եդեալ լրջամիտ քննիչք ։ Զայսոսիկ ասացաք 'ի յայտնի կացուցանել, թէ որպէս բոլլանդեանք՝ նոյնպէս և առաւել ևս մեք ոչինչ անպատեհութի գտանեմք 'ի պատմութեան բառնաբայ. զորմէ լիցի բան և 'ի վարս յովհաննու մարկոսի, և մարկոսի աւետարանչի ։ Ո՛չ գտանեմք այլ արատ և 'ի բանս աղեքսանդրի կիպրացւոյ, բայց զի է երկարաբան և զարդաբան, չասացից թէ և յիրս իրս աւելորդաբան. վ՛ոյ և զարմանք զիս ունին, զի աւելի քան զչափ է հաճոյացել բաբեպրոքայ. այսչափ ասել հերիքասցի ։

(2) Խորհրդով պահեցաք զայս ձև բանից ճառընտրաց, զի և յայսմաւուրքն և աղեքսանդր կիպրացի 'ի նոյն աղբերէ առեալ՝ միօրինակ նշանակեն աստ զմովսէս և զահարոն և զսամուէլ ։ Իսկ 'ի բանն եսայեայ յառաջ բերեալ 'ի կիպրացւոյն՝ ասէ բաբեպրոք. * Զայսպիսի ,, մարգարէութի չգտանեմք 'ի վուլկադա օրինակն ե- ,, սայեայ. այլ թէ գտանիցի առ եօթանասնիցն, չու- ,, նիմք պարապ հայելոյ ||։ Այլ ո՞ ոչ գիտէ, թէ այս բան է եսայեայ 'ի գլ. լա. 9. միօրինակ 'ի յն. և հյ. ըստ եօթանասնից. որ 'ի վուլկադայն գրի. * ասէ տ՛ր. որոյ ,, հուր է 'ի սիոն, և հնոց ն՛ր յեէմ ||. որ ըստ իմաստից ծառայէ աւանդութեան հրէից ։ Վ՛ս զևտացւոց ասի, թէ կրկնակի կարօղ էին ունել երկիր կալուածոյ. մի՝ ժառանգելով զստացուած կանանց իւրեանց՝ որ յայլոց ցեղից. և միւս ևս՝ ստանալով տեղի արօտոյ խաշանց իւրեանց ։

(3) Զաւանդութի կիպրացւոյն վ՛ս տան մարիամու հաստատեն բազումք յառաջնոց և 'ի յետնոց. բայց են՝ որ ասեն, թէ տուն մարիամու՝ յոր եկն պետրոս, էր 'ի ստորին կողմն եէմի՝ հեռի 'ի սիոն լեռնէ ։ Բայց 'ի դնել՝ թէ տուն մարիամու իցէ վերնատունն սիոնի, տանուտ՛ր տանն յիշեալ յաւետարանին՝ լինի այր ն՛ր.

և գուցէ մարկոս լինի այն՝ որ տանէր սափոր ջրոյ Ի տուն :

(4) Ճաւընտիրք և Հ. դնեն առ՝ զհաւատացն և զիւրեանս բառնալ Ի սկզբան քարոզութենէ առաքելոց միշտ ի յառաջ քան զդարձ պօղոսի. բայց գործք առաքելոց ցուցանեն զբառնալսա լինել անդատին Ի Թիւս հաւատացեալ աշակերտաց. և նոյն իսկ Ճաւընտիրք և Հ. այլուր դնեն հաստձայն մեզ Ի համար եօթանասնից. զնոյն առնեն և բազումք Ի հարց և Ի վկայաբանից :

(5) Աղեքս". կիպրացի երևի ասել, թէ առաջմերով փոխեալ էջէ անունն յովսեփայ Ի բառնաբաս. զոր տաղտապել կամելով բարեպարտքայ՝ դնէ նոր կարծիս, առեալ Ի նոտակերայ. * Առաւել աստի վարկանիմ „ (ասէ), թէ յետոյ յաւելուա նմա մականուն այս, „ յորժամ վաճառեալ զագարակն՝ մխիթար էղև հա„ ստարակաց կարօտութե ‖ : Բայց յայտնի ցուցանէ սքն ղուկաս, թէ վն գոլոյն այլ զոճարթ և ի հոգւով՝ եաուն նմա առաքեալք զայդ անուն. այս է և առելն ոսկեբ. Ի գործ. ճաո ձա. * որդի մխիթարութե... Թուի ինձ „ յաւաքինութե առեալ զանուն, ոյք առ այս բաւա„ կան և քաջայարմար ‖ : Վկայ ոմանք դնեն նովին մտօք՝ որդի մարգարէութե, հայելով Ի գործ ձէ. 32. և Ի ա. հռ. ձէ. 3. ի 31 :

(6) Ըստ հնութենասական առաւաքելաբանութեց դրէ ովին գնա քերթօղ Ի ա գնա փոխակերպութե, թէ գնա երևեցաւ երբեմն Ի լնկայոնիա Ի կերպարանս մարդոյ, և մարդիկն այր զարմաք եղեալ՝ զհս մատուցանէին նմա. նա Թադաւոր երկրին Ի ծաղր դարձոյց զնրան. և փորձել կամելով՝ եթէ գնա ջածն էցէ նա, հրաեր ցաց զնա յընթերս, և եդ առաջի նորա խորտիկ Ի մարդկային մսոյ : Եւ գնան բարկացեալ ընդ այն՝ փոխեաց զԹագաւորն Ի գայլ, որ յուշարէն սակ լեգեա, յորմէ լնկայոնիա : Արդ որպէս կարծեն ոմանք Ի նոր մեկնչաց, լուսարացիք՝ որ էին ժողովուրդ լնկայոնիոյ, Թերևս առ յիշատակ այսպիսի առաւաքելաց՝ փութացան զհս մատուցանել առաքելոց, մի արդեօք էցեն գնա և հերմէս, և յաչն պատուհել զնա զհսիւք՝ պատժեցեն զինքեանս նրերև զհին Թագաւորն նրեանց :

(7) Եթէ այսպիսի գժտութե պատահեաց Ի մէջ առաքելոց այց, որ էր Թեթև ինչ, չեն զարմանք՝ եթէ ծանր ևս հանդիպեցաւ ընդ ոսկեբերան նմանիլ այո

ղսակ

ջոան, և ընդ եպիփան քաղաքակից բառնաբայ։ Բար-
ուք գրէ աստանօր կաղմէթ՝ ի գին. գ.ղ.ծ. ձէ. 39. * Եղև
„ գժտուԹիւն, այն է դժկամակուԹիւն, գրգիռ. բայց ոչ
„ եհաս բնաւին ցայն վայր, զի ջնաւեցաւ սէրն, կամ
„ պակասեայն նուիրք յարդն և ակնածուԹիւնն և սէրն՝ որ
„ կայր ի մէջ նոցա։ ՊէտպհուԹիւն կարծեաց էրայն, որ
„ չէ օտար ի սկզբան և ի բարեկամուԹէ դէմսաւին։ Սքն
„ պօղոս անդադրոյն կայր, և զարդարուԹիւն նորին.
„ սքն բառնաբաս ներողամտագոյն լինէր, և առաւել
„ մարդասիրուԹէ գնայր։ ԽստուԹիւն պօղոսի
„ օգուտ եղև մարկոսի, զի զնա սերտագոյն գործեաց
„ և քաջախոհ. օգուտ եղև և քաղցրուԹիւն բառնաբայ,
„ զի մի լքանիցի և յանյուսուԹիւն անկցի զկնի առաջնոյն
„ սխալանաց։ Կամք եղեն վերին տեսչուԹէ, զի երկ-
„ պառակուԹիւնն՝ որ ըստ պօղոս և ըստ բառնաբաս, կար-
„ գեսցի ի մեծ ևս յառաջադիմուԹիւն և ի շինուած եկե-
„ ղեցւոյ. զի ուր այս անձինք գերագոյնք մեկնեցան
„ ի միմեանց, ուրոյն ուրոյն շրջեցան ըստ մեծագոյն մասն
„ ցնի, և զոյս աւետարանին ծագեցին ըստ գաւառս բազ-
„ մագոյնս չափ։ Համարեալ լինի, թէ յովհաննէս մար-
„ կոս փութով դարձ արարեալ եցէ առ սքն պօղոս. և
„ Թէ սա է նա, որ ի սքն պօղոսէ. կոլ. գ. 10. կոչէ
„ մարկոս եղբօրորդի բառնաբայ, զոր ընծայեցուցա-
„ նէ, և Թուէ ըստ նա՝ որք օգնական եղեն նմա և մեռ-
„ Թար, մինչդեռ ի կապանս էր ի հռոմ. յիշէ զնա և
„ ի Թուղթն առ փիլեմոն. և ի բ. տիմ. գ. 2։ Յոյնք
„ և լատինք տօնեն զնա ի սեպտ. 27. և ասեն զնա լի-
„ նել եպս բիբլեայ ի փիւնիկէ ։։

(8) Ինչոչէոն եդաք՝ պահելով զԹարգմանուԹիւն յունա-
կան ձայնի սղեքս. կիպրացւոյ. էպէիսէոն. որ հայե-
ցուցանէ անխաւիր առ մատԹէոս և առ բառնաբաս.
ուր բաբեպրոք այսպէս խօսի ի միաբանել զայլևայլ
աւանդս. * Համաբուն իմաստ բանիցն երեւի լինել,
„ Թէ բառնաբաս զաւետարանն՝ որ նախ զառաջինն եբ-
„ րայերէնն էր գրեալ, նորով ձեռամբ գրեալ եցէ
„ առեալ ի բերանոյ նորին իսկ սքն մատԹէոսի. որ
„ յունարէն Թեզապրեր ինոյն, և ըստ նմին գրեալ եցէ.
„ զոր ասի արարեալ և սքն բարԹողիմէոս. գուցէ և
„ այլք բազումք՝ մի և նոյն ձևով բանի և ի նմին ժա-
„ մանակի՝ առանց երկք տարբերուԹէ. զի Թէ այր ևս
„ բաքանչիւր իւրով ճգամբ առանձին ԹարգմանուԹիւն
„ էր արարեալ, պարտ էր գտանիլ տարբերուէ. որոյ

,, ոչինչ նշմարանք կայ ուրեք։ Եւ այս իսկ է պատ-
,, ճառն, զի ոմանք զյակոբոս, այլք զյովհաննէս, ոպ̄
,, և ոմանք զղուկաս կմ զպօղոս համարեցան թարգման.
,, ըստ որում իւրաքանչիւր եկեղեցի ընթեռնոյր զաւետա-
,, րանն 'ի սկզբնագրէ անտի այսր կմ այնր առաքելոյ ||։
Այլ զգիւտ նշխարաց սբ̄յն բառնաբայ հանդերձ աւե-
տարանաւն մատթէոսի յիշէ և թէոդորոս վերծանօղ՝
որ էր 'ի զ̄ դարու, և այլք յոլովք զկնի։

Վ. ԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Փիլիպպոսի առաքելոյ՝ աւետարանիչ կոչե-
ցելոյ, միոյն յեօթանց անտի սարկաւագաց։

Հ. ֆեպր. 9։ Յ. հոկտ. 11։ Լ. յունիս. 6.
Բոլլանդեանն բաբեպրոչ. 'ի ա̄ հատ. յնս. էջ.
618 = 620։



Սա Ի ՊԱՆԾԱԼԻՐՆ
կեր նախավկային մեծի, հան-
գոյն նմին 'ի թուոյ եօթանա-
սուն և երկու աշակերտացն քս̄ի
ընտրեալ յառաքելոց 'ի համար եօթն սար-
կաւագաց. այնչափ անուանի 'ի մէջ նոցա,
մինչև ոպ̄ ըստ կարգի անուանն, նոյնպէս և
գործով յառաջադէմ լինել ք̄ զայլս հնգե-
սին՝ իբրև անընդմիջելի գործակից ն̄բյն ստե-
փաննոսի նախասարկաւագին՝ նմին համա-
նման. ը̄ որում և ն̄բն ղուկաս յետ պատմե-

լոյ զանցս նախավկային՝ զսորին փիլիպպոսի
և եթ զգործս ը̄ գրով արկանէ. քանզի և մե-
ծամեծք էին յոյժ, և արժանի արձանագրու-
թ̄ե՛ի կարգի առաքելական գործոց։
Յորում սակի զառաջին տեղին ունի դարձն
սամարացւոց. զի որպէս ասէ գիր, յորժամ
սփռեալքն՛ի նեղուէ̄ն ստեփաննոսի շրջէին
և աւետարանէին զբանն ա̄յ, փիլիպպոս ի-
ջեալ՛ի քաղաքն սամարացւոց՝ որ էին ազգ
խառնակրօն՛ի հեթանոսութ̄է և՛ի հրէու-
թ̄է, քարոզէր ն̄ց զք̄ս. և ժողովուրդքն միա-
բան ունկն դնէին բանիցն փիլիպպոսի. զի
ոչ սոսկ բանիւ՛ խօսէր, այլև նշանօք զիրսն
հաստատէր. մինչ զի բազում այսահարք յան-
դիման ն̄ր աղաղակէին՛ի ձայն մեծ, և զեր-
ծանէին յայսոց չարաց. և անդամալոյծք և
կաղք բժշկէին՛ի կարդալ փիլիպպոսի զա-
նուն ա̄ն՛ի վ̄ր ն̄ց. որով դարձան բազմուի̄ք
արանց և կանանց, և մկրտեցան. և եղև ու-
րախութ̄ի մեծ՛ի քաղաքին յայնմիկ։
Եւ որ մեծն է, սիմոն մոգն սամարացի՝ հնա-
ցեալն աւուրբք չարուե̄, և հասեալն՛ի ծադ-
կախարդութ̄ե, որ իբրև ա̄ծ ոմն համարեալ
էր յաչս ամբոխին, յաղթեալ՛ի զօրաւոր բա-
նից և՛ի գործոց ն̄բյն փիլիպպոսի՝ յանձն առ
զհաւատս ք̄ն՛ի առ ժամանակ մի. և ընկալե̄լ
զմկրտութ̄ի՝ ստէպ կանխէր առ փիլիպպոս.
և տեսեալ զնշանսն և զմեծամեծ զօրուի̄սն՝
որք լինէին, զարմանայր։
Եւ քանզի ն̄բն փիլիպպոս չև էր յայնժամ
քահանայ և ե̄պս, այլ սարկաւագ, ազդ
արար

արար առաքելոց՝ որ յեէմ, զի յղեսցեն զոք յիւրեանց գալ և տալ զդրոշմն ս̄բ մկրտելոցն յիւրմէ. և ն̄ք ուրախ եղեն և առաքեցին անդր զգլուխ քահանայութ̄ն զս̄բն պետրոս և զգործակից ն̄ր զյովհաննէս զսիւնս եկեղեցւոյ. որք եկեալ աղօթս արարին և ձեռն եդին 'ի վ̄ր մկրտելոցն, ս̄ր ետուն զդրոշմ. որով և առնուին հոգի ս̄բ. և ինքեանք յետ յանդիմանելոյ զչարութ̄ն սիմոնի մոգի՝ որ արծաթոյ կամէր գնել զշնորհս ձեռնադրութ̄ն, և յետ ուսուցանելոյ զաշակերտեալսն հաստատուն կալ 'ի վ̄դպութ̄ն, զոր ուսան 'ի փիլիպպոսէ, դարձան յեէմ։

Իսկ փիլիպպոս յետ լինելոյ աւետարանիչ և լուսաւորիչ սամարացւոց՝ առաքեցաւ 'ի տ̄նէ աւետարանել և լուսաւորել զայլ ևս հեռաւորս. քանզի երևեցաւ նմա հրեշտակ տ̄ն, և ասաց երթալ ը̄ ճանապարհն՝ որ իջանէր յեէմէ 'ի գազա՝ անապատն կոչեցել. այն է աւերակն հին գազայ քղ̄քի կործանելոյ յաղեքսանդրէ մակեդոնացւոյ՝ քանի մի ասպարիզաւ հեռի 'ի ծովէ, որիշ 'ի նոր գազայ՝ որ զկնի շինեցաւ մօտ 'ի ծովն. կմ ը̄ այլոց անապատ կոչիւր ճանապարհն՝ որ տանէր 'ի գազա։ Եւ ահա անցանէր կառօք ը̄ այն ճանապարհ՝ այր մի եթէովպացի հզօր և երևելի, որ էր ներքինի արքունեացն եթէովպիոյ. ս̄ր կմ ներքինապետ, և կմ արքունի հազարապետ, և գանձապետ թագուհւոյն եթէովպացւոց, որում անուն էր կանդակ տիկին՝ ը̄ սովորական կոչման թագուհեաց երկրին.

գր Թագաւորք եգիպտացւոց՝ փարաւոն կամ
պտղոմէոս անուանէին . և ոպ ասի յոմանց՝
կանդակ դշխոյ եթէովպիոյ էր 'ի յաջորդաց
տիկնոջն սաբայ , որ և դշխոյ հարաւոյ կոչի ,
համարեալ Թագուհի հապէշստանու . վ՞ոյ
և ներքինին եթէովպացի կարծի լինել յեր-
կրէ և յազգէն հապէշու ։

Արդ սա եկեալ էր յե՞էմ վ՞ս երկիրպագանե-
լոյ ա՞յ 'ի տաճարին , ոպ առնէին և այլք 'ի
հեթանոսաց ա՞ծածանօթից . և զի էր այր
գրասէր , 'ի դարձի իւրում նստեալ 'ի կառս՝
ընթեռնոյր զգիրս մարգարէու՞ եսայեայ ։
Յայնժամ ազդեաց հոգին ս՞ք փիլիպպոսի
ներքին ազդեցութ՞ք , կմ դարձեալ 'ի ձեռն
հրեշտակի՝ մատչիլ 'ի կառս ներքինւոյն , և
խօսել առ նա զբանն կենաց ։ Եւ փիլիպպո-
սի ելեալ 'ի կառս ն՞ր , և առիթ առեալ 'ի
բանից գրոյն՝ զոր ընթեռնոյր , աւետարա-
նեաց նմա զյ՞ս . և իբրև եկին 'ի ջուր ինչ ,
խնդրեաց ներքինին 'ի ս՞ք առաքելոյն զմկր-
տութ՞ի . և կացուցեալ զկառսն՝ իջին երկո-
քեան 'ի ջուրն՝ փիլիպպոս և ներքինին , և
մկրտեաց զնա , Եւ իբրև ելին 'ի ջրոյ անտի ,
հոգին ս՞ք եկն 'ի վ՞ր ներքինւոյն . և հրեշ-
տակ ա՞ն յափշտակեաց զփիլիպպոս , և ոչ ևս
ետես զնա ներքինին . և գնայր զճանապարհ
իւր ուրախութ՞ք . որ և եղև հիմն քրիստո-
նէութ՞ն յեթէովպիա կամ 'ի հապէշստան .
ուր յետոյ դնաց ասեն մատթէոս աւետարա-
նիչ , և եղև տիրապէս լուսաւորիչ Ծին այ-
նորիկ ։

Իսկ

Իսկ փիլիպպոս ձեռամբ հրեշտակի բերաւ յազովտոս. և շրջեալ աւետարանէր ամ քաղաքացն՝ մինչև 'ի գալ նր 'ի կեսարիա պաղեստինոյ, որ և կեսարիա փիլիպպեայ. ուր էր նր բնակուի հաստատուն. ոյր վս կարծի լինել ծննդեամբ 'ի քաղաքէ անտի։ Ընդ եկն յետ բազում ժամանակաց առաքեալն պօղոս ը ղուկայ աւետարանչի, և ը գրելոյ նորա՝ եմուտ յապարանս սորին փիլիպպոսի աւետարանչի, որ էր յեօթանց անտի. այս է հռչակաւոր քարոզ բանին՝ մի յեօթն սարկաւագաց ընտրելոց, թէպէտև չիցէ աւետարանագիր. ոպ և առ տիմոթէոս ասէր առաքեալն. զգործս աւետարանչի դործեա՛. և առ եփեսացիս գրէ, նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս (իմա՛, կմ գրով, կամ բանիւ՛),

զոմանս հովիւ՛ս և վդպս։

Ընդ 'ի տան փիլիպպոսի՝ ուր ագաւ պօղոս զաւուրս բազումս, եկեալ և ադաբոս մարգարէ՝ կապեաց զանձն դօտւով պօղոսի՝ 'ի գուշակել զառաջիկայ կապանս նորա յեէմ։ Ուանդէ անդանօր նբն ղուկաս, թէ էին նորուն փիլիպպոսի աւետարանչի դստերք չորք՝ կոյսք մարգարէք։ Մին 'ի չորից անտի էր երմոնէ կոյսն փառաւորեալ և տօնելի, ոպ պատմեցաք 'ի վարս նր. ուր և յիշի անուն

միւս ևս քեռն նր երինէ կմ՛ եւտիքիա։

Իսկ վս այլոց, ոպ և յաղագս կատարման հօր նց փիլիպպոսի չի՛ք որոշ պատմութի, բայց այս ևեթ, թէ նբն փիլիպպոս յետ մե-

ծա-

ծամեծ գործոց իւրոց ը̄ գրոց՝ ձեռնադրել̄
ե̄պս յառաքելոց անտի, գնաց 'ի տրաղ քա-
ղաք ասիացւոց. ուր դարձոյց զբաղումս, շի-
նեաց եկեղեցի, և հովու՛եաց զայն աթոռ՝
մինչև 'ի վախճան իւր խաղաղութ̄ը, և կամ
ցկատարումն նահատակութ̄ը. և անդ թա-
ղեցաւ ասեն, և փայլէր գերեզման ն̄ր սքան-
չելեօք։ Եւ էր տրաղէ կմ տրաղիս քաղաք
երևելի ե̄պսարան 'ի հնումն առ մէանդր դե-
տով ը̄ մէջ ասիացւոց և լիւդացւոց. գտանի
և թուղթ մի 'ի թղթոց իգնատիոսի ա̄ծազ-
գեցի գրեալ առ տրաղացիս։ Բայց են՝ որ
ասեն, թէ ն̄ը առաքեալն և աւետարանիչն
փիլիպպոս կատարեաց զաւուրս իւր 'ի կեսա-
րիա. և թէ անդանօր թաղեցան առ նմա
երեքին դստերք իւր։ Իսկ այլք՝ որ 'ի յերա-
պօլիս համարին զն̄ թաղեալ, շփոթեն ար-
դեօք ը̄ պատմութ̄ն փիլիպպոսի առաքելոյ
միոյն յերկոտասանից. քանզի կային և նորա
դստերք՝ որք թաղեցան ը̄ հօր իւրեանց 'ի
յերապօլիս փռիւգիոյ։

Ո՛չ է շփոթութ̄ի, այլ յարմարաւոր խորհր-
դածութ̄ի անու՛անակցու̄ն այն, զի 'ի տօնի
ն̄ըյն փիլիպպոսի առաքելոյ՝ ընթերցու՛ած
դնի 'ի գործոց առաքելոց, ուր է պատմու̄ի
գործոց փիլիպպոսի աւետարանչի։ Դուցէ
և այլ խորհուրդ դիտեալ կայ. զի ուր նախ-
նիք մեր զառաջին փիլիպպոսն և եթ եդին
'ի տօնացուցի և ո՛չ զերկրորդն, 'ի տօնի ա-
ռաջնոյն կամեցան թերևս առնել և զյիշա-
տակ երկրորդին ընթերցու՛ածովն այնու՛իկ։

Սոյն-

Սոյնպէս չկան 'ի հին տօնացոյցս ազգիս և յետագայ երկու և երեք անու՛անք՝ յովհաննու, շիղայի և սիղու՛անոսի. ը̄ որում անգիտելի էր և է, թէ յովհաննէս մարկոսն՝ իցէ՞ որիշ 'ի մարկոսէ աւետարանչէ, եթէ նոյն. նոյնպէս շիղա և սիղու՛անոս՝ մի և նոյն ո՞ք իցէ, եթէ զանազանեալ. բայց քանզի 'ի յետին տօնացոյցս եդեալ կան և պահին յաւուր յայսմիկ, ը̄ այնմ առաջի՛ կայ մեզ գրել և զնց̄է զայլ և այլ աւանդս։

Վ. Ա. Ր. Ք. Ս. Ր. Բ. Ո. Յ. Ն.

Յովհաննու՝ Մարկոս կոչեցելոյ։

Յ. Յամագր. ապր. 27. և սեպտ. 27։ Լ. սեպտ. 27։ Բոլլանդեանք անդ, և յայլ տեղիս։

Յ Ա. Յ Տ Ն Ի Ի Ի Գ Ո Ր-ծոց առաքելոց, զի յովհաննէս՝ կոչեցեալն մարկոս՝ էր որդի մարեմայ կնոջ բարեպաշտի յեէմ, և եղբօրորդի կմ քեռորդի ը̄բյն բառնաբայ կիպրացւոյ. և եղև զառաջինն ուղեկից պօղոսի և բառնաբայ իբրև պաշտօնեայ նոցա, շրջելով ը̄ նն մինչև յանտիոք և 'ի կիպրոս։ Ա. յլ 'ի դառնալ ը̄ նն 'ի պերգէ պամփիւլեայ՝

լեայ՝ եթող զնս, և դարձաւ յեէմ'ի տուն
մօր իւրոյ՝ երիտասարդական իմն ըմբոստու-
թ ԷԲ. զի կամ խոյս տալ կամեցաւ 'ի բազմա-
վիշտ աշխատութ ԷԲ յընթացս քարոզութ ԵԲ,
և կամ ինքնանալ և շրջիլ առաքելաբար 'ի քա-
րոզութ ԻԲ՝ քան թէ լինել պաշտօնեայ առա-
քելոց։

Բայց յետոյ ստրջացեալ՝ դարձ արար ան-
դրէն յանտիոք առ պօղոս և առ բառնաբաս.
և իբրև հանդերձեալ էին ն ԷԲ շրջիլ միւսան-
գամ'ի քարոզութ ԻԲ, ՆԲն բառնաբաս կամե-
ցաւ առնուլ ԸԲ իւրեանս և զյովհաննէս ԸՍ
յօժարութ ԵԲ սրտի ն ԸՐ, ներողամիտ լինելով
ԸԲ առաջին յետադարձութ ԻԲ նորին. զի կա-
մէր զնա շահել՝ սէր ցուցանելով իբրև առ
ազգական իւր։ Իսկ ՆԲն պօղոս ԸԲ դէմ դար-
ձաւ անաչառ խորհրդով, խրատել կամելով
զյովհաննէս՝ մի՛ լինել անհաստատ 'ի ճանա-
պարհի ՏՈՆ։ Եւ վ ՆԿ անկաւ գժտութ ԻԲ 'ի մէջ
երկոցունց կողմանց. մինչև լաւ համարեցան
գտանել զմէջ այսու օրինակաւ. զի պօղոս է-
առ ԸԲ իւր զ շիղա, և գնաց քարոզել յասիա.
իսկ բառնաբայ առեալ ԸԲ իւր զմարկոս՝ գը-
նաց քարոզել 'ի կիպրոս։

Դարձեալ յայտնի է 'ի թղթոց ՆԲյն պօղո-
սի, թէ յովհաննէս մարկոս յետոյ ուրեմն
եկն առ նա ինքն պօղոս, և սիրով ընկալել
'ի նմանէ՝ սպաս կալաւ նմա ՈՊ հաւատա-
րիմ պաշտօնեայ, և գտաւ 'ի կարգի համա-
վաստակ և պատուական աշակերտաց. ԷԶի
գրէ առաքեալն առ կողոսացիս. ԳԲ. 10.

* Ող-

* Ողջոյն տայ ձեզ՝ արհատարքոս գերեվից
իմ, և մարկոս եղբօրորդի բառնաբայ. վ՚ա
որոյ առիք պատուէրը, եթէ եկեսցէ առ ձեզ՝
ընկալջի՛ք զնա ‖ : Եւ առ փիլիմոն. հաճոյ.
24. * ողջոյն տայ քեզ եպափրաս գերեվից
իմ ՚ի քո՛ յա, և մարկոս և արհատարքոս և
դեմաս և ղուկաս գործակիցք իմ ‖ : Եւ առ
տիմոթէոս, ՚է եռաղն Ե. Ա. 9 = 11. * Ող-
ջո՛ւյն դար առ հս վաղվադակի. զի դե-
մաս եթող զիս, և սիրեաց զ՚ես, և գնաց ՚ի
թեսաղոնիկէ. կրեսկէս ՚ի գաղղիա (կա՛ՊԻ
գաղատիա), տիտոս ՚ի դալմատիա. ղուկաս
միայն է ընդ հս: Ո՛ մարկոս առեալ ընդ քեզ ա-
ծիցես (յեփեսոսէ՚ի հռոմ). զի է ինձ պի-
տանի ՚ի սպասաւորութիւն ‖ :

Ա՛ղջոյն տայ ամ բանից գրոց նմաստասիրեն
քաղուածք ՚ի նախնեաց և ոչ սակաւք ՚ի յեւա-
նոց, թէ սա ինքն յովհաննէս մարկոս է նոյն
ինքն որն մարկոս աւետարանիչ, զոր և ՚ի
հռոմ առ իւր ունէր ՚ըզն պետրոս, և որպէս
իւր ձայնէր. վ՚ոյ միացեալ պատմութիւն խըն-
դրելի է՝ յորոց միանգամ ունիմք առանձինս
՚ի վարս մարկոսի աւետարանչի: Նայց սա-
կայն եղեն և ոմանք՝ ոչ այնչափ յառաջնոց,
որչափ ՚ի յետնոց, ոլք որիշ համարեցան ՚ի
մարկոսէ աւետարանչէ զայս յովհաննէս մարկոս. և ըստ այդմ եդաւ ՚ի ժամագիրս յունաց
և ՚ի յայսմաւուրս հռովմայեցւոց և ՚ի նոր
տօնացոյցս հայոց. քայց ոչ ՚ի հին տօնացոյցս
մեր, և ոչ ՚ի յայսմաւուրս մեր հիմ յունաց:
Եւ ոլք զատանեն զյովհաննէս մարկոս ոչ

րոյն, այսպէս նշանակեն զլրումն պատմու-
թեն նր տարտամ բանիւք. Յետ կատարման
ասեն նբյն բառնաբայ եկեալ յովհաննու
մարկոսի առ նբն պօղոս, և զբազում ժամա-
նակս գործակից լեր նմա՝ հուսկ յետոյ եղև
ե՞պս բիբլիայ քաղաքի ապողոնիադայ, կամ
բիբղուպօլեայ փիւնիկեցւոց, և կմ պաւտի-
բողոնայ 'ի բաբելոմն. և անդ կատարեցաւ
նահատակութ՞ն։ Որ է աւանդ անստոյգ՝ ա-
ռեալ յերկուց տեղեաց. մի՝ զի բիբլիա յիշի
'ի վարս բառնաբայ 'ի նմին իսկ 'ի յովհաննէ՝
ո՞պ տեղի կատարման 'ի կիպրոս. և միւս և՝
զի նբն պետրոս 'ի յիշելն զմարկոս 'ի թղթի
իւրում՝ յիշէ և զեկեղեցին բաբելոնի, որ ա-
ռաւել զհռովմ կամ զաղեքսանդրիա երևի
նշանակել. բայց քանզի 'ի հինն բաբելոմն
կայր պաւտիբիբղոն քաղաք, 'ի նոյն հակա-
միտեալ են միտք ոմանց 'ի գրչաց։ Եւ զոր
գրէ ժամագիրք յունաց զյովհաննէ մարկո-
սէ, թէ * այնպէս ընտանացեալ էր ա՞յ, մին-
չև 'ի ձեռն հովանւոյ իւրոյ փարատել ըզ-
հիւ՛անդութի՞ս ‖, ը՞ն նմանութ՞ն նբյն պետ-
րոսի, թերևս առաւել մարկոսի աւետարան-
չի է անկ։

Ընորոշ մնայ և հեղինակն ճպէորդութ՞ և
վկայութ՞ն նբ առաքելոյն բառնաբայ՝ յով-
հաննէս մարկոս. զորոյ արժան է լսել ըզ-
բանս իւր, որ զանձնէն, սկիզբն ունելով
այսպէս ը՞ն յունական հին մատենի. * Քան-
զի 'ի գալստենէ (կամ 'ի հասանելոյ գալս-
տեան) փրկչին մերոյ յի՞ քի՞, անվեհերի և

գ[ի]ծասիրի և Տզբի և Տովմի և բժշկի, զան-
ձառ և զնբ և զանապատ խորհուրդն, որոց
գոյդն սրբութի[ւ]ն ունողաց և կրթելոց քրիս-
տոնէից, Տայեցոյ և տեսի ես, և ծառայե-
ցի մտադիւրութի[ւ]ն, կարևոր Տամարեցայ զոր
տեսի և լսեայ զխորհուրդս՝ պատմել։ Այս
յովհաննէս Տեսողակից բառնաբայ և պո-
զոսի առաքելոյ, պաշտօնակ լեալ երբեմն
Կիւրղոսի քՀիպատեսի (կամ քրմապետի),
իսկ այժմ զՀնարՀս Տոգւոյն սրբ առեալ ի
ձեռն պետրոսի առաքելոյ և բառնաբայ և
պօղոսի՝ արժանաւորացն կոչման, որք մկրտե-
ցինն զիս։

Ես յետ մկրտելոյ իմոյ տեսանէի ի տեղեան
զայր ոմն, զի կայր յանդիման՝ արկեալ զիւ-
րեաւ պատմուձանն սպիտակ, և ասէր. քա-
ջալերեաց յովհաննէս, զի և անուն քո փո-
խեալ՝ անուանեսցի մարկոս. և փառք քո ընդ
ամենեսին համօրէն քարոզեսցի. և որ ի քեզ
խաւարն էանց ի քէն, և տուեալ քեզ Տան-
ձար առ ի խեղամուտ լինելոյ խորհրդոցն
նոյ։ Իբրև տեսի զայս տեսիլ, ղղողանի Տա-
րեալ՝ ջոքայ առ ոտս բառնաբայ, և պատմե-
ցի նմա՝ զոր տեսի և լսեայ յառանձ անտի ըզ-
խորհուրդս։ Իսկ պօղոս առաքեալն ոչ էր
մերձ, յորժամ յայտնեցի զբանս զայսոսիկ,
Եւ ասէ ցիս բառնաբաս. մի ումեք ասի-
ցես արտաքոյ զզօրութի[ւ]ն՝ զոր տեսեր. գի-
տեա, զի և ինձ ի գիշերիս յայսմիկ երևե-
ցաւ Տրն, և ասէ. քաջալերեաց, զի որպէս
եստուր զանձն քո վճռ անուճան իմոյ ի մեռա-
նիլ

նիլ և յօտարանալ յաղգէ քումմէ, սոյնպէս և կատարեսցիս. բայց և զոր առ ձեզն է պաշտօնեայն, և զնա՛ առջիք ը՞ ձեզ. զի ունի զխորհուրդս իմ՝ ա՞ծայինս։ Եւ արդ ո՛ր-դեակ պահեա՛ յանձին քում զբանսն, զոր տեսեր և լո՛ւար. զի հանդերձեալ է ժամանակն յայտնել քև զայդոսիկ։

Արդ՝ զայս խրատ առեալ 'ի նմանէ՝ մ՛նացաք յեէ՛մ աւուրս ոչ սակաւ. և եկաք յանտիոք. անտի եկաք 'ի սելևկիա. և անդ կացեալ զաւուրս երիս՝ նաւեցաք 'ի կիպրոս. և ես էի պաշտօնեայ ն՞ց, մինչև շրջեցաք ընդ ա՞մ կիպրոս։ Եւ ելեալ 'ի կիպրոսէ՝ հասաք 'ի պերգէ պամփիւլեայ. և անդ ևս մ՛նացի իբրև զամիսս երկու. կամեցեալ յարևմտեան կողմանս երթալ (յետ դառնալոյ յեէ՛մ), և ոչ թողացոյց ինձ հոգին ն՞բ։ Եւ դարձ արարեալ վերստին՝ խնդրէի զառաքեալսն. իմացեալ՝ թէ յանտիոք են, չոքայ առ ն՞ս. և գտի զպօղոս՝ խոնջ յաշխատութ՞է և 'ի ճանապարհորդութ՞է յանտիոք։ Իսկ բառնաբաս աղաչէր մտանել ն՞ց 'ի կիպրոս և ձմերել. և ապա երթալ յեէ՛մ 'ի տօնին. և բազում հակառակութ՞ի եղև 'ի մէջ ն՞ց։ Բառնաբաս աղաչէր, զի և ես զհետ երթայց ն՞ց՝ յաղագս 'ի սկզբանէ պաշտօնեայ լինելոյ իմ ն՞ց, և սպաս տանելոյ ն՞ց ը՞ ա՞մ կիպրոս, մինչև գնացաք 'ի պերգէ պամփիւլեայ. և անդ մ՛նացի ոչ սակաւ ժամանակս։ Իսկ պօղոս ընդդէմ կայր բառնաբայ, և ասէր. չէ՛ մարթ դմա ընդ մեզ գալ։ Եւ որ անդ եղ-

բարքն էին՝ ասէին՝, թէ արժան է և ինձ
դալ ը՞ն՝ վ՞ս ուխտ դնելոյ իմոյ (զղջմամբ)
հետևօղ լինելոյ ն՞ց ցվախճան։ Մ՝ինչև ա-
սել պօղոսի (ցբառնաբաս)։ եթէ կամիս
առնուլ զյովհաննէս՝ որ և մարկոս՝ ը՞ քեզ,
երթիջիր յայլ ճանապարհ։ զի ոչ գայցես
(կմ ոչ գայցէ դա) ը՞ մեզ։ Իսկ բառնաբաս
զմտաւ ածեալ՝ ասէ։ զայն՝ որ միանգամ ծա-
ռայեացն մեզ, ո՛չ 'ի բաց դարձուցանէ շը-
նորհքն ա՞յ։ արդ եթէ և այս ախորժելի է
քեզ հա՛յր պօղէ, առեալ զնա երթայց։ Եւ
նա ասէ։ ե՛րթ շնորհօքն ա՞յ, և մեք հոգւովն
ս՞բվ॥։

Յայս վայր են բանք յովհաննու մարկոսի
զանձնէ։ իսկ զմնացու՛ածս պատմու՞են մին-
չև 'ի կատարումն ս՞բյն բառնաբայ՝ եդաք 'ի
վարս ն՞ր։ Արդ՝ զայս ա՞մ է իմանալ և 'ի բա-
նից ս՞բյն զուկասու 'ի գործս առաքելոց։ և
չէ՛ ինչ՝ եթէ մարկոս, որ ոչ բարւոք արար՝
զի մեկնեցաւ զառաջինն յառաքելոց, որ՞պս
և յետ դառնալոյ պատճառ եղև գժտութ՞ե
ն՞ց, հնարի արդարացուցանել ը՞ս կարի զանձն,
և ս առաւել զբառնաբաս։ զի թէև մարկոսի
աւետարանչի լինէր այս գրու՛ած, չև էր
յայնժամ առե՞լ զշնորհս սրբազան գրչի։ Ո՞պ
և ը՞ պօղոս չկարէ ոք գայթակղիլ վ՞ս ը՞դէմ
դառնալոյ մեծին բառնաբայ։ զի անաչա-
ռութ՞ի ն՞ր արդարացեալ է յա՞մի պարծանօք։
ը՞ս որում և ինքնին պատմէ զ ը՞դէմ դառնալն
իւր կեփայի յանտիոք, և մեղադիր լինելով
մարդկային ակնածու՞ե՝ ը՞ նովին մեղադրա-
նօք

նօք արկանէ դարձեալ զբառնաբաս. մինչև բառնաբաս անդամ խոնարհեցաւ ասէ 'ի նց կեղծաւորութիւն. և յայտ է թէ սոքիմբք ո՛չ պակասեցաւ 'ի սիրոյ պետրոսի և բառնաբայ, այլ առաւել հաստատեցաւ։ Օ այս ամ յառաջ բերաք 'ի ցուցանել, թէ չի՛ք ինչ աւանդ զյովհաննէ մարկոսէ, որ ոչն 'ի դէպ գայցէ մարկոսի աւետարանչի. վ՛ոյ և չէ՛ դիւրին, և չի՛ք իսկ հարկ որոշել զմին 'ի միւսմէն։

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Շիղայի (և) Սիղուանոսի։

Հ. յունիս. 26։ Յ. յուլիս. 30։ Լ. յուլ. 13։ Բոլլանդեանն սոլլերիոս 'ի 4 հատ. յուլ. էջ. 476=479։

ԵՐԿՈՒ ԱՅՍ ԱՆՈՒԱՆՔ ո՛չ այնչափ զանազանին 'ի միմեանց, որչափ նոյնանան ըստ ստոյդ տեսութ՛ե. բայց քանզի 'ի գործս առաքելոց շիղա դրի 'ի ՚ոբյն ղուկայ միշտ, և 'ի թուղթս պօղոսի և պետրոսի սիղուանոս անուանի միշտ, աստի եղև ոմանց զանազան կարծել զերկոսեանն՝ ոպ այլևայլ

աշակերտաս՝ի Թուէն եօթանասանից : Ընտանի
չիղա , որ ըստ յունաց սիլաս , և միւս անուանն՝
որ՝ի մեզ գրի սիղոնաս կամ սիլվանոս և
կամ սիղեանոս , ըստ յունաց սիլուանոս , ան-
խարիր հանգիտանան ըստ հերոնիմոսի ըստ եբրա-
յական ձայնիս զալտաի , որ Թարգմանի աստ-
ուած . զոր երևելին հռոմէացիք առ նովին
կամ չիղայիւն վերածեալ՝ի լատին բառնչա-
նական . և ոմն Թէ ծագեալ էր՝ի ձայնէս
սիլուան , որ է անտառ , ստէպ ուրեցան կոչել սիլ-
ուանաս , որ է անտառային , ոչինչ ընդհատ
յանուանէս սիլուէստրէր՝ որ է՝ի մեզ սեղ-
բեստրոս : Այլ և կարծիք ոմանց, Թէ նոյն
ինքն չիղա է և նոտարն պօղոսի՝ի Թուղթն
հռոմէացւոց առերտոս կոչմամբ . զի որպէս
առ հռոմէացիս դէօդէոս Թարգմանի ե-
ղեալ , նոյնպէս և առ եբրայեցիս՝ ղէվիդ : Ա-
րդ զայս ամ Թողեալ ըստ անտուղդութիւն՝ քաղե-
ցուք զբանս նը գրոց , որ ըստ անուանմբ չիղայի
կամ սիղոնեան :

Ե Իղա նը առաքեալն՝ ոմն զմի՝ի գլխաւոր
աշակերտաց դոմնիկէ չիղի՝ի գործս առա-
քելոց . գլ . ժե = ժէ : Իբր զի առաքեալքն՝ի
դիմաց ժողովոյ իրեանց առաքեցին յան-
տիոք ըստ պօղոսի և ընդ բառնաբայ զչիղա և
զյուդա բարսաբաս՝ ոմն արս գլխաւորս՝ի խա-
զալեր զվիճն , որ ծագեալ էր անդ վասն
Թլփատուե . վասն և՝ի ժողովականն նամակի
իրեանց կոչեն զնա արս ընտրեալս : Որով
հասին նը յանտիոք , առ դիմն , յուդա և
չիղա՝ զի և նոքա մարգարէք էին , բանիւք բազ-
մօք

մօք մխիթարեցին զեղբարս և հաստատեցին.
և՚ի դառնալ յուդայի և այլոց ոմանց յեէմ,
հաճոյ Թուեցաւ շիղայի մնալ անդէն յան-
տիոք. զոր և ընտրեալ պօղոսի իւր գործա-
կից՚՚ի ճեկնել քառնաբայ ըՀ մարկոսի՚ի կիպ-
րոս, շրջեցաւ նոսքաւ հանդերձ՚ի կողմանս
ասորւոց և կիլիկեցւոց. և եկեՀ՚ի լիւստրա՝
էառ ըՀ իւր նաև զտիմոթէոս. ապա շրջեալ
ըՀ փռիւգիա և ընդ կողմանս գաղատացւոց՝
դարձան՚ի տրուադա. և անտի եկին՚ի մա-
կեդոնիա՝ ըՀ իւրեանս ունելով և զպատմօղ
բանիցս ղղուկաս աւետարանիչ։

Ընդ՚ի փիլիպպուս կողմանիա՝ ոյր՚ի գաղթա-
կան քաղաք, որ ունէր զազատուԹիՀ հռոմ-
մայեցւոց, դադարեցին աւուրս ինչ, և ա-
զան՚ի տուն հաւատացեալ կնոջ մոյ՝ որ
կոչիւր լիդիա ծիրանավաճառ՚ի Թիւատիր
քաղաքէ. և՚ի բժշկել պօղոսի զայսահալ
աղախին ոմն, բարկացան տեառջ նէ՝ որոց
շահ էր մոլեգնուԹիւն նէ. և առեալ զպօղոս և
զչիղա՝ ձգեցին՚ի հրապարակ առ իշխանան.
և՚ի լինել ամբոխի՝ զօրագլուխքն հրամայե-
ցին գան հարկանել զառաքեալսն. և բա-
զում վէրս եդեալ՚ի վէր նց՝ արկին՚ի բանտ.
և պատուիրեցին բանտապետին զգուշուԹիՀ
պահել զնս. վայ և նա էարկ զնս՚ի ներքին
բանտ, և պնդեաց զոտս նց՚ի կոճեղս։

Եւ՚ի մէջ գիշերոյն պօղոս և չիղա կային
յաղօԹս և օրհնէին զԱստ, և ունկն դնէին
նց կալանաւորքն. և եղև յանկարծակի շար-
ժումն մեծ՝ մինչև շարժել հիմանց բանտին.

և քացան անդէն դրունքն ամ՛, և ամենեցունց
կապանք լուծան : Ա՛ւ յերկրէ զարթեաւ քան-
տասանն , զահն հարեալ անկաւ առաջի պօ-
ղոսի և ջինջայի , և դարձաւ առ ամ՛ր և մկրտե-
ցաւ՛ ի նոցանէ ամ՛ տամբ իւրով. և արար նոք
սեղան : Ա՛պա ծանուցեալ զօրապետացն և՛
զանմեղութեան առաքելոց, և՛ զհամբերե-
նել ըն ազատութենէ , արձակեցին զնա պատ-
ուով, ասելով զնա երթալ ի քաղաքն ան-
տ իսատակու թէ :

Ա՛ւտ երբ առաքեալքն չկրցեալ ըն ամիխատօլիս
և ընդ ասպողնիա՝ եկին ի թեսաղոնիկ , և
դարձուցին առ ամ՛ զամանա՛ի հրէից , և զբա-
զումս ի հեթանոսաց . և ի լինել անդ նոա
խռովութե՛ն՝ եղբարքն վաղվաղակի զիշերայն
յուղարկեցին զպօղոս և զջինդա՛ ի բերիա ,
այն է վերոյ մակեդոնիոյ . ուր դարձուցին
նո՛ք զայլ ևս բազմութի՛ն հեթանոսաց : Ա՛ւ ի
յարուցանել հրէից եկեալոց ի թեսաղոնիկ ,
կեաց զամբոխն՝ առաքեցին եղբարք զպօղոս
յանթէնս . և ապա ըն պատուիրեալ նո՛ք եկին
անդր նաև ջինդա և տիմոթէոս . և յետոյ
դարձան անդրէն ի թեսաղոնիկ՝ որ է ի մա-
կեդոնիա . և անտի ի կորնթոս մայրաքաղաք
աքայեցւոց , ուր եկեալ էր և պօղոս . և ի
նստիլ պօղոսի ի քաղաքն անդ և ի սահմանա
նե՛ տարի մի և ամիսս վե՛ց՝ զօրձակից էր նո՛ք
և ջինդա :

Ա՛րդ ի նոյն ժամանակս, և ի նոյն ջինդա վե-
րածին լինքնին նաև առաջնո՛ւածք պօղոսի ըն
անուամբ սիղուհանոսի , ի գրել անդ յերկ-

տէրդ Թուղքն առ կոմնէթացիս • ա • 19 • * Աս-
„ դէմ այ յա՛ քա՛, որ՝ի ձեզ մեօք քարոզեցաւ,
„ ինձ և սիղոմանոսիւ և տիմոթէոսիւ ։ Աշ-
և զերկուսեան իսկ Թուղթն առ Թեսաղո-
նիկեցիս՝ յերից անտի դիմայ գոտանեմք դրել
այսպէս • * Պօղոս և սիղոմանոս և տիմո-
„ Թէոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց,
„ յԱստ Հայր մեր և՝ի տէր յա՛ քա ։ Ա-
անձն ջնջայն կամ սիղոմանոսի ակնարկէ և
բանն պետրոսի գրե՛ի Հռովմայ առ արևե-
լեայս • * Ա-ձեռն սիղոմանոսի հաւատարիմ
„ եղբօր, ոպ կարծեմ՝ փոքր՝ի շատէ գրեցի
„ առ ձեզ՝ մխիթարել, և՝ի վե՛ր տալն վկայ-
„ ել ... ողջոյն տայ ձեզ՝ որ՝ի բաբե՛լոն ընտ-
„ րեալիւց եկեղեցին է, և Մարկոս որդի իմ ։
Ա-րտաքոյ բանից այս գրոց չի՛ք ինչ ասոյիկ
աւանդ զանուանի ջնջայն կամ սիղոմանոսի ։
Ա՛ն ոչք գրեն՝ի պատմութի՛ եօթանասնուն
և երկու աշակերտաց, թէ ջնջա ձեռնադրե-
ցաւ՝ի պօղոսէ նախ կորնթացւոց, կամ կող-
մանցն մակեդոնիոյ • և անդ կատարեցաւ
նահատակութի՛ն՝ի պրնապուս քաղաքի ։ Ա-
և ըստ անուանէ սիղոմանոսի երկրորդէն, թէ
ձեռնադրե՛ն՝ի ցեյն պետրոսէ կամ՝ի պօղոսէ
յետսագոյն Թեսաղոնիկեցւոյ՝ անդ կատա-
րեցաւ • որ է պէտպէս իմաստասիրե՛ն՝ի նա-
խադրեա՛լ բանից անտի գրոց ։

պարգեւ մասին՝ի սերգիոսէ հռովմայ հայ-
ոց յարևմտեան, յամի ՌՃԹ 691, ընդհատեա՛լ՝ի նա-

քապետ, Հանդիսիւ մեծաւ բերեալ դնեց յաթոռանիստ եկեղեցի տերունական ՚ի Զմիւռնիա. ուր և տեւեաց ասեն պատիւ նոր. Նշխարացս ցամ՚ռեն 1553 ։ յորում ժամանակի կայսրն կարոլոս հինգերորդ հաւատ զգայն քաղաք և հիմնայատակ ապար ։ և ոչ միայց այլ յիշատակ, քայց միայն արձանագիր այսպիսի ։ մտռհնայիք ջնջեցան ։ (1)

XXXX

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Սրբոյն Դիոնեսիոսի արիսպագացւոյ ։

Հ. հոկտ. 4 ։ Յ. հոկտ. 3 ։ Լ. հոկտ. 9 ։ Ճա-
ռընտ. Ա. մխէ = մծգ̄. և Ե. շլթ = շծբ̄ ։
Սուրիոս 'ի մետաֆրաստիսէ և յայլոց 'ի հատ. ե̄. երես.
711 = 744 ։ Հալլոյէս և այլք 'ի գործս դիոնես.
հատ. բ̄. 1 = 474 ։ Միքայել սիւնկեղ ։ Մեթո-
դիոս ։ Ընաստաս գրապետ ։ Շոճիտաս ։ Նիկեֆո-
րոս ։ Հիլդոճինոս ։ Հինկմարոս. ԼԹ ։ (1)

ԴԼՈՒԽ ԱՌԱՔԵԼԱ-
կան հարց, և դասապետ ա̄ծա-
բան վ̄դպաց եկեղեցւոյ՝ մեծն
Դիոնեսիոս աշակերտ պօղոսի
առաքելոյն՝ արիսպագացի կոչի կմ արիոս-
պագացի, քանզի մի էր 'ի դատաւորաց ա-
թենացւոց՝ որք նստէին 'ի մեհենի դից իբրև
'ի տուն ատենի արտաքոյ քաղաքին աթե-
նայ, 'ի մօտակաց աւանն՝ ուր կայր հոյա-
կապ տաճար և բագին չա̄յն պատերազմաց՝
արեսի. յորմէ և տեղին կոչէր 'ի լեզու ատ-
տիկեցւոց ա՛րիոս բա՛ղոս, ֆ̄ արեսի գիւղ կամ
բլուր. որ համարէ̄ էր առ աթենացիս տե-
ղի դատաստանի երկոտասան դից. և անդ
նստէր գլխաւորն դատաւորաց աթենացւոց,

որք

որք էին երբեմն թ՝ուՀով ինն, և ապա եղեն յիսուն և մի. կամ յետ քննելոյ ինունց զդատաստան արեան՝ ապա յանդիման յիսուն և մի իշխանաց դատապարտէին զմեղանչակոնն. և այն դատաստան համարեալ էր անվրէպ և անհրաժեշտ։ Ասի ևս, թէ դատաւորք արիսպագին՝ի մ թան գիշերի առնէին զդատաստան. զի մի՛ հայեսցին՝ի խօսողս, այլ՝ի խօսեցեալ բանս։

Եւ էին դատաւորքս այս՝ արք ընտրեալք՝ի մեծամեծաց քաղաքին, իբրև առաւել առաքինիք և իմաստունք. ոպ̄ և աթէնք ողջոյն՝ քաղաք իմաստասիրուե̄ Ճանաչիւր, և մայր իմաստութե̄։ Եւ քանզի սեպհական էր անունդ արիսպագացի՝ դատաւորոցս այսոցի՛կ, և մանաւանդ գլխաւորի ն̄ց, նմին իրի և դիոնեսիոս կա՛մ մի էր՝ի գլխաւորաց, և կամ գլուխ այնց դատաւորաց։ (2)

Արդ՝ ը̄ պատմելոյ ս̄բյն ղուկասու՝ի գործս առաքելոց, յորժամ ս̄բն պօղոս քարոզեաց յաթէնս և յարիսպագին՝ լի հոգւով ս̄բ̄վ, հանդերձ գիտնաւոր բանիւք՝ որովք եցոյց զանձն տեղեակ և Ճարտարացն արտաքնոց՝ի պէտս նորասէր լսելեաց աթենացւոց, ոմանք արք անկեալք՝ի նա՝ հաւատացին. ը̄ որս էր և դիոնեսիոս արիսպագացի, և կին մի (այն է ը̄ կարծեաց ոսկեբերանի և ամբրոսիոսի՝ կին նորին դիոնեսիոսի) անուն դամարիս, և այլք ը̄ ն̄ս, ս̄ ընտանիք և ծառայք ն̄ց։

Այսչափ և եթ յիշատակութի̄ է՝ի ս̄բ գիրս

վ̄ս

վ՞ս դիոնեսիոսի. իսկ զմնացեալ աւանդս յարտաքին պատմութ՞ց՝ բազմօրինակ հաւաքեցին հին և նոր մատենագիրք՝ արք անու՛անիք, ի՛ւիք ի՛ւիք միաբանք, և այլով մասամբ անմիաբանք. այլ ամենեքին իսկ անծանօթ եղեն բուն աղբերն, ՝ր հին պատմութ՞ե գրելոյ 'ի բերանոյ նորուն դիոնեսիոսի մինչև 'ի դարձ իւր. որ գտանի 'ի Ճառընտիրս մեր թարգմանեալ նախ քան զաւուրս վկայասիրի 'ի յովհաննէ բժշկէ 'ի թու՛ին հայոց յ՞ծը, կամ յ՞ի թ. այն է ամ ՝տն 869, կամ 880. զոր արժան է քաղել մեզ աստանօր իբրև աւանդ համաձայն սրբազան և արտաքին պատմութ՞եց, և ապա զլրումն վարուցն կարգել համեմատու՞բ բանից այլևայլ վկայագրաց։

Արդ պատմութ՞ի Ճառընտրաց դիոնեսեան՝ ունի այսպէս։ (3)

Դիոնեսիոս արիսպագացի՝ որդի էր սոկրատայ գլխաւորի և փառաւորի աթենացւոց, յորովայնէ մօր իւրոյ ձօնեալ 'ի ծնողացն 'ի լինել ՝ը Ժմկի զոհ իշխանին դի՛ւաց, այս է դիոսի կամ արամազդայ դիցահայր կոչեցելոյ. վ՞ոյ իբրև եղև եօթնամեայ, մատուցին զնա ծնօղք ն՞ր 'ի տաճար անդր իշխանի ՝ածոց՝ կատարել զուխտ իւրեանց զենմամբ ն՞ր։ Իսկ քՀնայք ՝ր քուրմք արամազդայ իբրև տեսին զվայելչութ՞ի գեղոյ մանկանն, ողորմեցան նմա, և ասեն ցծնօղս ն՞ր. լաւագոյն է ձեզ՝ և առաւել հաճոյ դից, զի լինիցի մանուկդ այդ պաշտօնեայ ն՞ց՝ քան զոհ. վ՞ոյ թողցուք զդա կենդանի, և պաշտեսցէ զ՝ածսն զ՞ամ

ժա-

ժամանակս իւր. և ծնօղք նր ուրախ եղեն յոյժ, և թողին զնա մտադիւր 'ի տաճար կռոցն:

Իսկ քուրմքն այն փոյթ կալան վաղվաղակի կրթել զնա յուսումն, և պահէին զնա քընքշանօք վս պատուականութ և մեծութ ծնողացն: Եւ յետ աւուրց ինչ եկն տօն արամազդայ իշխանի ա̄ծոցն. և եկն գլխաւորն արիսպագին 'ի տաճար անդր գնդաւ իւրով. և յորժամ ետես զդիոնեսիոս անդ, ասէ. ո՞ ես մանուկ դու, և կամ ուստի՞: Եւ իբրև լուաւ 'ի նմանէ զանուն հօրն և զնուիրումն 'ի դիցն պաշտօն, ուրախացաւ, և հրամայեաց քրմաց և իմաստասիրաց առաւել խնամով հասուցանել զնա 'ի կատարումն ա̄մ իմաստասիրութ:

Յայնժամ էառ զնա դիոկրատէս գլխաւորն իմաստասիրաց, (որ թերևս յետոյ հաւատաց, և կոչեցաւ յռեթէոս.) և ա̄մ յօժարութ ը̄ սրտի մարզեաց զնա յա̄մ գիտութիս. մինչև եհաս պատանին յարբունս հասակի, և քաջ գտաւ 'ի հմտութի աստեղագիտութ ը̄ ա̄մ հանգամանաց՝ որոց տեղեակք էին իմաստնագոյնքն 'ի մէջ աթենացւոց. միանգամայն և խելամուտ եղև մասնաւորաբար ա̄մ յուզմանց փիլիսոփայից:

Իբրև եղև դիոնեսիոս այր կատարել, յայնմ հետէ հաւանութ ը̄ ամենեցուն ընտրեցաւ նստիլ ընդ դատաւորսն, և առնել դատաստան, և լինել հրամանատու: Եւ յաւուրսն յայնոսիկ նորոգեցաւ դատաստանոցն աթենայ,

նայ, այն է ատեանն արիսպագին. և 'ի ժո-
ղովիլ անդ բազմութեան՝ գլխաւորն 'ի դատա-
ւորս ծանոյց աւագաց և իմաստնոց և քրմաց
աթենացւոց, իբրև 'ի հրամանէ բագնին՝ որ
կանգնեալ էր 'ի սահմանս աթենայ յանուն
անծանօթի ա̅յ, թէ ելէք և ասացէք ա̅մ ժո-
ղովրդեանդ, զիա՛րդ հրամայէ ձեզ իշխանն
տիեզերաց և ամենակալն իշխանութեաց, որ
ունի իշխանութիւն 'ի վ̅ր̅ իշխանութեաց ծիս-
ասէ. ընտրեցէք ինձ դատաւորս՝ որ առնեն
դատաստան արդար, և առաջնորդ լիցի ն̅ց̅
դիոնեսիոս որդի սոկրատայ. որ ա̅ղ̅ս զի եղիցի
սա մխիթարիչ քահանայիցն, և այլ ևս մի
պակասեսցէ ն̅ց̅ յա̅մէ և ոչինչ։ Եւ յորժամ
լու՛ան զայս աթենացիքն, ուրախ եղեն յու-
րախութիւն մեծ, և արարին՝ ո̅ղ̅ հրամայեցաւ ն̅ց̅։
Եւ յետ ոչ բազում ժամանակաց հասանէր
օր մեծ հեթանոսաց 'ի մեծապայծառ քա-
ղաքն քրմաց 'ի հեղիուպօլիս եգիպտացւոց,
որ է արեգ քաղաք, կամ արեգական քաղաք,
բալբաք կոչեցեալ, մերձ 'ի բիւրիտոն և 'ի
դամասկոս. ուր էր մեհեան կռոց նշանաւոր
երեքքարեան. և ժողովեցան 'ի քաղաք անդր
վ̅ս̅ տօնի աւուրն անթիւ՛ բազմութիւն յա̅մ
կողմանց։ Եւ յամբոխէ անտի կուտակելոյ՝
մի ոմն 'ի քրմացն յեցաւ 'ի կուռսն, որում ա-
նուն էր սերապիս. և անկաւ կուռքն, և
փշրեցաւ ուլն ն̅ր̅. և եղև շփոթ մեծ 'ի քա-
ղաքին, և բազում չարիք գործեցան վ̅ս̅ այնր
պատճառի, և կորուստ բազմաց։ Իսկ գլխա-
ւորք տեղւոյն խորհեցան սպանանել ըզ-

քուրմն իբրև չարեացապարտ . զի երկեան
լինել նց̄ պատուհաս յա̄ծոցն . և կոչէին զա-
նուն քրմին ա̄ծասպան . բայց զի մի՛ անխոր-
հրդաբար ինչ գործեսցեն , և չար ևս լինի-
ցի , կալան եդին զնա յարգելանի . և ին-
քեանք գրեցին առ քուրմս իշխանութե̄ն ա-
թենացւոց , և պատմեցին նց̄ զա̄մ եղեալսն .
զի նք̄ թերևս տացեն խորհուրդ լաւագոյն ,
կմ ընկալցին ինչ յայտնութի̄ ։ (4)

Յայնժամ քրմապետն աթենացւոց արար
զենումն զոհից , և կարդաց առ իշխանն դի-
ւ̄աց , և եհան պատգամ հրամանի , զի դիո-
նեսիոս առաքեսցի յարեգ քաղաք՝ առնել ի-
րաւունս , և ելս գտանել շփոթութե̄ն ։ Եւ
դիոնեսիոս իբրև զծառայ հնազանդ և ան-
ձանձիր անկաւ յուղի , տարեալ̄ ը̄ իւր և զու-
շիմ աշակերտն իւր ասղիփոս (կամ ասկղե-
պիոս) անուն՝ հանդերձ այլ ևս արամբք ի-
մաստնովք ։ Եւ յորժամ պատմեցաւ ժողո-
վրդեան արեգ քաղաքին գալուստ դիոնե-
սիոսի մեծանուն դատաւորին արիսպագեայ ,
զարդարեցին զքաղաքն ա̄մ զարդուք , և ե-
լին ամենեքեան 'ի հանդիպումն նմա . և էր
ժողովեալ բազմութի̄ յոյժ 'ի տեսանել զնա ,
և լսել զդատաստան նր̄ . և այս եղև 'ի նա-
խախնամութե̄ն ա̄յ 'ի պէտս առաջիկայ ի-
րացն մեծուե̄ . զի ամենեքին 'ի միտ առցեն
զեղեալսն յաւուր յայնմիկ ։ (5)

Քանզի յորժամ եմուտ դիոնեսիոս 'ի քա-
ղաքն՝ ետ դնել սելին ոսկի (այս է աթոռ ,
կմ լուսնաձև գահ) , և նստաւ 'ի վր̄ նր̄ 'ի

մէջ քաղաքին՝ ի տեղւոջ ասպարիզախուռճլայ-
ցին. և ոչ ումեք՝ ի քրմաց կամ յիշխանաց հրա-
մայեաց նստել, այլ ամենեքին յոտն կային
բազմութիւն ժողովրդեան՝՝ ի լսել բանից նո՛ր,
թէ զինչ իրաւունս արասցէ քահանային այն-
միկ սպանողին աստուծոյն իւրեանց. իսկ օրն
այն էր ուրբաթ, և ժամն էր իբրև վեց-
տրդ. քանզի և արեգականն՝ ի մէջօրեայ ժամ
հասեալ էր։

Յայնժամ զարմանալի ինչ շարժեցաւ երկիր
ահաւոր ձայնիւ, և անկան կուռքն և փշրե-
ցան. և խաւարեցաւ արեգականն, և մթա-
ցաւ լուսին. և ամ աստեղք երևեցան
և աներևոյթ եղեն (6). և թանձրութիւն խա-
ւարին և մրկին սփռեցաւ՝ ի վեր մարդկանն.
մինչդեռ ոչ ոք՝ ինոցանէ կարէր տեսանել զըն-
կեր իւր. և ամենեքեան միապէս անկան՝ ի
վեր երեսաց իւրեանց. լերինք սարսէին, և
վէմք պատառէին, և տաճարք բարձունք ան-
կանէին. և ահաւոր ձայն դառն կոծոյ և
աշխարհանայ լսել լինէր յամենեցունց։
Եւ եկաց խաւարն այն՝ ի վեց ժամէն մինչև
ցինն ժամն. և ապա դարձեալ պայծառացաւ
լոյսն. և հայեցեալ տեսանէին մարդիկն զե-
րեսս միմեանց իբրև զգոյն մեռելոյ։ Յայն-
ժամ քահանայքն և իշխանք ժողովրդեանն
արեգ քաղաքի անկան առաջի դիոնեսիոսի,
և հայցէին՝ ի նմանէ իբրև՝ ի ծայրագոյն ի-
մաստնոյ՝ պատմել նոքա զպատճառ գործոյն
այնորիկ ահաւորի, որպիսի՛ ինչ էր լեալ՝ ի
սկզբանէ հետէ։ Իսկ դիոնեսիոս՝ ի մէջ ա-

ռեալ զաստեղաբաշխական զննութիւն ը ա-
շակերտին իւրում՝ քննէր զդիրս լուսաւո-
րաց ը համեմատութեան թուոց տարւոյ և ա-
ւուր, և հետազօտէր զշրջանս ժամանակաց
'ի վր կազմակերտեալ մեքենայից երկնի և
երկրի (իմա՛ երկնագնտոյ և երկրագնտոյ ը
յօրինուածոյ աստեղադիտաց ժամանակին).
և ոչ գտանէր՝ թէ յայնմ ամի լինիցի խա-
ւարումն ինչ ուրեք. մանաւանդ հայեցեալ
տեսանէր, զի լուսինն լի էր, և անմարթ էր
յայնժամ հանդիպիլ խաւարման արեգա-
կան:

Եւ իբրև ամիւ հասու եղև, թէ չէ՛ գործն
այն ը բնաւորական կարգի, ահ մեծ կալաւ
զնա, և լցաւ զարմանալեօք: Եւ ոպ գրի 'ի
թուղթն դիոնեսիոսի առ նբն պօղիկարպոս,
յայնժամ ը նմա էր յարեգ քաղաքի և ըն-
կեր իւր ապողոփանէս իմաստասէրն. և 'ի
միասին տեսանէին և քննէին զամ, և սքան-
չանային: Յայնժամ ասէ ապողոփանէս. այ-
սոքիկ ո՛վ գեղեցիկդ դիոնեսիէ՝ ածայնոցն
իրաց հատուցմունք են (կամ այլափոխութիք).
զի կամ գործ բնական կարգաւորութեան հա-
մարեցաւ, և կամ պատիժ մեղաց մարդկան:
Իսկ դիոնեսիոս 'ի բազում վարանմանց ըն-
կղմեալ կայր յափշուի. և տեսիլ իմն սքան-
չելի թուէր նմա տեսանել, և ազդումն ա-
հաւոր լինէր յոգւոջ նր. մինչև իբրև 'ի քնոյ
ըոստուցեալ՝ արձակեաց զձեռս, և պատա-
ռեաց զհանդերձս իւր առաջի բազմութեան:
Եւ 'ի հարցանել զնա քրմաց և իշխանաց,

ետ

ետ պ֊ինի և ասէ . գիտութի՛ լիցի ձեզ , զի մեծ և ահաւոր գործ եղև այսօր 'ի վ֊ր երկրի . զի ա֊ծն այն ծածկեալն և անծանօթն իջեալ յերկնից յերկիր ուրեք՝ զգեցեալ է մարմին ՆԲ մարդկա՛պ . և ահաւասիկ յայսմ աւուր կալան զնա մարդիկ ոմանք անբարիք , և զփայտէ կախեցին յՆի ուրեմն . և կացէ՛ յանդիման նորա՝ բասրէին զնա և թշնամանէին անգիտութ՛ . և շարժումնս այս ահաւոր և խաւարս այս յերկիւղէն յայնմանէ եղև 'ի վ֊ր երկրի ։

Այս բան է դիոնեսիոսի գրեալ աստանօր 'ի վարս ն֊ր իբրև 'ի բերանոյ իւրմէ . զոր նովին մտօք երկրորդէ իբրև յաւանդութ՛է միքայէլ սիւնգեղոս հին մատենագիր յոյն՝ օրինակ զայս ։ * Յերեսաց նորահրաշ իրաց յապուշ կրթեալ (դիոնեսիոսի) , և զմարդկայնովն գեր 'ի վերոյ եղեալ զգիտութ՛ , զմտաւ ածէր զեղեալսն , և ասէր . անծանօթն՝ 'ի մարմնի չարչարի՝ ա֊ծ . ոյր վ֊ս տիեզերք խաւարեցան և շարժեցան ‖ ։ Իսկ այլք 'ի յունաց ը֊ շու՛իտասայ գրեն , թէ այսպէս ասաց դիոնեսիոս . * կա՛մ ա֊ծ չարչարի , և կմ չարչարեցելոյն չարչարակցի ‖ ։ Ո֊պ և լատինք ը֊ հռովմէական ժամագրքի . * կա՛մ ա֊ծն բնութ՛ չարչարի , կմ Ծիս կերտու՛ած քայքայեսցի ‖ ։ Եւ յայսմաւուրք հայոց . * անչարչարելի բնութի՛ն ա֊ծ մարդացեալ՝ չարչարի յանծանօթս , և անչարչարելի մնայ ‖ . որք առհասարակ զնոյն միտս ընծայեցուցանեն ։ (7)

Արդ 'ի լինել այսր ամի՝ ասէ պատմութիւն, դիոնեսիոս նոյնժամայն ետ բերել քարտէս, և գրեաց զօրն զայն ուրբաթ. և զժամն զայն աւուր, և զամիսն և զտարին. և թէ քանի՛ էր լուսինն։ Եւ ինքն այնուհետև դիւրաւ վճարեալ զխռովութիւն քաղաքացւոցն՝ իբրև ստուերանման գուշակութիւն մեծի գործոյն եղելոյ յայնժամ ըստ տիեզերս, դարձաւ 'ի քաղաքն իւր յաթէնս. և պահեալ ունէր զգիրն զայն 'ի սքանչելիս և 'ի յիշատակ. զի յետ վախճանի իմոյ ասէ յուզեսցէ ոք թերևս, և գտցէ զի՛նչ եղևն. քանզի և յաթենացւոց անտի՝ որք 'ի նմին աւուր զնոյն խաւարումն տեսին տիեզերական, ոչինչ մարթացաւ ըստուգել։

Իսկ զկնի երկոտասան ամաց (8) եկն յաթէնս պօղոս՝ տն մերոյ յի՛ քի՛ առաքեալն. և տեսեալ զառ 'ի ներքոյ և զարտաքոյ քաղաքին լի կռօք, սկսաւ քարոզել նց 'ի բաց կալ 'ի սնոտի պաշտամանց, և հաւատալ յած ճշմարիտ, և յորդի նր 'ի քս յս։ Եւ 'ի պատմել առաքելոյն վս իջման բանին և յաղագս մարդանալոյ նր, և սքանչելեացն նր, և ապա վս չարչարանաց և մահուան և յարութեան և վերանալոյ առ հայր իւր յերկինս, ծաղր առնէին զնա բազումք յաթենացւոց իբրև զայր օտարական և օտարախօս. մինչև եհաս բանն 'ի լսելիս դիոնեսիոսի արիսպագացւոյ. և զարթեաւ սիրտ նր, թէ ահա արդ լուծանի տարակոյս խորհրդոց իմոց։

Վոյ 'ի վաղիւ անդր 'ի ծագել արեգական՝

ըս

ը̄ իշխանութե̄ իւրում ետ քարոզ կարդալ 'ի
քաղաքին, և ասել. Դիոնեսիոս իմաստնոց
և գլխաւորաց դատաւորն հրամայէ ձեզ, զի
ամենեքեան ժողովեսջիք 'ի տեղի դատաս-
տանին յարիսպագոսն. և որ ոչ գայցէ 'ի տե-
ղին յայն, արժանի պատժոց լիցի։ Յայն-
ժամ ժողովեցաւ 'ի տեղի անդր բազմութի̄
քաղաքին. և եկն նստաւ դիոնեսիոս պատ-
ո՛ւով մեծաւ յաթոռ իւր, և հրամայեաց քր-
մաց և իմաստնոց նստել. ապա ետ կոչել զա-
ռաքեալն պօղոս, և հրաման ետ նմա խօսել
'ի լուր ամենեցուն զբան քարոզութե̄ իւրոյ։
Եւ կացեալ 'ի մէջ արիսպագին ա̄ծազգեաց
անձն և անօթն ընտրութե̄ և հոգւոյն ս̄բյ
բնակարանն՝ սկսաւ աւետարանել զբանն կե-
նաց. և պաշտօնասէրս կոչելով զաթենացիս՝
յինքն ձգեաց զլսելիս ամենեցուն. այլ իբրև
յայտ արար նց̄, թէ պաշտամունք նոցա չեն
ուղիղ, այլ՝ առաջնորդեն 'ի կորուստ ան-
ձանց, լցան ամենեքեան սրտմտութ̄ մեծաւ.
և եթէ ոչ էր երկիւղն դիոնեսիոսի արգելել̄
զնս̄, նոյնժամայն կամէին քարկոծել զնա և
սպանանել։ Եւ յաւել ասել պօղոս. շրջե-
ցայ ես ը̄ պաշտամունս ձեր, և գտի բագին
մի՝ յորոյ վր̄ գրեալ կայր. * ա̄ծ անծանօթ,
,, անհասանելի, անպատմելի, անպարագրե-
,, լի ‖ (9). զայն ա̄ծն 'ի սկզբանէ զծածկել̄ն
և զանսահմանելին, յաղագս որոյ ասացին
իմաստունքն ձեր՝ թէ նորա ազգ եմք, զնա
քարոզեմ ես և աւետարանեմ ձեզ. և պաշ-
տեմ զա̄ծն զայն զծածկեալն և զհզօրն։ Եւ

սկսաւ պատմել զտնօրէնութիւն և զսքանչելիս
տն մերոյ, և զհանդէս չարչարանաց և խա-
չելութեան նր, և զխաւարումն լուսաւորաց 'ի
ժամուն յայնմիկ, և զշարժումն երկրի։
Եւ իբրև լուաւ դիոնեսիոս 'ի պօղոսէ զօրն
և զժամն՝ յորում եղեն ահագին այն սքան-
չելիք, առաքեաց զաշակերտն իւր զասղիփոս՝
բերել զքարտէսն, զոր գրեաց յարեգ քա-
ղաքի վն ահաւոր անցիցն անցելոց. և հրա-
մայեաց նմա՝ զի ընթերցցի բարձր ձայնիւ 'ի
լուր ամ ժողովրդեանն։ Յայնժամ յայտնի
եղև, զի զնոյն զայն գրեալսն պատմէր պօ-
ղոս, և յայտ առնէր՝ թէ վն կամաւոր խա-
չելութեան արարչին գործեցան այն ամ անցք
'ի մեծի ուրբաթու։
* Եւ նոյնժամայն (ասէ դիոնեսիոս՝ 'ի կար-
գի պատմուես) հաւատացի ես 'ի քն որդին
այ կենդանւոյ. զի նա է ած անծանօթ՝ ծած-
կեալ, անսկիզբն և անհասանելի. և հրա-
մայեցի պօղոսի առաքելոյ, ոպ զի պատրաս-
տեսցէ զմկրտուեն իրս, ոպ հաճոյ երևեսցի.
և յորժամ արար զայս, նոյնժամայն մկրտեաց
զիս և զկինն իմ (այն է դամարիս, որ կոչե-
ցաւն մարիամ), և զայլ բազում ժողովուրդս
յաթենացւոց յարանց և 'ի կանանց։ Իսկ ես
'ի ժամէն յայնմանէ հետևեցայ երանելի ա-
ռաքելոյն պօղոսի, ես և մարիամ կին իմ. և
ոչ մեկնեցաք 'ի նմանէ մինչև յելս նր յծէս
'ի յայսմանէ (կամ յծէն ելլադայ). և նա
իւրովք ձեռօքն օրհնեաց զիս եպս քաղաքին
աթենացւոց։ Եւ արդ եղբարք իմ սիրելիք,
ոչ

ո՛չ եթէ մարդիկ հանին զիս և զերծուցին 'ի պաշտելոյ զդիսն, այլ՝ իմաստուի՞ն ա՞յ ելոյծ զիս ॥։ Յայս վայր ինքնապատում աւանդուի՞ զ՞սբյն դիոնեսիոսէ։

Յոր ակնարկէ և ոսկեբերանին ասելն ('ի ՟ գիրս. յղ. ֆահանայութ՟). * Եւ արիսպագացին այն՝ որ 'ի սնոտիապաշտ քաղաքէ անտի, ո՞չ ապաքէն յատենախօսութ՟է և եթ՝ հետևեցաւ պօղոսի հանդերձ կնաւն ॥։ Եւ ամբրոսիոսի ('ի ԺԳ գիրս. ԹղԹ. ՅԲ). * Դիոնեսիոս արիսպագացի հանդերձ ամուսնաւն իւրով դամարաւ և այլովք բազմօք հաւատաց։ Եւ այնպէս կաճառք գիտնաւորաց և հռետորաց պարզ խօսակցութ՟ աստի և անտի՝ խոստովան եղեն զանձինս 'ի պարտուի՞ մատնեալ, յօրինակ հաւատացելոց ॥։

Բայց քանզի առաքեալք ա՞մ ուրեք հաստատէին զբանն նշանօք՝ որ երթայր զհետ ն՞ց, գրէ և անանուն մատենագիր եկեղեցական պատմուե՞ զառանձին սքանչելիս 'ի դարձին դիոնեսիոսի և որոց ը՞ նմա. զոր և երկրորդէ յայսմաւուրքն ը՞ այսմ օրինակի. 'Ի քարոզելն պօղոսի զանծանօթն ա՞ծ առաջի աթենացւոց, * կացուցին առաջի ն՞ր կոյր մի, զի լուսաւորեսցէ։ Յայնժամ ասաց դիոնեսիոս՝ որ գլխաւորն էր քաղաքին. մի՛ մխեր զձեռն քո 'ի դա, այլ 'ի զա՛տ կաց, և ասա՛, թէ բացի՛ր անու՛ամբն ք՞ի. և թէ բացցի կոյրն, հաւատասցուք 'ի նա՝ զոր դու քարոզես։ Պ՞ինի ետ պօղոս, և ասաց նմա. դո՛ւ ասա՛ զայդ բան, և տե՛ս զզօրուի՞ ա՞յն իմոյ։ Յայնժամ

ասաց դիոնեսիոս բարձր ձայնիւ անձև հաւատով, թէ ով կոյր դու բացիր անուամբն քո̄ի. և առժամայն բացաւ կոյրն. և դիոնեսիոս հաւատաց 'ի քո̄, և այլք 'ի քաղաքէն ը̄ նմա. և ապա եղև դիոնեսիոս քաղաքապետն ե̄պս ‖ ։ (10)

Յայտնի է յա̄ծաբանական գրոց դիոնեսիոսի և այն ա̄մ, զոր յառաջ բերաք 'ի վարս երկոտասան վ̄դպաց, թէ բարեփառ առաջնորդն յռեթէոս՝ որ և հերոթէոս, ո̄պ էր վարժապետ դիոնեսիոսի յարտաքին գիտութի̄ս, նոյնպէս և յետ դարձի նը̄ 'ի հաւատս՝ եղև հրահանգիչ նը̄ 'ի խորուի̄ս ա̄ծային վ̄դպութե̄. զի ինքն յառաջագոյն էր հաւատացել։ Եւ երկոքեանն իսկ յե̄էմ գտան յաւուր փոխման ն̄բ ա̄ծածնի ը̄ այլ առաքեալսն. ո̄պ է տեսանել 'ի տօնի վերափոխման. զորոյ ըզպատմութիւնն գրէ նա ինքն դիոնեսիոս 'ի թուղթս իւր՝ որ առ տիմոթէոս և առ տիտոս, զորս տօնեմք ընդ նմա։ Գրեն և ոմանք յաւանդութե̄, թէ 'ի տեսանել դիոնեսիոսի զառաջինն զա̄ծամայր ն̄բ կոյսն՝ հրաշագեղ տեսլեամբ, լուսազգեաց և պարառեալ 'ի զու՛արթնոց, ասացեալ իցէ. որ̄պ ա̄ծուհի պաշտէի զկոյսդ, թէ ոչ գիտէի զհաւատս աւետարանին։

Լու՛աւ ն̄բն դիոնեսիոս 'ի գրելոյ առ նա ն̄բյն պօղիկարպոսի զմիւռնոյ հայրապետին, զի ապողոփանէս իմաստասէրն բամբասէր զնա վ̄ս դառնալոյ նը̄ 'ի քրիստոնէուի̄, և կոչէր զինքն հայրասպան և հայրենատեաց՝ վասն

թող-

Թուղթ զդեան հայրենիս , և յաղագս ի կիր
արկանելոյ զգիրս հելլենայւոց ընդ եմոնոցին
եակ հելլենայւոց : Ա. ու այս պէնի արար դիւ
նեսիոս . բայց դու ասէ, յուշ արա նմա , զի
ոչ վայրապար եկի՛ ի հաւատս քեզ , այլ ածայ
ին ազդմամբ և աւեղ սքանչելեօք , որովք
պարտ էր և նմին ապողոփանեայ շարժիլ և
գալ ՚ի հաւատս մեր . քանզի ընկեր էս էր և
նա յարեգ քաղաքի , յորժամ եղև խաւա
րումն լուսատուացն ՚ի վեր քան զբնութիւն յա
ւուր խաչելութեանն փրկչին , և յատել յորդո
րել զպօղոսիկարապոս , զի ջանասցի ձգել զա
պողոփանէս ՚ի հաւատս . որ և յաջողեցաւ
եակ տէր . վէյ և դիոնեսիոս գրեաց զկնի
Թուղթ առանձին առ ապողոփանէս իբրև առ
նորոգ հաւատացեալ . ուր յուշ առնէ նմա ,
Թէ ՚ի ժամանակի խաւարմանն՝ զոր տեսաք
յարեգ քաղաքի , ես էի իբրև ամաց քսան և
հնգից . և դու ևս գրեա՛ Թէ իմ հաւատակակից
էիր : Որոյ ապողոփոնեայ աշակերտ եղև
՚ի զմիւռնիա պողեմոն փիլիսոփայ լաւոդի
կեցի . որ աշակերտ դուս արիստիդէս Ճար
տարախօս իմաստասէր հաւատացեալ՚ի քս .
այն՝ որ ետ գիրս պինատուՀուԹե՛ւ քրիս
տոնէից առ կայսրն ադրիանոս :
Գրեաց նաեն դիոնեսիոս՝ բաց ՚ի բազմապա
տիկ Թղթոց , և Ճառս և գիրս ծնդաբանա
կան՝ խորին տեսուԹե՛ , և ազգի ազգի պի
տառնուԹիս . յորոց գբազումս այրեցին և
կորուսին աԹէնացիք , և որք մնացինն՝ ոչ առ
ամենեսին ծառալեցան ՚ի սկզբանէ , այլ յետ

ժա

ժամանակաց. ոպ̄ առ հռովմայեցիս 'ի վախ-
ճան վեցերորդ դարու մեծն գրիգոր պապ յի-
շէ զգիրս ս̄բյն դիոնեսիոսի, և 'ի մեզ ստե-
փաննոս սիւնեցի քերթօղն եբեր զայնս 'ի
հռովմայ 'ի սկզբան ութերորդ դարու. և
յայնմ հետէ հռչակեալ է 'ի գիրս հարց և
վդ̄պաց յա̄մ եկեղեցիս, և մանրախուզիւ
մեկնեալ և հետաքննեալ 'ի հզօր ա̄ծաբա-
նից, և պաշտպանեալ ը̄դէմ ոմանց ոմանց
'ի դիմախօսաց:

Իսկ յաղագս կատարման ս̄բյն դիոնեսիոսի՝
կրկին են կարծիք և աւանդուի̄ք, ը̄ որում
երկբանութի̄ եղև 'ի վաղուց հետէ, եթէ
երկո̄ւ իցեն ս̄բ հայրապետք առաքելա-
նմանք՝ դիոնեսիոս անու̄ամբ, մին աթենացի
կոչեցեալ, և միւսն փարեզացի, եթէ մի և
նոյն ս̄բն դիոնեսիոս արիսպագացի երթեալ
իցէ 'ի փարէզ գաղղիացւոց, և անդ նահա-
տակեալ: Մի միայն դիոնեսիոս ճանաչեն
յայսմաւուրք հայոց, յունաց և հռովմայեց-
ւոց. բայց հայոցն դնէ զնա յաթէնս նահա-
տակեալ հրով. հռովմայեցւոցն 'ի փարէզ
ասէ նահատակեալ սրով. իսկ յունացն՝ յա-
թէնս դնէ, բայց գլխատեալ. և այն այն-
պիսի հանգամանօք՝ որք միաձայնին ը̄ պատ-
մութի̄ փարեզու: Եւ քանզի իւրաքանչիւր
սոցա կան պատճառք հաւանելի, երկպա-
ռակուի̄ կարծեաց կայ մ̄նայ միշտ առ իմաս-
տուն քննօղս: Իսկ մեզ մ̄նայ նշանակել և եթ
զզանազանութի̄ աւանդից:

Արդ յայսմաւուրք մեր ունի այսպէս. * Սբ̄ն
դիո-

դիոնեսիոս արիսպագացին ... (բաց յերից գրոց՝ որ յաղագս հրեշտակաց, և եկեղեցւոյ, և հաւատոց) գրեաց և այլ գիրս. և եդ անդ 'ի գրապահ տեղիսն աթենացւոց։ Եւ հելլենացի կռապաշտքն նախանձեալ ը̄ն՝ բյն, այրեցին զդիոնեսիոս, և զգիրս նորա տասն հատորս. երեք գիրք միայն մնացեալ յա̄ծաշունչ տառից նորա առ հաւատացեալսն 'ի պահեստի. զոր այժմ ունի ն̄բ եկեղեցի ||։ (11)

Եւ դարձեալ երկրորդէ 'ի վախճանի, թէ * եղև դիոնեսիոս քաղաքապետն ե̄պս նոյն քաղաքին աթենայ. և այնպէս քաղաքավարեցաւ և նահատակեցաւ, որ̄պս գրեցաւ ||։ Զայնակցին այսմ ը̄հանրապէս յոլովք յարևմտեան մատենագրաց առ մեօք. յորս լաւնոյոս բազմօք հաստատէ, թէ նաև բանք նախնեաց ո՛չ այլուր ցուցանեն զդիոնեսիոս նահատակեալ, բայց յաթէնս 'ի վիճակի իւրում, և ը̄ն նմին պարզա̄պս ասէ. * 'ի վախճանի տարեալ կրից ծանր տանջանաց՝ վկայու ը̄ կատարեցաւ, և սրբազանեաց զաթէնս արեամբ իւրով ||։ Այլ զհրով կատարումն իբրև աւանդութի̄ ժամագրոց իրիք յունաց 'ի հոկտեմբերի. Կ̄. յիշէ և կալմէթ 'ի մէկն. գործոց. ժէ̄. 34։

Իսկ բասիլեան յայսմաւուրք յունաց այսպէս գրէ զն̄բյն. * Զարախօսեալ 'ի կռապաշտից առաջի իշխանին աթենացւոց՝ ըմբռնեցաւ հանդերձ երկու աշակերտօք իւրովք. և բազումս տանջեալք՝ նախ ինքն

գլխա-

գլխատեցաւ. և՝ առէ՛ զգլուխն իւր ինքնին ձեռօք իւրովք՝ շրջեցաւ մզոնս երկու. և ոչ վաղագոյն եդ զայն, մինչև հանդիպեցաւ կնոջ քրիստոնէի, և աւանդեաց նմա զայն. յետոյ գլխատեցան և երկոքին աշակերտքն նորա ‖: Ուր քաղաքն միաբանի ը՛ նախագրելոց. բայց կատարումն ակնարկէ յաւանդութիւն արևմտեայց:

Ապա յայսմաւուրք կմ վկայագիրք հռովմայեցւոց գրեն այսպէս. * 'Ի լուտետիա փարիզացւոց կատարումն ՝ոբց վկայիցն, դիոնեսիոսի ե՛պսի արիսպագացւոյ, հռուստիկոսի քահանայի, և ելևթերիոսի սարկաւագի. յորոց դիոնեսիոս՝ 'ի պօղոսէ առաքելոյ մկրտեալ՝ առաջին ե՛պս աթենացւոց ձեռնադրեցաւ. և ապա 'ի հռովմ եկեալ՝ յերանելոյն կղեմայ հռովմայ հայրապետէ առաքեցաւ 'ի գաղղիա վ՛ն քարոզութ՛ե. և հասէ՛ 'ի նախասացեալ քաղաքն (լուտետիա, որ և փարէզ), և զամս քանի մի անդանօր գեղեցիկ 'ի գլուխ տարեալ զգործն՝ որ նմա հաւատացաւ, հուսկ յետոյ 'ի փեսկեննինոսէ դատաւորէ յետ ծանր ծանր և ազգի ազգի տանջանաց ընկալէ՛ զվճիռ գլխատման՝ ընկերօքն հանդերձ, ելից զընթացս նահատակութ՛ե ‖: Այս այն պատմութ՛ի է, զոր հաստատեն և յոյնք 'ի ժամագիրս անդ իւրեանց՝ ը՛ սիմէոնի մետափրաստեսի, ո՛պ և միքայէլ սիւնդեղոս երէց ե՛էմացի, և մեթոդիոս կամ մետրոդորոս. և մեծագոյն մասն լատին մատենագրաց, որոց գլուխ է հիլդ-

ուի-

ուՀինոս աբբայ վանաց սբ̄յն դիոնեսիոսի 'ի գաղղիա յիններորդ դարու. և է ըստ սոցա կարգ և ընթացք վկայաբանութ̄ն սբ̄յն այսպիսի։ (12)

Սբ̄ն դիոնեսիոս արիսպագացի՝ յետ մկրտելոյն 'ի պօղոսէ ընթացակից եղև նորա 'ի քարոզութ̄ն զամս երիս. և ապա դարձ արարեալ 'ի թեսաղոնիկեայ՝ ձեռնադրեցաւ յառաքելոյն ե̄պս աթենացւոց, և լուսաւորեաց զբազումս բանիՀ և գրով, և սքանչելի օրինակաւ վարուց իւրոց, շրջելով առաքելաբար և քարոզելով զաւետարանն մինչև 'ի տրովադա. և ել համբաւ նորա ը̄ ա̄մ տեղիս. զոր ը̄ ազգի և հայրենեաց կոչէին յոնիկոս, ՚ի՚ յոյն, այլ առ մեծի սրբուե̄ն մակարիոս կարդային, ՚ի՚ երանելի։

Ա՝ինչդեռ 'ի լակեդեմոնիա էր, էառ զլուր 'ի հռովմայ՝ թէ գլխաւոր առաքե̄լքն պետրոս և պօղոս արգելեալ են 'ի կապանս հրամանաւ ներոնի. և փութացե̄լ գնալ 'ի տես ն̄ց, մանաւանդ թէ նահատակակից լինել նոցա, դարձ արար յաթէնս. և եդեալ անդ զոմն 'ի տեղի իւր ե̄պս (ը̄ ոմանց զ̄ն̄բն յռեթէոս վ̄դ̄պ իւր), եկն 'ի հռովմ. և եդիտ զառաքեալսն վկայութ̄ն կատարեալ։

Ապա հանդիպեալ ն̄բյն կղեմայ հայրապետի, ը̄ յորդորելոյ նորա՝ առեալ 'ի նմանէ ընկերս և գործակիցս, շրջեցաւ յարևմուտս՝ քարոզել զաւետարանն մինչև 'ի գաղղիա և 'ի գերմանիա (13). և էին ը̄ նմա երկու աշակերտք՝ հռուստիկոս քահանայ, և ելևթերիոս

բիոս սարկաւագ , և երեք այլ ընթացակիցք՝ սատոռնինոս , մարկելղոս , և զուկիանոս . յորոց զսատոռնինոս առաքեաց յակոբիտանիա , զմարկելղոս ՚ի սպանիա , և զղուկիանոս քահանայ զայր առաքինի և հզօր ՚ի քաղաքն բեղոճակայ կղզւոյ : Այլ ինքն հրամայեաց առնել ՚ի հրեշտակ ՚ի՝ եկն երկու աշակերտաց նախ ՚ի քաղաքն արեւլատայ , որ ՚ի մուտս հին գաղղիացւոց . և ապա եկեալ դադաբեաց ՚ի լուսետիա , ՚ի փարեզ , որ եր յայն ժամ քաղաք փոքրիկ . ուր բազում աշխատութիւք՝ նշանօք և զօրութիւք ամբարեաց զվայրենաւմիտս ՚ի հնազանդութիւն հաւատոյ :

Այլ իբրև օր քան զօր բազմանայրն հաւատացեալք , խնդրեաց երանելին դիոնեսիոս ՚ի լեսբիոսէ աղնուական առնել փարիզացւոյ հաւատացեալոյ , զի վաճառեսցէ ինքեան զգաւակ իւր՝ չինել անդ յանբոյիթ տեղւոջ զմկրտարան և զեկեղեցի . և ՚ի կամիլնէ ձրի առ զտեղին՝ ասէ դիոնեսիոս . ՚որ մեր և ՚ձ՛ յ՚ը՛ք՚ որ արարիչն եր ՚ձիս , վ՚ո՛ փրկուէ մերոյ յանձն էառ ծնանիլ ՚ի տեղի մի կալեալ ՚ի վարձու . վ՚ըյ և մեզ չէ արժան ձրի ստանալ զտեղի վերոյիշ ծնանելոյ աւազանաւ . ո՚ՂՂ և գնով արեան նո՚ր գնեցաւ ագարակ ՚ի գերեզմանն օտարաց . ապա և ինձ արժան է գնոյ գնել զայս ագարակ . ուր հանդերձեն օտարացեալքն յ՚ոյ և գերեալքն ՚ի բանսարկուէն վերագրիլ յաղատութիւն հաղորդութ՚ը՛ արեան կենարարին . ապա եթէ կամ ՚իցէ քեզ , առ զդին ագարակիդ , և բաշխեա աղքատաց . և

նա

նա արար այնպէս։ Ամդ շինեաց դիոնեսիոս զեկեղեցի, ձեռնադրեաց երիցունս, և կարգեաց պաշտօնեայս, և մկրտեաց զբզմս։

Յետ այսորիկ 'ի հալածանս դոմետիանոսի՝ յորժամ աքսորեցաւ ն̄բ աւետարանիչն յովհաննէս 'ի պատմոս կղզի, գրեաց առ նա թուղթ մխիթարակցութ̄ ն̄բն դիոնեսիոս՝ գուշակելով զանդրէն դարձն ողջամբ յեփեսոս. ոպ̄ և եղև իսկ յաւուրս ներոնասայ։

Եւ յայնժամ գնաց ասեն դիոնեսիոս 'ի տես ա̄ծաբան աւետարանչին. և մեծապէս մխիթարեալ տեսութ̄ ն̄ր՝ դարձաւ անդրէն 'ի գաղղիա. և եկաց այլ ևս ամս, մինչև լուաւ և զնահատակութ̄ ն̄բյն իգնատիոսի ա̄ծազգեցի առ տրայիանոսիւ. զոր և յիշէ 'ի գիրս ա̄ծային անուանց։ (14)

Այլ 'ի դառնալ բազմութ̄ հեթանոսաց առ տ̄ր 'ի ձեռն դիոնեսիոսի, զչարեալ քրմացն փարիզացւոց՝ ամբոխ արարին և յարձակեցան 'ի վ̄ր ն̄ր. բայց տեսեալ յանձին ն̄բյն զհրաշալի ցոլմունս երկնային իմն լուսոյ՝ չիշխեցին ձեռն արկանել 'ի նա. և այնպէս անխափան գործէր զգործ տ̄ն երանելին. մինչև բազմաց 'ի գաղղիացւոց և 'ի գերմանացւոց ինքնին աւերել զմեհեանս, և խորտակել զբագինս կռոց։

Իսկ 'ի հալածանս տրայիանոսի (ուր ոմանք դոմետիանոս ասեն, և այլք ադրիանոս) եկն հրամանաւ ն̄ր 'ի փարէզ գաղղիոյ ոստիկան ոմն փեսկեննիոս սիսիննիոս անուն՝ հալածել զքրիստոնեայս, և կորուսանել զգլխաւոր

ւոր նց̄ զդիոնեսիոս ծերացեալ։

Արդ կալեալ սպասաւորաց զս̄բ̄ ծերունին՝ պրկեցին փոկով պնդապէս, և ձգեալ ածին ձաղանօք առաջի իշխանին՝ զնա, և զերկոսին զաշակերտսն զհռուստիկոս աւագերէց, և զելևթերիոս սարկաւագապետ։

Ասէ ոստիկանն ցդիոնեսիոս. դո̄ւ իցես աղ-ճատեալ ծերն՝ դիոնեսիոս յոյն կոչեցեալ, և մակարիոս կարդացեալ, որ ունայնացուցանես զդիցն պաշտօն, և արհամարհես զհրամանս անյաղթ ինքնակալին։ Պ̄խնի ետ երանելին. արդարև ծերացեալ իսկ եմ մարմնով, այլ ջերմութ̄ բ̄ հաւատոց տ̄ն յ̄ի քի̄ կամ մնամ միշտ երիտասարդ առոյգ, և պաշտեմ զպաշտօն ն̄ր̄ ժրութ̄ բ̄ 'ի փրկութ̄ի հոգւոց. զի նա է ամենայաղթ իշխան բոլորեցունց։ Իշխանն ասէ. ա՛ղէ ասա՛, զո̄ր ա̄ծ պաշտես։ Յայնժամ 'ի մի բերան ասեն ս̄բ̄քն երեքին. զք̄ս̄ ա̄ծ զէակից հօր և զփառակից սբ̄ հոգւոյն. և սկսան քարոզել զփրկական տնօրէնութ̄ն ք̄ս̄ի, և զմիւսանգամ գալուստն 'ի դատել զտիեզերս։

Ասէ իշխանն. չի՛ք իմ հրաման 'ի պայքար մտանելոյ ընդ ձեզ վ̄ս̄ այդպիսի բանից, որովք մոլորեցուցանէք զամբոխն, առաւելապէս չար ծերդ՝ ճարտար առ որսալ զմարդիկ. զի անուն կախարդուե̄ քո եհաս մինչև 'ի հռովմ. զայն տո՛ւք ինձ գիտել, եթէ հնազանդի̄ք կայսեր՝ պաշտել զանմահ դիսն. ապա թէ ոչ՝ թողեալ զբանս, գանի՛ հարցից զձեզ։

Յայնմ վայրի յառաջ մատեաւ լարկիա կինն
լեսբիոսի, և բողոք կալաւ զդիոնեսիոսէ.
դա յիմարեցոյց ասէ զայր իմ մոգութ՚ի իւ-
րով, և ձգեաց 'ի մոլորութ՚ի իւր ։ Եւ կո-
չել իշխանն զլեսբիոս. և հարցեալ զնա, և
հաստատուն գտեալ 'ի քո՛, հրամայեաց սը-
րով կարձել զնա 'ի կենաց յահարկուի՛ ա՛մ
քրիստոնէից ։ Իսկ զդիոնեսիոս պատուա-
կան ալևորն մատնեաց 'ի ձեռս դահճաց՝
մերկացուցանել և գան հարկանել հրապա-
րակաւ. և ո՛բ հայրապետն ասէր. Ո՛ օրհ-
նութ՚ի ա՛ն խօսեսցի բերան իմ, և օրհնես-
ցէ ա՛մ մարմին իմ զանուն ո՛բ ն՚ր. զի արժա-
նի եղէ կրել 'ի մարմնի իմում զչարչարանս
քո՛ի վ՚ս խոստովանութ՚ե ն՚ր. որ այն իսկ է
փառք և պարծանք ձեր ո՛ հաւատացեալք և
սիրո՛ւն եղբարք. վ՚ս՝ զգո՛յշ լինիջիք, զի մի՛
լքանիցիք 'ի նեղուի՛ս իմ, այլ առաւել վա-
ռեսցին սիրտք ձեր զուարթութ՚ի յայսպիսի
անցս վ՚ս սիրոյ փրկչին մերոյ ։ Դան հարին
խստագոյն և զհռուստիկոս և զելևթերիոս.
և ծանր շղթայիւք փակեցին զերեսեանն 'ի
բանտ խաւարին ։

Յետ այսորիկ միւսանգամ դատեալ զնոսա
յատենի՝ յորսայս արկին, և վերստին գան
հարին. և 'ի գոհանալ ն՚ց զա՛ն՝ տարածե-
ցին զերանելին դիոնեսիոս 'ի վ՚ր երկաթի
մահճաց, և 'ի ներքոյ լուցին զկրակ ։ Ապա
կիսայրեաց մարմնով առաջի արկին զնա գա-
զանաց սովելոց. իսկ ո՛բն կնքեալ ը՛ղէմ ն՚ց
զնշան ո՛բ խաչի՝ յաղօթս կայր յերկինս 'ի վեր

հայելով. յայնժամ գազանքն հեզութ՞ մա-
տեան, և անկան յոտս ն՞բյն: Զոր տեսեալ
բռնաւորին՝ ետ արկանել զդիոնեսիոս 'ի հը-
նոց բորբոքեալ. բայց աղօթիւք ն՞բյն շիջաւ
հուրն: Պ՞ն՝ յ հանին զնա 'ի փայտ, և ազգի
ազգի կտտանօք տանջեալ՝ անդրէն 'ի բանտ
արկին երկու աշակերտօքն հանդերձ, և այլ
և ս բազմութ՞ բ հաւատացելոց: (15)

Ընդ մատոյց ն՞բ հայրապետն զտ՞րունեան
խորհուրդ պատարագի՝ զօրացուցանել զա-
մենեսին հաղորդութ՞ բ կենարար մարմնոյ և
արեանն տ՞ն. և ահա 'ի ժամ ճաշակման լոյս
մեծ ծագեաց 'ի բանտին. և երևեալ փրկիչն
բազմութ՞ բ հրեշտակաց՝ էառ ինքնին զն՞բ
խորհուրդն, և հաղորդեցոյց ձեռամբ իւ-
րով զդիոնեսիոս. և ասէ. առ զսա սիրելի՛դ
իմ, զի վաղվաղակի ուրախ արարից զքեզ
հանդերձ հարբն իմով. քանզի առ իս է վարձ
քո անպատում. և որոց քեզն լսիցեն՝ փրկու-
թի՛ յարքայութ՞ ի իմում. և արդ զօրացի՛ր,
և յիշատակ քո եղիցի օրհնութ՞ բ. և սէր քո
և գութ՝ զոր միշտն ունէիր առ ամենեսեան,
ընկալցի՛ զոր ինչ և խնդրեսցէ վ՞ն հաւատա-
ցելոց:

Տարածեցաւ սքանչելիք տեսլեանս և 'ի մէջ
հեթանոսաց, զի ոմանք 'ի նոցանէ տեսօղք
եղեն իրացս ը՞ լարկիայի: Պ՞ն՝ յ խիթացեալ
իշխանին՝ ետ հանել զն՞բսն 'ի բանտէ, և յետ
կրկին հարցափորձի և վերստին գանից՝ հրա-
մայեաց հանել արտաքոյ քաղաքին զվկայսն,
և գլխատել զն՞ն 'ի մերձակայ լերին յանդի-
ման

ման բագնին մեռկուռիոսի, ՚ի Հերմեայ։
Յայնժամ ծունր եդեալ ՚ի՜բյն դիոնեսիոսի
ընկերօքն հանդերձ՝ եկաց յաղօթս. և յա-
սել ՚ն՜ց զամէնն՝ հատին դահիճքն զգլուխս
երեցունց վկայիցն, դիոնեսիոսի, հռուստի-
կոսի և ելևթերիոսի. կոտորեցին ՚ի նմին ա-
ւուր և զայլ բազմութ՚ի հաւատացելոց շուրջ
զքաղաքաւն փարեզու։

Եւ եղև անդ նշան սքանչելի. զի մարմին
՚ի՜բյն դիոնեսիոսի յետ գլխատմանն յարեաւ
՚ի գետնոյ անտի, և առեալ ՚ի ձեռս զգլուխ
իւր՝ գնայր հեզիկ յընթացս իբրև մղոնս եր-
կու, մինչև եհաս ՚ի տեղին՝ ուր այժմ հանգ-
չի (ասեն գաղղիացի պատմաբանք,) առաջ-
նորդութ՚ի՜ հրեշտակի՝ հանդերձ փայլմամբ
երկնաւոր լուսոյ, և ձայնիւ՛ զուարթնոց՝
որք նու՛ագէին. փառք քեզ ՚տ՜ր, ալէլուիա.
զոր տեսեալ բազմութ՚ի՜ հեթանոսաց՝ կէսք
փախեան ահիւ՛ մեծաւ ՚ի տեղւոջէն, և կէսք
հաւատացին ՚ի քՆ. ՚ի՜ որս և տիկինն լար-
կիա. որ և արժանի եղև նահատակիլ և
մկրտիլ արեամբ իւրով։

Իսկ այլ ոմն տիկին՝ անուն կատուղա, (որում
ետ ասեն ՚ի՜բն դիոնեսիոս զգլուխ իւր,) հա-
ւատացեալ ՚ի ՚տ՜ր զօրութ՚ի՜ սքանչելեացն՝
հնարեցաւ բառնալ նաև զմարմինս հռուս-
տիկոսի և ելևթերիոսի, զորս կամէին դա-
հիճք գետընկէց առնել. կոչեաց զդահիճսն
՚ի տուն իւր, և արար ՚ն՜ց ՚ի՜ունելութ՚ի՜ մեծ.
և իբրև կերան և արբին՝ յանհոգս լինել ՚ն՜ց
առաքեաց գաղտ կատուղա զծառայս իւր, և

ետ տանել զմարմինս վկայիցն յադարակ իւր՝ վեց մղոնաւ հեռի 'ի քաղաքէն. զորս յետոյ եբարձ անտի գիշերայն գործակցութ̄ի հաւատացելոց, և բերեալ ամփոփեաց ը̄ մարմնոյ ն̄բյն դիոնեսիոսի՝ 'ի լերին անդ հերմեայ, որ զկնի կոչեցաւ լեառն մարտիրոսաց՝ յանուն ն̄բյն դիոնեսիոսի և նահատակակցաց ն̄ր։

Եւ ահա այս վկայաբանութ̄ի է, զոր յոլովք իմանան յանուն ն̄բյն դիոնեսիոսի արիսպագացւոյ. իսկ այլք համարին, թէ այլ ոմն ն̄բ ե̄պս դիոնեսիոս անուն նահատակե̄լ իցէ 'ի փարէզ՝ հանդերձ երկու ընկերօք առ դեկոսիւ՝ յամի տ̄ն իբր 250. ուր զառաջնոյն կատարումն դնեն յամի տ̄ն 95, կմ 100, կմ 117։

Այլքանզի անյայտ է և այս զանազանութ̄ի, ասելի է՝ թէ թէպէտև երկու դիոնեսիոսք իցեն, բայց 'ի միասին լինի յիշատակ երկոցունց իբրև զմիոյ յա̄մ եկեղեցիս արևելեայց և արևմտեայց. այլ առաւել հռչակաւոր է 'ի մէջ ազգին գաղղիացւոց 'ի սկզբանէ և այսր։ Օ ի ո̄պ յայտ է 'ի հին և 'ի վաւերական յիշատակարանաց և յաւանդութ̄է ազգին մինչև ցայսօր, զկնի դարուց հալածանաց՝ շինեցաւ տաճար հոյակապ 'ի վ̄ր տապանի ն̄բյն դիոնեսիոսի անդ 'ի գաղղիա. և եղեն 'ի տեղւոջ անդ բազմապատիկ սքանչելիք և նշանք բժշկութ̄ե։

Ի մէջ այլոց հրաշից հանդիսացեալ է այն, զոր գրէ զանձնէ ստեփաննոս հռովմայ հայ-

րա-

քանզի երկրորդ յուլիերոսի դարու, ա-
ռանձին կոնդակաւ՝ պատճենիւս այսուիկ.
* Սուբիանոս եպս՝ ծառայ ծառայից ՝ի :
Ո՞ր օրինակ չէ արժան ումեք պարծիլընդ
հաւուքն իւր, նոյնպէս չէ պարտ զգործս ՝ի
զ'ին նման եղեալս ՝ի ձեռն եթէ ինչ առանց
ինչ նորուն արժանեաց՝ լռել, այլ քարոզել.
զի այսպէս խրատէ հրեշտակն զտոբիթ :
Ո՞րդ ՝ի պատճառս հարստահարութենէ եկե-
ղեցւոյ ՝ի յերեսաց բռնակալ և հայհոյէ.
այսուհետեւ անանուն անանուանեալ արքայի (լռնգո-
բարտուացւոց)՝ եղև ինձ դալ առ բարեպաշտ
և քաջաւեր արքայն՝ որ պիտինոս հաւատա-
րիմ ՝ի ճշմարիտ պետրոսի՝ ՝ի Փռանսիա. ուր խո-
ժաւայ մինչև ՝ի մահ, և կացի զժամանակ
ինչ ՝ի փարիզեան աւանի՝ ՝ի պատուական ու-
տի երանելի վկային քրի դիոնեսիոսի :
Ընդհանուր յետ անյոյս լինելոյ բժշկաց յի-
նէն՝ եղէ յաղօթս յեկեղեցւոջ նորին երանե-
լոյ վկայի ՝ի ներքոյ զանգակաց. և տեսի ա-
ւաջի բեմին զքաջ հովիւն զնոր պետրոս, և
զվիշտն հեթանոսաց զնոր պօղոս, արթուն
մտօք Հանապազ զնա ՝ի ձևոյ նոյ, և զերկուս
երանելի զնոր դիոնեսիոս յաջմէ ոն պետրո-
սի, անօսր մարմնով և երկայնահասակ, գե-
ղեցիկ երեսօք և սպիտակ հերուվք, զգեցեալ
կողոպ սպիտակափայլ, և ծիրանի նկարէն,
և եմիփորոն հաւնակ ծիրանի ոսկեհուռն. և
խօսէին զոմարթագին ընդ միմեանս : Եւ ասէ
քաջ հովիւն որ պետրոս. եղբայրս մեր այս
L 3 ասէ.

ասէ. այժմ բժշկեսցի. և մատուցեալ էարկ
ղձեռն իւր ընտանի սիրով'ի ծոց տ̄ն դիոնե-
սիոսի, և հայեցաւ 'ի տ̄ր պետրոս: Եւ տ̄ր
պետրոս ասէ զուարթութ̄ ցտ̄ր դիոնեսիոս.
քո շնորհ է առողջութի̄ դորա: Եւ անդէն
երանելին դիոնեսիոս ունելով'ի ձեռին ըզ-
բուրվառ խնկոց և զարմաւենի՝ հանդերձ
երիցամբ և սարկաւագաւ, որ կային առ նմա,
եկն առ իս, և ասէ ցիս. խաղաղութի̄ ընդ
քեզ ե՛ղբայր, մի՛ երկնչիր, ո՛չ մեռանիցիս՝
մինչև յաջողութ̄ դարձցիս յաթոռ քո. արի՛
ողջամբ, և զայս խորան նու՛իրեա՛'ի պատիւ՛
տ̄յ և առաքելոց ն̄ր պետրոսի և պօղոսի՝ զորս
տեսանես, մատուցանելով զպատարագ դո-
հուե՛: Եւ էր անդ անպատմելի պայծառու-
թի̄ և բուրումն անուշից:

Եւ ահա նոյնժամայն ողջացել՛ իմ շնորհօքն
տ̄յ՝ կամէի ձեռն'ի գործ առնել և կատարել
զոր ինձ հրամայեցաւն. իսկ որք անդն կայ-
ին, ասէին զինէն՝ թէ յայլոյ խելս է. վ̄ոյ
պատմեցի ն̄ց կարգաւ, և թագաւորին դլխո-
վին և մեծամեծաց ն̄ր, զոր ինչ միանգամ
տեսի, և թէ ո՛րպէս ողջացայ: Եւ կատա-
րեցի զա̄մ՝ որ ինձ հրամայեցաւ. օրհնեա՛լ
է ա̄ծ ||:

Ա. յս ելև յամի տ̄ն 754. 'ի յուլիսի 28. և 'ի
մատուցանել ստեփաննոսի հայրապետի զ̄սբ
պատարագ 'ի խորանի անդ, զոր նու՛իրեաց
յանուն ՚սբց առաքելոցն պետրոսի և պօղոսի,
և ս և ՚սբյն դիոնեսիոսի՝ յանդիման տապանի
ն̄ր, էօծ 'ի թագաւոր գաղ ղիացւոց զպի-
պի

պինոս արքայ, և զերկոսին զարքայորդիսն
զկարոլոս և զկարլոմանոս. (յորոց կարոլոս՝
որ մեծն կոչեցաւ, եղև յետոյ և կայսր.) նոյն-
պէս և զբերտրադէ Թագուհին և զաւագա-
նին օրհնել, եդ օրէնս՝ զի յայնմ հետէ յորդ-
ւոց նորին պիպինոսի լիցի ժառանգ Թ̃գրու-
Թ̃ե. և եդ 'ի խորանի անդ 'ի յիշատակ ըզ-
հայրապետական պալիունն, ՝ի զեմիփորոն
իւր, և զբանալիս յօրինակ փականացն պետ-
րոսի. և ինքն էառ 'ի նշխարաց ՝նբյն դիոնե-
սիոսի՝ զբազուկ մի ն՝ր կամ զոսկր յոսկերաց
աջոյն, և տարաւ ՝ը իւր 'ի հռովմ. ուր հիմ-
նեցոյց վանս յանուն ՝նբյն դիոնեսիոսի. այլ
'ի վախճանիլ ն՝ր յառաջ քան զկատարումն
շինուածոյն յամի ՝տն 757, եղբայր ն՝ր և յա-
ջորդ պօղոս հայրապետ ՝ը կտակի նորա 'ի
գլուխ տարաւ զայն. և կարգեաց անդ պաշ-
տօնեայս յազգէ յունաց. և ժողովեալ անդ
այլ ևս նշխարս վկայից՝ կոչեաց զտեղին
դպրոց յունաց առ ՝նբ վկայս, կամ առ ՝նբ
վկայս 'ի դպրոցի յունաց, առ 'ի յիշատակէ
՝նբյն դիոնեսիոսի։

Իսկ 'ի դաղ ղիա՝ ՝ոպ առաջին Թ̃գրք բազում
ընծայիւք պատուէին զտապան ՝նբյն դիոնե-
սիոսի, և յ՝ամ կարիս իւրեանց դիմէին յօգ-
նականութ՝ի ն՝ր, ըստ նմին և մեծն կարոլոս
մեծաւ հաւատով ապաւինէր միշտ 'ի բարե-
խօսութ՝ի ՝նբյն. մինչ զի և 'ի խաղալ պատե-
րազմաւ ՝ը դէմ սաքսոնաց վտարանջելոց՝ տա-
րաւ ՝ը իւր 'ի բանակն զմարմին ՝նբյն դիոնե-
սիոսի և զերկուց աշակերտաց նորա. և ՝ը

հաւատոց իւրոց գեղեցիկ 'ի գլուխ տարաւ
զյաղթութիւն, և զսաքսոնս ձգեաց 'ի քրիս-
տոնէութիւն. և զօրացեալ յամի՝ օծաւ կայսր
արևմտեան յամի տն 800։

Իբրև էանց դար մի 'ի վր, համբաւեցաւ 'ի
մէջ ալամանաց, ոպ թէ ոմն յաւագ իշխա-
նաց արնոլփոսի կայսեր երթեալ 'ի գաղղիա
'ի վանս դիոնեսիոսի՝ հնարիւք գողացեալ
իցէ զմարմին ն՞բյն, և տարեալ 'ի գերմանիա
'ի հռագիսբոնա քաղաք բայոարիոյ։ Ա.յլ
յամի տն 1050, ենրիկոս արքայ գաղղիոյ
գրեաց առ ենրիկոս կայսր ալամանաց, զի
առաքեսցէ յիւրոցն՝ գալ տեսանել զմարմին
ն՞բյն 'ի տեղւոջ իւրում. եկին դեսպանք, և
յանդիման նոցա բացաւ տապանն, և գտաւ
ամբողջ մարմինն հանդերձ գլխովն, բաց 'ի
քանի մի ոսկերաց սփռելոց յայլ և այլ տե-
ղիս. և յայնմ հետէ կատարիւր 'ի վանս անդ
դիոնեսիոսի ամի ամի յիշատակ յայտնութեան
կամ բացման տապանի ն՞բյն դիոնեսիոսի։

Իսկ յամի 1190. փիլիպպոս արքայ գաղղիաց-
ւոց պատրաստեալ 'ի խաղալ յարևելս՝ յա-
ռումն եէմի, գնաց նախ 'ի տապան ն՞բյն
դիոնեսիոսի, և հայցեալ զձեռնտուութիւն նր,
ընկալաւ անդ 'ի ձեռաց քեռւոյն իւրոյ գուիլ-
լելմոսի արքեպսին հռեմայ առաքելական
նուիրակի զմախաղ և զդաւաղան 'ի նշանակ
ուխտաւորութեան։ Եւ յետ մեկնելոյ նր՝ տի-
կինն նր ադեղա թագուհի ետ բանալ զտա-
պան ն՞բյն դիոնեսիոսի, և դնել զնշխարս նր
'ի վր բեմի ընդ այլ նշխարս ն՞բց 'ի տաճարի
նր,

ներ, և մատուցանել հանդիսասիւս պաղատանս վասն իւրոյ և նիզակակցաց նոր եղեալ ի պաղեստին. և այս եղև յամի 1190. յօ դասատոսի. 25. յորում աւուր եղև յաղթու-

թիւն երեւելի ի ձեռն քրիստոնէից։

Ի յամի 1244. յորժամ ինննասլիւենտիոս չորդ խոյատուճեալ յերեսաց քռնակալութե փրինգերիկոսի կայսեր՝ անկեալ էր ի գաղղիա առաջն լուդովիկոս արքայ, հիւանդացաւ աղն լուդովիկոս մերձ ի մահ. և ըստ ինդոյն ոմն իւրոյ բլանքայ դշխոյն քացաւատապան աջոյն դիոնեսիոսի, և եղև թափուր և աղօթք հաստատակաց. որով իսկ և իսկ ի լաւ անդր փոխեցաւ և զօրացաւ արքայ, և փութապատիս ընկալաւ զկատարեալ առողջութիւն։ Այնպէս և յամ ժամանակս եղոյց ած զայցե լուծիւն իւր բարեխոսութիւն աջոյն դիոնեսիոսի, որոց հաւատով կարպային առ նա։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք։

(1) Եւ նշանակելոյ մեր յընթացս պատմութես զնաքանչիւր տեղիս, յորոց բազկանայ վարք և վկայաբանութիւն աջոյն դիոնեսիոսի, միանգամայն և զօրինակ միաբանութե անմիաբան կարծեաց, չանելոք պէտս յերկայնել աւանօր զքննութիւնս, յորս դեգերեցան մեծամեծ անձինք մատենիւք չափ։ Մինչ զայս ծանուցանեմք բանասէր և հմտարուսաէր անձանց, զի թէ ի ձեռս բերցեն զքննութիւն մերս կողման յայս և յայն կարծեաց, մի շտապացին նոքա, այլև զմիւսոյ կողմանն զննեսցեն ա-

նաչառ. զի յայնժամ իմանան զգժուարութիւն երկուց և զյարգ մերսումն գալոճածոյ ի վանազանից։ Նոյնպէս և

որ

որ ինչ բանք են վէր գրոց սէյին գիտնականին, բայց համառօտ հմտութիւնք ակնարք են առ ուսումն նոսանալոյ՝ թէ որ կողմն ուրոյն նրատուեան ՚ի մէջ դէմ ընդդէմ մնաքառութեց. այս- քան ասել մեզ շատ լինի. եթէ կայցէ այլ ինչ ձեռնտուա- ՚ի հատատասութիւն կիմ առ պարզուն գրութեցս, վասն ՚ի շատ նշանակութեց։

(2) ՚Ի Հ. ասի. * Սքն գիտնականս արհամարհեցին մի ,, էր ՚ինամարհարհեցն աթենացւոց. և էր յոյժ մեծա- ,, տուն, խորհրդական և նմանատուն։ Եւ յայնմ ժամա- ,, նակի օրէն էր դատաւորացն աթենացւոց, որ էին ,, դատաւորքնատէին յատեանն, և զդատաստանս քննէին. ,, և ապա առաջի ծեր նշխանաց դատապարտէին զմե- ,, ղանչականն ։։ Ընդ ծանիր, զի կատաղարուեն աթե- նացւոց էր յայնժամ ՚ի ձեռս էին արհամարհեցն, որ նշ- խանաց. յորոց առաջինն կոչեր ա՛նաբ, կամ վասնչ՚ն, որ արքայ կիմ թագաւոր, բայց առանց թագի և գաւա- զանի. երկրորդն ա՛րխօն կիմ ասէն, որ նշխան կիմ ապետ. երրորդն Բօլե՛մարխօս. որ պատերազմապետ, կիմ վե- րակա- ցու մարտի. և մնացեալ վեցեքին՝ ընդհանրէ՛ն, որ օրէնս- դէր կիմ նրատարար՝ նէրկ առանդատարհք օրինաց ։ ՚Ի ստացանէ որք միանգամ հատատարիմ և ընտիր գտանէին, ամբառնային ՚ի գատաստութեն վերին առեն արհամար- դին, և կոչէին արհամարհեցք ։ Այս է առել սէյն մատենիսն ՚ի յատաջաբ. գիտես. * Զի յինուէց անտի ,, նշխանաց նատելոց յաթէնս պարտ էր բառնականալ ա- ,, րհամարհեցի գատաստութ. որպէս առ անգրտանիսն ,, յերկրորդ գիրս առաքինեան ։։ Եւ ՚ի վեր քեզ մար- ,, տոս. * այլ յետոյ առաջնորդեն եղև (Թուզուլ) ա- ,, ռեանն արհամարհեցին. որ յարտանց նշանաւորաց յետոն ,, և մի, միայն թէ ՚ի բարեաւոհմից, որպէս առաքն, և ,, մեծութ և պարկեշտ վարուք փայլէլոց. ոյր պատմէ ,, փիլոքորտա յերկրորդ գիրս առաքինեան ։։ Եւ որպէս ծանուցանեն այլք, առ ՚ի լինել օրէնսդիր՝ որ էր առ- բաւ հեթ իշխանութեն, քննութեն լինէր ամ քաղաքա- վարութեն անձին նր. և յետասրութեն քննէին զնա, եթէ անտրատ գտաք ՚ի կարդէին. և այնպէս արժան համարէին անցուցանել ՚ի ծերակոյտ արհամարհեցին։ Իսկ յաղագս առաջադասութեան զանուն տեղւոյն՝ ասէին քերթողք հելլենացւոց ը առասպելոյ, թէ յորժամ արէս չծծն սպան զաւետրվի զորդի պոսէդոնի վէր յատ- նելոյ ՚ի վէր գատեր նորոյ ալկիոպայ, պոսէդոն ձգեաց զնա ՚ի գատաստան մահու. յայնժամ ժողովեցան եր- կո-

կոտասան գիք ՚ի գիւղ անդր. և քննեալ զդատն՝ արձակեցին զարէս վեցեակ վճռովք. վասն տեղին կոչեցաւ արեան գիւղ։

(3) ճառընտիրն Ա. սկսանի այսպէս. * կեանք գիտ„ նեալոյ ուրուց սուրբ և գլխաւորի աթենաց„ ոց, որ կոչի քաղաք իմաստասիրաց։ Պատմեաց յա„ զագս անձին իւրոյ, և ասէ. Ես ելբարիք իմաստուե„ սիրոյ՝ գիտնեալոյ ուրդի սուրբ ||ևն։ Իսկ ճ. ե. այսպէս. * Պատմուճիւն աբեղն գիտնեալոյն՝ յաղագս ծննդեանն և անդեանն և քաղաքավարուե և իմաս„ տուե, աշակերտի պօղոսի։ Ես ելբարիք իմաստու„ թե սիրոյ ||ևն։ Յորմէ ունիս իմանալ, զի գրիչ ՚ի վր գրչի ունի տարբերուն. և յայտ է թէ նաև ՚իյու„ նական օրինակս գտանէին տարբերուինք՝ ոչ միայն ա„ կամայ, այլև կամաւոր. զի ոմանք ոչ կարեն օրինակել ինչ առանց այլայլելոյ ըստ իմիք կամ պարզելոյ իւիք. և այսու մտանեն երբեմն հատուածք ինչ օտարք ՚ի մեզ հելինական. ոմն նորոգուին առեն արխատագեայ իբ„ րև առաջին չինուին էր ձևացեալ ՚ի գրչէ. զոր դիւ„ րաւ ուղղագրեն իմաստուինք։ Ոմն պատմուեա է պարզ և միջակ. զի թէև բուն գրուճած գիտնեալոյն լինէր. ոճն պատմական լինի առաւել հարթ. բայց գուցէ և ՚ի խրթին բանից հելինական՝ ոմն ՚ի հին պատմաբանից վերածեալ ևցէ յայս ձև պարզուին։

Իսկ յիշատակարանն ՚ի ճ. Ա. է այս. * Ա՛յս պատ„ մուն սքն գիտնեալոյն ՚ի քաղաքն եէմ էր թարգ„ մանեալ ՚ի յունականէն ՚ի վիսիականն. իսկ ՚ի մեր„ թարգմանեաց յովաննէս բժիշկ, իշկ։ յինէ թուճակա„ նիս հայոց, ՚ի փառս քրի այ մերոյ ||։ Կամ ըստ է. * Ա՛յս պատմուճիս գիտնեալոյն սքն ՚ի քաղաքս եէմ „ թարգմանեալ իրիցու յունական. իսկ ՚ի մեր թարգ„ մանեաց յոհաննէս բժիշկ. յորմէ թուճաբերուես հայոց, „ ՚ի պատիճ և ՚ի փառս քրի այ ||։ Ասէր չեն ինչ այլ տար„ բերուինք գժուարիմացք. շատ է, զի թուճական թարգ„ մանուինն չէ յոյժ այլափոխեալ. զի ըստ միում լինի յա„ մի տն 880. և ըստ միւսումն 869։

Մեով գարու և կիսով յառաջ էր և առեփաննոս սիւ„ նեցի, որ թարգմանեաց զաճաբանական գիրս գիտնե„ ալոյն յամի իբր 717։ Ոչ և անաստաս գրապետ հռով„ մայ յամի 876. թարգմանեաց ՚իյունէ ՚ի լատին զվկայա„ բանուին գիտնեալոյն զշարադրեալն ՚ի մեթոդիոսէ ՚ի պատրիարգէն կոստանդնուպօլսոյ յամի 842։ Ոյով իմա„

նաս,

նաս, թէ յայնոսիկ դարս լեալ է գրգիռ ինն ծայրից ցուցանելոյ զգիրս, և զվարս դիոնեսիոսի, ոմն և ըզվկայաբանուԹին նր ուրոյն. Թուղ զգրեալսն Ի մեծաստուածային և յորոց զինն:

Այլ առաւել քան զամենեսին աշխատասիրեաց Ի նոյն դարս հիլդուՃինոս գաղղիացի աբբայ վանից սբոյն դիոնեսիոսի պաշտպանին փարեզու. քանզի արքունի հրովարտակաւ հրամայեաց սմա լուծովիկոս պիոս որդի մեծին կարոլոսի, այն՝ որ Թագաւորեաց յամի ՌՆ 814, Ի մի հաւաքել զամ պատմական յիշատակարանս՝ որ յաղագս սբոյն դիոնեսիոսի արիսպագացւոյ, Ի յունական և Ի լատին մատենից և Ի հնուԹենէ գաղղիոյ. և նա արար ըստ հրամանի նր. զորոյ զգրուԹին Ի մէջ բերեն սուրիոս և այլք: Դարձեալ աշխատասիրեաց և աշակերտ նորին հիլդուՃինոսի՝ հինկմարոս եպս հռեմայ, և միաբան նոյն ուխտին սբոյն դիոնեսիոսի Ի գաղղիա. և գրեաց Ճոխագոյն Ի նամակի իւրում առ կայսրն կարոլոս երկրորդ, որ նստաւ յամի 876: Բայց ոչ ոք Ի տացանէ Ի ձեռս բերեալ է զառաջինն վարս դիոնեսիոսի կամ զպատմուԹին դարձի նր. զոր ունիմք Ի ձառընտիրս մեր:

(4) Զայս սովորուԹեն խորհուրդ հարցանելոյ օտարաց յարիսպագէ աԹենացւոց յիշէ և վասերիոս մաքսիմոս, գրելով զայսպիսի պատմուԹ. գԼԲ. Ը. գլ. Ի.* Տիկին ոմն զմիւռնացի սպան զայր իւր և զորդին, որոց սպաներ էր զղաւակ նր՝ որ յառաջին առնէն, զուշիմ պատանին: Իբրև մատուցաւ այս խնդիր յատեան գերագոյն (որ էր փեսայ կիկերոնի՝ հիւպատոս և դատաւոր յատիա), նա յղեաց և զեկոյց զնրան յարիսպագին. զի ինքն ոչ արձակել իշխէր զջալախեալն կրկին արեամբ, և ոչ պատուհասել հանդուրժէր զջարժեալն յարդարայի ցաւոց: Խելօք և հեզուԹ վարուցաւ յայսմ դատաւորն հռովմէական ժողովրդեան. այլ ոչ նուազ խմաստուԹ գործեցին և արիսպագացիք. որոց հայեցեալ Ի պատճառն, եկեսցեն դատախազն և պարտուցեալն, նովիմբ զդատ, ծեալք կարեկցուԹիք ընդ գոլաբերելոյ || . ի ազատ կացուցին: Ջնոյն գրէ իւիւք տարբերուԹիք և գեղեցիս. ԱՊՓԻՒ. գԼԸ. ԺԷ. 7:

Ծանիր և զայն, զի ուր մեք ի զի քահանայ, և ի զի քուրմ եդաք, ձառընտիրն միշտ քահանայ դնէ յայսմ պատ-

պատմուԹԵ. Իմա խորհրդով. զի առ եգիպտացիս, և աԹենացիս անգամ, քահանայ կոչէին ոչ միայն քուրմք զոհագործք, այլև կարծեցեալ գիտնաւորք սրբազանք. զոր և մարգարէս անուանէին. այն իսկ են մոգք ըստ պարսից, քաղդեայք ըստ քաղդէացւոց, մերկիմաստակք ըստ հնդկաց, և որուխոք ըստ գաղղիացւոց:

(5) Զգալուստ դիոնեսիոսի յարեգ քաղաք եգիպտացւոց հաստատեն և այլ մասենագիրք և վկայաբանք. այլ առ ջրևայոյ զպատճառս գալստեանն, ՚ի առ չորնելոյ ՚ի ձեռին ղբնակատար պատմուԹեն ճառընտրացս մերոց, կարծեցին ըստ չոճիսայ՝ ԹէԹ վն ուսման երԹեալ էին անդր. ոմն արարին ոմանք ՚ի նախանձ փիլիսոփայից. վն և հալէպէս յաճան զայն անատոյգ մակաբերուԹեն ՚ի ձեռս առեալ՝ ըստ այսպէս. * ՚ի մանկուԹեն քաջ . ուսաւ (ասէ) զազգատոհական արուեստ ՚ի տան կամ ՚ի . քաղաքի նորում, որ էր ծնօղ և դաստոյ այնպիսի արուեստից: Եւ զարգացեալ նոքիմբք՝ ՚ի դուրս ել պատանին, և գնաց յեգիպտոս իբրև ՚ի միակ վարժարան առաւել սրբազան և գաղտնի վՀպուԹեն . . . վն զի անդր դիմէին ուշիմ անձինք յետ այլոց մարդից առ ՚ի հմտուԹի ուսումնականուԹեն և աստեղագիտուԹեն և սրբազան իրաց . . . ոմն պիւԹագորաս, Թաղէս միլեսացի, պղատոն, եւդոքսոս, և այլ բազում փիլիսոփայք ակնաւորք . . . մանաւանդ զի տակաւին ՚ի ժամանակի անդ սորին դիոնեսիոսի ցուցեալ լինէին յարեգ քաղաքի յարկք քահանայից, ըստ իմաստնոցն եգիպտացւոց, և քնակարանք պղատոնի, եւդոքսի, և այլոց երևելի արանց ||: Բայց յայտ է ԹէԹ ՚ի ժամանակս դիոնեսիոսի աԹէնք գերազանցեալ էր զեգիպտոսիւք ուսման և յուսումնականուԹեն, և առաւել եգիպտոսէ յաԹէնս դիմէին, քան յաԹենայ եգիպտոս. վն պատճառ գալստեան դիոնեսիոսի յարեգ քաղաք ոչ էր ՚ի պետս ուսանելոյ, այլ ուսուցանելոյ զիբաւունս՝ ըստ ճառընտրացս. որում անծանօԹ գտանի հալէպէս:

(6) ՚ի ճ. գրեալ էր. * և ամ աստեղք աներևոյԹ էղեն ||. ուր մեք հարկեցաք յաւելուլ ՚ի բացատրուԹեն. * երևուԹացան և աներևոյԹ էղեն ||. զի զերևելն պահանջէ խաւարումն արեգական ըստ լուսնի, և զաներևուԹեանն յայնմ դան՝ որ վն ԹանձրուԹեն խաւարին և միգին ափուելոյ. և կասկածիմք էակ, ԹէԹ ՚ի բնագրի էր բառ հոմանձայն յունական, իբր բացերևիլ կամ բա-

ցա-

ցաճաճկիլ. զոր Թարգմանիչն յետիւալ է պարզաւիէս՝ ա-
ներևոյթ լինել: Ջայս ամ հաստատ և եւաեբիոս Ի
քրոնիկոն կանոնի վկայուԹը արտաքին մատենագրաց.
աստ. * Յո օձեալն ոյ՝ որ ժե, ըստ մարգարէուԵցն՝
,, որ զնմանէ էին, գայ Ի չարչարանս յինեուստանեըոը-
,, դի ամի տիբերի ԹզրուԹԵն: Ըստ որում ժամանա-
,, կի և յայլ յունական յիշատակս գտաք՝ ըզ նմին օրի-
,, նակի բանից պատմեալ, Թէ արեգակն նուճալեաց,
,, բիւԹանիա չարժեցաւ, նիկեայ մեծ ման կործանե-
,, ցաւ. որ և միաբանք իսկ պատմին էրացն՝ որ Ի չար-
,, չարանս կենարարին մերոյ պատահեցան: Գրե և
,, փղեգէոն, որ զսղոմպիադացն անդատին Ի նոցանէն
,, յերեքտասաներորդումն պատմէ՝ զայս ձև օլինակի
,, բանից, Թէ Ի չորրորդում ամին երկերիւրորդի և
,, երրորդի ոլոմպիադին՝ եղև մեծ նուճազուԹի արե-
,, գական, քան զոր յառաջագոյն ոչ ոք գիտեր. և գի-
,, շեր Ի վեցերորդ տումնջեանն եզև. մինչև աստեղաց
,, յերկինս երևել. չարժումն մեծ Ի բիւԹանիա, և
,, մեծ ման նիկիայ կործանեցաւ||: Եւ եԹէ Ի նիկիա
ոյնչափ ազդեաց չարժումն՝ որ յերէմ, և առաւել յե-
գիպտոս՝ որ մօտ և ս. Թո՛ղ զի գուցէ զառաւել լիմն
նշան եցոյց որ յարեգ քաղաքի, որ պարծէր անուճամբ
արեգական և բազմուԹԵամբ աստեղագիտաց եգիպտացւոց.
զի իմացին՝ Թէ ո՛չ բնուԹԵ էր գործ ահաւոր տեսիլ
այնր աւուր, այլ՝ ոն բնուԹԵ. ոպ Ի միտ էառ և ի-
մացոյց նաև այլոց մեծն գիտնականս:

(7) Հայելոյէս առանց գիտելոյ զբան ձառընտրին՝ այս-
պէս համաձայնէ զտարբերուԹիս այլոց. * Մ՛արԹ է
,, (ասէ) ասել, Թէ ընդ գիտնականս Ի պէսպէս դիպ-
,, ուածս երկերորդելով զիշատակ այդր խաւարման,
,, այլևայլ օրինակաւ՝ ոպ ստէպ հանդիպի՝ խոսեցեալ
,, էցէ. ուր և յաւետարանն գլխովին՝ այլևայլ օրի-
,, նակաւ յառաջ բերին յաւետարանչաց բանք քո||:
Բարւոք է, և կարևոր իսկ այդ մեկնուԹիւն յամ հնու-
Թիս. բայց ուր այլք հարևանցի Ի մէջ բերեն, բանք
ամենեցուն վերածելի են առ լիակատար պատմուԹիւն
մեր հնագոյն քան զայլ աւանդս: Ն՛ա ինքն գիտնականս
նաև Ի ԹուղԹն առ ապոդոփանէս նշանակէ, Թէ յայն-
ժամ յարեգ քաղաքի անդ Ի գիր անցուցի զօրն և զուա-
րին այս ամ անցից:

(8) Ա՛յսպէս էվթոպաան ամ գրի Ի ճ. ե. որ քաջա-
յարմար է ժամանակին. ուր վրիպակաւ գրչի եգեալ

Ե՛ի ՃՈՒԱ՛ * յետ երկու ամի || : Գրէ և հալէայէս, թէ գալուստ պօղոսի յաթէնս եղև * յամի ՃՀ. կճ ,, փոքր ինչ աւելի կճ նուազ. զի առ բազումս ընկա- ,, լեալ է կարծիքն այն, որ զդարձ սքէն դիոնեսիոսի ,, ՚ի հաւատս քոյ ձգէ յառն մետասաներորդ ՚ի ջարչա- ,, րանաց անտի փրկչին || : Ուր սեռական համաձայնու- մեծ ընդ մեզ, եթէ փոխանակ մետասանի դնցես երե- կոտասան, փոխելով և գամ ՚ն ՚ի 46. որովհետև սո- վորական կարծիքն է, թէ չարչարանք քոյ եղև ՚ի 34 ամի կենաց նր. թէպէտև այլք եդին 37:

(9) Նոյն է, թէ ընթերցցիս և ՚ի սեռականն կամ ՚ի տրականն. տաճար նուիրական * ԱՅ անծանօթի, ան- հասանելւոյ, անպատմելւոյ, անպարագրելւոյ || : Ընդ այնչափ հանդիսացեալ էր յաթէնս յիշատակ այ անծա- նօթի, կամ անծանօթին աճ, մինչ զի պուռկիանոս քերթող կամ հին հեղինակ տրամախօսութենէ փիլոսպատրեայ, երդ- նուամ ասէ * ԱՆԾանօթին ալթենացւոց || : և յաւելու պատմել, թէ * յորժամ եկաք յաթէնս, գտեալ զԱՆ- ,, ծանօթին՝ մեծարեցաք պաշտամամբ և գոհութիւք, ,, համբառնալով զձեռս յերկինս || : Եւ որ մեծն է, յայտ առնէ՝ թէ այն աճ էր, զոր եբրայեցիք պաշտէին. քանզի այսպէս գրէ ՚ի փարաաղեան տապս իւր, որ և գիրք ը. յղ. քաղաքական մարտից, ՚ի բերանոյ պոմ- պէոսի.

* Յիմաց զարհուրին դրօշակաց կապադովկացիք, և Հրէաստան պաշտօնատեր Անատոյդն ԱՅ || :

Որով յայտնի լինի, թէ պօղոս ոչ վայրապար մեկնեաց զանուն անծանօթին այ՝ անյայտ և անատոյդ կարծեցե- լոյ առ հեթանոսս՝ ՚ի վր այ ճշմարտի. զի թէ առ այլս անյայտ էր, բայց ըստ մարդարէին՝ * յայտնի է ՚ի հրէաստանի աճ, և յինչ մեծ է անուն նր || . որ տիրա- պէս յայտնի եղև, յորժամ յայտնեցաւ մարմնով: Թող զի, ոչ յայտ է ՚ի ՅԲ գրոց. յոէլեանու. Ճ. 9. գան. Է. 18. յովէլ. Է. 9. և յարտաքին մատենագրաց, ՚ի դիով- նէ կասիոսէ, յարրեատիկէ, լէն, հեթանոսք զաճն հրէ- ից կոչէին աճ երկնից, աճ բարձրեալ, աներևոյթ, ան- ճառ, յաւետենական: Այլ ոչ հեթանոսք ոչ բարւոք իմանային զայսպիսի կոչմունս, հրէայք և անձամբ յան- ձին խրթնացուցին, կապեալք ըստ նիւթական անուանն ջրեղբեան. ԵՓՀ. ՚ի որ էն. զոր ոչ կամէին կճ ոչ կարէին վերծանել, և կոչէին անճառելի և անթարգմա- նելի և անվերծանելի անուն: Իսկ սամարացիք հեթա-

նո-

նոսացեալք՝ի հրէից, ըստ պատմելոյ յովսեպոսի. նախան. ՃԷ. 7. առացին ցանտիոքոս երևելին, թէ հարկ մեզ հանդնեցին՝ի լերինն գարիզին զտաճար անձանօին և առնուն ՟ա. օրուամ մինչև ցայսօր մատչին խուռնիկք և պաշտօնք ՟ձնականք:

Գրէ աւերտուղիանոս ընդդէմ մարկիոնի. ՟ա. 9. * Գտաք ,, նեմ բագինս կանգնեալ (առ հեբրենացիս) անձանօի ,, ՟ձոց. այլ ստուիկեցի կռապաշտութիւնէ ։ Սոյնպէս ,, և անոպոյգ ՟ձոց (առ հռովմայեցիս). այլ հռովմէա- ,, կան անուանապաշտութիւնէ ։ Յորմէ իմաստասիրեն քննիչք, թէ բաց՝ի հռչակաւոր բագնէն անձանօի՝ ոյ յաթէնս՝ կային նոյնպիսի բագինք և այլ տեղիս՝ի մէջ յունաց և հռովմայեցւոց: Այս ոչ հակառակի պատ- մութե գործոց առաքելոց ևիմ ասացելոցս՝ի մէնջ. բայց օտարանայ համարձակախօսութի հերոնիմոսի, որ իշ- խեաց գրել՝ի ՟ա. գլ. պխդ. թէ * Երձանագրութի ,, բագնին ոչ էր այնպէս՝ոյ պօղոս յառաջ բերէ, ան- ,, ծանօի ՟ձոյ, այլ՝ այսպէս. ՟ձոց ասիոյ, եբրոպայ, ,, և լիբիոյ, ՟ձոյ անձանօից և օտարաց ։ Բայց քզի ,, պօղոս ոչ կարօտեր բազում ՟ձոյ անձանօից, այլ ,, միուամ ևեթ, անձանօի ՟ձոյ՝ եզական անուամբ վա- ,, րեցաւ. զի ցուցցէ զայն լինել ՟ձ իւր, զոր աթե- ,, նացիք արձանագրեալ էին՝ի վերայ բագնին. և թէ ,, պարտ էր նոցս գիտութե պաշտել զնա, զոր անգիտու- ,, թե մեծարէին, և ոչ կարէին անգիտանալ ։

Ոչ ոչ կարէ այլապէս արդարանալ հերոնիմոս, բայց զի ասացուք, թէ ոյ՝ի ճ. Ա. յաւելուածով գրի. * Ոչ անձանօի, և ՟ձ ՟ձոց, անհասանելի, անպատ- մելի, անպարագրելի ։, նոյնպէս և ոմանք՝ի հին գրչաց թերութե և այլափոխութե գրեալ կացեն, * ՟ձոց ։, փոխանակ գրելոյ՝ * ՟ձ ՟ձոց ։. և այլք զմթին կոչ- մունս անհասանելի, անպատմելի, անպարագրելի, ուս- նաբար յարմարեալ կացեն՝ի վե երիր մասին Ցիս՝ ա- սիոյ, եբրոպայ, և լիբիոյ ։ Ապա թէ ոչ՝նախ բագինն այն լինէր աւետնադից մեհեան, ոյ պանթէոնն հռով- մայ. և զիարդ առաքեալն՝ի բուն բագնէ բազմ՟ձուե ձեռնարկէր զմի ՟ձ ճշմարիտ. և երկրորդ՝ եթէ չլինէր՝ի մէջ չ՟ձոց ծանուցեալոց առ աթենացիս՝ մի այլ եզա- կան բագին ը անուամբ անձանօի ՟ձոյ, ոչինչ ազդէր բան առաքելոյն առ աթենացիս ։ Վա՛յ քալ ուղղափրկ զհերոնիմոս ստակեբերանն, այն՝ որ տեղեկապոյն և ա էր հնուեց աթենացւոց, երբ պարզապէս եզական անուն

ան-

անծանօթի ոյ հնդիատգրէ անդանօր . և պատճառ տայ զայս , թէ յետ հաւաքելոյ աթենացւոց պաշտօնատրաց թէ զդիս ամ ազգաց՝ խրճացեալ . թէ գուցէ կայցէ և այլ ոճ անծանօթ ինքեանց , յաւելին զայն բագին յանուն անծանօթի ոյ :

Ուղղագրելի է և կարծիք յայտաւուլոյց Հ. առեալ յանանուն յայն մատենագրէ , որում զհետ ջոքան և յուվք ի լատին գրչաց , ըր պետրոս կոմեստոր , հուգոն , աալմերոն , և գասպար սանկիոս , որպէս թէ ինքն իսկ դիոնեսիոս արխապագացին ևցէ տուեալ կանգնել զայն բագին յետ տեսանելոյ զնաւարտուածն սրեգական . որ է վրիպական իմացուճած դրելոցս ի մէնջ ըստ անվրէպ աւանդուածն , ըստ որոյ գոյր այն բագին յաթէնս յառաջ ջագոյն :

Իսկ թէ աթենացիք , մանաւանդ արխապագացիքն , էին ոչ միայն պաշտօնակիք անծանօթի ոյ , այլև սիրօվք թագուն գաղանեաց , և ծածկօվք զխորհուրդս ըստ խորին թագնուածք և լռութք , յայտ է յառածէն՝ որ կայր ի մէջ հելլենացւոց . * գաղանաւորիկ քան զարխապագացին || : Զայս գաղտնաբանութիւն տեսանէ ամ ոք և յընթացս դրոց դիոնեսիոսի :

(10) Խորհրդով պահեցաք առ զչարադրութիւն Հ. զի իմացին բանախանդիրք , թէ ուղղագոյն օրինակաց հետուսուեցի երևի ի նմա , քան յայնմ՝ զոր բերէ հիերոնիմոս աբբայ . իբր զի առ յետ պատմելոյ , թէ դիոնեսիոս ասէ լսելով ի սօղոսէ զբանն՝ որ յաղագս անծանօթին ոյ , հաւանեցաւ հաւատալ ի քս , ի վր բերէ . * ի
„ վաղիւ անդր՝ յորժամ դնայր սօղոս զճանապարհայն ,
„ կայր ոմն սկսաւ ի ձայն ուղղանաց պատսպել առ
„ նա . իսկ նք առաքեալն եդ զնշան խաչին ի վր աչաց
„ նր փակելոց ի ծնէ , և առէ . քս ոյն և վճպն ժէր ,
„ որ եդ կաւ ի վր աչաց ի ծնէ կուրին , և լուսաւոր-
„ րեաց զնա , նա ինքն իւրով զօրութք լուսաւորեսցէ
„ զքեզ : Եւ ընդ տեսանել նր վաղվաղակի՝ առէ ցնա .
„ Երթ առ դիոնեսիոս , և ասա նմա , թէ սօղոս ծա-
„ ռայի քի առաքեաց զիս առ քեզ , զի յուշ ածեալ
„ զնոսուսն քո՝ մի դանդաղեսցիս գալ առ նա . յոր-
„ մէ ընկալեալ զմկրտութի փրկարար՝ մարթասցիս ար-
„ ձակել յամ կապոյ յանցանաց : Իսկ այրն՝ որ լուսա-
„ ւորեցաւ , հպատակօրէն կատարեաց զբան հրամայո-
„ ղին . և փութապէս երթեալ առ դիոնեսիոս՝ կար-
„ գաւ պատմեաց նմա զբանս սօղոսի : Եւ դիոնեսիոս

,, ը կանխեալ ընդհատանէն, իբրև եաս գիտցին՝
,, զի տեսանէր, որ յապաղ զուրկ կը լի լուսոյ, ասէ
,, ցնա. գոհ եղեա այն, զոր ամ Աստուծոյ գիտեին կոյր
,, ծնեալ. դա եա պիտի. եա ինքն եմ, որ լի ծնէ կոյր
,, գաղափ ոչ տեսանէի յարգ զլոյս արևու. բայց պատրա՝
,, զորոյ բերի առ քեզ զիրկաւեա պատգամս, կարգաց
,, լով զզրուածքն յի քո վիշապին խորոյ, ընձեռեաց ինձ
,, զլոյս առողջութեան: Յայնժամ փառաւորեցեալ
,, նր հանդերձ ամ ասմբ խորով և գամարեաւ կինաւ
,, իւրով ... կանխեաց առ հրաման աչքն պղտոսի. և
,, հաւատացեալ լի բոլոր սրտէ, և լի բաց հերքել զը՝
,, մոլորութեանն հեթանոսաց՝ ընկալաւ զմկրտութեան շր
,, աւազանին ||: Որ թէպէտև մի և նոյն պատմութեի
է, բայց մեզ Տաճկ Թոճի համառօտագրութեի Հ, քան
զերկարաբանութեիս գիտասւոր գրչի՝ տարբեր Հանգա՝
մանք:

(11) Եպատաս գրէ ըզոս Հ. այն՝ զոր գրէ ոմն ի նախ
նեաց ի յունական հին օրինակի գրոց գիտնեսխոսի,
այսպէս. * Գիտելի է, զի ոմանք յարատաչին խմատա՝
սիրաց, և առաւելապէս պղտկոյս, բազում անգամ
,, ի կիր արկանեն զտեսութեիս երանելոյն գիտնեսխո՝
,, սի, և այն՝ նովիմբեք իակ մերկ բառիւք: Յորմէ՝ ի
,, զէպ է խմատասիրել, թէ յաթենս հնագոյնքն յի՝
,, մատատեալ իւրացուցեալ զնր գործս՝ ծածկեցին ||:
Ընդ ոսանաեէ կարծեաց Հ. և Յ, որ վ կատարման
սիշն յաթենս, այն՝ զի հալոյս համարի, լէ ասեն
ցիւ յետ զքձանալոյ ը գատապարտել իւրեանց զտկրատ
վն ինգրոց հատատոյ, յնցեն այնուհետև հեգել զարեւն
ուրուք վն հատատոց, զի և յետ քաջաքս գտանին ասե
մատարերոք, բաց յաթենայ: Ասյլ այդ բազում գնոռ՝
թէ կարօտի. Թող զի ը վկ. Լ. յնցեն քանի մի մար՝
տերոք նահատակեալ յաթենս:

(12) Թէպէտև յնցեն միտաս նաև գաղտնացեք ի վաղ
ժամանակաց հետէ վն բանիցս այսոցիկ, բայց արժան
է լսել գհնինական խոռզրկութեի գիտնասւոր աբբային
հիւդոբինոսի՝ ի ե գարս, ուռնելով բանին այսպէս.
* Հաղագս վախձանի գիտնեսխոսի արիստագոցոյ ոչ
,, ինչ ասացին յոյն մատենագիրք. զի ան հեռաւորաե
,, Տաց՝ կատարտ ին նր խոպան անձանօթ եղև նոցա:
,, Բայց ուշիմք գյունական վկայաբանութեի՝ առեալ ի
,, Հատորոյ գիմանագրութեց կոստանդնուպոլսոյ, որ
,, այնչափ հնութեի է քաջայեալ, մինչև բազում զգու՝

,, ջուրձ սկսաք են մերձենալ յայն . յորում գտանեմք
,, նշանակեալ զօր կառավարման նր . և զի էր եպս աթե-
,, նացւոց (որիշ՝ ի դիոնեսիոսէ եպսէն կորնթացւոց)։
,, Եւ այս վկայաբանուրձի , ոչ հնուրձի նր քաջ ցուցա-
,, նէ , ոչինչ տարագէպ թուի մեզ լինել ՝ ի ժամանակէ
,, անտի յայնմանէ , յորժամ հրամանաւ կոստանդիանո-
,, սի՝ ըստ յայտնի առնին վկայուրձիք սրց ոմն յամ սիե-
,, զերայց հաւաքեցան (՝ի ձեռն եւսեբի կեսարացւոյ),
,, և բերեալ եղեն ՝ի կեսարիա ։ Ալև մինչև ցայսօր
,, ծերք յունաց և բնակիչք աթենայ վկայեն՝ ՝ի դրու-
,, թէ պատմուրձեց և ՝ի յաջորդուրձէ աւանդուրձեց
,, ուսեալք , թէ ՝ի քաղաքի անդ առաջին եպս էր նա ,
,, յորժամ տիմոթէոս նոյնպուռնակ աշակերտ պօղոսի
,, զեփեսացւոցն հովուէր զաթոռ . և թէ՝ եդեալ նորա
,, զոմն ՝ի տեղի իւր եպս՝ ՝ի հռոմ չդաւ . և ոչ իրա-
,, ղեկ եղեն՝ յազգի աստ գաղղիացւոց կատաբեցաւ փա-
,, ռաւոր վկայուրձիք ։ Ջոր և թարասիոս պատրիարգ
,, կոստանդնուպօլսոյ ՝ի ձեռն նոէիրակայ իւրոց հե-
,, տաքննեաց ։ Ապա ակամն հիլդուինոս խոսել ըզեմ
այնոցիկ յազգայնոց իւրոց , որք ոչն հաւատային , թէ
արքեպսգացին էսկ դիոնեսիոսն պատուհեալ ՝ի մէջ իւ-
րեանց . և զգրիգորի տուրունեցւոյ ինչ ինչ վրիպանս
՝ի պատմականն՝ պարզմտուրձիք նորին անքաւիր առնէ ։
Դարձեալ գրէ հիլդուինոս ՝ի թուղթն ջրջաբերական՝
որ եդեալ կայ ՝ի սկիզբն վկ . դիոնես . արքեպսգացւոյն ,
այսպէս . * Կարևոր համարեցայ և յայտ մատին ընդ
,, քիրսն մտանել սակաւուք՝ առ ՝ի տալ տեղեկուրձիւն
,, վը ընթացից կենաց , և քարոզուրձեան , և ՝ի հռոմ
,, գալստեան , ոչ և վը բազմայաղթ վկայուրձէ երից
,, երանելւոյն դիոնեսիոսի . որ առաւելապէս ՝ի յու-
,, նաց պարծանակեալ պատմուրձիս և ոչ թէ թաղէ ,
,, ՝ի նախնեացն արկեղս առ լատինս ոչ սակաւ մասամբ
,, ծածկեալ պահիւր , ՝ի լոյս հանել օգնականուրձէն
,, քրի ։ ։ ։ ։ Եւ արդ վերծանեսցեն (ընթերցասէրք)
,, զշշմարիտ բանս գ՝ի շշմարտապատմից գրեալս զնմա-
,, նէ , և պարզապէս ՝ի մի հաւաքեալս (՝ի մէնջ) հա-
,, ւատարմուրձէ . և եթէ ըստ մերս անգիտուրձի զյարեա-
,, ցին , ՝ի նախնեացն յիշատակարանս ընթացցին . զի
,, մէք ոչ զմեր ինչ , և ոչ զնոր ինչ արձանագրեմք , այլ
,, զհնոց զհին ասացուածս յիսպառ ծածկել մատենից
,, ՝ի գուրս հանեմք . և շշմարտուրձն պարզուրձի պա-
,, հեալ՝ յայտնագոյն ոճով ՝ի գիր գրոշմեմք ։ Եւ որպս

„ կարծեմ, ոչ ուրեք ի միում ունայնացդ գիտնարանիկալ
„ երևեսցին այսոքիկ՝ յայտնապես անգիտաց լինելոյ սոցին
„ յառաջ ժամանակաւ, երբ քակ գիտեն, թէ որ ա-
„ րարն զամ ինչ միանգամայն, ոչ կամեցաւ զամին և
„ ոչ ամենեցուն յայտնի առնել համանգամայն։ Եւ
„ դարձեալ՝ բազում ինչ յայտնիք՝ ծածկեցան ժամա-
„ նակաւ. քանզի պարտ է յուշ ածել զգրեալն յամօթ-
„ ղէն տառս վա՛ գրոցն օրինաց, թէ ըստ երկար ժամա-
„ նակս ծածկեալ կայր, և անդրէն վերստին գտաւ. որ
„ էր զարմանալոյ արժանի։ Եւ եթէ առ դանիէլ,
„ անցցեն (կամ ուսցին) բազումք, և բազմացի գի-
„ տութիւն, որչափ և առաւել ջանի ոք ժխտել, թէ
„ յակնարկել բազմաց յուղեկցաց այլ ուրեք, տարտամ
„ ոք կամ յամրընթաց լեռնաքայլ չկարէցէ գտանել զկո-
„ րուսեալն ի ճանապարհի, զոր յառաջընթացքն կո-
„ խեցին և անցին ||։ Գեղեցիկ և լի իմաստութեամբ են
բանքս. որ և ի բազում իրս պիտանի, այլ առաւել ի
վարս և ի գործս դիոնեսիոսի։ Արդ զառանդս գալստեա-
ւոյ ընթացն՝ առաւել ի բանից այսր հեղինակի քալե-
ցաք, հայելով և յայլս ի յունաց և յարևմտեայց։
(13) Ընթացն դիոնեսիոսի ի հռոմ ճշտատես հիւղ-
ծինոս նաև վկայութիւն արիստարքոսի հին Ճմիագրի
յունաց ի Թուղթն առ անեսիփորոս. ոչ և զգնալն ի
գաղղիա հաստատէ ի յունացն աւանդութէ։
Բան սկզբն դիոնեսիոսի ի նշանակեալ տեղիդ այս է.
* Եւ զի Թուէեցաւ ոմանց առ ի մէնջ սրբազնաբանից՝
, ածայնագոյն գոլ զտարփմանն անուն քան զսիրոյն.
, գրէ իսկ և ածայինն իգնատիոս, իմա տարփուճն խաչ-
, չեցաւ ||. այն բան է ածագղեցին գրեալ առ հռոմ-
մայեցիս փոքր մի յառաջ քան զնահատակութեն իւր։
(15) Ջնոյնպիսի պատճէնիս ի վեր բազմաց ի տեղ վկայից
լեալ՝ հաւաքէ յերկար հալէոյէս յունեան. գլ. ն. ծան.
ը. երես. 169։ Որ և զօրինակս վն հալորդելոյ երկ-
նային տեսլեամբ. ի գլ. ժԹ. ծան. ձ։ Բայցեմ և
այլ բանք են առ նմա. այլ եթէ ի ձեռս անկցի ուրուք
հատորն բոլանդեանց, յորում փակի 9. որ հսկա.
տեսցէ՝ թէ միաձայնիւն արդեօք, եթէ ոչ, հալէոյէս և
ընկերք նր բոլանդեանք։ Մեզ շատ լեցին՝ զոր հաւաք-
քեցաք ի միաձայնութէ բազմաց։

ՎԿԱ-

Վ. ԿԱ. ՅԱ. ԲԱ. ՆՈՒԹԻՒՆ

Սբ առաքելոյն Տիմոթէի աշակերտին պօղոսի ։

Հ. Յ. յունվար. 22 ։ Լ. յունվ. 24 ։ Ճառ-
ընտիր. Բ. Տհր = Տյա. Ա. Օ. Ճ Ճ Բ = Ճ Ճ Ե ։
Բոլլանդ յովհաննէս. 'ի Բ հատորն. յունվ. Էջ.
562 — 569. 'ի պողէկրատէայ, 'ի մետափրաստէ-
սէ. Լա ։ (1)

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ կոչմամբ ըն անուանն ընտրել և պատուեալն յայ, և որդեպս սիրեցեալն 'ի պանծալի վդպէն հեթանոսաց՝ երանելի առաքելն տիմոթէոս՝ էր 'ի լիւստրայ քաղաքէ լիկայոնացւոց, որդի հօր հեթանոսի հելլենացւոյ, որոյ անուն ոչ յիշի (զի կարծի մեռեալ 'ի հեթանոսութեն), և մօր հրէի այրւոյ՝ որ կոչիւր եւնիկէ, ցր բարեյաղթ, և ըն մօր իւրում ցր հանւոյն տիմոթէի՝ կոչեցելոյ լօոդէ կամ լօիս (2), ջերմեռանդն հաւատով աշակերտեալ էր քնի 'ի ձեռն նբյն պօղոսի ։ Որոց օրինակաւ և ինքն տիմոթէոս յարեցաւ 'ի պօղոս յառաջնում գալստեան նր ըն բառնաբայ 'ի լիւստրա. և մկրտեալ 'ի նմանէ՝

աշակերտեցաւ աւետարանին ։

Եւ էր յայնժամ տիմոթէոս պատանի տիօք, բայց իմաստուն մտօք և հեզ բարուք, սնեալ 'ի մանկութէ 'ի ձեռս մօրն և հանւոյն 'ի բարի վարս, և կրթեալ 'ի նբ գիրս. մինչ զի վկայեալ էր առաքինութի նր 'ի լիւստրացւոց և յիկոնացւոց ։ Բայց միայն վ՞ն անթլփատ գոլոյն խորշէին 'ի նմանէ հրէայք իբրև յորդւոյ հեթանոսի. վ՞ն և պօղոս 'ի միւսանգամ գալստեան իւրում 'ի լիւստրա՝ առեալ թլփատեաց զնա, զի համարձակ մուտ ունիցի և 'ի ժողովուրդս հրէից ։

Եւ ապա տարաւ զնա ը՞ իւր զոյգ ը՞ շիղայի 'ի քարոզութի՞ աւետարանին. զի տեսանէր զնա արժանաւոր առաքելական շնորհի, վառեալ 'ի գործ տ՞ն, և փոյթ 'ի բարեպաշտութի՞ն քն՞ի. մինչև քաղցր արտասուօք իւրովք 'ի լուր բանիցն պօղոսի և յաղօթսն տ՞յ՝ ուրախ առնել և զվ՞դպն իւր. որ և յիշատակաւ նորին պարարէր յոգւոջ, և խանդաղատէր զնովաւ ոպ՞ զսիրելի զաւակաւ՝ 'ի մօտոյ և 'ի հեռուստ. ը՞ որում ասէ և 'ի թուղթն առնա. * Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք, ողորմութի՞ և խ՞ղղութի՞ ... Ընպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ զցայգ և զցերեկ. ցանկացեալ եմ տեսանել զքեզ՝ յիշատակեալ զարտասուսն քո, զի լցայց ուրախութ՞ք, զմտաւ ածեալ զանխիղճ հաւատսն՝ որ են 'ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ 'ի հանոյ քում լաւոդեայ, և 'ի մօր քում եւնիկեայ. հաստատեալ եմ՝ թէ և 'ի քեզ է ॥ ։

Ըրդ

Արդ որ այսպիսի ջերմ հաւատով վառեալ
երանելին տիմոթէոս՝ եթող զտուն իւր և
զազգատոհմ վ՚ս քս՚ի, և չոքաւ զհետ ն՚բյն
պօղոսի, 'ի սկզբան անդ դտաւ իբրև պաշ-
տօնեայ կմ ոպ՚ որդի սիրելի, և ապա իբրև
պաշտօնակից կմ ոպ՚ եղբայր հաւատարիմ.
զի ո՛ւր և շրջէր վ՚դպն հեթանոսաց և հայր
համատարած ը՚ ոլորտս տիեզերաց, և ա-
ռաւելապէս յասիա՝ յելլադա և յիտալիա,
ը՚ նմա էր և տիմոթէոս, կցորդ քարոզուե՚
ն՚ր և հալածանաց վ՚ս աւետարանին։ Իւ
բազում այն էր, զի իբրև նո՛ւիրակ ն՚ր ըն-
թացեալ 'ի տեղիս տեղիս՝ տանէր զկենդա-
նի պատգամս նորին կմ զա՚ծաշունչ թուղթս.
որ՚պս և երբեմն իբրև մտերիմ խորհրդակից
պօղոսի և առաքելակից՝ գրիչ լինէր առաքե-
լական թղթոց զոյգ ը՚ նմա։

Սմին իրի՝ ասեն ճառընտիրք, սիրեաց զնա
պօղոս ը՚ անձին իւրոյ, որպէս էր զգաստ և
քս՚ասէր. և ձեռնադրեաց զնա ե՚պկս եփե-
սացւոց քաղաքին. և կացոյց զնա անդ վ՚ս
տեղւոյն բարեխառնութ՚ն. զի կազմութ՚բ
մարմնով հի՛ւանդոտ էր՝ քաջառողջն և յոյժ
առաքինին ը՚ հոգւոյ. վ՚ս հոգայր պօղոս
զնմանէ, և գրէր թուղթ առ նա խրատա-
գիր՝ հայրական գթով. և զկնի բազում
պատո՛ւիրանի զգուշանալ հրամայէր նմա վ՚ս
ստամոքսին սակաւ գինեակ խառնել. զի
ներգևեալ էր 'ի բազում պահոցն, և խա-
չակցեալ ը՚ քս՚ի։

Գրէ պողիկրատէս ե՚պս եփեսոսի 'ի վախ-

ճան երկրորդ դարուն, թէ նբն տիմոթէոս
եղև առաջին եպս եփեսացւոց յաւուրս կայ-
սերութեան ներոնի, և 'ի վերակացութեան մաք-
սիմոսի փոխանակի բդեշխի ասիացւոց. և
անդ 'ի գործ արկեալ զվդպութիւն ճշմարտութեան
հանդերձ զօրութեամբ նշանաց, արար բժշկու-
թիւս և գործս մեծամեծս 'ի վեր քան զմտա-
ծութիւն մարդկեղէն խորհրդոց. զնոյն առ-
նէր և յայլ բազում տեղիս առաքելական
քարոզութեամբ: Այս է ասելն ճառընտրաց.
բազում սքանչելագործութիւնք արար նա 'ի
բազում գաւառս, և զբազումս լուսաւորեաց
բանիւն կենաց. շինելով եկեղեցիս, և ձեռ-
նադրելով քահանայս, հանապազորդ յա-
ւելլով 'ի պաշտօն տն ժողովուրդ՝ անթիւ
բազմութիւն, երկրորդ լուսաւորիչ տիեզե-
րաց զկնի մեծին պօղոսի գտաւ ծի:
Եւ յիրաւի՝ զի ըստ գրելոյ պողիկրատեայ,
ոչ միայն մեծին պօղոսի կցորդ եղև երանե-
լին տիմոթէոս, այլև ածաբան աւետարան-
չին յովհաննու 'ի գալ նորա յեփեսոս յետ
փոխման տիրամօրն. յորմէ և աթոռն տիմո-
թէի անուանեցաւ 'ի փառաւոր անուն աւե-
տարանչին յովհաննու: Եւ յորժամ յետ կա-
տարման պետրոսի և պօղոսի առ ներոնիւ,
աքսորեցաւ և յովհաննէս հրամանաւ դոմե-
տիանոսի 'ի պատմոս կղզի կիկլադայց, նախ
քան զդարձ նր յաքսորանաց յաւուրս ներ-
ուասայ՝ 'ի նոյն աւուրս նահատակեցաւ և
երանելին տիմոթէոս ը օրինակիս ը այսմիկ:
Գոյր յեփեսոս հեթանոսական գարշ սովո-
րու-

րութիւն, զի 'ի պատիւ պիղծ չա̅ծուհւոյն արտեմեայ, ց̅ր̅ անահիտայ, զոր եփեսացիք համարէին փառք և պարծանք իւրեանց, առնէին ամ ը̅ն̅ ամէ զաւուրս քանի մի զտօն նը̅՝ անուանէ̅ գադաղօղիոն, այս է պանդոկական. յորում յետ հրապարակական զոհից՝ առնէին զհրապարակն իբրև զպանդոկ խուռն ժողովելոց յարանց և 'ի կանանց, ուտէին և ըմպէին և խաղային խենեշաբար. և ծածկեալ զերեսս իւրեանց պատրուակօք և դիմակօք առ 'ի չճանաչելոյ՝ թէ ո՞ ոք իցէ, գործէին զլցեալսն ա̅մ անարժանութ̅ը̅. թող զցետմունս և զարեան ճապաղիս 'ի պաշտօն

պղծութ̅ե̅։

Ս այսպիսի յետին վատթարութ̅ի̅ հեթանոսաց բազում անգամ կշտամբէր ն̅ը̅ առաքեալն տիմոթէոս, այլ նը̅ ոչ կասէին 'ի չարեացն. ապա 'ի միում նուագի՝ իբրև դարձաւ ն̅ը̅ն 'ի քարոզութ̅է̅ այլոց քաղաքաց, և եկն եմուտ յեփեսոս, տեսեալ զքաղաքն ողջոյն յայնպիսի դիւական տօն պարապէ̅ը̅, ոչ կարաց հանդուրժել. այլ եդեալ զանձն 'ի մահ՝ դիմեաց 'ի հրապարակ անդր, ուր զգարշութ̅ի̅սն գործէին իբրև օրէնս հայրենիս. և հայեցեալ ը̅ն̅ն̅՝ լի արտասուօք լինէր. աղաչէր զն̅ն̅, մաղթէր 'ի բաց կալ նց̅

յայնպիսի մոլորական խաբէութ̅է̅ն։

Իսկ նց̅ զչարեալ ը̅ բանս նը̅՝ խուռն ամբոխիւ՝ 'ի վ̅ր̅ յարձակեցան ն̅ը̅ առաքելոյն բրովք և քարամբք, և որ ինչ 'ի ձեռս էր իւրաքանչիւրոց. և այնպէս անխնայ հարին զնա,

մին-

մինչև բարձաւ իբրև զմեռեալ յաշակերտաց անտի իւրոց. և բերեալ 'ի լեառն մօտակայ՝ անդ աւանդեաց զհոգին 'ի ձեռս տ̄յ։ Ուր ժողովեալ այլ ևս բազմութեան քրիստոնէից՝ պատեցին զպատուական մարմին ս̄բ̄յն մաքուր կտաւովք, և ջահիւք լուցելովք և բուրմամբ խնկոց եդին 'ի տապանակի միում. և բերեալ Թաղեցին 'ի տեղւոջն՝ որ կոչիւր պիոն, (կամ ը̄ յունաց՝ բի՛օն, որ Թարգմանի պարարտ,) յայնկոյս նաւահանգստին որիոյ. ուր և յետոյ շինեցաւ վկայարան յանուն սբ̄յն։

Եւ եղև կատարումն ս̄բ առաքելոյն տիմոթէոսի, ը̄ ասիացւոցն հաշուի՝ յամսեանն չորրորդի՝ յաւուր երեսներորդի, յաւուրս պերեգրինոսի անթիպատոսին ասիոյ. յամի տ̄ն իբր 96. այն է վերջին ամ դոմետիանոսի, և առաջին ամ ներուասայ կայսեր, յամսեանն յունվարի, որ օր իբ̄ էր ամսոյն (ը̄ ոմանց՝ ի̄ա. կամ ի̄դ)։ (3)

Իսկ յետ ժամանակաց՝ 'ի դադարել հալածանացն, և 'ի հաստատիլ հաւատոյ քրիստոնէութեան, յաւուրս կոստանդեայ կայսեր որդւոյ կոստանդիանոսի (յամի տ̄ն իբր 356, կմ 358) գնացեալ արքունի հրամանաւ արտեմիս փառաւոր պատրիկն (որ նա ինքն է արտեմիս վկայն նահատակեալ զկնի առ յուլիանոսիւ) 'ի տապան ս̄բ առաքելոյն տիմոթէի յեփեսոս, եբարձ անտի զպատուական նշխարս ն̄ր, և եբեր պատուով 'ի Թագաւորեալ քաղաքն 'ի կոստանդինուպօլիս. ուր

եղաւ մեծասիւս փառաւք լինդ նշխարաց նոցին
ղուկայ , և սքոյն անդրէի ի վկայարանի նոց
առաքելոց , փայլեալ նշանօք և զօրութիւք
ի բարուքի հաւատացելոց ։

Օ՜նոյն գայն եկեղեցի՝ որ կոչիւր նա առա-
քեալք , մեծացոյց յետոյ , և հոյակապ շին-
ուածով պայծառացոյց մեծն յուստինիանոս
կայսր . այլ անշարժ եթող զսեղան նոր խոր-
հրդոյն . և ի մէջ տաճարին կանգնէ զայլ
խորան արծաթի՝ անդ ամփոփեաց զնշխարս
նա առաքելոցն , որ յառաջն ծածկեալ էին
ի տեսուքէ և իբր անյայտացեալ . քայց
յայնժամ ի բրել զտեղին՝ գտան յառան-
ձին տապանս իւրաքանչիւր յանուանէ . ոմն
գրէ պրոկոպիոս ժամանակակից . գէդ . ա .
յղ . ղէն . յուստ ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ։

(1) Յրեք գլխաւոր վկայաբանութիւք կան սքոյն տի-
մոթէոսի՝ միաձայնութիւք իրերաց ու էութեն . որոց ձայ-
նակցին և յայսմաւուրք և յետինք առ հասարակ ։ Ընդ-
ջինն ասի լինել գործ պողիկրատեայ եպսին եփե-
սացւոց՝ առն երևելւոյ ի ք և ձ գարու յաւուրս սկե-
բտոսի կայսեր . զոր քաղէ և փոս ի մոփէնափր . մ֊ր . առանց
անուանն հեղինակի . գտանի և յայլ հին մատեանս ին .
և լտ . զոր և իբրև հարազատ գործ պողիկրատեսի ջատա-
գովէ բոլլանդ ու կարի ։ Երկրորդն է Ճառընտրեալ մե-
ծոյ , որ է հետևողութիւն սքոյ գրոց , միանգամայն և պո-
ղիկրատեայ և այլոց ինչ ինչ նախնեաց , համառօտ և կար-
գաւորեալ ոճով , Երրորդն է մետափրաստեսի . որ
զնոյն բանս ձոխացուցանէ ճառօրէն ու իւրումն կեր-
պի , ի վէր ածեալ և զփոխադրութիւն նշխարաց ։ Եւ

ասա

ահա ՚ի սոսին ակնարկէլով և մէր՝ գրեցաք զոր գրե-
ցաքն ։

(2) Ընուն հանուայ, ըն մօր մօրն տխմրէեոսի յուզա-
կանն կոչի առ յոյնս լօիս, որոյ հոլովականն լօիսի ,
առ լատինս գրի լօիսէ, և ՚ի մէզ լատոդէայ ,
նմա եդեալ ա՛ փիկ հնչմանս ։ * Ցաքտնամբ (ասե
,, բուլանդ), զի երկու այս սքէ կանայք լօիդէ և եէնի-
,, կէ ցգտանին ՚ի տօնացոյցս սքէց՝ ոչ առ յոյնս և ոչ առ
,, լատինս ։։ Բայց յայս է Թէ ոչ միայն չհան առան-
ձին պատմուԹիւք կատարման նշ , այլ եդեալ և՛ Թէ
շատ էր գովուԹիւն առաքելոյ զնոցանէ , բաղուձ և այլ
սքէ պահանչն ՚ի տօնացոյցս ամ ազգաց ։ ՚ի դէպ եկէշ
առ եաեղ սխնուայ նորին բուլանգայ՝ առ այնոսիկ , որք
ասէնն՝ Թէ զնորէ եւսեբիոս և Հերունիմոս չխիեն զայս
վկայաբանուԹիւն Ը այլ գրուձածս ինչ պտկերասեայ ։
քանզի բարւոք ասէ ։ * Նորա նաև զայլ գործովք այ-
,, լոց մատենագրաց զանց առնեն ։։

(3) Ջկատարուձիւն սքէն տխմրէեոսի պտկերասեա և
այլք ՚ի վկայաբանիկ գնեն յաւուրս Ներուսեայ ։ որոյ
փոխան ՚ի Հռոմ գնալ և առ ոմանս ՚ի լատինաց-
ւոց վրիպակաւ գրեալ է Նէրան ։ իսկ գնէշն մեռա-
փաասեսի և այլոց ոմանց առ գոմէսխանոսիճ , Հայլ
՚ի վերջին ամ՝նր Ը փոասյ ։ որ և առաջին ամ՝ներուս-
սայ ։ Ջ ։ և Ց ։ ոգ և ոմանք ՚ի լատ. զօրն գնեն իբր յոն.
վարի ։ իսկ Ճ ։ իե ։ այլ առ լատինս հարիօրեն՝ իբ ։
Ցծոդ զի են առանձին վկայաբանք՝ որք յիշեն զոմն սքէն
՚ի մայիսի ։ Ժէ ։ կէ յօգոստս ։ իբ ։ և կէ ՚ի սեպտ ։ իէ ։ որ
եԹէ չկոՀ չհոՀուԹիւն Ը այլ համանուն սքէ , խառնէ-
ե Ը առաւ փոխագրուԹիւն նշխարաց զոր ՚ի մայիսի 9։
կատարեն լատինք , գրեալ ըստ սովորական օրինա-
կաց ։ * ՚ի կոստանդնուպոլիս ՚ փոխագրուԹիւն սքէց՝
,, անդրէձ առաքէլոյ , և զուրկայ աԹեսպասնչի յաքոբեայ,
,, և սխմէեոսի աշակերտի երանելւոյն պօղոսի առա-
,, քելոյ կիպրոսի ։։ կամ Ը օրինակին ագռիկի , բե-
գայի , և այլոց ։ * ՚ի կոստանդնուպոլիս յիշատակ սքէն
,, սխմէեի , յորժամ կիպրոսի անգր բերեալ եղեն սքէ
,, սակերք ։։

ՎԱՐՔ ԵՒ ՀԱՆԳԻՍՏ

Սբ՞ առաքելոյն Տիտոսի ։

Հ. յուլ. 29 ։ Յ. օգոստ. 25 ։ Լ. յունվար. 4 ։
Ճառընտ. Բ. մհէ = մհբ. և Զ. ճխէ = ճծբ ։
Բոլլանդ յովհաննէս. 'ի ա՞ հատ. յնվ. էջ. 163 ։
Պետրոս նատաղէան. օգոստ. 25 ։

ԵՐԻՑԱԳՈՅՆՆ ՅԱՇԱ-
կերտս պօղոսի՝ ն՞բ առաքեալն
Տիտոս, էր 'ի թուՀոյ աշակեր-
տաց վաղագոյն դարձելոց 'ի հե-
թանոսուէ (ը՞ գաղատ. բ. 1. և 3.). մինչև
թուՀել զնա ոմանց ը՞ եօթանասուն և երկու
աշակերտս քն՞ի (1). ազգաւ և քաղաքաւ կրե-
տացի, այլ կարծեցեալ 'ի տիտոսէ յուստոսէ
կորնթացւոյ. վերապատուՀեալ 'ի ն՞բյն պօ-
ղոսէ ք՞ զա՞մ աշակերտս և զգործակիցս իւր.
զոր թէպէտև 'ի թուղթն առ նա խանդաղա-
տանօք կոչէ որդի իւր սիրելի (տիտ. ա՞. 4),
բայց 'ի թուղթն առ կորնթացիս՝ է՛ զի եղ-
բայր իւր անուՀանէ (բ. կոր. բ. 13). և է՛
զի 'ի վեր քան զանուն եղբայրուն՞ պատուՀա-
սիրէ զնա, ասելով. * Բայց շնորհք ա՞յ՝ որ
արկ զնոյն փոյթ վ՞ն ձեր 'ի սիրտ տիտոսի. զի
զաղաչանսն ընկալաւ, և փութացաւ յօժա-

բա-

բագոյնս դիմեաց գալ առ ձեզ . և առաքեցաք ընդ նմա զեղբայրն՝ որոյ գովութիւնն յաւետարանի անդ է ընդ ամ եկեղեցիս . . . Այլ եթէ վ՛ս տիտոսի ինչ բանք են , իմ հաւաստար է՝ և ձեր գործակից . և եթէ եղբարք մեր՝ առաքեալքն եկեղեցւոյ , և փառք քրի ‖ . (ք . կոր . ը . 16 . և 23 :) Այս դարձեալ՝ թէ * աղաչեցի զտիտոս , և առաքեցի ընդ նմա ,, զեղբայրն . միթէ ագահեաց ինչ զձեր տի- ,, տոս . ոչ նովին ոգւով գնացաք , ոչ նովին ,, շաւղօք շրջեցաք ‖ :

Յելանել պօղոսի յեկեմ զառաջինն ընդ բառնաբայ՝ ընդ նմա էր և տիտոս (գաղ . ք . 1) . ապա առաքեցաւ՛ի նմանէ , և առաքելաբար շրջեցաւ մինչև՛ի դաղմատիա (ք . տիմ . ճ . 11) . Թողաւ զկնի՛ի կրետէ իբրև ենթս այնր կղզւոյ (տիտ . ա . 5) . և դարձեալ հրաւիրեցաւ՛ի նմանէ՛ի նիկոպօլիս (տիտ . ճ . 12) : Օ՛ի այնպէս կախեալ էր ոգի նր զնմանէ՛ի քարոզուընե աւետարանի , մինչև ասել . * Այլ իբրև հասի ես՛ի տրովադա յաւետարանն քրի , և դուռն բաց էր ինձ՛ի տր , ոչ եւս հանգիստ հոգւոյ իմում . քանզի ոչ գտի ես անդ զտիտոս զեղբայր իմ . այլ հրաժարեալ՛ինոցանէ՝ գնացի՛ի մակեդոնիա ‖ :

(ք . կոր . ը . 12 . 13 :)

Ոչ զայլ գործակցուիս՛ի քարոզուընե աւետարանի , ասի յոմանց ընդ հերոնիմոսի , թէ տիտոս էր նաև թարգման պօղոսի , ոյր մարկոս պետրոսի , եթէ՛ բանիւ և եթէ գրով . զի թէպետև պօղոս ինքնին գլխաւորն ունէր

ըզ-

զշնորհս լեզու՛աց, և առաւել պերճախօս էր յեբրայական բարբառ, այլ տիտոս իբրև անդստին սնեալ 'ի հելլենական ուսմունս՝ քաջ թարգմանէր 'ի լեզու յունական զոգի պօղոսի որ յեբրայականն։

Միաձայնի ը̄ այսմ ա̄մի և առանձին վարք տիտոսի 'ի սկզբանէ դարձի իւրոյ մինչև ցըվախճան. որ ասի գրեալ զառաջինն 'ի զինասայ, ֆ̄ 'ի զենոնէ օրինական դպրէ յիշատակելոյ 'ի թղթի անդ պօղոսի առ տիտոս. (տիտ. գ̄. 13.) ուստի առնուն և վկայագիրք առհասարակ, և առաւել ճառընտիրք մեր՝ ը̄ առաջիկայ օրինակիս։ (2)

Տիտոս էր 'ի կրետէս կղզւոյն, յոյժ բարեբարոյ և մեծազգի, եղբօրորդի արքային մինովսայ թագաւորին կրետայ (3). և էր ուսումնասէր յոյժ, և ցանկայր ուսանել զիմաստասիրական գիրս, զհելլենական դըպրուի̄, և զհանճար հոմերոսի և զպղատոնի, և զնոցին նմանեաց իմաստասիրացն զստորոգուի̄ս։ Եւ էր այնուհետև ամաց քսանից. և լու՛աւ ձայն յումեմնէ յաներևութից, որ ասէր ցնա. Տիտո՛ս տիտոս՝ պա՛րտ է քեզ ելանել աստի, և կեցուցանել զոգիդ քո. զի ոչին չ է օգուտ քեզ ուսանել զգիրս հոմերոսի և պղատոնայ, զոր խորհեալդ ես։ (4)

Եւ նա 'ի զարմացման եղեալ՝ սկսաւ այնուհետև ընթեռնուլ զգիրս մարգարէականս. և առեալ զգիրս մարգարէին եսայեայ՝ եբաց զայն տեղին, յորում գրեալ էր. նորոգեցարո՛ւք առ իս կղզիք. և խփեալ զգիրսն՝ գի-

տաց,

տաց, եթէ եղև առ նմա շնորհք իմն ա̅ծային։
Եւ իսկոյն եղև լուր համբաւոյն քս̅ի առ
թ̅գ̅ւորն մինոս, և ծաւալեցաւ յա̅մ կղզին
կրետայ նշան սքանչելեացն՝ զոր առնէր քս̅
յ̅ե̅էմ։ Զարմանայր թագաւորն, և ցան-
կայր տեսանել զքս̅. ոպ̅ եդեսացւոց քաղա-
քին աբգար թագաւորն։ Եւ խորհուրդ ա-
րարե̅լ ը̅ի̅ շխանս կրիտիսոյ՝ առաքեաց զեղ-
բօրորդին իւր զտիտոս յե̅է̅մ, և ը̅ նմա սուր-
հանդակս և արս իմաստունս՝ տեսանել զքս̅
և զսքանչելիսն զոր առնէր. և զի դարձեալ
պատմեսցեն նմա ստուգութ̅ զա̅մ։
Եւ յորժամ գնաց տիտոս յե̅է̅մ, ետես զքս̅,
և երկիր եպագ նմա. և ականատես եղև
սքանչելեացն՝ զոր առնէր քս̅ յե̅է̅մ. և գրեաց
ստուգութ̅ առ թագաւորն վ̅ս̅ քս̅ի. և առա-
քեաց զիշխանսն և զսուրհանդակսն 'ի ձեռն
թղթոյ առ հօրեղբայրն իւր։ Եւ ինքն ան-
դէն մ̅նաց յե̅է̅մ՝ յարեալ յաշակերտսն տ̅ն.
և ականատես եղև չարչարանացն քս̅ի և խա-
չելութ̅ն և մահուն և թաղմանն և յարու-
թ̅ն 'ի մեռելոց և համբարձմանն յերկինս։
Եւ 'ի գալստեան ս̅բ հոգւոյն՝ 'ի վերնա-
տանն ը̅ ս̅բց առաքելոցն էր տիտոս. և թու̂ե-
ցաւ 'ի թիւ̂ եօթանասուն և երկու աշակեր-
տացն տ̅ն. կմ ոպ̅ այլ օրինակագիրք ունին,
համարեցաւ 'ի թիւ̂ հարիւր և քսանիցն։ (5)
Իսկ 'ի հաւատալն պօղոսի 'ի քս̅, 'ի կեսարիա
պաղեստինացւոց ձեռնադրեցին առաքե̅լքն
զտիտոս ե̅պկս, և առաքեցին ընդ պօղոսի 'ի
քարոզութ̅ի ը̅հանուր տիեզերաց. որք եր-

թեալ աւետարանէին զքն յամ քաղաքս և
'ի գաւառս, և սերմանէին զբանն կենաց ։
Եւ բազում տանջանս և նեղութիւն կրեալ
համբերեցին վն անուանն քնի, և լուսաւո-
րէին մկրտութիւն զբազումս. և անբաւ առ-
նելով նշանս և արուեստս մեծամեծս՝ այնու
հաւանեցուցանէին հաւատալ 'ի քն. և ան-
թիւ բազմութիւն հաւատացելոց հանապազ
նուիրէին այ ։
Եւ երթեալ 'ի կրիտիս կղզի՝ կացոյց պօղոս
զտիտոս եպկս դորտինայ քաղաքին, որ էր
նր իբրև ժառանգութիւն իմն հայրենի (6) ։ Եւ
անտի ելեալ եկին յասիա և յեփեսոս. և
մտին 'ի քաղաքն, և սկսան քարոզել զաւե-
տարանն փրկութեան. և բազում հիւանդաց
դնէին ձեռս, և կարդալով զանուն տն յսի՝
առժամայն բժշկէին ։ Եւ ել համբաւ սքան-
չելեաց նոցա ը ամ գաւառն. և բազումք 'ի
հրէից և 'ի հեթանոսաց անսային հաւա-
տոցն ։ Իսկ պօղոս ը հրաւիրելոյ զնա հոգ-
ւոյն նբյ՝ դարձաւ անտի, և եկն 'ի հռովմ ։
Եւ տիտոս ոչ եթող զպօղոս 'ի սկզբանէ քա-
րոզութեան նր մինչև ցկատարումն նորին. այլ
հանապազ ը նմա ուղևորեալ՝ շրջէր 'ի քա-
րոզութիւն բազում և մեծամեծ վշտօք. մինչև
ընկալաւ պօղոս զվճիռ մարտիւրոսութեան 'ի
ներոմնէ կայսերէ՝ սրով հատեալ զգլուխն
'ի հռովմ քաղաքին ։
Եւ շատ սգացեալ նբյն տիտոսի՝ որ մնաց 'ի
նբյն պօղոսէ, և իբրև որբ մնալով՝ դարձաւ
բազում արտասուօք 'ի հռովմէ, և եկն 'ի

վիճակ իւր 'ի կրիտիս կղ զի. և ընկալան զնա մեծաւ խնդութ̄ իբրև զիւրեանց ազգային, և գալստեան նր̄ տօն մեծ կատարեցին։ Եւ քանզի տակաւին հեթանոսք էին մերձաւորք նր̄, զարդարեցին զտաճար կռոցն, և կոչեցին զտիտոս. և մտեալ ն̄բյն 'ի տաճարն՝ ըսկսաւ աղօթել եբրայեցւոց բարբառովն, և ասէ զսաղմոսս զայս. ա̄ծ մեր ողորմեա՛ մեզ, և օրհնեա՛ զմեզ. և 'ի կատարել զաղօթսն՝ արար զփրկական նշան խաչին. և յանկարծակի արտիմէ բագինն զարկաւ զգետնի, և անդէն խորտակեցաւ։ Եւ տեսեալ ա̄մ ժողովրդեանն նշան ի՛մն սքանչելի 'ի վ̄ր ն̄բ առաքելոյն՝ համարէին զնա ա̄ծ ո՛մն. և միաբան աղաղակէին ասելով. մի է ա̄ծ՝ որ այսօր երևեցաւ մեզ։

Իսկ նա սկսաւ քարոզել ն̄ց զք̄ս ա̄ծ, և զինքն ծառայ ն̄ր. և հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք իբրև հինգ հարիւր. և մկրտեալ լուսաւորեաց զն̄ս ն̄բ աւազանաւն. և ձեռնադրեաց 'ի ն̄ցէ երիցունս և սարկաւագունս. շինեաց եկեղեցի, և հաստատեաց 'ի նմա զայն քահանայս և պաշտօնեայս. և ել գնաց յայլ տեղիս և 'ի քաղաքս կղզւոյն. զի էին 'ի նմա քաղաքք և գեօղք բազում յոյժ. և արար յինն քաղաքս բազում սքանչելիս՝ քարոզելով զք̄ս, և դարձոյց զամենեսեան յա̄ծգիտութ̄ի։ Շինեաց եկեղեցիս, և ձեռնադրեաց ինն ե̄պս ինն քաղաքի, 'ի կնոսոս, յերապօլիս, 'ի կիւդոնիա, 'ի քերրոնիսոս, յելևթերա, 'ի լամբիս կմ'ի լաբբա, 'ի կի-

սա-

սամիա, 'ի կամբանա, և 'ի գորտին, որ և գորտիւնա. և արար զգորտիւնա միտրոպօլիս, որ թարգմանի մայրաքաղաք. և եղև անդ վեց ամ՝ հաստատելով զնս 'ի հաւատս ամենասբ երրորդութեն. և բազում և անչափ սքանչելիս արար անդ։ Եւ օրինակ բարեաց լինէր տ̄մ ծին. քանզի էր առաքինի յոյժ և անինչ. և կերակուր նր̄ բանջար լոկ 'ի պարտիզէ, և ջուր լոկ ըմպելի. և զգեստ նր̄ խոշոր։

Եւ եղեն աւուրք կենաց նր̄ այսչափ. քսանամեայ էր՝ յորժամ գնաց յեէմ յերկրպագուի քս̄ի. և եղև առ նմա ամ մի. և եղև հետևօղ պօղոսի առաքելոյ 'ի քարոզութեն ամս լը̄. և 'ի կրետէ յաթոռն իւր ամս զ̄. և շրջեցաւ 'ի գաւառն իւր ը̄ տ̄մ կղ զին ամս թ̄. և եղեն ամք կենաց նր̄ յծի՝ զոր եկաց, ամս հդ̄ (7)։ Եւ զայսչափ ամս ճնշէր զմարմին իւր ազգի ազգի առաքինուբ̄. և 'ի քնոյ ժամուն հանգչէր ո՛չ 'ի վր̄ բարձի, այլ 'ի վր̄ գետնոյ՝ խորգոյ և մոխրոյ։

Իսկ յորժամ հանդերձեալ էր փոխիլ առ քս̄ (ը̄ նախագրեալ հաշուի՝ յամի տ̄ն իբր 86), ետես գունդս հրեշտակաց ս̄բց՝ որք իջին առ նա. և տունն լի եղև անուշահոտ խնկով. և ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վր̄ նորա. և պայծառացան երեսք նր̄, և ժպտեցաւ. և յարուցեալ տարածեաց յերկինս զձեռս իւր, և ասէ. Տր̄ իմ յս̄ քս̄, զհաւատս քո անշարժ պահեցի, և ժողովրդեանս քո անդրդուելի զգուշացայ. այսուհետև դու տ̄ր ան-

խախտելի հաստատեա՛, և պահեա՛ զհօտս քո. և ես զհոգիս իմ յանձն առնեմ՝ի ձեռս քո. և յասել զամէնն՝ աւանդեաց զհոգին առ ա̄ծ իբրև զխունկ անոյշ՝ի հոտոտումն կամացն ա̄յ։

Եւ առեալ զմարմին ն̄ր պատեցին մաքուր և ն̄բ կտաւովք, և օծին իւղովք և անուշահոտ խնկովք։ Եւ յորժամ տանէին՝ի թաղումն գերեզմանին, եղև նշան սքանչելի. զի որ ղուղեալ և թաքուցեալ կային բագինքն՝ի կզզւոջն, ամենեքեան անկեալք խորտակեցան. զոր տեսեալ ամենեցուն՝ առաւել հաստատէին՝ի հաւատս ա̄ն մերոյ յի̄ քի̄. որում փառք յաւիտեանս, ամէն։

Այս է քաղաքավարութի̄ և ննջումն ն̄բ առաքելոյն տիտոսի՝ առեալ՝ի գրութէ̄ աշակերտակցի նորուն, ֆ̄ զենոնի օրինական դպրի։ Յիշէ զտիտոս և իգնատիոս ա̄ծազգեաց՝ի թուղթն առ փիղադեղփացիս՝ գովելով զսրբափայլ և զկուսակրօն կեանս ն̄ր։ Կան և թուղթք դիոնեսիոսի արիսպագացւոյ առ տիտոս՝ երկու. մին՝ի կարգի ա̄ծաբանական գրոց իւրոց՝ զոր արար՝ի խնդրոյ տիմոթէոսի. և միւս ևս ուրոյն՝ յաղագս ննջման և փոխման ամենասբ̄ կոյս ա̄ծածնի։ Իսկ յաղագս նշխարաց ն̄բ առաքելոյն տիտոսի՝ ոպ̄ գրեն յայսմաւուրք, թէ՝ի տապանէ ն̄ր լինին բազում սքանչելիք, նոյնպէս և յետին մատենագիրք և ճ̄պհագիրք աւանդեն, թէ պատուական գլուխ ն̄ր ամբողջ պահի՝ի գանտիա յարքեպ̄սանիստ քաղաքին

կրե-

կրետայ, և 'ի սահմանեալ ժամանակս մեծաշուք հանդիսիւ՛ դնի յերևելի տեղւոջ 'ի յարգութի՛ ժողովրդեան՝ 'ի հոյակապ տաճարի անդ, որ կանգնեալ է յանուն նորին

տիտոսի ՆԲ առաքելոյ ։

Աստանօր վայելչապէս տեսանեմք եդեալ յերկուս և յերիս ձեռագիր օրինակս տօնացուցից և զյիշատակ այլոց աշակերտացն պօղոսի առանց անու՛ան. այլ քանզի յոլովագոյն օրինակք զկնի չորից աւետարանչաց դնեն՝ խառն ԸՆ այլ վկայս, անդանօր մնայ

և մեզ ասել զարժանն ։

Յայսմ վայրի զայն յուշ արասցուք, թէ բաց 'ի տիտոսէ առաքելոյ գոյր և այլ համանուն յաշակերտս պօղոսի՝ յիշատակեալ 'ի գործս առաքելոց. ԺԸ. 7. հելլենացի կմ հռովմայեցի 'ի կորնթոս. ուր իբրև ոչ եգիտ ՆԲն պօղոս ԸՆունելութի՛ առ հրէայս, ասաց. * քաւեալ եմ ես, յայսմ հետէ 'ի հեթանոսս երթամ. և գնացեալ անտի՝ եմուտ 'ի տուն ուրումն, որում անուն էր տիտոս յուստոս՝ պաշտօնեայ ՍՆ. որոյ ապարանքն էին մերձ 'ի ժողովետղն ‖, ՅԹ մերձ 'ի ժողովարան հրէից. ուր և կրիսպոս ժողովրդապետ հրէից հաւատաց 'ի ՏՊՐ ։ Արդ քանզի և առաքեալն տիտոս բազում անգամ եկն ընդ պօղոսի 'ի կորնթոս, և բզմ անգամ առաքեցաւ անդր, վՆՆ և ստէպ յիշէ զնա պօղոս 'ի թուղթն առ կորնթացիս, համարեցաւ ոսկեբերան 'ի ճառն. ՍՆ. 'ի տիտ. թէ նոյն իցէ ԸՆ տիտոսի յուստոսի. զոր այլք 'ի նախնեաց և 'ի յետնոց

քայ զանազանեն, զառաքեալն տիտոս կրե-
տացի կոչելով, և զպաշտօնեայն տիտոս յուա-
տոս՝ կօրնէլեայի. երկոքին ևս 'ի ՏԵԼՅԱՆՈՍ
ՍՈՒԼԵՔ դարձեալ։

Ընդ վն տիտոսի երկրորդի յուատոս կոչե-
ցեալոյ կայ այս աւանդութիւն, թէ յետ շրջե-
լոյ նախ ընդ ծովն պոդոսի, և ապա ընդ եւգի-
նեոսի ումեմն յաշակերտաց, գնաց քարոզել
'ի սպանիա՝ 'ի կարպետանիա գաւառ տար-
բակոնացւոց, որոյ մայրաքաղաք է տոլետոն.
ուր և յիշատակ նոր և մեծութի աքանչելեացն
քարոզեալ լինէր 'ի սկզբանէ հետէ։ Այժմ
հանդիպեցաւ 'ի կոզմանան յայնոսիկ կամ
յարևելս (զոր ոմանք 'ի կրետէ ասեն՝ շփո-
թելով ընդ առաջնոյն տիտոսի) իմաստուն
այրն և հիւպատոս Հռոմայեցի առ որպէիսա
նոսիճ պլինիոս կրտսեր՝ որ և կեկիլիոս սե-
կունդոս քեռորդի մեծին պլինիոսի սեկունդ-
դոսի. և 'ի վէր հասեալ Ճանապարհին Ճշմար-
տութեան՝ ձեռնտու եղև հաւատացելոց. և
տեսեալ զբազմութիւն նոցա նահատակել առանց
երիք յանցանաց՝ վէմ պարտեղոյ ևեթ զքն,
գրեաց առ տրայիանոս, և հաւանեցոյց զնա
դադարեցուցանել զՀալածանս. ոչ գրէ և
եւսեբիոս. ուր 'ի հայերէն օրինակի եդեալ
է պիոնիոս սակեդոս՝ փոխանակ գրելոյ
պլինիոս սեկունդոս։ Յաւելուն այլք, թէ
յաւուր միում անցանելոյ տիտոս յուատոս առ
տաճարաւն՝ զոր պլինիոս սեկունդոս կրտ-
սերն չիներ յանուն դիոսի հրամանաւ ինքնա-
կալին. և յանիծանել տիտոսի զդիոս և զտա-

ճար

Հար նը՝ իսկ և իսկ հինն ի վեր տապալեցաւ գործն ։ Յաշխատամ ընթացաւ սեհուընդոս առ տիտոս , և աղաչէը գնա արտասուօք , զի մի արգելօք և ըլ նա անցցէ մեզ ի գործոյ անտի ։ Իսկ տիտոս պատուէր էդ ի վը նը , զի շինուհածն սկսանիցի յանուն միոյն այ քրիստոնէից . և այսպէս մարթ է քեզ ասել ի գլուխ տանել զգործդ . որ և եղև իսկ . յայսժամ ի կատարել գործոյն մկրտեցաւ սեհուընդոս հանդերձ որդւովք իւրով . և յայսմ պատճառէ կարծի նահատակեալ սեհուընդոս , գուցէ և տիտոս յուստոս ընդ նմա , ի կոմնն քաղաքի իտալիոյ առ տրայիանոսիւ կիսադրիանոսիւ . քանզի և ինքն սեհուընդոս էը կոմսացի , ըլ ի կոմնապ՝ որ և նովոկոմնն կոչեցաւ յետ նորոգուելնէ , յինուսպրիա գաւառի՝ ի սահմանակցութենէ մեդիոլանու և վերոնայու ։ Ա՛յլ է և սեհուընդոս զօրական ի գնդէ թեբայեցւոց նահատակեալ ատդ ի կոմնն առ մաքսիմիանոսիւ ը այլ վկայս ։ (8)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ծ Ա Ն Օ Թ Ա Ի Թ Ի Ւ Ն Ք ։

(1) Ա՛առընտրեք մեր աստանօր անխտիր կոչեն զախտոս աշակերտ պօղոսի , և մի յեօթանասունն և երկու աշակերտաց քրի։ որպէս և Հ. ապր. 9. և Յ. ժամագր. յնվ. ե. ի վարս եօթանասնից , պարզապէս ի Թիւ եօթանասնից կարգեն զտիտոս . զի Թէպէտև եօթանասունեաւքն աշակերտքն էին յազգէ հրէից , իսկ տիտոս հեթանոս , բայց քանզի առ քրիւ աշակերտեցաւ ըլ պատմուԹէ վարուց իւրոց , կամ իրօք կիա պատուով եր ի համարի նոյն աշակերտաց ։ Իսկ Թէ յօրինակս ինչ սո։

Նայուսկի կոչի աշակերտս պօղոսի և ասիոմՁէոսի, Ի քաղաքս մատդոն օրինակս չՁք առուն աշակերտուԹԷ պօղոսի, այլ պարզապէս կոչի ասէսոս առաքՁ. և կարգ անուՀանցն ասիոմՁէոսի և ասէսոսի եգեալ է Ի սօնատդոյցս՝ հայե- ցուվ Ի կարգ ԹղԹոցն պօղոսի. ապա Թէ ոչ ըս ՁաուընաՀ- ըսց նախ գրի վարք ասէսոսի, և ապա ասիոմՁէոսի: Յայտնի է և այն, Ի առ մատԷնադրըս առ Տասարակ շփոԹ աւանդուԹՁ՝ է Ի աշակերտք պօղոսի վերածին Ի Թիւ եօԹանասանից, և է Ի աշակերտք քո Ի Թուոյ եօԹանասնից՝ վերածին Ի Թիւ աշակերտաց պօղոսի.

Ի առ Տասարակ էին գործակից առաքելոց:

(2) Հին վկայաբանուԹիս գտեալ Ի ՁաուընաՀրս մեր ԹէպԷսէ առ այլս չգոյանի այժմ ամբողջ, բայց քաղ- ուՀած նՁ է՝ Ըստ վիճակաւ առաջի առնուն ժամագիրք յուսաց, և պետրոս նատալեան, և այլ վկայաբանք, զորս Ի մէջ բերէ կաԹ յիշատակէ ըսղձանդ. և սոյն ամե- նեքին առեն, Թէ զվարս ասիոսի դրեաց զԷնաս կամ զԷնան օրինական դաւիրն, նոյնպէս և ՁաուընաՀրք մեր զնա Ձանաչեն առաջնորդ բանից՝ ակնՀրն դնելով օրի- նակ զայս. * Վարք և սքանչելագործուԹիւն և Տանգիստ • սՁ առաքելոյն ասիոսի աշակերտին պօղոսի առաքե- • լոյն. զոր ձեռնադրեաց եՒս գործոնեայ քաղաքին Ի • կոնիա կղզւոյն: Ջնաս (լՁ ասէ՝ զԷնան), զոր յի- • շատակէ պօղոս Ի ԹուղԹա իւր, նա գրեաց զսատա- • մուԹՁ վարուց սՁոյն ասիոսի առաքելոյ, որ էր մի • յեօԹանասանից: Սա էր Ի կրետացւոց կղզւոյն || ևն: Ջնոյն ընդօրինակէ և Ս, քան Թէ քաղՁ՝ որպէս այլքն:

(3) Մինաս կաՁ մինուվ էր անուն Թադաւորի կրետաց- ւոց նաև յատուկ ՁՔ զՔն. ուստի ծագԷՁ համարի ասե- ղոս նատալեան և զինչեան կղզւոյն զազգականն ասիոս- ան, կոչելով զանուն նՁ հռուսինէոս. բայց Ճ. և Հ. ցուցանեն՝ Թէ նաև անուն ազգականին ասիոսի էր մի- նաս: Յերկուս միտս է Իմանալ և զբանս Յ. ԺՈ. * Ա- յսպ • երանելիս (ասիոս) Ի մինուվայ արքայէն կրետաց գո- • լով ըստ ազգի (կաՁ ազգակից), ոչ աՒԷ զինաս օրինա- • կան՝ որ զվարս նՁ գրեաց || : որպէս և զկնի գրէ. * ԸնԹերապատան կրետաց, որ և հօրեղբայր (կաՁ քեռի) • սՁոյն ասիոսի || . ևն: Բայց գՁՃՁ կոչէ զինաս հռուս- ինէոս:

(4) Յ. ԺՈ. յաՒԼոս զպարագայ տարուց մեռ՝ յաՒԼէն. * Լսէ ձայն Ի վերուստ եկեալ առ նա՝ որ ասէր. ան-

• տէ, պարտ է քեզ մեկնիլ ասել, և զոդիդ քո կեցցե
• ցանել. զի ոչ օգտե քեզ ուսուցիդ այդ ։ Եւ կամե
• ցեալ նոքա մխանդամ լսել զնոյն ձայն, քանզի դևտեր
• և 'ի դրօշելոց եղեալ ձայնիւ պատրանս, ոտատեաց
• այլևս ջժամանակ տարւոյ մոյ. և հրաման էառ 'ի
• տեսլեան՝ զեբրայեցւոցն մատեան ընթեռնուլ ։ Ուր
մեզ աւետարդ Թուի այդ յաւելուած. և էգիտեմ՝ զնայրդ
հանդուրժեալ է պետրոս նատաղեան զմի տարին ձգել
յինն ամս, ընթեռնլով վերնակաւ 'ի յն. Էննէա, փինկ
վերծանելոյ՝ էնա. և այնպէս առանց ը բանս ինչ ածե
ըլ՝ առել 'ի լատ. * Յետ այսորիկ երբև անցին աւք
• ինն, հրաման եղև առ նա զգիրս եւսեբեայ ընթեռ
• նուլ. ուր ասէ, նորոդեցարուք ։ և նա ընտանւոյ հա
րևանցն ծանուցանէ բոլոնդ, թէ ընթերցուած է
սայեայ յառաջ քեռի ը եօթանասանից. ուր լսեալք ըն
թեռնուն. * լուացեն առ նա կղզնք ։ Տգիտական յա
ւելուած է և 'ի Հ. անուն պորփիւրի ը արհատասէրն՝
առընթեր հոմերոսի և պղատոնի, ոչ գիտեմ եթէ
պորփիւր յետոյ էր ժամանակաւ քան զտիտոս ։ Ա յս
պիսի պատուհասաւք յետանց ոչ կարեն ստանալ ինչ
սուտդուեթէ առաքինոց ։

(5) Ո՛չ գիտեմ, արժան ևցէ նախասահմանել քան զընթերցուած ձառընտրոց՝ զՀ. ուր ասէ. * և գտեցաւ
• 'ի թիւն ձ ու ևիցն ։ զի և պետրոս նատաղեան ասէ.
* և համարեցաւ 'ի թիւ ձի աշակերտաց, յորս էջ հո
• գին սքի մարմնաւորապէս ։ և Յ. ժմ. * համարեցաւ
• ը ձի ևց, և ը գո աց, որք հաւատացին 'ի քս վճռու
• թէ սքյն պետրոսի գլխաւորի ։ Անորոշ են բանք
Յ. բա. * եռես զքս և զաքանչելիսն, և համաթուե
• ցաւ ը հաւատացեալս 'ի քս ։

(6) Զինք 'ի մեր օրինակի այն՝ զոր դրէ Յ. ժմ. թէ
* յորժամ հռոմայեցւոց քեռայրն (կամ հօրեղբայրն) ան
• տուն վարդեր զերկրորդ այն ևշխանութեն 'ի կրետէ,
• հասին անդր պօղոս և տիտոս ։ ոմն և այն՝ զոր յա
ւելու պետր. նատաղ. * որոց նաւեալ 'ի կրետէ կղզի՝
• քարտզէին զքս. իսկ հռոմայեցւոց ազգականն տիտո
• ս ի ծնծաղէր զնոքօք. այլ յայնմ վայրի մեռանի որդին
• հռոմայեցւոց. և 'ի պօղոսի յարուցանելն զնա՝ հռոմ
• տիկնոջ հաւատացեալ ամ տամբ իւրով մկրտի ։ Ընդ
հակառակն 'ի ճ. պատմի յետ ելից նոյ 'ի կրետայ, և
անցանելոյ յատկա և յեփեսոս, թէ զբազումս գարձու
ցին. և առանց յիշելոյ զոյոշ ժամանակ և զտեղի՝ 'ի վր

թե

քերել. * հաւատացին ի ժամուն յայնմիկ ոպիք աւելի
• քան զերկոտասան հազար մարդ ըստ այր և ըստ կնի և
• ըստ մանկուանս. և սկրտեցան ի նմանին աւուր ։ Զայս
ոչ գտաք յայլ ընդհատցուածս. և ի կարծիս լինիմք, թէ
այդ պատմեր ոչ հայր ի մի տեղի և ի ժամանակ, այլ ի
հաւաքումն հաւատացելոց յայլեւայլ տեղիս և ի ժամա-
նակս։ Ահա այն՝ զի գարձեալ յետոյ տխուր զհինգ հա-
րիւր ոգիս միանգամայն ի կրեսէ, միօրինակ գտանի
յամ օրինակս։

(7) Ընդհատեալ չափ ամաց և ժամանակաց՝ զոր ետաք
ըստ Ճ. ուր Յ. ժմ. և սետր. նաւտղ. ընդհեանուն փո-
խանակ հդ. ամաց՝ զամս կենաց սխտոսի ցիդ. ըստ որոյ և
բոլանդ հարկաւորի գնել զվախճան սխտոսի յամի ՟ն
երր 105։

(8) Վասն սխտոսի յուստոսի և ալլինիոսի սեկունդոսի
կրատերոյ գոսանեմք զայնպիսի բանս ի Քրիստափրուեթե
գեքատոսոսի՝ յամի ՟ն 220. որ պարտի լինել գոնէ 120.
ի նոյն հայրն և բանք սետր. նաւտղ. բայց երկոքեանն
իսկ նոյնացուցանեն զերկուս սխտոսս՝ ըստ ասկեբերանի։
Բոլանդ այսչափ ասէ. * Արդեօք ալլինիոս սեկունդոս
• լցեմ գարձեալ ի ձեռն սխտոսի, զինք իմ վէճ. միայն
• թէ ոչ է սեկունդոսն այն. որոյ ասէն կատարի ի 7.
• օգոստ. ի կոմոն... նահատակեալ աս մարքիմիանո-
• սէ։ Զբանս եւսեբեայ եդաք ի վարս շմաւոնի ազ-
գականին քրի՝ ըստ հայերէն օրինակի. հաւ. Ա. էջէս.
536։ Ասա ինքն ալլինիոս կրատեր ի ՟ժ գերս թղթոց իւ-
րոց՝ ի նոսանակի խորհուրդ աս սրոյիանոս մեծագոյն յար-
դ զքրիստոնեայս։

ՎԱՀԱՆԱՅՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սբոյն Աթանասի առաքելոյ և աւետա-

րանչի :

ՀԱՏ. Ը. Հոյակապ. 16. Լ. աբեպա. 21 : Ա՛ստուածպա. Ի. Ջիւր = Ջիր. Ի ՚ի. ՃԿիւէ = ՃԿՃա. Ի ՚ի. Ի. Ջիւր = Ջիր. Ի ՚ի. Ի. Ջիւր = Ջիր. Ի ՚ի. Ի. Ջիւր = Ջիր

կան ծովուն գալիլեացւոց, անցեալ ը այն յ՝ի, իբրև ետես զնա, ասէ ցնա. Եկ զկնի իմ. և նա վաղվաղակի լուաւ տ՝րունի կոչմանն, և թողեալ զտ՝մ մեծութ՝ի իւր և ըզհոգս ծ՝ի՝ աշակերտեցաւ փրկչին. և եղև մի յերկոտասան առաքելոց:

Եւ յաւուր անդ հրաժարելոյ յտ՝մէ՝ արար ընդունելութ՝ի մեծ տ՝ն իւրում և վ՝դպի 'ի տան իւրում, հանդերձ աշակերտօք ն՝ր, և բազմութ՝ը ծանօթից իւրոց մաքսաւորաց, յայտնելով ամենեցուն զուրախութ՝ի սրտի իւրոյ ը թողուլ զկորստական ինչս և զպատրանս ծ՝ի, և ը զերծանիլ իւր 'ի ծառայութ՝է մամոնայի, լինելով ճշմարիտ ծառայ տ՝յ, և հարազատ աշակերտ երկնաւոր վ՝դպին և փրկչին տիեզերաց:

Եւ յետ առաջիկայ լինելոյ տ՝մ քարոզութ՝ե և տնտեսութ՝ե կենարարին մինչև 'ի համբարձումն ն՝ր յերկինս, ընկալեալ զզեղումն հոգւոյն ն՝բյ 'ի վերնատան ը այլ առաքելս՝ քարոզեաց առ ժամանակ մի 'ի սահմանս հրէաստանի: Եւ յորժամ հանդերձեալ էր գնալ 'ի հեռաւոր տեղիս 'ի քարոզութ՝ի աւետարանին, աղաչեցին զնա հաւատացելքն՝ որ յեէ՝մ, զի զոր աւետարանեաց ն՝ց բանիւ՛, աւանդեսցէ և գրով 'ի յիշատակ անմոռաց. ը որում գիտէին զնա և անդստին կիրթ 'ի դպրութ՝ի. և նա յանձն էառ և գրեաց ազդմամբ ն՝բ հոգւոյն զաւետարանն իւր յեէ՝մ քաղաքի անդ յեբրայական բարբառ, ո՛չ ը հին լեզու՛ի եբրայեցւոց՝ որ 'ի հին կտակա-

բա-

բանի, այլ ըն սովորական լեզուի պաղեստի-
նացւոց յայնմ ժամանակի, ոպ և զիարդ խօ-
սէր տրն մեր 'ի մէջ նց 'ի բարբառ նց, որ էր
առաւել մօտաւոր ասորւոցն՝ խառն ը քաղ-
դէականին. որպս և նշանագիրքն էին քաղ-
դէական. և այս եղև իբր եօթն կմ ութ ա-
մօք զկնի համբարձման տն ։ (2)

Այլ քանզի յունական լեզուաւ առաւել
տարածեցաւ քարոզութի աւետարանին ընդ
ամ ն, վ՝ ասի՝ թէ կամ նա ինքն ոբն մատ-
թէոս, կմ այլոք յառաքելոց և յաշակերտաց
անդէնևանդ թարգմանեաց զնոյն և 'ի յոյն
բարբառ. և մի յառաջին օրինակաց անտի էր՝
զոր տարաւ ը իւր սբն բառնաբաս, և յետոյ
գտաւ 'ի տապանի նր. ոպ գրեցաք 'ի վարս
նորա ։ Մինչ զի և յունական օրինակն իբրև
բնագիր համարեալ եղև յամ դարս, մանա-
ւանդ յետ պակասելոյ եբրայականին ։ Զի
թէպէտև գտանէին օրինակք ինչ եբրայե-
ցերէն մինչև 'ի չորրորդ և 'ի հինգերորդ
դար, այլ ոչ ունէին զճշգրիտ վաւերականու-
թի յունականին. քզի հրէամիտ եբիոնիտք
և այլ աղանդաւորք խարդախեալ էին զեբ-
րայականն հետզհետէ. և եթէ կայցէ ու-
րեք ցարդ այնպիսի օրինակ օտար 'ի յունա-
կանէն, չէ ընդունելի յեկեղեցի այ ։

Իսկ պատմութի քարոզութե և կատարման
ոբ առաքելոյն և աւետարանչին մատթէո-
սի՝ ոպ և բազմաց յառաքելոց, մնայ տար-
տամ և անստոյգ՝ վ՝ պէսպէս և անմիաբան
աւանդից, որք վերածին յայսոսիկ ։ Յե-
թէ-

թէոլպիա քարոզեաց և կատարեցաւ ասեն հռուփինոս, սոկրատ, մեծն գրիգոր, և մեծ մասն արևմտեան վկայագրաց. և այն՝ ըստ ոմանց 'ի մերձաւորն եթէոլպիա մօտ յեգիպտոս, և ըստ այլոց 'ի ներքսագոյնն՝ որ է հապէշստան կմ երկիր խափշկաց: 'Ի պարսս ասէ ամբրոսիոս: 'Ի պարթևս՝ պաւլինոս նոզայեցի ըստ հերոնիմեան վկայագրոց. կամ 'ի հերմէա պարթևաց՝ հիպոզիտոս: Իսկ դորոթէոս՝ ըստ օրինակաց ինչ, 'ի հերապօլիս պարթևաստանի, կամ ըստ այլ օրինակաց՝ յարապօլիս կմ 'ի յերապօլիս ասորւոց. նոյնպէս դնէ և նիկետաս պափղագոնացի: Մ՝ետափրաստէս՝ նախ 'ի պարթևս ասէ, և ապա յեթովպիա: Ասորիք և քաղդէացիք՝ նաև յԾ իւրեանց եկեալ աւանդեն, և անցեալ 'ի հնդիկս:

Յայսմաւուրք հայոց 'ի յունիսի 30. ասէ, թէ զկնի քարոզելոյ զքս 'ի բազում տեղիս՝ * կատարեցաւ յապամիա (ասորւոց) հրով այրեցեալ. և բերաւ նշխարքն 'ի մեծն անտիոք. և անդ հաստատեցաւ աթոռ նր. և յետոյ տարան յայսկոյս ծովուն (յարևմուտս) ‖: Իսկ յայսմաւուրք յունաց 'ի նոյեմբերի 16. (որում անդանօր ձայնակից լինի և յայսմաւուրք հայոց) դնէ, թէ * դնաց 'ի բազում գաւառս հեթանոսաց՝ ուսուցանելով զբանն քս, ևս և մինչև 'ի մարդասպանս՝ զորս ոմանք մարդակերս ասեն. յորս բազմօք տարժանել, և եպս արարել զպղատոն կոչեցեալն, եթող անդ, և եկն յերապօ-

պօլիս ասորւոց ։ և անդ ուսուցեալ քաղմայ
ղբանն քոյ և վկրտեալ , կատարի ‖ ։ Օ Նոյն
դրեն և այլք ի վկայաբանից , այլ անդէն
յՀին մարդակերայ նահատակեալ ասեն ,
և Թադէ՛ի պղատոնէ ենգսէ ։ և այլք նոյն
համարին զՀն մարդակերաց ընդ եթէոպիոյ ։
Այլ որ մեծն է , որք միանգամ զՀ մարդա-
կերաց յիշեն՝ այլ պատմութեի՛ի մէջ բերեն ,
և որք զեթէոպիա յիշեն՝ այլ ։ մինչ զի Թէ-
պէտև ոչ մին յաղթէ միւսում Հեղինակութ ,
բայց երկաքանչիւրն ունի ՛ի ձեռին զՀին
վկայաբանուե ընդարձակ ուրոյն ուրոյն ։ մին
առաւել Հանդիսացեալ առ արևելեայս , և
միւսն առ արևմտեայս ։ և այսմ յայտնի պատ-
ճառ Թուի շփոթումն երկուց նմանաձայն
անուանց , մատթէոս (որ և մաթէոս գրի) ,
և մատաթիաս (որ և մաթիաս ասի) ։ և ե-
րևի՛ Թէ մին ՛ի վկայաբանուէց սնուկ է մատ-
թէոսի , և միւսն մատաթէայ ։ Օ զուարա-
կութի միոյն և միւսոյն յաւաջ քերդութ
՛ի կարգի ծանօթութէից Ա՛խագոյն ։ (3)

Այս զանազանութէ պատմութէից բազմա-
նպատիկ են քանք և վն նշխարաց ՚ըզին
մատթէոսի , որ գտանին յարևմուտս ՛ի զա-
նազան տեղիս պէսպէս յիշատակարանօք և
աւանդութէք ։ յորս առաւել Հռչակաւոր
է սալերնոն քաղաք ծովեզերեայ յիտալիա
մծտ ՛ի նեապօլիս ։ և զայսմանէ և տացուք
տեղեկութի՛ի ծանօթութէից (4) ։ Ա՛ռ ըզ-
բազմութի եկեղեցեայ կառուցելոյ յանուն
Ա՛ստ աւետարանչին մատթէոսի՝ ՛ի Հռոմ ,
՛ի

’ի բոնութիա , ’ի վենետիկ , ’ի սիկլիա սիկլիայ , ևն . ոպ և ’ի մուսուլ քաղաք միջագե-
տաց ասորւոց ։ Ասորից և զնեբրդողեանս որք
հարց և վիպաց ’ի վր որ ալ աւետարանչին .
յոյս կղեմէս աղեքսանդրացի ասէ . * մատ-
թէոս առաքեալ՝ ընդ ովք և մրգօք և բան-
ջարովք շատանայր , առանց մսոյ ॥ ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Յայտնապէս գրի աստ ’ի Յ . բս . վր սբյն մատ-
թէոսի , թէ էր * եղբայր յակոբոս մականուանեցլոյն
„ ալփեայ ॥ ։ ’Ինոյն միտս երևին և ոսկեբերան , թէո-
դորետոս , և այլք ոմանք , ըստ հեռնաքեննիոսի բոլղանդեան
’ի մայիսի . ւ . ’ի վարս յակ ։ Հեշտալուր թուի , բայց ան-
հին՝ գրեալն ’ի պատմուԹե իմիք ժբ առաքելոց վասն
մատԹէոսի . * Սա այն մաքսաւորն է , որ հառաչմամբ
„ աղօԹէր ’ի տաճարին ըստ փարիսեցւոյն . և ’ի միւսում
„ աւուրն կոչեցաւ ’ի քրիստ յաշակերտուԹիւն ॥ ։

(2) ԱւետարանագրուԹիւն մատԹէոսի՝ յետ եօԹն ամի
համբարձման տեառն ’ի Հ . յունիս . 30 . և ’ի պատմ . ժբ
առաք" ։ Այլ յետ ուԹ ամի դնի ’ի նախագրուԹիս աւե-
տարանին Հյ . և կն . և ’ի Յ . նոյեմբ . 16 . ըստ աԹանասի ,
Թէոփիլակտոսի , եւԹիմիոսի , ևն ։ Վիգլեգաս տպանեաց
ցի ’ի վարս սբց (զոր յիտալականէ ’ի հայ Թարգմանեցաւ
ծերունի Հ . Անտոնն մեր պատուարեան) Հանարի ըստ
ոմանց , Թէ եբրայական օրինակ էր և գտեաւն ըստ մարմ-
նոյ սբյն բառնաբայ աւետարան մատԹէոսի առ զենո-
նիւ . որ և միւսանգամ կորեաւ ասէ , և նիկոդեմոս եօԹ-
նեորդ՝ հռովմայեցի հայրապետ խոստացաւ գտուլին հինգ
հազար դահեկան ոսկի . * այլ ոչ գտաւ (ասէ) մինչև ’ի
„ ժամանակս կարոլոսի Ե (կայսեր , որ էր արքայ տպա-
„ նիոյ) . որում պահեալ էր այգազում բարեյաջողու-
„ Թիս . յորոյ մի եղև և դիւտ սորա . ապա ուղղափառ
„ արքային (սպանիոյ) փիլիպպոս ըստ որդի նր եւ տպագ-
„ րել ցայն . որ և այժմ նորոգ Թարգմանեցաւ ’ի լա-

„ տին 'ի դուիդոնէ փապրիկիոսէ ||։ Մեք զայս գի-
տեմք, զի արդարև տպագրեցաւ յայնմ ժամանակի եբ-
րայական օրինակ մատթէոսեան կարծեցեալ աւետարա-
նի՝ յամի 1533 'ի բասիլիա, և յամի 1555 'ի փարէզ.
բայց չեղև ընդունելի՝ իբրև մտացածին գիւտ յետնոց՝
անհամաձայն յունականին։ Ընդ հակառակն՝ ոմանք 'ի
յետնագունից, մանաւանդ 'ի նորաղանդից՝ պնդեցին,
թէ մատթէոս յունարէն իցէ շարադրեալ. որ է օտար
'ի հին աւանդուէ և 'ի կարծեաց հարց առհասարակ։
(3) Յերկուց զանազանեալ հին վկայաբանութեց՝ որ
յանուն սբ̄յն մատթէոսի, առաջինն այն հանդիսացել
առ արևելեայս՝ ոչ միայն գտանի 'ի ճառընտիրս մեր
իբրև մասն վարուց սբ̄յն անդրէի, ոպ̄ և քաղուած նր̄
'ի Հ. նոյեմբ. 30, և նոյեմբ. 16. և 'ի Յ. ժմ. նոյեմբ.
30. ('ի վարս անդրէի), և 'ի գիրս նիկեփորոսի. բ̄. 41.
այլև 'ի յունական հին մատեանն պ̄ը. վատիկանեան գրա-
տան, թէպէտև խառնեալ առաւել օտարոտի բանիւք,
ուր առաւել անխառն երևին օրինակք ճառընտրաց մե-
րոց. մինչզի ոպ̄ բոլլանդեանն ստիլտինգ քաջ ընտրուի
առնէ ը̄ այս և ը̄ այն օրինակ լատինական, և ասէ՝ թէ յե-
տինք զառաջինն կամ են ողորկեալ, և կմ խանդարել.
նոյնպ̄ս և յունական օրինակն քաղել 'ի նմանէ՝ խանգա-
րեալ է կոչելի. իսկ մեք ունիմք քաղել զողորկն ը̄ ճա-
ռընտրաց մերոց. թէպէտև մեզ չէ՛ և այն ողորկ ասե-
լի. ոպ̄ և ստիլտինգ վկայէ զլատինականէն ողորկ կո-
չեցելոյ, թէ նաև անդ կան բանք անհաւանելիք։
Լրագոյն օրինակ այսր առաջին վկայաբանութե 'ի ճա-
ռընտ. Ե. ունի խորագիր այսպիսի. * Յաղագս սբ̄յն
„ անդրէի առաքելոյ, և նորին սքանչելեաց՝ զոր տ̄ր
„ եցոյց յ̄ մարդակերաց 'ի ձեռն նր̄, և մաթէի՝ որ
„ էր նց̄ քարոզ և առաքեալ ||. ուր յընթացս պատմու-
թեն՝ յորժամ սկսանին լինել բանք վ̄ մատթէի, ասի.
* Մինչդեռ առաքեալն մաթէոս և աւետարանիչն 'ի
„ լերինն էր ||. և̄ն. և ահա այլ ճառընտիրք աստի ըս-
կսանին զվկայաբանութի սբ̄յն մատթէոսի. զոր նոյնպ̄ս
գտեալ և ստիլտինգայ 'ի յունական մատենի իւրում՝
զարմանայ, թէ ո՛րպէս յանպատրաստից և իբր թերա-
կատար սկիզբն դնի պատմուե̄ս. զի ո՛չ գիտէ՝ թէ այն
է երկրորդ մասն վկայաբանութե̄ անդրէի առ յոյնս.
ուստի պա՛րտ է լրացուցանել յառաջին մասնէ նորուն
և զգործս մատթէոսի։
Իսկ երկրորդ վկայաբանութի̄ն յանուն մատթէոսի հան-

դիսայեալ առ արևմտեայս՝ է այն, որ լսանկերէն ևեթ գաւանի ՚ի զանազան ձեռագիրս նշ՝ յորս հնագոյնքն՝ առ սակաւիկ, երևին գրեալ ՚ի թ դարու՝ և յամենեք սմին կան անհետ թե հանգամանք և պակասաւորութիք, յորոց ազատ գաւանի առաւել օրինակն վաղկանեան ՚ի մատենին ՃՃՁԸ՝ զոր և ապագրէ իսկ սակաւիկ թէ ոչ ամբողջ հաւանելով։ Հետևնակ այսպիսի օրինակաց հնդկօրէն կոչի արդեաս ենթ բաբելոնի, որ առ քինիլս է կասկածելի՝ ոչ ատ, նոյնպես և ՚ի վարս այլոց ոմանց յառաքելոց։ Բայց քաղեմք և զոմ յետ ա ռաքինոյն ՚ի պէտս բանասիրաց, և ապա զներ կարծիս ՚ի վէր բերցուք։

ՔԱՂՈՒԱԾՔ՝ Ո ՎԻԱՅԱԲԱՆՈՒԹԻՆ ԱՓՅՈՆԻ ԸՍՔ ՅՈՒՆԱՑԻՆՔ ԵՒ ՀԱՅՈՑ։

Յետ համբառնալոյ ՚ն յերկինս, և իջանելոյ Հոգւոյն սրբոյ ՚ի դաս առաքելոց՝ ելնաւ վիճակ մատենից առաքելոցն և ուսուցանէին երթեալ՝ ՚ն մարգարէութիւն (որ և սինոպացիք կոչին ՚ի Յ. ժմ. և ՚ի Հ.) և էին քնաքկիչք ՚ն ՚ի մարգարէութիւն քրիստոսի զգաստանս, և ուսուցին զնեանս իւրեանց. իսկ զօտարս կենդանւոյն կարեալ ՚ի Յաճատարիայ Ծովու և ցամաքի Թմրարքզզ հանելին ՚ի խելս։ զգերան ՚ի նոցանէ մատուցանէին իբրև զպտուղս ՚ի զենուից. իսկ զվախս կուռացուցանէին, և պարարեին գարմանօք իբրև զանասուն զաւուրս երեսուն, և ապա զենուին. զմին ուտէին, և զարիւնն ըմպէին. այս սովորութիւն էր նշ, ոչ վարել և ոչ վաստակել, այլ գաղանաբար կեալ՝ ոչ գիտելով զնծ

Ձմեռնիս։ (Յ. ժմ. հրեայս ասէ զնս լինել)։

Վշ իբրև եմուտ մատենիս ՚ի քաղաքն նշ, կալան զնս իբրև զօտար, հանին զաս նր, և հասն նմա Թմրաքզ զեզ, որ և զեզ յիմարութիւն, և կարգեցին նմա գաղման գիրացուցիչ ՚ի գիպասիոյ։ Բայց նորա ոչ լուծաւ սիրան ՚ի գերգին, և ոչ եղև ՚ի նմա այլայլութիւն մտաց, ոչ և ոչ նուաղութիւն տեսութեան։ այլ յաղթեաց կայր առ նր և ասէր, ցոյց նր զզօրութիւն ձեռնդ քո ՚ի խրատս ամպարշտացս։ ապա եթէ հաճոյ է քեզ ինձ այսպէս մեռանել՝ ոչ զանասուն, և մարմնով խնդ կերակրել մարգարէութեացս, եղիցին կամք քո։ Յայնժամ լցոյս ծաղեաց ՚ի բանսն, և եղև ձայն յերկնից։ մնայեթէ սիրեցի՝

լի՛ իմ, մի՛ երկնչիր, զի ես ը̄ քեզ եմ. համբերեա՛ դու
զաւուրս ի և ը̄, և ահա եկեսցէ անդրէաս՝ որ հանէ
զքեզ 'ի բանտէդ։ Եւ տեսանէր մատթէոս, զի տանէին
զայլս 'ի մարդկանէ 'ի զենումն յարգելարանէ անտի դար-
մանոցաց. և վ̄ն իւր ևս լսէր 'ի դահճաց, զի ասէին.
յորժամ կատարեսցին աւուրք ը̄, զենցուք և զայրս
զայս, և կերիցուք։

Եւ երևեցաւ տ̄ր անդրէի առաքելոյ 'ի թեսաղոնիկէ,
և ասէ. արի՛ ե՛րթ յ̄ծն մարդակերաց, զի հանցես զմատ-
թէոս 'ի բանտէն։ Եւ 'ի վարանիլ անդրէի՝ թէ զիա՛րդ
դնասցէ ծերացեալ և տկար անձամբ յ̄ծ անծանօթ,
յաւել տ̄ր երիցս և չորիցս երևիլ նմա, և քաջալերեալ
զօրացոյց զնա։ Եւ անդրէաս յարուցեալ վաղվաղակի
գնաց աշակերտօքն յեզր ծովուն. և եդիտ նաւ մի
պատրաստական, որոյ նաւապետն ինքն ք̄ն էր, և հրեշ-
տակք նաւավարք. այլ ոչ ծանեաւ անդրէաս. մինչև
յանկարծակի դտաւ յ̄ծն մարդակերաց։ Եւ մտեալ 'ի
քաղաք անդր՝ ուր էր մատթէոս, միւսանգամ ետես
զտ̄ր ոպ̄ մանուկ դեղեցիկ, որ ասէր ցնա. արի՛ մ՛ուտ
'ի բանտն, և հանցես զմատթէոս և զտ̄մ կալանաւորսն.
և կա՛ց մնա՛ 'ի քաղաքիս, մինչև դարձուսցես զբնակիչս
երկրիս յտ̄ծգիտութի̄. ապա թողցես զմատթէոս 'ի
քաղաքիս քարոզ աշակերտելովքն հանդերձ. և դու
դարձցիս աշակերտօքդ 'ի վիճակն՝ որ քեզ հաւատացաւ։
Գնաց անդրէաս և աղօթիւք եբաց զդուռն բանտին,
և արձակեաց զմատթէոս և զորս ը̄ նմա. յայնժամ յա-
ղօթս կացին առաքեալքն, և եդին ձեռս 'ի վ̄ր արանց՝
որոց բրեալ էին աչք, և թափեալք 'ի մտաց, և նոյն-
ժամայն զգաստացան, և լուսաւորեցան աչք նոցա, և
հաւատացին 'ի ք̄ն. զորս առաքեաց անդրէաս ը̄ մատ-
թէոսի 'ի լեառն մի, (ուր էր առաքեալն պետրոս՝ ը̄
Հ.) հանդարտել առ ժամանակ մի։ Եւ ինքն անդրէաս
կրեաց բազում վիշտս և չարչարանս 'ի ձեռաց մարդա-
կերաց, մինչև դարձոյց նշանօք և արուեստիւք զմեծ
բազմութի̄ նց̄ 'ի հաւատս. և յետ շինելոյ եկեղեցիս և
հաստատելոյ զհաւատացեալս՝ դարձաւ 'ի տեղի իւր։
Իսկ մատթէոս 'ի լերին անդ ուսուցանէր զաշակերտսն՝
մնալով այցելութե̄ տ̄ն։

Մինչդեռ առաքեալն մատթէոս և աւետարանիչն 'ի լե-
րինն էր՝ բոկ և միով պատմուճանաւ, երևեցաւ նմա
յ̄ն 'ի նմանութի̄ պատանեկի, և ասէ ցնա. խաղաղութի̄
ը̄ քեզ մա՛տթէոս. և նա ասէ. ողջոյն ը̄ քեզ և խաղա-

զուԹի ոմն պատանի բերկրեաւ : Եւ ես ցնա յո. ընկալ զգաւազանս զայս , և երԹ ի զհիւրսին (կամ միւրսին) քաղաքն , և տնկեա զգաւազանս ի դուռն եկեղեցւոյն՝ զոր չինեցեր , և լինիցի ծառ մեծ և պտղաբեր . և կերիցեն գազանաբարոյ մարդիկն , և փոխեսցին յանղգայուԹէ , և ծանիցեն զիս և զհայրն իմ որ յերկինս է . և դու հրով կատարեսջիր , և ընկալցիս զպատկն կենաց : Եւ իջեալ մատԹէոս ի լեռնէն գաւազանաւ ոն՝ ձեռն եդեալ՝ հալածեաց զդևսն , և բժշկեաց զնս . և գնացին զկնի նր . և մեռեալ ի քաղաքն՝ գնաց նոքօք կեկեղեցին :

Եւ եղեն պղատոն ամ ուխտիւն եւ ըստ առաջ առաքելոյն . երկիր պագին , և օրհնեցան ի նմանէ : Եւ եւեալ մատԹէոս ի բարձր տեղն մի ի վեր վնմի՝ քարոզէր ժողովրդեան քաղաքին Թոպուզ զաւտուրոյն (կամ զաստուրոն , կամ զկատարուր) կուռս իւրեանց , և հաւատաւ ի քն ոմն : Եւ կոտ պղօԹելոյն՝ եհար զգաւազանն յերկիր , և նոյնժամայն բուսաւ և աճեաց , մինչդեռ հայեին , և եղև ծառ մեծ , և եբեր պտուղ յոյժ . և բղխեաց յորմատոյն պղբիւր : Եւ ժողովուրդքն մոնն կեկեղեցին , և անկան յոտս մատԹէոսի . իսկ հարուածեալքն ի միտ առին զմերկուսիսն իւրեանց , և ընԹացեալ յորկս իւրեանց՝ զգեցան հանդերձ , և դարձան կեկեղեցին : Եւ հրամայեաց առաքեալն պղատոնի եՀոսի , և նա մկրաեաց յաղբիւր ծառոյն զկին Թգրին և զորդի նորա և զկին որդւոյ նր , և զամ ժողովուրդն . և մեռեալ կեկեղեցին Հաղորդեցան :

Տեսեալ Թագաւորին՝ որ կոչեր փղոսբիանոս կամ փիլիպիանոս , զգործս մատԹէոսի , խնդաց ըստ բժշկուԹեանն որոյ . բայց զի ոչ որոշէին յառաքելոյն , խորհէր կորուսանել զնա , և կայր ի տարակուսի . զի քազմուԹի քաղաքին յարեցաւ յառաքեալն : Յայնժամ առաւանայ կերպացեալ իբրև զմի ի զօրականացն՝ առնէ ցԹգրին . ընդ այդչափ վախեցեր յօտար աղանդաւորէն .

դա

դա մաքսաւոր էր, և եղև աշակերտ քս̄ի խաչելոյն 'ի հրէից, և արդ ելանէ ը̄ ե̄պսին պղատոնի ը̄ բարեան դուռն քաղաքիս. փութասջիր և կալցես զն̄ անդ դիւրաւ։ Առաքեաց թ̄գրն չորս զօրականս՝ բերել զնա. և ն̄ց̄ գնացեալ 'ի դուռն՝ ձայն խօսից լսէին, բայց տեսանէին և ոչ զոք. և երթեալ պատմեցին արքայի, և նա առաքեաց զկնի ն̄ց̄ այլ տասն զօրականս զինուք։ Սոքա յորժամ մերձեցան, տեսին պատանի մի զամբար 'ի ձեռին, որ այրեաց զերեսս և զաչս և զմօրուս ն̄ց̄. և յահի լեալ՝ դարձան առ թ̄գրն համրացեալք, և ոչ կարէին խօսել։ Յայնժամ դևն երևեալ 'ի ձև զօրականի խոստովան եղև, թէ ոչ կարես ստնանել ինչ մատթէոսի աշակերտին քս̄ի. զի ն̄ր̄ հրամանաւն եկեալ է աստ. և ինքն եղև իբրև ծուխ, և շիջաւ՝ անյայտ լեալ։ Եւ յահի լեալ թագաւորն՝ ո՛չ եկեր և ո՛չ արբ, և ո՛չ ննջեաց յերկիւղէն. և յարուցեալ ը̄ արշալոյսն առաւօտուն երկու իշխանօք հանդերձ՝ գնաց յեկեղեցին նենգուբ̄ սպանանել զմատթէոս. և իբրև եմուտ 'ի ներքս, խաւարեցան աչք ն̄ր̄. զձայն առաքելոյն լսէր, բայց զնա ոչ տեսանէր. և ասէ. ցո՛յց ինձ զքեզ առաքեա՛լ քս̄ի, և հաւատամ. զի այժմ ծանեայ՝ որ նա միայն է ճշմարիտ ա̄ծ, զոր քարոզես. և յասել ն̄ր̄ զայս՝ բացան աչքն. բայց ո՛չ դադարեաց 'ի նենգութ̄է սրտի իւրոյ։ Ասէ ցնա առաքեալն. ո՛վ արիւնարբու բռնաւոր՝ մինչև ցե՞րբ թաքուցանես զթոյնսդ 'ի սրտիդ, և ոչ յայտնես և կատարես զկամս հօրն քում սատանայի. զի արեան իմոյ ցանկայ անձն քո։

Զամօթի հարաւ թ̄գրն, և եկեալ անդրէն յապարանս իւր՝ հրաման ետ բազմութ̄ զօրականաց երթալ յափշտակել զառաքեալն 'ի միջոյ ամբոխին, և այրել կենդանւոյն 'ի բացի։ Եւ ն̄ք̄ կալան զմատթէոս, և տարան 'ի տեղին՝ ուր զչարագործսն տանջէին մերձ 'ի ծովն. և տարածեցին զնա յերկիր, և կապեցին 'ի չորս ցիցս զձեռսն և զոտսն. և կուտեցին 'ի վ̄ր̄ ն̄ր̄ չոր փայա, և վառեցին հուր. ցանէին և 'ի վ̄ր̄ ձէթ և ձիւթ և ճարպ. և էր պատուէր զօրականաց 'ի թագաւորէն, եթէ ոք ը̄դիմանայ ձեզ, նոյնպէս հրով այրեսջիք և զնա։ Եւ ժողովեցան հաւատացել̄քն 'ի վ̄ր̄ դահճաց, և կամէին բռնութ̄ բ̄ հանել զառաքեալն 'ի ձեռաց ն̄ց̄. բայց նա սաստեաց ն̄ց̄, և դադարեցին, և հուրն բորբոքեցաւ 'ի վ̄ր̄ մատթէոսի։ Եւ ն̄ր̄ համբարձեալ զմիտսն՝ աղաչեաց զա̄ծ վասն փրկութ̄ թ̄գրին և քաղաքին, զի

դարձցին յետ և մի կորնչեն. և ասաց. խաղաղութիւն ընդ ձեզ. և նոյնժամայն աւանդեաց վհատգին ի վէրսն ըստ ժամու ուրբաթուն ի նոյեմբերի ժէ (կամ հոկտեմբերի. ժը:) և տեսեալ պլատոնն եղեալ վհատգի առաքելոյն յօդս վերացեալ՝ սկսաւ սաղմոսել. և երկու աքանչելասեալ արքն՝ որ ինչն ի բարբոքեալ հուրն, աւուն զմարմինն ողջանդամ պահեալ, և տարան եգին՝ ուր քրիստոնէիցն ժողովքն էին:

Եւ նոցա տեսեալ՝ յոյժ ուրախ եղեն. և ժողովեցաւ ի տեղին քաղաքն ամ. և ալաղակէին, եթէ ո՛չ պոյ այլ ած, բայց ի միոյն՝ զոր մատթէոս քարոզեաց: Եւ լուեալ թէրին զալալակին՝ զարհուրեցաւ. և ընթացեալ փութապէս առ եղեան՝ անկաւ յոտս նր, և մեծաւ հառաչմամբ խնդրեաց թողութեն: Եւ տեսեալ եղեան ըզջերմեռանդն զվճռումն թէրին՝ օրհնեաց զնա և երեխայեցոյց, և յետ երից աւուրց միրտեաց. յայնժամ երևեցաւ մատթէոս ի վէր աւազանին, և առէ. թագաւորն անուճանեայն անուճամբ իմով մատթէոս, որպէս և որդի նր. իսկ կինն անուճանեցաւ սոփիա, և հարան՝ սիբնեախս: Եւ ելեալ թագաւորն յաւազանէն և ի սբ խորհրդէն՝ խորտակեաց զամ կուռս, որ յատպարանս և ի քալաքին. և առաքեաց հրամայեաց զամ կուռս ընդոյն առնել:

Յետ այսորիկ առաքեալն ի տեսլեան ձեռնադրեաց զթագաւորն քահանայ, և զորդի նր սարկաւագ, պատուելով զժամանակ փոխման եղեալն, և զայլորդեր նոցա զկնի նր: Եւ յետ երից ամաց երանելի եղեան պլատոն փոխեցաւ առ ած. և թագաւորն մատթէոս եթող կառավարութեն զթէրութեն իր առն քարեպաշտի աղգականի իւրում. և ինքն ձեռնադրեցաւ եպս քաղաքին իւրոյ ըստ հրամանի առաքելոյն. և ձեռնադրեաց զորդին իր քհնյ: Եւ տուն նմա չնորհք յայն, որ միայն այլոթիւք և ձեռն դնելով առողջացուցանէր զհիւանդս և զդիւահարս. և ծածկայ վարուք կացեալ՝ հանդեաւ խաղաղութեբ ի քս: Եւ նաւաւ յաթոռ եպսութեն որդին իր. և նա նոյնպէս բարւոք վարուք կեցեալ՝ փոխեցաւ ի միասին բարեխօսեն ընդ առաքելոյն առ ած վանս մեր:

Գաղ-

Քաղաքաց՝ ի վկայաբանութիւն սորին Մատթէոսի (ընդ-
դէմ պաշտելոյ) ըստ ճառընտրոյ լատինացւոց:

Յառաջաբանն ըստ վաստիկանեան օրինակի ոչինչ զայս
ինչ, թէ Մատթէոս աւետարանիչ էր՝ ի ցեղէն ևվեայ, ՝և
մանկասիրէ առաքեալ ընտրեալ. որ գրեաց զաւետարան
եբրայական տառիւք և բանիւք նախ քան զերթալն ՝ի քա-
րոզութիւն, և եթող յիշատակ ՝ի հայրենիս իւր. նախ ՝ի
հրեաստան աւետարանեաց, ապա ՝ի մակեդոնիա. և
նահատակեցաւ ՝ի պարսս. հանդչի ՝ի ըերինա պորտեայց
կամ պարթևաց: Ապա սկսանի պատմութիւն վարուց և
քարոզութիւնն յեթէոպիա այսպէս:

Ընդ այն ժամանակս էին երկու մոգք զարոյկս և ար-
փաքսատ յեթէոպիա ՝ի մեծ քաղաքն նատաբեր, յո-
րում էր թագաւոր եգիպտոս. որ պատերազ իւրովքն
հանդերձ՝ ածս ոմանս հասարէր զայն մոգս՝ արժանի
երկրպագութիւն. վասն զի յանկարծ կաշկանդէին զմարդիկ
՝ի գնացս՝ ցորչափ և կամէին. նոյնպէս և զաչս և զա-
կանջս անգործ առնէին. հրաման տային օձից հարկա-
նել զմարդիկ, և ինքեանք բժշկէին թովչութբ: Ընդ-
դէմ սոցա առաքեաց ած զմատթէոս, որոյ մտեալ ՝ի
քաղաքն՝ սկսաւ արձակել զկապեալսն ՝ի մոգուց, ըզ-
կուրացեալս և զխլացեալս բժշկել, զօձան թմրեցուցա-
նել, և զհարուճածեալսն բժշկել:

Զայն լսեալ եաես եթովպացի նեղքինին կանդակայ
դշխոյն սկրտեալն ՝ի փիլիպպոսէ, անկաւ առ ոտս առա-
քելոյն, և ասէ. ած առաքեաց զքեզ. և ընկալաւ զնա
՝և տուն իւր. և ամբարեկամք նեղքինուհւոյն սքանչացեալ
ըստ սքանչելիսն և ըստ սերձախօսութեան առաքելոյն՝ հաւա-
տացին և սկրտեցան: Եւ ասէ ցնա նեղքինին. զինարդ
դու՝ որ հրէայդ ես, քալ գնասես զվեզուս հեթանոսացի,
եգիպտացի և եթովպացի՝ ըզ զհամազգիս. և նա ասէ.
ած՝ որ բաժանեաց զվեզուս ՝ի կործանել անդ զաշտա-
բանն՝ առ ՝ի բնակել զարմ միաբանութեն մարդկան, առա-
քեաց զարդի իւր և զհոգին իւր սբ՝ ցուցանել մեզ, թէ
զմրափան չինուճած կանգնել պարտ է վասն յերկինս ծա-
նելոյ. վասն այժմ աշտարակն չինի ոչ քարամբք, այլ ը-
րութեք քոկ:

Իբրև եկին մոգքն հանդերձ երկու վիշապօք, որ էին
մահաշունչ և մահահոտ ՝ի աստուածութեն մարդկան, յայն-

ժամ կինքեալ մատթէի զանձն նշանաւ սքի խաչին՝ կա-
մէր ելանել ի հրապարակին. իսկ ներքինին ալրպե՛լոյր
զնա, և ասէր. եթէ կամիս՝ ըզ պատուհանն խօսեաց
ըզ մուտս, և մի՛ ելաներ ի տանէս՝ ի դուրս. այլ նա ասէ.
դու բաց ինձ զդուռն, և գու ըզ պատուհանդ տե՛ս
զանցս մուտուց: Եւ կ՚ելանել նր՝ վիշապքն, որ կայրն
առաջի մուտուց, անկան յոտս մատթէոսի թմրեալ ի
քուն. և ասէ մատթէոս ցմոգս. ո՞ւր է կախարդուհին
ձեր. զի թէ ոչ արձակէի զնրն իմ յա՛ քո, այժմ զնմ ցա-
ւուցն ի ձեզ թափէին վիշապքն: Եւ նք չանային պար-
թուցանել զվիշապ թովելով. և ոչ կարէին: Յայնժամ
ամբոխն աղաչէր զառաքեալն՝ աղատել զքաղաքն ի գա-
զանաց անտի. և մատթէոս յանուն յն՝ հրամայեաց նց
՚ի բաց գնալ հեզուԹ՛. և այնպէս ելին ը քաղաքն և
անհետ եղեն: Ա՚յնուհետև սկսաւ մատթէոս քարոզել
ժողովրդեան զբանն ա՛յ, սկսեալ յանկմանէն ադամայ
մինչև ցառաքումն առաքելոց:

Յաւուրան յայնոսիկ մեռաւ արքայորդին. զոր ոչ կա-
րացեալ մոգուց ապրեցուցանել կի՛ յարուցանել, պատ-
ճառէին առ արքայ՝ Թէ դիւք յափշտակեցին զնա. իսկ
ներքինին հաւանեցոյց ըզԹագուհին՝ դնել զմոգս ի պա-
հեստի, և կոչել զառաքեալն ա՛յ զմատթէոս. և եԹէ
նա յարուսցէ սակ ըորդի՛դ, տո՛ւր ոյրել զմոգս քնա-
սակարս քաղաքիս: Գնացին երկու իշխանք արքայն, և
բերին պատուո՛վ զմատթէոս. որոյ առաջի անկեալ Թա-
գուհին եւփինիասա՝ աղաչէր յարուցանել ըորդի իւր.
ըլ հաւատամ սակ՝ Թէ յի՛ն գալով աշակերտ՝ կարօղ ես
յարուցանել զմեռեալն: Ասէ առաքեալն. փոխանակ
ըլ՝ մինչև լո՛ւեալ յինէն զքարոզուԹի՛ զքո՛ էք, ասես՝
հաւատամ, ապայ քեզ որդին քո կենդանի. և մեռեալ
առաքելոյն՝ ուր էր մեռեալն, յարօԹս եկաց. և սակ.
յանուն ա՛ն իմոյ յի՛ն քո՛ խաչելոյն արի՛ հրամանաւն. և
իսկոյն յարեաւ մեռեալն:

Զահի հարաւ Թագն. և ետ քերել առաքելոյն պսակս
և ծիրանիս, և քարոզ կարդալ յա՛մ տրուԹե՛ իւրում,
և ասել. եկայ՛ք տեսէ՛ք զա՛ծ ՚ի պատկեր մարդոյ: Եւ
՚ի գալ ամբոխին մեռելինօք և ջահիւք և խնկօք և զո-
հիւք, ասէ մատթէոս. ես ո՛չ եմ ա՛ծ, այլ ծառայ ա՛ն
իմոյ յի՛ն քո՛ որդւոյն ա՛յ ամենակալի, որ առաքեաց
զիս առ ձե՛զ, ոա՛ զի Թողեալ զմոլորուԹի՛ կուռց ձերոց՝
դարձջի՛ք առ ա՛ծ. և եԹէ զիս՝ որ ձեզ նման մարդ եմ,
ա՛ծ կարծեցի՛ք, որչափ ևս առաւե՛լ պա՛տ է ձե՛զ ա՛ծ

հա-

հաւատալ զտ̄րն իմ, յորոյ անուն յարեաւ արքայորդին. արդ 'ի բա՛ց բարձէք յաչաց իմոց զայդ ա̄մ սպասս, և երթե՛ լ շինեցէ՛ք տաճար, ժողովիլ անդր, և լսել զբանն ա̄յ։ Իսկ մոդքն փախեան 'ի պարսս։

Արդ յաւուրս երեսուն՝ վաթսուն հազար արք կատարեցին զեկեղեցին, զոր մատթէոս անո՛ւանեաց յարութի. զի յարութի՛ն եղև առիթ շինութե՛ ։ Եւ նստաւ մատթէոս յեկեղեցւոջ անդ զամս ի՛գ. և կարգեաց քահանայս և պաշտօնեայս. շինեաց և զայլ բազում եկեղեցիս, և կացոյց ե՛պսունս 'ի քաղաքս և յաւանս. մկրտեաց զարքայ և զդշխոյ և զյարուցեալ մանուկն, և զդուստր արքայի՝ որում անուն էր եփիգենիա։ Արար և անբաւ սքանչելիս և նշանս բժշկութե՛. և միաբան ը̄ արքայի քակեաց զմեհեանս, և կործանեաց զկուռս։ Իբրև փոխեցաւ առ տ̄ր եգիպպոս արքայ լի աւուրբք, թ՛գրեաց հիւրտակոս եղբօրորդի նր̄ ը̄ նր̄. սա կամեցաւ առնուլ իւր 'ի կին զեփիգենիա կուսան նո՛ւիրական, որոյ առեալ էր զքօղ 'ի ձեռանէ մատթէի, և լեալ մայր կուսից աւելի քան երկերիւրոց։ Խոստանայր արքայ մատթէոսի մինչև ցկէս թ՛գրութե՛ իւրոյ, միայն թէ հաւանեցուսցէ զեփիգենիա։ Ասէ ցնա մատթէոս. ը̄ հրամանի նախորդին քո՝ որ յա̄մ շաբաթուդայր 'ի տեղի քարոզութե՛, հրամայեա՛ գալ ա̄մ կուսանաց ը̄ եփիգենեայ, և լո՛ւիցես անդ՝ զոր խօսեցայց վ̄ո բարւոյ պսակին. և թ՛գրն արար ուրախութ՛ ըստ քանի նր̄։

Անդ խօսել սկսաւ մատթէոս, թէ զիա՛րդ օրհնեաց ա̄ծ զամուսնութի՛. մինչև մեծաձայն դովել թ՛գրին զբանս նր̄. և յաւել ասել առաքեալն. պատո՛ւական է ամուսնութի՛, յորժամ լծակիցք կեցցեն սրբութ՛ և արդարութ՛. բայց թէ ոք 'ի ծառայից կամիցի յափշտակել զկոյս խօսեալ արքայի, մահապարտ է. արդ և դու որդեա՛կ իմ հիւրտակ՝ որ գիտեսդ, զի եփիգենիա հարսնացեալ է երկնաւոր արքայի, զիա՞րդ իշխես կորզել զհարսն հզօրագունի քան զքեզ։ Յայնժամ հիւրտակոս լի բարկութ՛ մեկնեցաւ 'ի տեղւոջէն. իսկ մատթէոս անվեհեր յառաջեալ 'ի բանս՝ ասէր. երկրաւոր թ՛գրի իշխանութի՛ սակաւժամանակեայ է, իսկ երկնաւորին յաւիտենական. և զո՛րօրինակ անպատում են վարձք հաւատարիմ եղելոց, նոյնպէս և անասելի տանջանք՝ որոց անհաւատարիմ գտանին, և թողուն լքանեն զսըրբուի. և եթէ 'ի մարդոյ պարտ է երկնչել, քանի՞ ևս յա̄յ։

Յայն-

Յայնժամ անկաւ եփիդենիա յոտս մատթէի, և խնդրեր զօրհնուելն նորա կուսանօքն հանդերձ՝ ապրիլ ի ցաւմանէ Թէքլին. և նա ասէր աղօթս ի վեր նց՝ արկեալ քօղ ի վեր ամենեցուն. և յանձն ասէր ոք եթէ օրհնուիք. և յասել ամենեցուն զամէնն՝ կատարեցաւ խորհուրդ պատրաստի. և արձակեցան ի տունս իւրեանց: Իսկ մատթէոս կայր տակաւին առ ոեզանովբէոս կատարելոյ զխորհուրդ մարմնոյ և արեան նոն. և ահա եհաս դահլճ ի հիւրտակայ, և հարեալ առաւերուս զառաքեալն՝ նահատակեաց ի սեղանոյն: Զոր լուեալ ժողովրդեան՝ դիմեցին հրով ի պալատն. բայց քահանայք և ամենայն եկեղեցւոյն և աշակերտք առաքելոյն արգելին զնոս, և ասեն. մի առնէք ոճրագործք ընդեմ հրամանին ոյ. այլ կատարեսցուք միաբան ցնծութիւնք զմարտիրոսուն առաքելոյն, և մնասցուք անտեսութեն ոյ:

Իսկ եփիդենիա զամ արծաթի և զոսկի և զակռունս իւր պատուհասականս քահանայից՝ չինել եկեղեցի ի պատիւ առաքելոյն, և զմնացեալ ինչս բաշխել աղքատաց. և ինձ ինայ ասէ մրցիլ ընդ հիւրտակայ: Քանզի ատեպ յղեր արքայ զահինայս մեծամեծաց հաւանեցուցանել զեփիդենիա. և ոչ լեալ գամագիւտ՝ կոչեաց զկախարդս ձգել զնա գիւղ. և ի դերև եղեալ՝ ետ հուր արկանել զբնակութիւնս կուռքն: Եւ ի պատել հրոյն՝ երևեցաւ հրեշտակ տեառն եփիդենիա, որում անուն էր ոսգոր, պատուիրակեալ ընդ ձեռամբ մատթէի. էր նե ամայ ի Թէքլե իբրեւ, և Թէքլեայ ասէ կէ. և մինչդեռ կէնդանի էր, կացոյց զնի յորդւոց իւրոց Թագաւոր. և զնիւան զօրավար. և էր բարեկամութիւնք ընդ հռովմայեցւոց և ընդ պարսից. և ամ կողմանք եթէոպացւոց լեալ ոչզպատուհասեցեօք՝ մինչև յայսօր ի ձեռն եփիդենեայ օրհնեն զնա. և լինին մեծամեծ սքանչելիք ի վիրապարան. նե երանելի առաքելոյն մատթէոսն զօրութիք և կարողու-

զուարթ ան մերոյ յայն քան։

Արդ՝ ոչ տեսանեն խնամատուն վերծանօղք, թէպէտև յերկուսին վկայաբանութեան կան հնախօսութիք հաւասարութիւնք և դժուարահաւասարութիք, կամ լաւ ևս ասել՝ միօրինակ խնդրութիք, բայց ըստ ինքեան են զուգակշիռ ընդհնութիք և ընդհեղինակութիք. վինչ զի ջուննէր երանելոյն ասելոյնց բոլշանդեան նախապատիւ առնել զերկրորդն քան զառաջինն. մանաւանդ թէ իսպառ՝ի բաց տարապերել զառաջինն իբր օտար յերկրորդէն. վը զի ոչ են սքեր կու պատմութիք անհամաձայնք կամ ներհականք, այլ այլևայլ առաքելոց վկայաբանութիք. վին (զոր և կատ միոյ ոք) ընծայելի մատթէոսի, և միւսն մատաթէոսի. վինչև զարմանալ ինձ՝ թէ զինչ՞ զկարաց գուշակել զայդ իբիք երօք, ոչ քայլն ասելոյնք քննիչ վարուց սքեյն մատթէոսի, և ոչ զգօնն հեննաքեննիոս քննիչ վարուց սքեյն մատաթէոսի։

Ապաքէն և ինքն ասելոյնք զրէ առաւանօր՝ի նախաճաշ նօթութիս իւր, թէ լսանիք հաստատակօրէն ասելոյնց զսքեն մատթէոս՝ի 21. սեպտ. բայց են առ նա և օրինակք վկայագրոց, որք գնեն՝ի մայիսի 1. կամ 6. և կամ՝ի 9. հոկտ. * և՝ի ձեռագիրս ինչ ևս (ասէ), ՚ք յեպիփանեան, ՚ի կորբեան, և ն. լինի յիշատակ սքեյն մատթէի ,, ՚ի 21. մայիսի. ուր առ վերծանի Մա- ,, փաիէոյ. և չէ մարթ առաւել ընդհեղ ասել, թէ որ ընթերցորդեմք, թէ չէ մարթ առաւել ասել, թէ որ այն ,, ցոճածն ևցէ աւետի հարպեսատ ||։ Արդ և մեք երկերկուց վկայաբանութեանց ընծայելի ևցէ մատթէոսի կամ մատաթէոսի. վն անմարթ է միաւամ ևնել ընծայել, կամ զվին ընդունել և զմիւսն չընդունել։

Օրինակ ունելոյ այսմ և յընթերցուճածս սօնացուցին մերոյ. ուր ոչ սակաւ օրինակք՝ մանաւանդ տպագրեալք, փոխանակ գրելոյ՝ի սօնի անանիայ առաքելոյն՝ մատաթէոյ և բառնաբայ ևն, գրեն մատթէի կամ մաթէի, և բառնաբայ. և այսկամ չփոթելով ընդմանաձայն անուանդ մատաթիայ՝ որ ըստ այլոց մատթիայ կամ մաթիայ, ընդ մատթէոսի, և կամ հաւանելով՝ թէ ընդ բառնաբայ սօնել ևցէ մատթէոս, որոյ աւետարանն գոյաւ ընդմարմնոյ բառնաբայ. թէպէտև յայնժամ չէր պարտ կրկնել զմատթէոս ընդ մարկոսի և ընդ այլ աւետարանիչս. և սակայն ոչ ևս մնայր սօն մատաթէոյ՝ի սօնացուցի։

Այլ որ մեծն է, զի տեսաք՝ի վարս սքեյն մատաթէոյ՝ եթէ ընդ ամ ազգաց աւանդութիք՝ արևելեցւոյց և արևմըտ-

մտեալց, յեթեղովպիա ասի քարոզեալ. և ըստ գոյացուե զայն ինչ պատմեն զնմանէ, զոր ասա զմաթեոսէ գրեն լաւելիք: Իսկ թե անդանօր զմատթիա Համարին ի վախճանի գաղեղէ ի հրէաստան, և անդ նահատակեալ քարկոծմամբ ի հրէից, ոչ փոքր կարծիս ասի մեզ՝ թե չիոնեալ իցեն ոմանք զպատմութիւն սուրբ փանոսի նա խալկայի. իբր զի ընթերցեալ առ երբայեցիս՝ թե ա հաւերժ յոյն քարկոծեցաս Տաճիէլս կոչմամբ, որ է ասել յուսնալէն աշխէրա, Համարեալ են Տաճիէլս լինել: Եթէ այսպիսի մտածութիւք մեր ջրեսցին յայլոց իմաստնոց, և մեք ընդակից լինիմք նոյ:

(4) Ա՛ն նշանարաց սէյն մատթէոսի յառաջ բերէ սուիւ սիճ սագաստոք հանդերձ զբանս կոչումիայ կարգելնալի, որ գրէ ՝ի գլ. ՝ի ՟ե. թէ վաճառականք երիտասնացաց բերեալ իցեն զմարմին սքի առաքելոյն ՝ի բրիտանիա արմրկեան յաւուրս Թէքլի տէրոյն սոլոմոնի ՝ի Թ դարուս, և եգեալ ՝իքաղաքն Լեգնասոյ. և Թէ ՝ի Ժ դարուս յառնալ խաչագուաց զայն քաղաք՝ ածեալ իցեն ՝ի լուկանիա. և զի զայս առ վաղենտիանոս Թագաւորաւ ասեն, որ էր քանի մի գարուք յառաջ. վայ գիւրաւ սակ Համարի սուիւսինգ. ոՀր Թողցուք զայն, զի Թէրևս չիոնեն ըստ լուք կի՛ լուագ քաղաքի՝ որ ընդ մէջ եգիպտոսի և հապէշոց, ուր կայ ասեն եկեղեցի յանուն սքի մատթէոսի. կի՛ ըստ բալքաք քաղաք սոլոմոնի կոչեցեալ, ՝ի ըստ բերբերաստն, ուր էր ըստ այլոց երբեմն մարմին սքի մատթէոսի:

Ա՛պա անաչառ խոսքով, անչիշատակ հնոցն ՝ի Ժ գալբոս գաւառ լիսալիա ՝ի սահմանս լուկանիոյ քաղաքի՝ յաւերակս պեստանայ քաղաքի մարմին ինչ սքի. զորմէ աւանդաւորեալ է սալերնացւոց, Թէ ինքնին սքին մատթէոս յայտնեալ իցէ պեղագէայ ուսմանն կամար կի՛ այլ ասէ՝ մարմին իւր լինել. վայ և ասին պետասնայ յայտնելոյ՝ հանդերձ փոխագրեալ իցէ յամուրն գաբուգ աքուբիս կոչեցեալ ՝ի մայր եկեղեցին սքի մարիամայ: Ըստ լուծեալ սակ գիտելիս իշխանն սալերնոյ՝ առաքեաց զոյգ հանդերձ աբբայ և զոր պատուականս առեալն, և եհան բերել զպատուական գանձն ՝ի քաղաքն սալերնոյ. զոր եհան սեղանոյն բեռնաւորեալ հանգոյց պատուով անգ ՝ի առաջարի սքի յոհաննէսի. ուստի լինի անդ մեծ փոխադրութիւն ՝ի ՟ց մայիսի: Թէպէ զբանիս մի սքին, զոր էառ լանգուելիս իշխանն բենեվենտու:

Ա՛յժ յետ սակաւուց՝ Թէրևս յերեսաց պատերազմաց՝ ասի

ասի անյայտացեալ տապան սբ̄յն մատթէոսի 'ի սալերնոն. որ և գտաւ անդրէն 'ի յաջորդ դարու յամի իբր 1075, կամ 1085. և ապա դուքսն հռոբերտոս գոճիսկարդոս տիրեալ քաղաքին սալերնոյի՝ շինեաց անդ եկեղեցի յանուն սբ̄յն մատթէոսի. ուր եդաւ մարմին սբ̄յն փառաւոր տապանակաւ. ուստի կաթէ ասեն մանանայ պատուական 'ի բժշկութի՝ ա̄մ ախտից. և գնան անդ ուխտաւորք յա̄մ տեղեաց։ Եւ մեզ իսկ գլխովին եղև անցանել ը̄ սալերնօ յամի 1810, 'ի գնալն 'ի կաղաբրիոյ 'ի նէապօլիս, և լսել զմեծամեծ սքանչելիս սբ̄յ աւետարանչին ը̄ վաւերական յիշատակարանաց. այլ չունէաք ժամանակ առօրին յերկար դիտելոյ ը̄ տենչանաց մերոց։ Բայց կան և երևելի մասունք նշխարաց սբ̄յն 'ի զանազան տեղիս. և զի գլուխ սբ̄յն մատթէոսի յիշի 'ի բելգիա, և 'ի գաղղիա ևս, պա՛րտ է իմանալ կամ մասն 'ի գլխոյն, և կամ գլուխ այլոյ համանուն և նմանաձայն սբ̄յ։ Որ ոք կամի, Ճոխագոյնս տեսցէ զայսցանէ առ ստիլտինգայ բոլլանդեան։



Ա՝ Կ Ա.

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Մարկոսի աւետարանչի ։

Հ · մարտ · 24 ։ Յ · Լ · ապր · 25 ։ Եգիպտ · կամ ղփտ · մարտ · 26 · Ա ապր · 25 ։ Ճառընտ · Ա · շհբ̄ ։ Բ · ճծա̄ ։ Զ · ճլա̄ ։ Բոլլանդեանն հենսչենիոս 'ի գ̄ հատ · ապր · էջ · 344 = 358 · և 997 · ևս և խղ̄ = ծ̄ ։

ԲԱՐՁՐԱԲԱՐԲԱՌ աւետարանիչ սիոնի՝ հզօր իբրև զառիւծ՝ ն̄բ առաքեալն Մարկոս (1), էր 'ի թոռ̄ոյ եօթանասուն և երկու աշակերտացն քս̄ի՝ ը̄ հասարակ կարծեաց (2). և միանգամայն ընտանի աշակերտ վիմին հաւատոյ՝ իբր ձեռասուն և հոգևոր որդի ն̄ր սիրելի. որպ̄ս և անոռ̄անէ իսկ զնա 'ի կաթողիկէ թղթի իւրում (3) ։ Եւ ը̄ բազմաց է նոյն ինքն յովհաննէս մարկոսն կոչեցեալ՝ եղբօրորդի կմ քեռորդի բառնաբայ, և ընթացակից պօղոսի. զոր և հաստատէ ընտանուի̄ն պետրոսի առ տունն մարիամու մօրն յովհաննու մարկոսի, ուր եկն նա յետ ազատութ̄ե 'ի բանտէ ։ Այլ քանզի ոմանք որիշ համարին, վ̄ս̄յ և մեք ը̄ օրինակի նոր տօնացուցից ուրոյն գրեցաք զվարս

յով-

յովհաննու մարկոսի՝ մինչև 'ի դառնալ նը՞
'ի կիպրոսէ առ պօղոս յետ կատարմանն բառ-
նաբայ. ապա թէ ոչ՝ այսր պէտք էին փոխա-
բերել զայն ա՞մ անցս մարկոսի ։

Արդ՝ եթէ՛ մի իցէ, և եթէ՛ երկու մարկոս
անուն 'ի մէջ աշակերտաց, այս ինչ յայտնի
է ը՞ միաբան աւանդութե՞ նախնեաց առհա-
սարակ, զի փառաւորեալ աւետարանիչն մար-
կոս՝ ո՛չ միայն էր որդիացեալ աշակերտ, այլև
թարգման ն՞բյն պետրոսի. իբր զի՝ կամ ո-
րովհետև ո՛չ միշտ 'ի կիր արկանէին առա-
քեալք զշնորհս լեզո՛ւախօսութե՞, մարկոս
քաջ ներհուն յոյն և լատին բարբառոյ՝ ըզ-
բանս պետրոսի զեբրայեցի լեզո՛ւով խօսե-
ցեալս թարգմանէր 'ի լսելիս հելլենացւոց
և հռովմայեցւոց, և կամ էր դպրապետ
ն՞բյն պետրոսի, և 'ի կամիլ նորա գրել ըզ-
թուղթս՝ մարկոս զկենդանի բարբառ նորա
թարգմանաբար 'ի գիր անցուցանէր յունա-
կան ։

Մինչ զի և վ՞ս աւետարանագրութե՞ ասաց
տերտուղիանոս, թէ * զոր ինչ գրեաց մար-
կոս, պետրոսի ընծայի, որոյ թարգման էր
մարկոս ‖ ։ Վ՞ս զի՝ որ՞պս միաձայն խօսին ն՞բ
հարք, նա ի՞նքն մարկոս 'ի խնդրոյ հաւա-
տացելոց և 'ի հրամանէ պետրոսի գրեաց
զաւետարանն ը՞ թելադրութե՞ հոգւոյն ա՞յ.
և պետրոս հրաման ետ հաստատութ՞բ ըն-
թեռնուլ յա՞մ եկեղեցիս ։ Եւ այս եղև իբ-
րու ժ՞բ, կամ ժ՞ ամօք զկնի համբարձմանն
ա՞ն. ը՞ ոմանց յաղեքսանդրիա գրեալ 'ի լե-
զու

զու եգիպտացի՝ . և ըստ այլոց՝ 'ի հռովմ, յորժամ անդ էր մարկոս ընդ պետրոսի, 'ի յոյն բարբառ՝ որ էր լեզու գրագիտաց առ հռովմայեցիս . և կամ 'ի լատինն, որ էր ընիկ բարբառ հռովմայեցւոց . Թո՛ղ զի յո՛ր և է լեզու գրեալ իցէ, Թարգմանեցաւ 'ի նմին աւետարանչէ կմ առ նովաւ և 'ի յոյն և 'ի լատին . և նախագիծ այն օրինակք ունէին զվաւերական հեղինակութիւն սկզբնագրին : Գտանի ցարդ ևս առ վենետկեցիս՝ որոց փառք պարծանաց է առիւծն ՆԲ մարկոս, հին ձեռագիր աւետարան նորին 'ի պահեստի գանձուց գաղտնեաց կմ 'ի տապանի նորա՝ կարծեցեալ սկզբնագիր ՆԲ աւետարանչին, բայց առ հնութեն Թերթ ըստ Թերթի մածեալ, և գիր մաշեալ և տժգունեալ՝ անվերծանելի գլխովին . մինչև անհնար լինել որոշել՝ յունակա՞ն իցեն նշանագիրքն, եթէ լատինական . զի և տառք երկուց ազգացս՝ մանաւանդ երկաթագիրքն՝ դրեթէ ո՛չ զանազանին ըստ ձևոյ : Այս ՆԲ մատեան անգին ասի բերեալ յակու՛իզիոյ 'ի վենետիկ յամի տն 1472, կմ 1420 յաւուրս Թովմայի մոչենիկոյ դքսի . ուր հաղիւ՛ ասեն մարթացաւ ոմն ընթեռնուլ իբր յունական նախադրութիւն գադա, ՆԲ ըստ . զոր այլ ոմն ընթեռնոյր իբրև վերջաւորութիւն լատին ձայնի՝ պադա . սոյնպէս և զայլ ուրու՛ական նշանագիրս ոմն յունարէն գուշակէր, և ոմն լատիներէն : Եւ քանզի առաւել լատինական գոլ երևեցաւ, ըստ նմին և հաւաստի դատեցաւ՝ Թէ է Թարգ-

մանութիւն նախկին, քան շարադրութիւն առաջին ։

Ասի և այս իբրև ստոյգ, թէ մինչդեռ յակուիղիա էր մատեանս, եկեալ անդր կայսրն կարոլոս չորրորդ յամի 1354, բազում՝ թախանձանօք էառ 'ի նիկողայոսէ պատրիարգէ տեղւոյն՝ որ էր իւր եղբայր, մասն մի 'ի հնացել աւետարանէ անտի. ՚ի իբր յեօթն տետրակաց՝ զերկուս. որ և պահի ասեն ցարդ յեկեղեցւոջ բրակայ, ոսկետուփ մարգարտազարդ յօրինուածով. և սկսանի 'ի բնաբանէ անտի. մարկ. ժբ. 21. * և երկրորդն էառ զնոյն, և մեռաւ ‖, մինչև ցկատարած, լատին տառիւք. զոր և ընթեռնուն 'ի պատարագի զատկի և համբարձման. և զի մնացուածն վենետկեան է անկարդալի, դարձել մնայ յերկբայս, թէ օրինակն բրակայու իցէ հատուած այլոյ մատենի ։ Յայս վայր վ՚ս գրուեն սբ՚յ աւետարանին՝ որ ՚ը մարկոսի ։

Իսկ ինքն ՚ս՚բ աւետարանիչն մարկոս՝ ՚ը միաբան աւանդութեան հին վկայաբանից (4), յետ բազմօք ընկերելոյ գլխաւոր առաքելոցն պետրոսի և պօղոսի, գնաց քարոզութ՚բ 'ի գաւառս եգիպտոսի, 'ի լիբիա, 'ի մարմարիկա, յամոնիկա, և 'ի պենտապօլիս. և աւետարանէր զք՚ս նշանօք և զօրութ՚բ ՚տն. և զտեղի առեալ առժամանակ մի 'ի կիւրենա քաղաք պենտապօլսոյ՝ բազում սքանչելիս արար 'ի հիւանդս և յայսահարս. և զբազումս յանհաւատից դարձոյց յ՚ածգիտութ՚ն, և կործանեաց զբագինս կռոց ։

Յետ այսորիկ՝ էառ հրաման 'ի տեսլեան՝ գնալ 'ի մեծն աղեքսանդրիա եգիպտացւոց, որ և կոչի քաղաք աղեքսանդրի, և անդ սերմանել զբանն կենաց, և առնուլ զպսակն։ Յայնժամ վառեցաւ երանելի աւետարանիչն իբրև քաջ նահատակ առ առաջիկայ հանդէս մրցանաց, և ասէ ցեղբարսն. խօսեցաւ տ̅ր ը̅ ի՝ յաղեքսանդրիա երթալ. և ն̅ք̅ յուղարկեցին զնա մինչև 'ի նաւ անդր. և ճաշակեալ ը̅ նմա զհաց՝ հրաժարեցան 'ի նմանէ, ասելով. տ̅ր յ̅ս̅ ք̅ս̅ յաջողեսցէ զճանապարհ քո։

Եւ եհաս առաքեալն յաւուրն երկրորդի յաղեքսանդրիա. և ելե̅լ 'ի նաւէն՝ եկն 'ի տեղի մի կոչեցեալ բեննիդիոն, և անտի գայր 'ի քաղաքն։ Եւ յորժամ կոխեաց զսեամս դրանն, պատառեցան կօշիկքն. և ասէ. արդարև ուղիղ է ճանապարհս այս. և ետ զկօշիկսն 'ի կօշկակարն՝ որում անուն էր անիանոս կմ անիանովն. և յորժամ սկսաւ կարել, խոցեաց այրն հերունովն զձեռսն, և ճչեաց առ ցաւոցն, և ասէ. ո՛վ մի տ̅ծ։ Եւ առաքեալն ուրախ եղև ը̅ բարբառ նորա. և գիտաց՝ եթէ յաջողեաց տ̅ր զճանապարհ իւր՝ յայտնի առնել զանձն այսու օրինակաւ. վ̅ս̅յ եթուք 'ի գետինն, և զկաւն եդ 'ի վ̅ր̅ խոցոյն՝ ասելով. յանուն տ̅ն մերոյ յ̅ի̅ ք̅ի̅ որդւոյն տ̅յ ողջասցի՛ ձեռնդ այդ. և վաղվաղակի ողջացաւ ձեռն ն̅ր̅։

Յայնժամ սքանչացաւ կարու՛ակն ը̅ զօրութի̅ բանից առաքելոյն. և հայեցեալ ընդ

ճըգ-

Ճգնազգեաց կերպարանս նը՝ մեծապէս սի-
րով հրաւիրէր զնա 'ի տուն իւր. ասէ. աղա-
չեմ զքեզ այրդ ա՜յ, զի եկեալ ագանիցիս 'ի
տուն ծառայի քո, և կերիցուք 'ի միասին պա-
տառ մի հացի. զի արարեր այսօր ը՜ իս ողոր-
մութիւն։ Եւ երանելին մարկոս ասէ ցնա
զու՛արթութ ը՜. տ՜ր տացէ քեզ յերկնից ըզ-
հացն կենաց. և բռնադատեաց զնա այրն,
և եմոյծ 'ի տուն իւր ուրախութ ը՜։
Եւ 'ի մտանել իւրում ասաց ն՜բն մարկոս.
օրհնութի՝ տ՜ն քնակեսցէ 'ի տեղւոջս յայս-
միկ. և արարեալ աղօթս՝ նստաւ։ Եւ ասէ
ցնա անիանոս. հայր, ասա՛ ինձ աղաչեմ,
ուստի՞ ես դու. և ուստի՞ քո բանդ այդչափ
հզօր և կենսառիթ։ Պ՜խնի ետ մարկոս. ես
ծառայ եմ տ՜ն իմոյ յի՝ քի՝ որդւոյն ա՜յ։ Ասէ
այրն. ցանկայի տեսանել զնա։ Եւ մարկոս
ասէ. ես ցուցից քեզ զնա. և սկսաւ պատմել
նմա զաւետարանն ք՜ի. և յաւել առնել
զայլ նշանս և սքանչելիս. մինչև հաւատաց
անիանոս 'ի ք՜, և մկրտեցաւ ա՜մ ընտանեօքն
իւրովք։ Եւ 'ի բազմանալ օր ը՜ օրէ աշակեր-
տացն՝ հիմն էարկ եկեղեցւոյ ն՜բն մարկոս 'ի
քաղաքի անդ։ (6)
Ազդ եղև գլխաւորացն աղեքսանդրացւոց,
եթէ գալիլեացի ոմն եկեալ է անդր, քակ-
տիչ զոհից դիցն, և խափանիչ պաշտամանց
ն՜ց. և խնդրէին սպանանել զնա։ Իմացեալ
երանելւոյն մարկոսի զխորհուրդս ն՜ց՝ ձեռ-
նադրեաց յաղեքսանդրիա փոխանակ իւր ե-
պիսկոպոս զանիանոս, որ և անանիոս, և այլ

երիս քահանայս՝, որոց անուանք էին մեղիոս կամ միեղոս, սաբինոս և կերդոն. ձեռնադրեաց և եօթն սարկաւագունս. կարգեաց և այլ մետասան անձինս 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ: (6)

Եւ ինքն գնաց 'ի բարկա քաղաք պենտապօլսոյ, և արար անդ ամս երկու. դարձոյց զբազումս, և ձեռնադրեաց եպսունս և քահանայս և պաշտօնեայս, և շինեաց եկեղեցիս: Եւ դարձ արարեալ յաղեքսանդրիա իբրև 'ի սեպհական աթոռ իւր՝ եգիտ զեղբարսն բազմացեալ շնորհօք և հաւատովք տն, և բարեզարդեալ զեկեղեցին զհիմնարկեալն յիւրմէ 'ի տեղւոջն՝ որ կոչիւր բուկուղի, ոյ նախիրք կամ արջառք, մերձ 'ի ծովեզրն 'ի ներքոյ ժայռից. և ուրախ եղև յոյժ. քանզի համարձակութ պաշտէին և քարոզէին զքս: Եւ ինքն զաւետարանական և զառաքելական պաշտօնն 'ի կիր արկեալ՝ զօրացուցանէր և զուարթացուցանէր զամենեսին. և բազում սքանչելիս գործէր 'ի վր հիւանդաց, կուրաց, կաղաց, խլից և համերց. որով և յաւելան 'ի տր բազմութիւք հաւատացելոց: Ընդ որ լցան նախանձու կռապաշտքն, և կրճտէին զատամունս 'ի վերայ սբյն. և էր շշնջիւն զնմանէ յամ հրապարակս և 'ի ժողովս աղեքսանդրացւոց, թէ մեծ է զօրութիւն առն այնորիկ: Եւ եղև յաւուր սբյ զատկին 'ի ժամ պատարագի, յորժամ և նք զսերապիական տօնն իւրեանց կատարէին, դիմեցին 'ի վր առաքելոյն. և կապեցին չուան

ը՝ պարանոց նը՝, և ընկեցին յերկիր. քար-
շէին ընդ մէջ քաղաքին, և այպն առնելով
աղաղակէին. քարշեցէք 'ի նախիրս զբոբո-
ղոնդ զանբան անասունդ։ Եւ առաքեալն
աղօթէր և ասէր. գոհանամ զքէն տ՝ր իմ և
ա՝ծ իմ յ՝ս ք՝ս, զի արժանի եղէ զայսոսիկ
կրել վ՝ս անու՛անդ քո ս՝բյ. և այնչափ անխը-
նայ ձգեցին զնա, մինչև կտրատեցաւ ա՝մ
մարմինն. և քարինքն և հողն լցան արեամբն.
և տարան արկին զնա 'ի բանտ ը՝ երեկս։
Եւ 'ի մէջ գիշերին՝ մինչդեռ դուռն բան-
տին փակեալ կայր, և պահապանքն առ դուրս
նստէին, եղև շարժումն մեծ. և հրեշտակ
տ՝ն իջեալ մերձեցաւ 'ի նա, և ասէ. ծառա՛յ
ա՝յ մարկոս, գլխաւո՛ր ս՝բցն՝ որ են յեգիպ-
տոս, ահա անուն քո գրեալ է յերկինս 'ի
գիրն կենաց. և համարեսցիս դու 'ի թիւ՛
առաքելոցն և աւետարանչաց. և անուն քո
ոչ ջնջեսցի յաւիտեան. և նշխարք ոսկերաց
քոց յերկրի ո՛չ կորիցեն։ Օ այն լու՛ել ս՝բյն
մարկոսի՝ ուրախ եղև և գոհացաւ զա՝յ. և
զձեռսն յերկինս վերացուցեալ՝ ասէ. Տ՝ր իմ
յ՝ս ք՝ս՝ որդի ա՝յ և բան հօր, մի՛ թողուր զիս.
այլ ընկա՛լ զոգիս իմ, և տո՛ւր ինձ ճանապարհ
բարի դալ առ քեզ, և խառնեա՛ զիս 'ի թիւ՛
ս՝բց քոց։ Եւ երևեցաւ նմա տ՝ր նովին կեր-
պարանօք և ձևով՝ որով կայր ը՝ աշակերտսն.
և ասէ. Խաղաղութի՝ ը՝ քեզ աւետարանի՛չ
իմ մարկոս. Եւ նա ասէ. փա՛ռք քեզ տ՝ր իմ
յ՝ս ք՝ս։ (7)
Եւ յորժամ առաւօտ եղև, հանին զնա 'ի

բանտէն. և դարձեալ քարշեցին՝ ոպ յառաջն. մինչև յոգիս ապաստան լինել սբյն, և ասել. 'ի ձեռս քո տր յանձն առնեմ զհոգի իմ. և այնպէս աւանդեաց զոգին՝ յապրիլի իե. յաւուրս ներոնի կայսեր, ըս ոմանց 'ի ժդերորդ ամի նր, ՝ի յամի տն 67, կմ 68. միով ամաւ զկնի կատարման պետրոսի և պօղոսի. և ըս այլոց կանխագոյն՝ յամի տն իբր 60 կմ 61, այն է եօթներորդ կմ ութերորդ ամ ներոնի։ Իսկ զմարմին սբյն ընկեցին անօրէնք 'ի հուր, զի այրեսցի. և եղև անձրև սաստիկ և որոտումն և փայլատակունք զօրն ողջոյն. և անձրևք շիջուցին զհուրն. և երթեալ եղբարցն՝ հանին ամբողջ զպատուական մարմինն, և եդին 'ի փորեալ վիմին 'ի տեղւոջն՝ ուր սովոր էր մատուցանել զմշտամռունչ աղօթս յարևելեան կողմն տաճարին։ Եւ յաջորդեաց յաթոռ նր յաղեքսանդրիա անիանոս եպկս ձեռնադրեալն 'ի նմանէ, և հետևօղ առաքինուեց նր։

Եւ էր սբն մարկոս՝ ասեն վկայաբանք, անձամբ միջակ, երկայնաքիթ, յօնեղ, աչեղ (՝ի մեծակն կմ լաւաչեայ), և խտամօրուս (զոր ոմանք թարգմանեն՝ պակասամօրուս ոպ քարձ, և այլք երկայնամօրուս), ճաղատ, ալեխառն, ցորենագոյն մարմնովն, բարետեսակ, լցեալ շնորհօքն քսի։

Եւ եղև տեղի գերեզմանի սբյն յաղեքսանդրիա՝ նշանաւոր ուխտատեղի, ուր շինեցաւ տաճար յանուն նր. և անդ թաղեցան նաև յաջորդք նր. անդ եկն և սբն պետրոս աղեքսան

սանդրացի, և մօտ 'ի տեղի անդր գլխատեցաւ. ոտ ասացաւ 'ի վարս նր։ Շինեաց և մեծն Թէոդոս կայսր եկեղեցի յանուն նբյն մարկոսի աւետարանչի 'ի կոստանդինուպօլիս 'ի տեղին տաւրոս կոչեցեալ՝ փայտեայ գմբեթաւ. յորոյ 'ի կործանիլն 'ի շարժմանէ՝ նորոգեաց զայն ռոմանոս լակապենոս կայսր 'ի թ դարու։ Այլ առաւել քան զամ հոյակապ և տիեզերահռչակ տաճար նբյն մարկոսի է 'ի վենետիկ քաղաքի, ուր փոխադրեցան պատուական նշխարք նորա. զորմէ ժամ է գրել ըստ աւանդից վենետկեցւոց։ (8)

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Նշխարաց սբյն Մարկոսի 'ի վենետիկ։

Մարմին նբ աւետարանչին մարկոսի կայր 'ի տեղւոջ իւրում յաղեքսանդրիա մինչև ցութերորդ դար. յորում ժմկի բեդա պատուական քահանայն այսպէս խօսէր 'ի գիրս յաղագս նբ տեղեաց. գլ. ժԲ. * Ընդ աջմէ այնոցիկ՝ որոց մտանեն 'ի քաղաքն (աղեքսանդրու) 'ի կողմանէ եգիպտոսի, ըստ առաջ ելանէ եկեղեցի, յորում հանգուցեալ կայ երանելի աւետարանիչն մարկոս. որոյ մարմինն ամփոփեալ է յարևելեան կողմն եկեղեցւոյն առաջի բեմի, ունելով տապան կճեայ քառակուսի ‖։ Եւ էր յայնժամ եգիպտոս և աղեքսանդրիա անկեալ ընդ տրութ բ այլազգեաց. զի 'ի նախընթաց դարու տի-

րեալ էր անդ խսպառ ամիրապետն օմար։
Եւ եղև յորժամ թագաւորեաց 'ի վր՝ յու-
նաց լևոն կայսր արծրունի 'ի թ՝ դարու՝ ար-
գել զիւրսն յերթալոյ յեգիպտոս վ՝ վաճա-
ռուց. զնոյն պատուիրեաց իւրոցն և յուս-
տինիանոս պարտիկիատ՝ որ եղև դուքս վե-
նետիկեցւոց յամի տ՝ն 828։ Բայց տասն նաւք
վենետիկեան վաճառականաց յաւուրսն յայ-
նոսիկ բռնութ՝ բ հողմոյ յակամայս անկան
յաղեքսանդրիա. և ելեալ 'ի քաղաքն՝ զօր-
հանապազ կանխէին 'ի տապան ն՝բյն մարկո-
սի յաղօթս հանդերձ ազգի ազգի պատարա-
գօք 'ի պատիւ՝ ն՝բ աւետարանչին, զոր ճա-
նաչէին առաքել՝ իւրեանց՝ ունելով յաւան-
դութ՝ է, թէ նա լուսաւորեաց զակուիղացիս
յիտալիա։ Եւ ինքեանք էին արք ազնուա-
կանք և մեծատունք. յորս երևելի էր բոնոս
տրիբունն 'ի մետամաւկայ (որ ռամկօրէն մա-
լամօք ասի՝ ծովեզր վենետկոյ), և հռուս-
տիկոս 'ի տոռկեղայ (այն է դօռչէլլօ՝ մասն
հին վենետկոյ)։
Սոքա 'ի ստէպ երթևեկուէ՝ ընտանացեալ
ը՝ յոյն վերակացուս և պաշտօնեայս տաճարի
ն՝բյն մարկոսի՝ իբրև տեսին յաւուր միում
զդէմս ն՝ց տխուրս, հարցին և տեղեկացան,
զի ամիրապետն այլազգեաց կամեցեալ իւր
ապարանս շինել 'ի նորն բաբելոն (կամ 'ի
բաղտատ), հրաման է յղեալ, զի որչափ և
կճեայ սիւնք կմ տախտակք գտանիցին յերկ-
րին եգիպտացւոց՝ եթէ 'ի հրապարակս և
եթէ յեկեղեցիս, խաղացուսցեն 'ի բաբելոն
'ի

'ի պէտս պալատանն։ Ընդ քանզի սկսեալ էին հաւաքել զայնպիսի քարինս և յաղեքսանդրիոյ, նմին իրի խիթալի էր՝ թէ զնոյն

արասցեն և 'ի տաճարի ն̄բյն մարկոսի։

Ընդ այս զառաջինն սրտցաւութ̄ն կարեկից եղեն վենետկեցի վաճառականք. և ապա երկոքին իշխանաւորքն բոնոս և հռուստիկոս կոչեցին առանձինն զերկուս 'ի դլխաւորաց պաշտօնէից տաճարին, որոց անու՛անք էին ստաւրատիոս միայնակեաց, և թէոդորոս երեց՝ զոր և հայրագիր իւր արարեալ էր բոնոս տրիբունն առ որսալոյ զնա 'ի կամս իւր. և յորդորեցին զն̄ բազմօք, զի թէ կամին ազատ լինել 'ի հալածանաց, և ազատել պատու՛ով 'ի ձեռաց օտարաց զպատու՛ական գանձն զմարմին ն̄բյն մարկոսի, բարձցեն զայն գողտ, և եդեալ 'ի նաւ՝ եկեսցեն ընդ իւրեանս 'ի վենետիկ յա̄ծակերտ կղզին. և անդ գտանիցեն զա̄մ հանգիստ. և ն̄բն փառաւորեսցի

յերկրի անդ քրիստոնէից։

Նք̄ զառաջինն յահի եղեն ը̄ բանս. զիա՞րդ լինիցի ասեն հանել զաւետարանիչն յաթոռոյ իւրմէ, և օտարացուցանել զլուսաւորիչն և զպաշտպանն աղեքսանդրիոյ և ա̄մ եգիպտոսի. զի ոչ ծածկի բանդ այդ 'ի ժողովրդենէ, և մահու սատակեն զմեզ. թող զի անուն ն̄բյն հռչակեալ է ը̄ տիեզերս։ Իսկ բոնոս և հռուստիկոս ասեն. մեք իսկ եմք անդրանիկք ն̄բյն մարկոսի՝ վաղագոյն ծնեալք 'ի նմանէ աւետարանաւ 'ի քն̄. և աթոռ ն̄ր առ հերակլ կայսերաւ պարգևեցաւ վենետ-

կեց-

կեցւոց. և եթէ չէր հաճոյ ն̄բյն մարկոսի այց առնել որդւոց իւրոց, ոչ ձգէր զմեզ 'ի կողմանս յայսոսիկ յայսպիսում ժամանակի. ապա յայտ է թէ կամք եղեն ա̄յ պարգևել մեզ զհայր մեր:

Պ̄ինի ետուն ստաւրատիոս և թէոդորոս, և ասեն. շա՛տ է ձեզ ունել զաթոռն՝ զոր ասէքդ. այլ զմարմին ն̄բյն անհնա՛ր է մեզ շարժել 'ի տեղւոջէն, և ո՛չ մեզ վտարանդի լինել 'ի հայրենեաց մերոց յերկիր անծանօթ. լա՛ւ է մեզ աստ կալ 'ի սպաս ն̄բյն հալածանօք հանդերձ, որ սեպհական է ծառայից ք̄ն̄ի: Իսկ բոնոս և հռուստիկոս ասէին. և այն ա̄ն է պատո՛ւիրան՝ փախչել քաղաքէ 'ի քաղաք 'ի ժամանակի հալածանաց. ո՛պ և ինքնին ն̄բ աւետարանիչն խոյս տայր երբեմն յաղեք, սանդրիոյ 'ի պենտապօլիս:

Մ՛ինչդեռ սոքա զայսօրինակ վիճէին 'ի ծածուկ զաւուրս ինչ, սկսան արբանեակք ամիրային ձեռն մխել 'ի քարինս տաճարի ն̄բյն մարկոսի. և յ̄ը̄դէմ դառնալ ուրումն 'ի պաշտօնէից՝ գան հարին զնա չարաչար: Ս այն տեսել ստաւրատիոսի և թէոդորոսի՝ յանձն առին զառաջարկութի̄ ազնո՛ւականացն վենետկեցւոց. և ժամադիր եղեալ ը̄ն̄ն՝ եկին և բացին գաղտ զկճեայ տապանն, ուր կայր մարմին ն̄բյ աւետարանչին՝ տարածել ը̄ երկայնութի̄, և պատել շուրջանակի մետաքսեայ քղամդաւ, և կնքեալ յոտից մինչև 'ի գլուխ յայն ա̄մ տեղիս՝ ուր ծայրք քղամդին ծալեալ էին յիրերաց վ̄ր:

Յայն

Յայնժամ հնարս խորհեալ բառնալ զմարմինն, և զքղամիդն թողուլ 'ի տեղւոջն կընքեալ, զի մի 'ի վեր ելցէ բանն, շրջեցին զՆբ մարմինն, և պատառեցին 'ի թիկանց զքղամիդն. և փոխանակ Նբյն մարկոսի ամփոփեցին 'ի տեղի նր զմարմին Նբյն կղոդեայ կամ կղոդիանոսի՝ որ կայր 'ի նմին տաճարի, և քղամդաւ մարկոսի պատեալ՝ պահեցին 'ի վր լանջաց զառաջին կնիքս։ Եւ այսպէս անյայտ արարին զգողութիւն իւրեանց. բայց սկսաւ բուրել ը ամ քաղաքն անուշահոտութիւն իմն 'ի մարմնոյ Նբյն մարկոսի հանելոյ 'ի տապանէ. մինչև շշնջել հաւատացելոց և հեթանոսաց, ուստի՞ իցէ այս հոտ անուշութեան 'ի քաղաքիս։ Ոմանք յաղեքսանդրացւոց 'ի կասկածանս անկեալ վն նաւուց վենետկեցւոց, մի գուցէ խարդախեալ ինչ իցեն 'ի ստէպ այց առնել իւրեանց տապանի Նբ աւետարանչին, ընթացան յեկեղեցին 'ի զննել զիրսն. այլ իբրև եկին և տեսին զքղամիդն կնքեալ, հանդարտեցին և գնացին այր իւրաքանչիւր 'ի տեղի իւր։

Իսկ վենետկեցիք պարապ առեալ և բարձեալ զանխուլ զմարմին Նբյն՝ եդին 'ի զամբիւղ մի ծածկեալ ոստովք ձիթենւոյ, և 'ի վր արկեալ զմիս խոզենի. և այնպ տանէին 'ի ծովեզրն. զոր տեսեալ այլազգեաց՝ 'ի բաց դարձուցանէին զերեսս զզուանօք ը սովորութեան իւրեանց 'ի մսոյ անտի, ասելով իւրեանց բարբառով՝ ը գրելոյ պատմչին, խանզիր խանզիր, այն է խոզ։ Եւ այսպիսի ճարտա-

րութիւն բերեալ վենետկեցւոց զսբ գանձն
յափն ծովու, եդին 'ի կուր, և տարան 'ի
նաւն. ուր հանեալ զպատուական մարմինն
'ի զամբիւղէ՝ փաթութեցին 'ի պաստառս ա-
ռագաստից նաւուն. զի մի լիցի աղեքսանդ-
րացւոց խուզարկել զնաւն և գտանել զայն:
Եկն 'ի ծածուկ 'ի նաւ անդր և ստաւրատիոս
միայնակեացն. իսկ թէոդորոս երէց թէպէտ
և ետ տանել զկարասի իւր 'ի նաւն, այլ
ինքն երկուցեալ 'ի մարդկանէ՝ որ կային 'ի
ծովեզրն, ոչ կարաց անձամբ գալ: Բայց
գոյր 'ի նաւին և այլ ոմն միայնակեաց լա-
տին՝ դոմինիկոս անուն, դարձել յուխտա-
գնացուէ եէմի: Արդ իբրև մեկնեցաւ նաւն
յաղեքսանդրիոյ, հանին զմարմին սբոյն 'ի
պատատէ առագաստից, և եդեալ 'ի վայե-
լուչ տեղւոջ՝ պատուէին հանապազորդեան
լուցմամբ ճրագաց և բուրմամբ խնկոց. և
երկու միայնակեացքն որ 'ի նաւի անդ՝ 'ի
սպասու կային սբոյն:

Եւ եղև 'ի ճանապարհ անկանիլ նաւուն
այն՝ ուղեկցութիւն այլոց վենետիկեան նա-
ւուց, որք անգէտ էին իրացս, յաւուր միում
նաւավարք սորա խօսելով ընդ այլոցն՝ ասեն.
ոչ գիտէք զբանն՝ որ եղև. նք ասեն. զի՞նչ.
պխնի ետուն սք. ընդ մեզ է 'ի նաւիս սբն
մարկոս. և յոչ հաւատալ նոցա և յասել,
զիա՞րդ մարթ է այդմ լինել, պատմեցին նց
կարգաւ զեղեալսն ամ: Իսկ մի ոմն 'ի նո-
ցանէ այպն արար՝ ասելով. Թերևս եգիպ-
տացւոյ ուրուք մարմին տուաւ ձեզ, և դուք

խըն

խնդայք՝ որ՝պս թէ զ՝ոբն մարկոս ը՝ ձեզ ունիք։ Մ՝նչդեռ բանքն 'ի բերան ն՝ր էին, նաւ ՝ոբյն անհնարին արագու՝ բ շրջեալ 'ի վ՝ր նաւուն՝ յորում էր այպանօղն, ը՝հարաւ ը՝ նա ուժգին. մինչև խորտակել զմասն մի 'ի կողից նաւուն, և ամենեցուն աղաղակել, թէ արդարև հզօր առիւծն ՝ոբ մարկոս է 'ի նաւիդ։

Գտաւ և մի ոմն 'ի նաւաստեաց նաւու ս՝բյն, որ ստէպ պնդէր թերեհաւատութ՝ բ, թէ օտարի ուրուք մարմին իցէ այն. վ՝ոյ այսահարեալ չարաչար լլկեցաւ առաջի ամենեցուն. մինչև ածեալ առ մարմին ՝ոբյ աւետարանչին՝ հայցեաց թողութ՝ի, և ազատեցաւ 'ի պատուհասէն։ Իսկ 'ի գիշերի միում 'ի պահու ալեկոծութ՝ե երևեցաւ ՝ոբն մարկոս դոմինիկոսի միայնակեցի. և 'ի ձեռն ն՝ր ազդարար նաւավարաց իջուցանել զառագաստս՝ վ՝ս մերձ լինելոյ ցամաքին, զոր ոչ տեսանէին 'ի մթան. և ը՝ լուսանալ աւուրն գըտաւ նաւն մօտ 'ի կղզին ըստրոփադայ, որ և ըստրիվալի։

Եւ յայնմ հետէ առաւել ակնածէին նաւավարքն 'ի ՝ոբյն, և պատուհէին աղօթիւք. և զգուշանային պատմել ումեք 'ի տեղեացն՝ ը՝ որ անցանէին. բայց բազումք այն եղեն, որոց 'ի յայտնութ՝է ՝տն իմացեալ զիրսն՝ ելին ը՝ առաջ նաւուն 'ի տեղիս տեղիս 'ի յարգութ՝ի ՝ոբ մարմնոյն հանդերձ ուղերձիւք ընծայից. և երանի՛ տային վենետկեցւոց վ՝ս մեծի գանձուն։

Իբրև

Իբրև եհաս նաւն 'ի քաղաք մի իստրիոյ՝ հու-
մակ կամ ումա՛ճէ ասացեալ, զտեղի առին
անդ նաւավարքն. և առաքեցին զոմն առ
յուստինիանոս դուքսն վենետկոյ՝ ասել. ա-
մօթապարտ գտանիմք առաջի ձեր՝ ոպ ան-
հնազանդ երևեալք 'ի գնալ մեր յաղեքսան-
դրիա. այլ գիտէ տ՛ր՝ զի ակամայ կամօք ան-
կաք անդր. և ը՛ տ՛ն յաջողելոյ մեծագանձ
դարձաք անտի. վ՛ն զի ը՛ մեզ է մարմին երա-
նելի աւետարանչին մարկոսի. արդ եթէ հա-
ճոյ է տ՛նդ մերում անպատիժ ը՛ունել զմեզ,
բերեմք զնա առ ձեզ. ապա թէ ոչ՝ ը՛ այլ
կողմն ուղղեսցին գնացք մեր։ Իսկ դուքսն
լցեալ անպատմելի խնդութ՛ը ը՛ լուրն, հրա-
ման տայր գալ ն՛ց անյապաղ. զի 'ի սէր հո-
գևոր գանձուն ընկալայց ասէ զձեզ որպէս
որդիս սիրելիս։

Եւ յորժամ հասանէր նաւն 'ի վենետիկ 'ի
նաւահանգիստն ոլիվոլեան (որ 'ի բնակչացն
գասդէ՛լլօ կոչի), ուր հայրապետանոցն է,
ել ը՛առաջ ն՛բ մարմնոյն ուռսոս ե՛պկս քա-
ղաքին եղբայր դքսին՝ խաչիւք և ա՛մ եկե-
ղեցական զարդուք. զոր և ընկալեալ բերին
թափորապէս 'ի պալատն դքսի։ Ուր 'ի հա-
նել ն՛ց զայն ը՛ սանդուղս վերնատանն՝ ասէ
պատմագիրն, է՛ր զի անհնարին ծանրութ՛ի
զգային պաշտօնեայք՝ որոց բարձեալ էր զայն,
մինչև չկարել ոտն յոտանէ փոխել. և է՛ր զի
թեթև յոյժ գտանէին իբրև անզգալի ծան-
րութ՛ը. միանգամայն և օթոցն՝ որով պա-
տեալ էր մարմին ն՛բյն, 'ի հանդարտութ՛ե

անդ

անդ օդոց ինքնին շարժլէր 'ի վեր քան զամ
բռնութի՛ հողմոց։

Արդ ընկալեալ դքսին զպատուական մար-
մին ն՞բյ աւետարանչին՝ զետեղեցոյց առ ժամն
'ի վերնատան անդ պալատանն, կարգեալ եր-
գիչս և պաշտօնեայս 'ի սպաս ն՞բյն. յորոց մի
էր և ստաւրատիոս միայնակեաց եկեալն յա-
ղեքսանդրիոյ. ոպ՞ և թէոդորոս երէցն եկն
եհաս յետ տարւոյ. իսկ դոմինիկոս միայնա-
կեացն գնաց 'ի քաղաք իւր։ Եւ ոչ յետ բա-
զում աւուրց իջոյց դուքսն զմարմին սբ՞յն
մարկոսի 'ի վերնատանէ անտի 'ի մօտակաց
դքսական եկեղեցի ն՞բյն թէոդորոսի, որ էր
առաջին պաշտպան քաղաքին. այն է տե-
ղին՝ ուր է այժմ հոյակապ տաճար սբ՞յն մար-
կոսի։

Այլ մինչդեռ խորհէր նա ինքն յուստինիա-
նոս դուքս շինել եկեղեցի յանուն ն՞բյ աւե-
տարանչին 'ի հանգիստ նշխարաց նր՞, եհաս
վախճան կենաց նր՞ յերկրորդ ամի գալստեան
սբ՞յն. և յաջորդեաց 'ի դքսութե՛ եղբայր նր՞
յովհաննէս։ Սա 'ի գործ արկեալ զխորհուրդ
և զկտակ եղբօր իւրոյ՝ շինեաց վկայարան
չքնաղ յանուն սբ՞յն մարկոսի կից ը՞ պալա-
տանն՝ ը՞ ձևոյ եկեղեցւոյն, զոր տեսեալ էր
նր՞ յեէ՞մ 'ի վր՞ տ՞րունական գերեզմանին, ֆ՞
սբ՞ յարութե՛. և զարդարեալ զայն պէսպէս
ճարտար նկարուք՝ անդ հանգոյց զմարմին
սբ՞յն մարկոսի՝ պատեալ ն՞բ կտաւովք և ա-
նոյշ խնկովք. կարգեաց և երիցունս 'ի կա-
տարել անդ զպաշտամունս ժամու զտուն-

ջեան

ջեան և զգիշերոյ. և զոմն պրիմիկուռ՝ ի-
բրև աւագերէց դքսական վկայարանին,
տնտեսել զա̄մ ինչ ը̄ կարգաւորուն դքսի. և
յայնմ հետէ հանդիսացաւ սբ̄ աւետարա-
նիչն մարկոս ոպ̄ առաջին պաշտպան քաղա-
քի և տ̄րութ̄ վենետկեցւոց: Բայց մար-
մին աւետարանչին ամփոփեալ էր 'ի մատ-
րան անդ պղնձի արկեղբ 'ի թաքուն վայրի
ը̄ միով 'ի սեանց յօրինելոց կՃեայ ախաւե-
ղագիսօք. զոր ոչ ոք այլ գիտէր յայտնապ̄ս,
բայց միայն դուքսն և պրիմիկուռն:
Արդ մնաց վկայարանն այն այնպէս աւելի
քան զամս հարիւր՝ մինչև ցաւուրս պետրո-
սի՝ գանտիանի կոչեցելոյ, 'ի սանուտեան
տանէ. առ որով եղև քաղաքական խռովուն
մեծ 'ի վենետիկ, և սպանաւ դուքսն յամբո-
խէն, և դքսական պալատն հրոյ Ճարակ
տուաւ հանդերձ վկայարանաւ սբ̄յն մարկո-
սի, կամ սբ̄յն թէոդորոսի: Ապա միաբան
հաւանութ̄ ամենեցուն ընտրեցաւ դուքս
պետրոս ուրսէոլոս՝ այր առաքինի և իմաս-
տուն, որ եղև յետոյ տօնելի սբ̄: Սա 'ի սկզ-
բան անդ դքսութ̄ իւրոյ յամի տ̄ն իբր 976.
ձեռն էարկ շինել 'ի հիմանց 'ի նմին տեղ-
ւոջ զտաճար սբ̄յն մարկոսի՝ համակ վիմա-
շէն և գմբէթազարդ, հոյակապ և սքանչե-
լի յօրինուածով, ահաւոր մեծութ̄ և մե-
ծագանձ հարստութ̄. զոր ոչն կարաց բո-
վանդակել 'ի կենդանութ̄ իւրում. ք̄զի յեր-
կարեաց գործն զամս ղ̄՝ մինչև 'ի դքսուն
դոմինիկոսի գօնդարենի: Ա՝ ոյ գլխաւորումն

 գոր-

գործոյն դրոշմեալ է 'ի կամարի գաւթի տա-
ճարին՝ լինել յամի տ̅ն 1071. Թող զի և վեր-
ջին լրումն ներքին և արտաքին զարդուց
ձգեցաւ այլ ևս 'ի ժամանակս երկայնս։
Բայց մինչդեռ վենետկեցիք յայս մեծա-
գործ շինուած դեգերէին, 'ի մոռացօնս ար-
կին զյիշատակ տեղւոյն՝ ուր էր տապան
ս̅բ̅յն 'ի տաճարի անդ. վ̅ն̅յ յամի տ̅ն 1084
կմ 1094, վիտաղիս փաղերիոս դուքսն խոր-
հրդով ծերակուտին հրամայեաց եռօրեայ
պահօք խնդրել յա̅յ զգիւտ սբ̅ գանձուն. և
յաւուրն չորրորդի՝ որ օր ի̅ե̅ էր յունիսի, 'ի
պահու մեծահանդէս թափորոյ, հերձան
մարմարիոնք՝ որք պատէին զմի 'ի մեծ սեանց,
որ էր 'ի մնացուածոյ հին տաճարի ս̅բ̅յն Թէո-
դորոսի, յայնմ վայրի՝ ուր կայ այժմ խորան
սբ̅յն յակոբայ կամ մօտ 'ի սեղանն լէոնար-
դոսի. և 'ի վեր երևեցաւ ինքնին տապան
աւետարանչին 'ի տես ա̅մ ժողովրդեան, և
ելից անուշահոտութ̅բ̅ զտաճարն ողջոյն. ե-
ղեն և այլ բազմապատիկ սքանչելիք՝ ը̅ա̅ ա-
ւանդելոյ յիշատակագրաց, առ մերձաւորս
և հեռաւորս բարեխօսութ̅բ̅ սբ̅յն մարկոսի.
և բազումք յիշխանաց և 'ի թագաւորաց պա-
տարագս սկսան առաքել 'ի մեծարանս տա-
ճարի աւետարանչին։
Արդ ո̅պ̅ կատարէին վենետկեցիք զտօն փո-
խադրուե̅ մարմնոյ սբ̅յն յաղեքսանդրիոյ 'ի
վենետիկ 'ի յունվարի լ̅ա̅, նոյնպէս սկսան
տօնել 'ի յունիսի ի̅ե̅ զյայտնութ̅ի̅ տապա-
նի ն̅ր̅, կոչեցեալ երևումն ս̅բ̅յն մարկոսի.

զորոյ զնախատօնակն սովորեցան կոչել օր
վարդեջրոյ. զի 'ի յիշատակ անուշահոտութեն
բուրելոյ՝ օրհնէին զվարդեջուր 'ի յունիսի
իդ, և սրսկէին զժողովրդեամբ. Թող և ըզ-
նաւակատիս տաճարի սբոյն 'ի հոկտ. ը:
Բայց զմարմին նբոյն մարկոսի՝ յետ Թողլոյ
իբրև զամիսս չորս 'ի տես ժողովրդեան,
գաղտ բարձին խորհրդապահք դքսին և ծե-
բակուտին 'ի խորանէ անտի՝ ուր եդեալ կայր,
և յայլում վայրի ամփոփեցին և անյայտ ա-
րարին. զոր միայն երից արանց էր գիտել.
ցս դքսին, պրիմիկուրին, և գործակալի նբոյն
մարկոսի. զի 'ի մեռանիլ միոյն՝ յերկուս մնա-
ցեալս կայցէ գիտութիւն իրացն. և նք յայտ-
նեսցեն այլում երրորդի յաջորդաբար:
'Ի նշանակ անցիցս անցելոց կայ ցարդ և ս
հին նկար 'ի տաճարի անդ՝ սովին արձանա-
գրութիւն. * Երեք աւուրբք պահէ ժողո-
վուրդն, և առ տր կարդայ. վէմ պատառի,
և անդրէն զնբն ամփոփեն և զետեղեն ‖.
ոպ և այլ նկար յանտես վայրի ուրեք, ուր
իշխան ոմն և եպսունք երկու յառաջիկայու-
թեն դքսին ամփոփեն զմարմին նբոյն ը խո-
րանաւ, հանդերձ գրովս. * զետեղումն նբոյն
մարկոսի ‖: Ուստի և մինչև ցաւուրս մեր հա-
սարակ կարծիք և աւանդութիւն էր 'ի ժողո-
վրդեան, թէ նբ դանձն այն ամփոփեալ կայ
կամ ը աւագ խորանաւ, կմ 'ի Թիկանց ա-
ւագ խորանին ընդ սիւնազարդ դմբեթաւ,
ուր է հին սեղան սրբութեն: Եւ արդարև
առ մեօք յամի 1808. ետ բրել զտեղին պատ-
բիարգ

բնարդ քաղաքին Նիկողայոս կամպոնի նեհա-
պօլսեցի, և երևեցաւ տասպան ՚ըբյն ՚ի ստոր-
երկրեայ հին վկայարանի՝ ըստ ուղղութիւն ա-
ւադ սեղանոյն. զոր իբրև կամէր Հանդիսա-
ցուցանել՝ խափանեցաւ առ ՅԻԿ մի. և ապա
յամի 1810. ՚ի մայիսի 6. յայլոց վերստին
Հետազօտեալ՝ գտան ոսկերք ՚ըբյ աւետա-
րանչին, և ամփոփեցան ՚ի տաճարի անդ նո
՚ի բուն աւազ քեմի ։ (9)

Յովհից ասել զմանր մասանց նշխարաց ՚ըբյն
Մարկոսի, որք գտանին սփռեալ ՚ի վաղուց
յայլևայլ տեղիս. յիշին և այլ երևելի նըշ-
խարք յանուն Մարկոսի ՚ի բրակա գերմանիոյ,
՚ի կոլոնիա, ՚ի Հռոմ, ՚ի գաղղիա, ևն.
որք Թուին լինել մնարմինք այլոց վկայից Մար-
կոս կոչեցելոց. և եթէ յուշանայիս Մարկոս
ինչ որիշ ՚ի Մարկոսէ աւետարանչէ, Մարթի
լինել և նո. այլ առ տենչանաց ՚ըբյ աւետա-
րանչին՝ ամ որ ունի զմասն ինչ ըստ անուանէ
՚ըբյն Մարկոսի, նուիրին յարգանօք պահէ և
պաշտէ. և ոչ ղրկի ՚ի բարեխօսութիւն նո ըստ
Հաւատոց իւրոց ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Մարկոսէ անուն Թէպէտև յոմանց ստուգաբա-
նեալ է յԵբրայականն փայլուն կամ ողորկ ևն, բայց ՚ի
զուր. զի էր սովորական անուն առ Հռոմայեցիս ՚ի
լասին բարբառ մարգուս. որ ըստ որում ծագեալ ՚ի
բայէս մարչէօ կամ մարչէաքօ, նոյնանայ ըստ բառիս մար-
չիտուս, ոյն և մագրուս. և Թարգմանի՝ վախտ կամ հիւ-

ՃԵալ ևՆ: Իակ որ գրի ՝ի ՆԱխադր. աւետ. * մարկոս՝
,, բարձր պատուՀար, կՃ ՝ի վեր տանեաց ||, երևի աւեՃ
՝ի լատին ձայնէս մՃուրուս, որ է պատուՀար, և ՝ի յու-
նականէս ամպրօս. որ է ակառ, կՃ բարձր կատար. իակ
ապրգուս ՝ի լատինն է կամար կՃ սղեվն:

(2) Մի յեօթանասանից դնեն ոչ միայն յայտաւուրք ը-
պոլոթէոսի և հիպոլիտոսի, այլև որոգինէս, եպիփան,
պրոկոպիոս ՃառաբանՆ, և այլք յոլով ՝ի վերպաց, եթէ
այնուքիկ՝ որք որոշեն զնա ՝ի յովհաննէ մարկոսէ, և եթէ
այք նոյնացուցանեն:

(3) ԱՃեն ՝ի նախադր. աւետ. մարկ. * ոմն մարկոս
,, աշակերտ պետրոսի, և ընթացակից պօղոսի գրեաց
,, զաւետարանս զայս ||, ոՀ ընունելի է ամենեցուն,
նոյնպէս և ենթադրէ՝ թէ նոյն անձն է, որ յիշի ՝ի գործս
և ՝ի թուղթս առաքելոց. և այսպէս լինի նոյն ը յով-
հաննու մարկոսի. ոՀ նոյնացուցանէ և Հ. աստ՝ զոյգ
ը հելինական առաքելական կանոնաց, ը մեկնչն գոր-
ծոց, ը հերոնիմոսի. և ը այլոց բազմաց յառաջնոց և
՝ի յետնոց:

Ալ յանաւոյգ աւանդից սակի է այն, զոր գրէ անա-
նուն մեկնիչն գործոց, թէ մարկոս էր ՝ի տանէն ահա-
րոնի, և կրէր ՝ի գլուխ իւր զնայր քՀնայապետական.
ատոյգն այն է՝ թէ էր եղբօրորդի կՃ քեռորդի բահ-
նայ յազգէ ղևեայ յովհաննէս մարկոսն: Զարմանա-
լի է և այն, զի իմն. վկ. ը վատիկանեան օրինակի,
ուր յիշի գնալ սբն մարկոսի ՝ի կիւբրեննա պետապօլ-
սոյ, ՝ի վեր բերի. * զի էր ազգաւ ՝ի գաւառէ անոյն
,, ծագեալ ||:

Զգիտեմ ուսանի՞ առեալ է և աՃեն ոմանց ը պետրո-
սի նատալեան, թէ սբն մարկոս ինքնին հատեալ էցէ
զոյգ մատն իւր, զի մի եղեալ ՝ի քահանայութեն. զորս
չէ արժան և ը քննութեբ արկանել:

(4) Առաջնիսյս վկայաբանութեն սբն մարկոսի աւետարան-
չի, որ միօրինակ գրի ՝ի Ճառընտիրսս մեր և ՝ի յայտնա-
ւուրս, նոյնօրինակ գտանի ՝ի յունական մատեանն վա-
տիկանու ակզ. զոր և տպագրեն բոլլանդեանք լոկ
յունարէն ՝ի վախճան ը հատորոյ ապրիլի. որոյ քաղ-
ուՃած է և եղեալն ՝ի Յ. բա. և ժմ: Այլ ուր սՀ ամն
է ը բոլլանդեանց (եթէ չկայ պարզաբանուն նոցին)
հնագոյն օրինակն լատինական՝ առաւել Ճոխ ը քան
մի պարադոյից, որ ՝ի միջին դարս ՝ի լատինէ ՝ի յոյն է
Թարգմանեալ. և նոյն այն է՝ զոր բեդա համառօտեաց

՝ի

'ի ձիէիզբն ը. դարուս։ Եւ ահա զայս օրինակ՝ զոր բաղ-
դատութիք ժբ օրինակաց յայլևայլ երևելի գրատանց
եւրոպիոյ առեալ տպագրեն բոլլանդեանք, 'ի կիր աբ-
կաք և մեք՝ միայարելով ը ընթերցուածոյ ձառընտրաց
մերոց. Թուղ և ղմանաւոր ձառս և զներբողեանս հարց
և վիպաց։

Ուր ծանիր, զի Թէպետև յասել հարց և վկայաբանից՝
Թէ սբն մարկոս եղև ընկեր սբց գլխաւոր առաքելոցն
պետրոսի և պօղոսի 'ի քարոզութիե, իմացեալ լինի ը
մեզ՝ ջրջիլն ներ անխտիր յարևելս և յարևմուտս մինչև 'ի
հռոմ և յակոբիղնա ևն, բայց որոշակի չասանդեն զայդ
հին օրինակք նախասացեալ վկայաբանութիե ներ ոչ 'ի
հյ. ոչ 'ի ին. և ոչ 'ի լտ. այլ միայն խօսին զքարոզուե
ներ առանձինն 'ի կողմանս եգիպտոսի և լիբիոյ։ Եւ
ասկայն յերկուս օրինակս լատին վկայաբանութե գտա-
նի և նախընթաց պատմութի քարոզութիե սբն մարկո-
սի յարևմուտս. զոր իբրև ստոյգ ենթադրէ հեղինակ
նիս բոլլանդեան ը այլ լատին մատենագիրս, կոչելով
զայն ասանդութի արևմտեայց՝ առաքելութի ակռճի-
լեան, ոչ և զքարոզուին յարևելս՝ առաքելոյն ապե-
անդրեան։ Ուր անաչառ խօսելով՝ Թէպետև ընդունելի
ե մեզ, Թէ սբն մարկոս եկե էկ յարևմուտս ը սբյն
պետրոսի, բայց պատմութին այն ակռճիլեան առաք-
լութիե ե յօրինուածած յետնոց՝ կարկատեալ 'ի գրատուր և
յանգիր ասանդութիեց. քանզի ե յայտնապես ոճ յե-
տին դարուց, ունելով բանին այսպէս.

* Յետ փառաւոր համբարձման տն մերոյ յի քրի յեր-
„ կինս սբ. հայր... յորժամ առաքեալք ըստ տնտես-
„ ըոյ բարձրագոյն խորհրդոյ հոգւոյն սբյ սփռեցան
„ ընդ տիեզերս ամ... պետն առաքելոց, այն ե փա-
„ կաչն երկնային գաղտնեաց երանելին պետրոս՝
„ յետ հաստատելոյ յանտիոք զաթոռ քհնյապետութիե,
„ իմաւ 'ի վեր այնր վիմի՝ ղոր նմին կանխաւ ասացեալ
„ էր նա ինքն անվանելն հինն քր յի, յերկրորդ ամի
„ անդ կղոդեայ կայսեր (ը այլոց՝ դայիոսի կաղիգու-
„ ղայ) առ յաղթահարել զնիման մոգն՝ եկն եմաւս յեր-
„ ջանիկ աւուր 'ի հռոմ. ուր եկից ունելով և զմար-
„ կոս զհաւատարիմն արդարև աշակերտ իւր. և զնի-
պեղագիա , ձգեաց զնա զհետ իւր տես-
լեամբ . քանզի երևեցոյց նմա յերազի զկեր
պարանս կղեմոնի եպսի , և յայտնեաց զտե-
ղին՝ ուր թաքուցեալ էր նա արտաքոյ քղքին :
Նա յարուցեալ կուսին ի վաղիւ անդր՝ թա
նաձեաց զմայր իւրոյղել զինքն ի տեսուե
գայեկի իւրոյ մասուցչի քնաակեալ արտաքոյ
տար

տարսոնի. և զարդարեալ գնայր ոտ թէ առ
դայեակն հանդերձ երկու նաժշտօք, և քա-
նի մի ներքինեօք և հաւատարիմ սպասաւո-
րօք. յորս էին ղոնգինոս և յուլիանոս 'ի ծա-
ծուկ քրիստոնեայք։ Եւ ահա հանդիպե-
ցան ն՞բյ ե՞պսին 'ի լեռնակողմանս, զի շրջէր
'ի մէջ ծառոց։ Յայնժամ թողեալ պեղա-
գեայ զսպասաւորսն հանգչել ընդ ծառով
միով՝ ինքն յառաջեաց երկու աղախնեօքն,
և եկն երկիր եպագ ե՞պսին ասելով. ողջո՛յն
ը՞ քեզ ծառայ ք՞ի։ Եւ ն՞ր զարմացեալ՝ թէ
ո՞ է կոյսն այն շքեղ, և զի՞նչ խնդրէ, ետ
պ՞խնի. խաղաղութի՞ն ք՞ի ա՞յ իմոյ եղիցի ը՞
քեզ դո՛ւստր։

Ասէ պեղագիա. օրհնեալ է ա՞ծ՝ որ 'ի քո
կերպարանս երևեցաւ ինձ, և առաքեաց զիս
առ քեզ՝ պահել զանձն իմ 'ի կորստենէ. և
արդ աղաչեմ զքեզ տ՞ր իմ և հայր, ասա՛ ինձ,
զի՞նչ ինչ կարևորագոյն իցէ՝ որոց կամիցին
ընտանի լինել ա՞յ քում։ Եւ ե՞պսն ծանոյց
նմա զխորհուրդ մկրտութե՞, և խօսեցաւ առ
նա բանս կենաց։ Եւ կոյսն յօժարութ՞ ըն-
կալե՞ զա՞մ ասացեալսն՝ փութապէս խնդրէր
զք՞ական կնիքն. և յաղօթել ե՞պսին՝ բըղ-
խեաց 'ի տեղւոջն աղբիւր ջրոյ կենդանւոյ.
և ետես պեղագիա երկուս հրեշտակս՝ զի
կային 'ի վերայ աղբերն, և ունէին 'ի ձեռս
հանդերձս սպիտակս։ Յայնժամ մկրտեաց
ե՞պսն զպեղագիա, և զերկու նաժիշտս նորա
ը՞ նմա. և հաղորդեցոյց զն՞ ն՞բ խորհրդոյն,
զոր ը՞ իւր կրէր 'ի պատճառս հալածանաց.

կմ

կմոպ այլք կարծեն՝ մօտ էր 'ի տեղին, ուր
մատուցանէր 'ի ծածուկ զնբ պատարագ։
Յետ այսորիկ համբուրեալ պեղագեայ ըզ-
գարշապարս նբյ եպսին՝ խնդրեաց զօրհնու-
թի նր՝ զօրանալ շնորհօք նբ հոգւոյն, և առ
ոտն կոխեալ զամ մեծուի տան իւրոյ և զսէր
երկրաւոր փեսայի՝ ընծայեաց զանձն 'ի հարս-
նութի երկնաւոր փեսային իւրոյ քնի։ Եւ
ասէ ցնա եպսն. ած՝ որում ետուր զգրաւա-
կան անձին քո, նա առաքեսցէ առ քեզ զօգ-
նութի 'ի նբյ բնակուէ իւրմէ, և տացէ քեզ
յաղթել հակառակորդին։
Յայնժամ հանեալ պեղագեայ զմեծագին
հանդերձս իւր՝ ետ եպսին, և աղաչեաց տա-
նել ուրեք հեռագոյն, և բաշխել աղքատաց.
և ինքն զգեցել զգեստ աղքատին՝ դարձաւ
առ ծառայս իւր. և որք հեթանոսքն էին 'ի
նն՝ ձգեաց 'ի հաւատս քնի. և եկն նոքօք 'ի
տուն դայեկին իւրոյ. որոյ ծանուցել զքրիս-
տոնէութի կուսին՝ երկեաւ ընունել զնա առ
իւր, և փութով դարձոյց զնա երթալ առ
մայր իւր։
Իբրև եկն պեղագիա 'ի տուն, տեսեալ զնա
մօրն 'ի գծուծ հանդերձս՝ եհարց և գիտաց,
զի քրիստոնեայ եղև դուստրն. անկել յեր-
կիր՝ լայր և կոծէր և ծեծէր զերեսս իւր և
զգլուխն. յղեաց փութանակի և զեկոյց խօս-
նառն նր. զի նա թերևս հնարեսցի փոխել
զմիտս դստերն իւրոյ։ Իսկ երիտասարդն
իբրև իրազեկ լինէր, 'ի խոր տրտմութի ընկղ-
մէր և յանյուսութի. քանզի գիտաց՝ թէ յետ
լի-

լինելոյ կուսին քրիստոնեայ, անհնար է որ-
սալ զնա 'ի սէր իւր. և առ յոյժ յիմարուն՝ն
մոլեալ 'ի սաստիկ սիրոյ աղջկանն՝ անձնա-
մահ եղև սրով։

Եհաս բանն 'ի լսելիս սիմբլիկիոսի կմ մաք-
սիմոսի դատաւորին տարսոնի, որ կարծի
հայր երիտասարդին. և մինչդեռ խորհէր
նա վրէժ առնուլ 'ի պեղագեայ, անագորոյն
մայրն կուսին անձամբ փութացաւ մատնել
զդուստր իւր 'ի ձեռս դատաւորին, կմ թա-
գաւորին, պատճառս դնելով զերկիւղ բնա-
ջինջ լինելոյ ա̅մ տամբ իւրով՝ եթէ ոչ լինի-
ցի ինքնին դատախազ զաւակի իւրոյ։

Արդ իբրև ածաւ անարատ որոջն ք̅ն̅ի պե-
ղագիա յատեան դատաստանի, ասէ ցնա բռ-
նաւորն. չի՛ք քեզ հնար այլազգ ապրիլ 'ի
ձեռաց իմոց, եթէ ոչ 'ի բաց կացցես 'ի ք̅ն̅է՝
զոր ոչն գիտէիր 'ի բնէ. արդ եթէ հաւա-
նեսցիս կամաց իմոց, բարի լինիցի քեզ, և
'ի մեծ փառս բարձրացուցից զքեզ. ապաթէ
ոչ՝ նորահնար մահու՛ամբ կարճեմ զքեզ 'ի
կենաց։ Իսկ երանելի կոյսն առ ոչինչ հա-
մարել՝ զողոքանս և զսպառնալիս՝ ետ պ̅ն̅ի
ա̅մ համարձակութ̅բ̅, ասէ. քա՛ւ ինձ անսալ
չար կամաց քոց. զի փառք իմ ա̅ր է, որ պսա-
կէ զհաւատարիմ սիրելիս իւր անթառամ
պսակօք. և որչափ յաւելուս ինձ տանջանս
դժնդակս, այնչափ առաւել գտից շնորհս ա-
ռաջի ք̅ն̅ի ա̅ն̅ իմոյ և ա̅յ։ Եւ արդ ասեմ քեզ.
գիտեա՛, զի ոչ կարես հեռացուցանել զիս
'ի ք̅ն̅է՝ եթէ՛ կենօք և եթէ մահու՛ամբ. արդ

զոր ինչ առնելոց ես, արա՛, և մի՛ հեղգար։ Յայնժամ ելանէր հրաման դառնութե՛ 'ի բռնաւորէն՝ փաղարեան տանջանօք կորուսանել զպեղագիա. քանզի ջեռուցել դահ-ճաց զպղնձի ցուլ մի ոպ հուր՝ արկին 'ի ներքս զսրբուհի կոյսն. և նա մտեալ ուրախութ՛ի 'ի մեքենայ անդր՝ փառս վերառաքէր ասելով. փա՛ռք քեզ միածին որդի բարձրելոյն քս ա՛ծ, որոյ գալստեամբ շնորհեցաւ յառաջագոյն որոշելոցն առ 'ի քէն պատրանօք չարին՝ միւսանգամ դառնալ 'ի ձեռս քո, և կոխան առնելով զզօրութ՛իս թշնամւոյն՝ կատարեալ լինել 'ի քեզ։

Եւ այնպէս աղօթելով աւանդեաց զհոգին իւր առ ա՛ծ. և պատու՛ական մարմին ն՛ր ճենճերեալ հալեցաւ 'ի մէջ հրացեալ ցլուն ոպ զմոմ. և բուրեաց հոտ անուշութ՛ե ը՛ քաղաքն ա՛մ. մինչև հաւատալ բազմաց 'ի քս. ը՛ որս էին և ագաթոնիոս (կմ թէոնիկոս) և յուլիանոս յաղթօղ զօրականք. որոց հարցեալ 'ի բռնաւորէն, եթէ մեռա՞ւ աղ ջիկն արկեալ 'ի ցուլն պղնձի, արարին պ՛խնի. ո՛չ մեռաւ, այլ՝ մարտիրոս եղև. զի վկայեաց ա՛յ ճշմարտի, և ո՛չ ուրացաւ զարարիչ իւր և զա՛ր։ Եւ վ՛ս բանիս այսորիկ մատնեցան ն՛ք 'ի կապանս և 'ի բանտ, և վկայական պսակաց արժանի եղեն։

Իսկ զմնացեալ ոսկերս պեղագեայ հանեալ անօրինաց ը՛ հրամանի բռնաւորին՝ ընկեցին 'ի լեառն լինատոն, զի մի՛ թաղեսցի պատու՛ով 'ի քրիստոնէից։ Եւ ահա հրամանաւ

ա՛ն

տն եկին առիւծք չորս, որք պահէին զնշխարս
ՆԲՅ կուսին յայլոց գազանաց և 'ի թռչնոց.
մինչև երևեցաւ սրբուհին կղենոնայ ԵՊՍԻ
'ի տեսլեան, և յայտնեաց զտեղի ոսկերաց
իւրոց ։ Եւ ՆՐ եկեալ էառ զայնոսիկ, և տու-
րեալ եհան 'ի գագաթնոյն լերին. ուր գտեալ
մարմարիոն քար մեծ և ողորկ՝ 'ի ցածնուլ
հալածանաց ետ բերել քարակոփս, և շի-
նեաց սեղան և մատուռն. և անդ հանգոյց
զնշխարս ոսկերաց սրբուհւոյն. ուր խուռն
ընթանային հաւատացեալք, և ընդունէին
իւրաքանչիւր զհայցուածս իւրեանց բարե-
խօսութ ԲՆԲՅ կուսին պեղագեայ. յորմէ և
տեղին կոչեցաւ յունարէն ՕՌՈՍ ՍԻՆԱՂՕՂԻՍ, ՆՐ
լեառն ժողովման ։ Եւ էր գրեալ 'ի կղենո-
նայ ԵՊՍԷ յիշատակ վկայուհւոյն 'ի վՐ գե-
րեզմանի ՆՐ այսՊՍ. * Սրբուհին պեղագիա՝
որ ետ զանձն գրաւական ՍՅ, և մինչև ցվախ-
ճան մրցեցաւ 'ի վՐ ճշմարտուԵ, աստանօր
հանգուցեալ է մարմնով. որոյ հոգին յերկինս
թագաւորէ ԸՆ հրեշտակս ‖ ։
Իսկ յետ ժամանակաց անցելոց՝ նշխարք կու-
սին գէթ ԸՆ մասին կարծին բերեալ 'ի բիւ-
զանդիա. ուր շինեցաւ վկայարան յանուն
ՆՐ 'ի բէրա, ՆՐ յայնկոյս ծովու յանդիման
կոստանդնուպօլսոյ՝ 'ի խալաթիա կմ 'ի պէյ
օղլու. ԸՆ որում գրի 'ի հին ժամագիրս ինչ
յունաց 'ի մայիսի 5. թէ * Կատարի տօնա-
խմբութի ՆՐ 'ի վկայարանի նորուն՝ որ 'ի բէ-
րան, մօտ 'ի ՆԲ վկայն կոնոնոս ‖ ։
Կատարումն ՆԲՅՆ պեղագեայ կուսին՝ ԸՆ ո-
մանց

մանց անկանի յամ տ̄ն 290, 'ի սկիզբն կայ-
սերութ̄ն դիոկղետիանոսի, յորում ժամա-
նակի բազումք նահատակեցան 'ի տարսոն
առ սիմպլիկիոս դատաւորաւ. զորմէ ասի՝
թէ առ արծաթսիրութ̄ վաճառէր զմարմինս
նահատակաց. ոպ̄ վաճառեաց ասեն զմար-
մին ս̄բյն վոնիփակիոսի հռովմայեցւոյ: Ի-
ն և՝ որք դնեն յամի տ̄ն 305. յորժամ յետ
հրաժարելոյ դիոկղետիանոսի 'ի կայսերու-
թ̄է տևէր հալածանքն յանուն ն̄ր հրամա-
նաւ գաղերիոսի մաքսիմիանոսի:

Արդ թէպէտև տօնեալն 'ի մէնջ յայսմ մի-
ջոցի առընթեր աշակերտաց պօղոսի երևի
սա ինքն պեղագիա կոյս տարսոնացի՝ զոյգ
ընդ տարագոսեանց նահատակելոց զայնու
ժամանակաւ 'ի կիլիկիա, բայց ոչ մնայ ար-
դեօք արտաքոյ և միւս պեղագիա կոյս ան-
տիոքացի. որ իբրև քաղաքակից ս̄բ̄յն զուկա-
սու աւետարանչի թերևս եդեալ է առըն-
թեր տօնի ն̄ր, կմ զուկիանոսի քահանայի
անտիոքացւոյ, որում աշակերտեալ էր երկ-
րորդն պեղագիա ը̄ յովհաննու նիկոմիդաց-
ւոյ հին վկայագրի: Թող զի սա առաւել
քան զառաջինն հանդիսացեալ է առ նորա-
հրաշ կատարման իւրոյ, և յառանձին ներ-
բող առեալ 'ի ս̄բ̄յ ոսկեբերանէ քաղաքացւոյ
իւրմէ, որպէս և 'ի ս̄բ̄յն ամբրոսիոսէ. արդ
ժամ է լսել և զընթացս վկայութ̄ն ն̄ր:

ՊԵՂԱԳԻԱ ԿՈՅՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ. (2)

Հ. ապր. 30: Յ. հոկտ. 8: Լ. յունիս. 9. և հոկտ. 19: Բոլլանդեանն յաննինգ. 'ի Ի հատ. յնս. էջ. 154 = 164: Ոսկէբ. 'ի ներբող պէղագ. հատ. Ա. էրէս. 585. և Ա. Տբրոս. առ սիմբլիկ. և գիրք Ա. յղ. հուսուրբ:

ԵՐԿՐՈՐԴՍ ԱՅՍ ՊԵՂԱ-

գիա կոյս սքանչելի՝ նորօրինակ նահատակ ցուցեալ, ըն ոմանց էր ժամանակակից առաջնոյն՝ առ դիոկղետիանոսիւ և մաքսիմիանոսիւ, և ըն այլոց փոքր մի յառաջ քան զնա առ կայսերուբ նումերիանոսի, ծննդեամբ յանտիոք քղքէ ասորւոց, հաւատովն քրիստոնեայ, 'ի փառաւոր ազդէ, և մեծատուն ծնողաց զաւակ, առանձնացել 'ի տան ըն բարեպաշտ մօր իւրում և երկուց այլ քերց իւրոց մաքուր կուսից՝ ամ սրբութբ և առաքինուբ: Եւ վն 'ի քն հաւատոց մատնեցին զնն իշխանի քաղաքին, թէ անարգեն զկուռսն, և պաշտեն զխաչն. և թէ են կոյսք և դեղեցիկք տեսլեամբ, առաւելապէս համբաւելով զպեղագեայ զչքնաղութին և զածպաշտութին, որ էր յայնժամ ամաց իբրու հնգետասանից: Իբրև լուաւ անօրէն իշխանն,

առաքեաց զօրականս, զի բռնութ̄ի յափշ-
տակեալ տարցին զպեղագիա առ նա, եդեալ
'ի մտի հանել զնա 'ի հաւատոց, և կամ կատա-
րել զկամս չար ցանկութ̄ իւրոյ։ Եւ հասեալ
զօրականաց յանկարծակի 'ի տուն անդր՝ գա-
զանաբար որսալ կամէին զանբիծ աղաւնին։
Դիտացեալ պեղագեայ զպատճառս գալըս-
տեան նց̄, և տեսեալ՝ թէ չիք հնար զերծա-
նելոյ նմա 'ի ձեռաց չարաց և 'ի մօտալուտ
առթէ մեղաց, կարդաց 'ի սրտէ առ ա̄ծ՝ ցու-
ցանել նմա ելս հնարից. և անդէն լուսաւո-
րեալ յա̄յ՝ զու՛արթ դիմօք և անխռով մտօք
խօսեցաւ առ զօրականսն, և աղաչեաց զնս̄
համբերել սակաւիկ մի. մինչև մտեալ 'ի
ներքին սենեակն՝ զգեցցի զհանդերձն իւր
մեծագին, և շքով երթիցէ առաջի իշխանին
հանդերձ նաժշտօք իւրովք։ Եւ խնամօքն
ա̄յ կամակից եղեն նմ զօրականքն, և ոչինչ
երկմտեցան ը̄ բանս նր̄, զի ոչ իմացան ըզ-
միտս ասացելոցն, այլ առաւել հաւանեցան՝
իբրև թէ յոյժ հաճոյական իցէ այն և իշխա-
նին իւրեանց։
Եւ մինչ նստան նք̄ առ դուրս և 'ի սրահի
տանն, ել սրբուհին 'ի վերնատունն՝ ուր սո-
վոր էր զաղօթսն մատուցանել. ամբարձ ըզ-
ձեռս իւր յերկինս, և ասէ. Ը̄ծ հարցն մե-
րոց՝ դու գիտես զեղեալս և զոր լինելոց է.
փրկեա՛ զիս յորոգայթէ որսողացս. վ̄ս զի
զգուշութ̄ պահեալ եմ զմարգարիտ կուսութ̄
իմոյ, ակնունելով երկնաւոր հարսանեաց
առագաստին՝ զոր պատրաստեցեր սիրողաց
քոց,

քոց, և ես Ճեպիմ փութով գալ առ քեզ ա-
նարատ մարմնով, անախտ սիրով, և ամբիծ
հաւատով։

Զայս ասացէ՝ կնքեաց զինքն նշանաւ խա-
չի, և 'ի վերուստ 'ի վայր ընկէց զանձն ընդ
պատուհանն, եթէ՛ յուսով փախստեան, և
եթէ կամաւոր յանձնառութ՝ վտանգի կե-
նաց, ոչինչ զանգիտէ՝ 'ի մարմնոյ մահուա-
նէն, զի ապրեսցի հոգին և մարմինն։ Եւ
զի յայտնի լիցի՝ թէ յազդմանէն ա՜յ արար
զայն, 'ի վ՜ր բերէ յայսմաւուրքն մեր՝ թէ
հրեշտակ ա՜ն ընկալաւ զնա, և եդ անվնաս
'ի վ՜ր երկրի. այս է՝ ո՛չ եղև 'ի նմա վնաս
ինչ խեղութ՝ կամ խորտակման, այլ մերձ
եղև յանշնչանալ. վ՜ս յաղօթս կացէ՝ լռու-
թ՝ բ, և եդեալ խաչանման զձեռսն 'ի վ՜ր
կրծոցն՝ ասէ. 'ի ձեռս քո յանձն առնեմ ըզ-
հոգի իմ. և այնպէս աւանդեաց զհոգի իւր
առ ա՜ծ։

Ուր գեղեցիկ բարբառի բերանն ոսկի՝ ունե-
լով բանին այսպէս. * Եւ զի ուսցիս, եթէ
ո՛չ առանց ա՜յ եղև այս ա՜մ, առաւելապէս
յայտ առնէ զայդ՝ պնդութ՝ի յօժարութ՝ ն
ն՜ր, և չիմանալն զօրականաց զդաւն, և շնոր-
հել նմ զխնդրելին, և 'ի կատար հանել ըզ-
գործն։ Ո՛չ փոքր ք՜ զՃառէ՝ քս՝ և յօրինակէ
վախճանի ն՜ր է զայս իմանալ. ապաքէն բ՜զմք
'ի բարձր տանեաց վայրաբերէ՝ քս՝ ոչինչ կրե-
ցին դժնդակս (ա՜ր ոչ մեռան). և այլք դար-
ձեալ անդամօք ինչ մարմնոյ խեղացեալք՝
զբազում ժամանակս կեցին յետ անկմանն.

այլ 'ի վր̄ երանելւոյս այսմիկ և ոչ զմի յայս-
ցանէ թողացոյց ա̄ծ հանդիպել. այլ փու-
թապէս հրամայեաց թողուլ հոգւոյ զմար-
մինն. և ընկալաւ զնա որ̄պս ը̄ բաւականին
ճգնեալ, և զա̄մ կատարեալ, զի ոչ բնուե̄
անկմանն էր գործ մահն այն, այլ ա̄յ տնտե-
սուե̄ն ‖: Օ այլ պանծալի բանս սբ̄յ վ̄դպիս
տեսցես 'ի կարգի ծանօթութե̄ց:

Արդ տեսեալ զօրականացն՝ եթէ յամեաց
կոյսն, ելին 'ի վերնատունն, և զնա ոչ
գտին. մինչև խոնարհեալ ը̄ պատուհանն՝
տեսին զնա մեռեալ ո̄պ թէ 'ի քուն: Եւ եր-
թեալ պատմեցին զայս իշխանին. և նա յոյժ
զարմացեալ զղջացաւ: Իսկ վ̄ս մօր և քերց
պեղագեայ յայտ առնէ ոսկեբերանն, եթէ
փախեան. բայց յայլում ճառի (հատ. ա̄. երես. 634. և 646) ուրոյն ներբողէ զերկուս
անտիոքացի կուսանս զբերնիկէ և զպռոսդո-
կէ, և զմայր ն̄ց դոմնինա, որք զայս օրինակ
գետավէժ առնելով զանձինս՝ նահատակե-
ցան. և յիշատակ ն̄ց լինէր առ անտիոքացիս
քսան աւուրբք զկնի տօնի սբ̄յ խաչին. զո-
րոց պատմէ և եւսեբիոս կեսարացի (պատմ. եկեղ. ը̄. 12. և ժամագիրք յունաց յիշեն 'ի
հոկտ. 4): Եւ ահա զնոսին իսկ արդեօք քորս
և մայր պեղագեայ համարի ամբրոսիոս, յա-
սել անդ, թէ իբրև տեսին զօրականքն՝ ե-
թէ ել պեղագիա 'ի ձեռաց իւրեանց, սկսան
'ի խնդիր լինել մօրն և քերցն. այլ ն̄ք վա-
ղագոյն աճապարել՝ դիմեցին յափն գետոյ.
և յանձն արարեալ զինքեանս ա̄յ՝ ասեն.

Օ քեզ

Օ քեզ աղաչեմք հաստի՛չդ ա՜մի ա՜ծ, մի՛ թո-
ղուր զմեզ բաժանիլ 'ի միմեանց կենօք և
մահո՛ւամբ. և այնպ՜ս ձեռն 'ի ձեռն տո՛ւել
արկին միաբան զանձինս 'ի գետ վ՜ս վկայուե՜
անո՛ւանն ք՜սի, և վ՜ս պահպանութե՜ կուսա-
կան մաքրութե՜։

Այլ զի մի՛ ոք 'ի տկարամտաց, և ս առաւել
'ի վատասիրտ օրիորդաց, ձախողակի իմաս-
ցի զպատմութի՜ս, և օրինաւոր համարեսցի
անձնասպան լինել յայսպիսի վտանգս կու-
սութե՜, յիշեսցեն զառած մեծին օգոստի-
նոսի, եթէ առաւել պա՛րտ է զարմանալ ը՜
այսպիսիս՝ քան հետևիլ. զորմէ զօրաւոր և
ազդու բանիւք ճոխագոյն ճառէ ն՜բ վ՜դպս
'ի գիրսն յաղագս քաղաքին ա՜յ։ Իսկ մեք
յուշ առնեմք ընթերցանելեաց երկու ինչ
կարևոր. նախ՝ զայն, զոր ոսկեբերան և ամ-
բրոսիոս և օգոստինոս և ա՜մ վ՜դպք միաբան
վկայեն, թէ յայն սակս գովի գործ պեղա-
գեայ և նմանեաց ն՜ր թո՛ւով սակաւուց, զի
առանձին տնտեսութ՜ը և ազդմամբն ա՜յ ե-
ղև. և ո՞ իշխէ ասել՝ թէ ո՛ւմ և է անխտիր
հասանէ ունել զշնորհս այնպիսի տնտեսուե՜
և ներքին ազդմանն։ Բայց թէ ոք համա-
րեսցի, եթէ և զնոցայն՝ որք ը՜ վկայուհիս
գրեցան, դժո՛ւարին է ցուցանել զներքին
ազդումն, հարկի ասել՝ եթէ սխալեցան
մարդկօրէն, և արդարացան ա՜ծօրէն. և յի-
րաւի կարէ ոք 'ի միամտաց սխալիլ անյաղ-
թելի տգիտութ՜ը՝ կարծելով, թէ չի՛ք այլ
ճանապարհ հաճոյ լինելոյ ա՜յ կմ փախչելոյ

’ի մեղաց . և ՚ած արդարացուսցանէ զայնպէս-
սին եթէ առ միամտուե , և եթէ առ առա-
ւելուեն սիրոյն ՚այ . և ո՞ ոչ տեսանէ՝ թէ ’ի
պեղագիա և ’ի նմանիս նորա կատարեալ էր
սէրն ՚այ ։

Ընկերոդ՝ զայն , թէ արժան է սրբասէր կու-
սից ոչ անգիտանալ զայս Ձշմարտուեն , թէ
կուսական մաքրուեին առաւել պարտի լի-
նել ’ի սրտի քան ’ի մարմնի . մինչ զի ոչինչ
բռնուեն կարօղ իցէ խախտել զսիրտն՝ թէ-
և մարթասցի բուռն առնել մարմնոյ . ՚ր է-
թէ զոհեալ միս բռնի դիցեն ’ի բերան ու-
րուք , ցորչափ ոչ կամի նա Ձաշակել , ոչինչ
մեղաւ . ոչ առնէին ըստ բազումս ’ի վկայից ։
Ա.յլ որ արիաբար վանէ զթշնամին կուսուե ,
զօրանայ ՚ոբ հանգոյն թեւկղեայ և հռիփ-
սիմեայ . և կայ միայ անպարտելի հոգւով և
մարմնով ։ Ա.յսոքիկ ’ի ժամուս հերիքասցին
առ իմանալ զՁշմարտուեն խնդրոյս , և զնա
կապէան նահատակուեն ՚ոբ կուսին պեղա-
գեայ . զոր ոչ հարք , նոյնպէս և ՚ամ վկայա-
բանք և քննիչք , ըստ որս և բոլանդեանք յե-
տին խուզարկուք՝ գովեն և փառաւորեն իբ-
րև զՁշմարիտ վկայուհի առաքինի . և ՚ամ է
կեղեցիք քրիստոնէից տօնախմբեն ’ի փառս
քոյ . և գերեզման նորա էր ուխտատեղի
անուանի յանտիոք յաւուրս ոսկեբերանի ։
Ա.սի՝ թէ գոյր երբեմն վկայարան և ’ի կոս-
տանդինուպօլիս յանուն սորին պեղագեայ
կուսի . զոր այլք ընծայեն առաջնոյն . որպս
և ոմանք վերջնոյն . զորմէ ՚մեզ խօսել ,

զի

զի ծանիցին զանազանեալ ծաղկունք դրախ-
տին ա̅յ համանուն պեղագիա կոչմամբ։

ՊԵՂԱԳԻԱ ԱՊԱՇԽԱՐՕՂ ԱՆՏԻՈՔԱՑԻ

Յ. յունիս. 9։ Յ. Լ. հոկտ. 8։ Հռոսոճէտ 'ի հարանց վարս. էջ. 376 = 380։ (3)

Երրորդն պեղագիա աղախինն ա̅յ՝ տօնելի ո՛պ զառաջինսն, ը̅ ոմանց կարծի լինել ժամանակակից ն՛ց, ը̅ այլոց 'ի հինգերորդ դարու առ կայսերութ՛ բ̅ Թէոդոսի փոքու՝ յանտիոք քաղաքէ, երբեմն հեթանոս և պոռնիկ, և ապա հաւատացեալ և կատարեալ ապաշխարօղ և ճգնաւոր. զորոյ զվարս գրեաց յակովբոս սարկաւագ ժամանակակից և ականատես՝ աշակերտ ն̅բյն նունոսի կամ նոննոսի ե՛պսին եդեսիոյ։

Արդ՝ եղև երբեմն ժողով ութ ե՛պսաց յանտիոք առ հայրապետ տեղւոյն. և էր մի յեկելոց անտի ն̅բ ե՛պսն նունոս միաբան վանացն տաբենացւոց, որ ը̅ յորդորելոյ այլոց ե՛պսաց՝ յորժամ նստել̅ էին 'ի դուռն վկայարանի ն̅բյն յուլիանոսի, խօսէր բանս կենաց 'ի շինութի̅ լսողաց։ Եւ մինչդեռ զարմացել̅ էին ամենեքին ը̅ հոգեբուղխ վ̅դպուի̅ ն̅ր, տեսին՝ զի ահա անցանէր ը̅ այն բ̅զմ շքով պեղագիա պոռնիկն, որ և խաղացօղ և երգեցիկ դիւական՝ գլուխ կաքաւչաց և միմոսաց

սաց անտիոքացւոց, մարգարիտ կարդացեալ
'ի հոմանեաց իւրոց. ոպ և էր իսկ բովան-
դակ անձամբ յոտից մինչև 'ի գլուխ զարդա-
րեալ մարգարտօք և ակամբք պատուական-
նօք, և մանեակ ոսկի 'ի պարանոց նորա. և
ինքն նստեալ 'ի վր̄ իշոյ. և յառաջոյ և զկնի
նր̄ բազմութիւն երիտասարդաց և աղջկանց
'ի հանդերձս մեծագինս. և պշնուին ա̄մ
Ֆասէրք ը̄ տարապայման գեղ պեղագեայ,
և հոտ մշկոյ և այլոց խնկենեաց բուրեալ 'ի
նմանէ՝ լնոյր զմերձակայ վայրս։

Զ որ տեսեալ ե̄պսաց, զի հոլանի և անա-
մօթ լկտութ̄ ը̄ անցանէր՝ այնպիսի փառօք
հանդերձ, հեծէին, և զաչս 'ի բաց դարձու-
ցանէին։ Իսկ երանելին նունոս խորհրդով
յերկար նայեցեալ ը̄ նա նաև յետ անցանե-
լոյն, ապա դարձաւ և ասէ ցե̄պսունսն՝ որ ը̄
նմա. դուք ո՞չ հիացայք արդեօք ը̄ գեղեց-
կութիւն դորա՝ ոպ ասս։ Զ այս ասաց, և ե-
դեալ զերեսս իւր 'ի վերայ ծնգաց իւրոց՝
ելից արտասուօք զգոգ իւր. և յոգւոց հա-
նեալ 'ի խորոց սրտէ՝ զնոյն բան երկրորդեաց.
ո՞չ հաճեցայք ասէ դուք ը̄ գեղ դորա ան-
նման։ Եւ 'ի լուռ լինել նց՝ ասէ. ես կա-
րի յոյժ հաճեցայ ը̄ այդ գեղեցկութիւն. վ̄ս
զի զնոյն զայն հանդերձեալ է ա̄ծ 'ի դէմս
ածել մեզ յահաւոր բեմի իւրում՝ 'ի դատել
զմեզ և զե̄պսութիւն մեր։ Վ̄ս զի ուր դա վ̄ս
կորստական սիրոյ Ֆի զա̄մ փոյթ 'ի մէջ ա-
ռեալ է զարդարել զանձն ա̄մ զարդուք, մեք
վ̄ս ա̄յ և ո՛չ զաղտ հոգւոց մերոց 'ի բաց սրբ-
բեմք.

քեմք. և ոչ յուշ ածեմք զերկնաւորսն փե-
սայն, որ խոստացաւ մեզ ցուցանել զարփիա-
հրաշ դէմն իւր, յոր ոչ իշխեն հայել քերու-
բեքք, և պարգևել մեզ զանպատում բարիս։
Յետ այսորիկ եկեալ Նոյեմսի եղբի ըստ յա-
կովբայ սարկաւագի իւրում՝ ի սենեակ եկե-
ղեցւոյն՝ անկաւ՝ ի վըր երեսաց իւրոց յեր-
կիր, բաղմեր զկուրծս, ողբայր և ասէր.
Տէր քո ներեա ինձ մեղաւորիս և անարժա-
նիս, զի միոյ աւուր զարդ պոռնկին յաղթեաց
ամ զարդու հագուոյ իմոյ. որովհետև դիմաք ակ-
նարկեցից՝ ի քեզ, կամ որո՞վք բանիւք արգա-
բացայց առաջի ծածկագիտիդ ամ. վայ ինձ,
զի յանդիման լինիմ՝ որյ սեղանոյ քո, և ոչ
մատուցանեմ զհոգի գեղեցիկ՝ ոգի պահան-
ջեա լինին. կինն այն մեղաւոր խոստացաւ
հաճոյ լինել մարդկան, և արար. ես ուխտե-
ցի քեզ հաճոյանալ, և ատեցի առ հեղգու-
թեես. մերկ եմ յանդիման երկնի և երկրի,
և անյոյս՝ ի գործոց բարեաց. այլ յոյս իմ
և փրկութիւն իմ դու ես՝ որ ողորմեցար քով։
Խոկ յառաւօտուս միաշաբաթուն յետ գիշե-
րային պաշտաւնացդ ասե եղեն ցսարկաւագ
իւր. տեսանեի յանուրջս, զի՝ ի կալ իմում
՝ի ծբ բեմին՝ աղաւնի մի սեաւ և շաղախեալ
յոյժ աղտեղութիւք թռչէր առնոյր զկնիւ. որոյ
ոչ կարեի տանել զաղտութիւնն և գարշ հո-
տոյն. և եկաց մօտ առ իս, մինչև յասել
սարկաւագին, մի ոք յերեխայից, և յայն-
ժամ եղև աներևոյթ. այլ զկնի պատարա-
գին երբև ելանէի ըստ դուռն տաճարին, միւս-
ան-

անգամ թևապարէր զինև նոյն աղաւնին զազրատեսիլ. և իմ ձգեալ զձեռն՝ կալայ զնա, և ընկեցի 'ի կոնքն, որ 'ի գաւթի եկեղեցւոյն. ուր թօթափեալ զա̅մ աղտեղուի̅ իւր՝ ել անտի իբրև զձիւն սպիտակացեալ, և սլացաւ 'ի բարձունս. մինչև անտես լինել

յաչաց իմոց:

Եւ ահա առ օրին յայտնի լինէր բան տեսլեանն. քանզի իբրև եհաս ժամ գնալոյ նունոսի ը̅ այլ ե̅պսաց յեկեղեցի հայրապետանոցին, յետ կատարման կանոնական կարգին և զկնի կարդացման աւետարանին, մատոյց հայրապետն անտիոքայ զաւետարանն առ նունոս եպիսկոպոս խօսել զբանն ա̅յ առ ժողովուրդն. և նա լի հոգւով առանց պաճուճանաց բանից խօսեցաւ յաղագս հանդերձեալ դատաստանին և հատուցման արդարոց և մեղաւորաց. մինչև շարժել զա̅մսին 'ի զեղջ և 'ի փոյթ մեծ: Ընդ գտաւ յայնժամ խնամօքն ա̅յ և պեղագիա պոռնիկն ծպտեալ յայլ կերպարանս. որոյ չէր երբէք կոխեալ 'ի տաճարն ա̅յ, զի հեթանոս իսկ էր. այլ յայն օր շարժեաց զնա ա̅ր մտանել յեկեղեցի անդր, և լսել զբանս նունոսի. և ահա սաստիկ հարեալ յոգի 'ի լրոյ քարոզութ̅ե̅ ճշմարտութ̅ե̅, և զմտաւ ածեալ զա̅մ չարիս իւր և զմեղսն զանազան՝ լուծաւ յարտասուս յերկիւղէն ա̅յ, և ողբայր դառնապէս:

Ապա ելեալ 'ի դուրս՝ պատու՛իրեաց երկուց 'ի մանկտւոյ իւրմէ հայել և դիտել, յո՞ երթայ և ո՞ւր իջևանի ե̅պսն, և բերել ինքեան

զրոյց.

զլսոյդ. և երբեմն գիտայց՝ եթէ՛ ի վիճակաւորանէ
ազգին յուդայական ազգանէ, յղեայց առ նա զիր
աղերսանացս օրինակ զայս. * Ով աշակերտ
տիզ քոյ՝ կինա մեղաւոր և աշակերտ սա-
տանայի։ Լ ուճեալ է իմ յաղագս այն քո, զի
խոնարհեցոյց զերկինս, և էջ յերկիր, ծէ
վա արդարոց, այլ զի զմեղաւորս հեցուսցէ.
այնչափ խոնարհել, մինչև մերձ լինել մաք-
սաւորաց. և թէ՝ յոր քերականքն ոչ լիշեին
հայել, շրջեայաւ ընդ մեղաւորս։ Եւ դու ար
իմ, որ սրբուհի յոյժ ունիս, թէպէտև մարմ
նոյ աչօք ոչ տեսեր զայր քո՝ որ յայտնեաց
զանձն սամարացի կնոջ պտռնկի առ ջրհո-
րով, քայց Հչմարիտ պաշտօնեայ ես նորա.
ոյլ ի պատուէրոց քրիստոնէից լուար։ Արդ
եթէ Հչմարիտ աշակերտ ես քոյին այնմ, ի՛
անտես առներ զիս զգանկացօղս տեսանել
քո վերկինէն. այլ արժանի՛ արա տեսանել
ինձ զքեզ երեսաց քո։

Լսակ եաան նուռնոս գրեաց առ նա պինդ քա-
նութս այսոքիւք։ * Ո՛ղ և եցես՝ յայտն ես ա
այ և՛ դու և քան քո և կայք քո. այլ ասեմ
քեզ, մի փորձեր զիմ նուճաստուԹի. զի ես
այր մեղաւոր եմ՝ ծառայ այ. եԹէ ստու-
գապէս է՛ի քեզ փափաքումն այծուԹե և յօ-
ժարուԹի ընդունելոյ զՀաւատս, և վա այն
կամիս զիս տեսանել, են ընդ իս և այլ
եպատունք. Ի՛կ և յանդիման նց տեսցես զիս.
վա զի առանձին ոչ կարօղ ես տեսանել զիս։
Լսեալ պտռնկին զայս նամակ՝ ուրախ եղև.
և գնաց փութանա յիջևան եպին. և երբև

լու եղև գալուստ նր՝, կոչեաց նունոս և զայլ
եպսունս. և ապա հրաման ետ պեղագեայ
գալ մտանել 'ի ներքս։ Եւ նր՝ մատուցեալ
յատենի եպսաց ընկէց զանձն 'ի գետին, և
բուռն հարեալ զոտից նունոսի՝ ասէ. աղա-
չեմ զքեզ տր՝ իմ, նմանօղ լեր վդ՝պին քում
և տ՝ն յի՝ քի՝, և ցոյց առ իս զզեղումն մարդա-
սիրութե՝ քո, և արա՛ զիս քրիստոնեայ. զի
ես տ՝ր իմ (ը՝ անու՛ան իմոյ) պեղագոս եմ,
ծով մեղաց համատարած, և անդունդք անօ-
րէնութե՝։ Յայնժամ եպ՝սն բռնադատեաց
զնա յառնել 'ի գետնոյ, և ասէ ցնա. Կա-
նոնք քահանայականք օրինադրեն չմկրտել
զպոռնիկն, եթէ ոչ երաշխաւորս տացէ, զի
մի թաւալեսցի վերստին 'ի սովորական զազ-
րագործութի՝ն։

Իսկ պեղագիա դարձել՝ անկաւ յոտս եպ՝սին,
և արտասու՛օք թանայր և հերով գլխոյն մաք-
րէր՝ ոպ՝ երբեմն կինն պոռնիկ զտ՝րունական
ոտսն. և ասէր. դու համար տացես ա՝յ վ՝ս
հոգւոյ իմոյ, եթէ յապաղես մկրտել զիս և
մաքրել զաղտեղութի՝ յանցանաց իմոց. և
այնչափ ինչ խօսեցաւ ջերմ արտասու՛օք,
մինչև զարմանալ ա՝մ եպ՝սաց և ժառանգա-
ւորաց ը՝ կատարեալ դարձ նր՝։ Յայնժամ
յղեաց նունոս զյակովը սարկաւագ իւր առ
հայրապետ քաղաքին՝ պատմել նմա զայս
ա՝մ, և խնդրել զոմն սարկաւագուհի, զի լի-
ցի կնքամայր պոռնկին։ Եւ հայրապետն
ուրախ եղև յոյժ, և յղեաց ը՝ սարկաւագի
զաւագ սարկաւագուհին զկոյսն ռոմանա.

որք

որք եկեալ գտին զպոռնիկն, զի տակաւին
անկեալ կայր արտասուօք առ ոտս ե՜պսին։
Ապա յարոյց զնա ե՜պսն. և երախայացու-
ցեալ զնա՝ լուաւ զանկեղծ խոստովանութի՜
մեղաց ն՜ր, և մկրտեաց զնա և դրոշմեաց, և
հաղորդեցոյց 'ի ՝ս՜ք խորհրդոյ մարմնոյ և ա-
րեանն ՝տ՜ն. և յանձն արար ռոմանայ սարկա-
ւագուհւոյն՝ որ ընկալաւ զնա յաւազանէն,
տանել զնա յերեխայանոցն, և ուսուցա-
նել զա՜մ կարգս ՝ա՜ծպաշտութ՜ե զեօթն օր։
Օ ի թէպէտև ոմանք հայեցեալ 'ի սովորա-
կան կանոնն՝ գրեն, թէ նախ երախայացոյց
զնա ե՜պսն զեօթն օր յառաջ քան զմկրտու-
թի՜ն, բայց յակոբ սարկաւագ ականատես
վկայ յայտ առնէ, թէ առ օրին մկրտեաց
զնա ՝ը՜ ջերմեռանդն փութոյ նորա. և ապա
եդ զեօթն օր յերախայանոցն։
Յայնժամ երևեցաւ սատանայ մարդակերպ
առ դուրս ե՜պսին նունոսի, և նախատէր զնա
բանիւք բազմօք, և կոծէր զանձն ողբով մե-
ծաւ. անիծեալ լիցի ասէ օրն՝ յորում դու
ծնար. չէի՞ն քեզ բաւական, զի զերեսուն
հազար սարակինոսս հաներ 'ի ձեռաց իմոց,
և մկրտեցեր. և զբնակութի՜ իմ զհեղինուպօլիս
կապտեցեր յինէն. և արդ բարձեր յինէն և
զպոռնիկն զայն, որ էր ՝ա՜մ ակնկալութի՜ իմ։
Սոյնպէս և առ պեղագիա քանքարտալով
ասէր չարն. զա՞յդ ինձ հատուցանես տիկի՛ն
իմ պեղագիա, և իմումս յուդայի լինիս նմա-
նօղ. զի ո՜պ նա պատուհեալ առաքելութ՜ք՝
մատնեաց զ՜տ՜ր իւր, նոյնպէս և դու ընդ իս
արա-

արարեր : Ասէ ցնա Նաւնաս առ ցպետզապիա .
ապատարեա զանձն քո նշանաւ խաչին քում , և
հրաժարեալ ի տատանայէ՝ փչեա և Թուք
յերեսս նորա . և իբրև արար զայն , անյայտ
լինէր ջարն :

Ա.յլ եթէ երկուց աւուրց՝ յորժամ էր պետզա-
պիա ըն ռոմանայ յերեխայանոցն , զարթոյց
զնա դևն ի քնոյ ձայնելով մարդարիտ ան-
ուանէ . և սկսաւ յուշ առնել նմա զմեծու-
Թիւն՝ զոր ստացեալ էր գործակցուԹեանն .
և ասէր . ԹԷ տրտմեցուցի զքեզ՝ զի Թողեր
զիս . ասա , զի լցուցից զայմ կամս քո , և մի
յամօԹ առներ զիս առաջի քրիստոնէից :
Ասէ աղախինն այ պետզապիա դարձեալ կըն-
քեաց զանձն նշանաւ ՏԷր խաչին , և փչեաց
ընդդէմ բանասարկուՒին՝ ասելով . ԱՀ ԹԷ
կորզեաց զիս ի միջոյ ժանեաց քոց , և վերա-
ծեաց յերկնաւոր առագաստ իւր , նա ինքն
ընդէմ կացցէ քեզ ընդ իմ. և անդէն աներևոյԹ
եղև դևն , և այլ ոչ երևեցաւ :

Ա.պա յաւուր երրորդի եաւ քերել պետզապիա
զնամ ինչ իւր , և կոչեալ զՏպան նաւնաս՝ եաւ
ի ձեռս նոր զնացին , ասելով . այս մեծուԹիւնք
են տէր իմ , որովք Հոխացոյց զիս աստանայ .
արդ Թողուա՛ի կամս արբուե քո , զի արաս-
ցես՝ զոր արժան Համարիս . զի ինձ ցանկալի
են մեծուԹիւնք նոն իմոյն քո : Եւ եպան կո
չեաց զկոնտոմոան եկեղեցւոյ , և երդմնեցոյց
զնա՝ զի մի ինչ յընչից անտի մոցէ յեկեղե-
ցի , այլ ոչՓս և այրեաց և կարօտեալոց քաշ-
խեացէ ասէ նմին . և մեծուԹիւնք կնոջն մեզա-

ւորի եղիցին գանձք արդարութեան։ Կոչեալ պեղագիայ ըն խրատու ե՞պսին և սարկաւագուհւոյն նաև զա՞մ ծառայս իւր և զաղախնայս, ազատեաց զն՞ս՝ տալով ն՞ց ձեռամբ իւրով բաժին յընչից իւրոց և 'ի զարդուց. և ասէ. փութացարո՛ւք փրկել զանձինս ձեր յՇէ աստի չարէ, որ լին է մեղօք. զի ո՞պ 'ի միասին էաք յՇիս յայսմիկ, նոյնպէս 'ի միասին լիցուք յաւիտեան յերանաւէտ կեանս հանդերձեալ Ծին։

Իսկ յաւուր ութերորդի՝ յորում հանդերձեալ էր պեղագիա 'ի բաց դնել յանձնէ զսպիտակ հանդերձն, զոր զգենուին նոր մկրտեալքն զաւուրս եօթն, վաղայարոյց լեալ՝ եհան զայն յանձնէ, և առանց զգացուցանելոյ ումեք առեալ զմազեղէն պարեգօտ ե՞պսին՝ արկաւ զիւրեաւ, և խորգ մի կապեաց 'ի թիկունս իւր. և այն՞պս 'ի ձև առն և 'ի կերպարանս աղքատի ել գիշերայն, և գաղտագնաց եղև մինչև յե՞էմ. ուր ելեալ 'ի լեառն ձիթենեաց՝ արգելական եղև 'ի խուց մի որ՞պ միայնակեաց՝ պեղագիոս անու՛ամբ. և ոչ ոք գիտաց երբէք, եթէ կին իցէ։

Եւ եղև յետ երից կ՞մ չորից ամաց ժամանակի՝ ասէ պատմօղ բանիցս, ցանկացայ ես յակովբոս սարկաւագ երթալ յե՞էմ, և երկիրպագանել ն՞ը յարութեան տ՞ն մերոյ յի՞ քի՞։ Եւ 'ի խնդրել իմում հրաման 'ի նունոսէ ե՞պսէ իմմէ՝ պատու՛իրեաց ինձ, և ասէ. քե՛զ ասեմ եղբա՛յր սարկաւագ, իբրև հասանես յե՞էմ, խնդրեա՛ անդ զոմն եղբայր պեղագիոս՝ աբեղայ

զայ և ներքինի, փակեալ յառանձնուէ յա-
մաց հետէ. և երթ 'ի տեսանել զնա, զի
կարօղ ես ստուգա՞պս շահել 'ի նմանէ։ Եւ
զայս ա՞մ ասէր ինձ զաղախնոյն ա՞յ զպեղա-
գեայ՝ ո՛չ յայտնապէս։

Արդ իմ հասեալ յեէմ և երկրպագեալ ՆԲ
յարութէ, ելի զկնի 'ի խնդիր ծառային ա՞յ.
և գնացեալ գտի զնա 'ի լերինն ձիթենեաց
'ի տեղի աղօթակացուէ ա՞ն մերոյ, զի կայր
'ի խուց մի անձուկ՝ փակեալ շուրջանակի,
պատուհան փոքր յորմն ունելով։ Եւ իբրև
բախեցի զդուռն պատուհանին, վաղվաղակի
եբաց ինձ, և ծանեաւ զիս. բայց ես ոչ ծա-
նեայ զնա. զի զիա՞րդ մարթ էր ինձ ճանա-
չել՝ զոր յառաջագոյն տեսել էր իմ անհամե-
մատ գեղով, թարշամել այնուհետև 'ի բա-
զում պահոց. իսկ աչք նր՞ ո՞պ փոսք երևէին։
Եւ ասէ ցիս. ուստի՞ գաս ե՛ղբայր. և ես
ասեմ. առաքեցայ առ քեզ հրամանաւ նու-
նոսի ե՞պսի։ Իսկ նա ասէ. աղօ՛թս արասցէ
վ՞ս իմ, զի արդարև ՆԲ ա՞յ է նա. և անդէն
փակեաց զփեղկ պատուհանին, և սկսաւ
սաղմոսել զերրորդ ժամուն. իսկ իմ աղօ-
թեալ առ որմոյ սենեկի նր՝ մեկնեցայ ան-
տի, շահեալ յոյժ 'ի հրեշտակային տեսու-
թէ նորա. և դարձ արարեալ յեէմ՝ շրջիլ
սկսայ ը՞ վանորայս՝ այց առնելով եղբարց։
Եւ լսէի զհռչակ համբաւոյ մեծի առ ամե-
նեսին զա՞ր պեղագիոսէ. նմին իրի խորհե-
ցայ միւսանգամ ելանել տեսանել զնա, և
միսիթարիլ փրկաւէտ վ՞դպութ՞ ն՞ր։ Արդ

հասել՝ի խղիկն՝ իբրև համարձակեցայ բա-
խել, մանաւանդ թէ յանուանէ ձայնել զնա,
ոչինչ ետ պ̃խնի. սպասեցի երկայնամտեալ
ցօրն երկրորդ և երրորդ. և ստէպ կարդայի
յանուանէ՝ տէր պեղագիէ. և ո՛չ լուայ ըզ-
ձայն ուրուք. վ̃ոյ ասէի ը̃ միտս, կամ ոչ ոք
է աստ, և կամ մեկնեալ իցէ՝ որ աստ բնակէր
միայնակեացն։ Ապա ը̃ ազդելոյ տ̃ն՝ ասեմ.
տեսից, մի՛ գուցէ մեռեալ իցէ. բացի զփեղկ
պատուհանին. և իբրև հայեցեալ տեսի զնա
վախճանեալ, փակեցի զփեղկն, և կաւով
լցեալ ամրացուցի. և ընթացեալ յեէմ՝
պատմեցի բնակակցաց իմոց, եթէ ո̃բն պե-
ղագիոս միայնակեաց նշանագործ հանգու-
ցեալ է։ Յայնժամ եկին ո̃բ հարքն հանդերձ
զանազան ուխտիւք միանձանց, և քակեալ
զմուտս խցկանն՝ հանին զո̃բ մարմին ն̃ր ար-
տաքս՝ ամփոփել արժանաւոր պատուով իբ-
րև զգանձ ոսկւոյ և ականց պատուականաց։
Եւ յօծանել անդ և՝ի պատել զնա հարանց
զմռսով, յայնժամ ծանեան՝ եթէ կին մարդ
է. և խորհեցան ծածկել զսքանչելիսն. այլ
չէր հնար թաքչիլ յամբոխէն. աղաղակեցին
մեծաձայն, և ասեն. փա՛ռք քեզ տ̃ր յ̃ս քն̃,
զի բազում են քո գանձք ծածկեալք՝ի վ̃ր եր-
կրի, ո՛չ միայն յարանց, այլ և՝ի կանանց։
Եւ հնչեաց լուր ն̃ր յ̃ամ ժողովս. և եկին
համօրէն ուխտք կուսանաց՝ որ յերիքովէ և
որ՝ի յորդանանէ, մոմեղինօք և ղամբարօք.
և այնպէս երգովք օրհնութ̃ բարձեալ՝ի
ո̃բ հարանց՝ ամփոփեցան ո̃բ նշխարք նորա։

Ա՛յս վարք են պոռնկին, և այս քաղաքավարութիւն՝ անյոյս համարեալ անձին, ասէ գրիչն. Ընդ որում և մեզ տացէ ինչ գտանել զողորմութիւն իւր յաւուրն գատաստանի. զի նման վայել է պատիւ և փառք, կարողութիւն և իշխանութի յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ը։

(1) Ա՛ռաջինն պեղագիա տարտնացի՝ թէպէտև առանձին ներբողեն յոյնք՝ ի ժամագիրս նոցա. ՝ի մայ. Ը. տուգաբանութիւք անուանն՝ իսր և անդրնդային, ևս նման համատարած ծովու. ուր և սկզբնատառք երգոցն յօդեն զայս բան, * Պեղագիայ ներբող յանկաւուղ հնչեմ||. քայց մուտանգամ յիշատակեն զնա զոյգ ընդ երկրորդին և երրորդին՝ ի հոկտ. 8։ Ընդ հառաջինն բանիլեան յայտաւուրք յունայ ոչ յիշեն զառաջինն ՝ի մայ. 4. այլ միայն ՝ի հոկտ. 7. յոր յարէ և ՝ի հոկտ. 8. զերկրորդն և զերրորդն։ Իսկ Հ. ՝ի հոկտ. 8. գրէ զառաջնոյն ևեթ. ոմն և զերկրորդէն ՝ի 30. սպր. և զերրորդէն ՝ի յունիսի. 9։ Ոմն Լ. զառաջինն գնէ ՝ի մայիսի 4. զերկրորդն ՝ի յունիսի. 9. և զերրորդն ՝ի հոկտ. 8։ Յորոց ոմանք իմանալ, թէ երեքին սէք դժուարաւ բաժանին յիրերայ ըստ ժամն. ոմն և ժամանակին նոյ ըստ ոմանց նոյնանայ, թէպէտև ըստ այլոց զանազանեացն։

Վարք առաջնոյն միօրինակ քաղուածով գտեալ ՝ի յայսմաւուրս ամ ազգաց՝ ոմն զմի ազնուր հնագոյն, որ չերևի այժմ՝ ՝ի միջի. ուստի առեալ է և ընարձակ օրինակն լնպոմանոսի և սուրիոսի յանուն մետափրաստեայ. զոյգ և զյունական բնագիրս գտեալ ՝ի գրատան վատիկանու ոպագրեն բաբերպրոք բոլլանդեան. քայց մեք ոչ տեսաք ՝ի նմին զոգի մետափրաստեան, և կարծեմք լինել այլոյ ուրուճն յետնոյ բաղադրուն անշուք ոճով. նմին երբ սակաւ ինչ առաք ՝ի նմանէ ոչ առաջեալ բացատրութիւն համառօտաբանուն յայսմաւուրսց։ Ապա եթէ կարծէ բաբերպրոք պատմական սխալանս գտա-

գտանել յԼատրճակին, վըյ և առաբել ընտրէ զհամառօ-
տութիս, խաբէ. զի գոյացութէն պատմուճէ նոյն է յա-
մենեսին՝ մինչև ըստ կարծեցեալ սխալանաց անգամ. յորս
գլխաւորն այն է, զի յիչէ որդի դիոկղետիանոսի՝ որոյ
ոչ գոյր որդի. և ինքն դիոկղետիանոս սակ լինել ան-
ձամբ'ի տարսոն, որ ոչ երբեք երևի եկեալ 'ի տարսոն։
Եւ սակայն գիւրին է լուծուցն իրացդ, զոր և ինքն
քալքքնիչն ոչ գանգատի տալ. ՚ի թէ գործք գտաբա-
լին տարսոնի՝ որ 'ի գիմաց կայաբ, յանուն կայաբ է
գրեալ 'ի վկայաբանից. որ և յայլ պատմութիս հանդի-
պի։ Նոյնպէս ասելն է, թէ զոմն սիրելի կայաբ իբր
որդեգիր ներ՝ որդի անուանեն կայաբ։ Իսկ թէ ո՞ եր
գտաբար տարսոնի 'ի ժամանակն անդ, 'ի վկայաբա-
նութենց այլոց նահատակաց քաղի մակաբերութ լինել
սիմբլիկիոս կամ մաքսիմոս անուամբ։
Գովեմ զբաբեպրոք. զի յորժամ կամի ատուգել ինչ
մի, ընդ որ ինքն հաւանի, քաջ ճարտարէ զպատճառս.
միայն թէ միշտ 'ի դէպ գայցէ. ոչ դիպող երևի գրելն
ներ ատանօր, թէ ուր սիրելոյս ընթեռնու 'ի ձեռա-
գրի միում. * էառ զհալորդութիւն 'ի սեղանոյն քո՝,
՝ և բաշխեաց նմա ||, պալատինեան օրինակն ունի այս
պէս. * բաշխեաց նմ զհալորդուն 'ի սեղանոյն քո ||.
պրդ կարծեցեալ բաբեպրոքայ՝ թէ սովիմր լինի իմա-
նալ զատակ հալորդութեն առանց պատարագելոյ, իրա-
ւունս դատի 'ի վր բերել. * Ընաբել ընարելն է պա-
՝ լատինեան օրինակն համառօտաբան. զի ոչ էին 'ի
՝ մէջ տաճարի, այլ 'ի վր ճանապարհի, ուր կարօղ
՝ էր եղեն ունել առ իւր զծծային մարգարիան, զի
՝ այսպէս սովոր էին կոչել զնբ նշխարն. ըստ որում բա-
՝ զում անգամ կրէին 'ի ճանապարհի քրիստոնեայք, ըստ
՝ վկայելոյ սբյն ամբրոսիոսի 'ի խօսելն զեղբօրէ իւրմէ
՝ զնբյն սատիւրոսէ || : Ոչ՞ թէ և յայլ տեղիս տայր
զայսպիսի մեկնութիւնս։ Բայց կարօղ էր և ըստ հիւրկն
մեկնել, թէ գուցէ չէր ինչ բացագոյն մատուցն՝ ուր
պատարագէր եղեն, կամ ուսոյ առեալ էր նր զնբ խոր-
հուրդն։
(2) Ջերկրորդն պեղագիա՝ զկոյն ասեմ անտիոքացի,
Հ. և Յ. բս. դնեն առ նուաբերիանոս կայաբրաս. ուր
Յ. ժմ. զերրորդն պեղագիա զպատնիկն դնէ յաւուրս
նուաբերիանոսի. իսկ այլք 'ի վկայաբանից ոչ որոշեն
զժամանակ նց. և քննիչք՝ են որ անգիտելն խոստովա-
նին, և են՝ որ զերկրորդն դնեն յաւուրս գիոկղետիա-

նոսի, կմ մաքսիմինոսի դաժայ. իսկ զերրորդն ձգեն 'ի հինգերորդ դար ցաւուրս Թէոդոսի փոքու:

Բարւոք գրէ Հ. 'ի 30. ապր. 'ի վախճան վարուց պեղագեայ երկրորդի, Թէ * են և այլ կանայք՝ որ անուանին պեղիգա, ոպ̄ և պոռնիկն երանելի. բայց զսա յիշատակէ ոսկեբերանն յոհան, և վ̄ս սորա դրեաց ճառս ներբողականս ||: Նոյնպէս և Լ. 'ի 9. յունիսի. * Յանտիոք (կատարումն) սբ̄յն պեղագիայ կուսի և վկայուհւոյ, զոր սբ̄քն ամբրոսիոս և յովհան ոսկեբերան մեծապէս գովուբ̄ պանծացուցանեն ||: Ապա կրկնութի երևի շփոթ անդ 'ի Լ. ուր ասի 'ի հոկտ. 19. * Յանտիոք՝ սբ̄ց վկայիցն բերոնիկոսի, պեղագիայ կուսի, և այլոց քառասուն և ինունց ||. զի Թէ չիցէ շփոթութի 'ի խ̄Թ վկայս ը̄ ընկերացն կալիստրատոսի, (ը̄ որս տօնելի համարիմք մեք զղուկիանոս քահանայ և զպեղագիա կոյս,) խիթալի է՝ Թէ անունս բերոնիկոս պարտի լինել բերնիկէ քոյր կարծեցեալ պեղագիայ կուսի. նոյն կասկած անկանի և 'ի վ̄ր դոմնինեայ մայր կարծեցելոյ պեղագեայ, որ 'ի Լ. ապր. 14. կոչի դոմնինա կոյս նահատակեալ հանդերձ կոյս ընկերօք: Եթէ ոսկեբերան՝ և ամբրոսիոս՝ յորոց քաղի վկայաբանութի պեղագեայ երկրորդի, չխօսէին լոկ ճառօրէն, այլ հանդերձ որոշ ժմկագրութբ̄ պատմութ̄ե, որոշ լինէր և բան վկայաբանից: Այլ ժամ է լսել զձև ներբողական բանից ս̄բ վ̄դպաց երկոցունց:

Քաղուած ներբողենի Յովհ. Ոսկեբերանի 'ի ս̄բ վկայուհին Պեղագիա, որ յանտիոք:

* Օրհնեալ է ա̄ծ. և կանայք գլխովին քամահեն ըզ-
,, մահ. և օրիորդք ծաղր առնեն զվախճանաւ. և կու-
,, սանք մատաղագոյնք և անփորձք 'ի բուն անդր 'ի
,, խայթոցս դժոխոց գրոհ տան, և ոչինչ կրեն զեան.
,, և այս ա̄մ 'ի ձեռն՝ որ 'ի կուսէ քս̄ի՝ եղեն մեզ բա-
,, րութ̄իք ... զ̄ր հովիւ՛ ոք քաջ զառիւծ ահացուցիչ
,, խաշանց՝ և ա̄մ հօտին վատնիչ, զբռամբ ածեալ, և
,, զժանիսն քանցեալ, և զճիրանս կտրեալ, և զմաղսն
,, փետեալ, արհամարհ և ծիծաղելի առնէ և մանկանցն
,, հովուաց, և աղջկանց անգամ տայ յայպանումն ...
,, վ̄ոյ և երանելին պեղագիա այսպիսեաւ 'ի վ̄ր վա-
,, ղեաց մահու հեշտեաւ. մինչև չմնալոյ դահճացն ձե-
ռաց,

„ ուշ, և ոչ յաւուրն եւանեղոյ, այլ իւրականն յօժա-
„ րութենէ գերազանցութենէ կանխէր զնոցուն գազանու-
„ թիւն. զի թէպէտև պատրաստ էր և առ ատենջանս և
„ կտտանս և առ ամ տեսակս չարչանաց, այլ խիթայր՝
„ զի մի զկուսութենէն կորուսցէ զպատակ...
„ Զի թէ էր և զկուսութենն պահել և մարտիրոսու-
„ պատակաց հանդիպել, ոչ արդեօք՝ ի բաց լքաներ ըզ-
„ մուտն՝ ի յատեան. այլ քանզի հարկ՝ ի վր կայր՝ ի
„ մէնջէն՝ ի բաց անկանիլ, յետին անմուտութենէ վարկա-
„ նէր լինել գործ, առ ձեռն պատրաստ գոլով երկա-
„ քանչիւր յաղթութենէ հանդիպել՝ ի կիսոյ պատկեալ
„ երթալ. նմին իրն ոչ կամեցաւ յատեան երթալ, և
„ ոչ տեսարան լինել չարչարանաց... այլ յառաջա-
„ տէն և՝ ի կուսատատանէն՝ ի միւս ջոքաւ առաջաստ
„ յերկինս.
„ Մեծ է արդարև զդահիճս տեսանել, զի շուրջ կան
„ և զկողան պատուհանն. բայց ոչ փոքր և այս քան զայն.
„ զի որոց արդէն բարձեալ է զգայութենէ պետութիւն
„ տանջանաց՝ ոչ և սա ահարկու մահն երևի, այլ փոփո-
„ խումն և բարձումն վերստին ցաւոցն: Խակ ասէ զնա
„ և սրեալ այնպիսի լինէ, այլ տակաւին ողջանդամ
„ ունելով զմարմին, և ոչինչ ցաւ յանձին զգացեալ,
„ մեծի ինն և առաքինի արուեստ պէտս ունէր առ՝ ի
„ բռնամահ հանել զանձն յատուկ կենացս: Մինչ զի ե-
„ թէ զարմանայ ընդ նմ ժուժկալութենն, զարմացիր ընդ
„ սորայս արիութեն. եթէ ուրանչանայ ընդ համբերութենն
„ նմ, ուրանչացիր և ընդ սորայս արուեստն ոգւոյ, զի հա-
„ մարձակեցաւ առ կատարած այնպիսի...
„ Ո՛չ հայրն՝ ի նեղջս էր, և ոչ մայրն առ նմա. ոչ
„ դայեակ. ոչ նաժիշտ, ոչ դրացի, ոչ բարեկամ, այլ
„ միայնակ էր թողեալ՝ ի մէջ դահճացն այնոցիկ, (ընդ
„ որս համարձակ խօսեցաւ)... Ո՛չ էր այս մարդկայինս
„ բնութենէ գործ, այլ առաւել ևս ծայրն ակնարկութենէ
„ ձեռնարկութեն... և ընդ այս ամ անցանել՝ ոչ օգնա-
„ կանութենէն էր և վերին տեսչութենէ. ոչ զի և զար-
„ մանալ ընդ նա արժան, և երանել: Երանել յաղագս
„ այ մարտակցութենէն, և զարմանալ յաղագս նորին յո-
„ ժարութեն.... և ոչ մի ինչ գոյաւ խոռվեցուցիչ ե-
„ րանելոյն այնմ... զի չէր՝ ի նեղջս (՝ի աւնեակն)
„ միայն, այլ՝ ունէր խորհրդակից զնա. նա մեծ էր
„ ինքեան, նա զինեալ զնա սիրոյ. նա քաջալերէր զն-
„ գին, նա միայն զերկիւղն փարատէր. և զայսոսիկ ոչ

,, վայրապար առնէր, այլ զի յառաջագոյն զանձն արժանի յարդարեաց այնմ օգնականութեան վկայուհին։
,, Արդ ելեալ շնորհս խնդրեաց 'ի զօրականաց՝ մտանել և զհանդերձն փոխել. և մտեալ զգեցաւ զանապականութիւն ը̄ ապականութեան, զանմահութիւն ը̄ մահու, զկեանս անվախճան ը̄ առժամանակէիս արկել զիւրև կենաց։ Այլ ես հանդերձ այսոքիւք՝ որ ասացան, և ը̄ այն զարմանամ. զիա՞րդ շնորհեցին նմա զայս շնորհ զօրականքն. զիա՞րդ խաբեաց զարս կինն. զիա՞րդ ոչինչ կարծիք 'ի միտս անկան նոցա վ̄ս լինելեացն, զիա՞րդ ոչ 'ի միտ առին զդաւն։ Զի և ո՛չ է ասել զայն, թէ ոչինչ այնպիսի էր գործեալ. զի բազումք թերևս և՛ դահավէժ զանձինս արարին, և 'ի ծով ընկեցին, և սուր 'ի լանջս մխեցին, և խեղդ անձանց արկին, և բազում այսպիսի տեսարանօք չի էր ժամանակն այն. այլ ա̄ծ զսիրտս ն̄ց կուրացոյց առ չիմանալոյ զդաւն։
,, Վ̄ոյ 'ի միջոյ վարմից վաղեաց, և ո̄ղ եղջերու 'ի ձեռաց որսորդաց փրծեալ... սրացաւ ո՛չ 'ի գլուխ լերին, այլ 'ի բուն իսկ երկնից գագաթն, ուր չէ՛ր իսկ հնար ն̄ց մատչել. և ապա անդուստ նայեցել 'ի ն̄ս, զի ձեռնունայն 'ի բաց գնային, խնդայր յոյժ՝ զանհաւատիցն տեսանելով զամօթապարտութիւն.... որք արդեամբք ուսան, եթէ ո՛չ առ մարդիկ, այլ առ ա̄ծ էր մարտ ն̄ց։
,, Յովսէփ յորժամ 'ի տիկնոջէ իւրմէ վանեալ լինէր, զզգեստն ըմբռնեալ 'ի պիղծ ձեռաց առ խուժադուժ կնոջն երբեմն թողեալ՝ արտաքս ելանէր մերկ. իսկ սա և ո՛չ ըմբռնել զմարմինն թողացոյց անառակ ձեռաց, այլ 'ի վեր ելեալ մերկ հոգւով, և զ̄սբ մարմինն թողեալ առ թշնամիս, 'ի կարի անհնարութիւն արկ զն̄ս..... Մինչդեռ կենդանին էր, յուսային յաղթել նմա ամենեքին ն̄ք. իսկ յորժամ վախճանեցաւ, յայնժամ յառաւել անհնարութիւն անկան. զի ուսցին, եթէ մահ վկայից՝ յաղթութիւն (է) վկայից։
,, Եւ այն ինչ հանդիպէր, զո՛ր օրինակ եթէ ալիք ոմանք զնաւն 'ի բերան նաւահանգստի գտեալ՝ բիւրապատիկ վաճառուք և պատուական մարգարտօք լի, հանդերձեալ իցեն ընկղմել զնա և սուզանել, և 'ի խուսափել անդ ն̄ր 'ի կոհակաց ջուրց՝ սատարութ̄ն այնր բռնութ̄ն արագագոյն ևս 'ի նաւահանգիստ անդր յուղարկիցի. յարևնման այսմ և երանելին պեղագիա...

,, Իսկ

„ Իսկ մարմինն նորա վայրաբեր լեալ քան զամ փայլակին
„ լուսափայլ՝ զաչս բլբեցուցանէր բանասիրութիւն . զի
„ ոչ ունէր այնպէս կայծակն յերկինից արձակեալ ահաւոր
„ գոռանալ, որպէս մարմին վկային քան զամ կայծակն ահա-
„ գին՝ դողացուցանէ զդիւցազն փախանդա .... Անկեալ
„ գներ այնուհետեւ մարմինն՝ ոչ ի մահճի, այլ ի
„ գետնի . բայց չէր անպատուիր ի գետնի եղեալն, այլ
„ ինքն գետինն էր պատուական, զի զայնչափ փառաւք
„ պերճացեալն մարմին ընկալաւ . և նովին իսկ գետ-
„ նատարածութիւնքն պատուական և՛ս էր մարմինն, զի որ
„ վերջին նախատինք՝ զառաւելուն ունէր ընձեռեն պատ-
„ ուհոյ ։ Արդ անկեալ գներ յանձուկ գետնի կուսա-
„ կանն մարմին՝ քան զամ ոսկի մանրագոյն . և հրեշ-
„ տակք բոլորեալ կային զնովաւ, և հրեշտակապետք
„ ամ պատուէին . և քո ինչքնին անդ էր ... Անկեալ
„ գներ՝ մեծագին հանդերձ պատանաց ունելով զմար-
„ տիրոսութիւն, զարդու զարդարեալ խոստովանութիւնէ,
„ քան զամ ծիրանի պատուական՝ պատուականագոյն ար-
„ կեալ զնեալ պատմուճան . և զայն կրկնակի, ըզ-
կուսութիւնն և զմարտիրոսութիւնէ ...
„ Քան զարքունական սրահս պայծառագոյն է տե-
„ ղեն դերեզմանն այն, ուր եդեալ կայցէ մարմին
„ առաքինութիւն և ածպաշտութիւն կենցեալ ։ Եւ այսմ
„ դուք ձեզէն վկայք . զի ըստ մեծատանց չիրիմն թէպետ
„ և ոսկեհանդերձս, իբրև ըստ այրս (աւազակաց) քե-
„ րեալ անցանէք . իսկ տե սրբուհիս այս բազում յո-
„ ժարութիւն ընթանայք . զի զմարտիրոսութիւն և զխոս-
„ տովանութիւն փոխան ոսկի հանդերձից
„ զանձամբ արկեալ՝ մեկնեցաւ յաստեացս վկայուհին ։

Ապա յորդորէ բերանն ոսկի զուսնկնդիրս իւր, զի ոչ
տարեկան տօնախմբութիւն կատարեն զվիշտաւակ սրբուհ-
ւոյն՝ հոչակելով զտառապինութիւն նր յամօթ հեթանո-
սաց, նոյնպէս և նմանօղ լինելոյին սրբութիւնէ նր . * զի
• այսպէս (ասէ) և զտօնիս այսմիկ զմեծագոյն տո-
• յուք ձաշակ, և զնր վկայուհին յառաւելագոյն յոր-
• դորեցուք խնամարկութիւն (զմեօք), ձշմարիտ պատ-
• ուով պատուելով զնա ։

Այսոքիկ յառաջին ընարձակագոյն ձառն ոսկեբերանին, որ կայ տպագրեալ յունարէն և լատիներէն . կայ նր և ձառ երկրորդ համառօտ ի նոյն վկայուհին, որ լատինեերէն միայն գտանի ի գործս նր . հպ . ա . էջէ . 591 . ոչ և առ ուրիսոն, նոյնպիսի պանծալի բանիւք յորդ-

նեալ։ Ցնոյր զի և ի սկիզբն այլոյ ճառի զոր զինի այ-
սոցիկ խոստեցաւ ոսկեբերանն ի դէն իսկատրոս ծնագ-
դեաց, այսպէս ասէ. * Ընդէ՞ր հոգայն... սակս յա-
,, ճախառէն հեռ զհետ զվայելուչն առաջի գնել մեզ սե-
,, զանս։ Կանխաւ զմեզ օրհնութ մատուց և անփորձ ի
,, հարատևեաց՝ երանելի վայրկենին պերազիա՝ բազում
,, ցնծութ խնդրից խրախացոյց. այսօր գործեալ զնո-
,, բուն ծոն երանելիս այս և առաքինի վկայն իգնա-
,, տիս փոխանակեաց. անձինք զանազան, այլ սերան
,, մի. պէսպէս մրցմանք, այլ մի պսակ. այլեայլ ճգմանք
,, այլ նոյն բրաբեան ||։ ևն։

Բանք սբ՝ն Ամբրոսիոսի յաղագս նորին պերազիայ կոյսի անպիտոյոյ։

Ասա՝ ի Թուղթն կիմ՝ի գիրսն առ սիմպլիկիանոս յա-
ղագս ճշմարիտ ազատութեանն և ծառայութեան համառօտիւ
գրի այսպէս. * Զի՞նչ պանծագոյն քան զսբ՝ոյս հին
պերազիա. որ չուրջ պատեալ՝ի հալածչաց, այլ մինչ-
չև երևեալ աչաց նոցա, ասէր. Կամակալ մեւանիմ.
մի ոք հայեսցի յիս ձեռամբ, մի ոք յայրատ տկամբ
անկիստանայցէ՝ի կոյսս. ըստ իս տարայց զամենեսեան
ծուղթի, ըստ իս զանախտիցն պարկեշտութեան. ատարա-
ուսք ոչինչ զբռամբ ածցեն չահ զնբրեանց ապարա-
սանութեան։ Զքո՞ն դէտ երթիցէ պերազիա. մի ոք
՝ի բաց տանիցէ զազատութիս. մի ոք՝ի գերութի
վարեալ տեսանիցէ զհաւատս սգաս, և զանանա-
նար հաւատոյն, և զազգատոհմ իմատութեան։
Որ ինչ միանգամ ծառայականն է, ասա կացցէ հնատ-
ցէ՝ յոչինչ պետս պետանացոս։ Մեծ է սպաքէն ա-
զատութի մաքուր կուսութի, զոր ցանգ արկեալ՝ի
հալածչացն գնդից, ի մէջ ահագին վտանգաց մա-
,, բձութի և կենաց՝ ոչ իբիք կորացաւ ||։
Երկրորդ՝ի ձ գիրս յաղագս կուսանաց, խնդիր առան-
ձին՝ի մէջ առնու այսպիսի։ * Խակ զի՞նչ յաղագս նո-
ցին արդեանց արժան իցէ կարծել, որք՝ի բարձանց
զանձինս գահավիժ սրարձն, կամ գեռավիժ եղեն,
զի մի՝ի ձեռս անկանիցին հալածչաց. ուր ծծմբինն
գիրք արգելուն քրիստոնէի անձնասէ լինել։ եթ
՝ի լուծումն առաջարկութեան խոսել սկսանի օրինակ
զայս * Ա՜յլ արդ յաղագս կուսանաց՝ի հարկ պահե-
,, ալ

թե արիւրոյ՝ դանընդդիմանն ունելոյ առատագուրծել ,
ուր մարդիրսատելեն ի միջի կայ օրինակ ։

Սրբուհի ումն պեպագիա էր երբեմն յանախոյ՝ ամաց
իբրև հնդետասանից , քոյր կուսանաց , և ինքն դևռո-
վին կոյս ։ Սա յառաջին կարգի հալածանաց ի սան
փակեալ , իբրև տեսանէր զանձն շուրջ պաշարեալ
ի կապաղոյց հատաղոյ կիմ համեստութեն , ի քաջա-
կանութեն մօրն և քերցն Թափուր ձեռագործ յօդնեակս
նուէ , այլ ոչ ևս լինելիր , ասէր ։ զի գործիցեմք , եթէ
ոչ աշաշերքն հայեացիս գերի կուտութեի ։ Ահա ուխտ
(կիմ փափաք) , և ահա երկիւղ՝ մահու ։ զի ոչ յայլմէ
է ջնուեալ զմահ , այլ անձամբ անձին տանեալ ։ Հապա
մեռցուք , Թէպետև գժպատեհ հանաքեացն ։ մեռ-
ցուք ։ ոչ գժոհարի ևս ըլ դէզ , և հաւասաք ի բաց
տանին զապիրատութեի ։ Ապաքէն եթէ և զղջորութ
ձայնին քննեացուք , զի՞նչ իցէ բռնութեի կամեալ ։
այն իսկ է մեծ և՛ս բռնութեիւն , կամիլ մեռանել և
ոչ կարել ։ Եւ ոչ՛ի գժոհարութեին զանգիտեմք ։ զի
ո՞ է , որ կամիցի մեռանել , և ոչ կարիցէ ։ ուր բա-
զումք են գիւրասաց ճանապարհք ի մահ անդր ։
Հապա գահավիժ լինելով՝ զքաւթիս տապալեցից
պղծութեի , և արեամբ ընկոցից զկրակարանս բորբո-
քելս ։ Ո՛չ զանգիտեմ , մի արդեօք ազ պակասեալ՝
չիատարէ զՀարուճածն , կամ լանջք խուսափեացեն ի
ցաւոց ։ չծողից մարմնոյ տեղի ինչ մեծից , և ոչ հո-
գացից՝ զի մի սուր պատեացի ։ (ըր՝ի պահել զնս
կենդանի՝ կապտելոյ վեր զմարգարիսս կուտութեի ։)
Կարօղ եմք մեռանել մերոյս զնեու ։ կարօղ եմք մե-
ռանել առանց երթատապարտ լինելոյ գահոյի ։ Ի
ծոյ մօրն զգլուխն ասեն յօրինեաց զարգուս , և զնալ
առանց զգեցուս հանդերձ ։ ոյր այն Թէ ոչ առ մահ
դիմեալ երթայցէ , այլ առ փետայն ։

Աբգ՝ իբրև տեսին զիզ հալածիչքն կապտեալ ի
ձեռաց իւրեանց զկողպուսան պարկեշտութեի , մօրն
և քերցն սկսան ի խնգիր լեալել ։ Այլ նշ վաղա-
գոյն կալեալ էր հոգևոր սլացմամբ զատպարէզն ոգ ,
չախտնուեի ։ քանզի յանկարծակի պատեալ պատա-
րեալ՝ ասաի՛ի վերահաս հալածչաց , և անտի ի յոր-
գահատաց գեալ , փակեցան ի փախաուեին՝ պարա-
ւանդեալք ի պատի ։ և սաեն ։ Ոյ՞ հեղգամբ ։ ա-
հաւասիկ ջուր , ո՞ արգելուս զնիզ ի մկրտելոյ ։ այս
մկրտուեի է , որով մեզաց լինի Թողուեի , և արքայ-

ութ

, ուԹե ժառանգուԹի. այս մկրտուԹի է, յետ որոյ
, ոչ ոք յանցանէ: Առցէ զմեզ Ջուր, որ բնաւորեցաւ
, վերսաին ծնանել զմարդիկ. առցէ զմեզ Ջուրն, որ
, կոյս յարդարէ. առցէ զմեզ Ջուրն, որ զերկինս բա-
, նայ, զհարս ծածկէ, զմահն պահարկէ, մարսիրոաս
, կացուցանէ: Ջ՚քեզ հաստիչ էիցս ես՝ աղաչեմք, զի
, մի և զանշնչացեալ մարմինս անհոգիս ցրեացեն տլինք.
, մի մահն զատանիցէ զմեռեալս, զորոց զկեանս ոչ զա-
, տոյց սերն. այլ եղիցի մի միաբանուԹիւն անչարժ. մի
, մահ, և մի Թաղումն նմանասիցես:

, Ջայս ասացեալ, և առ փոքր մի զկայ առեալ, լան-
, ջինք պատեղովք ՚ի ծածկոյԹ պարկեշտուԹեանն, և յա-
, նարդել ձեմն՝ ձեռն ՚ի ձեռն տալով ոտք պարտաւորք՝
, յառաջեն ՚ի գեաւամէջն. անդր ուղղեալ զգնացս՝ ուր
, ուղիք էին յորդոցն, և խոյք զառ ՚ի վայր: Ոչ ոք
, ՚ի նոցանէ զոտս նհանջեաց, ոչ ոք ղընԹացս կատե-
, ցոյց, ոչ ոք զննեաց զկուռճան ոտից. ըստ հանդիսուն
, ցաւոյքի նեղեալք, ըստ հուն դժկամակք, ընդ խոյս
, խրախք: Եւ էր տեսանել զբարեպաշտ մայրն, զի զըս-
, պէր զձեռան յօդիւք, խնդայր ըստ դրաւականն, խի-
, Թայր ըստ պատահուն, մի գուցէ կորզեսցեն յորձանք
, ՚ի ձեռաց իւրոց զդաստրս իւր: Ջայսոսիկ քեզ, ա-
, սէր, քո՛ զոհս պատարագեմ, զնախատհոն ողջախոհ-
, հուԹե. զառաջնորդս ձանապարհի, և զընԹացակիցս
, նահատակուԹե:

, Բայց ո՞ք ըստ արժանւոյն զարմացի ըստ անչափ հաս-
, տատուԹիւն սոցա ՚ի կենդանուԹե, ուր և մահացեալք
, անչարժ պահեցին զդիրս մարմնոց: Ո՛չ ջուրք զդիա-
, կունս մերկացին, և ոչ սրընԹացուԹիւն գետոյն խա-
, զացոյց զնս. այլ առաւել մայրն ոք՝ Թէպեաւ ՚ի ըզ-
, դայուէ զսկեալ զԹասիրուԹե, քայց տակաւին պինդ
, ունէր զողջագուրծսն, և զբարեկրօն յօդուածսն՝ զոր
, զպատեալն էր՝ և ոչ մահուամբ Թուլացուցանէր. ոտք
, զի որ զսպարտս կրօնին էր վճարեալ, ժառանգ Թող-
, լով զբարեպաշտուԹին վախճանեցաւ (կամ վարձատրե-
, ցի): զի զորս ՚ի մարտիրոսուԹե էր զօդեալ, մինչև
,, ՚ի չերիմ անմեկնելն պահէր ||:

Արդարև պանծալի են բանք ոք վիպացս երկոցունց՝ մի քան զմի, ոչ միայն յարդարացուցանել, այլև կատարեալ գովուԹիք վկայական մահուան պատկել զպեղպա-գիա և զնմանօրս նոր. այլ գործ է ողջամիտ ընԹերցա-նելեաց ողջմտուԹիք իմանալ զմիտս բանիցս. ապա Թէ

ոչ՝

ոչ՝ ծայրայեղ խոտորումն լինի, եթէ ոք կարծիցէ՝ թէ առվնմբք զատոյիկեանցն սերմանեն վնդպուԹի, առ որս դիւցազնական համարեաւ էր անճնասպանուԹին. ոչ է տեսանել յանխոտոր վնդպուԹե իմաստանոյն սենեքայի։ Վայ արժան է լսել և զզօքաւոր ասացուճածս մեծին օ֊ գոստինոսի՝ ի լուծումն գժուճալոպատուհմ խնդրոյս։

Բանք սէյն Օգոստինոսի վգուշացուցիչ յօրինաւոր կարծելոյ պանչնասպանուԹէ՝ ի պոպճառս կուսուԹէ։

* Վասն քան զամ պարտ է դնել և հաստատել (ասէ ,, ի ՚ա գէբս. յղ. Տաղաէին ՚այ. գլ. 16), Թէ առաքինուԹ ,, Թին՝ որով լինի ուղիղ կեաղ, յաԹուղոյ անուն հոգւոյն ,, լշխան հրամանատար է անդամոց մարմնոյն. և մար֊ ,, մինն՝ ոչ լինի գործածուԹէ ոչ կամաց. և ՚ի կաղ ,, մնալ կամաց անդրդոճելի և հաստատուն, զի՚նչ և ,, գործեսցէ այլ ոք ըստ մարմինն կամ՚ի մարմնի, յորմէ ,, չկարէցէ խոյշիլ՝ առանց իւր մեղաց, կրօնն աղատ է ,, ՚ի յանցանաց... Եւ մի կարծեսցի եղեալ նաև հան֊ ,, դերձ կամաւք հոգւոյն՝ այն ինչ, որ գուցէ չկարաց լի֊ ,, նել առանց հեշտուԹէ լսիք մարմնոյն։

,, Եւ սակայն (ասէ ՚է գլ. 17. անըՀկլատես) հանդերձ ,, այսու ամենայնիւ, որ այն իցէ գուԹ մարդկային՝ որ ոչն ,, կամիցի ներօղ լինել կանանց, որք անձամբ զանձինս ,, սպանին, զի մի կրեսցեն ինչ յայնպիսեաց անուն։ Եւ ,, (ըստ հակառակն) եԹէ կանայք ոմանք ոչ կամեցան ,, անճնասպան լինել, զի մի լինիցի աւելորատուԹիւն ան֊ ,, ճին խորհրդոյ յօտարին ոճրագործուԹէ, որ ոք զայդ ՚ի ,, յանցանս գրեսցէ նոցա, ինքն ոչ է ազատ ՚ի յանցանաց ,, անմատուԹէ։ Զի եԹէ չէ օրէն առանձնական իշխա֊ ,, նուԹիւք սպանանել զմարդ կամ ինսաել... սպաքէն ,, և որ զանձն իւր սպանանէ՝ մարդասպան է. և այն ,, չափ առաւել ինսասպարտ գտանի ՚ի սպանանել անդ ,, զինքն, որչափ առաւել անմեղ էցէ ինքն յոյնմ մա֊ ,, ին՝ որ վնս կամի զինքն սպանանել.... Եւ առ՚ի֊ ,, մէ՞ անձն՝ որ ոչն արտար ինչ չար, ինքն ինքեան չար ,, առնէցէ, և անճնասպան լինելով՝ սպանօղ լիցի ան֊ ,, մեղին, ոտ զի մի կրեսցէ ինչ ՚ի մեղաւորէն. և յան֊ ,, ճին իւրում գործեսցէ զանճնական մեղս, ոտ զի մի ,, գործեսցի ՚ի նմա մեղք օտարին.....

,, Ի բաց կացցէ մոլորուն այդպիսի (ասէ ՚է գլ. 18), ,, և

„ և աստուած առաւել խրատ առցուք, թէ ոչ կորնչի
„ արբունի մարմնոյ ի. կալ մնալ արբունեն հոգւոյն,
„ և և խանգարմամբ մարմնոյն (եթէ յարտաքին պա-
„ տահարաց, զորոց խօսի կանխաւ). ոչ կորնչի մար
„ մնոյն արբունի յատկականիլ հոգւոյն արբունեն, թէև
„ մարմին անշնչեալ մնայցէ : Սմին իրի չէ և չէ արժան
„ կնոջ պատժել զանձն կամաւոր մահուամբ, յորժամ
„ քուսն լինիցի նմա առանց իրիք հատանուելոյ իւրոյ,
„ և խանգարեացի օտարին մէջք, որչափ և առաւել
„ յուսալ քան զերատգործուելն : Մի լինիր գործել զմար-
„ դասպանութիւն սույգ, ուր ասկաւին քուսն չարուելն՝
„ և այն օտարին, ի կախ կայ և անատույգ || :

Ապա բազմօք ցուցանէ ի գլ. 20. թէ չիք բնաւին իրա-
ւացի պատճառ անձնասպան լինելոյ քրիստոնէի. և ի
գլ. 22. թէ մոլորեցան հեթանոսք՝ որք միանգամ զանձ
նասպանութիւնն մեծանձնութիւն առդնէին. զի է ասէ
առաւել նշան փոքրոգութե, վատասրտութիւնէ, և չկամե-
լոյ ամօթ կրել առ մարդիկ ևս պէսպէս պատճառանաց :
Եւ ի վեր բերէ. * Իակ արդ ասիցես, բազումք չոքան
„ զիւրովն, զի մի ի ձեռս անկցին թշնամեաց : (Պետ.).
„ Ձէ աստանօր խնդիր մեր, եթէ եղեամբ կոչ արդեօք
„ այդպիսի լինչ. այլ թէ արդեօք արժան կոչ լինել :
„ Ապաքէն ողջամիտ քանն նախատատուչ ունի լինել և
„ քան զօրինակ. և քանին ձայնակից լինին և օրինակք,
„ այլ այնպիսիք, որք այնչափ առաւել արժանի են
„ հետևելոյ, որչափ առաւել գերազանց են բարեպաշ-
„ տուելքն : Ո՛չ նահատեաք, ոչ մարգարէք, և ոչ առա-
„ քեալք գործեցին զայդ (անձնասպանութի). Քզի
„ և ինքն իսկ քո, յորժամ ազդ արար նոց՝ զի ի կրել
„ անդ զհալածանս փախչեցեն քաղաքէ ի քաղաք, կարօղ
„ էր իրատ տալ նոցա զիւրովն երթալ՝ զի մի ի ձեռս
„ անկցին հալածչաց : Բայց արդ՝ եթէ նա զայս ոչ
„ պատուիրեաց և ոչ ուսոյց, զի իւրքն զայնօրինակ փո-
„ խեացին յատակ կենաց, որոց խոստացաւ պատրաստել
„ ի փոխանն նոցա օթևանս յաւիտենականս, զոր և է
„ օրինակս ի դէմս մեզ ածեն հեթանոսք՝ որ ոչն ձա-
„ նաչեն զնա, յայտնի է՝ թէ այս չէ օրէն որոց պաշ-
„ տեն զմի ած ճշմարիտ || :

Եւ ի գլ. 25. ուր քաջ ցուցանէ, թէ ոչ լինի մեղք
խորհիլ ի մեզս, ի վեր բերէ. * Ո՞ր այնպես անմոռաց
„ նայեցէ, մինչև առել. այժմըն մեղիցուք, զի մի դուցէ
„ յետոյ մեղանչեցեմք. այժմըն իսկ գործեացուք զմար-
„ դա-

,, դասպանուելոյն, զի մի գուցէ յետոյ ՚ի հնուելն անկա-
,, նիցեմք ... Զայսոսիկ առաջի յայտ պատ այնոցիկ յա-
,, րանց կի՛ն կանանց, որք առ ՚ի փախչել ՚ի պատճա-
,, ռէ մեղայ՝ ոչ օտարին, այլ՝ անձանց, զի մի արդեօք
,, ը օտարին ցանկութիւն առցեն և ինքեանք հուսանուե
,, անձնականին գրգռեցեալ, օրէն համարին մահ քե-
,, րել անձանց իւրեանց ։ Ա՛յլ հեռի լինի ՚ի մտաց
,, քրիստոնէի՝ որ ապաւինի յԱծ իւր, և՛ ի նմա հաստա-
,, տեալ զյոյս իւր՝ ՚ի նոր օգնականութիւնն լինի ապա-
,, տան, խորհուրդ այդպիսի. քաւ և մի լինի ասել, թէ
,, այսպիսի միտք տեղի տայցէ երբէք հաւանութե անար-
,, ժան ցանկութեց մարմնոյ ։

Իսկ ՚ի գլ. 26. ՚ի բուն նպատակ խնդրոյս մատչի, գրե-
լով այսպէս. * Ա՛յլ ասեն, թէ կանայք ոմանք սէք ՚ի
,, ժամանակի հալածանաց՝ առ ՚ի փախչելոյ ՚ի ձեռաց
,, Թշնամեաց պարկեշտութե իւրեանց՝ գետավէժ արա-
,, րին զանձինս ՚ի ջուր յափշտակիչ և հեղձուցիչ. և այ-
,, նու օրինակաւ վախճան ընկալան. և ՚ի կաթուլիկէ
,, եկեղեցւոջ մեծահանդէս յարգուք խուռն ընթանան
,, ՚ի վկայարանս նոցա (կի՛ մարտիրոսութիւնք նց տօնա-
,, խմբին) ։ Զայսպիսս ոչինչ իշխեմ յանդուգն առ-
,, նել դատաստան ։ Զի ոչ դիտեմ, թէ արդեօք ածային
,, հեղինակութին հաւատարմացուցեալ էցէ եկեղեցւոյ
,, ՚ի ձեռն իրիք իրիք արժանահաւատ վկայութեց, զի
,, պատուհասցէ զխիշատակ նց այսու օրինակաւ. և կարէ
,, լինել՝ թէ այդպէս էցէ ։ Վա՛ զի զի՞նչ ընդեմ է, թէ
,, զայդ գործեցին, ոչ մարդիօրէն խաբեալք, այլ յԱծ-
,, ուստ հրամայեալք. ոչ սխալեալք, այլ հնազանդեալք.
,, զի՛ր օրինակ զաստիճան չէ՛ օրէն մեզ այլազգ լինչ
,, կարծել ։ Ա՛րդ ուր Ած հրամայէ, և յուշ առնէ ա-
,, ռանց իրիք մ՚թութե՝ թէ ինքն հրամայէ, ո՛ ՚ի յան-
,, ցանս պրեպցէ զհնազանդութի. ո՛ մեղադիր լինիցի
,, պաշտաման հպատակութե ։ Ա՛յլ ոչ վեկ ազատ ՚ի
,, յանցաւորութէ գտանի, եթէ ոք կամիցի զոհել Ած
,, զարդին, վա՛ զի աբրահամ դովելի գտաւ՝ երբ զայդ
,, արար ։ Քանզի և զօրականն՝ յորժամ առ հնազանդ
,, լինելոյ իշխանութե, և որով կարգեալ կայ օրինօք,
,, սպանանէ զմարդ, ոչ իբիք օրինօք քաղաքի իւրոյ մար-
,, դասպան գրի. այլ նա՝ եթէ չառնիցէ, յանցաւոր
,, գտանի ոչ առաստամբ և անարգու ՚ութե. զոր եթէ
,, ինքնակամ և առանց հրամանի առնէր, պարտաւոր
,, լինէր հեղման արեան մարդոյ ։ Ապա ուրեմն որով
,, իրիք

„ իբրև պատուհասի, եթէ առանց հրամանի գործիցէ,
„ նովիմբ պատուհասեացի՝ եթէ չառնիցէ ըստ հրամանին։
„ Եւ եթէ այդ այդպէս է՝ ՚ի հրամայել ինքնակալն,
„ սկզբան ևս առաւել ՚ի հրամայել անդ արտրչին։ Ասյա
„ ուրեմն որ լսէն՝ թէ չէ օրէն սպանանել զանձն, թող
„ արասցէ զայդ, եթէ նա հրամայեաց՝ զորոյ հրամա-
„ նաւն սպառնալ առնել չէ օրէն։ Միայն թէ տեսցէ,
„ արդեօք ածային հրամանն ոչինչ բերէ յինքեան նշա-
„ նակ անաստուածութեան։
„ Մեք ՚ի լուր ականջաց գաշնաւորիմք ըստ մատցն խոշխի
„ (կամ իմանամք զայլոյ միոյս)։ զգալանեացն զգատաս-
„ տան ոչ ձգեմք յանձինս մեր։ ոչ ոք գիտէ՝ զինչ գոր-
„ ծի ՚ի մարդն, եթէ ոչ հոգին մարդոյ՝ որ ՚ի նմա է։
„ Ջայս ասեմք, զայս հաստատեմք, զայս հաւատարմա-
„ ցուցանեմք ամ իրօք, թէ չէ պարտ ումեք կամակար
„ մահ բերել անձին։ զի մի իբրու փախչելով ՚ի ժամա-
„ նակեան դժպատեհութենէ՝ ՚ի մշանջենաւորս անդր ան-
„ կանիցի։ Չէ պարտ ումեք և վճռ օտարին մերոց։ զի
„ մի սովիմբ լինիցի ինքեան ծանուցնել մեղանչել, ուր
„ ոչ պղծէր ինա մեղք օտարին։ Չէ պարտ ումեք և
„ վճռ իւրոցն մեղաց անցեալոց, զոր վճռ առաւել պիտոյ
„ է կեանքս այս, ոյր զի մարթասցի ապաշխարութիւնք
„ բժշկիլ։ Չէ պարտ ումեք և իբրու առ ուենչանաց
„ լաւագոյն կենաց, որում՝ ակն ունիմք զկնի մահուան։
„ վճռ զի լաւագոյնն այն կեանք զկնի մահուան՝ չընդունի
„ զպարտաւորս մահու անձանց իւրեանց։

Թէ զոր երկրորդէ սբ վիգին ՚ի յայլորդ։ գլ։ 27։ թէ չէ օրէն մահ բերել անձին վճռ խորհելոյ ՚ի կարեկիս մե-
ղաց։ ապաթէ ոչ՝ ասէ, մարքրեաքն վկրատուք կամ ապաշ-
խարութեամբ չիմ մեղաց՝ իրաւունս ուենչն սպանանել
զանձն, զի մի անկցի ՚ի նոր մեղս, ոյր գիտէ կամ կաց-
կածի, թէ մարդկօրէն ունի անկանիլ բազում անգամ։
* Ընդ քանզի անպատեհ է զայդ առել, անպատեհ է ա-
„ մենևին անձնասպանն լինել։ Զի թէ առնել զայդ
„ կամակար մտօք՝ լինէր իբրև արդարացի, անշուշտ էր
„ նէր այլ պատճառ արդարացի քան զայդ։ խակ արդ
„ և ոչ ոա է իրաւացի, ապա չիք և ոչ մի պատճառ
„ իրաւացի։

(3) Վճռ երկրորդին պեղապեայ գրի ՚ի Հ։ թէ նուռնոա եպս գրեաց զվարս նր։ իմա, ոչ անձամբ, այլ ՚ի ձեռն աշակերտին իւրոյ յակովբայ։ Լ։ դեկտ։ 11։ լինի յիշատակ և աբյն նուռնոսի, որ եղև գարճուցիչ պեղապեայ։

ՎԻՍՏ-

Վ. ԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Ղ ունկիանոսի կամ Ղ ոնգինոսի հաբիւրապետին. ընդ նմին և Ղ ոնկինոսի զինաւորին։

Հ. Յ. հոկտ. 16։ Լ. մարտ. 15։ Ճառընտ. Ա. շկ̄գ = շկ̄է. և Բ. շլ̄ը = շխ̄գ։ Բոլլանդեանք՝ հենուտեն. և բաբեպր. 'ի ԲԻ հատ. մարտի. էջ. 376 = 390. և 736 = 740։ Իսիւտիոս երեց եէ̄մացի. յորմէ և մետափր. և այլք։

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՒ ՂՈՆԿԻՆՈՍ է մի և նոյն անուն. որ 'ի յունաց կոչի լօնդի՛նոս, և 'ի հռովմայեցւոց լօնճի՛նուս. զոր և ը̄ն հելլենականին մա՛րթ է ստուգաբանել տիգաւոր. բայց չէ՛ յայտ, թէ այսու միով անու՛ամբ մի՞ ոք միայն իցէ հաւատացեալ յաւուր անդ խաչելութե՛ն քն̄ի, եթէ երկու. կմ որ նոյն է, արդեօք ա՞յլ իցէ հարիւրապետն, որ ասաց, արդա՛րև ա̄յ որդի էր սա, և ա՞յլ զինու՛որն՝ որ խոցեաց զկողս քն̄ի, և հաւատաց 'ի տեսանելն զկրկնավտակ աղբերս, եթէ մի և նոյն անձն։ (1)

Պատճառ տարակուսանացս է նախ, զի ուր յայսմաւուրք հայոց և յունաց առանց յիշելոյ

ԼՍՈՂ ՁԵՂՆԵՀՈՐՆ՝ ԱՒՐԵՒՆ ՂԱԶԱՆԿԻԱՆՈՍ ԿԻՍ ՂՈՒՆ
ԿՆՈՍ ՀԱՐԻՒԲԱՊԵՏ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԵՒ ՎԿԱՅ-
ԵԱԼ ՎԵՔՔԻ , ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ ԱՌԱՆՑ ԱՒՐԵՒՆ
ՁՀԱՐԻՒԲԱՊԵՏՆ՝ ԱՒՐԵՒՆ ՂԱԶԱՆԿԻՆՈՍ ԶԵՒՆԱՒՈՐ,
ՈՐ ԽՈՑԵԱՑ ԶԿՈՂՍ ՔԵԶ , ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԼ ՄԱՐ-
ՄԻՐՈՍԱՑԱՒ ։ ԲԱՅՑ ՈՅՆ ԱՌԱՋԻՆՆ , ՆՈՅՆԱԿՍ
ԵՒ ԵՐԿՐՈՐԴՆ ԱՍԻ ՆԱՀԱՏԱԿԵԱԼ Ի ԿԱՊԱ-
ԴՈՎԿԱՍ ։ ԱՒՐԿՈՐԴ , ԶԻ ՈՐ ՏՈՒԱՑՈՒՅՔ ՄԵՐ
ՅԱՅՏՈՒԱԿՍ ԶԱՌԱՋԻՆՆ ՆՇԱՆԱԿԵՆ ԱՅՍՊԵՍ ,
* Ո ՂՆԿԱՆՈՍ ՀԱՐԻՒԲԱՊԵՏԻՆ , ՈՐ ՀԱ-
ՒԱՏԱՑ Ի ԽԱՉԵԼՈՒԹԵՆ ՔԵԶ ։ ՁԱՌՆՏԻՐՔ
ՄԵՐ ԶԸ ԽՈՐԱԳՐՈՎՆ՝ * Ա ՀԱՅԱՔԱՆՈՒԹԻՆ ՅԱՐՑ
ՂՆԿԱՆՈՍ ՀԱՐԻՒԲԱՊԵՏԻ ԵՒ ՎԿԱՅԻ ։ , ՊԱՏ-
ՄԵՆ՝ ԹԷ ՆԱ ԻՆՔՆ ԽՈՑԵԱՑ ԶԿՈՂՍ ՅՈՒ , ԵՒ
ՄԵՒԵԱԼ ՁՆՉԱՆԱՆ ԵԱՒ՝ ՀԱՒԱՏԱՑ ։ ԵՒ ԱՅՆՊԷՍ
ՍԿ ՊԱՏՄԵԼ ՍՏԱՒՈՒՂ ԴՆԵՑ , ՈՐ ԵԱՒԻՀ ՏԱՐԵՑԸ
ԷՆ Ի ՎԿԱՅԱՔԱՆՈՒԹԻՆ ՀԱՐԻՒԲԱՊԵՏԻՆ , ԶՈՐ
ԳՐԵԼ ՄԵԾԱՆՈՒՆՆ ԽԱՒՔԻՈՍ ԵՐԵՑ ԵՆԴՍՑԻ Ի
ՀՐՈՎԿԱՄ ԵՒ Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՍ , ԵՒ ՄԱՃԱՑԱՆ
ԸՆ ԱՅՆՄ՝ ՁՈՐ ԱՂՔ ԳՐԵՆ ՂՂԻՆԱՒՈՐԻՆ ։

ԱՒ ԶԻ ԱՅՍՔԻԿ ԱՅՍՊԵՍ , ՀԱՐԿ ՀԱՒԱՐԵՑԱՔ
ԽԵՐԿՈՒՍ ՏՐՈՀԵԼ ՁՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՒ ՂՂՆԿԻՆՈՍ
(ԿԻՐՈՐ ՆՈՅՆ Է , ԵՐԿՈՒՍ ՂՆՆԱԿՈՍՍ ԴՆԵԼ ԸՆ
ԲՈՂՈՔԱԴԵՒՆՑ) , ՀԱՐԻՒԲԱՊԵՏ ԱՅԼ , ԵՒ ԶԻ-
ՆԱՒՈՐ ԱՅԼ , ԵՒ ԶԵՐԿՈՑՈՒՆՑ ՁՎԱՐՍ ՈՒՐՈՅՆ ՈՒ-
ՐՈՅՆ ԱՒԱՆԴԵԼ Ի ԿԱՐԳԻՍ ։ ԵՒ ԸՆ ՆՄԻՆ ՄԵՏԱ-
ՏԵԼ ՁԱՒԱՆԴԱ ԱՅԼՈՑ՝ ՈՐՔ ԵՐԵՒԻՆ ՆՈՅՆԱՑՈՒ-
ՑԱՆԵԼ ։

Պատմութիւն սէյն Ղոնկինոսի առաջնոյ, այսինքն Ղունկիանոսի հարիւրապետին, Բանիւ՛ իսիւֆիոսի Ճառօրէն։ (2)

Բազումեն վկայիցն շարագրութիք. քան-
զի զոր օրինակ պատկերահանացն նը-
կարք զտեսիլս իմն նմանաձևեալ քաղաքաց,
և զմեծութիւն աշտարակաց, և զկերպարանս
արանց և կանանց, է՛ զի մանկահասակս և է՛
զի ծերունիս, է՛ զի արքայականս և է՛ զի սոս-
կականս, է՛ զի տխրադէմս և է՛ զի զուարթ-
թածաղիկս ցուցանեն. ըն նմին օրինակի և
վկայական մրցանացն պատմօղք բանից՝ զա-
րութի՝ ոգւոյ և զտարազ առնացի և զ'ի դժն-
դակս տևողութի՝ աներկիւղ և անվեհեր և
անկքելի, և զառ'ի քն՝է մարտակցութի՝ առ
նն՝ իջեալ, է՛ զի զբազմութի՝ն նշանաց, և է՛
զի զյայտապատում հարստութի՝ շնորհացն
'ի բանս, լսելեացն առնեն յանդիման։
Եւ արդ զզունկիանոսի (կմ ըստ յոյն բնա-
գրի՝ զոնկինոսի) զճառ իմաստնոյն և առա-
քինւոյն զանհամեմատ վկայութե՝ն՝ որ վ՝ն
քն՝ի, յորմէ հետէ սկսաւ խոստովանել զնա,
զիա՞րդ ըն արժանւոյն պատմեցից։ Օ՝ի յոր-
ժամ երկիւղիւ՛ պաշարեալ՝ ուրացեալ լինէր
զնա ողջոյն իսկ դաս առաքելոցն (3), և կաղք՝
զորս յոտին կացոյց, կոյրք՝ զորս լուսաւո-
րեաց, և բորոտք հանդերձ նոքօք, զորս 'ի
պիսակոտ մորթոյ և 'ի մարմնոյն անմաքրու-
թե՝ց ազատեաց, և այլք՝ զորոց զաղէտս դա-

դարեցոյց, և զցաւս փարատեցոյց, և առ լաւագոյն դիտութիւն յարդարեաց, սք ամենեքին նախ քան զտեսարան խաչին ահաբեկեալք՝ ձմեռնային նաւակոծութեան ներքոյ անկանէին։ Այլ խոստովանութիւն պատուական և ա̅ծապաշտ հարիւրապետին ղունկիանոսի զօրանայր 'ի լսելիս սնոտի և խաբեբայ ժողովարանին հրէից. զի ասէր, արդարև ա̅յ որդի է սա։ Պ՝ո զի ո՛չ 'ի պիղատոսէ ակնածեաց 'ի կաշառեցելոյն հակառակ ք՝ոի (4), և ո՛չ զահ այնպիսի խաժամուժին գրեաց ինչ կմ զանդիտեաց 'ի բազմութեան անհուն բիւրուց ն՝ց։

Եւ արդ ժա՛մ է, զի գրեսցի գեղեցիկ նահատակութիւն ն՝ր. զոր որք միանգամ 'ի սկզբանէն ականատեսք էին՝ ճառեցին, և ազգին՝ որ զկնի՝ աւանդեցին, և անտի յորս զկնի. և այսպէս մինչև առ մեզ հասեալ ղունկիանոսի վկայութեան բանք, որ՝պս մարդարիտք ոմանք անարատք՝ ն՝բ հարսնարանին ք՝ոի զարդարիչք՝ պահեցան։

Արդ յորժամ ղզօրականսն, զորս խնդրէին, ետ պիղատոս՝ 'ի պահպանութիւն գերեզմանի միածնի որդւոյն ա̅յ, ղունկիանոս իշխան էր ն՝ց. զի ինքն իսկ էր՝ որ և զխաչն ք՝ոի պահեաց զօրականօքն, որ ը̅ իւրև։ Այլ 'ի լինել յարութեան ք՝ոի, զորօրինակ մեզ ա̅ծային աւետարանացն գիրք աւանդեցին, իբրև պատմեցին զօրականքն իշխանաց և ծերոց հրէական ժողովոյն ղեղեալ սքանչելիսն, ակնածեալ ն՝ց 'ի ժողովրդենէ, և խորհեալ

զինջուցանել զաքանչելիսն, արծաթ յոյժ եւ
տուն զօրականաց՝ զոսպարտել զյարուն քոյ.
այսպէս և զսիրելսոս հաւանեցուցին ընչիւք
բազմօք ընդունել զայն զոսպարտութիւն ։ Ասայ
զունկիանոս նախամեծար առնէ զբանն Ճըշ-
մարտութենէ. ոչ էաւր զոսկին՝ որ հաւատակ
քոյ, և ոչ զմանանայն նախատապատուել քան
զնոճ հանդուրժելոր. ոչ աւելացուսէ ծա-
ռայեալ՝ ի խորս նոր մահաբերս զանձն ար-
կանել, և ոչ զգրոսպարտուսէ ոսուն ընդմ քոյ
յանձն առնոյր, որ զաղաւ կանդնեաց, և
զմահ եսպան, և զմեռեալքս կենդանացոյց ։
Ա.ս այսոսիկ պիղատոս և Ճոխք հրէից խո-
ցոտեալ ոսղ խնդանաւ՝ խնդրէին պատՃառս
հակառակ երանելոյն զունկիանոսէ. և ոչ
ունէին պատրաստ. զի էր զունկիանոս ականա-
ւոր՝ ի բանականաց զինուորականն գնդի ։ (5)
Ա.պա այնուհետև խորհեցաւ ամիճ քոսի լի-
նել, ՝ի քաց լուծանել զգօտին կայսեր, և
յայնմհետե՝ ի տան նստի երկու զօրակա-
նօք, որք ընդ նմա և երանելի նահատակու-
թեն ժառանգակիցք եղեն, քարոզք եղեալք՝
որոց տեսինն և լուան՝ ահագին նշանացն ։
Ա.ւ Թողեալ զեղէմ՝ դարձ արար հանդերձ
նոքօք (՝ի հայրենիս իւր), և լինի կապա-
դովկացոցն Ճի քարոզ քաջ. ոսղ Թովմաս
հնդկաց, հռոմայեցւոց պետրոս, ասիաց-
ոց յովհաննէս, զորոս յեղէմ միսչև՝ ի լու-
սին, և այլք այլոց, աւետարանել զքս և
զոսղս առ՝ ինամանէ և՝ ի նոսա կատարել խոր-

Իսկ հրէայքն չարք այրեցեալք նախանձու և դրդեալք 'ի սրտմտութիւն, ոչ կարէին տանել զերանելւոյն ղունկիանոսի զվկայութիւն, որ տարածանէր ըստ բազում կողմանս երկրի։ Յայնժամ հրապուրեցին զպիղատոս՝ գրել սուտ առ կայսրն ըստդէմ երանելւոյն ղունկիանոսի, եթէ օտարոտիս խորհի 'ի հռովմայեցւոց արքայութիւն, և անտես արարել զպատերազմական զինուք՝ զքսն քարոզէ թագաւոր՝ ազգաց. և ահա բանիւք որ վտ նր՝ ելից զիւր հայրենիս և զծն։ Ընդ դըրոյս ըստ այսմիկ առաքեն և ինչս, և՝ զղունկիանոսի մահն խնդրեն, յանկուցանելով զլսելիս կայսեր։

Եւ ահա հրովարտակ արքունի 'ի հրէաստան առ պիղատոս հասանէ ըստդէմ ղունկիանոսի և որոց ըստ նմա, եթէ որոց ապախտ արարեալ իցէ զզինուք, սրով զգլուխս նոցա բառնալ հրամայեմք։ Ուստի փութով մեծաւ տայ պիղատոս զհրովարտակ կայսեր 'ի ձեռս արքանեկաց մահու. որոց ճեպով յուղի անկեալ՝ 'ի կապադովկացւոցն երկիր ժամանեն. և տեղեկացեալք՝ եթէ 'ի հայրենի ագարակին իմաստասիրէ ղունկիանոս և ճգնի 'ի հանդարտութիւն, յամ քաղաքական իրաց զանձն օտարացուցեալ, իսկ և իսկ յագարակ անդր հասանեն, մեղմով զհրաման պիղատոսի և զկայսեր կատարել կամեցեալ, զի մի 'ի փախուստ աճապարեսցէ ղունկիանոս (6)։ Եւ այնպէս յանկարծակի 'ի վր հասին առն, ոպ այլում ումեք պատահեալք.

և

և ոչինչ ոչ ումեք իշխեցին զեկուցանել յորոց 'ի ձեռս ունէին. ապա մատուցել և պատեալ զղունկիանոսիւ, ոչ գիտելով՝ եթէ նա է խնդրեալն յիւրեանց և 'ի պիղատոսէ, հարցանել սկսան, ո՞ւր ղունկիանոսն իցէ։ Իսկ երանելին ըստ յայտնելոյ նմա ա՜ծային հոգւոյն զհանդէսն առաջիկայ՝ ասէ ցնոսա.

եկայք զկնի իմ, և ցուցից զնա ձեզ։

Յայնժամ յանձն իւր զուարթացեալ ո՜բն ղունկիանոս՝ որ՜պս արժանն էր, և 'ի պատարագ մարտիրոսութե՜ ճեպեալ, ասէր ցանձն իւր. Իբրև զի գեղեցիկք են ոտք աւետարանչացն խաղաղութե՜, աւետարանչացն բարութե՜. արդ զերկինս տեսից բացել՝, արդ նկատեցից զփառս հօր, արդ զանճառելին տեսից զճառագայթ հօր զհոգի (7). արդ ասացից, ա՜ր յ՜ս ք՜ս ընկալ զհոգի իմ, որպէս ստեփաննոս նախն 'ի վկայս. զորոյ զմեծապայծառ ձայնն լուայ արձակեալ. արդ յեէ՜մն վերին 'ի վեր ելից յոսկիպարիսպն, 'ի հայրենիս հրեշտակաց, և 'ի մայրաքղ՜քն համօրէն սբ՜ցն դասու՝ ծափաձայն հնչմամբ յաղթողական նուագաց և արքունի յաղթանակաց. արդ մերկանամ զկաւեղէն պատմուճանս, և զբազմահառաչ կապանս մարմնոյս 'ի բաց դնեմ. և փոխիմ յապականութէ՜, զի յանապականութի՜ ձգիմ. և երթամ 'ի նաւահանգիստ անդր կենաց՝ ուր սբ՜քն բնականան։ Եւ արդ ցնծա՛ ո՛վ անձն, զի հանդերձեալ ես երթալ առ քո արարիչն և ա՜ր. ցո՛յց զուարթ զդէմս ը՜ ժամուս պի-

տոյից, և զհիւրս քո աւետաբերս այսպիսի բարեացս մարդասիրապս հիւրընկալեսցուք ուրախութ՚բ, և մեծահաց առաջի դիցուք սեղան՝ որոց 'ի թ՚գրականն ընթրիս զմեզ կոչեն։

Օ այսոսիկ առ ինքն ասացեալ ղունկիանոսի՝ զառ նա եկեալսն ընկալաւ 'ի տուն իւր. և հիւրընկալեալ պայծառապէս, և զուարթագին և շնորհաւոր յոյժ երեսօք ճաշակեալ ը՚ն՚ն 'ի սեղանի անդ՝ զոր առաջի եդ ն՚ց, յետ ընթրեացն հարցանել սկսաւ ղունկիանոս, յի՞նչ պէտս եկեալ իցէ ն՚ց։ Եւ ն՚ք երդմունս 'ի նմանէ պահանջել՚ առ 'ի չհրապարակելոյ զբան իւրեանց, և չմերկանալոյ զխորհուրդն՝ զոր հաւատան նմա, ասեն. գրեալ է կայսեր առ պիղատոս, զի ղունկիանոսի հանդերձ ընկերօքն երկու զօրականօք դլուխն հատցի։

Եւ ն՚բն ասէ. և ո՞յք այնոքիկ իցեն ընկերք ղունկիանոսի. և իմացեալ՝ թէ ն՚ք են, ոյք հրէական կաշառաց չետուն տեղի՝ զք՚ն նախապատուելով, բազում փութով գրէ առ ն՚ն՝ վաղվաղակի առ ինքն հասանել, մեծաց բարեաց կցորդ լինել ը՚ն նմա։ Եւ այսպէս զօր մի և երկու ասպնջական եղեալ նոցա ղունկիանոս զուարթութ՚բ, յաւուրն երրորդի առեալ ածէ զն՚ն յագարակ անդր, ուր մնայր ն՚ց՝ զորս կոչեաց։ Եւ իբրև գիտաց մերձ լինել, պատմեաց սոցա, որպէս ինքն իսկ է ղունկիանոսն՝ զոր խնդրէին։

Իսկ ն՚ք զառաջինն անհաւատային. այլ յետ

այնո

այնտրիկ հնաւատացեալ յարտասուս հարկա-
նէին , փետէին զՀերս իւրեանց , և աղեր-
ծով ձայնիւ առ ղունկիանոս բարբառէին .
զի՞ քեզ հաձոյ Թուէցաւ ի բարեկամ ձեռ-
նարկուելն այդպիսի . զի՞ է՝ զի վեհական՝ է
քո սպանուիլն՝ ի տուն քո ընկալար . հնդհա-
ւելոցն՝ ի խոզխոզել զքեզ ընթրիս յար-
դարեցեր մեծահոց , և ուրան եղեր առա-
ջի , ոչ գիտի օր , այլև զերկուս և զերիս . մի-
թէ ոչ առաւանէիր , եթէ գինի քո հանդեր-
ձեալ է խառնել ընդ արիւն քո՝ յորոյ հաք՝ի
խնդիր : Եւ այժմ զինչ պարտ է ասել , և
զինչ առնել կամ խորհել վասն քո մարթաս-
ցուք . երթ դնա խոտաղուեալ , վարձ փոխա-
նակ հիւրասիրութեանդ ընկալեա՛ի մինջ զե-
մահու արձակուրդ . զի մեք տուր՝ի վէր զե-
նեա՛ք քո չիշխեմք . պատկառիմք յայնէն , ամա-
չեմք՝ի հացէն . երկնչիմք յայն՝ որ գիտակն
է հիւրասիրութեանդ . լաւ էր մեզ վիշտ վը-
տանգի կրե՛ի պնդապատոյ՝ քան եթէ զղուն-
կիանոսիդ քառնալ զգլուխ : Եւ զիարդ լի-
նէր մեզ յայմ՛ի կեանս մարիլ՝ի խղձէ մը-
տաց , և Հաշակիցս մեզ տեսանել զանուճա-
նեալսն արիւնախանձ գեւս . զիարդ լինէր
մեզ ձեռն մխե՛ի քեզ . վ՛ա զի ընդարմանան
մեր ոչ միայն ձեռք , այլև ոտք , և բոլոր իսկ
մարմին մեր , եթէ զայդ դործեսցուք , եթէ
սպանօղք քարեբարին և սասդնջահանին լի-
նիցիմք :

Ո՞ այսոհիկ նէ՛ տա եթանելիցի ղունկիանոս
ասէին . այլ ոչ իւիք հաւանեցուցանէին

զզուեալ ի նմանէ, եւ զքաջասիրտ նահատակին
յետս կալ՛ի մըցանաց, որ վըտ ան եւ փրկչին
յի քէն. այլ անվեհեր արուեստ առնէ նմ պա-
տասխանել. Ա՛ի լեզի ձեզ կամիլ, զի եւ ես մատա-
նել կենաց երեւեցայց, կամ փորձիլ գաւազ
ընտրհաց. ոչ եղէց ես գայլ՝ զոչխարացն ըն-
տրութիւն լքեալ, եւ ոչ երբեք ուրացայց՝ զոր
միանգամ եղէ խոստուվան. ոչ մ՚ընդացուցից
զխաւսն զայն՝ զոր տեսի տատանիլ տարե-
րաց (8). եւ մի լեզին դատախազ հոյլք սրա-
նածոց, ոչ թէ ապստամբ լինիցիմ՛ ինձմա-
նէ՝ այր վըտ երկինք քօղարկեցին զերեսս իւ-
րեանց, եւ արեգակն եւլոյծ զշնամբարացն
կաոս. սիւն եւլիք զասպարէզ լուսոյ, եւ զի-
շեր բռնութիւք՛ ինեւրքս մուծաւ. զի ծանրու-
թիւ խաչին ոչ հանդուրժէր, եւ զհրէական
ածամարտութիւն ոձիրս տեսեալ՝ քերել ան-
ցանէր: Ո՞ այսոսիկ ես ինձէն աչօք իմովք
տեսի. արդ զինարդ վատնեցից զայսչափ առ
իս բարեաց մեծութիւն. զի և ոչ հրեշտակացն
յանդիմանութիւն ժոյժ ունիցիմ:
Ա՛ինչդեռ զայն խօսէր երանելին զունկնիւ-
նոս, հասին զինուորքն երկոքեան ընթացա-
կիցքն՝ պատժակից մահու դատէ՛ի կայ-
սերէն: Ընդ առաջ եւլնէ զոմարթ և կայ-
սառ դիմօք երանելին զունկնիւնոս, և համ
բուրեալ զաչս և զպարանոցս նմ մանգա-
մայն՝ ասէ. ուրախ լերուք ա՛լ զինուորակիցք
քմ, և յաղթօղք ածային մըցանաց, և ժա-
ռանգորդք արքայութեն երկնից. ուրախ
լերուք, զի դուն երկնից բացաւ մեզ, և
հրեշ-

հրեշտակք ա՞յ հանդերձեալ են ը՞ունել զմեր
զհոգիս, և մատուցանել զնոսին միածնի
որդւոյն ա՞յ։ Աւասիկ ջահս տեսանեմ, և
պսակս նշմարեմ, և բրաբիոնս նկատեմ, ո-
րովք յանդիման լիցուք բեմի փեսային։
Եւ զայս ասացեալ՝ ասէ ցդահիճսն. արդ ե-
թէ ունիք ինչ հրաման, փոյթ կատարեցէք։
Եւ առ վերակացու տան իւրոյ ասաց բերել
նմա զմաքուր պատմուճանն, իբրև 'ի հար-
սանիս և յառագաստ կոչեցելումն. և յոր-
ժամ եկն, զգեցեալ զայն, և ձեռամբ ցու-
ցեալ զշիրիմն՝ յորում հրամայէր դնել զմար-
մինն իւր երանելի, և այնպէս ծունր կրկնել
ուրախութ՞ք, և յարդարեալ զանձն հան-
դերձ երկու ընկերօք իւրովք, որք ը՞ն նմա
կատարեցին զյաղթական հանդէս մարտին,
գլխատի յամսեանն հոկտեմբերի ժ՞զ. և այն-
պէս վերագրին յերկոսին պարս առաքելոց
և մարտիրոսաց. զի սոցայս արիու՞ն, և նո-
ցայն բարի նախանձու եղեն հետևօղ։
Յայնժամ առ ե՞լ դահճաց զգլուխ սբ՞յ ղուն-
կիանոսի՝ բերին զայն պիղատոսի. քանզի և
'ի շնորհս հրէից արարեալ էր ն՞ր զայս՝ վ՞ս
ընչիցն, զոր էառ։ Եւ յորժամ ածին դա-
հիճքն զգլուխ սբ՞յն յե՞էմ, հրաման տայ պի-
ղատոս ցուցանել զայն հրէից՝ որք ծարաւի
էին մահու ն՞ր. և բազում ոսկւոյ վաճառէր
զայն հանդէս՝ սովորելոց գնոց գնել զա-
րիւնս արդարոց։ Եւ այսպէս ապա հրամայէ
պիղատոս ընկենուլ զպատուական գլուխ
ն՞բյն ղունկիանոսի արտաքոյ առ դուրս քա-
ղա-

ղաքին, զահարկուն դիւաց, զհրեշտակաց տարփալին, և զհրաշալին տարերաց։ Ընդ անկեալ կայր առ դուրս իբրև գանձ անկողոպտելի. զի թէպէտև աղբիւս յոյժ էր 'ի տեղւոջն, անարատ պահեցաւ մեծագին մարգարիտն քս̄ի. և գերեզման նմին առ ժամանակ մի, մանաւանդ թէ տապանակ՝ աղբիւսն էր, ը̄ երկայնամտելոյն ա̄յ մարդասիրի և յայսմ՝ տնտեսութ̄ն աղագաւ։

Քանզի կին ոմն այրի յ̄ծէ անտի կապադովկացւոց, միամօր որդւոյ մայր, զաչս մարմնոյ կորուսեալ, այլ հաւատովք՝ ախտին յաղթեալ, եկն եհաս յեէ̄մ ը̄ միամօր որդւոյ իւրում, ակնկալեալ անդանօր երկրպագութ̄ սբ̄ տեղեացն զաչսն անդրէն ստանալ։ Որդ յորժամ ձեռամբացի ածեալ յորդւոյ իւրմէ՝ ժողովեաց զհող երկրին, և յաչս իւր խորհէր մերձեցուցանել՝ թերևս նովաւ գըտանել ակնունելով զլուսադեղ տեսութ̄ն, յանկարծակի 'ի վ̄ր̄ եկն հիւանդութ̄ի միածին որդւոյ իւրում, և 'ի բաց խլեաց զնա 'ի մայրենի ձեռաց։

Յայնժամ կրկին խաւար աչաց 'ի վ̄ր̄ եհաս նմին, և իսպառ շիջաւ դառնակսկիծ կրիւք աղետիցն. և ձայն արկեալ ողորմագին՝ ասէր առ ա̄ծ. մինչև յե̄րբ ա̄ր մոռանաս զիս իսպառ, մինչև յե̄րբ դարձուցանես զերեսս քո յինէն. մինչև ցե̄րբ եդից զխորհուրդս յանձն իմ, զցաւս 'ի սրտի իմում 'ի տուէ̄ և 'ի գիշերի. նայեա́ց, լո́ւր, ողորմեա́ ինձ ա̄ր ա̄ծ իմ. և լո́յս տուր աչաց իմոց. զի մի̄ երբէք

բէք յառաւելութ՚ է տրտմութ՚ և ցաւոց ընկլայց ՚ի մահ ։ Տէր միթէ ե՞ս միայն ՚ի վ՚ր երկրի մեղաւոր հանդիպիմ, զի զայսպիսի սաստիկ դատաստանս յանձին կրեմ. տ՚ր միթէ վատթար և՞ս իցեմ քան զպոռնիկն, զոր ընկալար ՚ի բերել ն՚ր առ քեզ զիւղ անոյշ. այլ զիս զմիայն չուառականս և՛ ՚ի լուսոյ կասեցուցեր, և զմիամօր որդեակս իմ առեր.

և ո՛չ է ինձ ուստեք յոյս փրկութ՚ է ։

Եւ յորժամ կայր նա ՚ի բազում անձկութ՚ է և ՚ի սուգ անմխիթար, երևի նմա ՚ի քուն երանելին ղունկիանոս, և պատմէ նմա զա՛մ ինչ զանձնէ իւրմէ. Ես եմ ասէ ղունկիանոս հարիւրապետն, որ դաւանեցայ առ խաչին զտ՚րն մեր յ՚ս ք՚ս, եթէ արդարև ա՛յ որդի է սա. ուստի յայտնեմ քեզ, զի պիղատոս սուտ չարախօսեալ զինէն գրգռէ ըզկայսրն, և հատանէ զիմ գլուխ, և այսր բերէ և ընկենու արտաքոյ քաղաքիս. իսկ հըրէիցն մանկունք գնով արծաթոյ և այսմ եղեն ձայնակից ։ Արդ աղբ յոլով կուտեալ է ՚ի վ՚ր. և քեզ պարտ է պահել զայն ժառանգութ՚ի ՚ի բժշկութ՚ի. զի ը՚ ՚ի վեր հանել քո զայն՝ ստասցիս զաչս քո. և այնպէս յետոյ յանդիման կացուցից քեզ և զորդին քո փառօք, զի սուգ քո սփոփեսցի ոչ սակաւ ։

՚Ի բանից աստի քաջալերեալ կնոջն, միանգամայն և հզօրացեալ՝ որ՚պս առաքինի և լի հաւատով, ՚ի գործն կանխէր, առաջնորդեալ ՚ի տեղին՝ յոր զաղբսն կուտէին, ո՚պ

ու-

ուսաւ 'ի հաւատարիմ առաջնորդաց՝ որք ունէին զձեռանէ նր. և 'ի ժամանել նոցա 'ի դէմ եդեալ վայրն՝ սկսանի փորել ձեռօք իւրովք. ուստի նախախնամութիւն այ իսկոյն գտեալ զպատուականն այ զգլուխ՝ իսկ և իսկ զարեգակնային ետես ճառագայթս: Եւ ողջագուրեալ և լուացեալ ամ փութով. և մեծագին իւղովք օծեալ, դայ անդրէն 'ի քաղաքն, բերեալ զպատուական և զանկապտելի մարգարիտն 'ի տունն՝ ուր ագանէր: (9) Եւ յառաջիկայ գիշերին դարձեալ եկն եկաց առ նմա երանելին զունկիանոս՝ ունելով զնր զորդին առ կողիւք իւրովք պայծառ և ժպտեալ, և ոպ զհանդերձ փեսայութեան զանձամբ արկեալ. և ասէ ցնա. կին դու, ահա՛ որում տենչայիր. սա՛ է միածին քո որդիդ, զոր յափշտակեալ 'ի ձեռացդ համարէիր. այլ ած ազատեալ զնա յաղցաւոր և յառժամանակեայ կենաց՝ 'ի վերին արքայութիւն զինուորեցոյց. և այժմ ը իս ունիմ զսա, զի 'ի փրկչէն ընկալայ զնա, և ոչ մեկ նեսցի յաջմէ իմմէ երբեք: Եւ արդ առցես դու զգլուխ իմ և զմարմին որդւոյ քո, և ամփոփեսցես 'ի մի տապանակ. և մի՛ ևս այլ լացցես զորդին քո միամօր. զի մեծ փառք տուեալ են նմա ը իս 'ի մարդասիրէն այ, և սեղան ոբ և պատարագք խորհրդականք, և օրհնառաք պարք, և ամենաժողով տօնախմբութիւք. և այլ ինչ բազում առ այսոքիւք, որոց անհնար է յերկրի կատարիլ. իսկ յերկինս, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ

լուաւ,

լուաւ, և ո՞չ 'ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զոր
մեղ ա՜ծ՝ արդեամբք և բանիւք զառ մեղ սէր
իւր ցուցանելով՝ պատրաստեաց։

Օ բանս զայսոսիկ մայր պատանւոյն՝ ո՜պ զ՜ս՜բ
մարգարէի ընկալեալ պատգամս, փութա-
նակի յարուցեալ 'ի հայրենիսն ընթացաւ.
և առեալ զպատուական և զ՜ս՜բ գլուխն՝ զ՜ս՜բյն
ղունկիանոսի նշխարն, եդ շքով և պատուով,
զո՛ր օրինակ պատուիրեաց նմա ս՜բն ղունկիա-
նոս, 'ի գիւղն անուանեալ սանդրալիս. ք՜զի
անտի էր ս՜բն ղունկիանոս. վերաձայնելով
յանձին իւրում, և ասելով 'ի սրտի, և լեզ-
ուաւ քարոզելով. Գիտեմ իսկ, զի որոց սի-
րենն զա՜ծ, յա՜մի գործակից լինի 'ի բարին.
աչս խնդրեցի մարմնոյ, և ը՜ նոսին և զհոգ-
ւոյս ընկալայ. ցաւէի ը՜ աղէտս զաւակի, և
ահա ժառանգ ունիմ արքայական փառօք
յանդիմանակաց ա՜յ. ծիրանազգեաց վերակ-
նեմ պատանեակ, մեծավայելուչ նկատեմ
երիտասարդ։ Աստեղատեսիլ մանուկ, և
մօրս ժպտօղ, և առ կողիւ՜ ղունկիանոսի
փայլատակօղ՝ հանգոյն արուսեկի առընթեր
արփիական ճառագայթից. ստէպ 'ի գիշերի,
և ստէպ 'ի տուն՜ջեան երևեալ. և ո՛չ յա-
նուրջս միայն, այլև յայտ յանդիման երևու-
թանայ ինձ՝ վկայիցն օրինակաւ. իսկ վիճակ
ն՜ր ը՜ մարգարէից, թէպէտև զվարս մար-
գարէից ոչ եկեաց. և ը՜ ղունկիանոսի է խա-
չազգեաց, և զպաշտելին երկնից արքայուն՜
յանձին բերէ նշան յաղթութ՜ն. և 'ի մէջ
հրեշտակաց քարոզէ, և յակումբս հրեշտա-
կա-

կապետաց գոչէ, արդա՛րև ա՜յ որդի էր սա,
ո՜պ ղունկիանոսի աշակերտ։

Եւ զոր միանգամ սերովբէք ղունկիանոսի
թողացուցանեն փառաւորել, քանզի և ո՛չ
ընդդէմ դառնան օրհնաբանից սերովբէք և
քերովբէք, բարբառի և սա ղձայն նու՛իրա-
կան՝ օրհնաբանական, յաղթողական, խոր-
հրդական, ներբողական, արդա՛րև ա՜յ որդի
է սա. և է՛ և եղիցի՛. զի զոր միանգամ ու
նէրն նախ ք՜ զյաւիտեանս, և 'ի յաւիտեանս
ունիցի. ինքն հնացուցանէ զյաւիտեանս,
և ինքն մ՛նայ անհնանալի. զի արքայութի՜ ն՜ր
արքայութի՜ յաւիտենական, և իշխանութի՜
ն՜ր յաւիտեանս ո՛չ եղծանիցի։

Եւ խսիւքիոս երէց ե՜էմայ բազմօք խուզար-
կեալ՝ բազում աշխատութ՜ գտանել մար-
թացայ զ՜ն՜բյն ղունկիանոսի զհարիւրապե-
տին, այն՝ ո՛ր առ խաչիւ՛ն ք՜ն՜ի ասաց, ար-
դարև ա՜յ որդի էր սա, զվկայութի՜. և գտի
զայն 'ի մատենին՝ որ 'ի մատենադարանի ն՜բ
յարուե՜ն. և շարակարգեցի զխոստովանու-
թի՜ ն՜ր ներբողենիւ՛ հանդերձ։ Բայց արդ
երկիւղածք ա՜ն հաւատասցե՜ն, զի սա է ար-
դարև ն՜բն ղունկիանոս հարիւրապետն, որ
առ խաչիւ՛ն ք՜ն՜ի դաւանեաց զնա. որոյ բա-
րեխօսութ՜ և աղօթիւք պահպանե՜ լիցին
ամենեքեան՝ ոյք ընթեռնուն զայսոսիկ, և
որք ունկն դնեն՝ 'ի ք՜ն յ՜ն 'ի ա՜ր մեր. որում
փառք և զօրութի՜, և արքայութի՜ հօր և որդ-
ւոյ և ն՜բ հոգւոյն՝ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Ի քանից ատի խիւքիոսի բառ առ բառ առեալ գրէ և մետափրաստէս իւրական ոճով զվկայաբանութի՛ նբյն ղունկիանոսի. զոր և անցուցանէ սուրիոս 'ի կարգ ամսեանն մարտի, ուր տօնեն հռովմայեցիք զերկրորդն ղունկիանոս՝ որ և ղոնկինոս զինաւոր. զի կամ չէ գտեալ զվարս երկրորդին, և կամ նոյն համարեալ է զնա ընդ առաջնոյն։ (10)

Ոպ և յայսմաւուրք հայոց նոյնացուցանելով զերկոսին՝ պատուաստէ յընթացս զանստոյգն զայն աւանդութի՛, որ կայ նաև առ յոյնս և հռովմայեցիս յաղագս զինաւորին, գրելով 'ի վարս հարիւրապետին օրինակ զայս։

Պիղատոս առաքեաց ասէ հրամանաւ կայսեր զօրապետ մի 'ի կապադովկիա՝ սպանանել զղունկիանոս և զերկու ընկերս ն՛ր. և եկել՛ զօրապետին 'ի սանդրալիս յագարակ ժառանգութե՛ ղունկիանոսի՝ ստիպէր զնա ողոքանօք և սպառնալեօք ուրանալ զք՛ս։ Եւ նա արիաբար կայր ը՛դէմ քանից նորա, և ասէր. որ լուսաւորեացն զիս հոգւով և մարմնով, նա է ա՛ծ ա՛մի։ Ասէ զօրապետն. զիա՞րդ լուսաւորեաց զքեզ։ Ասէ ղունկիանոս. ես կոյր էի միով ակամբս. և 'ի ժամ խաչելութե՛ ք՛ն՛ի ես հրամանաւ պիղատոսի 'ի վ՛ր կայի. և 'ի խոցելն զնա՝ պատառեցաւ կողն նորա, և ել անտի արիւն և ջուր՝ վկայ անմահ ա՛ծութե՛ ն՛ր, և կենդանի մեռելութե՛. ուստի ցայտեաց կաթ մի 'ի կենդանարար արենէ կողին ք՛ն՛ի 'ի խաւարեալ աչս իմ, և լուսա-

ւորեաց զսա. ընդունի եբաց և զաչս հոգւոյ՝
տեսանել զլոյս ածգիտուե նորոյ։

Նակ զօրաւորէն այպանեաց զաստուածսն,
և բռնադատեր զնա ուրանալ զքս. և յոչն
հաւանիլ զունկնդրանոսն՝ եա խաւարային չար-
չարել զնա։ Եւ եղև՝ զի բանիւ՝ ոչն խաւա-
բեցաւ աչք զօրաւորին. և յորժամ աղաչէր
զնոսն՝ լուսաւորել զնա, առաց զունկնդրանս.
եթէ ոչ տպանանես զնս, ոչ լուսաւորին աչք
քս։ Յայնժամ հրամայեաց զօրաւորն զլխա-
տել զնա և զերկոսեան ընկերսն ընդ նմա. և
խոյն բացան աչք զօրաւորին. և առեալ
զգլուխ զունկնդրանոսն՝ տարաւ առ արիշատոս
յերէմ. և այն որ ՚ի կարգի՝ ն քաղուածք բա-
նից խնդրոսի վերգիտուի գլխոյ աջոյն ՚ի ձեուն
կնոջ, որոյ բացան աչքն, և ետես զորդի նոր
՚ի փառս ընդ սնոյն զունկնդրանոսն։

Ոդ այս առանդուԹե կամ ն անատոյգ, ընդ
որում կարծի առեալ յօտար իմայուճածոյ
բանից յոլհանննու աւետարանչի՝ որ զանձնէ
ասէ, և ոչ զկինսուրէն, Թէ * և որ ետեան՝
վկայեաց ‖. և կամ եԹէ ստոյգ գիցի, ընդ
որում և գրիգոր աճապանն կարծի հաստա-
տեալ զնոյն յօտանաւորս նոր [11], ոչ հարկեւրա-
պետի է անկ, այլ՝ զինաւորի. որոյ կայ ա-
ռանձին վկայաբանուե ՚ի Ճառընտիրս հայոց
և յունաց և հռովմայեցւոց. և ահա ժամ է
յառաջ բերել և զայն։ Ոդ ինչ ի միայն
երևի ուղղապրել, զի վերգոյ և զինաւո-
րին ՚ի գնդե հարկեւրապետին և գաւառակից
նը, ոյ ըզ զինաւորուԹեն կապադովկացի և

Ի դամբայ՝ ըստ ձեւոյն պսակատօ-
ւոյ, ոյք երկոցունց մի եւ նոյն անուն ընծայէր,
ոյ պսակիցս՝ որ ի մեզ ասի պսակիանոս,
նոյնպէս եւ նոյն ինքն պսակաւորն կոչի միան-
գամայն եւ Հարիւրապետ. որով շփոթի ըս-
կիզբն պատմուճէ երկրորդին ըստ առաջնոյն.
քայց ընթացք վկայուածն ե դէմս ուին զանա-
պանեալ, ունելով զանձին այսպէս։

Պատմուճէ սքեյն պսակիանոսէ երկրորդէ, որ և պսկ-
նոս կոչ պսակաւոր, բանիւ ճառընդրայ։ (12)

Ապրանելի այրս այս պսակիանոս կիր պսկնգիա-
նոս՝ որ յաւուրս նոյն մերոյ յիշ քրիստոնէ Հարիւրապետ (իմա ըստ Հարիւրապե-
տիւ)։ որ և մերձ էր ի ժամանակի խաչե-
լութենն. և հրամանաւ խոցեաց զկողն յիսի.
և տեսեալ զնշանսն ի խաչին՝ հաւատաց ի
նոր. և բախեր զկուրծս իւր, (և ասեր մե-
ծաձայն. արդարև որդի աստուծոյ է սա)։ Այս յետ
սակաւ ինչ ժամանակի թողեալ զպինուհորու-
թիւնն, համբերութիւք տայր զինքն խոկալ զյի-
շատակարանս նոյն, և լսեր ի նոր առաքելոցն
զբարեպաշտ հրամանս քրիստոսի. և ձգնարտուք
խրատեալ՝ ուսանէր զձանապարհն նոյ. և
առեալ զնոնագրութիւն կենդանի քրիստոսի՝ ամենևին
զինքն նուիրեր նոյ. առնէր ողորմութիւնս, և
խնամատուութիւք կրթեր զմարմին իւր, նոր պա-
հել զնիստան երկնական վարուք, և նամքնա-
կան առաքինութիւնք զարդարեալ, և համբե-
րութիւք զոնարհագունեալ, պարկեշտ ձեւով

և մեզմ Հայեցուածովք, Հանդարտ խմնամբ
լեօք և խնամարկ մտօք . անցաւ մարմնով, և
անխռով անձամբ : (13)

Այրեաւ ի գամիրս (կիլ՚ ալլոց՝ ի կեսա-
րիա կապադովկացւոց, որ է նոյն) ՝ պարա-
պեցուցանէր զինքն ի խնամարկ և ի միանձ-
նական վարս ամս քսան և ութ (14) . և զբա-
զումն դարձուցանէր յանկարծաւորեալ յաճ-
պաշտութիւն, և լուսաւորէր բանիւն արդա-
րութեան . խափաններ և զգոյս կոչոյն՝ սերմա-
նելով զբարեպաշտ հրամանսն նոն : Այս
ամ եկեալ Հասեալ ի լսելիս գաւառաւորին
ոկտաւիոսի՝ հրամայեաց ածել զնա գաւառ-
սորն :

Այս իբրև ածին, ոկտաւիոս գաւառաւորն ասէ .
զի՞նչ է անուն քո : Այս նա կատարեալ մտօք
և բարեխոհչութիւնդ առ՝ ած՝ ասէ . քրիստոնեայ
եմ . քանզի պարտ է ասել յառաջ զբարիսք
հնարացն քոյ խոստովանել զանուն : Ոկտա-
ւիոս գաւառաւորն ասէ . և ոչ ոք յառաջ քան
զքեզ օգտեցաւ յանուանէդ յայդմանէ . արդ
ասա, զի՞նչ անուն է քո : Այս ՚ցայն պինդ
տօնեալ ասէ . զինկինոս է անուն իմ : Գաւ-
ոտաւորն ասէ . յորմէ՞ գաւառէ ես : Ցինկի-
նոս ասէ . ի սուրայեց եմ (՚ցր յիսաւրայե-
ւոց) : Ոկտաւիոս ասէ . ծառայ ես, թէ ա-
զատ : Ցինկինոս ասէ . ծառայ եմ յառաջ
մեզաց, և մարգասէրն ՚ցաճ յ՚ք քո մատակա-
բարուեցի իւրով, և երկրպագելն խաչին և
հողից կրկին շնորհօք ազատեաց զիս, միան-
գամ ջրով, և այժմ արեամբ, եթէ կատա-
րե-

բեցայց յաստպարիզի նահատակութեն ։
Դատաւորն ասէ. վ՞ս որո՞յ իրաց եկեալ ես
այսր ։ Ղ ոնկինոս ասէ. քաղաքացի էի՝ զին-
ո՛ւորեալ ՚ծիս այսմիկ. և այժմ զինո՛ւորեալ
եմ ա՞ն իմոյ յի՞ քի՞ ։ Դատաւորն ասէ. ո՞ ար-
ժանի արար զքեզ թողութե՞ ՚ի հարկաց քա-
ղաքի, և ՚ի զինո՛ւորութէ՞ն ո՞ ազատեաց ։
Ղ ոնկինոս ասէ. վ՞ս հարկաց քաղաքի ազա-
չեցի յոյժ զեղբարսն իմ, և առեալ զստաց-
ո՛ւածս իմ՝ թողութ՞ արարին. և տային ինձ
յամի դահեկանս հարիւր. զոր առեալ իմ՝
ծախէի ՚ի պէտս աղքատաց. և այժմ ազա-
չեցի զա՞ն իմ յ՞ս քս՞ զՃշմարիտ և զերկնաւոր
թագաւորն, և լուծել՞ զիս ՚ի կապանաց ՚ծիս
այսորիկ, և զերծուցեալ ՚ի մարմնական զին-
ո՛ւորութէ՞ս՝ շնորհեաց ինձ հոգևոր կեանս.
զի խաղաղութ՞ վարեցայց աստ, և փառա-
ւորեսցի անուն ն՞ր յիս ՚ի մեզաւորս ։
Ասէ դատաւորն. եթէ այդ այդպէս է, ա-
զատ և մեծ և փառաւոր ոմն այր ես դու.
հնազանդ լեր այսուհետև թագաւորաց, և
զոհեա՛ ա՞ծոցն, և Ճաշակեա՛ ՚ի զոհիցն. և
վարես դարձեալ զնոյն խաղաղ կեանս քո.
զի մի՛ մաշեսցիս առ սակաւ սակաւ տանջա-
նօք ։ Ղ ոնկինոս ասէ. ոչ ոք կարէ երկուց
ա՞րանց ծառայել՝ որք ը՞ղէմ միմեանց խոր-
հիցին. քանզի իմ ա՞ծն՝ լաւուն՞ և հանդար-
տութե՞, ժուժկալութե՞ և անընչութե՞, խո-
նարհութե՞ և ա՞մ առաքինութ՞, և ա՞ծական
վարուց և յաւիտենից կենաց տո՛ւիչ է և ա-
ռաջնորդ. իսկ քո ա՞ծքն զհակառակն խոր-

հին. ցանկացօղք են ամ պոռնկութիւն և խռովութիւն, շփոթութիւն, արծաթսիրութեան, խստութիւն և հպարտութիւն. և ամ առաքինութիւն ըդէմ են կռոցն հնարք. արդ զիա՞րդ կարեմ զկռոցն գործ կատարել, և խոկալ յայն իմոյ պատուիրանս: Դատաւորն ասէ. արդ՝ ոպ գուդ ասես այ անոբ, եթէ ըդէմ խորհին ածքն մեր և ածն քո, զիա՞րդ հեթանոսութիւն օգնէ թագաւորաց և դատաւորաց, և բարձրանայ փառօք՝ բազմացեալ. իսկ քրիստոնէութիւն խոնարհի՝ պակասեալ անպատուութիւն:

Ղոնկինոս ասէ. տեսանե՞ս, զի հեթանոսութիւն ըդէմ է քրիստոնէութիւն, համբերութիւն արգելիչ, զգաստութեան վնասիչ, ածպաշտութիւն խափանիչ, հաւատոց օտարացուցիչ, առաքինութիւն լուծիչ, մտաց խաւարեցուցիչ. ամ բարեգործութիւն և խրատուց քանդիչ, սրբութիւն անձին աղտեղացուցիչ. զեղխ խորհրդոց բնակութիւն. պատերազմաց գործակից. ո՛չ բանիւք և ո՛չ գործովք, ո՛չ կրօնիւք և ո՛չ խորհրդովք ամփոփէ զմարդ, այլ ամենևին մոլեկան և այլամիտ կացուցանէ: Արդ՝ եթէ հրամայես, ասեմ և զմեր քրիստոնէութիւս: Ոկտաւիոս դատաւոր ասէ. բազումս խօսեցար, և ոչինչ իմաստութիւն բարձրագոյն բարբառեցար. արդ մատուցեալ զոհեա՛ ածոցն և ճաշակեա՛ 'ի մսոյն. և թողութիւն առնէ քեզ ածն քո, և ոչ մեղադրէ. քանզի բռնութիւն թագաւորաց զայդ առնես. վ՞ս զի տեսանեմ զքեզ ամենևին նուազ և գունատ և անզօր,

և

և տանջանայ՝ ոչ կարող համբերել. գուցէ
եթէ սկսեալ ի քեզ դառն տանջանաք, յոչ
կարելդ ժուժել՝ առնեսցես ի հարկէ զայդ
առնես։

Ա մնկինոս ասէ. եթէ արդարև զայդ ասիցեն, դու մանաւանդ լեր քրիստոնեայ, և յանձն առնու թագաւորն քո. վա՛ղ թագաւոր մեծ և յաւիտենական զմեծ արդարութիւնդ ծանեաւ. ապա եթէ հարկանել կամիցի զքեզ թագաւորն քո, ոչ մերձենացին ի քեզ տանջանք. զի թէ կարի տակաւ իցես իբրև գիս, մի՛ լիցի քեզ փոյթ. միայն լեր հաւատացեալ. քանզի ոչ զօրանայ ամպարշտութիւնդ թագաւորաց և տանջանաց նոցա ի վերայ բարեպաշտութեանդ քումի։

Ընդ այսոսիկ՝ ասէ. առէք ուրուն զատամնահան, և զատամունս դորա թափեցէք. և որով զչէզոս դորա հատէք. վա՛ղ զի հայհոյէ զաստուածն, և արհամարհէ զինքնակալ թագաւորն։ Իւ դահճացն արարեալ զհրամայեալսն՝ յարմատոյ վաղվաղակի խլեցին զատամունս նոր [15]։ Ի տակ երանելին արիաբար համբերէր տանջանացն վա՛ղ առ ի քո բարեպաշտութենէ. և ասէ ցդատաւորն. համարիա՞ ածէ զկուռսն. արդ հրամայեա տուր ինձ փչել զնոսա, և օգնեսցեն իւրեանց։ Ի դատաւորն ասէ. այ չարագլուխ, և քո այդպիսի տանջանս ընկալեալ՝ ընդէ՞ր ոչ օգնեաց քեզ քո՞ն քո։ Ա մնկինոս ասէ. տեսանե՞ս զի անզգայ, զի այսքան տանջանս ածեր ի վերայ իմ, և ոչ քնաւ մերձեցան կից. որպա՞ և դու իսկ

գիտես. արդ տուր ինձ իշխանութիւն, և մանրեմ զածսն քո. եթէ կարասցեն վնասել ինձ, հաւատամ 'ի նս՝ եթէ ածք են. ապա եթէ ոչինչ մարթասցին առնել, և իմ ածն վնասեսցէ քեզ, հաւատասցես՝ եթէ ճշմարիտ ած նա է: Ոկտաւիոս ասէ. տուեալ է

քեզ իշխանութիւն 'ի վր ածոցն:

Եւ առեալ սբյն զոնկինոսի փայտատ կամ տապար՝ մանրեաց զկուռս, և զսեղանս նց, և զսրսկարանս նց եհեղ: Եւ վաղվաղակի դևքն՝ որ մտել էին 'ի կուռսն և 'ի սեղանսն, 'ի դուրս վազեցին. ոմն 'ի նոցանէ հարաւ յիշխանն, ոմն 'ի բանտապետն, և այլ դևքն յայլ զօրականսն. և էին ամենեքեան 'ի մեծի մոլեգնութեան 'ի միասին, հաջէին և բախեալք 'ի դիւաց՝ ասէին. զի՞ ածիք այսր զսբդ այ զղոնկինոս՝ հալածել զմեզ յառաջ քան զժամանակն մեր 'ի բնակուէս մերմէ. և անկեալք առ ոտս սբյն՝ ասեն. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես, ծառայ այ բարձրելոյ զոնկինէ: Եւ սկսաւ երանելին սաստել նց և ասել. որո՞վ պատճառանօք բնակէիք 'ի զոհարանս յայսոսիկ: Եւ դևքն ասեն. գտաք զարդարեալ պատկերս քարեղէնս՝ յորս ո՛չ էր անունն քսի, և ո՛չ նշան խաչին 'ի վր, որում դուքն երկիր պագանէք. և գտաք զոհս և խառնելիս արարեալ յանուն մեր. և ծանուցեալ զտեղի և զմարդիկ մեր՝ բնակեցաք աստ. քանզի ուր ած ո՛չ անուանի, և նշան խաչին ո՛չ է 'ի վր, այն մեր բնակութիւն է. վնկ աղաչեմք զքեզ սբդ այ, մի՛ հալածեր զմեզ

յան-

ՅԱՆԴՈՒՆՈՒԹԻՒՆ։

Ա՛ս զՍՆԿԻՆՈՍ ՅԲԱԶՄՈՒԻՆՆ՝ որ մերձն կայր. զԻՆՉ կամիք. ունել ղդուստա ՃԾՈՒ, և պաշտել զորս յամօթ արարն անուճամբն քոյ, եթէ հաՃ լածեմ իսպառ զսիրտ ՀոգիսդՔզի տեսա՛ նէք զդատաւորդ ձեր զօրութիՔ ՈՅ իմոյ փըրփրեալ և անկեալ յոտս իմ։ Եւ բազմուին աղաղակէր, և ասէր. մե՛ծ է ՈՃՆ քրիստոնէից. աղաչեմք զքեզ և մաղթեմք սՔդ ՈՅ, մի Թողուր զդևսդ բնակել ՚ի քաղաքիս մերում՝ ի կորուստ և յապականուՒն մարդկան։ Ո՛ՅՆ լուեալ երանելոյն ՍՆԿԻՆՈՍԻ՝ համբարձ զաչս իւր յերկինս, և ասէ. ՈՐ յո՛ քո՛ լսէր ինձ ԸՆ բազում մարդասիրութիՔ քո, և ԸՆ անպատում գԹուՒդ՝ որ ՚ի վէր իմէ. քանզի գիտեմ, զի յաՒմ ժամ լսես ինձ, և հաւատամ՝ զի յառաջ քան զկնդրելն իմ տաս, մանաւանդ զփրկութիՔ խնդիրս. և արդ վա՛ մերձաւոր բազմութիՔս, և անարժան ծառայիս քո, և վա՛ փառաց ՃԾութիՔդ քո՝ հրամայեա՛ սիրտ Հոգւոյս ելանել ՚ի մարմնոյս յայսցանէ. քանզի գործք ձեռաց քոց են։ Եւ ԸՆ ասել ՚ՔՒն զայս՝ գոչեցին դևքն, մինչև հանել զարան՝ յորս մտեալ էին՝ արտաքոյ քան զքաղաքն, և հարկանել զնա՛ յերկրի, և ելանել ՚ինոցանէ մեծաձայն աղաղակաւ. և այնպէս սրբեցան մարդիկն ՚ի ժամէն յայնմանէ, և եղև ուրախութիՒն մեծ ՚ի քաղաքին. և բազումք հաւատացին ՚ի ՈՐ՝ պարապեալ սՔՒն ՍՆԿԻՆՈՍԻ, և ոչ մեկնէին ՚ինմանէ։

Այլ յետ սակաւ ժամանակի անամօթն սա-
տանայ թիւրեաց զսիրտ դատաւորին, և
պատերազմէր ընդ ծառային տ̅յ ղոնկինոսի. և
հրամայեաց ածել զնա, և ասէ ցնա. իմա-
ցա՞ր՝ եթէ տ̅մ քաղաքն հեռացաւ 'ի զոհիցն
վ̅ս քո կախարդութ̅ե̅դ. և եթէ լուր լիցի
այդ թագաւորին, մահապարտ եմք՝ ես և
քաղաքս: Յայնժամ բանտապետն՝ որում
անուն էր ափրոդիտոս կամ ափրոդիսիոս, ասէ
ցդատաւորն. որ ետ մեզ զփրկութ̅ի̅ս զայս,
և զերախտաւոր քաղաքիս՝ դարձեալ տան-
ջե՞լ ձեռնարկես: Դատաւորն ասէ. դա առ
աչօք արար զտ̅մ՝ կախարդելով զմիտս մեր:
Ափրոդիտոս ասէ. մեծ է տ̅ծն քրիստոնէից,
և ո՛չ է առ նմա առ աչօք ինչ և նենգութ̅ի̅.
մի՛ թերահաւատեր 'ի նմանէ, և մի՛ խորհիր
չար ինչ 'ի վ̅ր̅ ծառայի ն̅ր̅. զի մի՛ չար և ս
ինչ լինիցի քեզ:

Ոկտաւիոս դատաւոր ասէ. հատանել հրա-
մայեմ զլեզու քո, զի մի՛ խօսեսցիս ա՛յ թըշ-
ո՛ւառական: Իսկ ղոնկինոս ասէր. դոհա-
նամ զքէն տ̅ր յ̅ս̅ ք̅ս̅, զի ցուցեր և այլ պա-
տերազմօղ վ̅ս̅ քո բարեպաշտութ̅ե̅դ: Եւ
մինչդեռ հատանէին զլեզու բանտապանին,
յոգւոց եհան երանելին ղոնկինոս առ տ̅ծ.
և վաղվաղակի ձեռն տ̅ն եղև 'ի վ̅ր̅ դատա-
ւորին, և լուծաւ յանդամոց, և կուրացաւ.
և տեսանելով զնա բանտապետին՝ զի զրկե-
ցաւ 'ի լուսոյ, աղաղակեաց և ասէ. արդա՛ր
ես դու ք̅ս̅, և ուղիղ են դատաստանք քո:
Դատաւորն ասէ. եղբա՛յր ափրոդիտոս՝ հա-

ւա-

ւանեցո՛ զտ̄ր̄ն իմ զոնկինոս՝ առնել աղօթս վ̄ս̄ իմ. զի շատ անիրաւեցայ 'ի ծառայսն ա̄յ։ Ափրոդիտոս բանտապետ ասէ. ա՛յ ամենաթշո՛ւառ այր՝ ո՞չ ասէի քեզ, թէ մի՛ խորհիր չար 'ի վ̄ր̄ ծառային ա̄յ. քանզի ա̄ծն մեր անյաղթ է. ո՞պ տեսեր և զիս զանարժանս՝ զի ետ ինձ և լեզո՛ւահատ խօսել։

Դատաւորն ասէ. վա՛յ ինձ, զի ո՛չ միայն զաչս կորուսի, այլև սիրտ իմ չարաչար տանջի։ Ղոնկինոս ասէ. եթէ կամիս ողորմու՛ի գտանել, արա՛գ արագ կատարեա՛ 'ի վ̄ր̄ իմ զհրամանն արքունի (16). զի յետ մահո՛ւան իմոյ աղաչեցից զտ̄ր̄ն իմ ք̄ս̄, և բժշկեսցէ զքեզ. քանզի ա՛յլ համարձակութի̄ ունիմ յայնժամ առ տ̄ր̄ն իմ։ Եւ վաղվաղակի վըճիռ մահու եդ 'ի վ̄ր̄ սբ̄յն դատաւորն՝ սրով սպանանել զնա։ Եւ երանելին զոնկինոս տարածեալ զձեռս իւր՝ յաղօթս եկաց իբրև ժամ մի. և այսպէս կատարեցաւ սբ̄ն ա̄յ՝ սըրով հատել զգլուխն, և զհոգին յանձնեալ տ̄ն խաղաղութ̄բ։

Եւ նոյնժամայն չոգաւ դատաւորն 'ի մարմին երանելոյն զոնկինոսի. և անկեալ 'ի վ̄ր̄ երեսաց իւրոց՝ յոգւոց հանելով և արտասո՛ւելով ասէր. մեղայ տ̄ր մեղայ, և զանօրէնութի̄ս իմ ես ինձէն գիտեմ. և վաղվաղակի ետես և բժշկեցաւ 'ի ժամէն յայնմանէ։ Եւ առել զնշխարս ոսկերաց սբ̄յն՝ պատեաց 'ի կտաւս սբ̄ս, և եդ 'ի հանգստարանի. և հաւատացեալ մկրտեցաւ 'ի ք̄ս̄, և պարապեաց քահանայիցն բարեպաշտութ̄ե՝ փա-

ռա.

ռաւորելով զտ̄ծ՝ մինչև ցմահ։ Եւ եղև կա-
տարումն ս̄բյն ղոնկինոսի 'ի դամիրս՝ այս է
'ի կեսարիա կապադովկիոյ, յառաջ ք̄ զութ
կաղանդացն օգոստոս ամսոյ (17) (ցի̄ 'ի 25.
յուլիսի), 'ի դատաւորութեն ոկտաւեայ,
և 'ի թագաւորութ̄ տ̄ն մերոյ յի̄ քի̄. որում
փառք և պատիւ՛ յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Արդ ը̄ այսմ վկայաբանութ̄ն՝ որ տ̄միւ՛ ո-
րիշ է յառաջնոյն, ինքնին զանազանի եր-
կրորդն ղունկիանոս յառաջնոյ անտի, ցի̄
ղոնկինոս զինաւորն 'ի ղունկիանոսէ հարիւ-
րապետէ. և մնայ ասել, թէ մարմին սբ̄յն
ղոնկինոսի բերեալ յետ ժամանակաց յարև-
մուտս հանդերձ մասամբ 'ի պատուական
արենէ փրկչին, է զինաւորին, և ոչ հարիւ-
րապետին. իսկ թէ զիա՛րդ, արժա՛ն է գրել
սակաւուք ը̄ քաղելոյ բոլլանդեանց յայլև-
այլ մատենագրաց։

Ա՛ւանդութ̄ի՛ ՎՍ̄ Գիւտի նշխարաց սբ̄յն ղոնկինոսի
կմ̄ ղունկիանոսի՝ ընդ կամսակի սբ̄ արեանն ՔՍ̄ի։

Յամի տ̄ն իբր 804, 'ի մանդու՛ա քաղաքի
իտալիոյ՝ 'ի փորել զգետինն մօտ 'ի
հիւրանոց մի՝ 'ի վեր երևեցաւ արկղ մի փոք-
րիկ արճճեայ, յորում կայր կամփսակ կմ̄
անօթ փոքր՝ հանդերձ այսպիսի արձանա-
գրութ̄բ. * Արիւն Յի̄ Քի̄ ‖։ Յետ սակա-
ւուց գտաւ 'ի նմին վայրի և մարմին սբ̄յ ու-
րումն

ըսուն վկայի՝ լսանքինուս անուն, որ զնգի-
նոս կոչ զանկիանոս. յորմէ հաւատաւ զա-
տեցան մանդաճացիք, թէ այն է զնգինոս
պինաւոն՝ որ խոցեաց սիգաս զկողս փրկչին,
կոչգանէ զանգիանոս հարիւրապետն՝ որ հա-
ւատաց ՚ի ժամ խաչելութեն ։ Այս առ այս
կենաքն ասելին, թէ նոյն ինքն սրն բերեալ
էր ՚ի իւր կիսալիա զմանն զայն ՚ի պատուճա-
կան արեանն փրկչին Յիսուսի ՚ի կենդանա-
բար կողէ նր, և կոտ վախճանեալ նր անդ
՚ի մանդաճա թաղեալ էր առ նմա և անօթ
որ արեան փրկչին. և կենաք ստուգապէս ա-
զնելին՝ ոչ զբեայ և յովհաննէս մկրտիչ բերը
թաղն մանդաճայի, թէ կոտ կատարման սրբոյ
զանկինոսի ՚ի կեսարիա կապադովկացւոց՝
յանցանել գարուց մարմին նր բերեալ է ՚ի
ծովկիտալիա հանդերձ սբ արեամբն քրիս-
տոս և ամփոփեալ ՚ի մանդաճա ՚ի տեղւոջ անդ՝
ուր և գտաւ ։

Պայ և առ յոյնս այլ ասացուածք, զոր կի-
շատակեն ՚ի սեպտ. 10. Թէ կայոբ ոմն հա-
ւատացեալ՝ ունէր ՚ի գիմինի անօթ ինչ հա-
ւաքեալ յարեանէ և ՚ի ջրոյ կողին քրիստ. և ե-
թող զայն գանձ ՚ի ձեռս երկուց անապատա-
ւորաց. մինչև կոտ ժամանակաց անկաւ ՚ի
ձեռս վարիքսաբայ ճգնաւորի սրբոյ. զոր սպա-
նին երկու արք անօրինք, և առին զանօթն
զայն՝ առ ՚ի զօշաքաղել հովաւ ինչս բաղումս.
քայց ասի՝ թէ ոնայնաձեռն եղին զարքն.
և ոչ նշանակի՝ թէ միոչ եղև զոք անօթին այն ։
Այ գոյ և նշանակ ինչ, թէ բերեալ էին այն
՚ի

'ի մանդուա. և անօթն իսկ մանդուացւոց որիշ երևի. և ոպ̄ ասեն քննիչք, չէ՛ ինչ ընդդէմ բազմաւորութ̄ի նշխարաց ն̄բ արեանն. զի թո՛ղ զայլ արիւնս հրաշականս՝ որ 'ի խորհրդոյ պատարագին գտանի 'ի տեղիս տեղիս, ոպ̄ և զայն՝ որ բղխեաց երբեմն 'ի պատկերէն ք̄ն̄ի խոցելոյ 'ի հրէից 'ի բիւրիտոն քաղաքի, ասին լինել և յայլ տեղիս մասունք ինչ 'ի բուն արենէ կողին ք̄ն̄ի. զոր մարթ էր յաւուր անդ խաչելութ̄ն հաւաքել սպընգաւ կմ հողախառն բառնալ յերկրէ՝ եթէ՛ զունկիանոսի և եթէ զոնկինոսի առ օրին հաւատացելոց, ոպ̄ և յովսեփայ և նիկոդեմոսի, և կմ յովհաննու աւետարանչի և մագդաղենացւոյն. թո՛ղ զի 'ի լու՛անալն զարիւնազանգ մարմին փրկչին՝ առ 'ի պատել և խնկել, ո՛չ արդեօք 'ի բաց թողին զայն լու՛ացումն արեան կենարարին. վ̄ն̄յ ոչինչ մ̄նայ տարակոյս առ իմաստուն քննիչս, թէ գըտեալն 'ի մանդու՛ա ն̄բ նշխար՝ էր 'ի ճշմարիտ արենէն ք̄ն̄ի, իրական՝ քան հրաշական։ Որ և գործեաց անդանօր ոչ սակաւ սքանչելիս ը̄ ժամանակս ժամանակս՝ ը̄ հաւատոց մերձեցելոցն 'ի նա. և եղև կրկին և երեքկին յայտնութ̄ն ն̄ր̄ զոյգ ը̄ մարմ̄նոյ սբ̄յն զունկինոսի՝ այսպէս։

Յամի ա̄ն 1044, բէատրիկէ կին բարեպաշտ՝ վոնիփակիոսի կոմսի 'ի մանդու՛ա, 'ի շնորհակալութ̄ի ա̄յ վ̄ն ծննդեան բարեյիշատակ զաւակին իւրոյ մաթիլդայ՝ սկիզբն արար շինել տալոյ զեկեղեցի յանուն ն̄բ̄յն անդրէի

ա-

առաքելոյ հանդերձ մենաստանաւ։ Կից էր եկեղեցւոյն այնմ հին հիւրանոցն կամ հիւ-ճանդանոց քաղաքին, ուր գտեալ էին վաղագոյն նախայիշատակեալ՝ ոբ նշխարք, բայց յերեսաց խառնակութեան պատերազմաց թաղեալ էին վերստին 'ի պարտիզի տեղւոյն, մինչև իսպառ յանծանօթս մնալոյ։

Եւ եղև յորժամ յամի 1049, 'ի նորաշէն եկեղեցւոջ անդ սբ՝յն անդրէի յաղօթս կայր ծեր ոմն երկիւղած՝ ադալբերտոս անուն յազգէ ալամանաց՝ պաշտօնեայ դրան կոմսին, երևեցաւ նմա ոբն անդրէաս երիցս անգամ 'ի զանազան աւուրս, և յայտնեաց նմ զտեղին՝ ուր կայր ծածկեալ պատուական արիւն քոյ. պատուիրելով ասել ցտիկինն, զի տացէ բրել զայն ինչ տեղի 'ի պարտիզին հիւանդանոցի։

Յայնժամ ըն ազդելոյ տիկնոջն՝ 'ի խնդիր եղեն ոբ գանձուն. և գնաց եպսն մարտիաղէս հանդերձ եպսակցօք և ամ ուխտիւ և մեծամեծօք քաղաքին 'ի տեղին, և մատոյց հանդիսապէս աղօթս առ ած. և ահա 'ի նմին ժամու սկսաւ շարժիլ հող տեղւոյն ըսքանչելապէս, և բուրեաց անտի հոտ անուշութեն. և իբրև բրեցին փոքր մի, գտին կամարս երկուս. և յորժամ բացին զնոսա մրճօք, 'ի միումն գտաւ տապանակ փոքրիկ կճեայ, յորում էր ոբ արիւն փրկչին և ըսպունգ. և 'ի միւսումն մարմին սբ՝յն ղոնկինոսի. զորս բարձեալ եպսաց 'ի վ՝ր ուսոց իւրեանց՝ բերին յաթոռանիստ եկեղեցին, և

հան-

հանգուցին 'ի մէջ դասուն. մինչև պատրաստեսցի տեղի արժանաւոր 'ի տաճարի սբ̄յն
անդրէի:

Եւ յայնմ հետէ հանդիսացաւ յոյժ 'ի մանդուա՛ ուխտ ջերմեռանդական առ ն̄բ արիւնն քն̄ի՝ երևելի երևելի հրաշիւք. մինչ զի և հայրապետն հռովմայ լևոն իններորդ եկն անձամբ 'ի մանդուա՛ յամի 1053. յերկրպագութի՛ փրկչական արեանն. և բազումս ջանացաւ բառնալ զայն և տանել 'ի հռովմ. բայց անհնար եղև մանդուա՛ցւոց թոյլ տալ այնմ. միայն թողացուցին, զի յետ օրհնելոյ անձամբ զնորաշէն տաճար սբ̄յն անդրէի, և զկնի հանգուցանելոյ անդ զմարմին ն̄բյն ղոնկինոսի և զն̄բ արիւն փրկչին, փոքր ինչ մասն 'ի պատուա՛կան արենէ անտի առեալ տարցի ը̄ իւր 'ի հռովմ. որ և եդաւ յեկեղեցւոջ սբ̄յն յովհաննու լատերանու:

Բայց քանզի քաղաքն մանդուա՛ցւոց բազում պատերազմունս կրեալ 'ի թշնամեաց՝ բազում անգամ և վտանգէր, ե՛պսն կոնոն յամի 1055, դարձեալ ետ թաքուցանել ը̄ երկրաւ զփրկչական արիւնն հանդերձ նշխարօք ղոնկինոսի՝ 'ի մէջ կամարաց և մարմարիոնեայ խորանի, զոր ետ կազմել վ̄ն սոցին իրաց. և այնպէս մ̄նաց 'ի թաքստեան ցդարս
երիս:

Ապա յամի 1304, յորժամ եկն յիտալիա կարոլոս արքայն բոհեմիոյ՝ առնուլ զպսակ կայսերութի՛ն, զտեղի կալեալ առ ժամանակ մի 'ի մանդուա՛ վառեցաւ տենչմամբ մեծաւ 'ի
տե-

տեսանել և 'ի պատուել երկրպագութ՟ զան-
գին արիւնն յ՟ի զծածկեալն 'ի վաղուց հե-
տէ. և առ հասանելոյ փափաքանաց իւրոց
առանց իրիք խռովութ՟ ը՟ իւր էառ դիշե-
րայն զոմանս 'ի մեծամեծաց և յեկեղեցա-
կանաց, և եկեալ հանդերձ գործաւորօք յե-
կեղեցի ն՟բյն անդրէի՝ ետ խորտակել և բա-
նալ զյատակ եկեղեցւոյն յաջակողմն աւագ
բեմին, ուր գիտէին լինել զն՟բ նշխարսն ըս-
տոյգ յիշատակարանօք և հաստատուն ա-
ւանդութ՟ ։ Եւ ահա գտան երկու շիշք,
յորս կայր ն՟բ և պատուական արիւնն տ՟ն,
և ն՟բ սպունգն. զորս տեսեալ թագաւորին,
և մեծարեալ համբուրիւ՛ երկրպագուե՝ ետ
անդրէն դնել 'ի տեղի իւր անթերի. ապա
հայեցել՟ և 'ի տապան ս՟բյն ղոնկինոսի՝ էառ
անտի զաջ բազուկն, և զմասն ուսոց կամ
գլխոյ ն՟բյն. և բերեալ զնոսին յ՟ ի՟ իւր՝ ետ
պարգև եկեղեցւոյն բրակացւոց. ուստի փո-
խադրեցան յամի 1645 յամրոցն քարլը շդայն.
ոպ՟ և մասն ինչ վաղագոյն բերեալ էր յամի
1587. յուլիսսիպոն ։

Իսկ այլ նշխարք՝ որք յանուն ն՟բյն ղոնկինո-
սի կամ ղունկիանոսի յիշատակին լինել 'ի
հռովմ 'ի զանազան տեղիս, թերևս իցեն
հարիւրապետին ղունկիանոսի ։ Ոպ՟ և 'ի սար-
դենիա գտաւ յամի 1626. ընդ երկրաւ ամ-
բողջ 'ի տապանի մարմին այլոյ համանուն
վկայի՝ արձանագրեալ. * Ե. Ա. (ա՟ երա-
նելի վկայն) ղոնկինոս, որ եկեաց ամս ծ՟,
հանգիցէ 'ի խաղաղուե՟, 'ի ժ՟գ Կ. (ա՟ կա-
ղան-

ղանդացն) դեկտեմբ" ‖ . զոր սարդենիացիք համարեցան լինել մարմին զոնկինոսի զինաւորի . և բերեալ Հանգուցին 'ի մայր եկեղեցին կալարիտայ , սահմանելով տօնել ըզգիւտ նշխարացն 'ի 19 . ապրիլի , և զնահատակուին 'ի նոյեմբ . 19 . որ է ժԷ կաղանդացն դեկտեմբերի :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք:

(1) Ասէինչ երկբայիմք , Թէ յունականն լծէինոս , և լատինականն լծէինոս , Թէպէտև ըստ առաջին և պարզ տառադարձութեանն ունէր գրել 'ի մէջ ընդէինոս , բայց ըստ վայելչութեանն հնչման կարէ և գրել ընկէինոս , ընկէինոս և ընկէանոս . զի և սքանչ են օտարքն 'ի կանոնաց լեզուիս . ոմք և անխտիր գտանեմք 'ի տօնացոյցս , 'ի յայսմաւուրս և 'ի Ճառընտիրս . Թուղ զն գրեալն 'ի Ճ . Ա . միշտ գինգէանոս , 'ի Բ . գրի միշտ ընկէինոս . ոմք և յայլ գիրս նաև ընկանոս . յորմէ երևի և անունն խնկանոս 'ի կիր ալեալ առ ոմանս , եթէ չիցէ հայերէն բառս խնկանոց : Ջայս յայն սակս յուշ արարաք , զի յայտնի լինիցի՝ Թէ որպէս և հանդիպեսցի 'ի գիրս , է մի և նոյն անուն . այլ Թէ մի իցէ կամ երկու անձն ընդ սովին անուամբ , Թուղ դատ արասցին ընթերցօղք հայելով 'ի կրկին վկայաբանութեանն՝ զորս եդաք . զի մի լինի մեզ յերկար զբաղեցուցանել :

Սկայն զայս Ծանուցանեմք , զի ուր բոլանդեանք զերկուս հարկաւորին դնել զոնկինոսս , մին հարիւրապետ՝ և միւսն զինաւոր , մեք որոշելոյ վերայ՝ հասարակօրէն ըզհարիւրապետան անուանեցաք զոնկիանոս , և զզինաւորն զոնկինոս : Եթէ գիտեաք , Թէ նաև նախնիք մեր երկու զոնկիանոսս կամ զոնկինոսս որոշեցին , կարօղ էաք ասել՝ Թէ անունն զուկիսնոսի քահանայի՝ որ կրկնեալ է 'ի տօնացուցն առընթեր աւետարանչաց , պարտի լինել զինաւոր կամ զօրական . ոմք և փոխանակ բասիլիսկոսի զօրականի երևի գրեալ 'ի մեզ բասիլիսկոս քահա-

նայ. ոտ՝ ասասցի յիւրում տեղւոջ. բայց քանզի ան-
մարթ է տիրապէս որոշել զխնդիրն, չէ արժան յերկ-
բայականէն ձեռնարկել զև՛ս երկբայականն։

Ապաքէն և լատինք իսկ՝ որք առաւել 'ի յետին դարս
հաստատեցին, թէ տօնեալն յինքեանց իցէ զինաւորն,
կասկածին՝ թէ չիցէ զանազանելի այն 'ի հարիւրապե-
տէն. զի ոչ միայն առ յոյնս տեսանեն տօնեալ զհարիւ-
րապետն ևեթ, որպէս և առ հայս, այլև զհին յայսմա-
ւուրս կամ զտօնացոյցս լատինականս տեսանեն նոցին
ձայնակից. զի 'ի հին օրինակս իւրեանց պարզապէս
գրի. * կատարումն սբ՝յն զունկիանոսի ||, կմ * զուն-
կիանոսի վկային ||, կամ * 'ի կեսարիա կապադովկիոյ
նահատակութ՝ի սբ՝յն զունկիանոսի ||. և ապա 'ի ժբ՝ կմ
'ի ժգ՝ դարէ և այսր գտանեն զայս յաւելուած, * որ
խոցեաց տիգաւ զկողս տ՝ն ||. Թերևս հաստատեալք 'ի
փրկչական արիւնն գտեալ 'ի մանդուա՝ որ գտաւ ընդ
մարմնոյ սբ՝յն զունկիանոսի կմ զոնկինոսի։

Բայց անաչառ խօսելով՝ որչափ ստոյգ է ս՝բ արիւն
փրկչին գտեալ 'ի մանդուա, նոյնչափ անստոյգ է՝ թէ
մարմին ս՝բյն գտեալ ընդ նմին, առ զինաւորն հայիցի՝
եթէ առ հարիւրապետն. Թող զմտացածին կարծիս ո-
մանց 'ի մանդուացւոց, թէ նա ինքն զինուորն 'ի կեն-
դանութ՝ի իւրում եկեալ 'ի մանդուա՝ քարոզիչ լեալ
իցէ և լուսաւորիչ նոցա, և անդ նահատակեալ. մինչև
իշխեցին յանուն հայրենեաց սբ՝յն նոր կապադովկիա
կոչել զմանդուա. և արձանագրել ևս յիշատակ այն-
պիսի 'ի սիւն կանգնեալ յանուն սբ՝յն. ա՝ որում գրէ
պոսսեւինոս յամի 1608, թէ * 'ի հրապարակին (ման-
„ դուայ) 'ի կոչեցեալն կապադովկիա՝ մօտ յեկեղեցի
„ ամենօրհնեալ կուսին, որ կոչի կռատարի, կայ սիւն
„ 'ի վաղուց կանգնեալ. յորում քանդակեալ են բանքս
„ այս. Զոնկինոս՝ որ տիգաւ զկողս քս՝ի եբաց, և զա-
„ րիւն նր՝ յերրորդ տմի նորին էած այսր, յայսմ տեղ-
„ ւոջ կապադովկիա կոչեցելում գլխատեցաւ առ ոկ-
„ տաւիոս դատաւորաւ, յիդոսն մարտի. (յամի տ՝ն)
„ 71. յաւուրս գաղբայ կայսեր ||։

Ուր յայտ է թէ յայտնի շփոթութ՝ի զոկտաւիոս դա-
տաւորն գամրաց, ա՝ կեսարիոյ կապադովկացւոց՝ զոյգ
ընդ զոնկինոսի զինաւորի բերեն 'ի մանդուա։ Եւ որ
զարմանալին է, բոլլանդեանք 'ի ցրելն զայսպիսի յայտ-
նի սխալանս յետնոց՝ ապաստան լինին յերկուս այլ վրի-
պակս. մի՝ զի զկապադովկիա յերկուս բաժանեն. յո-

ըստ՝ի միում ջհարիւրատարեան աւետն վկայէը, և՝ի միւսում ջվինաւորն, ոչ գիտեմ ջինչդ պինդ ուռնելով ջքան ուրուն անանուն յոյն վկայագրի, որ գրէ ջհարիւրատարեան. * եկն յիւր հայրենիս՝ի կատարածովիկա երկրորդ՝ մօտ՝ի տիւցանա՝ յաւուրն կոչեցեալ ադրալէս, և եբ- րայեցերէն ձայնեալ գաւրալէս. և՝ի բաց Թողեալ ըզ- հանդերձանս իւր՝ արածէր զոչխարս || . որ է ըստ յունական բանից խախտիսն, ուր չկ որոշումն առաջին և երկրորդ կատարածովիկոյ: Բայց թէև ընկալցուք զայդ, սխալեն բոլորանդեանք՝ի կրկնելն և յերեքկնելն, թէ ջերկրորդն ջոնկինոս զվինաւոր անգիտանան յոյնք կամ արևելեայք. զոր ոչ կարէին ասել, եթէ գիտէին՝ թէ՝ի ձառընտիրս մեր կայ վկայաբանութիւն նը, այն՝ զոր ինքեանք ունին լսանելոցն. և յայտ է թէ մերս Թարգմանիչ է՝ի յու- նաց կամ յասորւոց. ապա ծանօթ էին արևելեայք և վկ- նաւորն, բայց առաւել հանդիսացաւ ոս նն հարիւ- րատեան: Որ Թողից զայն, զի ինքեանք բոլորանդեանք երերեն զվկայութիւն սքին գերմանոսի յունաց պատրիար- գի՝ի ը գարս. որ՝ի տեսութիւնէ եկեղեցական պաշտա- մանց յիշէ զսիգաձև կարոցն, զոր վարեն յոյն քա- հանայք՝ի ձևել զսրբատուրծելի հացն, ուստի հանեն զբաժինն՝ որ բաշխելի է ի բերև մատն, ասէ. * փոխա- նակ գեղարդեան, որ խոցեաց զքո՝ի խաչն աս՝ի զոն- կինոսէ, այս է գեղարդն || : Եւ յայտ է Թէ սովին ան- տեառք ոչ իմանայ զհարիւրատեան, այլ՝ զվինաւորն.

Թէպետև երկոքեանն յունարէն լծնվինոս կոչին:

Ապա ասէ պատասխանեմ ասանդից մեծին խախտի- սն, որ է հեղինակ վկայաբանութիւնէ հարիւրատեանն, և արտաքոյ նոյնօրինակ սուտգ կարծեցեալ վկայաբա- նութիւնէ վինաւորին՝ որ ըստ ձառընտրացդ, կան և այլ ան- հարազատ պատմութիւնք՝ի վրայ մերոյն և միւսոյն ասէ- ելեայս և ասէ արևմտեայս. զորոց յերկար խօսին բոլ- լանդեանք. այլ մեզ չէ ինչ փոյթ զայնոսիկ բանից. մեք՝ի հարազատան ակնարկութիւնք, և եթէ կայցէ ինչ արժանի ծանուցանելոյ՝ ծանուցուք՝ի կարգի:

(2) Ջայս ձառ խախտիսն գտեալ բոլորանդեանց՝ի ձգել- մատեանն վարդիանեան գրատան՝ տպատրեն զոյն բնա- գիրն ասասանօր՝ի ը. մարտի. էջէա. 736. ոսկ և զվս- տին Թարգմանութիւնն ջէջէա. 386. և մեք՝ի յունէ ան- տիբատեցւոյ՝ հայելով և՝ի լատինն:

Ջատ ինքն զխախտիսն՝ զանուանի մեկնիչ գրոց և վեց յունաց, որ եհաս մինչև ցամ տեն նոքա 430, ը տարի.

շաւտակեն յոյնք ՚ի մարտի 28 :

(3) Լատին Թարգմանութեն իւսխւքիոսի աու քոլլեանդեան՝ չասեմ անհաւատարիմ, բայց լայնարձակ մեկնել պտանի յիւրս իրս • ըր աստանօր եդեալ է ըստ մոի, * կ՚ որ ուրացաւ, և կ՚ որ եղծող || • զոր մեք դիւրաւ իմանամք ՚ի Հարտար ձևս բանից հեղինակին, որ յուրացուած սակի ձևացուցանէ զԹողուչն աշակերտաց զիրն : Զինչ ասլս պարտ է ասել զօրինակէն սուրբիսի՝ որ է ընարձակ Թարգմանութեն մեծափրասանեալ ճեկնաբար ըօրինակոզի բանից իսխւքիոսի • մինչև մտեալ է և այսպիսի սխալ իմացուած, ոպ Թէ զուանկիանոս էր մի ՚ի ժողովարանէն հրէից, և կարգեալ հարկւբրատեա զօրաց • ուր ոպ իսխւքիոս, նոյնպէս և ամ հարք և մեկնիչք էնԹադրեն զնա հեԹանոս լինել, և գլուխ գնդի զօրականաց եղեալոյ ըստ ձեռամբ պետրոսի պռնտացւոյ դառաւորի • ոպ և ինքն զուանկիանոս էր ՚ի պռնտոսէ կապադովկիոյ :

(4) Ոչինչ անհաւանական դառին և բոլլանդեանք, Թէ հրէայք տուեալ էին կառչուս պիղատոսի ՚ի ապանեանել զՔն • բայց չէիշեն հաստատել, զի ոչ յիշի յաւետարան • այլ չէք տարակոյս՝ Թէ զօրուԹըն ոպ էին զայն ՚ի ձեռ աւետարանն • ըստ որոյ դնի և՚ ի շարականոցի մեբուամ • * ժողովեալ հրէիցն՝ կշռեցին արծաԹ բաղում, առեալ ոպրան աս պիղատոս ||, և՚ն :

(5) Մեռաւիր • փոկ անպարապուե Թշնամեաց, ՚ք անկարելի Թէ ակնածուե յերեսաց զուանկիանոսի, դնէ՝ Թէ լսացեալ նր զդաս նց՝ Թողու զգինուորսն • բայց պարտ է զերկուսին իսկ պատճառս միանգամայն լսանել ՚ի բանս խսխւքիոսի :

(6) Մեռաւիր • ըստ իւրսւմն հռետորական ոճոյ յաւելուած առաւնօր զայս ձև բանից • * խորհէին մեղմով ՚ի վր • հաստանել զուանկիանոսի, զի մի փախստեւսմբ զանձն • ապրեցուսցէ • և զայն ոչ գիտէին, Թէ նմա առաւել • փոյԹ էր ըմբռնիլ՝ քան ինքեանց ըմբռնել • քանզի • նմանօզ լինէր կամաւոր մահու նր, զոր տեսեալ ՚ի • խաչին՝ ած դառանեաց • և ըր քն վր մեր, նոյնպէս • զուանկիանոս վր քի մեռանելոյ ծարաւի էր ||:

(7) ՚ի զուր էր լատին Թարգմանչին այլափոխել զայսն բանքս՝ յայս ձև • * արդ զորդւոյ ըստ այմէ հօր տեառնէմ զփառս • արդ զանձառելն նորին հօր և ըր հոգ- էր բոլլանդեանց իշխել մուծանել փակագծիւ զինոյն

քացասրուԹիւն ի կարգ յաւետեան քնաքրին, որ ունի՝ տէր սէսանեայ ի բառական ԹարգմանուԹ մերում՝ վիրք գեղեցիկ իմաստ ։ յայտ զի և ինքեանք վկայեն, Թէ ի լատինն պիտեր դնել ասպատնի ժամանակ համառօտ յուշեականին ։

,, կաց իւրոց... և 'ի կատարել նր̄ զայսոսիկ ա̄մ բա-
,, րեպաշտութ̄ և իմաստութ̄՝ 'ի վ̄ր̄ եհաս և նիկո-
,, դեմոս, (և եղև գործակից 'ի պատել և 'ի թաղել
,, զտ̄րունեան մարմինն)...
,, Եւ իբրև մեկնեցան անտի յովսէփ և նիկոդեմոս,
,, քանզի բարեկամք էին և աշակերտակիցք՝ բաժանե-
,, ցին 'ի մէջ իւրեանց զնախաճառեալ հեղանիւթս իբ-
,, րև ժառանգութ̄ ազնուագին: Եւ այսպէս ժառան-
,, գութ̄ անգին իրացս փոխանցեալ 'ի հարց յորդիս և
,, 'ի բարեկամաց առ բարեկամս, զկնի հոլովման ամաց
,, բազմաց եհաս 'ի ձեռս պատրիարգին եէմայ ոտ̄ գանձ
,, եկեղեցւոյ, որոյ իշխան ճանաչի պատրիարգն, յամի
,, կենարարին 1247. որ և եթէ վ̄ս̄ վտանգի սբ̄ երկրին՝
,, զոր յայնժամ խիթային կորուսանել քրիստոնեայք, և
,, եթէ վ̄ս̄կ՝ զի զթագաւորն անգղիոյ քս̄ասէր յոյժ ճանա-
,, չէին, և զ̄ն̄ նր̄ ջերմագոյն 'ի քրիստոնէութ̄ (որպէս
,, արդարև իսկ էր 'ի ժամանակին), նա ինքն պատրի-
,, արգն՝ խորհրդով վիճակակցաց իւրոց, և վերակաց-
,, ուաց զօրու տաճարին և հիւրանոցաց, և այլոց մե-
,, ծամեծաց յարևմտեայց, որք ետուն վկայութ̄ ճշմար-
,, տութ̄, կմ դրոշմեցին զկնիքս իւրեանց, և կմ յղե-
,, ցին զհաստատութ̄ հրամանի, իմաստութ̄ արժան
,, համարեցաւ առաքել զայն գանձ պատուական արեանն
,, (գոնէ ը̄ մասին) առ բարեպաշտ թագաւորդ անգ-
,, ղիոյ

,, ղնոյ Աննրիկոս երկորդ. ղն ըբ ձեռամբ դորա արժա-
,, նաւոր պատուով մեծարեսցի և աներկեան պահես-
,, ցի. և զայն ոչ ՚ի չնորհս փոխարինաց իրիք հատուց-
,, ման, այլ զոհասրեաւտ կամօք անկեղծ սիրոյ չնոր-
,, հելով ||։

(3) Ի յիշատակարանս վատիկանեան նշխարաց՝ գրեալ կայր յամի 1454. ոմն և 1461, և 1489. * Բազուկ սբյն
,, յովսեփայ արեմաթացւոյ յարծաթի ամանի՝ հան-
,, դերձ ագցանօք ՚ի ձեռին յարծաթոյ ||։ Բայց քանզի
յետ այնորիկ յամի 1527, յաւար հարկանել բորբոնեանց
զհռովմ քաղաք՝ մերկացուցեալ էին յարծաթոյ և զալ
սբյն յովսեփայ, նմին իրի յամի 1550 և 1581. յիշի նշխարն
այն ոմն եդեալ ՚ի փայտեայ ամանի. մինչև վերստին ար-
ծաթապատ յօրինեցաւ յաւուրս կղեմայ ուրբերորդի,
որ նստաւ յամի 1592. վասն յիշատակագիրն այդր տար-
ադոյ ունի այսպէս. * Բազուկ արծաթի՝ ագցան ՚ի ձե-
,, ռին ունելով. յորում պահի պատուական ազ սբյն
,, յովսեփայ արեմաթացւոց աղնուական նախարարի,
,, որ զմարմին փրկչին մերոյ իջուցեալ ՚ի խաչէն՝ թա-
,, ղեաց ։ Ի մի կողմն պատուանդանին կան նշանակք
,, ուխտի տաճարին (վատիկանու). չինեցաւ բոլորն ար-
,, ծաթի առ քահանայապետութեբ կղեմայ ը. յայցելու-
,, թեան ||։

Բայց մի մասն սբյն ասի լինել ՚ի բոնոնիա յեկեղեցւոջ
սբյն յակոբայ. ոմն և մատունք ինչ ոսկերաց ՚ի մանդռա
և յայլ տեղիս. իսկ ամբողջ մարմինն ասի բերեալ ՚ի
գաղղիա, և անդ անյայտացեալ. զորմէ այսպէս գրէ
հռիքերիոս կրօնաւորը ՚ի սենոմէեան աբբայութէ ՚ի ժէ
դարու. * Ի ժամանակս մեծին կարոլոսի (յր ՚ի սկիզբն
,, ԺԹ դարու) այր ոմն աղնուական փորտունատոս անուն՝
,, առեալ ըբ իւր զմարմին սբյն յովսեփայ, որ Թաղեայն
,, զյր, խոյս ետ յերեսաց այլազգեաց՝ որք յայնժամ ա-
,, հերկին զյբ երկիրն. և հասեալ ՚ի մեզեան վանս (որ
,, ըբ մեջ սենոնեան և ստիճագեան վանից յալսացիա
,, գաւառի), անդ կալաւ զտեղի հանդերձ նշխարօք.
,, որ և յետոյ եղև աբբայ նոյն վանից ։ Ա յժ զկնի այ-
,, նորիկ (՚ի Ժ դարու) մարմինն այն սբյն՝ առ վատուե-
,, կանոնիկոսացն՝ որք ժառանգեցին զայն առ ջն, ՚ի ձեռն
,, օտարական կրօնաւորաց ումանց բարձեալ եղև գո-
,, ղութբ. և այնպէս զրկեցաւ վանքն այն ՚ի գանձէ
,, անոն ||։

Պատմի և մանաւանդ հրաշք արեմաթացւոյն ՚ի պատ-

մութեն կարգի դոմինիկեանց, թէ 'ի սպանիա 'ի զամբրեան վանս կուսանաց կորեաւ թերթ ինչ թղթոյ յոյժ կարևոր, որով վնաս մեծ լինէր ուխտին. մինչև 'ի հոգս անկանիլ ամենեցուն, և կանխել յաղօթս. յայնժամ մարիամ վասկոնէզ մելլեան՝ դիմեաց ջերմ հաւատով առ սովորական բարեխօս իւր յովսէփ արեմաթացի. և փութանակի եհաս 'ի դուռն վանաց այր ոմն ազնուական հեծեալ յերիվար ահիպարանոց՝ անծանօթ յամենեցունց. և իջեալ յերիվարէն՝ հրամայեաց կոչել առ ինքն զմարիամ վասկոնէզ. և 'ի գալ նր 'ի վանդակապատ պատուհանն՝ մատոյց նմա զթերթն խնդրելի. և ոչինչ այլ ասացեալ՝ մեկնեցաւ անտի. յորմէ յայտնի եղև զօրաւոր բարեխօսութիւն սբյն, որ և ինքն կարծի երևեալ:



ԵՐԿ.

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՏՕՆԻ

Սբ̄ կանանցն Իւղաբերից ։

Եթէ աստանօր միայն դնէին տօնացոյցք զսոսա, կարի վայելուչ դատէալ լինէր տօնել ընդ արէմաթացւոյն և ընդ ղուսկիանոսի. Բայց չանզի եդեալ կան նաև ընդ յովակիմայ և աննայի, յետին օրինակք 'ի բաց բարձին աստի. և փոխանակ այնր՝ ոմանք եդին լոկ այսպէս, * և չերցն ղաղարու ||, կմ̄ * և ղաղարու չերցն ||. և այլք այսպէս. * և բարեկամին չ̄ն ղաղարու, և կանանցն իւղաբերից ||. և յետին օրինակք, * և բարեկամին չ̄ն ղաղարու, և չերցն ն̄ր՝ (մարթայի և մարիամու) ||. որոց նշմարանք չկան բնաւին 'ի հին օրինակս. վ̄ն զի զղաղար ենթադրեն տօնեալ ընդ եօթանասուն և երկու աշակերտս, միանգամայն և յիշատակեալ 'ի նախընթաց աւուր ծաղկազարդի՝ այն է յարութի̄ ղաղարու որպէս օր տ̄րունական. իսկ զչորս ն̄ր իմանան 'ի կարգի անուանց իւղաբերից ։ Յայսոսիկ հայեցեալ մեր, զվարուց իւղաբերից՝ զորոց չիք առանձին պատմութի̄, հարևանցի խօսեցաք զկնի տօնի յովակիմայ և աննայի. իսկ զվարս մագդաղենացւոյն՝ որ էր պարագլուխ իւղաբերից, յայս տեղի պահեցաք. և զի խնդիր է անգիտելի, արդեօք նոյն իցէ սա ընդ մարիամու չեռն ղաղարու, միանգամայն աւանդեմք յայսմ վայրի՝ որ ինչ բանք են վ̄ն ղաղարու և չերց ն̄ր զոյգ ընդ մագդաղենացւոյն ։

ՎԱՐՔ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ

Սբ̄յն Ղ ազարու բարեկամին քն̄ի, և Քերց
նր̄ Մարթայի և Մարիամու, զոյգ ը̄
Մագդաղենացւոյն։

Հ. յունվար. 11. և Լ. դեկտ. 17. յաղագս ղազա-
րու։ Հ. ապր. 9. յղ. մար. և մարթ։ Իսկ յուլ. 16,
կամ 22. և դարձեալ. ապր. 9. և ճառընտ. Ռ. մձը̄.
և Զ. ճկ̄ղ. յղ. մագդաղ։ Լ. յուլ. 29. յղ. մար-
թայի։ Ձ. և Լ. յուլ. 22. մագդաղ։ Ռուլլանդեանն
սուլլերիոս. յղ. մարթ. 'ի ե̄ հատ. յուլ. էջ. 4 = 13.
և մագդաղ. 'ի ե̄. հատ. յուլ. էջ. 187 = 225։
Հռենալդոս՝ յամի. 1279։ Սուրիոս. և այլ։

ՏԱՆԿԱԼԻ ՏՈՒՆ, ԵՒ
ազգատոհմ երանելի, յոր սի-
րով հանգչէր ա̄ծն մարդացել̄,
'ի գիւղն ասեմ բեթանիայ՝ որ
թարգմանի տուն շնորհաց տ̄ն, հեռի յեէ̄մէ
իբրև ասպարիզօք հնդետասան. ուր բնա-
կէին երեքին հարազատք՝ սիրելիք յս̄ի, Ղ ա-
զարոս, և քորք նր̄ Մարթա և Մարիամ։
Որոց ծայրագոյն գովութի̄ բովանդակեալ
է ը̄ աւետարանին 'ի նմին իսկ սիրելուե̄ և
'ի բարեկամութե̄ տ̄ն, որ է ծագ. կատարե-
լութե̄. քանզի գրեալ է, * Սիրէր յս̄ զմար-
թա,

թա, և զքոյր՝ նը՝ զմարիամ, և զղազար ‖։
Եւ զո՛ր օրինակ քորք ղազարու նշանաւ սի-
րոյ յայտնեցին փրկչին զհիւ՛անդութի՝ եղ-
բօրն իւրեանց՝ յասել՝ ի ձեռն պատգամաւո-
րի, * Տէ՛ր ահաւասիկ զոր դուն սիրէիր
հիւ՛անդացեալ է ‖, նոյնպէս և յ՝ն նովին նշա-
նակաւ սեռն սիրոյ բարեկամութե՝ խօսէր
զղազարոսէ՝ յասել անդ ցաշակերտս իւր։
* Ղազարոս բարեկամ մեր ննջեաց։ այլ
երթամ, զի զարթուցից զնա ‖։
Այլ որ մեծն է՝ առ գորովական սիրոյն ար-
տասու՛եաց անգամ՝ ցնծութի՝ տիեզերաց
քս՝ ՚ի վ՝ր գերեզմանին ղազարու իբրև՝ ի վ՝ր
հարազատ բարեկամի և ընտանի սիրելւոյ։
մինչև ասել հրէից։ * տեսէ՛ք, ո՞րչափ սիրէր
զնա ‖։ Եւ նովին անպատմելի սիրով կոչեաց
զնա ա՝ծաբար ՚ի մահու՛անէ ՚ի կեանս՝ ո՛չ
միայն ՚ի լնուլ զխնդիր սիրելեաց իւրոց մար-
թայի և մարիամու, այլև ՚ի տալ ղազարու
բարեկամի իւրում վերստին կենդանութ՝ը
վայելել ՚ի սէր իւր, որ այն իսկ էր վայելել
և ՚ի սէր նը՝ միանգամայն։ զի սէր բարեկա-
մի ը՝ բարեկամի ճշմարտել՝ է ՚ի փոխադարձն
գոլ։
Ուստի ունիմք քաջ իմաստասիրել, թէ ա՝րն
մեր որ՝պս սիրէր զերեսին զայն հարազատս,
նոյնպէս և տու՛եալ էր նց՝ զկատարեալ սէր
սիրելոյ զնա։ ը՝ որում և արդիւնք գործոց
նց՝ յայտ առնեն։ Ա՝ն զի մարթա առ սիրոյ
երկնաւոր վ՝դպին այնչափ զբաղէր երբեմն
՚ի սպաս պատրաստութե՝ կերակրոց՝ առ ՚ի
պատ-

պատուհասիբելոյ զնա արժանապէս ըլ իւ-
րում կարի , մինչև Հարկ Համարեցաւ Տէրն
մեզմէ զառաւելութեն եռանդուն սրտի նը՝
խրատելով սակաւուք չատանալ յարտաքին
և՛ի մարմնաւոր պաշտօնս ածսիրուն գլխո-
վին , և նեղբնոյն և Հոգևորին առաւելանա-
ուշ ունել խնամով : Այլ զի չ՛ անպէտ և
արտաքինն , յայտնի կացոյց՝ առելովն . * սա-
կաւ ինչ պիտոյ է ‖ : Օ նոյն Հաստատեաց
տիրապէս՝ սիրով ընդունելով զիւնանգամ
ընդունելութեն մեծ , զոր արարին նմա զինչ
յարութեն զազարոս՝ և՛ տան սիմնի բորոտի
և՛ ի բեթանիա՝ վեց աւուրքըք յառաջ քան զպա-
տիկ չարչարանաց Տեն . ուր և՛ ի սպասաւոր կայր
մարթա , և զալար մի էր և՛ ի բազմէ լոց ըլ նիւ-
նակ մարեմանն յայտնագոյն ևս է յորդուն
սիրոյ առ երկնաւոր վիշապն՝ Հոգևոր փու-
թով առաւելեալ յամի . ոմն յորժամ առ ոտս
Տեն նստէր և՛ լսել զնծային վիշապութեն նորա
անյագ փափաքմամբ , մինչև մոռանալ ըզ-
մարմնաւոր պետոյիցս սպասաւորկութեն . և
զարձեալ յորժամ՝ և՛ բազմնկանն անգ բն-
թերեաց՝ որ և՛ ի տան սիմնի բորոտի , բերել
զշիշ իւղոյ նարդեան աղնուի մեծագնոյ՝
թափեաց և՛ գլուխ փրկչին , միանգամայն և
զոտս նր էօծ . զոր և Հերով իւրով մազերբ :
Այլ թէ որքան բարեհաճոյացան Տեն երկա-
քանչիւր գործոս այս յառաջագայեալք յա-
ռաւելուէ սիրոյն մարիամու , յայտ է՛ ի գո-
վելոյ և՛ ի զատագովելոյ զնա փրկչին յերկո-
սին իսկ նոճագս անզուգական գովուէ . ոմն

յա-

յառաջնումն ասէր առ մարթա. * Մարիամ
մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմա-
նէ ‖. և յերկրորդումն առ աշակերտսն.
* Զի՞ աշխատ առնէք զկինդ. դործ մի բա-
րի գործեաց դա յիս. յա̄մ ժամ զաղքատս ը̄
ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ը̄ ձեզ
ունիք: Արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ՝
առ 'ի թաղելոյ զիս նշանակեաց: Բայց ամէն
ասեմ ձեզ, զի ո՛ւր և քարոզեսցի աւետարանս
այս ը̄ ա̄մ ն̄, խօսեսցի՛ և զոր արար դա՝ 'ի
յիշատակ դորա ‖:

Եւ արդ՝ եթէ սովիմբք մարիամ տեսական
կենաց, և մարթա գործնականին եղեն գե-
ղեցիկ օրինակք, ապա և զսիրասուն եղբայր
նց̄ զղազար՝ երկոքումբք իմասցուք ճոխա-
ցեալ, ուր գիտեմք զնա սիրելի բարեկամ
քս̄ի կենօք և մահու. ը̄ որում և տիրասպան
քահանայապետք խորհուրդ արարին, զի և
զղազար սպանցեն. քանզի բազումք 'ի հրէից
երթային 'ի տեսութի̄ ղազարու, և նովին
հաւատային 'ի յս̄:

Բայց թէ զիա՞րդ, և ո՞ւր եղև կատարումն
սբ̄յն ղազարու և քերց նը̄, և թէ ա՛րդեօք
մարիամ քոյր ղազարու և մարթայի զանա-
զանիցի՞ կմ ոչ՝ 'ի մագդաղենացւոյն (1), պէս-
պէս են աւանդութի̄ք և կարծիք արևելեան
և արևմտեան մատենագրաց՝ նախնեաց և
յետնոց. զորս քաղեսցուք աստանօր մի ը̄
միոջէ՝ առանց ճգնելոյ վերածել 'ի մի միա-
բանութի̄, որ անհնարին դատել է առ հա-
մօրէն բանիբուն քննիչս:

Ա-ան

Աւանդութիւն արեւելեայց։

Յաղագս ղազարու բարեկամին քս̄ի, որ համարեալն է ը̄ ոմանց 'ի Թուն՛ոյ եօթանասուն և երկու աշակերտացն քս̄ի, և ը̄ ամենեցուն՝ եպ̄ս ձեռնադրեալ յառաքելոց, զայս ինչ յայտնապէս աւանդեն յոյնք՝ ը̄ նոսին և հայք, թէ վարք նր̄ և կատարումն գտաւ նշանակել 'ի վր̄ տապանի նր̄ գտելոյ 'ի կիտուն՛ան քաղաքի կիպրոս կղզւոյն՝ յաւուրս լևոնի իմաստասէր կայսեր որդւոյ վասլի արշակունւոյ։ Քանզի սա ինքն լևոն բարեպաշտ ինքնակալ՝ որ Թգ̄րեաց յամի տ̄ն 886 մինչև 'ի 911, շինեաց եկեղեցի գեղեցիկ և բազմածախ 'ի կոստանդինուպօլիս յանուն ս̄բյն ղազարու հանդերձ մենաստանաւ։ Եւ եղև իբրև կատարեաց զշինուն՛ածն, և ետ օրհնել զտաճարն և արար մեծ նաւակատիս, յայնժամ հրեշտակ տ̄ն երևեալ Թագաւորին 'ի տեսլեան՝ ասէ ցնա. առաքեա՛ 'ի կիպրոս կղզին 'ի քաղաքն կիտուն՛ան, և գտցեն ընդ հողով ծածկեալ տապան մի՝ յորում եդեալ է ղազարոս բարեկամն քս̄ի. և բերեալ դիցես յեկեղեցին՝ զոր շինեցեր յանուն նորա. զի հրաման եղև յա̄յ՝ յայտնիլ նշխարաց նր̄։

Եւ զարթուցեալ՝ յոյժ ուրախ եղև արքայն. և պատմեաց պատրիարգին և ա̄մ աւագանւոյն զերևումն հրեշտակին. և առաքեաց փութով արս ընտիրս 'ի սպասաւոր իշխանացն,

նացն, որք գնացեալ գտին 'ի նշանակեալ տեղւոջ զմարմարիոնեայ տապան մի. յորոյ վը փորագրեալ էին բանքս այսոքիկ.

* Այս է ղազարոս բարեկամն յն՝ի չորեքօրեայ մեռեալն, և յարուցեալն 'ի մեռելոց. և յետ իջման հոգւոյն ն՝բյ 'ի վերնատունն՝ ե՝պս լեալ յառաքելոցն ն՝բց, եկն 'ի կիտու՛ան քաղաքս կիպրոսի. և քարոզեաց աստ զքն՝. մեռաւ խաղաղուբ՝ յետ ժե՝ տարւոյ յարութե՝ն իւրոյ։ Եւ որչափ եկաց 'ի վը՝ երկրի կենդանի, ո՛չ ծիծաղեցաւ՝ վն՝ առաջին հոգէվարին։ Եւ յորժամ փոխեցաւ 'ի կենցաղոյս, եդաւ յայսմ տապանի ‖։

Ո այս տապանագիր ընթերցեալ իշխանաց կայսեր, լցան խնդութբ՝. և իբրև բացին զտապանն, բուրեաց հոտ անուշուե՝. և եղև բազում ցաւոց առողջութի՝. ը՝ որ հիացեալ՝ փառս ետուն ա՝յ։ Եւ հանեալ զպատու՛ական մարմին ն՝բյն 'ի մարմարիոնեայ տապանէ անտի՝ եդին 'ի կազմեալ տապանակ փայտեայ, զոր ինքեանք ունէին, և առեալ տարան ուրախութբ՝ մեծաւ։ Եւ եղև 'ի հասանել ն՝ց 'ի կոստանդինուպօլիս՝ ելին ա՝մ քաղաքացիքն, և թագաւորն մեծամեծօք իւրովք ը՝առաջ ն՝բյն անպատմելի ցնծուբ՝ խընկօք և մոմեղինօք, և հանդիպել՝ ն՝բյն երկրպագութբ՝ մեծաւ պատու՛ով տարեալ հանգուցին յեկեղեցին իւր. և բազում ախտաժէտք ընկալան զառողջութի՝ ցաւոց իւրեանց 'ի նշխարաց ն՝բյն ղազարու, որք հաւատով և

սրբուհի՛ մեղմեցուցին՝ ի նոա։

Նոյն ժամուն քեռին զաղարու չիք յիշատակ՝ ի քա-
սելեան յայտնութիւնս յոտնաց • այլ միայն՝ ի քա-
ժամադիրս նոյ՝ ի մարտի • 18 • լինի յիշատակ
օծանելոյ մարխամու քեռն զաղարու զոտանց
յեկեղեցիսն, և մաքրելոյ տերուէ։ Նոյց
՝ի յայտնութիւնս մեր յատկելի 9 • զրի այսպէս •
* Նոյն մարիամ և մարթա քոյրքն զաղարու
հանդերձ զաղարին եղբարքն իւրեանց հա-
նածեցան՝ ի սաղոսկեցւոցն, և աքսորեցան
(կիւտահիա)՝ ի յոտպէ • ուր զտաբէ-
թացն մնուցին և ուսուցին • և նոքա անդ կա-
տարեցան ‖ ։ Ոսոյն կարծի զաղարոս նաւել
՝ի կիպրոս ըստ նախադրեալ պատմութե • կի
եթէ յարևմտեայս կոյս և քորք իւր՝ ըստ այ-
լոյս պատմութե, զոլոմէ զինի ։

Անոյ յառաջ քան զաւետումն արևե-
լեայց յաղագս մարիամու մագդաղենացւոյ,
զոր ոմն լինել սահեն՝ ի մարեմայ բեթանիա-
ցւոյ՝ որ քոյրն էր մարթայի և զաղարու • քայց
միանգամայն երևի ինձ նոյնացուցանել ։ Կան-
զի յայտնութիւնքն յոտնաց գրե այսպէս ։ * Ա՛ա
ընաւ մագդաղենացին էր՝ ի մագդալայ լե-
ռանցն ասորւոց • սա չարչարեալ յեսուին դե-
՝ւաց՝ ըժշկեցաւ՝ ի քէն • և ի նա այսպիսի քա-
րեպարտութե զՀեսո երթեալ նը՝ եղև աշա
կերտուհի նորին • և առաջին տեսօղ եղև
յարուե՝ ի բերելն զինուղս ի միւս մարեմայ •
զի յերեկոյն շաբաթուն (որ յանգստանել շա-
բաթուն) եառեալ զՀրեշտակն • և ըստ առաւօտն
տակս •

տակս. և դարձեալ զնոյն ինքն զտ̄րն. զոր և
պարտիզպան կարծեցեալ՝ լուՀաւ 'ի նմանէ,
թէ մի՛ մերձենար յիս։ Ապա յետ համբարձ-
մանն քս̄ի գնացեալ յեփեսոս առ ա̄ծայինն
յովհաննէս առաքեալ և աւետարանիչ՝ անդ
սրբուբ̄ ննջեաց. և եդաւ 'ի մուտս այրին,
ուր ս̄բ և երանելի եօթն ննջեցին մանկունք։
Իսկ յետոյ առ լևոնիւ՛ ամենիմաստ արքայիւ՛
բերեալ եղեն նորին ս̄բ նշխարքն, և եդան
'ի վանս ս̄բյն ղազարու՝ որ կառուցաւն 'ի
նմանէ ‖։

Օ նոյն է տեսանել և 'ի յայսմաւուրս հայոց
'ի զանազան տեղիս, բայց հանդերձ քանի
մի յաւելու՛ածովք. նախ՝ թէ * սա այն պոռ-
նիկ կինն է, որ օծ զոտսն յս̄ի անոյշ իւղովն
'ի տուն փարիսեցւոյն (սիմոնի) 'ի նային
քաղաքի. և յայնմ օրէ թողան մեղքն բա-
զում սմա, և աշակերտեցաւ յս̄ի ‖. և դրձ̄լ՝
թէ * նա օծ զտ̄րն 'ի տունն սիմոնի բորոտի
('ի բեթանիա), և ընկալաւ զթողութիւն
բազմամեղ յանցանաց իւրոց. զի պոռնիկ
էր ‖։ Երկ̄դ՝ թէ յետ յարութ̄ե և համբարձ-
ման տ̄ն՝ * կայր միշտ 'ի սպասաւորութի̄ ս̄բ
ա̄ծածնին. և 'ի քարոզութի̄ ս̄բ աւետարանին
առաքելաբար շրջէր և քարոզէր զքս̄. և յետ
ժամանակաց գնաց յեփեսոս առ աւետարա-
նիչն յովհաննէս. և անդ ճգնեալ ընդ նմա
մ̄ծաւ ճգնութ̄բ՝ հանգեաւ 'ի քս̄ խաղաղու-
թ̄ բ ‖. բայց այլուր ասէ, թէ * Եկաց 'ի ըս-
պասաւորութի̄ ս̄բ ա̄ծածնին. և յետ փոխ-
ման ս̄բ կուսին բազում չարչարանս կրեաց 'ի

հրէիցն վ՚ն քաբոզե՛լոյն զք՚ն. և ՚ի նոյն կա-
տարեցաւ յագարակին մագդաղեայ՝ մօտ ՚ի
նազարէթ ‖ : Ե՛ր՚դ՝ զի ՚ի վ՚ր՚ բերէ. * Իսկ
միւս մարիամն մագդաղենացի կատարեցաւ
չարչարանօք հեռի յե՛էմայ. Հ. ասպարիսօք ‖ :
Ուր տեսանեմք, զի առաջին մագդաղենա-
ցին ծանուցեալն յամենեցունց՝ ը՚ն իմիք որոշ
աւանդի, և ը՚ն իմիք անորոշ և խառն :
Որոշագոյն և ս թու՛ին բանք Ճառընտրաց մե-
րոց, ուր բնաւ չխառնի մագդաղենացին ո՛չ
ը՚ն քեռն զազարու, և ո՛չ ը՚ն կնոջն մեղաւորի.
այլ պարզապէս և վայելչապէս գրի օրինակ
զայս. * Յաղագս ն՚բյն մարիամու մագդա-
ղենացւոյ՝ հետևողի ն՚բ առաքելոյն յովհան-
նու աւետարանչի : Ս՚բ աղախինն ք՚ն՚ի մա-
րիամ էր ՚ի սահմանաց մագդաղենայ ասոր-
ւոց : Եւ յորժամ ծագեաց լոյս ա՚ծուե՛ ք՚ն՚ի
ը՚ն Ծս ա՚մ, յորս մարմնով շրջեցաւ բարի առ-
նել և բժշկել զհիւ՛անդս, և ՚ի մարդկանէ
հալածել զդևս, մարիամս այս վտանգեալ
՚ի բազում դիւ՛աց. և յորժամ լու՛աւ զք՚ն՚է,
եկն անկաւ առ ոտս նորա, և առժամայն
բժշկեցաւ. և այնուհետև պաշտէր զք՚ն՝ ա-
շակերտելով զկնի ն՚բ առաքելոցն. որպէս և
ղուկաս պատմէ յաւետարանի անդ սրբումն,
եթէ յորս էր մարիամ մագդաղենացի՝ յորմէ
եօթն դևն ելեալ էին. և աննա կին քոզայ
հազարապետի, և շուշան, որք պաշտէին զնա
յընչից իւրեանց :
Մարիամն այն ականատես եղև չարչարա-
նացն ք՚ն՚ի և խաչելուե՛ն, ուր ասէ՝ թէ էին
կա-

կանայք որ հայէինն։ Եւ այլ ոմն 'ի հոգեկրացն երգէ, թէ կալով առ խաչին երկնից բարձողին՝ մինն մայր նորին ըստ մարմնոյ, և մինն մագդաղենացին, կոծէին 'ի սիրտս իւրեանց և հառաչէին. մանաւանդ յորժամ լուան 'ի քս՝ թէ ծարաւի եմ, 'ի սիրտս իւրեանց խորովէին. և առ յօժարութ՝ ոգւոցն, թէ հնար էր, ոչ միայն բաժակաւ ջուր մատուցանել, այլև զյորդանան գետն առ խաչիւն անցուցանել. և ոչ էր ձեռնհաս. միայն կոծելով զկուրծսն՝ մահակից լինէր քս՝ ։ Եւ 'ի գերեզմանն նա էր առաջնորդ իւղաբերից ՝ն՝ կանանցն, որք բերին զանոյշ իւղն և զխունկն՝ 'ի խնկել զտ՝րունոյն մարմինն. և նա լրտեսէր խիզախելով առ պահապանսն. քանզի այն ինչ պառաւ էր՝ քաջահաւատ և ՝ն՝ ։ Եւ 'ի յարութ՝ն՝ քս՝ի նա նախ լուաւ 'ի հրեշտակէն զաւետիս յարութ՝ն՝ ։ Եւ յորժամ պետրոսեանքն ղօղեալ թաքչէին, նա համարձակ շուրջ զգերեզմանաւն փարէր, մինչև ետես զքս՝. և բուռն հարեալ զոտիցն տ՝րունական՝ հրաման առնու առաքել՝ առաքելոցն լինել, և հետևօղ առաքելոցն 'ի քարոզութ՝ի՝ ՝ն՝ աւետարանին ։ Իսկ յետ համբարձմանն տ՝ն անցեալ գնաց յեփեսացւոց գաւառն. և եկեալ առ յովհաննէս աւետարանիչն՝ բազում և մեծամեծ առաքինական ճգնութ՝ի՝ հանգեաւ 'ի քս՝, 'ի յուլիսի ի՝գ ॥ ։ Ցայս վայր ճառընտիրք մեր. թողից զբանս հարց և վ՝դպաց, յորս են որ մի, կմերկու, եւս և երեք և չորս մարիամ քաղեն 'ի բա-

նից աւետարանի. զի այդ մեկնչաց է անկ. մեզ շատ լիցի յառաջ բերել զպատմական աւանդս:

Աւանդութիւն արեմտեայց:

Ի հնուիս հռովմայեցւոց և այլոց եւրոպացւոց չիք ինչ աւելի բացայայտագոյն՝ քան զոր նշանակեցաք ըն յունաց և ըն հայոց. բայց 'ի տասներորդ դարէ և այսր՝ մանաւանդ յերեքտասաներորդէ, տեսանեմք գրեթէ յամ վկայագիրս լատինացւոց առանձին իմն աւանդութիւն, թէ ղազարոս և քորք նր մարթա և մարիամ, զոր նոյն համարին ըն մագդաղենացւոյն և ըն կնոջ մեղաւորի, հալածեալք 'ի հրէից վ՚ս անուանն քս՚ի՝ հանդերձ մաքսիմինոսիւ, որ էր ասեն 'ի թուոյ հբ աշակերտաց, և մարկեղաւ նաժշտիւ, եդան 'ի նաւ մի անղեակ և անթի և անառագաստ, և վարեցան 'ի խորս ծովու, զի վտանգեալ կորիցեն: Բայց խնամօք տն ելին նք անվնաս 'ի մասսիլիա, որ և մարսիլիա քաղաք 'ի բրովինցիա գաւառ գաղղիացւոց. և սփռեալ յայն ծ՝ քարոզեցին զքս, մինչև փոխեցան առ տր 'ի կողմանսն յայնոսիկ. ղազարոս ասի լինել եպս մասսիլիացւոց, և մաքսիմինոս՝ ակուացւոց: Ոմանք յաւելուն, թէ ըն նս էին և մարիամ յակովբայ, և սողոմէ. և այլք՝ թէ նաև յովսէփ արեմաթացի, որ էանց ասեն 'ի բրիտանիա, և անդ կատարեաց զընթացս իւր:

Զայս

Զայս եդեալ՝ ճոխագոյն եւ աւանդութիւն՝ 'ի մէջ բերեն վ՚ս մարիամու մագդաղենացւոյ՝ 'ի յայտնութիւն իմեմնէ, որ հանդիսացաւ զկնի գիւտի նշխարաց ն՚ր յամի տ՚ն 1279. 'ի դեկտեմբերի 9. օրինակ զայս։ Կարոլոս իշխանն սալերնայ, որ յետոյ եղեւ արքայ սիկիլիոյ, եկեալ 'ի բրովինցիա գաղղիացւոց՝ գտանէ զմարմին սբ՚յն մարիամու մագդաղենացւոյ 'ի մատռանն աւանի սբ՚ մաքսիմինոս կոչեցելոյ, (ուր թաղեալ էր ձեռամբ մաքսիմինոսի նախաճառեալ ե՚պսին ակուՀացւոց,) բուրմամբ անուշահոտութիւն եւ պէսպէս սքանչելեօք հանդերձ. յորոց սակի էր եւ այն, զի 'ի լեզուՀէ սրբուհւոյն՝ որ կայր դեռ 'ի տեղւոջ իւրում, վերաբուսեալ կայր տունկ որթոյ բազում շառաւիղօք։

Գտաւ 'ի տեղւոջն եւ մագաղաթ հին, յորում գրեալ էին բանքս այս. * Յամի տ՚րունեան ծննդեան 716 (կմ 700. 'ի ժ՚ղ աւուր) յամսեանն դեկտեմբերի, 'ի թագաւորութիւն ոդոյիկոսի բարեպաշտ արքային փռանկաց (այն է ը՚ն ոմանց դուքսն ակուՀիտանիոյ), 'ի ժամանակի արշաւանաց եւ հարստահարութեաց սարակինոսաց, գաղտ 'ի գիշերի փոխադրեցաւ մարմինս այս ցանկալի եւ պատուՀական երանելոյն մարիամու մագդաղենացւոյ 'ի տապանէ անտի իւրմէ եղենգնաքարէ յայս տապան մարմարիոնեայ առ ահի բարբարոս ազգին. զի առաւել անքոյթ է յայսմ վայրի॥։

Զայսոսիկ տեսեալ կարոլոսի իշխանին՝ ետ

շինել 'ի յաջորդ ամի 1280. տապանակ ոս-
կիաձոյլ և ականակապ, և անդ զետեղե-
ցոյց զպատուական մարմին մագդաղենաց-
ւոյն մեծահանդէս փառօք. ոպ̄ և զգլուխն
եդ յայլ տապանակ մեծ. և շինեալ 'ի տեղ-
ւոջ անդ յաւանն սբ̄յն մաքսիմինոսի վանս
միաբանակեցաց 'ի կարգէ քարոզչաց՝ 'ի նց̄
ձեռս յանձն արար զայն գանձ նշխարաց մագ-
դաղենացւոյն: Եւ ահա 'ի նոյն ուխտի դը-
տաւ զկնի երկուց դարուց և մատեան յիշա-
տակի ո՛չ միայն վ̄ն այսր գիւտի նշխարաց,
այլև վ̄ն ա̄մ աւանդութ̄եց եղելոց զմագ-
դաղենացւոյն. զոր և 'ի մէջ բերէ երևելի
քարոզիչն 'ի կարգէ անտի դոմինիկեանց՝
սեղբեստրոս մոզոլին պրիէրացի, այն՝ որ
զառաջինն գրով յաղթահարեաց զլութեր
աղանդապետ, և վախճանեցաւ յամի 1523.
արդ այս բանք են նորա 'ի գիրսն ոսկեվարդ
կոչեցեալ:

* Յամի ա̄ն հազարերորդի չորեքհարիւրե-
րորդի իննսունև եօթներորդի՝ յորժամ յայց
ելի ուխտագնացուբ̄ 'ի տես այրին, յորում
ապաշխարեաց սրբուհին մարիամ մագդաղե-
նացի, և պատուական նշխարաց ն̄ր՝ որ 'ի սբ̄
մաքսիմինոս, ցուցաւ ինձ բազում անգամ ն̄բ
և պատուական գլուխ ն̄ր, մեծ յոյժ, և բո-
վանդակն յա̄մ կողմանց մինչև 'ի բերանն
մերկեալ 'ի մորթոյ, բաց 'ի մասնէ անտի
ճակատուն՝ յոր մերձեցոյց փրկիչն բոլորից
զձեռն իւր (յասել անդ, մի՛ մերձենար յիս):
Քանզի յայնմ մասին ակն յայտնի երևի
մորթ

մորթ՝ի գոյն եթէովլպացւոյ կամ մարմնոյ՝ի վաղուց սպանելոյ, և՝ի մորթն յայն երկու փոսք երկուց ծայրից մատանց. յորոյ մին՝ք զմիւսն և աւելի յայտնի և խորագոյն, և ըմորթովն միս սպիտականիշ։ Յուցեալ եղեն և յապակի շիշ՝ հերք նր, ոչ ամն, այլ որովք զոտս քոխ մաքրեր. և շիշ մի այլ՝ լի հողով, որոյ գոյն հարկաներ ըստ կարմիր և ըստ թուխ. զոր՝ի մեծի ուրբաթուն հաւաքեալ՝ի ստորոտե խաչին երանելի մագդաղենացին։ Այս այն՝ ոչ ամենեքին առանց ըստ բանս լինչ ածելոյ պատմէին լինել, ամի ամի յաւուր աւագ ուրբաթու՝ի կարդացման չարչարանացն՝ յայտնապէս եռալ սկսանի, ոչ թէ արիւնն երևիցի անդանօր յեռանդն հարկանիլ. և թէ զնաթրդ պարտ լոցէ իմանալ զայս, այլուամ տեղւոյ թողլի է։ Տեսի և զբազուկն նր՝ մեծ և մոմագոյն. իսկ զոսկերսն ամփոփեալ յարծաթի տապանակի չկարացի տեսանել։ Յուցին լինել և զշիշն նարդեան ազնուի մեծագնոյ՝՝՝ի մասսիլիա յեկեղեցւոջ սքեան վիկտորի։ Այս՝՝՝ի հետագօտել իմումդ զգուշութիւն ստուգուն ամի այսորիկ, գտի ժամանակագրութիւն ըստ օրինակիս ըստ այսմիկ։

„ Արտաքս արքայն սիկիլիոյ երկրորդ, որ և կոմն քրովինցիոյ, յամի տեն իբր 1279, ՝՝՝ի նաւականն պատերազմ եղեալ ընդմարքային արագոնացւոց՝՝՝ի պարտութիւն մատնեցաւ, և եղև ձերբակալ. և յոդիս ապաստան՝ արգելաւ՝՝՝ի դժնդակ բանտի՝՝՝ի քարկինոն։ Այս այն լինչ անյոյս լեալ յամ մարդկեղէն հնարից՝

մնայր շնչել 'ի մօտոյ զշունչն յետին, հայր խոստովանութե՛ նր̄ դու՛ իլիելմոս վ̄դպ տոնայեան 'ի կարգէ քարոզչաց՝ խրատ ետ նմա կարդալ յօգնութի՛ զմագդաղենացին, որոյ քարոզեալ էր զբան տ̄ն յերկրի անդ տ̄րուե՛ նորա, և ապաշխարութ̄ վախճանեալ. և նա հաստատուն ապաւինութ̄ յարդիւնս նորուն՝ յանձն արար նմա զինքն պահօք և խոստովանութ̄ և արտասու՛օք։

Եւ ահա յաւուր անդ հսկման տօնի երանելի մագդաղենացւոյն՝ 'ի մէջ գիշերի եկն եկաց առ նմա ոմն տիկին հրաշագեղ, և քաջահնչօղ ձայնիւ՛ կոչեալ յանու՛անէ զկարոլոս՝ ասէ. լսելի եղեն աղօթք քո, արդ յարուցեալ ե՛կ զկնի իմ։ Եւ յաղաչել նր̄ նաև վ̄ս բովանդակ տան իւրոյ 'ի գերութի՛ վարեցելոյ, ասէ. դու ե՛կ զկնի իմ, և զքո կնի եկեսցեն քոյքդ առհասարակ. և եղև այնպէս։ Իսկ յետ սակաւուց՝ իբրև սուղ մի յառաջ խաղացին, զտեղի կալաւ տիկինն. և յայտնեալ զանձն՝ թէ ինքն իսկ է մագդաղենացին, առ որ կարդաց կարոլոս, ասէ ցնա. գիտիցե՞ս արդեօք՝ թէ ո՞ւր իցես այժմ։ Եւ սա ասէ. թէ չխաբիմ, տակաւին կամք 'ի մէջ պարսպաց բարկինոնի։ Իսկ նա ասէ. խաբիս. զի այժմ կաս 'ի մէջ սահմանաց իշխանութե՛ քո, և մօտ 'ի նարբոնա միով ասպարիզաւ. (ուր ը̄ բարկինոն և ը̄ նարբոնա է երեքօրեայ ճանապարհ, և երեսուն փարսախ, ևևս աւելի)։

Յայնժամ յարտասուս հարաւ կարոլոս, և ասէ.

ասէ . զի՞նչ եիցէ ընդ ինձ զեղ հատուցանել
հնար եցէ ինձ ի սիրուհի փոխան այսպիսի
երախտեացդ : Այլ նա ասէ . ես ցուցից քեզ .
արդ գիտեա , զի՛ հասանել երբեմն պատե-
րազի՝ բարձին զմարմին իմ՛ ի գերեզմանէ
իմմէ , և զայլ մարմին եդին՛ ի տեղւոջն . զի
խաբեսցին թշնամիք՝ եթէ կամիցեն բառ-
նալ զիմ մարմին . և այնպէս եղև . վճռ տա-
կաւին պահին ընդ արք իմ , զի օտարքին ա-
կեղք բարձան փոխանակ իմոց . արդ երթ՝
ջի՛ր յայս նիշ տեղի , և գտցես զայն այսու
նշանաւ . զի կայ անդ տունկ որթոյ , զոր
խուզարկեաւ մինչև ցարմատն՝ տեսցես զայն
քղխեալ՛ ի բերանոյ իմմէ . անդ է գլուխ իմ՝
մերկիկ ողջոյն՛ ի մորթոյ , բայ՛ ի մատանէ ան-
տի մոյ՝ յոր մերձեալ՛ ի պարտիզն փրկիչն
ձի , ՛ի կամիլ իմմուժ՝ բուռն հարկանել զգար-
շասարսայ նէր : Երթ՝ աւր կորեան , քայ յո-
րոց մերձեցանն յոտս քոյ յիւ : Այս գլխով
իմով կայ շիշ մի հողով լի , որ թանձաւեալն
է՛ ի քոյ արեանէն , զոր առ խաչիւն ժողովե-
ցի . և զայս ժամանակս՝ զոր կեցի , պահեցի
՛ի յիշատակ ինն իմոյ : Յորժամ զայս աւր
գտանիցես , արժանաւոր պատուով՛ ի վեր
առնուցուս , և զտեղի հանգստեան իմոյ և
ապաշխարութեես տայցես եղբարց իմոց քա-
րոզչաց , քանզի և ես քարոզուհի և առաքե-
լուհի էի . և ուխտի առելոյն՝ ուր եղև իմ
վախճան , հաւս սահմանեաջիւր վն եղբարց
հարիւրոց , զի հանապազ փայլեսցէ անդ
վոյթ հաւատոյ . և զայս առեալ՝ եղև
ան-

աներևոյթ : Իսկ նա ընդ լուսանալ աւուրն տեսեալ զնարբոնա, 'ի տեղւոջն՝ ուր մեկնեցաւ 'ի նմանէ մագդաղենացին, հրաման ետ խաչ կանգնել. որ և ցարդ կոչի խաչ ասպարիզի. և եկեալ 'ի ս̅բն մաքսիմինոս՝ եդիտ զա̅մն կարգաւ, և կատարեաց զհրամայեալսն....

Այլ զի բանս բուռն եհար զմագդաղենացւոյն, յառաջ բերից և այլ ինչ ինչ՝ զոր ընթերցեալ է իմ... Բանզի յամի տ̅ն 1370, այր ոմն վաճառական յերկրէն տոսկանայ յայց ել ուխտիւք յայրն՝ ուր մագդաղենացին ճգնեցաւ. և զի յոյժ էր վառել̅ ա̅ծային սիրով... 'ի դառնալ իւրում 'ի հայրենիս՝ յօրինեաց զանցս ճանապարհորդութ̅ե իւրոյ ոտանաւոր բանիւք յ̅ծիկ բարբառ, գեղեցիկ և ճշգրտապատում ստորագրելով ըզտեղիսն և զնշխարսն ա̅մ, որ 'ի ս̅բն մաքսիմոս, 'ի մաստիլիա, յարելատ, յաւենիոն և յայլ մերձակայ տեղիս, ոչինչ ը̅հատ յորոց մեքս տեսաք աչօք մերովք : Արդ ո̅պ վկայէ դա, յառաջիկայուն̅ իւրում յայտնեաց՝ զոր միանգամ ունիմ գրել 'ի կարգիս, եղբայր եղիայն 'ի կարգէ քարոզչաց, որ զամս ութսուն և վեց ծառայել̅ էր մագդաղենացւոյն 'ի ս̅բ այրի անդ... քանզի այն ինչ խորհէր մեկնիլ վաճառականն յայրէ անտի, երանելի հայրն եղիա ասէ ցեղբայրն, որ ունէր զձեռանէ ն̅ր առ ծերութ̅ն. տարցե՛ս զիս յիմ տեղին, զի զգաղտնիսն ա̅յ կամիմ յայտնել՝ զոր լռեցի. և տեղի իւր կոչէր զայն

վայր՝

վայր՝ յորում սովոր էր յաղօթս կալ յայրին՝ ի վէր վիմի, ուր գիշերային հանգչէր մագդա-
ղենացին։

Ոյր մի արժան է գիտել, զի լեառն մի է՛ի լրովինեայս՝ որ ունի յարևելից վերից, յա-
րևմտից զմասսիկա, ի հարաւոյ գծով, և ի հիւսիսոյ զաւերին, ամբարձեալ՛ի բարձ-
րութենի երեք մղոնաչափ. և ունի քաշ ինն կամ կատարս քարեղէն՝ ձգեալ յարևմտից
յարևելս ցտասն մղոն և ևս աւելի. որ այն պէս երևի յարևմտեան կողմանէ, որպս թէ
պարիսպ ընդարձակ կարծել. զի գրեթէ հան-
գոյն երկուց բարձրաբերձ աշտարակաց ամ-
բարձեալ կայ։ Ի ստորոտս սպառաժիդ կայ քարանձաւ վերամբարձիկ՝ իբրև քարընկէց
մի մեծ, մանաւանդ թէ կարի յոյժ մեծ, հնոցանձև, և բերան նր ընդ արևմուտս։ Ռա-
ջի բերանոյ քարայրին է միջոց ինչ անձուկ. իսկ՝ ի ներքս՝ ընդ ձախակ մնանողին և՛ի մի-
ջավայրի այրին՝ քար վերաբուսեալ՛ի գետնոյ՝ դիզացեալ տեսանի ոչ կարկառ, այլ տա-
կաւ երթալով՝ ի ներքսագոյն կողմն այրին՝ նուազել և պակասել. ընդ միջ սորա և ծայրից
այրին՝ աղբիւր կայ ականակիտ ջրոյ՝ յոտա-
գին և քաղցրահամ յոյժ, մշտաբուղխ, այլ
ոչ երբեք՝ ի դուրս ոստուցեալ յայտնապէս։
Ոսկ՝ ի հասարակաց համբաւոյ, թէ՝ ի վէր
այնը քարի պարապեր մագդաղենացին՝ ի խոհ
մտնս և՝ ի հանգիստ գիշերոյ. գնոյն վկայէ
և որ անդ պատկերն մագդաղենացւոյ՝ ոչ
աչօք բայօք ընկալումանելոյ, յօրինեալ՝ որպս

ասեն՝ յերանելւոյն՝ մաքսիմինոսէ ։ Ուստի՝ ուր բովանդակ քարայրն ստէպ տամկանայ կայլակօք խոնաւուեն ծնելոյ, միայն քարն այն ասի պահեալ զա՛մ ժամանակս անմասն 'ի վնասուց կաթուածոց ։

Արդ յորժամ յայս տեղի ածաւ հայրն եղիա, որում զհետ գային ուխտաւորք, և ը՛ տեսիլ սրբուե՛ նը՛ յարտասուս ցնդէին, խօսել սկսաւ, և ասէ. Ե՛ղբարք, եկն եհաս օրն և ժամն փոխման իմոյ՝ որում 'ի վաղուց մնայի փափաքանօք. և արդ 'ի միտ առէք զոր ձեզն պատմեմ յաճումն փառաց երանելի մագդաղենացւոյն և ձերումդ փրկուե՛ ։ Յորժամ եկի ես յանապատս յայս և յահագին ապառաժս՝ ցանկանալով ծառայել երանելի մագդաղենացւոյն, յետ ամսօրեայ մի ժամանակի ձանձրացեալ յառանձնութէ՝ ստրջացայ, և լռելեայն խորհէի մեկնիլ աստի ։ Իսկ 'ի միում գիշերի՝ մինչդեռ պատերազմեալ լինէի 'ի խորհրդոցս, տեսի յանկարծակի զայս լեառն քարեղէն բաժանեալ խաչանման 'ի չորիր մասունս. մինչև բացան առաջի իմ չորեքին կողմանք ծի, արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս. ոպ՛ և երկինք 'ի վերուստ, և անդունդք 'ի ներքուստ. և զահի հարեալ անկայ յերկիր անշշունչ ։ Այլ 'ի քաղցր բարբառոյ ուստեր յարուցեալ՝ ոգի առի, և 'ի բոլոր սրտէ յօգնութի՛ կարդացի զմագդաղենացին ։

Եւ նա իսկևիսկ եկն եկաց առ իս այնպիսի լուրջ և ճառագայթարձակ դիմօք, զի

ոչ

ոչ կարէի հայել 'ի նա. ծածկեալ հերովք, մերկեալ բազկօք, և ծաղկազարդ ոտիւք. և ասէ ցիս. Ո՛վ դու յողդյողդ և համբակ մտօք, 'ի քո սակս բացաւ լեառնդ, և վ՞ս քո եկեալ եմ ես. և ինև՝ միայն թէ կա՛մ իցէ քեզ, կարգեսցի անձն քո 'ի կեանսն յաւիտենականս. դու խորհեցար մեկնիլ աստի 'ի ծառայութ՞է իմմէ. այլ լ՛ուր զոր ասեմս,

և ապա զոր արժանն է՝ արասցես։

Բստ որում գիտակ իսկ ես՝ ասէ, մեք բազմութ՞ը յե՞էմէ 'ի մասսիլիա նաւարկեալ եկաք կամօքն ա՞յ. այլ յորժամ մասսիլիա, և ո՛չ փոքր մասն երկրիս ընկալաւ զհաւատս յ՞ի քի՞, այնչափ յորդեցին զմեօք մարդկանն սէր և գութ՝ առ 'ի չթողլոյ զմեզ հանդարտել, մինչև 'ի մտի եդի խոյս տալ 'ի մարդկանէ. և այնպէս յափշտակե՞լ յա՞ծուստ՝ եդայ առ դուրս այրիս այսմ։ Եւ այն ինչ ակնկառոյց լեալ ը՞ տեղին պատրաստեալ ինձ յա՞յ՝ այսր անդր հայէի, յանկարծակի տեսի ը՞ լոյս և ը՞ խաւար զվիշապն, զոր սպանեալ էր մարթայի քեռն իմոյ՝ մեծ քան զբոբողոն. զորոյ զարհաւիրս չէ՛ ոք բաւական պատմելոյ. տեսի և զա՞մ ազգ իժից։ Եւ ահա ը՞ գտանիլ իմում 'ի մէջ այրին, շարժեցան 'ի վ՞ր իմ վիշապն և բազմութ՞իք օձից՝ զայրագնեալ աչօք և շչմամբ. քանզի իժքն յեցեալք 'ի տտունս՝ լանջիւք կանգուն կային. իսկ վիշապն դժնեայ քան զամենեսին այնա՞ս ահացոյց զիս, զի զանգիտէի հայել ը՞ նա, մանաւանդ թէ չհանդուրժէի, այն որ աներ-

կիւղ

կիւղ էի 'ի մահուանէ ։

Յայնժամ ասացի . վայ ինձ ո՛ իմ յ՞ն . թէ ոչ վաղվաղակի 'ի թիկունս ինձ հասանես , կամ կլանէ դա զիս , և կամ յահէ աստի քաղի հոգիս ։ Յայն բան ամփոփեաց վիշապն ըզգլուխ իւր , ոպ՞ թէ չիցէ ն՞ր ինչ փոյթ զինէն . այլ միւսանգամ յեղակարծուց երկայնեալ և ձգել՞ զահագին կոկորդ իւր , և բաբախեալ զթևսն , դիմեաց 'ի կլանել զիս ։ Եւ իբրև ձգեաց 'ի բերան իւր՝ զի կլանիցէ , անկարօղս լեզուաւ՝ 'ի խորոց սրտէ մտօք հաստատութեան խօսեցայ օրինակ զայս . Քաղցրագութ սէր դու յ՞ն , միթէ յետ անչափ շնորհաց քոց առ իս՝ 'ի կերակո՞ւր տայցես վիշապին զտխրազգեացս և զմիայնացել՞ս յանապատի ։ Եւ նոյնժամայն հանեալ զիս հրեշտակին 'ի բերանոյ վիշապին՝ խօսեցաւ առ իս և ասէ . երանի՛ քեզ , որ պինդ ունիս զհաւատս ։ Եւ հարեալ ոտիւք զվիշապն՝ ասէ . ե՛լ աստի վիշապդ , և ա՞մ իժք ը՞ քեզ . և զոյգ ը՞ բանին՝ դահավէժ արար զանձն վիշապն , և այլ զեռնոցն հոյլք ը՞ նմա . և կէս մի թռչելով , և կէս մի ոտնփոխ լինելով՝ դիմեաց յանապատն . ուր յաղթեաց նմա քոյրն իմ մարթա ։ Ապա միքայէլ հրեշտակն փչեաց շունչ հոտաւէտ , որ 'ի բոց յեղափոխել՝ լիզեաց զքարանձաւն ողջոյն , և ծախեաց ըզգարշ և զժահահոտ աղտեղուի՞ս զեռնոց , և զբովանդակ վայրն մաքուր և անուշահոտ կացոյց ։

Յետ այսորիկ դարձաւ , և ասէ ցիս հրշ՞տկն .

ա՞ծ՝

ա՞ծ՝ որում այնչափ տենչացեալ ես ո՛վ մագ-
դաղինէ, և միշտ 'ի քեզ կրես, կամի՝ զի դու
զայս տեղի ոռոգանիցես յորդահոս արտաս-
ո՛ւօք. ո՞պ զի յապագայ դարս օրինակ լինի-
ցիս միշտ ապաշխարութ՞ե։ Եւ ես 'ի մեկնիլ
ն՞ր յաչաց իմոց կացի մ՞նացի սօսափեալ. և
խուզեալ զտեղին՝ 'ի միտ առի զանմատոյցն
լինել ելից և մտից մարդոյ յերեսաց ապա-
ռաժին։ Յայնժամ ապա յարտասուս լուծե՞լ
'ի քաղցրութ՞է սիրոյ՝ տարածեցի զանձն իմ
'ի գետին, և երկրպագեալ ասացի. Փա՛ռք
քեզ ք՞ս սէր անբաւելի, զի լցուցեր զա՞մ փա-
փաքումն սրտի իմոյ. արդ աղաչեմ, լո՛ւր
խնդրո՛ւածոց իմոց, և աղբերացո՛ ինձ ջուր
յապառաժէ այտի։ Եւ նոյնժամայն պայթե-
ցաւ առաջի աչաց իմոց ահագինս այս քար,
և ջուրքդ՝ զոր տեսանես ե՛ղիա, բղխեցին 'ի
կարծր գայլախաղէ։

Եւ մինչդեռ ծունր եդեալ յանդիման ակա-
նակիտ աղբերն՝ գոհանայի զք՞ոէ, տեսի՝ և
ահա աւելի քան հազար ոգիք կային յաջմէ
քարայրիս, որք նո՛ւագէին եբրայեցի բար-
բառով բանս քաղցրաճաշակ սիրոյ։ Այլ 'ի
կատարած բանիցն՝ քանզի թելադիր ինձ լի-
նէին, թէ չէ՛ բարւոք անձին այդչափ հանա-
պազորդութ՞ի անդադար աղօթից, ամբար-
ձեալ զաչս իմ՝ տեսի զօդս արտաքոյ այրին
լի այնպիսեօք. նմին իրի խիթացեալ իմ՝ ե-
թէ դեւք իցեն ն՞ք, յահի եղէ և գոչեցի առ
յ՞ս. և անդէն վաղվաղակի եկն եկաց միքայէլ
հրեշտակ հանդերձ իւրովք զինո՛ւորութ՞բք,

և

և ասէ. աւասի՛կ եմ մագդազինէ, մի՛ երկն-
չիր։ Եւ ապա ճակատեալ ը՜դէմ այսոցն չա-
րաց՝ 'ի փախուստ դարձոյց զամենեսին առ-
հասարակ. որք ձայնելով ասէին առ իս.
բայց դու ո՛չ վ՜ն այնորիկ երանելի լինիցիս,
որ աղօթից պարապիս յայրիդ։ Յայնժամ
հրեշտակն խաչ կանգնեաց 'ի դուռն այրին,
և ասէ ցիս. զգո՛յշ լեր, մի՛ երկնչիցիս յայսմ
հետէ. զի պահապան քո է բարձրեալն։
Արդ յետ մեկնելոյ ն՜ր անկեալ իմ առաջի
խաչին, իբրև ոչ կարէի ցամաքեալ սրտիւ՛
յերեսաց ահին մտադրութ՜ն կալ յաղօթս,
ժողովեցի արմատս երկուս 'ի բերանոյ անտի
այրին, լու՛ացի և ճաշակեցի. և արբի ջուր
յաղբերէն, ոչինչ այլ մարդկային առեալ
կերակուր։ Եւ ապա փարեալ զխաչիւ՛ն, յա-
ղօթս անցուցի զայն տիւ՛ և զգիշերն առաջի-
կայ. և 'ի ծագել արևուն ամբարձեալ զաչս
իմ 'ի խաչ անդր՝ տեսանէի զայն սառնատե-
սակ և ճառագայթաւէտ շողացեալ։ Եւ իբ-
րև յանձին զգացի զբոց սիրոյ սաստիկ բոր-
բոքելոյ, անդէն և անդ գտաւ առ իս բազ-
մութ՜ի յոյժ զու՛արթնոց 'ի ձայն ցնծութ՜ն.
որպէս այն թէ յայրի աստ իցէ կեանքն յա-
ւիտենից։
Յետ այսորիկ յեղակարծում պահու տարեալ
'ի նոցանէ 'ի վայրս դժոխոց՝ տեսօղ եղէ ազ-
գի ազգի տանջանաց և խուժանի պատժա-
ւորաց։ Իսկ իբրև տարան զիս 'ի վայրս մաք-
րարանի, այնպիսի քաղցրութ՜ն պատեցան
զինև ջերմեռանդն հոգիք, մինչև թու՛էր

ինձ ՚ի կայանս լինել երկնից. և ասեն ցիս բազում աղերսանօք. աղօթեա՛ վա՛ր մեր մուգ դաղենի՛դ մեր. և ես ասեմ ցնա. իցէ՞ թէ կատարեսցին ինև խնդիրք ձեր. քա՛ջ տեսա նեմ, թէ քանի՞ օգնականուե պէտս ունիք։ Ա՛պա դարձեալ անդրէն եդեալ հրեշտակին գիս առ խաչին՝ ասէ. ցորչափ ժամանակս է կաց ՚ի վե՛ր երկրի վա՛ր քո՝ սէր քո և մեր յա՛, նոյնչափ և դու դեգերեսցիս յայրի աստ. և զայս ասացեալ՝ եղև լինէն աներևոյթ. իսկ ես յաղօթս կայի առ խաչին, և խոկայի զիր կուԹին իմ զքո։

Այ՚ի շրջիլ աւուր աւուր՝ գայրն առ իս զինուո՛րութիք հրեշտակաց, և ամբառնային զիս յօդս վերինս. մինչև լսել ինձ զՀնչմունս երկնաւոր երգոց քաղցրուԹե։ Օ՛ որ և զկնի իբր եօԹն անգամ առնէին միշտ ՚ի գիշերի և՚ի տուՀնջեան։ Այ՚ս ես այնուհետև յոչինչ դրեի զցուրտ և զսառնամանիս՝ վասնէ Հրոմէ ածային. և ՚ի ԹօԹափիլ Հետզհետէ Հանդերձից իմոց առ ՀնուԹե՝ նոյնպէս տակաւ աձեցին Հերք իմ ՚ի մարդասիրուԹենէն Այ. և ապա յորժամ զսփածանելիս ծուՀատեալ ՚ի բաց ընկեցի ըզ ժայռդ, այնչափ յորդեցին Հերքս, մինչև խափան ինձ լինէին զգնալոյ ըզ քարինս։

Ա՛ւ՚ի խաչի անդ յանդիման ինձ լինէին քա՛Հանայ խորՀուրդքն Աւմ. անդ տուՀեալ լինէր տեսանել զպատմուԹի աննայի և յովակիմայ. անդ զմարիամ՝ որ ծնաւն զյն իմ ինձ. անդ զկաչէ՛ոյն կիրս դժնդակս. անդ զանապա-

կան արիւնն . անդ զանտանելի զվէրս . անդ զնաչ նէր և զմահն . նոյն և զնէս ՚ի գԺոխոց , և զթափանցանց մուտս ընտաւորս երկնից։ Ա. յսպիսեաք կերակրել խորհեալ՝ զայգ և զցերեկ յողբս ծախեի . և ՚ի գնալ իմում յաղ բիւր անդր լռնանալ զերեսս , տեսի զյն ՚ի մարդկային կերպարանս, զի ասէր ցիս այսպէս . ով քո պատրաստեցի մարիամ զտեղիս զայսոսիկ ։ Ա՛չ շուրջ կային զոյք երկնից զթաւ գաւորաւն իւրեանց՝ ունելով ՚ի ձեռս ըզփունջս ծաղկանց , և զոստս ձիթենեաց և արմաւենեաց ։ Ա՛չ ահա յանկարծակի փայլատակեաց առեալ մարդկութիւն , և այլակերպեաց փրկիչն զանձն իւր ըստ օրինակի թաբորական լերին . մինչև չքաւել լինձ ակնարկել յայնչափ մեծվայելչուն ։ Ա՛չ թեպետև քաղցր սերն վառէր զսիրտ իմ ամբառնալ զաչս ՚ի տենչալի դէմս անդր , այլ չերկ բաւական առ այդ ։ Ա՛չ յետ յերկար խօսելոյ ընդ իս բանիւք միխիթարուԹեամբ՝ վերացաւ յերկինս . և ցողջոյն կեցի , հարիւրիցս և տասնիցս այլ արար լինձ յայրի աստ մարդասիրուԹիբ լուրով ։ Ա՛չ արդ խրատ տամ քեզ եղիս , և աղաչեմ իսկ , զի ՚ի ժայռի աստ պարապեսցիս յօրհնուԹիս քոյ , մինչև տարեալ յաւուցիդ զքեզ ՚ի նաւահանգիստն կենաց ։ Ա՛չ միայնիկ և աստ եղիր յանգերը տեղիդ . իսկ դու զեղբարդդ ունիս միխիթարուն, և զսիտս կերակրոյ և հանդերձի առատապէս . հապա դիր ՚ի մէն հանապազորդել մինչ իսպառ ։

„ Ա՛չ զայս ասացեալ՝ ասէ եղիա , աներևու-

„ Թա-

„ Թացաւ մագդաղենացին յաչաց իմոց. և
„ ես մինչև ցայս ժամ ծածկեցի զայս ա̅մ՚ի
„ մարդկանէ։ Իբրև զայս ասաց, յետ պա-
„ հու միոյ երանելի հայրն աւանդեաց զհո-
„ գին. և նոյնժամայն զանգակք՝ որ կա-
„ խեալ կան յայրի անդ, հնչեցին առանց
„ մերձենալոյ ձեռին մարդոյ։ Օ այս ա̅մ
„ հանի հաւատարմութ ը̅ ՚ի նախաճառեալ
„ մատենէ անտի ‖, ասէ գրիչս. և ՚ի սմա-
նէ առնուն՝ որք միանգամ յիշատակեն զվարս
մագդաղենացւոյն յարևմուտս. Թո՛ղ և զոր
այլք այլազգագոյնս աւանդեն անմիաբա-
նաբար։

Այլ ՚ի մէջ բազմաձայն կարծեաց՝ մին յեր-
կուց հաւաստի դատեալ է, թէ կա՛մ ան-
ձամբ եկեալ է մագդաղենացին ՚ի մասսի-
լիա, և կամ նշխարք ն̅ր̅ բերեալ են անդր։
Սակայն և վ̅ն̅ նշխարաց վէճ մեծ է, զի ո՛պ
՚ի սանմաքսիմեան վանս բրովինցիայու, նոյն-
պէս և ՚ի վեզիլեան վանս բուրգոնդիոյ գոյր
ասեն մարմին մագդաղենացւոյն վաւերա-
կան յիշատակագրովք և հայրապետական
և թագաւորական նամակօք. և յերկոսին
ևս անպակաս լինէին սքանչելիք. յա՛յտ է
զի կա՛մ մասն և մասն էր աստ և անդ, և կմ
մին էր մարմին բուն իսկ մագդաղենացւոյն,
և միւսն մարմին այլոյ համանուն կուսի. զի
ո՛չ միայն յետ ժամանակաց եղեն այլ և այլ
սրբուհիք՝ մարիամ, կմ մագդաղենացի ան-
ո՛ւամբ, այլև եղեն երկու քորք մարիամ և
մարթա անուն նահատակեալք ը̅ լիկարիո-

նի կրօնաւորի յաւուրս հալածանաց. զորս յիշեն հայք և յոյնք 'ի յայսմաւուրս. փետր. 8. Թո՛ղ և զայլ անու՛անակիցս։ Եւ ոպ̄ յայտ է բազմօք, սբ̄ք ոչ պակաս առնեն զբարեխօսութի՛ իւրեանց ը̄ նշխարօք այլոց համանուն սբ̄ց։

Եւ արդարև անհամար են պատմութի՛ք և յիշատակարանք սքանչելեաց սբ̄ց, այլ առաւել ևս մագդաղենացւոյն. զորոյ և զցուցակն համառօտեն բոլլանդեանք. ուր յիշի ազատութի՛ ոմանց 'ի կախաղանէ և յայլ արկածից մահու. յարութի՛ մեռելոց ոմանց. բժշկութի՛ բազմաց 'ի մահաբեր խօթուե՛ց. ազատութի՛ 'ի կապանաց և 'ի բանտից, ոպ̄ և յալեաց ծովու. լուսաւորութի՛ կուրաց, լսելութի՛ խլից, բժշկութի՛ դիւ՛ահարաց. և պարզաբար՝ փարատումն ա̄մ ցաւոց, և դարման ա̄մ վշտաց հոգւոյ և մարմնոյ՝ որոց հաւատով կարգան առ նա։

Եւ այնչափ հանդիսացեալ է ջերմ պաշտօն հաւատացելոց առ մագդաղենացին՝ շինուբ̄ վանորէից, եկեղեցեաց և խորանաց, և կարգմամբ եղբայրուե՛ց յանուն ն̄ր, և այլ ազգի ազգի յիշատակաց և մեծարանաց 'ի պատիւ՛ փառաւորութե՛ ն̄ր, մինչև տիրապէս կատարիլ 'ի նմա տիրական խոստմանն եղելոյ առ մարիամ քոյրն մարթայի և զազարու՝ յօծանել անդ զնա 'ի տան սիմոնի բորոտի, թէ ո՛ւր և քարոզեսցի աւետարանս այս՝ ը̄ ա̄մ ծ̄ խօսեսցի և զոր արար դա վ̄ս յիշատակի դորա։ Վ̄ս̄յ և արդարացել է՝ զոր ասաց

եր-

երբեմն ոմն յիմաստուն ներբողաբանից. * 'Ի
մէջ ամ գոգցես սրբուհեաց պսակելոց յերկ-
նից արքայութ, զկնի մօրն երանութ օգոս-
տատիրուհի դշխոյին երկնի և երկրի՝ ածա-
ծին կուսին մարիամու, ոչ ոք այլ առաւել
մեծահռչակ և մեծավայելուչ պատուով սրբ-
բութ պաշտի առ հաւատացեալս՝ ք զսրբ-
բուհին մարիամ մագդաղենացի ‖։

Եւ զի արևմտեայք հաստատութ ք համա-
րին զմագդաղենացին քոյր լինել մարթայի,
վ ոյ և զպատմական աւանդս 'ի նոյն յարել՝
ասեն, թէ մարթա ասպնջական և վանա-
տուր փրկչին մերոյ եկեալ ը քեռն իւրում
մարիամու և ը եղբօր իւրում ղազարու 'ի
մասսիլիա գաղղիացւոց՝ դարձոյց քարոզու-
թ ք զբազումս 'ի հաւատս քոի. և ժողովել
զհաւատաւոր կանայս՝ կառոյց կուսաստան,
և եղև նախկին առաջնորդ միանձնուհեաց
յարևմուտս. ոպ և 'ի հայս 'ի հոգւոց վանս
միւս մարիամ և մարթա հայկազունք ը խո-
րենացւոյն։ Եւ ասեն շինել և եկեղեցի յա-
ւենիոն քաղաքի. ուր յարոյց և զմեռելն չո-
րեքօրեայ զպատանի, որ հեղձեալ էր 'ի
գետն հռոդան. սպան և զվիշապ մի ահա-
գին (զերևեալն մագդաղենացւոյն), որ
բունեալ էր յանտառի յափն գետոյն, և 'ի
պաշտօն առեալ 'ի ռամկէն։

Ապա էանց 'ի մերձակայ աւանն, ֆ 'ի տա-
րասկոն քաղաք բրովինցիոյ՝ որ 'ի նարբոնեան
անուանեալ գաղղիա. և անդ ևս աշակեր-
տեաց զբազումս, և ետ շինել եկեղեցի և

կուսանոց՝ առնելով զբազում հրաշս. և կա-
տարեալ զաւուրս իւր լի արդեամբք՝ 'ի նմին
քաղաքի տարասկոնացւոց Թաղեցաւ պատ-
ու՛ով 'ի հաւատացելոց. և եղեն ոչ սակաւ
նշանք 'ի տապանէ նր̄ ։

Իսկ 'ի զօրանալ միւսանգամ բարբարոսուն
'ի կողմանսն յայնոսիկ՝ ծածկեցաւ գերեզ-
ման սբ̄յն մարթայի ը̄ դարս յոլովս. մինչև
յամի տ̄ն 1187 կմ 1188, գտաւ սքանչելեօք
'ի ստորերկրեայ վայրս տաճարին յիւրմէ կա-
ռուցելոյ. յորոյ վր̄ շինեցաւ այլ եկեղեցի
յետ ամաց տասանց. և անդ ամփոփեցաւ
յետոյ կուսէ բեմին յառանձին մատրան ։

Եւ յետ այլ ևս քանի մի դարուց՝ ա̄ յամի
տ̄ն 1458 կմ 1459. բացաւ տապան նորա. և
գանկ նր̄ եդաւ յարծաթի գլուխ ոսկեզարդ՝
մեծաշուք հանդիսիւ՛, յաւուրս հռենատոսի
դքսի՝ կոմսին բրովինցիոյ, որ և կոչիւր ար-
քայ եէ̄մի և սիկիլիոյ ԼԼ̄ ։ Եւ զկնի սակա-
ւուց՝ յամի 1478, եդաւ յայլ գլուխ ձոյլ ոս-
կի, զոր ետ շինել լուդովիկոս ժ̄ երորդ ար-
քայ գաղղիացւոց շքեղ յօրինու՛ածով. Թող
և զայլ Թ̄գրական յիշատակս ընծայից, զոր
ձօնեցին զանազան Թագաւորք և իշխանք 'ի
նոյն տաճար սբ̄յն մարթայի. ո՛պ և զխորանն
մեծաշէն՝ զոր հաստատեաց անդ հայրա-
պետն հռովմայ գրիգոր ժ̄ երորդ, յորժամ
նստէր յաւենիոն. և զբազմութի̄ յոյժ ուխ-
տական տախտակաց, այն են յիշատակք
սքանչելեաց զորս կախեցին առ խորանաւ
սրբուհւոյն մարթայի հաւատացեալքն հետ-

ըզ-

զկնեսն՝ այնչափ յաձախուքը, որ ոչ ուսմեք՛ի
սքից այլ կարծել լեալ յայտ առեղիս քրիստո-
նեպուելնե. ոպ յայտ է և՛ ի յիշատակագրաց
հրաշից նը. զի զերծոյց քաղուստանգամ ըզ-
տարտակոնացիս՛ի հրդեհէն, ՛ի ժանտախտե,
և յայլ անբաւ արկածից։

Կան և յայլ տեղիս ոչ սակաւ նշխարք յա-
նուն նոյն մարգարէի, ըս մասին՛ի տարտակոնայ
առեալ, և ըս մասին ըս Համանուն սքից շիւ-
թեալ. այլ յատուկն ան թերի ներդործէ
բարեխօսուելն սքին մարգարէի քեռն զաղա-
րս և մարխամոս։ Կան և երևելի եկեղեցիք
և վանորայք կուսանաց յանուն նը քաղաքի
քաղաքի. ոպ յայտ է յ՚Եզեկրաց և՛ ի տեղա-
գրաց։

XXXX

մարիամ մագդաղենացի, մարիամ բեթանիացի, և կինն պոռնիկ, եղև աղմուկ մեծ 'ի գաղղիա. և փարեղեանն ճեմարան սորբոնեանց յամի 1521. 'ի նոյեմբ. 9. էած դատակնիք ը̄դէմ այնմ կարծեաց, ոպ̄ թէ նորաձայնութիւն իցէ օտար 'ի կաթողիկէ աւանդութէ̄, վնասակար կրօնի, և հովացուցիչ ջերմեռանդութէ̄ հաւատացելոց առ մագդաղենացին, զոր ճանաչէին դոլ մի միայն օրինակ կատարեալ ապաշխարողաց, և դիտէին եկեալ ը̄ քեռ իւրում մարթայի 'ի մասսիլիա. և ն̄:

Եւ սակայն ելին հզօր ա̄ծաբանք, որք ունայնացուցին զայն վճիռ սորբոնեանց. և բազում պատճառօք զընդդէմն հաստատեցին, և վ̄ս̄կ եղեն հանդիսական վիճաբանութիւնք մեծամեծք. և այնպէս մնաց խնդիրն ընդ խնդրով մինչև ցաւուրս մեր. զոր անմարթ է ումեք 'ի մի կողմն որոշել. միայն սովորական կարծիք եւրոպացւոց ցարդ ևս նոյնացուցանէ, և սովորական կարծիք արևելեայց զանազանէ զմարիամ զքոյրն մարթայի 'ի մագդաղենացւոյն, եթէ մագդաղենացին իցէ կինն երբեմն պոռնիկ, և եթէ զանազանել̄ ևս 'ի նմանէ:

Բաց 'ի բազմաց 'ի յետնոց յերկար վիճէ զայսմանէ և սոլլերիոս բոլլանդեան, և ջանայ ընդդէմ եստիոսի նոյնացուցանել զմարիամանս. և վաստակել̄ 'ի խնդրոյ անտի՝ սկիզբն առնէ պատմական քննութէ̄ վարուց մագդաղենացւոյն, որ միայն է մեզ խնդրելի. այլ լուր զձև բանից առն քաջի. * 'Ի նոր ծով համատարած մտա-
,, նեմք (ասէ) դէմ ը̄դէմ հողմովք կոծեալ, մրրկօք և
,, նաւաբեկութ̄ գոդցես, ոչինչ ը̄հատ յառաջնոյն ան-
,, բերելի և դժպատեհ. ուրանօր վերստին ա̄մ ինչ ամ-
,, բոխեալ տեսանի՝ դժուարակնճիռն և մթին: Վ̄ս̄
,, զի պայքարումն լինի՝ և այն սաստիկ՝ զայնպիսի իրո-
,, ղութէ̄, զորմէ գրեթէ 'ի բովանդակ նախկին վեց
,, դարս եկեղեցւոյ ոչ ոք 'ի մատենագրաց բուռն եհար
,, ճառել. մինչզի իբրու ը̄ անծանօթ շաւիղս և ը̄ խոր
,, խաւար ճանապարհ առնել կայ առաջի, զոք ոչ ունե-
,, լով ջահակիր առաջի՝ կամ լուսատու, որում մարթ
,, իցէ զհետ երթալ աներկևան: Ուր և զարմանալի
,, դիպուած 'ի վեր երևի, զի որչափ մեծապայծառ փայ-
,, լեն փառք սբ̄յն մարիամու մագդաղենացւոյ 'ի սբ̄
,, աւետարանս գլխովին, ոպ̄ 'ի մօտոյ տեսաք, այնչափ
,, երկբայական են մնացուածք գործոց կենաց ն̄ր̄, քա-
,, ղաքավարութի̄, վախճանն, և թաղումն. դոնէ որ-
,, չափ ինչ 'ի հաւատարիմ յիշատակարանաց մարթին

,, քա-

,, քաղել։ Զայնք անտի, և լսանիք ասել՝ առաւել լայնս
,, մասնաւորացեալք, ներշնակիլը և դիմամարտ առանձին
,, գնեն առաջի։ Որը Թոզից զայն, զի և լսանիք յիւ-
,, րեանս ոչ միաձայն գտանին տիրապէս։ Երբ ոմանք
,, արժան համարին կուսակից լինել առնմաքսմեանց,
,, որք պնգեն առ իւրեանս ուռնել զմարմինն մագդաղե-
,, նացւոյն։ և նոքին ևս երկպառակք ի պատմուճե փո-
,, խագրուեն նորին։ Կէսք յեղեմ կիմ՝ ի բեմնիոյ, այլք
,, ՝ինմին իակ՝ ի բրովինցիայէ՝ ի վիզելիակ բերեալ ա-
,, սեն։ Թող զի և՝ ի հռոմ ասին պահիլ սբ՝նշխարքը Ն՛ր։
,, որով և ը այսմ մասին ամ ինչ խրթնութիւ լին, և ը

,, Ծանր ծանր գժոխարուեստիւք անկեալ տեսանի ։։

Ներեմք առն կրկիսիկ՝ ի գժոխարարացուցանել զդժոխս բնիսն, որ չէ ինչ նոր։ զի և համարհն առաքելոյց և աշակերտաց պատմուեստիւք արտաքոյ աւետարանի ըզնոյն կրեն գժոխարուեստիւս և զմեռնեստիւս։ այլ այն է անտեսելի, զի ՝ի լոկ վիճմունս գեպերիլ՝ կամ զանառոյգս ընդ առոյգս խառնել, կամ տիւր անասունդ կարծիս քան զառուգագոյն բանս այլոց երբէք վճռել հաստատուն կամի վաճառել։ որ ոք կամի, տեսցէ ՝ի յոյդս բանից նր՛։ Օրինակի վասն, մեք տեսանեմք՝ զի զբանս Հաւքնարաց մերոց և բահիրեան յայտնութեանց յոմանց հաստատեալ յաւելուածով՝ վկայուել մոգեստուսի եմեալ՝ որ էր գեօթնեորդի գարս, յառաջ բերեալ՝ ի փոխան՝ որ էր մեռեալն մին, այսպէս։ * Եւ արդ իրաւամբք ընդունեաց փրկիչն զմագդաղենացին։ յորմէ զեօթն դեւս եհան ՝ից, զի զնոյնն մեզաց նոաս՝ ի բաց հալածեսցէ՝ ի մարդկանէ։ Աւետեցն պատմուեթիւք, թէ մագդաղենացին՝ յորմէ արն զեօթն դեւս եհան, լցեր կոյս այս, որոյ և վկայաբանութեանն լիշատակի։ ուր ասի՝ թէ վն իւրոյ անարատ կուսութե և մաքրութեն երեւեցաւ այն առաջի գահճայ ոճղ բնութեայ յատակ։ Ջկնի նոյնան տիրուհւոյն մերոյ ամենաքո ծածկնի չքաւ չեփեսոս առ տիրեալն աշակերտան։ ուր զառաքեսկան ընծեցաւ վկայութե կատարեսոց իւղաբերն մարիամ, չիամեցեալ մինչ ՝ի չեսին չուշն որոշել ՝ի յովհաննէ աւետարանչէ և ՝ի կոսե ։։

Աբդ առ այս ասանդութ՝ որ հնագոյն է քան զայլսն, և Թերեւս սուտգագոյն, սկսանի նորագէս պատճառանս ինն գնել սուղերիոս՝ անվայել իւրումն գիտնալոյ։ Նախ՝ գուցէ յոգեալ լցէ ասէ բանս այս ՝ի փոսոյ առ ՝ի հակառակ կալ աւանդութե լսանիցեսց։ և երկիր՝ Թէ

Թէև մոգեստոսն էցէ բանդ, հնագոյն է ասէ քան զնա գրիգորն մեծն՝ որ նոյն համարէն զմոգդալենացին և զկինն մեղաւորն։ Ապաքէն առաջին կասկածն է փուտզբոպարտուն. նախ՝ ի հաստատել զերկերդն՝ պարտ էր ոտնէրնոյն ցուցանել, թէ մեծն գրիգոր ոճր դնէ ըզվախճան մոգդալենացւոյն. յետեւտո, եթէ՝ ի գալիլեա. և զի և ոչ զմին աստց գրիգոր, ապա վկայութեն նորա ոչ ուժէ առ խնդրեցինն լուր։

Եւ ըէր կամի անաչառ քննիչն հաւաստս ընծայել ոմանց յառաջագոյն, թէ մոգդալենացին նաւարկեալ էցէ յարևմուտս, և ջանալ՝ ի տուտ հանել զվկայութեն հռոմ քարոզոն վաստեքուրդացւոյ, թէ յետեւտս տեսի զմարմին մոգդալենացւոյն, և առի անտի զերկուս յաստատանց նոր, և զմնացինչ՝ ի հերոց. կի զնարդ կարէ առել զջարունակութեն տարեգրութեն Թէոփանեայ զգրեալն հրամանաւ կոստանդնի որդւոյ Լևոնի ձ. ուր ասէ, թէ կայսրն շինեաց զեկեղեցի յանուն սրբոյն զաղարոս՝ ի կոստանդնուպոլիս, և անդր փոխադրեաց՝ ի կինարոսէ ըզմարմին զաղարոս, և յետեւտսէ զքեռն նր մարիամու մոգդալենացւոյ։ Եւ եթէ անմիաբանուն կայ գրոցաւ յոյն, ոչ զնոյնս վկայեաց տոլեդոս և զլաոդիկացւոց։ Մինչև առել և զայս. * յորոց և ոչ մին միաձայնէ „ ընդ միւսոն, բազմապատիկ տարօրինակ հանդամանօք „ յօրինեալ ըստ կամս իւրաքանչիւր գրոցաց ։ Եւ նախ զայսոսիկ նուիրեալս ի պրեսբեացւոյն ջընդուն եւ ոչ. և այնպէս զնամ կինչ՝ ի կախ և յերկրի Թողու. ապա՝ ի գրոց և մեզ զնետ լինել տարապարտ բանից. առաւել սէք և դաք զաւանդութեն առ, Թոզ ընտրեացեն ընթերցօղք զաւետել արժանն. զի և քննիչք ոչինչ գնտացին որոշել։

Վ. ԿԱ. ՅԱ. ԲԱ. ՆՈՒԹԻՒՆ

Սբյն Թէոդորիտեայ քահանայի անտիոքացւոյ, որ և Թէոդիտոն գրի։ (1)

Հ. Ձառընտ. Ա. երես. նէ = նէը։ Յ. մարտ. 2։ Լ. հոկ. 23։ Սոզոմենոս. Ե. 7։ Բեդա։ Բարոնիոս յամի 363. Լա։ (2)

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅՆ Թէոդորիտոս, որ ածապարգևական կարդացեալ ը յունականին, յորմէ 'ի մեզ ը հին օրինակաց Թէոդորիտոն, և ը վերջնոց՝ Թէոդիտոն, էր մի յերիցանց աւագ եկեղեցւոյ անտիոքայ ասորւոց, այր լի հաւատով և հոգւով, փայլեալ յաւուրց մեծին կոստանդիանոսի մինչև ցառաջին ամն եղբօրորդւոյ նը յուլիանոսի ուրացողին, այն՝ որ ապրեալն էր 'ի կոտորածէ տան հօր իւրոյ յերեսաց որդւոց կոստանդիանոսի. և յետ լինելոյ ընթերցող եկեղեցւոյ՝ Թողեալ զքրիստոնէութի՝ յարեցաւ 'ի հեթանոսութի. և նստել յաթոռ կայսերութե՝ եղև անողորմ բռնակալ և ոխերիմ Թշնամի քրիստոնէից, 'ի սկզբան դաւաճանութը և դիւական հնարիւք ջանալով զնս որսալ յօրէնս անօրէնս,

և

և ապա յայտնապ դառն հալածիչ լինելով։
Իր նորա և քեռի մի համանուն՝ յուլիանոս
կոչեցեալ, զոր ուրացող կայսրն ձգեաց զկնի
իւր՝ ապստամբեցուցեալ և զնա 'ի հաւատոցն
և 'ի յուսոյն ա՜յ 'ի կռոցն մոլուի։ Որ և կա-
մակատար եղեալ չարին՝ գործակից և յորդո-
րիչ եղև նմին յա՜մ վնասակարութիւն ը՜դեմ
քրիստոնէից. և եկեալ երբեմն ը՜ կայսերն
'ի մեծն անտիոք՝ զգացուցանէր նմա սա ինքն
յուլիանոս քեռին իւր, թէ բազում նուէրս
և սպասս ոսկւոյ և արծաթոյ ունի եկեղե-
ցին անտիոքացւոց. և կարգեալ 'ի նմանէ
իբրև ոստիկան և գործակալ 'ի վ՜ր իրացս՝
ոչ միայն զսպասս եկեղեցւոյն կողոպտեաց,
այլև զքահանայսն ա՜մ փախստական արար.
մինչ զի փակեցան դրունք եկեղեցեաց, և
քահանայքն ցրուեցան և անկան յայլ տե-
ղիս, ո՛ւր և ձեռնհաս ոք լինէր ապրիլ և ծա-
ռայել ա՜յ։
Իսկ սբն Թէոդորիտոս՝ երէց համ Ծական
եկեղեցւոյն անտիոքացւոց՝ ո՛չ 'ի քաղաքէն
գնաց, և ո՛չ խափանեաց երբէք զպաշտա-
մունս՝ հանդերձ եղբարբք մտանել յեկե-
ղեցին, և ժողովել ժողովուրդս՝ զպարտ և
զպատշաճ աղօթսն մատուցանել։ 'Ի վ՜ր ե-
հաս իրացս յուլիանոս ոստիկանն. և առեալ
իշխանութի՜ 'ի Թագաւորէն 'ի վ՜ր սբյն՝ հրա-
ման ետ ունել զնա ոպ դիմակաց հրամա-
նաց կայսեր հպարտութբ. և զառաջինն
կապեալ շղթայիւք՝ յաղտեղի տեղիս բան-
տարգել առնելով ահ արկանէր. յետոյ և

ար-

արտաքս իսկ հրամայեաց հանել, և 'ի տան
բանտին ցանգ թշնամանել և նախատել զնա
'ի ձեռն անօրէն և անա̅ծ պաշտօնէից նմա-
նեաց իւրոց։

Բայց ոմանք և 'ի սպասաւորաց բանտին
գլխովին հայեցեալ յայնպիսի անձն ա̅ծա-
սէր՝ ո՛չ միայն 'ի մեծարանաց մեծաշուք երե-
սացն ակն ածէին, այլ և 'ի վ̅ր հասեալ գի-
տութե̅ն և քաղաքավարութե̅՝ զարմանային
ը̅ ուղիղ կարգս և ը̅ պարկեշտ վարս առն
պիտանւոյ. քանզի միշտ և հանապազ զա̅մ
ժամանակս արգելանացն յաղօթս ծախէր.
վ̅ն̅յ բազումք և խղճէին իսկ 'ի միտս զայն-
պիսի այր ա̅ծասէր թշնամանել, և չիշխէին
երբէք անարգանս ինչ առնել։

Յետ բազում աւուրց 'ի վ̅ր հասեալ յուլիա-
նոս ոստիկանն՝ անպարտելի և անշարժ մտաց
վկային, թէ օր քան զօր զօրանայ և վառի
հաւատովք, խորհուրդ արար՝ առանց յա-
տեան հանելոյ 'ի գիշերի սպանանել զնա.
բայց յետոյ առաւել լաւ համարեցաւ վ̅ն̅ այ-
լոց ահ արկանելոյ՝ յայտնի հարու՛ածովք
տագնապել զայնպիսի այր երևելի. այլ սա-
կայն և այն ը̅ շնորհացն ա̅յ էր, զի մի՛ այն-
պիսի այր մեծահաւատ՝ անփորձ և աննշա-
նաւոր մահու վճարեսցէ զկեանս իւր, ո՛չ զի՝
թէ չէր լեալ յայտնի ամենեցուն, առաջի
ա̅յ զվարձս վաստակոցն կորուսանէր, այլ զի
յայտնի օրինակ զանձն 'ի միջի կացուցանի-
ցէ՝ հաստատուն լինել ա̅մ հաւատացելոց
'ի ք̅ն̅։

Իբրև

Իբրև ածին մուծին զերանելին յատեան՝ ձեռս յետս կապել, և ձող ինչ ը Թիկունսն անցուցեալ, ասէ անօրէն դատաւորն. դո՞ւ ես Թէոդորիտոսն՝ որ երբեմն առ կոստանդիանոսի՛ կայսերաւ կործանէիր զպատկերս ածոցն, և զմեհեանս դիցն աւերէիր, և շինէիր եկեղեցիս, և գերեզմանս մեռելոց, զորս և մատրանոցս իմն անու՛անէիք (իմա՛ մարտիրոսանոցս, ֆ վկայարանս, որ և մատրունք)։ Թէոդորիտոս ասաց. ես քրիստոնեայ եմ, և աղօթս առնեմ՝ զի մինչև 'ի վախճան զնոյն ունիցիմ, և հաւատարիմ մարտիւրոս՝ այս է վկայ՝ գտանիցիմ. ես ո՛չ երբէք եկեղեցի շինեցի և ո՛չ մատրունս. ք՜զի 'ի նախնեացն իսկ հաստատել և շինել կան։ Յուլիանոս դատաւորն ասէ. զպատկերս ածոցն կործանեցեր. և արդ ևս 'ի չքմեղս կաս, և չտաս պ՜ինի։ Թէոդորիտոս ասաց. ես ա՜ծս երբէք ո՛չ կործանեցի. քանզի ա՜ծ է անկործան. իսկ զչէսն զիա՞րդ մարթ էր կործանել. այլ զպատկերս անշունչս և զտունս նոցա կործանեցի, զի զոգիս մարդկան մոլորեալս 'ի կռապաշտու՜է կարացից ապրեցուցանել. քանզի զայն իսկ գիրք ս՜բ պատու՛իրեցին։ Յուլիանոս ասէ. որովհետև քեզէն խոստովանեցար, կրեա՛ պատիժս պատուհասից. զի իշխեցեր զայնպիսի գործ գործել։ Թէոդորիտոս ասաց. առ ա՜ծապաշտ և ա՜ծասէր Թ՜գրաւն կոստանդիանոսի՛ կամ կոստանդնի՛ արարի զայն, և ո՛չ ցասեաւ. որ և իշխանու՜ի իսկ ունէր. և ո՛չ զայրացաւ ինչ

ը̄ այնպիսի գործ. այլ ը̄ քեզ զարմացեալ
եմ, զիա՞րդ որ 'ի նոյն օրէնս սնեալ էիր,
այժմ կռոց վրէժխնդիր ամբարձար։
Յուլիանոս ասէ. տո՛ւք, հարէ՛ք զկողս դորա,
զի իշխեաց կուռս կոչել զոյծսն։ Եւ յետ
գան ըմպելոյն ասէ Թէոդորիտոս. յանցանես
յո՛ւլիանոս, զի զՃշմարտի միայնոյ ա̄յ և զա-
մենակալի անուն՝ կռոց դնես, և ա̄ծս ան-
ո՛ւանես զայժմու կռեալսն և արարեալսն։
Յուլիանոս ասէ. տո՛ւք հարէ՛ք զերեսս վսե-
րիդ յանդգնելոյ. զի իշխեաց հայհոյել։
Թէոդորիտոս ասաց. դարձեալ տակաւին
ուսուցանեմ քեզ յո՛ւլիանոս, զի պատկերքն՝
զոր դու ա̄ծս անո՛ւանես, յետնեալ են քան
զպատկերագործսն, և ընդ նո̄ իբրև զնոսին
ապականելոց են. ո՛չ բարի և ո՛չ չար կարեն
առնել առնելեացն իւրեանց. և դու հրա-
մայես զիս գան հարկանել՝ որ զՃշմարիտն
ցուցանեմ քեզ։
Յուլիանոս ասէ. այժմ գան և եթ արբեր,
և ըմբոստացար. յետ սակաւ միոյ այնպիսի
տանջանս կրեսցես, որոց ոչ կարասցես հան-
դարտել, եթէ ոչ զարժանն և զօրէնն կա-
տարեսցես ա̄ծոցն. քանզի այնպէս հրաման
ետ քաջ արանց արքայն յուլիանոս։ Թէոդո-
րիտոս ասաց. ես վաղ իսկ ասացի քեզ, և
դարձեալ ասեմ, թէ մի՛ մեղանչեր, և մի՛
ա̄ծս կոչեր զձեռագործս մարդկան. այլ 'ի
բա՛ց ընկեա զժամանակեայ ամբարհաւաճու-
թի՛դ, որով յանդգնեցար ա̄ծամարտ լինել,
և ծանի՛ր զմինն միայն ա̄ծ, որ արար զերկինս
և

և զերկիր ։ Յուլիանոս ասէ . և դու զխա-
չեալն զքո զիարդ ա̅ծ համարիս , և քրիստո-
նեայ զանձնդ կոչես ։ Թէոդորիտոս ասաց .
քո փրկիչ մարդկան է , զոր կարծես գիտել՝
և ո՛չ գիտես , բան և զօրութի՛ և իմաստութի՛
հօր , միածին որդի ա̅յ . որ վ̅ս մարդկան փըր-
կութե՛ առաքեցաւ 'ի հօրէ , և զգեցաւ մար-
մին մարդկեղէն , զի նմանեաւն զնմանն դար-
մանեսցէ , և ազգականաւն մերձեցուսցէ
զմարդիկ առ ա̅ծ . 'ի մոլորութէ՛ և 'ի կռա-
պաշտութէ՛ դարձուսցէ , և զՃշմարիտն ա̅ծ
Ճանաչել ուսուսցէ ։

Յուլիանոս ասէ . զՃարտարութե՛ բանից և
զՃոռոմ խօսելոյ և եթ երթեալ ես զհետ 'ի
մանկութէ՛ , և առասպելս յօդելոյ . որով
կարասցես պատրել զմարդիկ ։ Թէոդորիտոս
ասաց . երբեմն և դու Ճանաչէիր զա̅ծ , և
խոստովանէիր զՃշմարտութի՛ն . այլ այժմ
դարձար 'ի խաբէութի՛ , յորժամ Ճական ամ-
բարտաւանութբ՛ հպարտացար , և յանձին
կալար ա̅ծս համարել զկուռս , և զՃշմար-
տութի՛ խաբէութի՛ անու՛անես ։ Յուլիանոս
ասէ . ա՛յ չարագործ և պատրողաբան , թու՛ի
ինձ թէ ա՛յժմ յաթենացւոց քաղաքէն եկել՛
ես դու ։ Թէոդորիտոս ասաց . ես յաթենաց-
ւոց քաղաքէն չեմ եկել՛ , և ո՛չ յՃական ինչ
վարժս կրթեցայ երբէք , այլ խրատու ա̅ծե-
ղէն գրոց առոգեալ եմ . ը̅ քում հարցու՛ա-
ծոցդ տամ պտսխ̅նի , և աղօթս առնեմ քեզ
միւսանգամ դալ 'ի լաւութի՛ ։

Յասեաւ յուլիանոս , և հրամայեաց կապել

զնա

գնա ընդ ձով ինչ, և արկել. և գահլիճքն վաղ-
վաղակի կատեցին գնա չոքանօք, և անտ՚օք
իմն արկեցին գնամ անդամս երանելոյ վկայ-
ին. և այնչափ երկայնացան ջուրքն, մինչև
երևելնամս հակայ ոսկի կանգնեաւն։ Յոր տեղի
այնպէս եղև, ասէ Յուլիանոս. գէթ արդ
զգաստացեր ինչ տանջանացդ Թէոդորիտոս, և
հաւանիցս արդեօք զոհել ծածոցն, եթէ տա-
կաւին՝ ի նմին յամառութեանէ կաս, և անար-
գեաւ կախարդի մոլոյ մեռելոյ պագանես
երկիր։

Նակ սէ վկայն լուրջ և զուարթ երեսօք ասէ
մեծաձայն. մուռացար Յուլիանոս զգուշեցիկ
լսոյան՝ զոր ետուր քեզ, թէ զփայտեղէնս և
զքարեղէնս և զմեռելոտի ոսկերաց գործ-
ուածոյ պատկերս ածս ի մանուածոն, այլծա-
նէր զնա՝ որ արար զերկինս և զերկիր և զնա
որ՚ինն. և զբանն զհիածինն որդին յիւքն՝ փր-
կչմարդկան, և ծագործ նմա ծին Յուլիանոս
ասէ. զայր մի՝ որ խաչեցաւ և մեռաւ և թա-
ղեցաւ, արարիչ ծի կոչես, այ վսեր եկեալ
դնմագրաւ։ Յոդորիտոս առաց. զխաչելեալն
և զմեռեալն և զթաղեալն՝ որ հանդերձ
մարմնով յերկինս վերացաւ, ուսուցանեմ
քեզ պաշտել, զորդի անծնին հօր, որ ի բանն
ած. և ներամարդուբքն քարոզ և դուշակ եղև
ածելոյն խորհրդոցն ըստ կամացն հօր, և պատ-
ուիրեաց արհամարհել զկուռս անմտուննչս.
զորոց զանպիտանութիւնն դիւրին ի ինձ յանդի-
մանս կացուցանել քեզ. զի թէ պատառ պա-
տառ կոտորեցից զնա քո խակ առաջի, ոչ կարես

ինչ ինձ վնաս առնել, ոչ ինքեանք՝ զի տա-
րերք են անզգայք և ոչ չար դևքն՝ որք նոքօք
ըւունին զպաշտօն 'ի մարդկանէ. քանզի ու-
նիմ ինձ օգնական զածն ճշմարիտ։

Յուլիանոս ասէ. եթէ երկնչիս ինչ յայ,
հնազանդ լեր հրամանաց թագաւորաց. քզի
գրեալ է, թէ սիրտ թագաւորաց 'ի ձեռին
այ է։ Թէոդորիտոս ասաց. եթէ ընթեր-
ցեալ իցես՝ զոր ասացերդ, պարտ է քեզ 'ի
միտ առնուլ՝ զոր ընթերցարն. ապա եթէ
լուեալ իցես, և չիցես քաջ 'ի վր հասեալ,
յինէն ուսիր. արդարև իսկ ճշմարտիւ սիրտ
թագաւորի 'ի ձեռին այ է՝ առաջնորդել մեզ
նովաւ յուղիղն. բայց ոչ կռապաշտի և խո-
տորելոյ 'ի ճշմարտէն այ, այլ որ զած ճա-
նաչէ. զի զայնպիսին՝ որ առ այնչափ մար-
դիկ անագորոյն է, և յայ անհաւատ, բռնա-
ւոր և ոչ թգւոր պարտ է կոչել. արդ գիրք
ասեն, թագաւորի սիրտ 'ի ձեռին այ է, և
ոչ եթէ բռնաւորի։ Յուլիանոս ասէ. ով
ժպիրհ դիմագրաւ, բռնաւորը իշխեցեր կո-
չել զարքայ։ Թէոդորիտոս ասաց. որ այսպ
հրաման տայ գործել զանարժանս, և այնպս
իցէ՝ ոպ դու զրոյց տաս 'ի դիմաց թագաւո-
րին քո, ոչ միայն բռնաւոր, այլև ամպարիշտ
քան զամ մարդիկ է ասելի։

Լի եղև ցասմամբ յուլիանոս, և իբրև մոլեգ-
նեալ՝ հրաման ետ քերել զերանելին այծե-
ման կճղակօք (որ էր կճղակաձև քերոց եր-
կաթի). և այնչափ քերեցին զնա, մինչև
առուք արեանցն յերկոցունց կողմանց կո-
ղիցն

ղիցն յերկիր իջանէին . և սակայն 'ի ղու՛ար-
թութիւն երեսք նորա ոչ տխրեցան ։ Եւ յետ
քերելոյ զերիս ժամս , իբրև ամենևին ինչ
ոչ ել ը բերան նր , և ո՛չ գոյն երեսաց նորա
շրջեցաւ , ասէ յուլիանոս . գէ՛թ արդ ճանա-
չէ՞ս զոյծսն թէ՛ոդորիտոս , որ յայդպիսի տան-
ջանս մատնեցար ։

Թէոդորիտոս ասաց . զձեռագործս ո՛չ եր-
բէք ընկալայ ա՜ծս , և ո՛չ ունիմ , և մի՛ այլ լի-
ցի ունել . դու զորս ա՜ծս համարիս , ը նոսին
ընկալցիս զքո բաժին . և ինձ լիցի ժառան-
գաւոր լինել խոստացելոց բարեացն՝ կատա-
րեալ զընթացս իմ , և հաւատարիմ գտեալ
այնմ՝ որ երևեցաւն 'ի մարմնի ։ Յուլիանոս
ասէ . այնպէս երևիս , ո՜պ թէ բնաւ չզգա-
ցեր զտանջանսդ ։ Թէոդորիտոս ասաց . և
միթէ խա՞ղ ինչ համարէիր փորձել զծառայս
քս՜ի , և իբրև զմանուկ պատրել . և տանջա-
նօք երկեցուցանել ։

Դարձեալ ցասեաւ յուլիանոս . և հրամայեաց
նովին կճղակօք քերել զնա այլ ևս երկուս
ժամս ։ Եւ այլ ոչինչ ելանէր ը բերան սբ՜յն ,
բայց միայն մեծաձայն բարբառովս ստէպ ա-
ղօթէր , տ՜ր յս՜ օգնեա՛ ինձ ։ Իսկ յուլիանոս
հիացեալ ը բազում համբերութի՜ սբ՜յ վկային՝
հրամայեաց դահճացն հանդարտել . ասէ .
թու՛ի ինձ ա՛յր դու , թէ յարքունիս ինչ պար-
տիս , կմ՛ այլ ումեք , և ոչ կարես հատուցա-
նել . արդ անսա՛ ինձ , և եթէ յարքունիս ինչ
պարտիս , թողութի՜ առնէ քեզ ինքնակալն .
և եթէ՛ այլ ումեք , զձեռնագիրն անդրէն

հրամայեմ տալ՝ առանց վնասու ինչ տուգա-
նաց ։

Այլ Թէոդորիտոս քաջութ ը առնէր պ՟ինի, ո՟պ Թէ ամենևին լլկանս ինչ չիցէ կրեալ. ասէ. արծաթ ձեր ը ձեզ լիցի 'ի կորուստ. ես ումեք պարտս ինչ ո՛չ պարտիմ, բայց միայն զ՟ած ճանաչել. վ՟ոյ աղօթս առնեմ՝ ըզգուշութ ը զդաւանութ՟ս իմ պահել, և խոստացելոց բարեացն հասանել ։ Յուլիանոս ասէ. ա՛յ հէգ և Թշո՛ւառական՝ ցածի՛ր 'ի բարկութ՟էդ, և շահեա՛ զանձնդ, զի զերծանիցիս յայլոցն ևս տանջանաց ։ Առ այս կրկնեաց Թէոդորիտոս. ա՛յ հէգ և Թշո՛ւառական՝ ապաշխարեա՛, և շահեա՛ զհոգի և զմարմինդ ։

Դարձեալ ցասեաւ յուլիանոս, և հրամայեաց զնա քերել. և յետ քերանացն ասէ. ը՟էր այդչափ դիմագրաւեալ՝ չկամիս հնազանդիլ ինքնակալին, և զայր մի խաչեալ ա՟ծ համարիս ։ Թէոդորիտոս ասաց. խաչեալն՝ զոր դու մարդ համարիս, և մեք ա՟ծ, զքեզ՝ ամպարիշտ և մարդախոշո՛շ բռնաւոր, յաւուր դատաստանի հրամայեսցէ արկանել 'ի գեհեան հրոյն ։ Յուլիանոս ասէ. դու առ այժմ աստէն առնուցուս զփորձ հրոյ. և հրամայեաց երկուս կանթեղս լուցանել, և մատուցանել աստի և անտի զկողիւքն ։ Եւ իբրև լուցին դահիճքն զկանթեղսն, երանելի վկայն ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ սկսաւ յաղօթս կալ և ասել. Տ՟ր ա՟ծ ամենակալ՝ որ արարեր զերկինս և զերկիր

և

և զԱՄՈՍ ոչ Ի՛ ԻՆՔ , հայրն կենսարարին և ԱՄ
ՅԱՑ , որ խոստացար պատուիր հաւատացեալոց
քոց , կատարեա՛ և յիս զորմանալն քո , և
ցո՛յց աննպարշտաց զքո խնամատուն և զօրուն .
զի աննենգեան ծանիցեն , թէ ո՛րչափ՛ ի մէջ
ե ԸՍ յոսացեալս Ի՛ քեզ և ԸՍ ամպարշտուն
անհաւատից ։

Եւ իբրև կատարեաց զաղօթիան՝ վերատաքե-
լոյ զամէնն , յանկարծակի զարկան զգեստն
կանթեղաւորքն . քզի տեսանէին ջոյս հրեշ-
տակս , զի կային զերանելեանն և խօսէին
ընդ նմա ։ Յայնժամ սրտմտեալ յոյժ յուդա-
նոսէ՝ հրամանաւ ետ այլոց զինուորաց , և յա-
րուցին զդահիճան . և պատուիրէր նոցա մի-
անգամ մատուցանել զկանթեղսն ։ Ասեն
կանթեղաւորքն . այլոց հրամայեսցէ քո քա-
ջութիդ մատուցանել . քանզի մեք տեսա-
նեմք ջոյս հրեշտակս՝ որ կան և խօսին ընդ
պատժաւորին , և ոչ իշխեմք հնազանդել .
զի հաստատեալ գիտեմք զԱՅՆՍ քրիստոնէից
ՅԱՅ մեծ և հզօր ։ Ընդ այս յանդնարին ցա-
սումն բերել յուլիանոսի՝ հրամայեաց վաղ-
վաղակի զդահիճան տանել ընկենուլ՛ ի ծով ։
Եւ իբրև յափշտակեցին զնա և տուին գնա-
ցին , ՚ըզ վկայն ձայնատու լինէր նոյ . յառա-
ջեցէ՛ք առ Է՛ղբարք , և ես ահա հաստանելոց
եմ ձեզ . զի յետ առակաւոյ նշան յաղթուե
ընդեմ հակառակորդին կանգնել , և զպար-
գեւանն ընկալեալ՝ ժամանեցից խրախու-
սել զձեզ ամ ծառայից ԱՅ ։

Յայնժամ առեալ ցնա յուլիանոս . և ՚ի հա-

կառակորդն քո՝ : Սբ̄ն ասէ . հակառակորդն
սատանայ է , որ քեւ այժմ զչարեաց արդիւնս
գործէ . իսկ զյաղթութի̄ն և զպարգեւականն
տայ յ̄ս քս̄ փրկիչ մարդկան , և արարիչ ա̄մ
ծի որդին միածին . որում փառք յաւիտեանս ,
ամէն : Եւ իբրեւ բազումք 'ի ժողովրդենէ
և յամբոխէ անտի անտիոքացւոց ձայնակ-
ցեալ սբ̄յն՝ զամէնն վերառաքեցին , ստէպ
շուրջ հայէր յուլիանոս , թերեւս զոք յայն-
ցանէ՝ որք զամէնն առաքեցին , կարիցէ ճա-
նաչել : Այլ ոչ զոք մարթացաւ նշմարել . և
իբրեւ ցնորեալ մտօք և խաւարեալ աչօք ասէ
ցսբ̄ն զայրագին . ա՛յ հէգ և թշո՛ւառականդ
թէոդորիտոս . զոր ամենեքեան գիտեն՝ թէ
յառաջ քան զերեք հարիւր ամ , կա՛մ սակաւ
ինչ՝ կ՛ի աւելի , 'ի կնոջէ ծնաւ , դու ասես՝
թէ զծս նա արար :

Թէոդորիտոս ասաց . դու պիղծ և անսբ̄՝ և
արժանի իսկ չե՛ս զայնպիսի խորհուրդ ու-
սանել . բայց զի մի՛ համարեսցին ծառայքդ
ա̄յ՝ որ շուրջ յա̄մ կողմանց բակ առել̄ կան ,
թէ չկարիցեմ բանիցդ ինչ առնել պի̄նի ,
մի՛տ դիր՝ զոր ասեմս : Որպէս յառաջագոյն
ասացի քեզ , ա̄ծ՝ որ զա̄մ արար բանի՛ւ իւ-
րով , ողորմեցաւ ազգի մարդկան , զի անսբ̄
և պիղծ դի՛ւաց երկիր պագանէին . և առա-
քեաց զբան իւր զմիածին որդին , զի մար-
մին մարդկեղէն զգենուցու , և չարչարակ-
ցաւն մերձեցուսցէ զմարդիկ առ ա̄ծ . քան-
զի զա̄ծեղէն զօրութի̄ ն̄ր̄ յայտնի ոչ ոք 'ի
մարդկանէ կարէր տեսանել . ոպ̄ և գրեալ
է ,

է, թէ ոչ ոք մարդ կարէ տեսանել զերեսս
իմ և ապրիլ. և արդ նոյն ինքն բանն ան-
մարմին մարմնացոյց զանձն իւր, յորժամ ըզ-
մարմինն յանարատ կուսէն զգեցաւ, և երևե-
ցաւ մարդկան։ Մարմնով երևէր, և ա̅ծային
զօրութ̅ն գործէր զա̅մ մեծամեծս. որում
արժանի եղեն ականատես լինել աշակերտ-
քըն, զարմացան, և հաւատացին. որք և
մեզ աւանդեցին զհաւատսն անպատում զօ-
րութ̅ն ն̅ր. զնա ծանի՛ր և դու գո՛նեա անա-
գան, զի կարիցես ապրիլ։

Յուլիանոս ասէ. քաջ իմն յամես 'ի ճոռո-
մաբանութ̅ի̅դ, այլ յինէն զայս լո՛ւր համա-
ռօտ. եթէ չառնուցուս յանձն ա̅ծոցն պաշ-
տօն մատուցանել ը̅ն կամաց թագաւորին,
սրով հրաման տաց սպանանել զքեզ. քանզի
տեսանեմ զքեզ յանդուգն յա̅մի, որ և չհա-
մարիս ինչ զտանջանսդ։ Թէոդորիտոս ա-
սաց. դու մարդասպան լինելով՝ ջանաս նմա-
նել հօրն քո սատանայի, և ես աղօթս առ-
նեմ՝ զի անարգել և անխափան կատարեցից
զընթացս իմ. բայց յիշեսջի՛ր դու՝ զոր կամիմ
ասել քեզ յառաջագոյն, մինչչև եղեալ. զի
վ̅ն այդր ա̅մի անզգամութ̅ն բարկութ̅ի մեծ
գայցէ քեզ յա̅յ. և զոր արարերդ և զոր առ-
նիցեսդ 'ի շնորհս քեռորդւոյ քո բռնաւորի,
նա չլինիցի քեզ շնորհակալ։ Եւ մինչդեռ
վկայն զայսոսիկ ասէր ը̅ն քօղով, ասէ յուլիա-
նոս. զոր կամիս ասել՝ ասա՛ յայտնապ̅. Թո՛ղ
տեսցո՛ւք, թէ լինիցի՞ զոր ասեսդ։ Յայն-
ժամ ասէ Թէոդորիտոս. դու չարաչար ախ-

տիւ՛ ի մահիճս ծնգիցիս, և անձամբ անձին
լիցիս կերակուր, և որդնալից ծորեալ ելա-
նիցես յՇէս. և բռնաւորն քո՛ ի ճակատուն՝
յորում ակն ունիցի արութիւն ինչ ցուցա-
նել, չվճարիցէ ինչ, այլ՝ յայլազգեաց մե-
ռանիցի, և բնաւ չգիտիցէ՝ յումմէ՛ խոցիցի.
և չդառնայցէ այսրէն՛ ի հռովմայեցւոց Ծս:
Յայս վայր ունկն եդեալ յուլիանոսի՝ ոչ և-
այլ կարաց հանդուրժել, այլ զահի հարել՝
թէ գուցէ այլ և-ս ինչ մեծամեծս և անբե-
րելիս խօսեսցի, վաղվաղակի հրամայեաց
տանել զնա, և սրով սպանանել: Եւ սբ̄ն
երթայր ցնծալով՛ ի տեղի կատարման, և բա-
զում ժողովուրդ զհետ նր̄. ուր աղօթս արա-
րեալ՝ զա̄մ հաւատացեալս յանձն առնէր ա̄յ
զմեծամեծս և զփոքունս, զպատուականս և
զանարգս. մինչև հատին զգլուխ երանել-
ւոյն. և այնպէս կատարեցաւ՛ ի քն (յամի
տ̄ն. 362. ՛ի Ժ. կաղանդից նոյեմբերի. ա̄ ՛ի
հոկտ. 23):

Իսկ յուլիանոս դատաւորն՝ քանզի անագան
գնաց յատենէն, զմնացորդս աւուրն և զգի-
շերն ա̄մ տրտմութ̄ բ հանէր յապարանս թա-
գաւորուն̄ն: Իբրև առաւօտ եղև, յարեաւ
վաղվաղակի եմուտ առ համանուն իւր յու-
լիանոս կայսրն՛ ի պալատն. և իբրև երկիր-
եպագ, հրամայեաց նմ նստել թ̄գ̄ւորն. և
նա եցոյց նմ զգիր սբ̄ սպասուցն, զոր էառ
՛ ի սբ̄ եկեղեցւոյն ա̄յ. և ապա ասէ ցնա.
Թէպէտև անագան բերի զգիր համարոյ կա-
րասւոյն, այլ հաւաստեաւ գրեցի զա̄մն և
յանդ

յանդ հանի. զի դիտասցէ ձերդ դիցանման մեծութի՛ն, թէ ո՛րչափ եկին անտի գանձք. և զայն ևս դիտասջի՛ր, զի զխանգարիչն Թէոդորիտոս՝ զոր խնդրէիր վ՛ս ընչից եկեղեցւոյն, հազի՛ւ արկի 'ի բուռն, և սաստիկ տանջանօք տանջեցի, և սրով սպանի։

Օ այս իբրև լո՛ւաւ կայսրն՝ զոր ոչն գիտէր, (զի՝ կատարեսցի բան սբ՛յն,) աղաղակեաց մեծաձայն, և ասէ. Որ իմ կամք չէի՛ն, զա՛յն արարեր. ես ջանացի՝ բազում պատճառանօք քակել զկրօնս քրիստոնէից, և չսպանանել զոք միանգամայն սրով. դու չարիս գործեցեր, զի պատճառ ետուր ժանտից գալիլեացւոցն՝ գրել զինէն բազում չարիս, ոպ՛ և ը՛ն առաջին Թագաւորսն արարին. զի ազգի ազգի պատճառս յօդեցին վ՛ս չարագործացն՝ որ կոտորեցան. զորս և վկայս իմն անու՛անեն. ուստի և դու պարտիս խնայել, և մի՛ առաջի ա՛մ գալիլեացւոց սպանանել զոք. և այլոց ամենեցուն զնոյն պատու՛իրէր առնել։

Եւ իբրև զայս տսաց ուրացօղ կայսրն, հայեցաւ ը՛ն քեռին և ետես՝ զի զամօթի հարաւ, և գոյն երեսաց ն՛ր եղծաւ, և ա՛մ մարմինն իբրև մեռելոյ եղև. կամեցաւ խաղաղութ՛ն արձակել զնա, և ասէ. երթիցո՛ւք դիցն զոհս մատուսցուք, զի զա՛ծպաշտութի՛ն կատարեսցուք. զի կարասցես սրսկել ինչ զքև, և ապրիլ 'ի շարաւոյ ժանտիցն։ Իսկ ոստիկանն յուլիանոս Թէպէտև 'ի մեծի տրտմու՛ն էր, սակայն յարեաւ ակամայ չոգաւ ը՛ն կայսերն. և իբրև գործեցին զանարժան գործն, և մատու-

տուցին զոհ դիւաց և զհաւ ինչ ընտիր, որ սագ հնդկաց կոչիւր 'ի քրմաց (3), զլեարդն հանին և կայծիւք խարշատեցին, և մատուցին նմա 'ի լերդէն. և նա առ ամօթոյ և ակամայ կամօք ճաշակեաց, և գնաց 'ի կայսերէն:

Եւ իբրև չոգաւ 'ի վանս հազարապետութեան իւրոյ, ոչ ուտել և ոչ ըմպել ինչ կամեցաւ, զղջացեալ ըստ չարիսն՝ զոր գործեաց. և 'ի գիշերի խիթք ինչ յորովայնին կացին, որով չարաչար տանջէր. զի լեարդն՝ զոր 'ի զոհից կռոցն ճաշակեաց, իջեալ նստաւ 'ի վրա լերդի նր, և մանր կոտորէր, և 'ի տագնապի մահու կացուցանէր: Եւ իբրև այգ եղև, յիւրմէ լերդէն ըստ բերանն 'ի վեր և 'ի վայր բերէր և ծամէր. զկէսն 'ի բաց թքանէր, և զկէսն անդրէն 'ի ներքս կլանէր. և այս եղև բազմ անգամ 'ի բազում աւուրս:

Իբրև չկարէր հանդուրժել այնուհետև տանջանացն, խարեալ խղճիւ մտացն՝ զգացոյց կայսերն, և աղաչէր բանալ զեկեղեցին քրիստոնէից. և թագաւորն յղեաց պիւնի, թէ ոպ դուդ փակեցեր, նոյնպէս և դու երթեալ բացցես: Եւ նա դարձեալ զգացոյց կայսեր զթշուառութիւն իւր, ասելով. վա քո արքայ չարաչար տանջիմ և կորնչիմ. իսկ ուրացօղ կայսրն արար պիւնի. թերեհաւատեցեր ասէ 'ի դիցն, և վա այնորիկ չարչարիս այդպիսի տանջանօք:

Եւ այնպէս տառապեցաւ մինչև ցվախճան հէգն և թշուառականն յուլիանոս ոստիկան.

կան. այլ ինչ կերակուր չէր ձեռնհաս ճաշակել, բայց միայն իւր լեարդն էր նր կերակուր՝ ը մարգարէութեան երանելի վկային. և յայնր վր որդնալից ևս եղև, և ուտէին որդունք զմարմին նր. և ապա ուրեմն եհան զդառնացեալ ոգին։ Իբրև լուաւ անօրէն Թագաւորն, ասէ. երկմիտ եղև առ դիսն, որպս ասացի, և ոչ հաւատաց. վ ն այնորիկ կրեաց զայն։ Եւ իբրև Թաղեցին, գետինն ոչ ընկալաւ զնա. բազում անգամ ծածկէին, և գային դարձել՝ի վեր եկել գտանէին. մինչև Թռչնոց և գազանաց եղև կերակուր։ (4) Իսկ բռնաւորն յուլիանոս ուրացօղ յետ սակաւ աւուրց չոգաւ՝ի պարսս՝ տալ ճակատս. իբրև կռուեցաւ և յաղԹեաց, և համարէր՝ Թէ այնուհետև արար և կատարեաց արուի ինչ, յանկարծակի երևեցան նմա զօրք հրեշտակաց. հրաման ետ վառիլ իւրոց զօրացն, և իբրև ը մարդկան՝ի ճակատս դիմեաց երԹալ. և ոչ գիտէր հէգն և Թշուառականն, Թէ յերկնից բարկութի եկեալ հասեալ է նմա։ Յանկարծակի ուրեմն նետ եկն յօդիցն, և եհար զնա ներքոյ ստեանն, և սաստիկ արիւն վիժեաց՝ի նմանէ, և՝ի տագնապի կայր այնուհետև՝ի ցաւոցն վտանգէ. և այնպէս Թուէր նմա, Թէ քն եկել կացցէ յանդիման նր և պատուհասեսցէ զնա. համարէր չուառականն՝ Թէ առ նմա մօտ կայցէ. և զայն չիմանայր՝ Թէ կարօղ է յերկինս լինել, և յերկիր՝ի մօտոյ երևիլ. էառ յարենէն, և յօդն՝ի վեր ցանեաց. աղաղակեաց

և

և ասէ. շատ է ասել քեզ, շատ է՝ յաղթեցեր. (կամ ոչ այլք յաւելուն, յադեսջիր գայլելեացն). և ես զդառնացեալ օգին. որով և ամ մարգարէութիւնքն կատարեցան, զոր մարգարէացաւ նա վկայն Թէոդորիտոս։

Օ այս ամ՚ի գիր անցուցեալ ժամանակակից և ականատես արանց պալատանն՝ այսպէս կնքեն զվախճան վկայաբանուես. * Ա՛ե՛ք՝ որ անդէն իսկ ՚ի պաղատան կայաք, և իրա-գէտ իրացն էաք, որ ամ գործոյն ուշ ունէաք ծառային նոյ, հաստատուք ՚ի վե՛ր հասեալ գրեցաք, և առաքեցաք առ ամ եղբարս, որք ձգմարտուք զկետ երթեալ իցէք կենարարին մերոյ ‖։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ֆ։

(1) Պահեմք ըստ ճառընտրին զյունական հնչուածն ՚Ընդրէպոս, որ և ՚Ընդրէպոս. զորոյ զհայցական հոլով իբր ուղղական վարեն հին ոճնացոյցք առ հասարակ՝ գրեալով ՚Ընդրէպոն. որ ՚ինոր օրինակս և ՚ի տպագրեալս կարձելով դնի ՚Ընդրէպոն. ոչ և առ ոմանս ՚ի լատինաց ասց վրիպակաւ գտանի գրեալ Թէոդորոս՝ փոխ գրելոյ Թէոդորեատոս։ Ըստ սմին օրինակի և ՚ի հին ճաշոցս եմ տեսանել՝ մերթ Թէոդորիտոս, և մերթ Թէոդորիտոն գրեալ։

(2) Ա՛յնչափ է հնութեի և վաւերականութեի առաջի-կայ վկայաբանութեես՝ որ ՚ի ճառընտրի մերում, մինչ զի զնոյն նոյնօրինակ երևի ընթերցեալ և առղմէնոս յաւուրս իւր. որպէս յայտ է ՚ի քաղուածոյն զոր առնէ. նոյնպէս հաստատեն և բանք ոսկեբերանի ՚ի գիրն ԸՆդեմ հեթանոսաց, և Թէոդորեատոսի. Ք. 11. և 12, ուր նկարագրեն զանցս յուլիանոսի կայսեր ուրացողի և

քեռ-

քեռւոյ նր̄ յուլիանոսի յանտիոք. զնոյն ենթադրէ և մետափրաստէս 'ի վարս արտեմեայ վկայի։ Այլ առաւել բառ առ բառ քաղէ զվկայաբանութիւն մեր պատուական բեդա, թո՛ղ զտարբերութիւն օրինակաց և թարգմանութեաց. զր̄ և զյիշատակարան մեր նա զայսօրինակ յառաջ բերէ 'ի վախճանի. * Մեք՝ որ յանտիոք 'ի
,, պաղատն էաք, և ը̄ նմա (ցր̄ ը̄ յուլիանոսի) յանզգա-
,, մութեան կայաք, թէպէտև մեղաւորք, ծառայքս ա̄յ,
,, զայսոսիկ՝ որք անցին ը̄ ծառայն ա̄յ թէոդորետոս 'ի
,, ժ կաղանդիցն նոյեմբերի, ճշմարտութ̄ գրեցաք ||։
Առ այժմ չկարացաք 'ի ձեռս բերել զյունական օրինակ գործոյս, որ թերևս կայ մնայ 'ի խորշս ուրեք գրատանց. զոր բոլլանդեանց միայն էր յերևան ածել, եթէ 'ի գլուխ հանեալ էր նոցա զամիսն հոկտեմբերի։ Յընթացս բանին գրեթէ պարզապէս զճառընտիր մեր օրինակեալ է մեր. իսկ զսկզբնաւորութիւն՝ զոր ը̄ իմաստից ևեթ քաղեցաք ը̄ մերում ոճոյ, դիցուք ասա շարագրութ̄ ճառընտրին, որ ունի այսպէս. * Առաքի-
,, նի և ա̄ծասէր յօժարութ̄՝ երանելոյն թէոդորիտո-
,, սի վկային ո՛չ միայն ը̄ յօժարութ̄ և ը̄ կարծրութ̄ համ-
,, բերութեան է զարմանալ, այլև ը̄ հաստատուն և ը̄
,, անշարժ հաւատն՝ զոր ունէր առ ա̄ծ։ Նախ և միայն
,, առ յուլիանոսիւ՛ արքայիւ՛, մանաւանդ թէ առ բըռ-
,, նաւորաւ, և ո՛չ արքայիւ՛, յանտիոքացւոց քաղաքին
,, վկայեաց. ո՛չ միայն զանձն օրինակ բարի ա̄մ մարդ-
,, կան երևեցոյց՝ հաւատարիմ վկայ քս̄ի երևեալ ('ի
,, լուսանցս, գտեալ), այլև սքանչելի և զարմանալի
,, առ ամենեսեան երևեցաւ, անպարտելի և յաղթող
,, ախոյեան ը̄դեմ սատանայի եղեալ. որ և զանեղծու-
,, թեան պսակն առ, և երկնից մտիցն արժանաւոր եղև,
,, և վերին քաղաքին քաղաքացի. սկիզբն և կատարած
,, հալածանացն կացոյց զինքն. և յայլոցն ամենեցուն
,, քս̄ի ծառայիցն՝ զսպառնալիսն, որում ակնունէին,
,, շիջոյց, վկայ անպարտելի և յաղթող վասն թգ̄րու-
,, թեան քս̄ի երևեալ։
,, Յառաջնումն ամի թգ̄րութեան յուլիանոսի, մինչդեռ
,, նորընծայ էր 'ի թգ̄րութեան, և կասկած 'ի կոստանտնի
,, արքայէ, որ ակն ունէր՝ թէ նովին սրովն, որով հայր
,, նր̄՝ մեռցի. որ այնչափ և այնպիսի ե̄պսօք ապրեցաւ
,, երբեմն 'ի մահուանէ՝ թաքուցեալ ը̄ սբ̄ սեղանովն
,, ա̄յ (զորմէ տես 'ի վարս սբ̄յն մարկոսի արեթուսայ
,, ե̄պսի), և ա̄ծեղէն գրոց եղեալ գրագէտ և ընթեր-
,, ցիչ։

„ ցնչէ։ Իբրև ժամանակք ինչ անցին, և հանգեաւ ածա-
„ սէրն կոստանտիանոս, և առեալ յուլիանոսի զթագրու-
„ թիւն, ոչ միայն զհաւատոյն անարգեաց, զի ապստամբ
„ բեաց ՚ի հաւատոցն, այլև ՚ի թշնամանս և յանհնա-
„ րին վտանգս արկանէր զոմն մահերիմն. և պարտևս և
„ պատիճս կոստապաշտից ընտրհէր. և զբազումս այն-
„ պիսի երօք պատրէր, մինչև զքեռւին իւր զանուճանա-
„ կիցն յուլիանոս ապստամբեցուցանէր ՚ի հաւա-
„ տոցն և ՚ի յուսոյն ՚ի ||. ևն։

(3) Ա յսպէս բացատրեցաք զայն մ՚թին ընթերցուածն Ճառընարին. * Եւ մատուցին զոհս գիւացն, զոյիոն „ յին հաւ, ոյզ աւեն ժանդագործք՝ թէ ՚ի հնդկացէ, „ զնեարդն հանին ||. ևն։ Ուր ձայնդ զոյիոն՝ թէ չկայէ յատուկ անուն, է բառ յունական ըօյնօն, որ թարգմանի՝ լաւագոյն, կամ ընտիր. և կամ գուցէ յունարէն գրեալ էր սագ, որ է ըստ նոցա՝ խին, խինօս. քանզի այլք յիշեն զոհ սագի յանտիոք առ յուլիանոսիւ. և թերևս է այն՝ որ կոչի հնդկահաւ, ունելով զնմանուԹիւն յին սագի։

(4) Ա մ մատենագիրք յիշեն զպատուհասն հասեալ ՚ի վեր յուլիանոսի ոստիկանի յանտիոք՝ վա՛ն անիրաւելոյ նորա յեկեղեցին և ՚ի սո՛ք քահանայն Թէոդորիտոս. Թէպէտև ոմն այսպէս, և ոմն այնպէս նկարագրէ զնոսին և զբարաչար սատակումն. զոր չէ հարկ մի առ մի նշանակել. Թո՛ղ զի ամն վերածելի է առ հաւատարիմ վկայականուԹիւնս մեր, որ չգիտեմ զիարդ չէ՛ անկեալ ՚ի ձեռս հաւաքողին հայերէն յայսմաւորաց. վա՛յ պակասի անդ յիշատակ սոցա, Թո՛ղ Թէ վարք նո՛ր. ոյզ և ասոնակցեցի նո՛ր՝ զենոնի և մակարայ։

ՎԿԱՅԵՐԱՆՈՒԹԻՒՆՔ

Սէց Նէրսէսեանց և Օշեանեանց։

Յայտ վայրի՝ ուր տօնացոյցք մեր նշանակեն առընթեր Թէոդորիտոնի քահանայի զջրեսին անուանս, * զԵնոնի զինաւորին, զրին, և մակարայ, և եւդոքսեայ, և ռամելայ ‖, զի միով անուամբ զԵնոնի՝ երկուս իմանամք վկայս զօրականս՝ ի միում ժամանակի նահատակեալս. մին առանձին՝ փառաւոր վկայութիւք, և միւսն՝ ի համար գնդին եւդոքսիոսի և մակարայ. իսկ ռամելայս ո՛չ է՝ ի գնդէ զԵնոնեանց կամ եւդոքսեանց, այլ յատուկ ժամանակաւ ուրոյն վկայեալ. բայց վասն կատարելոյ տրամաբանի՝ ի մեկնիչս հայոց, և կամ՝ ի մի և՝ ի նոյն աւուր՝ որ օր ժողովեր հոկտեմբերի՝ յայլ և այլ գիրս, ՚ի մի յիշատակարան անցին վկայաբանութիւնք և տօնախմբութիւնք։ Արդ՝ ի պահել զկարգաբանութիւն պատմական ըստ Ճառընտրաց մերոց և այլոց ազգաց, հարկ է մեզ՝ ի տորէ և՝ ի վեր դառնալ զանուանս եզեալս այսպէս. * ռամելայ, և եւդոքսեայ, և մակարայ, և զԵնոնի զինաւորին, և զԵնոնի զօրականին ‖. զոր քանզի ի նմանատիպ յատուկ պատմուածոց իւրաքանչիւր ինչ ի միոջէ։ (1)

(1) Յայտ վայրի՝ ուր տօնացոյցք մեր նշանակեն առընթեր Թէոդորիտոնի քահանայի զջրեսին անուանս, * զԵնոնի զինաւորին, և մակարայ, և եւդոքսեայ, և ռամելայ ‖, զի միով անուամբ զԵնոնի՝ երկուս իմանամք վկայս զօրականս՝ ի միում ժամանակի նահատակեալս. մին առանձին՝ փառաւոր վկայութիւք, և միւսն՝ ի համար գնդին եւդոքսիոսի և մակարայ. իսկ ռամելայս ո՛չ է՝ ի գնդէ զԵնոնեանց կամ եւդոքսեանց, այլ յատուկ ժամանակաւ ուրոյն վկայեալ. բայց վասն կատարելոյ տրամաբանի՝ ի մեկնիչս հայոց, և կամ՝ ի մի և՝ ի նոյն աւուր՝ որ օր ժողովեր հոկտեմբերի՝ յայլ և այլ գիրս, ՚ի մի յիշատակարան անցին վկայաբանութիւնք և տօնախմբութիւնք։ Արդ՝ ի պահել զկարգաբանութիւն պատմական ըստ Ճառընտրաց մերոց և այլոց ազգաց, հարկ է մեզ՝ ի տորէ և՝ ի վեր դառնալ զանուանս եզեալս այսպէս. * ռամելայ, և եւդոքսեայ, և մակարայ, և զԵնոնի զինաւորին, և զԵնոնի զօրականին ‖. զոր քանզի ի նմանատիպ յատուկ պատմուածոց իւրաքանչիւր ինչ ի միոջէ։ (1)

Վ. ԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Ռամելոսի, որ և ռոմելոս հազարապետ։

Հ. սեպտ. 11։ Յ. սեպտ. 6։ Լ. սեպտ. 5։ Բոլլանդեանն վելդիոս՝ անդ։ Ճառընտ. Ա. յլա̄. հոկտ. 19։ Մետափր. և այլք։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅՈ-
րում Թագաւորեաց տրայիա-
նոս կայսր հռովմայեցւոց (յա-
մի տ̄ն 98, մինչև 'ի 117), բա-
րիատեացն սատանայ էարկ 'ի սիրտ ն̄ր խոր-
հուրդ չարութ̄ն՝ յարուցանել հալածանս 'ի
վ̄ր եկեղեցւոյն ա̄յ. և նեղէին ա̄մ ուրեք
զհաւատացեալսն 'ի ք̄ս, և ստիպէին զոհել
անշունչ դիւ̀ացն։ Եւ նստեալ յատենի ամ-
պարիշտ Թագաւորն՝ հրաման տայր յա̄մ քա-
ղաքս և 'ի գեօղս զոհել ա̄ծոցն, մանաւանդ
զայնոսիկ ստիպելով՝ որ 'ի ք̄ս կէին բարե-
պաշտութ̄ն 'ի զինու̀որական կարգէ. վ̄ոյ և
զհեծելազօրսն առաքէր ը̄ ծս ա̄մ 'ի ձեռն
նամակաց, զի տանջանաց մատնեսցին քրիս-
տոնեայքն՝ ո՛ւր և գտցին։

Եր յայնժամ 'ի դուռն արքունի ոմն յիշխա-
նաց՝ ռոմելոս կամ ռամելոս անուն, որ ըստ

հռով-

հռովմայեցւոց ռօմուլուս, և ը̄ յունաց ռօ-
մի՛ւլոս՝ յանուն հիմնադրի քաղաքին հռով-
մայ. և ունէր զպատի՛ւ պրեպոսիտութ̄ե կամ
պրոպոսիտոսութ̄ե, ր̄ արքունի հաղարապե-
տութ̄ե կամ վերակացութ̄ե զօրաց (2)։ Սա
մատուցեալ առ Թագաւորն՝ ասէ. հրաման
բարեպաշտութ̄ե ձերոյ հղօր և պատո՛ւական
է. բայց զոմանս յերևելի պատո՛ւաւորաց
պաղատանն առաքեա՛ յարևելս 'ի դաւառն
գաղատացւոց (որ և ասիական դաղ ղիացիք)
առ քաջամարտիկ և արիագոյն զօրսն։ (3)
Յայնժամ ասէ Թագաւորն ցռոմելոս. երդ-
ո՛ւեալ 'ի փրկութ̄ի ա̄ծոցն, զի բարիո՛ք են
խորհուրդքդ քո. և հրամայեաց գնալ հնգից
արանց 'ի մեծամեծաց պաղատանն, առաքե-
լով 'ի ձեռն ն̄ց ինչս բազումս, գրե̄լ և հրո-
վարտակ ը̄ նոսա, որ ունէր օրինակ զայս.
Տրայիանոս միշտ յաղթօղ Թագաւոր, կայսր
հռովմայեցւոց, պատո՛ւական դասուց զօրա-
դլխաց կոմսից երկոտասան ազգաց՝ ուրախ
լինել (4)։ Հրամայէ մեր քաջութ̄իս 'ի ձեռն
պատո՛ւիրանաց մերոց երևելի և գլխաւոր իշ-
խանացդ պաղատանս մերոյ, զոր խորհեցաք
'ի միասին՝ ծանուցանել ձեզ վ̄ս ա̄ծոցն բա-
րերարութ̄ե, որք զարիական քաջութ̄իս և
զօրութ̄իս շնորհեն ամենեցուն. և վ̄ս այնո-
րիկ պարտիմք հատուցանել նոցա ընծայս և
զոհս, և սիրել զն̄ս յա̄մ մտաց և 'ի զօրու̄է.
զի յելանելն ձեր 'ի պատերազմ՝ վաղվաղա-
կի յաղթօղ երևեսջիք 'ի վ̄ր Թշնամեաց ձե-
րոց, որք են 'ի կողմանս արևելից։

Իսկ նոց առժամայն արհամարհել զհրամանս
Թագաւորին՝ ոչինչ փոյթ կալան բանից հրո-
վարտակին. այլ վառեալ յառաջիկայ մար-
տին՝ որ ըստ Թշնամիս արքունի՝ ըստ օրինի քրիս-
տոնէութեան, յաղթեցին հակառակորդաց, և
դարձան փառօք 'ի պատերազմէ: Իբրև լը-
ուաւ զայս ռոմելոս պրեպոսիտոսն, գովեաց
զքաջութիւն քրիստոնեայ զօրականին. զի քոնիւ
զօրացեալք վանեցին զԹշնամիս հոգւոյ և
մարմնոյ միանգամայն. և ինքն՝ որ յառաջա-
գոյն իսկ տեղեակ էր օրինաց քրիստոնէութեան,
դարձաւ 'ի հաւատս քոնի:

Իսկ Թագաւորն տեսել զհրամանս իւր ար-
համարհեալ 'ի քրիստոնեայ զօրականէն,
բարկացաւ յոյժ. և ոչ հայեցեալ 'ի յաղթու-
թիւն՝ զոր արարին, իբրև եկն անձամբ յար-
ևելս, հրամայեաց ելանել նոց 'ի հայրենի
գաւառէն իւրեանց 'ի գաղատիոյ, և երթալ
'ի կողմանս հայոց 'ի քաղաքն մելիտենի. զի
համարեցաւ այնու անարգել զնոս իբրև վտա-
րանդիս 'ի հայրենեաց: Եւ նոք զարհուրելք
'ի սպառնալեաց բռնաւորին տրայիանոսի՝
եկին 'ի նախասացեալ գաւառն. զի մի բար-
կացեալ կոտորեսցէ զնոս. և էր Թիւ զօրաց
նոց՝ մետասան հազար արանց պատերազմո-
ղաց սուսերամերկաց: Այլ Թէ զի՞նչ անցք
անցին զկնի ըստ նոս, լռութիւն է 'ի վկայաբա-
նութեան ճառընտրացս. բայց են՝ որ ասեն, Թէ
նահատակեցան վոս քոնի զօրականքն այն բիւր
մի և հազար մի. և ըստ բարոնիոսի կարծին լի-
նել նոյն այն տասն հազար կամ բիւր մի նա-
հա-

հատակք, որք ասին յոմանց խաչեալ յայրա-
րատ առ ադրիանոսիւ՛, որ յաջորդեաց տրայ-
իանոսի ։ Բայց մեք 'ի կարգ պատմութեան
դարձցուք ։

Յայնժամ տեսեալ իշխանին ռոմելոսի զձա-
խողակ միտս տրայիանոսի ը՛ղեմ հաւատացեալ
զօրականին վտարանդի եղելոյ, մեղադիր լի-
նէր նմա ասելով. ո՛վ թ՛գ՛ւոր այնպէ՞ս կար-
ծեցեր դու, թէ իմաստութեան ինչ գործ գոր-
ծեցեր՝ զայդ առնելով ։ Ասէ ցնա թագա-
ւորն. ուրեմն և դո՛ւ խաբեցար յաղանդոյ մո-
լորութեան ն՛ց ։ Իսկ երանելին ռոմելոս ո՛չ ծած-
կեաց զլոյսն ը՛ գրու՛անաւ, այլ ցանկացեալ
վկայ լինել ճշմարտութեան՝ սկսաւ համարձակ
յանդիմանել զբռնաւորն, և ասէ. յիմա՛ր և
անզգայ՝ արբեալ չարին մոլորութ՛բն, դու
զքո սնոտի ջանսդ՝ զոր ունիս առ կուռս ան-
մռունչս, պատմեա՛ ինձ. և մի՛ բամբասեր զիմ
կատարելութի՛ հաւատոյս ։

Բարկացաւ թագաւորն, և հրամայեաց տա-
րածել և մահակօք հարկանել զնա. և ասէ
ցնա. տեսցո՛ւք այսուհետև, եթէ օգնէ՞ քեզ
ք՛ն քո՝ զոր ասես ։ Ասէ ն՛բն. անդնդային
վիշապ և կեղծաւոր, ո՛չ իմացար, թէ չարչա-
րանքդ քո՝ որովք կարծես զարհուրեցուցա-
նել, ճողոպրեն զիս և փրկեն 'ի կռոցն պըղ-
ծութ՛է, և զգեցուցանեն ինձ զանապական
զգեստն՝ զոր պարգևէ ք՛ն սիրելեաց իւրոց (5) ։
Տեսել՛ թագաւորին՝ եթէ ոչինչ օգտի, այլ
յամօթ լինի, հրամայեաց սրով բառնալ
զգլուխ վկային ։ Եւ այնպէս կատարեցաւ

նքն ռոմելոս բարի խոստովանուք յամսեանն հոկտեմբերի ժթ. յաւուր շաբաթու, որպ կարծի՝ 'ի մելիտինէ հայոց. ըս որում և զհետ բերէ Ճառընտիրն զկատարումն եւդոքսեանց 'ի նմին քաղաքի. զորոց ժամ է պատմելոյ։

Վ. ԿԱ. ՅԱ. ԲԱ. ՆՈՒԹԻՒՆ

Սբյն Եւդոքսիոսի կոմսի, Զենոնի զինաւորի, և Մակարայ։

Հ. սեպտ. 11։ Յ. սեպտ. 6։ Լ. սեպտ 5։ Բոլլանդեանն վէլդիոս՝ անդ։ Ճառընտ. Ա. յլա = յլը. հոկտ. 19։ Մետաֆր. և այլք։

Ի ԲՐԵՒ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ դիոկղետիանոս հալածիչ քրիստոնէութե՛, սկիզբն արար հալածանաց նախ ըդէմ քրիստոնեայ զօրականին՝ յամի տն 298. քանզի նըստել՝ 'ի բարձր բեմի՝ առաքեաց հրովարտակ ը տմ գաւառս՝ յիշխանս և 'ի դատաւորս և 'ի զօրագլուխս, դարձուցանել զամենեսեան 'ի հաւատոցն 'ի կռոցն խաբէուի՛, առաւել զորս կայցեն 'ի զօրս արքունի։

Եւ ընկալեալ զայսպիսի հրամանս իշխան մելիտինոյ, որում անուն էր պոնտիանոս (6),

զի

զի և նա հելլենացի էր ազգաւ, հրամայեաց քարոզ կարդալ ԸՆ ամ հրապարակս և ԸՆ գաւառսն, եթէ որք ոչ կամիցին հաւանել հրամանաց ինքնակալին և զոհել ՊԾոցն, անողորմ տանջանօք և սրով զրաւեսցին 'ի կենացս։ Եւ ամենեցուն քրիստոնէից լուեալ զայսպիսի սպառնալիս թռնաւորին, վաղվաղակի խուճապեալք յերկիւղէ տագնապին՝ թաքուցանէին զանձինս իւրեանց, զի մի 'ի բուռն անկցին անՄԾ դատաւորին. զի ո՛ւր և գտանէին, նեղէին, և մեծամեծ տանջանս 'ի վՐ ածելով՝ ստիպէին զոհել ՊԾոցն, և երկիրպագանել անշունչ պատկերաց։

Յայնժամ եկեալ արք ոմանք՝ չարախօսուԹ առ իշխանն մատուցանէին վՆ մարինոսի, որ եւդոքսիոսն կոչեցաւ, որ և էր 'ի դասէ պրիմիկեռացն ՅԹ ատենադպրաց՝ ոՊ դպրապետ, և էր պատուեալ իշխանութԹ կոմսութԵ 'ի կարգի զօրավարաց (7). և ասէին, եթէ ո՛չ հաւանի երբէք թԳրական հրամանացն, և զՊԾոցն զոհս ո՛չ մատուցանէ. այլ զխաչեՂն խոստովանի ԱԾ, և 'ի նա հաւատացեալ է։ Եւ զայս լուեալ դատաւորին՝ հրամայեաց արանց հնգից զօրականաց՝ խնդրել զնա ո՛ւր և գտանիցի, և բերել յատեան դատաստանին։

Եւ եկեալ նՅ 'ի գեօղն՝ յորում բնակեՂ էր նա, հարցանէին վՆ նՐ. և ասեն արք տեղւոյն ցնՆ. աւանիկ՝ զոր դուքն խնդրէք, շրջի 'ի դաշտի անդ՝ որ կոչի կուպատիա. և գնացին առ նա։ Իսկ նՐ յառաջագոյն իմացեալ

զգաստատ նոցա՝ գնացեալ էր ի լեառն, և
նստէր անդ՝ հայելով ի նա. և տեսեալ զի
ատեպաւ խնդրելին գնաց, եկեաւ ի տուն իւր
փութանակի՝ փոխեաց զհանդերձս իւր, և
զգեցաւ հանդերձ աղքատի, զի մի ծանեցի.
և եկեալ ի տեղի մի՝ հանդիպէր նոցա։ Եւ
ասէն ցնա զինուճորքն. գիտեցե՞ս արդեօք՝
թէ ուր կայ բնակեալ կոմսն մարինոս, որ
կոչի եւդոքսիոս։ Եւ նա ասէ ցնա. և վասն
որո՞յ իրի խնդրէք գնա, կամ զինչ բանք կայեն
ձեր ընդ նա, ասացէ՛ք ինձ, և ես ցուցից ձեզ
գնա։ Եւ յաւելին՝ թէ իշխանն խնդրէ գնա,
կրկին հարցանէր. վա՞ր որո՞յ խնդրէ գնա. և
նոքա ասեն. վա՞ր զի ոչ հաւանի հրամանաց նորա
նահապետին, և ածցեն ոչ զոհ։

Յայնժամ ասէ ցնա եւդոքսիոս. եկայք՛ ի
տուն իմ, և հանգերծուք փոքր մի, և ես ցու-
ցից գնա ձեզ. և տարաւ գնա՛ ի տուն իւր. և
ասէ ցաւտաւսին իւր, որում անուն էր մանուա-
նա վահրտունի. պատրաստեա՛ ձուկ եկեղոցա
առ մեզ. և եդ առաջի նոցա գերգան, և ձկաշա-
կեցին։ Եւ ասեն ցնա. արդ ցո՛յց մեզ զկոմսն
եւդոքսիոս. և նա ասէ ցնա. զոր խնդրէքն՝
ե՛ս եմ։ Ո՛ արմանք կալաւ զարան, և ասեն
ցնա. ընդէ՞ր արարեր զայդ. ոչհաւասիկ զբա-
նամբ մեք առ իշխանն, և ասեմք, ոչ գոտաք
գնա. և դու զանխլացեր և թաքո՛ զանձն քո,
զի մի ըմբռնեսցես և անկցես՛ ի ձեռս իշ-
խանին։

Նա

Եւ կոչէ զամուսինն իւր՝ պատուհիրեաց նմա
ձի տանն իւրոյ. և ասէ ցնա. ոմ կին՝ փոխե-
լոց եմ ես՝ ի տնոտն և յանցաւոր կենաց աստէ
՚ի մշանջենաւոր և յաւիտենական կեանն,
և այլ ոչ ևս տեսանեմ լոց ես զիս՝ ի մարմնի
սմա. արդ զոր սահմ քեզ՝ լուր ինձ. և
կենալն իմ՝ ի մարմնոյ սատի՝ մի ողջա
առեալ արտասուեսցես՝ ի վերայ իմ, այլ
զգեցիր զգեստ զհարսանեացն քոց, և վա-
ռեա լապտերս և ջահս. և առեալ անօթ
մաքուր՝ ժողովեա զարիւն իմ. և առեալ
զգուխ իմ և զմահակարիսոյ զորդւոյ իմոյ, ու-
րախ լեր՝ ի տէր ոմն հարան քոյ։ Եւ զայս ա-
սացեալ՝ զգեցաւ եւդոքսիոս զգեստ ածնիւ
և պայծառ ընդ պատուհոյ իւրոյ, և նստեալ
կերևիլ իւր՝ գնաց զոհարթուածքն ընդ զին-
ուսն։

Եւ երբև յանդիման եղև ատենին, ասէ ցնա
դատաւորն. ուրախ լեր փառաւորեալ կոմս
եւդոքսիէ։ Եւ պէնսէ եւդոքսիոս. ուրախ
լեր և դու ոմ դատաւոր։ Եւ ասէ դատա-
ւորն. խոստացիր ոմ կոմս, եթէ վա ոմոյ դո-
ծոյ խնդրուիսաք զքեզ։ Ասէ երանելին. պատ-
մեա ինձ ոմ դատաւոր՝ վա ոմոյ խնդրուիսին
զիս։ Ուշանայն ասէ. վա այնորիկ կոչեցեալ
զքեզ, զի հաւանեսցիս հրամանաց ինքնա-
կալին, և զոհեսցես ընծոյն։ Ասէ՝ ոք վկայն
ծնծաղեցաւ՝ ի վա անմտութենէ դատաւորին,
և ասէ ցնա հեգնելով. և ես վասն այնորիկ
զգեցեալ եմ հանդերձս պատուականս և պայ-
ծառս, և նստէ՝ ի վա սպիտակ երիվարիս՝

եկեալ եմ առաջի քո բեմբիս ։ Ասէ դատաւորն. երդուեալ յոծսն ամ, եթէ լսէ թագաւորն վ՞ն հնազանդութեան քո առ կայսերական հրամանսն և զոհելոյ ոծոցն, յերկրորդական աթոռ թգրուեն իւրոյ նստուցանէ զքեզ ։ Ասէ երանելին. ես յուսացեալ եմ յաւիտենական կենացն արժանի լինել, վ՞ոյ և պատրաստ եմ երկիրպագանել ճշմարիտ ա՞ծութեն ։

Ընդ այս ուրախ լինէր բռնաւորն, կարծելով՝ թէ վ՞ն դիցն ասիցէ զայն. վ՞ոյ ասէ ցեւդոքսիոս. փառաւորեալդ և քաջ կոմսդ՝ 'ի վաղիւ եկեսջի՛ր 'ի տաճար ոծոցն, և ը՞ մեզ երկիրպագցես նոցա ։ Ասէ կոմսն. և քանի՞ աստուածոյ հրամայես զոհել ։ Իշխանն ասէ. դիոսի, ապողոնի, և մեծին արտեմեայ ։ Կոմսն ասէ. երից հրամայեցեր հաւատալ սուտ ոծոց, թողեալ զմի ա՞ծ ճշմարիտ՝ որ յերիս անձինս. այլ ես հաւատամ 'ի հայր և յորդի և 'ի սբ՞ հոգին՝ յերրորդութիւն անբաժանելի. քանզի քրիստոնեայ եմ, ո՞պ և գիտես ։

Բարկացաւ իշխանն, և ասէ. ո՞րպէս իշխես ասել զայդ՝ արհամարհելով զհրաման ինքնակալին ։ Յայնմ վայրի ժողովեալ էին 'ի տեղի ատենին և բազումք 'ի հաւատացեալ զինուորակցաց սբ՞յն եւդոքսիոսի. և լուեալ զվկայական խոստովանութիւն առաքինի զօրավարին իւրեանց՝ ձայնակից լինէին նմա ուրախութ՞ ։ Յորս զայրագին հայեցեալ բռնաւորին՝ ասէր. և արդ որ ոչ կամի 'ի ձէնջ հաւա-

ւանել հրամանաց ինքնակալին, լուծցէ զգօ-
տի իւր զզինուորութ̅ե̅, և դիցէ առաջի իմ։
Յայնժամ երանելին մարինոս՝ եւդոքսիոսն
կոչեցեալ՝ նախ քան զտ̅մ լուծանէր զգօտին,
և ձգէր առաջի բռնաւորին. զնոյն արտրին
և այլ ընկերք ն̅ր̅ զկնի ն̅ր̅. և էին նոքա արք
հարիւր և չորք, կամ հազար հարիւր և չորք.
և ասեն ցբռնաւորն. մեք դասաւորեալ եմք
յերկնային զինուորութ̅ի̅ս հրեշտակաց։
Տեսեալ իշխանին զհամարձակութ̅ի̅ բազմութ̅ե̅
ն̅ց̅՝ սարսեաց 'ի նոցանէ. և եդեալ զնոսա 'ի
դիպահոջ՝ գրեաց 'ի ձեռն նամակաց առ թա-
գաւորն, և յորդորէր զնա՝ հրաման տալ
կարճել 'ի կենաց զամենեսին. եթէ զբազ-
մութ̅ի̅ս զայս կորուսանեմք ասէ, այլ ոք ո՛չ
կարէ կալ հակառակ հրամանաց ձերոց, և
անարգել զոյծսն։ Եւ լուեալ թագաւորին՝
հրամայեաց զայնոսիկ, որք յառաջագոյն լու-
ծին զգօտիս իւրեանց, սրով կատարել, և
զայլսն անպատուհաս արձակել. և ընկա-
լեալ զհրաման թ̅գ̅ր̅ի̅ն՝ արձակեաց զնոսա.
(ուր իմանան վկայաբանք արտաքոյ ճառըն-
տրին մերոյ՝ զարձակումն այլոց զինուորաց
եղելոց արտաքոյ համարոյ ռ̅ճ̅դ̅ արանց.
զորս դնեն նահատակեալս սրով)։
Իսկ զերանելին եւդոքսիոս հրամայեաց դա-
տաւորն մատուցանել 'ի բեմն իւր, և ասէ
ցնա. մարիանէ՛ կոմս յայսմ հետէ 'ի բա՛ց ա-
րա 'ի քէն զխորհուրդս յիմարութ̅ե̅, զի մի՛
պէսպէս չարչարանօք նեղեցից զքեզ։ Պ̅ի̅նի
ետ երանելին. որո՞վ չարչարանօք կարծես
զիս

զիս հաւանեցուցանել։ Դատաւորն ասէ. հրով և ձիւթով, բանտիւ և սրով։ Սբն ասէ. ասա՛ ինձ ո՛վ բռնաւոր, ո՞ր է բարի, փախչե՞ն յանանց հրոյն՝ զոր ծովք և գետք ոչ կարեն շիջուցանել, եթէ յայժմու հրոյս՝ զոր սակաւ ջուր շիջուցանէ. 'ի ձիւթո՞յն՝ որ անանց հրովն եռայ, թէ յայդմանէ՝ որ դոյզն մի փայտիւ հալի և անցանէ. յապտակէ՞ բոցեղէն և հոգեղէն զու՛արթնոցն, եթէ յապտակէ ապականացու և տկար արանց. 'ի սառնամանեա՞ցն՝ որ ոչ ունի ջերմուի՞, և 'ի կրճտելո՞յ ատամանցն, թէ 'ի քո սպառնալեացդ. 'ի բանտէ՞ յայսմանէ, թէ յայնմանէ՝ որ յաւիտենից ո՛չ անցանէ։ Արդ իմացի՛ր զայդոսիկ, զոր ասացի քեզ, և հաւատա՛ թէ ոչ ծոց քոց ես ո՛չ զոհեմ, և ո՛չ անշունչ կռոց երկիրպագանեմ. այլ զոր կոչես դու դիոս, դիւ՛աց է գլուխ. և ապոզոն՝ կորուստ և ապականութի՞ խաբէութե՞, և արտեմիս մայր կորստեան. և երեքեան դուք խաբօղք, թագաւորն դիոկղետիանոս, և դու բռնաւոր, և հայրն ձեր սատանայ։

Լի եղև դատաւորն բարկուբ՞, և ասէ. ըզպատու՛ական ոչ ծսն թշնամանեցեր. այլ մեք երեքեանս ո՞վ եմք, ասա՛ ինձ։ Եւդոքսիոս ասէ. ասացի քեզ, թէ դու և թագաւորն և հայրն ձեր սատանայ. այլ տե՛ս և ծանի՛ր ո՛վ անդնդային վիշապ, զոր քեզ և թագաւորին պատրաստեալ է հուրն յաւիտենական. խաւարն արտաքին, և հրեշտակք տանջողականք։ Դատաւորն ասէ. զիս թո՛ղ ա-

նար-

նարգեցեր այ կեղծաւոր, զթագաւորն և
զտծսն ըէր յանդգնեցար հայհոյել։ Սբն
ասէ. լիջիք դուք նման ածոցն ձերոց, որք
անշունչք և անբանք են։

Իսկ բռնաւորն ցասուցեալ յոյժ, մինչև եղ-
ծանիլ գունոյ երեսաց նր, հրամայեաց 'ի չո-
րից կողմանց լարիւք պարզել զնա, և արջա-
ռաջլօք տանջել։ Եւ երանելին հայեցեալ
յերկինս՝ ասէր 'ի հարուածսն. Շնորհեա՛
տր՝ որք 'ի քեզ են յուսացեալ, զխաղաղութի
յերկինս և յերկրի. շնորհեա՛ տր զհայց-
ուածս ամենեցուն, որք խնդրեն 'ի քէն՝ յի-
շելով զիս յօգնականութի 'ի նեղութե, կամ
'ի պատերազմի, կամ'ի ծովու, կամ'ի մրրկել
լերինս, կամ'ի հոգւոյ մոլորութէ չարչարելք,
կամ'ի ճանապարհի, կամ'ի բանտի. և այրեաց
և աղքատաց, և 'ի ծերութէ վտանգելոց,
և ծանրացելոց բեռամբ մեղաց. և որք գայ-
ցեն 'ի տեղի վկայութե և հեղման արեանս
իմոյ վ՞ս անուանդ քո՞սբյ, և 'ի յիշատակի
իմում ողբալով և արտասուօք խնդրեսցեն
զողորմութի առ 'ի քէն, շնորհեա՛ նց տր վաղ-
վաղակի ողորմութի և օգնութի, և կատա-
րեալ առողջութի, և փրկեա՛ զնս յամ նե-
ղութեց նց։ Յիշեա՛ տր և զծնօղսն իմ և
զամ համազգիսն. զի մի՛ եղիցի առ նս մահ-
տարաժամ մարդոյ և անասնոյ, և պտղաբե-
րեա՛ զայգիս և զանդաստանս նց. և կատա-
րեա՛ զամ հայցուածս նց 'ի բարի։ Շնոր-
հեա՛ տր և զուգակցի իմոյ մասն բարի ժա-
ռանգութեն ը իս 'ի հանդերձեալ յաւիտե-
նին.

նէին . զի մի՛ բաժանեսցուք ՚ի միմեանց : Այլ
իբրև կատարեաց զաղօթսն , հրամայեաց
դատաւորն դադարել ՚ի հարկանելոյ զնա ,
և տանել ՚ի բանտ . զի ՌԵՐԱՒ ղբաստասցի
ասէ :

Այլ կեաց աւուրց տասանից ետ ՌԵՐԵԼ զառա-
ջեաւս զերանելին , և հայեցաւ ՂՆա , և ա-
սէ . Եւդոքսիէ կոմս այժմգոնէ հաւանե-
ցար երկիրպագանել և զոհել ածոյն , եթէ
՚ի նմին յամառուն ՒՆԵս : Պինի ետ Եւդոք-
սիոս . Ես հաւանիմ ԵՄՃՇմարտուն՝ հաւատա-
ցեալ ՚ի հայր և յորդի և ՚ի հոգին սո՛ւրբ . յանգաժա-
նել սո՛ւրբ ԵՐԵՐԳՈՒԻՆ . եր երբեմն զի կուրացեալ
էի յառաջին չարին խաբեութենէ յանօրէնն կռա-
պաշտութենէն , և հիմանդ էի հոգւով և հիմն-
դութեամբ մարմնով . իսկ յորժամ արժանի եղէ
վերստին լուսաւորման աւազանին ծննդեանն
սո՛ւրբ միրոնո՛ւրք , բայան աչք իմ , և իմաստա-
ցայ ողջախոհ խորհրդովք սրտի իմոյ : Ընդ-
պատ զայս գիտասջիր ոմ անկրաւ քննաւոր ,
թէ ոչ հաւանիմ քեզ , և ոսկիապատ և ան-
շունչ պատկերի աշխոյքոյ ես ոչ զոհեմ , որք
են գործք ձեռաց մարդոյ . զի նման լինիցին
նմա՝ որք արարիչն զնեն , և ամ յուսացեալքն
՚ի նմա :

Այլ բարկացեալ դատաւորն հրամայեաց կա-
պարեալ մրճով հարկանել զկուրծս նը , (կի՛
ԸՆ այլոց՝ կապարեայ գնտովք հարկանել ըզ-
պարանոցն , և խախտել զանդամս նը) . և
ասէր , հաւանեա՛ հրամանաց ինքնակալին , և
երկիր պագ աշխոյն , զի ապրեսցես ՚ի տան-

ջա-

ջանացդ։ Իսկ սբն զաչս 'ի յերկինս համ-
բարձեալ՝ խնդրէր 'ի տնէ քաջութ 'ի գլուխ
տանել զառաջիկայ մրցումն տանջանացն, և
ուրախութ կատարիլ։

Յայնժամ տեսեալ դատաւորին զջերմե-
ռանդն հաւատս վկային և զյօժարութիւն,
վճիռ հաստատէր 'ի վր սբյն այսպիսի օրի-
նակաւ. Զմարինոս զանուանեալն եւդոք-
սիոս, զդերապատուեալն կոմսուն իշխա-
նութ, և ոչ հաւանեալ հրամանաց ինքնա-
կալին, և անպատուեալ զբարերարութիւն
ածոցն մերոց, յետ բազում չարչարանացն
հաճոյ թուեցաւ մատնել 'ի ձեռս դահճաց,
զի սրով ընկալցի զվճիռ մահու։

Եւ ընկալեալ սբյ վկային զայսպիսի դատակ-
նիք մահու՝ ուրախութ հասանէր 'ի տեղի
վկայութեն. և հայեցեալ տեսանէր զբազ-
մութ զօրականացն 'ի դասուց զինուորութ
իւրոյ, զի լալով երթային զհետ նր. լային
և ամ ժողովուրդքն ը նս։ Եւ ասէ ցդա-
հիճսն. Թողացուցէք ինձ փոքր մի ժամ յա-
ղօթս կալ. և նայեցեալ յերկինս՝ տարա-
ծեաց զձեռս իւր, և աղօթեաց այսպ. Տէր
ած յս քս, որ արարեր զերկինս և զերկիր,
զծով և զամ որ է 'ի նս, լուր աղաչանաց ի-
մոց, և ունկն դիր 'խնդրուածաց իմոց. և օգ-
նեա ամ հաւատացելոցս 'ի քեզ, և ամենե-
ցուն քրիստոնէից շնորհեա զհայցուածս նց՝
որք կոչեն զիս յօգնականութի. և մի եկես-
ցէ 'ի վր երկրիս այսորիկ սով կմ սրածութի
կմ սասանութի, կմ նուազութի ամ հարկաւոր
պի-

պիտոյից . այլ որք հաւատով գայցեն ՚ի տէ-
ղի կատարման իմոյ , դու ՚ի զինդրուճածս
սրտից նոցա կատարեա վայրվարակի : Ո՛ նո-
հեա ՚ի և զինուորակցաց իմոց և ընկերաց
զհաղաղութի՛ն . զի մի յաղթեսցէ նոցա թշնա-
մի , և մի տեսցեն նո՛ք զամբոխ պատերազ-
մաց :

Ա՛ւ յետ այսորիկ ասէ ցամուսինն իւր՝ որ ա-
ռաջնակայ էր հանդիսին . քո՛ր այսուհետև
զամանն անօթոյն՝ զոր ասացի քեզ , և ժողո-
վեա զսրինն իմ. և առցես զգլուխ իմ ուրա-
խութե՛ն , և մի լալով և մի տրտմութե՛ . և մի
արկցես արտօսր ՚ի վե՛ր իմ վ՛ա մեկնելոյ քո
յինէն . և արասցես տապան ինձ ՚ի տեղ-
ւոջն՝ որ կոչի ամիմնոյ (կամ ամենիմն , որ
Թարգմանի անյիշատակ) , և դու ննջեա՛ ընդ
աջմէ իմմէ :

Ա՛ւ դարձեալ ՚ի ժողովուրդն՝ ետես զոմն ՚ի
զինուորաց իւրոց զինան կամ զենոն անուն ,
զի ողբայր զնա յոյժ . և ասէ ցնա սո՛ւն . զի-
նանիէ մի ողբար վ՛ա բաժանելոյ քո յինէն .
զի ա՛չ Թողից զքե՛զ . այլ ոմն ընդ՚ելիր յերկրի
զկնի իմ , նոյնպէս և ընդ՚եսցիս ընդ իս յանանց
կեանս . և եղև ընդ՚ ետնի սո՛ւն , զի և երանե-
լին զենոն սրով կատարեցաւ յաւուրսն յայ-
նոսիկ կա՛ ՚ի նմին իսկ աւուր : (8)

Ա՛ւ զայս ասացեալ Եւդոքսիոսի՝ եկն առ դա-
հիճն , և ասէ ցնա . ո՛րդեակք այսուհետև
կատարեցէ՛ք զհրամայեալն ձեզ : Յայնժամ
եկն ձայն յերկնից առ նա՝ ասելով . Ե՛կ առ
Հայրն քո երկնաւոր . և եղիցին խնդրուածք

քո

քո կատարեալ վ՚ա ամենեցուն՝ զոր խնդրե-
ցեր ։ Օ՜այս իբրև լուաւ նահատակն, ուրա-
խութ սրտի խոնարհեցոյց զպարանոցն իւր
առաջի դահճին. և նոր ձգեալ զսուսերն՝ է-
հան զգլուխ նորա ։ Եւ բերեալ զանօթն ա-
մուանոյ նորա՝ ժողովեաց զարիւնն. էառ և
զպատուհական գլուխ նորա խնդալով և ու-
րախութ. և տարեալ հանդոյց ընչեսարս
աբբային ՚ի տեղին՝ ուր հրամայեաց երանելին ։
Կատարեցան ընթացք նահատակուե Ջդնա-
ւորին քոի եւդոքսիայ կոմսի յամսեանն հոկ-
տեմբերի ԻԹ, յաւուր կիւրակէի ։

Յետ այսորիկ եկեալ կնոջ նոր մանտանայի
ինքնակամ՚ի դուռն դատաւորին՝ անարգեր
զդիս, և զպաշտօնեայս նոր զթափաւորն և
զդատաւորն ։ Օ՜այն լուեալ բռնաւորին՝ ա-
սէ ցնա. վ՚ա այնորիկ զայդ առնես, զի և դու
վկայեսցիս, և պատուհասցին ոսկերք քո յան-
միտ քրիստոնէից. երդուաւ Յուծան ամ և ՚ի
փառս նոր, ոչ լցից զփափաքուածն սրտի քո ։ (9)
Նակ յետ աւուրց հնդից կիս եօթանց ՚ի վեր
անցելոց՝ երևեալ աբբն ամուանոյ իւրում ՚ի
տեսլեան գիշերոյ՝ ասէ ցնա. ընկէր իմ և
զուգակից՝ զմակարիոս յղեա վաղվաղակի
յասպարանն իմ, զի ունիմ ինչ ասել նմա ։
Եւ յարուցեալ մանտանայի առաւօտուն՝ կո-
չեաց զնա, և ասէ. որդեակ իմ մակարիէ,
ահաւասիկ քո յասպարանս իւր կոչէ զքեզ ։ Եւ նա
ուրախութ եկն յասպարանս դատաւորին.
զոր տեսեալ ոմանց ՚ի դասուց զինուորաց՝
կալան զնա և տարան առաջի դատաւորին,

ա-

ասելով. և սա է եւդոքսի իշխանութեան կը։ Այլ տեսեալ զնա բռնաւորին՝ ասէ ցնա. Յորմէ՞ ազգէ իցես։ Ի՝ակարիոս ասաց. Քրիստոնեայ եմ։ Իշխանն ասէ. Մի յիմարիր և մի՛ փոխեր լանար, այլ հաւատա յածմանս, և ապրեսցիս։

Սրբն ասաց. Ես հաւատացեալ եմ և հաւատամ՛ի Թագաւորն մեծ և յած Հայր և յորդի նր և՛ի սբ Հոգին. և յուսացեալ՛ի մի ածութիւնն, զի յաղթեցից Թշնամւոյն. և ահնունիմ հասանել կռոցդին իմոյ վաղվաղակի։ Այլ լսեալ զայս դատաւորն պոնտիանոս՝ հրամայեաց սրով կատարել և զնա. և այնպէս ընկալաւ սբն Մակարիոս զվախճան սրոյ արեամբ՛ի նմին ամսեանն Հոկտեմբերի, ՛ի փառս և՛ի գովեստ ՚ն մերոյ և փրկչին յեսի քրի. որում փառք յաւիտեանս, ամէն։ (10)

Զ երկոսին նախագրեալ վկայաբանութիւնս սրոյն ռամկայ և եւդոքսեանց գտէ՛ի միաբանին՛ի մեքիսեկ հայոց մածն գրիգոր վկայասէրն մեր՝ Թարգմանէ՛ի յունարէն գրոց՛ի հայ բարբառ, ՛ի Թուէին հայոց շնա. ՅՀ յաւի՝ ՚ն 1092։ Ա՛ւանդեն և ոմանք՛ի յոյն վկայագրաց, Թէ յիշատակ սրբոց՝ Հանգերձ ռձիդ, կիմ ռձիդ նահատակեցօք կատարիւր՛ի կոստանդնուպօլիս՛ի վկայարանի սրոյն պրոկոպիոսի, որ՛ի տաճարի սրոյն մինասայ շինելոյ՛ի մեծէն կոստանդիանոսէ։ Այլք ասեն, Թէ շինեցաւ՛ի Թագաւորեալ քաղաքի անդ առանձին եկեղեցի յանուն սրոյն եւ-

դոքսիոսի յեւդոքսիոսէ պատրկէ մեծին կոստանդիանոսի կամ մեծին Թէոդոսի։ Մարմինք ոմանց 'ի վկայիցս նահատակելոց 'ի մելիտինէ հայոց՝ կային 'ի կոստանդնուպօլիս 'ի տաճարի սրբուհւոյն եռինեայ՝ յաւուրս կայսերն յուստինիանոսի. որ և բարեխօսութ՝ նոյն վկայից ազատեցաւ 'ի մահաբեր հիւանդութ՝է յամի տ՝ն իբր 560։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ՝յն Զենոնի զօրականի ԸԸ Զինանու կմ զենեայ պատանեկի։

Հ. յունիս. 27։ Յ. Լ. յունիս. 23։ Բոլլանդեանն Բայերտիոս. 'ի դ՝ հատ. յունիսի. էջ. 474 = 482։ (11)

ԵՐԿՐՈՐԴՍ ԱՅՍ ՉԵնոն զինաւոր՝ ժամանակակից առաջնոյն, այլ առաւել հռչակեալ առանձին և պանծալի վկայութ՝ ԸԸ, էր զօրական նշանաւոր յաւուրս մաքսիմիանոսի կայսեր՝ միոյ 'ի գործակցաց դիոկղետիանոսի, 'ի փիղադեղփիա քաղաքի ապառաժն արաբիոյ՝ որ ԸԸ վկայաբանին եմման կմ Թեման կոչեցեալ 'ի գիրս։ Ուր տեսեալ

սեալ զանօրէն՝ գնացս կռապաշտից, և զհա-
լածումն նց ըղեմ քրիստոնէից, ցանկայր
մեռանիլ վկայութ ը ճշմարտութեն՝ ը հան-
դուրժել և լռել ը գործս անարժանութե.
զի էր այր կատարեալ հաւատով և սիրովն
քոի:

Սմին իրի թօթափեալ յանձնէ զհոգս ծի՝
բաշխեաց աղքատաց զստացուածս իւր, և
զամ ծառայս իւր ազատեաց՝ տուեալ նոցա
բաժինս յընչից իւրոց: Բայց պատանեակ մի
'ի ծառայից նր զինան կմ զենաս անուն՝ սի-
րեցեալ յաչս զենոնի վս իւրոյ առաքինի ա-
րութե և իմաստութե 'ի տղայական հասա-
կի, ոչ կամեցաւ թողուլ զտր իւր, այլ՝ աղա-
չէր զնա ունել զինքն 'ի սպասու իւրում մինչ
'ի մահ. զի երկրաւոր ծառայութ ը յերկնա-
ւորն հասցէ ազատութի: Ուրախ եղև զենոն
ը յօժարութի մտաց նր, և ևս քան զևս սի-
րեաց զնա, և քաջալերեաց պինդ կալ 'ի խոր-
հուրդս ածահաճոյս:

Եւ եղև յառաջնում ամի մաքսիմիանոսի
կայսեր (հերակլեայ, յամի տն 286, կամ
գաղերիոսի արմենտարի, յամի 304), առ
մաքսիմոս դատաւորաւ փիղադեղփեայ, տօն
կատարէր կռոց 'ի քաղաքի անդ յութերորդ
աւուր ամսեանն յունիսի. և իբրև մատոյց
դատաւորն զերկրպագութի և զզոհս դիցն,
հրամայէր և որոց անդն կային՝ զնոյն գոր-
ծել: Յայնժամ յառաջ մատեաւ քաջն զե-
նոն, և վառեալ ածային նախանձու՝ ասէ
ցմաքսիմոս. ով անօրէն և ժառանգ հրոյ ը

հօր

հօր քում սատանայի, զիա՞րդ հրամայես ե-
կիրպագանել և զոհել անշունչ և ձեռագործ
դրօշելոց. հի՞մ զհետ կրթեալ մոլորութ՞ե
թագաւորաց քոց՝ նց՝ առաւել հաճոյ լինել
խնդրես, ք՞ ա՞յ կենդանւոյ. և գանձես ան-
ձին և այլոց հուր մշտնջենաւոր և տանջանս
աններելիս։

Ի այն լու՛եալ մաքսիմոսի՝ լի եղև դառնու-
թ՞ք. հրաման ետ իւրոցն ունել զնա, և մեր-
կացուցանել 'ի ձևոյ պատու՛ոյն. ապա կո-
չեալ զնա յատեան ո՞ա մահապարտ՝ հարցա-
նէր օրինօք քննութ՞ե զանուն ն՞ր և զազգ և
զտեղի և զգործ. և ուստի՞ է քեզ ասէ յայդ
յանդգնութ՞ի ժպրհիլ։ Ի ենոն ասէ. ազ-
գաւ հելլենացի գտանիմ, բայց հաւատով
քրիստոնեայ. և եթէ 'ի պատու՛ի ունիս զզին-
ու՛որութ՞ն, նախ զառաջինն նու՛իրական եմ
ք՞ի թագաւորին՝ փառս անձին գիտելով զի-
նաւոր նորա լինել. և անուն իմ զենոն, (որ
յունարէն կենդանի լսի), զի կենդանի լի-
նել ակնունիմ հաւատացելոցն 'ի ք՞ս. և բնա-
կութ՞ի իմ 'ի զիզիուն ամուրն պաղեստինոյ,
ոչինչ աննշան 'ի կարգի զօրականութեան և
ը՞ ն՞ի։

Մաքսիմոս ասէ. այլ թէև նախապատի՛
իցես 'ի դաս զինու՛որութ՞ե, անմարթ է քեզ
հակառակ ամբառնալ թ՞գրաց իշխանութ՞ե,
և իշխել խօսել առաջի իմ այդպիսի բանս.
քանզի և մեր 'ի թագաւորաց առե՞ է պատ-
ու՛էր դատել զանհնազանդս. և կամիմք՝ զի
ո՞ա մեք հնազանդիմք նց՝ և պաշտեմք զդիս

նց, զնոյն գործեսցեն և այլք։ Պիտի ետ
զենոն. մեք առաւել հնազանդիմք այ՝ քան
մարդոյ. ապաքէն և ես հնազանդիմ իշխա-
նաց Տի, բայց ոչ ըստ նմանութեան քո և 'ի հրա-
մանս գլխովին հակառակս այ. այլ ուսեալ
'ի պօղոսէ, որ յայ ասաց լինել զամ իշխա-
նութիւն։ Եւ սկսեալ 'ի բանից աստի՝ բազմօք
եցոյց յառաքելական քարոզութեան զողջմտու-
թիւն վդպութեան քրիստոնէից, և զանմտութիւն
հեթանոսական մոլորութեան։

Իսկ դատաւորն անգոսնեալ զածիմաստ բա-
նիւք զենոնի՝ սկսաւ ողոքանօք հրապուրել
զզենոն, զի 'ի բաց կացցէ 'ի բարեպաշտութեան։
Եւ քաջ նահատակն այնուհետև ոչ ետ նմա
պիտի, այլ զայս միայն երկրորդէր, թէ քրիս-
տոնեայ եմ։ Եւ դահիճքն ըստ ակնարկելոյ
դատաւորին հարկանէին զբերան սբյն, և
ասէին. տուր պիտի առ հարցուածս իշխա-
նին։ Դարձեալ ասէր մաքսիմոս դատաւորն.
ապաքէն անարժան դտար դու կենաց քոյով
յանդգնութեան. բայց արդ անսա՛ ինձ, և եր-
կի՛ր պագ ածոցն, և յոլովից արժանասցիս
շնորհաց և պատուոյ 'ի թագաւորաց, որոց
փոյթ է բարերարել ամ տիեզերաց։ Զենոն
ասէ. զայդ ասես շնորհս և բարերարութիւն,
մոլորեցուցանել զմարդիկ, և ձգել ընդ իւ-
րեանս 'ի կորուստ։

Ընդ այս բան ցասուցեալ մաքսիմոսի՝ հրա-
ման ետ պարզել զսբն, և հարկանել նոր
արջառաջլօք. և մինչդեռ տանջէին զերանե-
լին, ստէպ գոչէր մաքսիմոս. զոհեա՛ ածոց.

և

և վկայն ասէր. ապենիազն ա՞ծ երկնից ո՛չ
արեամբ պաշտի զոհից, այլ ո՞բ սրտիւ՛։ Ապա
ասաց դատաւորն բռնի ձգել տանել զնա 'ի
տաճար կռոց, զի ակամայ հարկեսցի երկիր-
պագանել։ Իսկ երանելի վկայն զօրացեալ
'ի հոգւոյն ո՞բյ՝ արձակեաց զոտն իւր աջոյ 'ի
բագին անդր, և տապալեալ խորտակեաց
զայն, և ասէ. անօրէնն յանօրէնութե՞ իւ-
րում մեռցի, և ձեռք իմ անպարտ լիցին։
Զայն իբրև գիտաց դատաւորն՝ ետ կախել
զնահատակն, և քերել զկողսն անխնայ.
ապա հարին աղ և քացախ 'ի վէրս ն՞ր։ Իսկ
զենոն յաղօթս կայր 'ի տանջանս, և ասէր
մեծաձայն. ա՞ծ փրկուե՞ իմոյ՝ առ քեզ աղա-
ղակեցից. զի դու ասացեր, որ կորուսցէ
զանձն իւր վ՞ս իմ, գտցէ զնա. և ևս լու՛այ
և հաւատացի ձայնի քում, թէ մի՛ երկնչիք
'ի սպանողաց զմարմինն։ Յետ այսորիկ ար-
ձակեցին զնա 'ի կախաղանէն, և արկեալ
ծանր շղթայ 'ի պարանոցն՝ տարան 'ի բանտ,
պնդեալ զոտս ն՞ր 'ի կոճեղս չորից ծակուց.
և ո՞բն սաղմոսէր և ասէր. ա՞ծ յօգնել ինձ
նայեա՛ց, և ա՞ր յընկերել ինձ փութա՛։
Յայնժամ եկն զինան պատու՛ական ծառայ
ո՞բյն, և մտեալ 'ի ներքս 'ի բանտն՝ համբու-
րէր զոտս նորա և զկապանս, և աղաչէր ար-
տասու՛օք մի՛ թողուլ զինքն, այլ առնել իւր
վիճակակից։ Եւ երանելին զենոն սկսաւ
քաջալերել զզինան՝ չհայիլ 'ի մարմին իւր
ցաւատեալ 'ի հարու՛ածոց. մի՛ կարծեր զիս
ասէ այնչափ չարչարեալ՝ որչափ չարչարե-

 ցինն.

ցինն. զի ա՞ծ իմ 'ի տանջիլն իմում մեղմէր
զխստութի՞ տանջանացն. և արդ զօրացի՛ր
որդեա՛կ իմ զինան, քանզի հաւատամ, զի
ա՞ծն բոլորից ընտրեաց զքեզ։ Լ ո՛ւել բան-
տապանին զայսոսիկ՝ մատնեաց դատաւորին,
թէ զենոն հրապուրէ և զծառայն իւր հա-
ւասարիլ ինքեան յա՞մի. և հրաման առեալ
փակեաց և զզինան 'ի բանտի. և 'ի վաղիւ՛
անդր տայր մաքսիմոս բերել զերկոսեանն
յատեան։

Խօսել սկսաւ դատաւորն, և ասէ ցզենոն.
զի՞նչ շահ եղև քեզ 'ի տանջանացդ, զի և
զծառայ քո հրապուրես ը՞ փորձ նոցին անցա-
նել։ Զենոն ասէ. ո՛չ ես ինչ վ՞դպ եղէ պա-
տանւոյս, այլ՝ հոգին սբ՞, որ բնակեալն է
'ի նմա. վ՞ս զի բազում ծառայք էին իմ, և
յազատել անդ զամենեսեան՝ սա զՃշմարիտն
մանաւանդ սիրեաց զազատութի՞, և յարե-
ցաւ 'ի տ՞րն քո՝ ակնկալեալ գերՆիկ փո-
խարինաց այժմու ծառայուե՞։ Կոչեաց մաք-
սիմոս զպատանին, և ասէ ցնա. 'ի բա՛ց լեր
յանմտութի՞ տ՞ն քո, և զոհեա՛ ա՞ծոց. զոր
եթէ առնիցես, քեզ տաց զպատիւ՛ն՝ զոր
բարձի 'ի տ՞նէ քումմէ, և հանից 'ի մեծ ևս
շուք պատու՛ոյ առ 'ի թ՞գրաց. ապա թէ ոչ՝
դառն տանջանք մ՞նան քեզ։

Պ՞խնի ետ զինան, և ասէ. ի՞բր արդեօք կա-
միս՝ զի երկրպագու եղէց բագնիդ ո՞պ պատ-
ու՛ականի իմիք. ո՞չ ահա տ՞րն իմ առ ոտն հա-
րեալ կործանեաց զայն. և ո՞րպիսում պաշ-
տաման արժանի իցէ կուռքն՝ որ ոչն կարաց
տա-

տանել հարման ոտին տկարացելոյ այնչափ
տանջանօք։ Զայս լուեալ ՆԲՅՆ զենոնի՝ ու-
րախ լինէր յոյժ, տեսանելով 'ի պատանին
արուի՞ ոգւոյ առաւել քան զտիս մանկուե՞.
զի դեռ մանկագոյն իսկ էր։
Դարձեալ զողոք բանից բուռն հարկանէր չա-
րանենգն մաքսիմոս առ որսալոյ զմանուկն.
իսկ զինան արար պ՞ինի. ո՛չ կամիմ շատաբա-
նել յանդիման տ՞ն իմոյ զենոնի, այլ խոս-
տանամ ոչ յետս կալ 'ի գեղեցիկ զինու՞որուէ՞
նորա ԸՆ դրօշակաւ խաչին քՆի։ Յայնժամ
սրտմտել դատաւորին՝ ետ պրկել զմանուկն,
և գան հարկանել ուժգին։ Եւ զինան ասէ
ցտ՞ր իւր. խնդրեա՛ յա՞յ տալ ինձ զօրութի՞,
և օգնել ինձ։ Ասէ զենոն. զօրացիր որդեակ
իմ, և մի՛ երկնչիր յառժամայն տանջանաց.
զի զկեանսն յաւիտենից ժառանգեսցես։
Եւ այնչափ հարին զթիկունս երանելի ման-
կանն, մինչև գզզիլ մարմնոյն. իսկ նա և
ո՛չ բան մի խօսեցաւ 'ի ներքոյ հարու՞ածոց։
Եւ իբրև լուծին զնա, և ոչ կարէր յոտին
կալ, ասէ անօրէն դատաւորն ցզենոն. տե-
սե՞ր, զի կորուսեր ընդ քեզ և զանձն ման-
կանդ։ Զենոն ասէ. ո՛չ կորուսի, այլ մա-
նաւանդ գտի և ստացայ զնա քՆի։ Միւսան-
գամ ապա հրամայէ դատաւորն յորսայս ար-
կանել զզենոն, և հարկանել ԸՆ փոր նր՞ և
ԸՆ կողս, և շամփուրս հրացեալս դնել 'ի վր՞
սրտի նր՞։ Բայց իբրև դահիճքն յոգնեցան
և նահատակքն անպարտելի մնացին, անդ-
րէն 'ի բանտ արկանէին զերանելիսն։

Յաւուրսն յայնոսիկ եկն 'ի փիղադեղփիա
իշխանն զօրավար, դուքս՝ ցր առաջնորդ զօ-
րու կարդացել 'ի հռովմայեցւոց, և անուն
նր բոգոս. որում հանդիպել պատուով մաք-
սիմոս դատաւորն՝ յետ ողջունին պատմեաց
նմ զանցս զենոնի, եթէ զօրական ոմն ածաւ
առ իս քրիստոնեայ, և ծառայ նր ը նմա.
որք բազմօք առ յինէն խրատեալք քաղցրու-
թբ, ապա և դառնագոյնս խոշտանգեալք,
անսաստ կան մնան՝ պնդեալք 'ի խոստովա-
նել զքս ածն. արդ եթէ մարթասցիս փո-
խել զմիտս արանցդ ահարկութբ կմ սիրով,
բարւոք առնես:

Հրաման ետ զօրավարն ածել զնոսա զառա-
ջեաւ 'ի ձիարձակարանի. ուր յատեան նըս-
տան 'ի միասին բոգոս և մաքսիմոս, և սկսաւ
բոգոս փորձել զսբան ողոքանօք և սպառնա-
լեօք: Պխնի ետուն վկայքն իբրև 'ի միոջէ
բերանոյ, և ասեն. ոչինչ ուժեն բանք քո
'ի փոխել զմեզ յառողջ խորհրդոց. զի թէ
անսալ կամէաք բանից, առ ի՞նչ էր մեզ մատ-
նել զմարմինս յայդչափ հարուածս և 'ի
կտտանս: Յայնժամ հրաման ետ դուքսն,
և կախեցին զերկոսեանն 'ի բարձրաւանդա-
կի, և պրկեցին փոկովք ը անթովք, և վէմս
ծանունս կապեցին յոտս նց, և հուր մատու-
ցին 'ի ներքոյ. միանգամայն և արք չորք բրօք
ծեծէին զսրունս նց:

Եւ իբրև արիաբար տարան այսմ ամի քաջ
նահատակքն, և ոչ միում պխնւոյ արժանի
արարին զիշխանսն, դազանացեալ բռնա-
ւորքն

ւորքն ետուն ի՝ջուցանել զն՝ն՝ ի կախաղանէ
անտի, և հրամայեցին փոսս հատանել ի
տեղւոջն, և ընկենուլ անդր զն՝բսն, և ի վ՝ր
խարոյկ լուցանել՝ արկեալ և ձէթ բազում
ի բորբոքումն բոցոյն յոյժ յոյժ։ Եւ եղեն
անդ սքանչելիք հնոցին բաբելոնի. քանզի
հրամանաւն ա՝յ հուրն ոչ մերձենայր ի մար-
մինս վկայիցն, մինչև իսպառ շիջանելոյ. և
ելին ն՝բքն ամբողջ ի հրոյն. և բազմութի՝
ի տեսողաց դառնայր ի տ՝ր։

Այնուհետև բոգոս իբրև իշխան զօրու՝ ետ
իշխանութի՝ մաքսիմոսի դատաւորի հատա-
նել զվճիռ մահու ը՝դէմ ն՝բյն զենոնի զինա-
ւորի, և պատանեկի ն՝ր զինանու. և մաքսի-
մոս տայր դատակնիք գլխատել զն՝ն՝ ի տեղ-
ւոջն։ Իսկ վկայքն կնքեալ զճակատս իւ-
րեանց նշանաւ ամենայաղթ խաչին՝ զուարթ-
թուք՝ մատուցին զպարանոցս իւրեանց սրոյ,
և այնպէս կատարեցան ի քն՝ ի յունիսի,
ի՝գ։ Եւ հաւատացեալ կուսան կանայք բա-
րեպաշտք և երկիւղածք յա՝յ գողացան ըզ-
պատուական մարմինս ն՝բցն, և թաղեցին
յանքոյթ վայրի։

Իսկ ի դադարել անդ հալածանաց՝ ոմանք
յազգականաց երանելի վկայիցն եկեալ ի
խնդիր մարմնոց նոցա՝ գտին անապական ի
գերեզմանի, և առեալ տանէին ի բնակուի՝ս
իւրեանց. և ա՝ծ եցոյց ոչ սակաւ նշանս և
սքանչելիս ի ձեռն ն՝բ նշխարաց ն՝ց ը՝ ա՝մ ճա-
նապարհն, մինչև տարան և հանդուցին զն՝ն
յարժանաւոր տեղւոջ ի փառս քն՝ի ա՝յ մերոյ։

Ռան

Ռանձին յիշատակ սբցս լինէր 'ի կոստանդինուպօլիս 'ի յունիսի իբ՝ 'ի վկայարանի սբյն գէորգեայ զօրավարի՝ 'ի տեղին կոչեցեալ կիպարիսոն կամ նոՁաստան, ուր կային և մատռունք սբց զօրականաց՝ Թէոդորոսի և պօղիքտոսի։

ԺԱՆՕԹՈՒԹԻՒՆ Զ։

(1) Պրկին և երեքկին վկայաբանութքս՝ ոչ կարծեմ, գեղեցիկ յայտնաբանեալ տեսանի հանդէս խմբի սբ զինուորաց տօնելոց 'ի մէնջ յայսմ վայրի՝ առ ընթեր Թէոդորիտեայ քահանայի, նախ քան զխարիՀեանս. ուր եթէ համարձակելի մեզ լինէր, ասէաք՝ Թէ լաւ և ս էր զարտեմիս մեծ վկայն դասել ընդ Թէոդորիտեայ, ըստ որում յանտիոք կատարեցան երկոքին առ յուլիանոսիւ. և զդաս զինուորաց՝ հանդերձ բազմաԹիւ նահատակաց օք նց, որք ը ռամելայ հաշուին իբր ժռ և հարիւրմի, և ը եւդոքսեանս՝ իբր ռՁդ, տօնել ը խարիՀեանս՝ որ են վկայք ժռ և ՁԽ Թուով։

Բայց զայդ Թողեալ՝ տեսանեմք, զի արտաքոյ հաւաքմանս մերոյ և որոշողութեան՝ խառն է աւանդութիւն զդասուց սբցս յիւրաքանչիւր յայսմաւուրս և 'ի վկայագիրս ազգաց. գր Հ. 'ի սեպտ. 10, կամ 11, կամ 12. ունի այսպէս. * 'Ի սմին աւուր (կամ յայսմ աւուր) կատարեցաւ սրով սբ մարտիրոսն ռոմիլոս 'ի տրայիանոսէ
,, արքայէն (յօրինակս ինչ, դատաւորէն), յետ բազում չարչարանաց և գանից ապա գլխատեցաւ 'ի
,, փառս քն։ Նոյնպէս եւդոքսիոս սբ վկայն 'ի մելտենի քաղաք հայոց կատարեցաւ սրով վն անուանն քն
,, յամս դէոկղետիանոսի արքային ||. յոր յաւելու տր
իէլ. * և ընդ սբյն եւդոքսի 'ի նմին քաղաքի կատարեցան ռՁ լդ մարտիրոսք. և են բարեխօս առ տր վն
,, մեր ||. ուր չիք անուն զենոնի և մակարայ։

Ճառընտիրն մեր ունի 'ի վերնագրի այսպէս. * Վկայաբանութի սբյն եւդոքսիայ մառինոսն կոչեցելոյ, և
,, ռոմիէլի, և նունի (իմա՛, զենոնի), և մակարայ, որ
,, եղեն յաւուրս արայիանոսի ամբարիշտ Թագաւորին ||.

և

և սկսանի պատմել նախ ըստ գրելոցս զվկայաբանութեն
ռոմեղայ առ տրայիանոսիւ. և ապա 'ի վերայ բերէ
զվկայաբանութեն եւդոքսեանց ուրուն՝ այսպէս. * Եւ
„ կետ այնորիկ մեռաւ տրայիանոս. և կետ Ձմկացանն
„ ցելոց յարեաւ այլ թիր դիոկղետիանոս անուն, որ
„ ոչ ձանաչէր զձծ || ևն. ուր յընթացս կի է զինան՝ ա
ռանց պատմութե կատարմանն, և մակարայ կատարուածն
գրի զինի ըստ վկայաբանութե եւդոքսիոսի: Եւ
'ի վախճանի ասի ընդհանրապէս. * Թարգմանեցան
„ պատմութիք սբց վկայից է յոունարէն գրոց 'ի հայ
„ բարբառ 'ի մայրաքաղաքին հայոց, որ կոչի մեղիտե
„ նի, 'ի թուճականիս հայոց չիա: Ընդ որս.... ||.
ուր պակասին քանի մի թուղթք 'ի ձառընտրէն. և ոչ
գիտեմք՝ թէ գոյր արդեօք զկնի պատմութեն առանձին
վա զենանի առաջնոյ կամ երկրորդի: Ձայս ինչ յայտնի
է, զի ձառընտրս այս մեծ՝ որ յօրինեալ է ըստ կարգի
այբուբենի, 'ի կարգի անդ ե տան դնէ զեւդոքսիոս
իբրև գլխաւոր, և 'ի պատճառս նմ իսկ զառմեղայ և
զայլոցն, և անցանէ Երկոտասան առաքեալս, յեւս
տառատիեանս, ևն. Ծոյլ զոր չիմի քանիւք բերէ
վիլդիս բոլանդեան իբրև 'ի յայտմաւուրայ և 'ի ձառ
ընտրից հայոց՝ հանեալ 'ի ձեռն անհմուտ անձանց:
Զկարգ երկմանեայ պատմութե ձառընտրիս մերոյ 'ի
միում անդ վկայաբանութե իւրում, ցվե ռոմեղայ առ
տրայիանոսիւ, և վե եւդոքսեանց առ դիոկղետիանո
սիւ, գեղեցիկ պահէ մեռափրատես ամ առիք իւ
րովք. ոմն և Լ. ունելով 'ի տեսու. ե. այսպէս. * 'Ի
„ սմին աւուր (կատարումնէ) սբոյն ռոմոսլոսի նախա
„ րարի պալատանն տրայիանոսի. որ վե յանդիմանելոյ
„ զդժնդակութե ինքնակալին ընդեմ քրիստոնէից՝ գա
„ ւաղանօք հարեալ՝ գլխատեցաւ: 'Ի մեղիտինէ հայոց
„ նահատակութե սբ վրդականաց՝ եւդոքսիոսի, զեռո
„ նի, մակարայ, և ընկերացն հազար հարիւր և չորից,
„ որոց ընկեցեալ զգօտի զինուորութե, խոշխոջեցան վե
„ 'ի քա խոստովանութեան 'ի հալածանս դիոկղետիա
„ նոսի ||:

Որ Յ. բս. առաք. 6. Թէպէտև զպատմութին քաղեալ
է 'ի նմին իսկ 'ի վկայաբանութէ ձառընտրին մերոյ, բայց
զամ վկայքս 'ի վեր տարեալ 'ի ձմկա տրայիանոսի իբրև
նահատակեցան ռոմեղայ, գրեալ խառն բանիւք այսմ.
* Յայսմ աւուր նահատակութի սբց վկայից, եւդոք
„ սեայ, ռոմեղայ, և ամբի նց: Եւդոքսիոս վկայն քրի

,, էր առ արայիանոսիւ արքային հռովմայեցւոց՝ կոմս ը
,, կարպին. և ունելով ը նովև զօրականս քեսրս և հա-
,, զարս՝ դեգերէր ի գաղղիա (նման գազատիա) գաւա-
,, ռի: Իսկ ռոմիլոս պաեաւոսիանոս արքայն՝ խորհուրդ
,, ետ նմա առաքել ի գաւառն գաղղիոյ (ասա), և սոլ-
,, պել զորս էինն զօրականք քրիստոնեայք՝ զոհել դմա:
,, Եւ այսոցիկ եղելոց՝ ջաւին յանձն զոհել. և վճիռ առ-
,, րագրեցան ի մելիտինէ քղաք հայոց: Ասա ի զղջումն
,, եկեալ ռոմելայ, և հաւատացեալ ի քն, և յանգիման
,, նեալ զտրայիանոս՝ գլխատեցաւ: Յետ այսորիկ կա-
,, լեալ զԹրուԹին մաքսիմիանոս, և հրամայել սպա-
,, նանել զքրիստոնեայս՝ պատուհէր յղեաց գրով և առ
,, իշխանն մելետինոյ բառնալ ի կենաց զերկրպագուս
,, քն. ուստի կալեալ զեւդոքսիոս կոմսն, և զորս ը
,, նմա զօրականս, և ստիպեալ երկրպագանել կռոց,
,, յոչ հաւանիլ նց բազմօք ջարչարեալ՝ ետ գլխատել||:
Տեսանեմ, Թէ որպէս վեր ի վայր տանի զեւդոքսեանս
յայտնի սխալանօք Ժամկաբրուէ. զի Թէ առ տրայանո-
սիւ լինէին, զնաղդ ժամանէին ի Ժամ մաքսիմիանոսի՝
որ զկնի երկուց գարուց. և զի երօք էին առ գխոկղե-
տիանոսիւ և մաքսիմիանոսիւ, ապա ոչ կարէին լինել
յաւուրս տրայիանոսի: Եւ սակայն այսպէս եգիտ վրի-
պակաւ և այլք ոմանք ի նյոյն և ի լատին վկայաբրից
առ մոլանոսն և փերբուարիոսն, զայսօրինակ գրելով.
* Նահատակութիւն սրբոց վկայիցն՝ եւդոքսիոսի, որ և մա-
,, բիանոս, ռոմելայ, զեննոն, և մակարայ, որք առ
,, տրայիանոսիւ պսակեցան||. կամ այսպէս, * ի մել-
,, տինէ հայոց կաստրումն սրբոց վկայից, եւդոքսի, ռո-
,, մելայ, և ընկերացն առ տրայիանոսիւ||. փոխ առե-
լոյ, ռոմելայ առ տրայիանոսիւ, և եւդոքսեայ և մա-
կարայ առ գխոկղետիանոսիւ. ոմն և զեննոն առաջնոյ
առ նովին գխոկղետիանոսիւ, և զեննոն երկրորդն առ
գխոկղետիանոսիւ և մաքսիմիանոսիւ ի գաստաւորութե
մաքսիմոսի. զորոյ զանուն Թերևս շփոթեցին ոմանք
ը կայսեր, կամ զկայսերն ը գաստաւորն. Թէպէտև ոչ
ոք շփոթէ զզենոն ը զենոնի:

Գովեմք զվեղիոս բոլղանդեան, զի պինդ ունելով
զհետս Լ. և մեռաւ. ոչ անկանի ի շփոթս յայտոսիկ,
այլ միաբանի ը սրուղութե մերում ը ձառընտրաց.
միայն սխալէ յայնմ, զի կարծէ՝ Թէ մեռաւ պատե-
րազմեալ զհամառօտութի ինչ հանդոյն բասիլեան յայս-
մաւուրսն՝ ըարձակեալ նյէ զպարապայս և զձեռս բա-
նից.

նոյց. վոխանակ զի ասէր, թէ մետափրատես՝ ի քուն ընդունել վկայաբանութիւնն հին ճառընտրաց քաղէ զնոսա համառօտելով՝ զան ընդունելով. ոչ յայտ է որոց բաղդատեն զճառընտիրսն մեր ընդ մետափրատեսի. թէպէտ զառանձին ոճ մետափրատեան անուշ:

(2) Որ ճառընտիր մեր պահէ՝ ի վերացեալն զհռոմվկեան յոլովութիւն պատմութեան, նոյնպէս և մետափրատես և Յ. ի թանձրացեալն՝ պատմասիրաց. արդ ըստ հռոմայեցւոց անուն բռէբօվէդռաս՝ որ ստուգաբանի վերակացու, կամ նախատրեալ, է զի զօրավար նշանակէր, և է զի կառավար արքունեաց. ոչ է՝ ի մեզ անուն հաղարապետ: Շուէտացիս ձմեռակից տրայեանոսի և ադրիանոսի՝ զինչան զօրաց հոչէ յայն անուն. և առասիս պատմիս առ դամեոխանոսիճ զդանձապետն արքունի կոչէ նոյնն անուամբ:

(3) Ճ. գրէ՝ ի գաւառն գալիլեացւոց. մետափրատես յարևելս առ ի գաղղիա. վայ և վեղիոս բոլանդեան առանց ըստ բանս ինչ ածելոյ՝ նմանապէս ըստ մեզ գաւչաստիա, որ և ասիական գաղղիա կոչի:

(4) Մետափր. յիշէ զգրուժի նամակիս, այլ զանց առնէ զպատճառինքն: Եթէ յառաջ բերէր զայն, գուցէ՝ ի յունական ոճոյն կարէաք գուշակել՝ թէ որ այն կոչեն այս երկուասեան ազգաք. արդեօք՝ ի գաւառս հայկին, եթէ՝ ի գունդս գունդս զօրաց:

(5) Վեղիոս՝ որ առ ջունելոյ զնաղքիւրն մետափրատեսի՝ զվկայաբանութիւն մեր ասեմ, կարծէ թէ մետափրատես համարել կոչէ զռոմելոս յառաջնմէ իսկ քրիստոնեայ գոլ, չէ քաջ դիտեալ՝ ի բանս նր. զի ահա նա ինքն մետափր. այսպէս պարզէ ասասնօր զվիտա վկայաբանին մերոյ. * այժմ զմեծաւեծս յերախտեաց ինձ ,, ցուցեր. զի մարմին իմ կարմիր այս արեամբ ներկել՝ ,, զի ի հռոցն պղծուէ ձգեալ աղտն՝ ի բաց լուանայ. և ,, Հոգիս զանապականութեն պատմուճան սբ զգենու ||:

(6) Անուն իշխանիս ոչ յիշէ առ մետափր. խակ՝ ի Ճ. կ զի գրէ պոնտիանոս, և կ զի պոնդենդիանոս:

(7) Ընդարձակ գրէ՝ ի մեզ և առ այլս՝ եւդոքսիոս մարկիանոս կամ մարիանոս. ուր մետափր" առնէ և մակաբերուն ինչ, ոչ թէ՝ * ի պռոխիկեռացն արժանապատուհութենէ ,, վ՚ առ քո սիրոյն զրկել՝ ի կոմսացն կարդի գտանի ||: Վ՚ ձայնիս պռոխիկոս կամ բռոխիչեռիոս խոսեցաք՝ ի վերս

վասն

վարս սէյն ասլուպան. և բացատ : Իսկ կամ, ըստ լատ. գծ՛էս, և իտալ. գօնդէ, թարգմանի ընդէր, կամ հայցակից. որ ի զբարեկամէ ալքայն առնէ, և էր ի զպատուհաս տրտում՝ ի զինուորութենէ :

(8) Եթէ չկարէ անկեալ ի ձառընտրէ մերմէ ըստ թուլթոյն պակասելոյ ի վախճանի՝ առանձին կատարումն սէյն զենանի, յայտ վայրի ի քաց անկեալ թուղին քանի մի տողք անհոգութենէ գրչի. զոր այսպէս պարտ է լնուլ ի մեսափրատախտէ. Լուծեալ զենանի զբանս եւագրքոյն՝ վառեցաւ հոգւով. և նոյնժամայն համարձակութենէ գրելոյ տանեայ զանձն գոլ վկայելի ի լուր ամենեցուն : Եւ ի գոչել նր զայս անեղկելութենէ՝ կալան զնա գահիճք ըստ հրամանի բռնաւորին, և բարձին սրով զգլուխ նորա. մինչև յառաջել նմա ի նահատակութենէ քան զեւագրքեխոս : Այլ թէ գոցի ըստ ժամանակին լրատոյն օրինակ ձառընտրել ի հաստատութենէ իրացս :

(9) Նոյնպէս անգիտանամք, արդեօք ի ճ. պակասի, եթէ առ մեսափր. առաւելու պիանին մանուանեայ առ գաւառն. * Տրն իմ առաջ է ասէ, և ընտրօղ կայ „ մաց ի տալն գործոց. և արդ զի ոչ մեռանիմ ի ձե„ ռաց քոց, ոչ եթէ և ի պահակս զրկեցայ. այլ զինա„ խայօժար կամօք պատարագեցի զանձն իմ, զուգա„ հասար փոխարինաց եղէց ժառանգորդ (ընդ առն „ իմում) : Եւ յառել նր զայս՝ մերժեցին զնա յատենէ

„ անտի ||:

Այլ զարմանալի է առաջաւոր գոյնթակցին լատին թարգմանչն ընդ ինքնակամ երթն մանտանայի ի դառն, մինչև փոխել կամաւ զբանն այսպէս. * կոչեցաւ առ բառնա„ ւորն ||. զորոյ զնարդանան ի յայտ բերէ վերգիոս բոլանդեանն, առեալ. * ի կին. ոչ ասէ, կոչեցաւ, „ այլ՝ ինքնակոչ եղև յանդիման ||. ոմն և ի ճ. պար„ զապէս դնի՝ եկն : Բայց ոչ նոճաղ զարմանալի երևի մեզ և այն գոյնթակցութենն նորին վերգիոսի՝ յառել. * Կարէր լծակից առ բառնապաշտութենէ և յարգութենէ „ ժողովել զարիւն առնն. բայց ոչ է ձշմարտանման, „ թէ վկայն պատուճառել եցէ զայն ||: Եւ ընդ որ ար„ դեօք. միթէ հպարտութե՞ւ ինչ նշանակ սայր սիկնոյ իւ„ րում կիր առաջաց. ոչ սպաքէն այդ էր նշանակ իրա„ նամիտ առնելոյ զսիկինն և զայլս ընդհատակուն իւր. բայց զայս լեզու մարտիրոսաց (որպէս կամք են առել իմոյ բանի), կամ մարտիրոսաց՝ կիր մարտիրոսասիրաց է իմանալ : Ջնոյն լման և զձևոյ աղօթից վկային. որ

ընդ այնչափ հաճոյ կրկնահաց ոմանց։

(10) Մեսրոպ վարդապետն ոչ է յաւելուածն այն յոյժ վայրի • * և այսպէս մնգաւրիոս՝ սուրգասպէս մագա-
,, րիոս եղանի ‖ • ցն մակարիոս երանելի լինի ըստ ան-
ճառին յարդեանց վկայութեանն • և յարի • * և գասի 'ի
,, գաս՝ որոց յատակ քան զնա վկայից ‖ • որովք երևի
անհատակել 'ի բազմութեն եւգրքեանց զօրականաց, և ա
և ոմանցն • զորոց անորոշ են բանք ճառընտրին •
ոմն և Թիւր նց ոչ միօրինակ առ այլևայլ վկայաբերս։
Կարևոր էին և աւետիք ամսոյն հունտեմբերի, զորս յի-
շէ ճ • վս ոմանցայ, և եւգրքեայ ուրոյն ուրոյն, ոմն
և մակարայ ըս լիմք • բայց զանց առնեն այլք։

(11) Վս առանձին վկայաբանութեն միւս գենոնի, (զոր
ջանիմք յօրինակս ճառընտրաց եղելոց 'ի ձեռս մեր,
այլ քաղեցաք 'ի յունական օրինակէ՝ ըս ունկէ մատենի
վատիկանեան գրատան, ուստի և քաղուճածն Հ• Յ• Լ•)
ասէ բայերտիոս բոլլանդեան, Թէ վկայաբանն՝ * ոմն
,, ամիճ հաւանելի է, էր վկայ ականատես, ոչ փոքր
,, գեգերեալ 'ի գիրս, ուստի և քահանայ կամ սարկա-
,, ւագ ‖ : Յառաջաբանն սկսանի այսպէս • * Վայե-
,, լուչ է զքաջայաղթ արանց և ստուգապէս ոյ վկայից
,, զմրցանս 'ի լսելիս հրապարակել, առ 'ի յայտնութէ
,, ճշմարտութէ, և բռնաւորաց 'ի յանդիմանութէ, և
,, քանսարկուճին 'ի դատապարտութէ։ Բնդ և ըս գենո-
,, նի իսկապէս երանելւոյն ըս վաստակս փորձեացուք
,, անցանել բանիւ, և ըս օրինակ նր ածայնն, և ըս հաս-
,, տատութէ 'ի տանջանս • զի առաւելապէս փառաւո-
,, րեսցի՝ ոլ մարդկեղէնս սկարրութէ զայսպիսի պար-
,, զևէ համբերութէ՝ ածՙ և զընդդէմ նեղչաց զյաղ-
,, թութէն։ Եւ եղև յառաջնում ամի մաքսիմիանոսի ‖ ,
և այլն որ 'ի կարգի։

ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍԲՐՈՑ

Յատկութեանց ժէ և ից վկայից. որ և Յատկութեանք ասին։

Ժ. հոկտ. 20։ ԺԱ. հոկտ. 24։ Նոյեմբ. Ա.
շԸ = շԸ։ Ալէքսանդր. ասս սուրբ. հպ. ՟ը. եպիս.
1033 = 1044։ Աթանասիոս յամի. 522. ի 523։
Ալէքսանդրիա։ Մինուքիոս։ Ալեքսիոս։ Աւիլիոս
Ղուս. Ամէն։ (1)

ՂԱՆԻԿ ԴԱՍՔ ԲԱԶՄԱՀՈՒՅԼՆԱՀԱՅ ՏԱԿԱՑԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՈՅ ՈՂՋՈՅՆ՝ ՅԵՒԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՅԱՏԱԿԱՆ ԿԱՐԴԱՑ ՊԷՏ, ԸՍ ԱՅՐ ԵՒ ԸՍ ԿԻՆ, ԸՍ ԾԵՐ ԵՒ ԸՍ ՏՂԱՅ, ՈՐ ԷԻՆ ԽԱՐԻՒԹԵԱՆՔ ՅԱՆՈՒՆ ՊԼԽԱՒՈՐԻ ԻՐԵՆՑ ԱՔ ԾԵՐՈՒՆՈՒՅՆ՝ ԱՆՈՇԱՆԵ ԼՍՑ ԽԱՐԵԹԱՍ ԿԻՔ ԱՐԵԹԱՍ. ՈՐ ԷՐ՚Ի ՍԿԻԶԲՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԻՇԽԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՑՈՒ ՆԵՆԳՐԱՆ ԿԻՔ ՆԱԳՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՅՇԽԻՆ ԵԹԷՈՒԼԱՑՈՑ, ՈՐ ԵՒ ՀՆԴԻԿՔ ԵՒ ԽԱՉԻԿՔ ԱՍԻՆ, ՅՈՄԵՐԻՏԱՅ ԴԱՒԱՌԻ՝ ՈՐ Ի ԱՔ ԴԻՐՍ ԱԱՔԱ ԿՈՉԻ, ԽԱՉ ՅԱՐՏԱՔՆԱՑ ԵՐ

ՂԱՆԻԿ ԱՐԱԲԻԱ ԱՍԻ ԸՍ ՁԱՒԸՆԱՐԱՑ։ (2)

ՎԱՆԱՑԻ՚Ի ՅԱՄՆ ՔԱՍԱՆԵՐՈՐԴ ԹՎԻՆ ՅՈՒԱՍԻԱ
ՆԱՍԻ, ՔԻ ՅՈՒԱՍԻՆԱՍԻ ԹՂԱԿԱՑՈՑ՝ ԿԱՅԵՐԸՆ
ՅՈՒՆԱՑ, ՈՐ ՆԱՀԱՒ ՅԱՄԻ ՈՒՆ 518, ԱՅՆ ԻՆՉ Է
ԹԱ-

1.

թ՞գրէր յեթէովպիա ՚ի հապէշստան հաւատացեալ և բարեպաշտ արքայն եղէզբահան կմ ելեսբովամ յարքայանիստն աւքսոմի, թագ կապեաց և նստաւ հրէայ ոմն ժանտ, դովնաս կմ դունաան անուն ՚ի քաղաքն փառէ յերկրին ոմերիտացւոց, ուր բազմութի՞ էր հրէից և հեթանոսաց. և էր պատերազմ ՚ի մէջ նորա և ՚ի մէջ արքային եթէովպացւոց։ (3)

Եւ ՚ի միում նո՛ւագի զօրացեալ յոյժ ա՞ծասէր թագաւորն եղէզբահան՝ եհար վանեաց զզօրս դովնասայ, և զնա հալածական արար ՚ի լերինս և յամուրս. և թողե՞լ անդէն յերկրի ն՞ր զզօրս և զզօրավարս ՚ի պահպանութի՝ ինքն դարձաւ յեթէովպիա. իսկ դովնաս գումարեալ անդրէն զզօրս ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց՝ յարձակեցաւ յանպատրաստից ՚ի մուտս ձմերայնոյ ՚ի վ՞ր զօրացն եթէովպացւոց մնացելոց յերկրի իւրում յոմերիտա, եհար և ցրո՛ւեաց զն՞ս. և հալածումն մեծ յարոյց ՚ի վ՞ր քրիստոնէից։ Եւ յետ ըսպանանելոյ զբազումս՚ի նոցանէ ՚ի զանազան տեղիս՝ շարժեաց զզօրսն ՚ի վ՞ր քաղաքին նենգրանայ, զի անդ էր մեծ բազմութիւն քրիստոնէից։ (4)

Արդ եկե՞լ հասանէր անդր անօրէնն դովնաս գնդաւ իւրով՝ օձտել և ապականել զհաւատացե՞լս, և բանակեցաւ զքաղաքաւն. և տեսեալ զնշան խաչին կանգնեալ ՚ի քաղաքին՝ վառեցաւ յառաւել սրտմտութի՞. հրաման ետ քարող կարդալ ՚ի լուր քաղաքին՝

գոչելով բարձր ձայնիւ հայհոյուէ այսպէս. Եթէ ոք ոչ հայհոյեսցէ զխաչեալն, և կմ ոչ անարգեսցէ զայս մերձակայ նշանս և անիծից փայտս, սպանմամբ սրոյ և հրոյ կորիցէ. իսկ որ ոք համախորհուրդ եղիցի ինձ, և ուրասցի զգալիլեացւոց երրորդութիւն, բազում պատուոյ արժանի լիցի, և համարձակութ՚ի հանդիպեսցի իմում թ՚գրութ՚ես. և ահաւասիկ հասեալ եմ 'ի վ՚ր ձեր ո՛վ նենգրացիք բազում զօրօք և բարձր բազկաւ։ Իսկ քրիստոնեայքն ը՚ն հրամանի քաղաքապետին խարեթայ պ՚խնի ետուն 'ի պարսպէն, և ասեն. ո՛վ թագաւոր՝ ուսաք պաշտել զա՚ծն ամենակալ, և զբան ն՚ր՝ որով ա՚մ ինչ եղև, և զհոգին սբ՚ կենդանարար ամենեցուն, ո՛չ զբազմ՚ա՚ծութ՚ին 'ի ներքս մուծանելով, այլ զմի ա՚ծութ՚ին երեք անձնաւորութ՚ն դաւանեալ՝ նոյն ինքն միոյ զօրութ՚ն երկրպագեմք. ո՚պ և հարքն ձեր և մեր՝ աբրահամ, իսահակ, յակոբ, մովսէս և ահարոն, սամուէլ, դաւիթ, և ա՚մ մարգարէքն պաշտէին։

Յայնժամ անօրէն թագաւորն բարկացեալ՝ պարփակեաց շուրջանակի զքաղաքն սաստիկ պաշարմամբ, հնարելով մեքենայս և անօթս պատերազմականս։ Եւ իբրև ոչ կարաց խախտել զքաղաքն հիմնացեալ 'ի վ՚ր հաւատոցն ք՚ն, հրաման ետ ժողովել զամենեսեան՝ որ յանդս և յագարակս և 'ի բուրաստանս քաղաքին. զոմանս սպան, զոմանս 'ի ծառայութ՚ի շնորհեաց մեծամեծաց իւրոց։

Եւ

Եւ ծանուցել՝ եթէ ոչ իւ՛իք կարէ առնուլ զքաղաքն, ապա սկսաւ երդնուլ, և կոչել վկայ զա՜ծ օրինացն, եթէ ո՛չ վնասեմ ումեք 'ի քաղաքէդ, և ո՛չ հարկեմ զոք՝ թողուլ ըզկրօնս իւր. այլ միայն ը՜ հարկատու՛ութ՜ բ իմով կամիմ լինել զձեզ՝ տալով ինձ ամի ամի ոսկի տաղանդս հարիւր և երեսուն (5), և բանալ ինձ զքաղաքդ, զի մտից և տեսից զվայելչութ՜ ն՜ր։ Իսկ ժողովուրդն ա՜յ՝ որ 'ի քաղաքին, իբրև միշտ հլու սբ՜ պատու՛իրանաց փրկչին քս՜ի, ասեն ցթագաւորն. մեք յօրինաց և 'ի մարգարէից ուսաք և յառաքելոց՝ հարկս հարկանել և հպատակիլ մարմնաւոր տ՜րանց, որք ոչն խախտեսցեն զմեզ 'ի ծառայութ՜էն ա՜յ. և արդ ահա վստահացեալ և անսացեալ բանից քոց՝ բանամք ըզդուռն քաղաքիս. և մտցե՛ս և առցես քեզ զո՛ր և կամիս ինչ։ Բայց քեզ յայտնի՛ լիցի. եթէ ուխտազանց եղեալ ստես մեզ, է՛ մեր ա՜ծ՝ որ օգնէ մեզ, և զա՜մ չարութ՜ի քո հանէ 'ի գլուխ քո և 'ի վ՜ր թ՜գրուե՜դ քո. և մեք զերից մանկանցն զձայնն բարբառեսցուք քեզ, թէ զդիս քո ո՛չ պաշտեմք, և հայհոյութ՜ ք՜ում ո՛չ հնազանդիմք. այլև զմեռանել շահ վարկանիմք վ՜ս քս՜ի, որ 'ի վ՜ր մեր մեռաւ և յարեաւ։

Եւ զայս ասացեալ՝ բացին զդուռն քաղաքին. և եմուտ նենգաւոր թագաւորն ոմերիտացւոց։ Իսկ նախարարաց քաղաքին հանդերձ խարեթիւ՛ ընդառաջ ելեալ՝ երկիրպագին նմա 'ի վ՜ր երկրի։ Եւ նա հրաման

ետ զամենեսեան ժողովել, և նախ զինչս նց̄
յափշտակել։ Եւ յետ այնորիկ խնդրեաց
ցուցանել զպօղոս եպ̄ս նց̄. և լուՀեալ՝ եթէ
մեռաւ յառաջ քան զերկուս ամս, ոչ հաւա-
տաց, այլ առաքեաց ուր կային պատուՀական
ոսկերք նր̄, և հրամայեաց բերել զնշխարս
նր̄, և հրով այրել, և զաճիւնն թիակօք ցա-
նել յօդս։

Եւ 'ի միւսում աւուրն ետ հրաման ա̄մ զօ-
րացն ժողովել փայտ յաճախ, և բոց մեծ առ-
նել արտաքոյ քաղաքին, ոպ̄ զի ունիցի տեղի
ասպարիսի միոջ. և ժողովեաց զա̄մ քՀնայսն
ա̄յ և զսարկաւագունս և զայլ սպասաւորս
սբ̄յ եկեղեցւոյն՝ որ 'ի քաղաքին և որ շուրջ
զնովաւ. և զայնոսիկ՝ որք ունէին զձև միայ-
նակեցութ̄ և զկուսանսն, և զորս երևէին
յեկեղեցին ա̄յ. և զամենեսեան զնս̄ առանց
հարցափորձի հրամայեաց արկանել 'ի հուրն
բորբոքեալ, երկեցուցանել և զարհուրեցու-
ցանել կամեցեալ զայլ ևս Ծիկ քրիստոն-
եայսն. և էին՝ որք կատարեցան 'ի ժամուն
հրով, ոգիք չորեքհարիւր քսան և եօթն։ (6)
Եւ յետ այնորիկ հրամայեաց երկաթի կա-
պանօք կապել զխարեթաս և զորս ը̄ նմ էին
նախարարք և իշխանք քղ̄քին. և քարոզն ա-
ղաղակէր ոմերիտացւոց բարբառովն՝ ուրա-
նալ զքս̄ և հրէանալ։ Պ̄խնի ետուն սբ̄քն,
և ասեն. մի լիցի մեզ ուրանալ զքս̄ ա̄ծ մեր,
և զհաւատն՝ յոր մկրտեցաք։ Իսկ անօրէն
հրէայն կարծելով պատրել զնս̄ բանիւք նեն-
գութ̄ՀՀ՝ սկսաւ չարախօսել զհոռոմոց իբրև
զհա-

զհամախոհից հրէից և նեստորի հրէամիտ
աղանդապետի. զի 'ի ժամանակին բազմա-
ցեալ էին նեստորականք յԾին յունաց և ա-
սորւոց և ասորեստանեայց. ասէ. Ա՛հա և
հոռոմք ծանեան, եթէ մարդ խաչեցին
հարքն մեր յեէ՛մ՝ քահանայքն և օրինացն
վ՛դպքն. վ՛ս հայհոյելոյ նր՛ զա՛ծ՝ տանջեցին
և սպանին մարդ, և ո՛չ ա՛ծ. ը՛էր ապա մո-
լորիք զհետ այնպիսի մարդոյ. միթէ լաւա-
գոյն ի՞նչ իցէք դուք քան զհոռոմս և զնես-
տորիոս, որք ասեն ցմեզ, թէ ո՛չ ունիմք զնա
ա՛ծ, այլ՝ մարգարէ ա՛յ։ Ո՛չ պահանջեմ 'ի
ձէնջ ո՛վ նենգրացիք ուրանալ զարարիչն եր-
կնի և երկրի, և ո՛չ պագանել երկիր արե-
գական և լուսնի և աստեղց. այլ զայս միայն
կամիմ, զի ուրանայցէք զանու՛անեալն յ՛ս,
որ հայհոյեաց և կոչեաց զինքն ա՛ծ։
Իսկ սբ՛ վկայքն ասեն. ո՛չ ուրանամք զհա-
ւատսն՝ յոր մկրտեցաք 'ի հայր և յորդի և 'ի
հոգին. և մի յերրորդութ՛էն խոստովանիմք
զա՛ր մեր յ՛ս քս՛, որ 'ի քէն հայհոյի, որ է
ա՛ծ մարմնացեալ վ՛ս մերոյ փրկութ՛է 'ի վեր-
ջին աւուրս 'ի մարիամայ կուսէն. այլ զքեզ
ուրանամք զուխտազանցդ ա՛յ օրինացն. որ
և ստեցեր ճշմարտութ՛էն։ Եւ յաւել սբ՛ն
խարեթաս յայտ առնել, թէ չի՛ք մեր բա-
ժին ը՛ նեստորի, զոր նզովիւք դատապար-
տեցին դասք ուղղափառաց միաձայնութ՛բ
հոռոմոց՝ զորոց դուդ չարախօսես։ (7)
Սկսաւ այնուհետև թագաւորն քաղցրու-
թ՛բ խօսել ընդ բազմութ՛էն և ողոքական

բանիւք՝ ուրանալ զքն և ազատիլ յառա-
ջիկայ մահուանէ։ Իսկ նոքա ասեն. եթէ
հրով ծախես զմեզ, կամ սրոյ մատնես, մեք
ոչ կարեմք ուրանալ զքն. զի մեր կեանք քն
է, և մեռանելն շահ. և էր նց առաջնորդ
խոստովանուեն՝ որ 'ի քն՝ սբն խարեթաս։
Յայնժամ հրամանաւ անօրինին դովնասայ
ըմբռնեալք եղեն արք և կանայք, ծերք և
երիտասարդք միահամուռ թուով դասս
դասս՝ երկու հազար երեքհարիւր և յիսուն.
և չարահնար գազանն զկանայս և զորդիս
առն իւրաքանչիւր 'ի կապելոց հանդէպ կա-
ցոյց, և դաւաճանօղ բանիւք ողոքանաց և
սպառնալեաց խրատէր զնն՝ ուրանալ զքն։
Իսկ նց միաբանեալ որդւովքն և կանամբքն
ասեն. քաւ լիցի մեզ առնել զայդ. այլ և
զորդիս և զկանայս և զծնօղս և զինչս ուրա-
նամք, և այնպէս զխաչն քնի բարձեալ՝ հե-
տևիմք այնմ, որ վկայեաց առաջի պոնտաց-
ւոյ պիղատոսի, և վն նր պատրաստ եմք 'ի
մեռանել. զի նա է ած մեր յն քն որդի այ
կենդանւոյ, և մեք ժողովուրդք նր եմք, և
խաչի նր երկիրպագանեմք։
Օնոյն և կանայք համարձակ երկրորդէին.
մի լիցի մեզ ուրանալ զքն, և տակաւին ևս
կալ յետ սպանման արանց մերոց։ Ասէ ցնն
Թգւորն. և հաճեալ էք ով անզգամ կանայք
մեռանել վն կախարդի միոյ մոլորեցուցչի։
Ապա 'ի նոցանէ տասն կին պխնի ետուն և
ասեն ցնա. խցցի բերան քո, որ խօսի զանօ-
րէնութի ընդէմ Թագաւորին անմահի։ Յայն-
ժամ

ժամ բարկացեալ թագաւորն՝ հրամայեաց
տանել զայն ա̅մ կանայս հանդերձ մատաղե-
րամ մանկամբք 'ի տեղի ինչ խորխորատ, և
կոտորել սրով, քարշելով զն̅ դահճացն ըզ-
ծամաց գլխոցն բռնաբար, ուր ն̅ք̅ յօժար
էին ինքնին ընթանալ 'ի նահատակութի̅։
Իսկ ն̅բ կուսանքն՝ որք կային 'ի մէջ այլոց
կանանց, իբրև հասին 'ի տեղին, խնդրեցին
յամենեցուն՝ որ ը̅ն̅ն̅ էին, յառաջագոյն մե-
ռանիլ, ասելով. Թո՛յլ տուք մեզ ո՛վ կանայք
երկիւղածք յա̅յ՝ նախ և առաջին մեզ առ-
նուլ զպսակս յա̅յ վկայութ̅ք̅, զի զկնիք կու-
սութ̅ և զձև ստացել̅ունիմք. գիտէք իսկ՝
զի և 'ի ժամ հաղորդելոյ ն̅բ խորհրդոյն՝ յա-
ռաջ զմեզ կոչէին 'ի հաղորդիլ, և ապա զձեզ
զժողովրդականսդ. և այժմ ևս մեզ պա՛րտ
է քան զձեզ և զարսն ձեր յառաջ ճաշակել
զբաժակս մարտիւրոսութ̅։ Իսկ ն̅ք̅ պ̅խ̅նի
ետուն և ասեն. ո՛չ այդպէս, այլ վ̅ն̅ զի կա-
նայք եմք մարտիւրոսաց և մարք, մեք յա-
ռաջ մեռանիմք. որ̅պ̅ զի մի՛ տեսցուք զմահ
արանց և որդւոց մերոց։ Եւ այսպէս իւրա-
քանչիւր 'ի նոցանէ աղաչէր զդահիճսն՝ վա-
ղագոյն մահ ածել 'ի վ̅ր̅ ն̅ց̅. և նոյնժամայն
գլխատեցան ա̅մ կանայքն՝ կարդալով զա-
նուն հօր և որդւոյ և հոգւոյն ն̅բյ։ Նոյն̅պ̅ս
և տղայք ն̅ց̅ ը̅ն̅ն̅՝ ուստերք և դստերք, որք
ը̅ օրինակի մարցն ձայն տային դահճաց նա-
հատակել և զինքեանս։ Յայնժամ ասէ թա-
գաւորն ցմեծամեծս իւր. տեսանէ՞ք, զիա՞րդ
ազդեցուի̅ մոլորուե̅ կարաց տալ կախարդն

այն խաչեալ յամ Ն։

Յետ այսորիկ ըմբռնել եղև և այրի տիկին մի երևելի յամ քաղաքին. զոր հրամայեաց բռնաւորն շքով և պատուով ածել առաջի իւր, կարծեցել զնա բանիւք և խոստմամբք պատրել. և իբրև ոչինչ օգտեցաւ, ետ հրաման պահել զնա 'ի բանտի երկու դստերօքն իւրովք. երթային 'ի միասին տխրելք յոյժ և նեղեալք, զի ոչ սպանան ը առաջին ոբ կանայսն։ Եւ յաւուրն երրորդի առաքեաց թագաւորն զոմն իշխան առ նա 'ի բանտն՝ ասել. թէ հաւանեսցիս ինձ, և ուրասցիս զխաչեալն քս, կեցցէ անձն քո և դստերաց քոց, և գտջիք շնորհս յինէն. իսկ եթէ ոչ հաւանեսջիք ինձ, գիտասջիք՝ զի չարաչար վախճանելոց էք յինէն։ Իսկ նա իբրև լուաւ զայս, ասէ հեգնելով. տարէք զիս առ թագաւորն. և ես հաւանիմ նմա, զի՛նչ և ասիցէ։ Յայնժամ սպասաւորք բռնաւորին ածին զնա հովանաւոր դեսպակաւ ը իւրումն պատուոյ. քանզի ո՛չ երբէք տեսեալ էր նը զարեգակն 'ի բացի, բայց միայն զնշոյլս լուսոյ ը պատուհանս. և եկն եկաց երկու դստերօքն առաջի գազանաբարոյ թգրին։ Ասէ ցնա թգւորն. կի՛ն դու մի՛ մոլորեցուսցեն զքեզ կախարդութիք խաչելոյն, և մի՛ կամեսցիս կորնչել ը մոլորութե քաղաքացեացս քոց սպանելոց. քանզի դու պատուական և բարիազգի ես. մանաւանդ վ՛ս պատուոյ քո և ազգի և ընչից, և վասն քոյին իսկ գեղոյ և դստերաց քոց եհաս 'ի լսելիս իմ, եթէ ո՛չ

եր-

երբէք երևեցար առն՝ բաց յառնէ քումմէ. արդ հաւանեա՛ ինձ, և եղիցիս պատո՛ւեալ յինէն և 'ի թագուհւոյն պալատին։ Իսկ ՆԲ կինն պ՞ինի տո՛ւեալ ասէ. ո՛չ պատո՛ւիմ 'ի մարդոյ՝ ուխտազանց եղեալ յ՞այ, և ո՛չ բնակեմ ընդ հայհոյչի՝ որ հարկէ զամենեսեան հայհոյել, և զ՞ած կախարդ կոչել։

Յայնժամ հրամայեաց անօրէնն մերկացուցանել զգլուխ նորա և զդստերաց նորա, և հերարձակս կացուցանել յանդիման ամենեցուն, Իսկ ՆԲյն դարձեալ 'ի թիկունս կոյս, և տեսեալ զբազմու՞ի կանանցն յ՞ամ ազգէ՝ որք լային և ողբային, ասէ. կանա՛յք զգաստք և համահաւատք իմ, և որ 'ի ձեզ հրէայք են կ՞մ հեթանոսք, լո՛ւարո՛ւք բանից իմոց. դուք ձեզէն գիտէք, զի ես քրիստոնեայ եմ և ՚ամ ազգն իմ. և զի բազում ստացո՛ւածք են իմ՝ ոսկւոյ և արծաթոյ և պղնձեաց, և ծառայից և աղախնեայց, և անդոց և անասնոց. և ի՛ւիք կարօտ ո՛չ եմ. և եթէ կամեցեալ էի ԸՆ առն զուգիլ յետ մահո՛ւան կենակցին իմոյ, ոչ ոք զմանկութ՞ի իմով ծաղր առնէր իբրև զանօրինեցելով. ՚ՔՉի վ՞դպու՞ի ՆԲյ առաքելոյն հրամայէ ամուսնանալ օրինօք՝ քան ջեռնուլ։ Եւ ահա ասեմ ձեզ. յայսմ աւուր կան իմ աւելի քան զտասն հազար ոսկւոյ և արծաթոյ կնքելոյ. և գիտէք՝ եթէ ո՛չ է կնոջ ուրախութ՞ի, բայց յաւուր հարսանեաց իւրոց. յայնմ օրէ և առ յապա նեղութ՞իք և վիշտք և տրտմու՞իք և հեծութ՞իք են. մանաւանդ յորժամ ծնանին մանկունս,

կունս, և յորժամ տեսանեն զնոսա վախճա-
նեալս։ Արդ այսուհետև զատէ՛ ազատիմ
յայնցանէ, և լինիմ յուրախութի՛ իբրև յա-
ւուրս հարսանեաց իմոց. և ահաւասիկ եր-
կու դստերքս իմ այսոքիկ կուսանք գոլով՝
լծակցէ՛ զուգիմք 'ի միասին 'ի ձեռն վկայ-
ութ՛ես այսորիկ՝ ճշմարիտ փեսային քո՛ի որդ-
ւոյն ա՛յ հարսն. որ պատրաստեաց առագաստ
կուսանաց բարձելոց զիւղն հանդերձ ջա-
հիւք։ Եւ գիտէք, եթէ այս երկրորդ ան-
գամ տեսիք զերեսս իմ դուք մերկացէ՛ յետ
հարսանեաց իմոց յապականացու և յառժա-
մանակեայ կեանս. իսկ այժմ 'ի հոգևոր և
'ի յաւիտենական հարսանիս ցանկամ մտա-
նել, պահելով զանապականութի՛ կուսու՛ե
դստերաց իմոց, և զանձին իմոյ զսրբութի՛
բաց 'ի զուգակցէն իմոյ ը՛ ա՛յ։ Վ կայ է ինձ
ա՛ծ, զի ո՛չ կարասցէ այրս այս պատ՝րել զմեզ
ուրանալ զքո՛. իսկ ոսկի իմ և արծաթ վկայ-
են ինձ 'ի հանդերձէ՛ն, զի ո՛չ սիրեցի զնո՛,
այլ բաժանեցի զայն՝ ում պիտոյ լինէր։
Իբրև լո՛ւաւ թագաւորն զայս ա՛մ, ասէ ցնա.
ահա ո՛րչափ ինչ երկայնամտեցի քեզ, և խօ-
սեցար ո՛րչափ կամեցար ը՛ բազումս՝ որ կան
արտասո՛ւալից 'ի վ՛ր քո. գո՛նեա յետոյ ու-
րեմն և դու ցաւակից քեզ եղեալ՝ հաւանես-
ցի՛ս ինձ։ Ասէ ցնա ո՛ք կինն. խրատ տաս ինձ
ո՛վ թագաւոր՝ ուրանալ զքո՛, և կեալ զառ-
ժամանակեայս. այլ ես երկնչիմ 'ի հրոյն
յաւիտենից և յանքուն որդանցն և յամօթոյն
յաւիտենից ուրացութ՛են. լաւագո՛յն է մեզ

մե-

մեռանել՝ քան քեզ հաւանել։ Եւ 'ի թի-
կունս կոյս դարձեալ՝ արտասուեաց ը̄ կու-
րութ̄ի բռնաւորին, այսպէս ասելով. մի՛ լի-
ցի մեզ ուրանալ զքս̄ որդի ա̄յ կենդանւոյ,
որ նստի 'ի վ̄ր̄ քերովբէից, և փառաբանի 'ի
սրովբէից։

Յայնժամ թագաւորն բարկացեալ՝ ասէ.
ո՛վ կին դու անիծեալ հայհոյես։ Իսկ կրսեր
դուստրն՝ որ էր երկոտասան ամաց (8), զայ-
րագնեալ ելից զբերան իւր խըխով, և մերձ
եղել̄ եթուք յերեսս անօրինին։ Յայնժամ
որք բարձեալ ունէին մերկ զսուսերսն առա-
ջի թագաւորին, հարին զգլուխ դստերաց
ս̄բյն. և հրամայեաց թագաւորն ժողովել
յարենէ նց̄ 'ի ձեռս, և մատուցանել բռնի
'ի բերան մօր նց̄։ Իսկ նր̄ զՃաշակն առեալ՝
ասաց. գոհանամ զքէն քս̄ որդի ա̄յ կենդան-
ւոյ, զի արժանի արարեր զիս Ճաշակել 'ի զո-
հից պատուական և անարատ դստերաց իմոց։
Ապա հրամայեաց և զնա գլխատել. և երդ-
մամբ ասէր անօրէնն ցմեծամեծս իւր, թէ
յոյժ տրտմեալ է անձն իմ վ̄ս̄ կնոջս այսորիկ
և սորին դստերացս. զի ո՛չ երբէք տեսի այս-
պիսի նկարագիր պատկերի. և ուստի՞ սեր-
մանեցաւ անզգամութ̄ի քրիստոնէից՝ ո՛չ գի-
տեմ, զի մոլորին 'ի մարդ բռնամահ, որ կո-
չէր զինքն ա̄ծ։

Եւ 'ի միւսում աւուրն ետ հրաման ածել
զառաջեաւ զս̄բն խարեթաս հանդերձ այլ
ևս կապելովք, որոց էր թիւ՛ երեք հարիւր
և քառասուն (9). և ասէ ցնա. Քե՛զ ասեմ
խա՛

խա՛րեթաս՝ ժանտ և հնացեալ աւուրբք չա-
րուե՛, ը̄է՞ր ոչ նմանեցար հօրն քում՝ որ էր
իշխան քաղաքիս այսորիկ. այլ կամեցար բըռ-
նաբար միահեծան ունել զնենգրան քաղաք,
յուսացեալ և վստահացեալ 'ի մարդ կա-
խարդ՝ որ կոչեաց զինքն ա̄ծ. և հնարեցար
փախչել 'ի ձեռաց իմոց. խնայեա՛ այսուհե-
տև 'ի ծերութի̄դ քո, և գթա՛ յալիս քո ո՞պ
ծեր պատու՛ական. և լե՛ր պատճառ կենաց
քոց և որոց ը̄ քեզ են, և ուրացի՛ր զանու՛ա-
նեալն ք̄ս. ապաթէ ոչ՝ դժնդակ մահու մեռ-
ցիս ո՞պ զառաջինսն. զի ոչ կարաց որդին մա-
րիամու ապրեցուցանել զսպանեալսն: Յայն-
ժամ փառաւորեալն խարեթաս պ̄խնի ետ,
և ասէ ցթ̄գրն. Ստուգութ̄ը 'ի տրտմութ̄ե
մեծի եմ վ̄ս քրիստոնէիցս՝ որ 'ի քաղաքիս
են. ք̄զի ասացի ն̄ց՝ ո՛չ բանալ քեզ զդուռն
քաղաքիս, և ո՛չ անսացին ինձ. և դարձեալ
ետու ն̄ց այլ խրատ՝ ելանել պատերազմել
ը̄ քեզ 'ի վ̄ր ժողովրդեանն ա̄յ, և ո՛չ լու՛ան
ինձ. վ̄ս զի վստահ էի ես 'ի թագաւորն իմ
ք̄ս, որ յաղթէի և հարկանէի զքեզ՝ որ ըզ-
տասն բիւրդ ունիս, ո՞պ գեդէոնն այն երեք
հարիւրովքն և բանիւ՛ ք̄սի. բայց արդ կամքն
ա̄յ կատարեսցին. զի գիտեմք՝ որ վ̄ս մեղաց
մերոց կրեմք զմատնիլն 'ի ձեռս քո, հաւա-
տալով քո սուտ երդմանդ. քանզի ո՛չ երբէք
ել ճշմարտութի̄ 'ի բերանոյ քո:

Ասէ ցնա աթոռակալ թ̄գրին. այդպէ՞ս ու-
սուցանեն գիրք քրիստոնէից զձեզ՝ թշնամա-
նել զթագաւոր. ո՞չ գիտէք՝ եթէ թագաւորք
եբրայ-

եբրայեցւոց օծեալք են : Ա՛ստ ցնա՝ զբն խա-
րեթս . յաւել և սմ՝ եր պատրիկ զասա-
ցեն առ եղիա յաքսյալ թագրէն լինել , թե
գտի զքեզ խանգարիչդ լինել . առ որ պէնեէ
ասաց . ոչ ես , այլ դու և տուն հօր քո . զի
ոչ ոք մեղանչէ յանդիմանեալ զթագուոր անօ-
րինեալ . քանզի գա ոչ պատկառեաց յասե-
լոյ ուրանալ զբանն ոյ , որում ամն եղև որ ինչ
յերկինս և որ ինչ յերկրի . որոյ տեսեալ
զստեղծուճածն իւր պատրեալ յօձէն սատա-
նայէ՝ ոչ անտես արար , այլ ետ օրէնս պա-
տուիրանաց՝ խրատել զնա մարդ . զի հրա-
ժարել հեռացին յնմ էարեաց . ոպ զինչ
արդարութիւն խրատեաց , և դարձեալ ողոր-
մութիւն անդրէն կոչեաց ՚ի բաբելոնէ : Այս
վն զի ապականեցաւ գեղեցիկ պատկերն յօ-
րինեալ ըստ պատկերի կերպարանաց ստեղծո-
ղին՝ յարհամարհանաց պատուիրանին ոյ ,
ինքն ածորդին իջեալ կամաւ հօր՝ իւրացոյց
զանկեալն , և զմեղան յիւր մարմինն խաչեաց ,
պատարագեալ ոյ հօր զաւեյեալն ՚ի մէնջ
վն ամ մարդկան ազգի : (10)

Այս արդ՝ որոյ զայսպիսի բարերարութիւն վն
մերոյ փրկութիւն արարեալ է , զինարդ ուրաց-
ցուք զնա . կամ զինարդ թողեալ զՀշմարտու-
թին՝ զկեաս երկնից ստուգե ուխտադրուժ
ալքայիդ , որ երդուեալ մեզ բանս՝ ինչ ոչ պա-
հեցեր : Ցեսի Թագաւորս և ազգապետս վե-
րագոյն քան զքեզ ՚ի հնդիկս և ՚ի պարսս և
յեթովպիա . և ոչ այսպիսի ինչ գտաւ ՚ի նա,
այլ քան նոյ միայն Հշմարտատես էր : Այլ ես ոչ
հե-

հեռանամ յիմծային էտոստուվանուԹՀէս, այլ
ատուգատկես երանեմ զծերուԹին իմ անյեՀ
քան զինանուն և հինգ աւ, զի արժանի ա-
րարզիս ես ձգնիլ և մեռանել վՀատանուՀան
իւրոյ . արդ այժմ գիտացի՝ Թէ սիրէ զիս
ած : Վկանզի բաղուածք եղեն ամք կենայս է-
մոց յՀին յայսմիկ , և ծնայ որդիս , և տեսի
զորդիս որդւոց իմոց մինչև՚ ի չորրորդ ազգս ,
և այժմ ուրախ եմ ոչ Թագաւորդ , զի ծերու-
Թին իմ կատարէ ըստ ձգի վկայեան . և վստահ եմ,
Թէ ոչ պակասեսցի յիշատակ իմ՚ ի քաղաքէս
յայսմանէ : Ետուատա ինձ , զի ոչ այդէ յո-
առեալ ՚ի ժամանակս գարնայնոյ՝ առաւել
պատրաստել , այնպէս բազմանայ այսուհե-
առ ժողովուրդ ՚ի քաղաքիս յայսմիկ քրիս-
տոնէից և յայմ ծն ամերիտացւոց . քանզի
ահա առաջի այ աստ՛ քեզ . ունի բարձրա-
նալ եկեղեցին այրեցեալ ՚ի քէն , և կայցէ
Թիքրուն այլ յՀին յայսմիկ , և կալցին զսա
քրիստոնեայք . իսկ քո ԹիքրուԹիդ վաղվա-
ղակի ընկձեսցի , և քարոզուԹի՛ չար կրօնից
քոց խաւխանեայն :
Եւ դարձեալ ՚ի Թիկունս կոյս՝ ազաղակեաց
ձայնիւ մեծաւ , և ասէ ցՀբ վկայեան . լուար
եղբարք զսատացեալս յինէն առ Թագաւորս :
Իսկ նորա միաբան ասացին . լուաք ս՛ Հայր
պատուականդ : Եւ դարձեալ ասէ ցնոսա .
զիարդ Թուի ձեզ վկայաբանուԹիս այս . մի՛
ոք ՚ի ձէնջ յերկուծայեալ ՚ի սպառնալեաց
անօրինիս այսորիկ , և մեկնեալ որոշեսցի :
Իսկ Հբք ասացին . զօրացիր Հայր մեր , զօ-
րա-

բացի՛ր 'ի ճգնութե՛ս յայսմիկ. քանզի ամենեքեան մեք ը՛ քեզ պատրա՛ստ եմք 'ի մեռանել, և ո՛չ որոշիմք 'ի քէն։

Իսկ ո՛բն խարեթաս ասաց. լու՛արո՛ւք քրիստոնեայք, հրէայք և հեթանոսք. որ ոք յիմ ազգականաց կամ 'ի մերձաւորաց ուրասցի զքո՛, ուրանայ զնա և այն՝ որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս. և ո՛չ է իմ մասն և հաղորդութի՛ ը՛ նմա յաւուր յարութե՛։ Կա՛մ է իմ, և հրամայեմ, տալ զա՛մ ինչս իմ ո՛բյ եկեղեցւոյն, որ յետ մահու՛ան իմոյ հանդերձեալ է շինիլ. իսկ եթէ ոք յորդւոց իմոց կամ յազգականաց մ՛նասցէ կենդանի՝ կալով յամբիծ հաւատս, և ոչ ուրասցի, եղիցի՛ իմ ժառանգորդ, և գիտասցէ՝ զի երիս գեօղս լաւագոյնս քան զայլսն կամիմ տալ ո՛բյ եկեղեցւոյն։

Եւ դարձեալ ծերն ո՛բ ասէ ցթ՛գ՛րն. գովեցի զքեզ միայն յայսմ, զի զհին թագաւորացն և զազգապետացն զաւանդութի՛ն պահեցեր՝ երկայնամտել, և ոչ հատեր զբանս իմ(11)։ Բայց սակայն ահա լո՛ւր զբանս իմ, և մի՛ յաւելցես հարցանել զմեզ, զի եհաս ժամ կատարման մերոյ։ Ամ որ ուրանայ զայս վկայութի՛ս, ուրացեալ լիցի յարարչէն ա՛յ, և կորիցէ յերկրէն կենդանեաց. և որ ուրանայ զխաչն քո՛ի, մերժեսցի 'ի յաւիտենից բարեացն. և որ հաղորդի քեզ ո՛վ թագաւոր, և համախոհից քոց հրէից, եղիցի ո՛պ դադան և աբիրոն. որոց բացեալ երկիր՝ եկուլ զնո՛։ Եւ ահա ասեմ քեզ, զի ո՛պ 'ի

բաղ-

բազմելն իմ ը՞ այսպիսի պատուական եղ-
բարս, ինձ նախ և առաջին տուեալ լինէր
բաժակն, նոյնգունակ և այժմ զբաժակ մար-
տիւրոսուն ես նախ ըմպեմ յօժարութ՞ ը. և
կնքեմ այսուհետև և զժողովուրդս՝ որ ընդ
իս, նշանաւ ս՞ը խաչին՝ յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն ս՞ըյ: Բստ նմին և իւրաքանչիւր
ոք 'ի ս՞ըցն կնքեաց զինքն նշանաւ խաչի:
Դարձեալ շարժեաց երանելին խարեթաս
զգլուխ իւր խաչատեսակ 'ի չորեսին կող-
մանս. վ՞ս զի ձեռք ն՞ր կապեալ էին յետս
կոյս. աղաղակեաց և ասէ. ընդունելի՛ լիցին
հոգիք մեր՝ ո՞պ իւղ արկեալ 'ի գլուխ քահա-
նայից ա՞յ, և արիւն մեր ո՞պ պատարագ օրհ-
նութ՞ ի վ՞ր եղջերաց սեղանոյն: Եւ դար-
ձեալ աղաղակեցին բազմու՞ ը. հայր պատ-
ուական և նախամարտիկ ճգնութ՞ մերոյ,
ահա հայրապետն աբրահամ մնայ քեզ. մի՛
լիցի մեզ մնալ յետ մահուան քո:
Ցայս ա՞մ իբրև ետես ամպարիշտ և անօ-
րէն թագաւորն, ծանեաւ՝ եթէ անկարելի
է զն՞ս հաւանեցուցանել. հրամայեաց տա-
նել զն՞ս 'ի ձորն երկանց, կմ 'ի հեղեղատն
օտիաս կոչեցե՞լ, ուր խորխորատն փորեցաւ
յառաջագոյն վկայիցն սպանելոց. և զգլուխ
ն՞ց հատանել և յերկիր ընկենուլ, և զնշխարս
ն՞ց տալ 'ի կերակուր թռչնոց երկնից և գա-
զանաց երկրի:
Արդ իբրև հասին ս՞ը վկայքն 'ի տեղի կա-
տարմանն, համբարձեալ 'ի բարձունս զաչս
սրտիցն՝ գոչելով ասէին. Յ՞ս ք՞ս հասի՛ր մեզ

յոգնականութեի ։ Յո՛ քո՛ , եղեցի՛ արիւն մեր
՚ի թողութեի՛ եւ ՚ի հանգիստ հալածելոցս եւ
սպանելոցս յամպարշտից ։ Յո՛ քո՛ , ահա խոս-
տովանեցաք մեք զքեզ առաջի մարդկան ,
խոստովանեա՛ց եւ դու զմեզ առաջի ընտրելոց
քոց , եւ որք հրեշտակաց ։ Յո՛ քո՛ բարձրացո՛
զտաճար քո այրեցեալ եւ կործանեալ յամ-
պարշտից ։ Յո՛ քո՛ ողորմեա՛ սրտոցիկ , որք
յիշեն զմեզ ։ եւ օրհնեա՛ զամենեսեան՝ որք
պատուհէն զվկայութի՛ս մեր , պարգեւելով
նո՛ զթողուն մեզոց ։ Յո՛ քո՛ բարձրացո՛ զեղ-
ջիւր քրիստոնէից , եւ զթագաւորս հաւատա-
ցեալս եւ զեկեղեցեացս ։ եւ զթշնամութիւնս
զայս ամբրիստացոց տուր քրիստոնէից , որք
արասցեն զկամս քո ։ Յո՛ քո՛ հար զանօրէնս
զայս , եւ իւրեա՛ զարմատ սորա՝ որպես զփարա-
ւոնէն եւ զամաղեկայն եւ զսենհորիմն ։ Յո՛
քո՛ արժանի՛ արա զմեզ հայել ՚ի տեսիլ վա-
ռաց քոց , եւ լսել աւետարանութի՛ն ՚ի որց
հրեշտակաց զվաղվաղակի անկումն անօրի-
նիս եւ զսատակումն ջնջմանն ամպարշտութե՛
հրէից ։

Եւ յետ աղօթելոյ զայս ՚ամ՝ աղաղակեցին
առ միմեանս ասելով . խաղաղութի՛ն ը՛ ձեզ
՚ի համբոյր սրբութե՛ն ։ Եւ որն խարեթաս
ասէ ցնո՛ . խաղաղութի՛ն տուէ՛ալ առ ՚ի խա-
չելոյն որց աշակերտաց իւրոց եղեցի՛ ը՛ ձեզ
ամենեսին եղբարք , ամէն ։ Եւ խոնարհե-
ցուցեալ զնո՛ գլուխն մատոյց սրոյ յառաջա-
գոյն զպարանոց իւր . և ՚ամ՛ վկայքն ծունր
եդին ը՛ նո՛ . բայց չորեքին ՚ի նոցանէ առնն-

թեր կալով ն̅ը ծերունւոյն խարեթայ (որ ոչ կարէր 'ի ծունկս կալ առ ծերութ̅ն), 'ի վեր բառնային զբազուկս ն̅ր, զ̅ր մեծին մովսեսի 'ի լերինն (12). յայնժամ մատուցել̅ մի ոմն 'ի զինու̅որացն՝ եհատ զն̅ը գլուխ ն̅ր։ Իսկ բազմութ̅ի ն̅ը նահատակացն՝ որ շուրջն կային, ընթացան և առին զն̅ը արիւն խարեթայ, և օծանէին զմարմինս իւրեանց. մինչև զարմանալ դահճացն և արտասու̅ել։ Եւ ապա ա̅մ ն̅ըցն խոնարհեցուցել̅ զպարանոցս իւրեանց՝ կատարեցան 'ի տ̅ր, յամսեանն հիւպերպերիտոսի, որ օր տասն էր, յերկրորդում ընդիկտիոնի. այն է ամ տ̅ն 524, յերկրորդ ամի հնգետասաներորդ ընդիկտիոնին յունաց, և 'ի թու̅ին անտիոքացւոց կմ սելևկիացւոց 835. որ և էր եօթներորդ կամ հինգերորդ ամ յուստիանոսի կայսեր թրակացւոյ։

Կին մի 'ի քրիստոնէից՝ ունելով ը̅ ինքեան որդի մի ամաց չորից կմ հնգից, կացեալ 'ի կողմանէն՝ միտ եդել̅ տեսանէր, թէ ո՛րպէս առնուին ն̅ըքն և օծանէին զերեսս իւրեանց արեամբ ն̅ըյն խարեթայ. ընթացել̅ առ նն̅՝ էառ յարենէն, էօծ զինքն և զորդին իւր. աղաղակեաց ասելով. եղիցի՛ թագաւորդ եբրայեցւոց ո̅պ փարաւոն։ Իսկևիսկ կալել̅ զնա ածին առ թագաւորն. և ետ հրաման խորխորատ առնել, և կուտել փայտ, և ածել 'ի նա ձէթ և ծծումբ, և լուցանել 'ի նա հուր. և արարին զայն հնոց մեծ, զի ընկեսցեն անդր զկինն։

Եւ

Այս մինչդեռ կապեալ էին միմեանս վկայուհին, տեսեալ տղայն զԹագաւորն նստեալ ի բարձր բազխատակ տեղւոջ, փութանակի ընթացաւ առնա, և պատեցաւ զոտիւք նր՝ համբուրելով զնա, ոմն թէ միջնորդել կամեցեալ վասն ազատութեանէ մօր իւրոյ։ Նոքա Թագրն ձգեալ զձեռն իւր՝ ընկալաւ զնա ի գիրկս իւր, և պգուժելով ասէ ցնա. ասա մանուկ դու՝ զի՞նչ լաւ է քեզ. գնալ, թէ մնալ առ խս, և լինել ինձ յորդեդիկս։ Այս մանուկն ասէ. ընդ մօրն իմում լաւ է ինձ. վասն զի ասացեր ցիս, եկ սրդեակ և մարտիրոսանամբ՝ ոսկ և ամենեքեան. և ասեմ ցնա. մայր իմ զի՞նչ է մարտիրոսանալն. և նա ասէ. մեռանել և դարձեալ կենդանանալ։ Այս ի սաստել Թագաւորին ցնա՝ ասէ մանուկն. Թոյլ տուր ինձ երթալ առ ծնօղն իմ. զի տեսանեմ՝ զի կապեն զնա. և ազաղակեաց ասելով, մայր մայր։ Ասէ ցնա Թագաւորն. Ձանաչե՞ս զանուանեալն քո. Պատնի եւս. այո։ Ասէ Թագրն. ուստի՞ ճանաչես զնա։ Ասէ ցնա մանուկն. Ջմարտանայս հանապազ տեսանի յեկեղեցւոջ, յորժամ երթայի ընդ մօր իմում. և եթէ կամիս, եկ ընդ իս, և ցուցից քեզ զնա (13)։ Պատձեալ ասէ ցնա Թագրն. զի՞ս սիրես, թէ զոր կոչեսն քո։ Ասէ մանուկն. ստուգապէս զքո։

Յաւել հարցանել Թագրն. զո՞ սիրես. զի՞ս, թէ զմայրն քո։ Ասէ մանուկն. զմայրն իմ։ Ասէ ցնա Թագրն. և վասն կրկին Թողեր զմայրն քո, և եկիր առ խս համբուրել զոտս իմ։

Մանուկն ասէ. կարծէի զքեզ քրիստոնեայ, և եկի աղաչել՝ զի արձակեսցես զմայրն իմ։ Եւ նա ասէ. ես հրէայ եմ. այլ եթէ կամիս մնալ առ իս, տամ քեզ ընկոյզ և նուշ և թուզ, և այլ զի՛նչ և կամիս։ Ասէ մանուկն. թո՛ղ զիս՝ երթամ առ մայրն իմ. ո՛չ առնում ինչ 'ի քէն, զի հրէայ ես։ Ասէ թ՞գրն ցմեծամեծսն իւր. տեսէ՛ք զչարարու՛եստս, զի-

ա՞րդ իմաստութ՞ տայ պ՞ինի։

Յայնժամ ասէ մի ոմն 'ի մերձակայից թագաւորին ցմանուկն. ե՛կ ը՞ իս, և տանիմ զքեզ առ թագուհին։ Իսկ նա ո՛չ ետ նմա պ՞ինի. այլ իբրև ետես 'ի հեռաստանէ, եթէ ընկեցաւ մայր ն՞ր 'ի հուրն, լայր և ասէր. զմայրն իմ կամիմ տեսանել. և բըռնազբօսեալ հնարէր յառնել և գնալ. իսկ թագաւորն արգելոյր զնա. յայնժամ բուռն եհար զբարձից թ՞գրին, և եխած զնա. իսկ նա ետ զնա միում 'ի մեծամեծաց իւրոց՝ ասելով ցնա. ա՛ռ զդա և սնո՛, և ուսո՛ հրէանալ։ Արդ մինչդեռ առե՞լ տանէր այրն զմանուկն՝ կալե՞լ զձեռանէ ն՞ր, պատահեաց այլոց իշխանաց, և սկսաւ պատմել ն՞ց զբանս՝ զոր խօսեցաւ մանուկն, և թէ ո՛րպէս եխած զթ՞գրն։ Եւ զի ոչինչ հեռի կային 'ի հնոցէն, յանկանիլ ն՞ր զբանիւք և 'ի թողացուցանել զձեռս մանկանն, դիմեաց մանուկն երջանիկ, և ընկէց վաղվաղակի զինքն 'ի հուրն. և այնպ՞ս կատարեցաւ ը՞ մօրն իւրում։ Իսկ թիւ՛ համօրէն նահատակելոց յաւուրսն յայնոսիկ 'ի քաղաքի և արտաքոյ՝ եղեն աւելի

քան

քան զքիւր մի . Եւ յայսմաւուրսդ Ժէ ոգիք
Յ Ծակաւնաց , և միւե անձինք յեկեղեցակա-
նաց . իսկ 'ի տօնացուցին յիշին տասն Հազար
և երկերիւր վկայք ընՀանրապէս ։ (14)
Յայնժամ իշխանքն մեծամեծաքն անկանէին
առաջի Թագաւորին՝ խնդրելով զքիւրուԹիւն
ՀնացեԼոց քրիստոնէիցն ։ Յանձն էառ բռնա-
ւորն . բայց ժողովեալ զմանկունս քաղաքին
և զագարակացն՝ յաղատաց և 'ի ծառայից ,
յերկրագործաց և յարուեստականաց , 'ի
հնգետասան ամաց 'ի խնայարՏ՝ զամարու և
եգ 'ի քրիստոնէիցն , որոց էր Թիւն Հազար
երկերիւր լինաւսն և եօԹն , բաժանեաց զնա
և ընդհեաց 'ի ծառայուԹիւն ամ մեծամեծացն
իւրոց . և ինքն գնաց 'ի քաղաքն իւր 'ի փա-
ռս ։ Իսկ եղև յաւուրսն յայնոսիկ երևոյԹ
հրաշեսիլ գիշերային յօդս 'ի հիւսիսա-
կողմն , զոր բնաԹօք հիւսիսային արշալոյս
կոչեն , որ յերկարէր յերեկորեայ մինչև 'ի
մՀջ գիշերի զաւուրս քառասուն . արդ այս
տեսիլ ԹէպԷտև բնաւորական՝ ունէր յայն-
ժամ և զգործ 'ի վեր քան զընուԹիւն , զի իբրև
զՀնոց ջերմ հեղէղ 'ի վեր երկրի՝ յամ և յեր-
կիւղ և 'ի յանդիմանուԹիւն լինէր Հրեից , որք
պատերազմէին ընդ նմա . և Հաւատացեալքն
տեսեալ՝ տային օրՀնուԹիւն ՚ի , ասէ վկայա-
բանն Ճառընտրաց մերոց իբրև ակնա-
տես (15) . յոր յաւելու մեսրոպ տես , ԹԷ
ապա և Հուր 'ի վերուստ տեղացեալ երկիր , որ
էր Հարուճած կատարեալ . սակայն և ոչ այն-
պես խրատեցաւ ամպարշտուԹիւն Հրէից . կի

ըստ ասելոյ յայսմաւուրաց՝ յետ գիշերային երևութին ը̄ առաւօտն հուրն իբրև զփոշի հոսէր 'ի վ̄ր երկրին։ Բայց ա̄ծ այլով ևս օրինակաւ էառ զվրէժ 'ի հրէից, և բարձրացոյց զքրիստոնեայս։

Բանզի յորժամ դարձ արար անօրէնն դովնաս 'ի քաղաք թ̄գրութ̄ն իւրոյ 'ի փառէ, յաւել գրգռել 'ի ձեռն դեսպանաց իւրոց և զարքայն պարսից զկաւատ ը̄դէմ քրիստոնէից առ հասարակ, նոյնպէս և զալամադին կմ զալամունդար իշխանն սարակինոսաց՝ որ էին ը̄ ձեռամբ պարսից, խոստանալով նոցա կաշառս բազումս՝ եթէ յարուսցեն հալածանս 'ի վ̄ր հաւատացելոց ք̄ի։ Իբրև լու եղև այս առ յուստիանոս կայսր, յղեաց զաբրահամ երէց գիտնաւոր առ ալամադին՝ հաստել դաշն միաբանութ̄ն ը̄ սարակինոսաց եղելոց 'ի մասին յունաց։ 'Ի հասանել սորա առ իշխանն՝ եհաս անդր և 'ի կողմանէ արքային պարսից սահակ երէց կմ ե̄պսապետ, որ էր գլուխ քրիստոնէից ուղղափառաց եղելոց 'ի պարսս. եկն և շիղա ե̄պս նեստորականաց 'ի դիմաց դովնասայ հրէի. և 'ի պայքար մտեալ սորա ը̄ ուղղափառս՝ հնարէր հրէական վ̄դպու̄ ցուցանել զք̄ս սոսկ մարդ. այլ յաղթահարեալ յուղղափառաց՝ դարձաւ յետս ամօթով։ Եւ աբրահամ յետ վճարելոյ զգործն՝ յոր եկեալ էր, դարձաւ առ կայսրն, և պատմեաց նմ զանցս քրիստոնէից յոմերիտա յերեսաց դովնասայ հրէի։

Յայն-

Յայնժամ գրեաց յուսահատոսս առ Եւդոն ա-
ղեքսանդրիոյ՝ յորդորել զԵլեսբահան արքայ
Եթէովպացւոց՝ առնուլ զվնասժ արեան սրբ
խարեթեանց ՚ի տիրասպան ազգէն Հրէից։
Այլ Եղեսբահան վաղագոյն ևս պատրաս-
տեալ էր ՚ի նոյն՝ վառեալ ՚ի հանճանձն Աս.
վըզ ժողովեալ զօրս յիւրոցն և յօտարաց ձև
ին, խաղաց ընդեմ դուխասայ ըն ծով և բնդ
ցամաք։ Այլ քանզի զառաջինն ձախողակի
երքն պատահեցին, մինչև ծախիլ ժէ հազար
արանց ՚ի զօրաց նորա յամայի և յանջրդի
վայրս, ապա դիմեալ Եղեսբահանայ առ ՝ծ՝
հաս յայտնութեի ՚ի կրճատորէ ումենէ սրբ
վճ յաղթութեի. և յետ բազում աշխատու-
թեց եհար զՀրէայս ՚ի հարուածս մեծա-
մեծս ՚ի ծովու և ՚ի ցամաքի. վճ զի եղեն և
յայտնի սքանչելիք ՚ի ձեռն, և երևումն Հր-
ըեշտակաց յօգնականութեի քրիստոնէից
կին. և լսելի եղև ձայն ՚ի բարձանց՝ որ ա-
սէր երկայս. գաբրիել, գաբրիել, գաբրիել։
Այնչև յետ ամի ինքնին Եղեսբահան ձեռամբ
իւրով սպան զանօրէնն դուխաս, և առեալ
զմերբիտացւոց ՚ձն, և զարքայանիստ քաղաք
նր փառե՝ չինեաց եկեղեցիս, և երից զտե-
ղին քրիստոնէութի. զի և ոչ սակաւք ՚ի Հր-
ըեից ՚ծնացելոց ՚ի կոտորածէ դարձան առ քն։
Նկեալ այնուհետև բարեպաշտ արքային
Եղեսբահանայ ՚ի նենգպան քաղաք՝ չինեաց
և անդ եկեղեցի, և պատուհեաց զտեղի կա-
տարման սրբ խարեթեանց. կատարեաց և
զկտակս սրբն խարեթայ. և զմի յորդւոց

նորա կարգեաց զօրավար երկրին. կացոյց և Թագաւոր ամերիտացւոց զոմն՝ի քրիստոնէից աբրամ անուն. եւ թերել և եպս մի յաղեք-սանդրիոյ հանդերձ քահանայիւք և սարկաւագօք: Եւ այնպէս՝ի կարգի եդեալ զնա դարձաւ՝ի տեղի իւր յԵթովպիա. և ինքն հրաժարեալ յիշխանուէ, և թիքրեցուցեալ զորդին՝ի տեղի իւր, առաքեաց զԹագ իւր յԵՀմ առ Հայրապետն յովհան՝ կախել՝ի վր գերեզմանին քրի. և այնուՀետև առանձ-նացեալ՝ի լերին՝ի վանս միայնակեցաց՝ ե-կաց՝ի յոյժ միանձնական վարուք և խստակրօն ձգնուԹիւն. և կատարեալ զկեանս իւր՝ի Հաձոյս նմ՝ փոխեցաւ յանանց Թագա-ւորուԹիւն: Եւ այս նմ յաջողեալ լինէր՝ի նոնէ քարեխօսուԹիւն արեան սբց խաչիԹեանց, և ըստ յայտապատում գուշակուԹեն նորին իսկ սբյն խաչեԹայ, ՚ի փառս անուանն քրի նմ մերոյ:

ԺԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ը:

(1) Զովանդակ վկայաբանուԹիս առնուածք՝ի մեծ Ճառընտրէ անտի մերմէ լբրև յաղբերէ այլ եւս վկայա-դրաց և յայտմաւուրաց. ոչ և մետափրաստէս զնոյն քա-ղէ պատմուԹիւն՝ դոյզն տարբերուԹիւք ոձոյ, կարձելով և ընդլայնելով. զորոյ զլսաւին ԹարգմանուԹիւն՝ի կիր առնուն սուրիոս և բարոնիոս. այլ նկ՚ Թէ գտեալ էր նց զօրինակ մեր, զի յայնժամ ոչ՚ի վեր երևէին և այն վրիպակք պատմականք, զորս ձեռն արկանէ ուղ-ղագրել պագիոս ծանօԹարար բարոնիոսի: Մեք ոչինչ կա-

կարօտացաք առնուլ՝ ի մետափրատեան օրինակէ, քան
՝ի վերջաբանումէ, յորում լինին քանք զկնի կատարման
խարիթեանց՝ վն նուճատելոյ քրիստոնէից զհրեայս կե-
թովպիա կիմ յոմերիտաս. որ համառօտիւ պատմի և՝ ի Հ.
այլ ընդարձակագոյն առ մետափր. և ոչ գիտեմք զըս-
տոյգն, արդեօք թարգմանիչն՝ եթէ գրիչն ճառընտրաց
զանց արար զայնու յաւելուածով. զի է արտաքոյ վկայա-
բանութեանէ. քայց սկսաք ելլեն մեզ քալել՝ ի լրումն մար-
գարէութեանէ սկզն խարիթայ, և՝ ի յայտնութեն վիճակէ
ծին այնորիկ զկնի խարիթեանց։

(2) Որ ամ հանգամանք պատմութեանս յայտ առնեն, թէ
եթէովպիա յիշատակեալն աստանօր՝ է հապէշատան,
նոյնպէս և քալ հաստատէ զնոյն՝ անուն Թագրական քա-
ղաքին, որ՝ ի ճ. գրի ոգոստվի, ՝ի յ. աւգոստի. և՝ ի
լտ. աւգոստէ, կիմ աւգուստա. զորմէ տես լնով յծա-
գրութեանէ. ՝ի ֆ տան ափրիկոյ. ՝ի Հապէշ. էրէս. 555։ Իսկ
վն ծին ոմերիտայ միաբան ասեն ճ. և մետափր. թէ
այն է՝ որ յանծելէն գրոց սաբա կոչի, և յարտաքնոցն
երկրանիկ արաբիա. տես և յատկագս սաբայ՝ ի նոյն հա-
տոր Ցագր. էրէս. 577։ ՝Ի ճ. փոխանակ երկրանիկ ան-
ուանն արաբիոյ, գրի եւդոմն արաբիայ. որ պարտի լի-
նել եւդեմոն. այն է լատին. էօփէմօն, որ թարգմանի ե-
րեքակ կիմ երկրանէկ։ Որ և որ՝ ի ճ. և՝ ի Հ. գրի նեռնգ-
րան կիմ նեռգրա, ՝ի յ. գրի նեգրա. և առ սուրիոսի
նագրան։ Անուն Թագրին հրեի լինք՝ ի ճ. և՝ ի յ. այլ
՝ի Հ. գրի գոշնաս. և առ սուրիոսի գոշնատան։ Իսկ
անուն ալքային եթովպիոյ՝ ի ճ. գրի. եղկբահազ.
՝ի Հ. եղեսբահամ. և՝ ին. և լտ. եղէսբատան, կիմ եղես-
բաս։

(3) Ճիշդ և անվրէպ ժամանակագրուն դնի՝ ի սկիզբն
ճառընտրիս մերոյ այսպէս. * Յամս հինգերորդ՝ քա-
„ սէր Թագրին յուստինոսի, որ Թագրեաց կոչին հռո-
„ մայ. Յերկրորդում ամին դիքսիոնին. իսկ ըստ ան-
„ տիոքացւոց Թուին յուԹհարիւրորդի երեսներորդի
„ հինգերորդի, յամսեան հիւսերբերիոս. կեսրուէն
„ եղմի յովհաննու, յանտիոք եփրասիու, յաղեքսանդր
„ տիմոԹեայ ‖. և նոյն Թիւ ընդհակառակն՝ հանդերձ
տասներորդ աւուրբք նոյն ամսոյն կլինի և՝ ի վախճանի
կատարման սրբոց խարիթեանց։ Արդ այս ամ հաշիւք
անվրէպ յայտ առնեն զամ ոն 524. միայն Թէ հինգ-
երորդ այն յուստինոսի՝ հօԹներորդ առաւել պիտէր
ըստ սովորական հաշուի ժամագրաց. որ չէ լինել, զի վա-

զա-

զառուածք եօթներորդն՝ բացառուածք հինգերորդ մարդ-
թի ասել:

Եւ սակայն՝ քանզի մեսափրատես թօթափեալ զայլ հաշիւս՝ պահեալ է միայն զհինգերորդ ամն կայսերս, վշյ և բարոնիոս՝ երկու ամօք յառաջ գնէ զնահատա-կուածն սբցս, ըստ յամի ամն 522. ի նոյն հայէ և գնեզին թէոփանեայ ըստ հաշուի յուսնոց ի 515 ամի մարդեղուե, որ միշտ յառաջէ եօթն ամօք քան զհատարակ թուա-կանն քրի: Զոր ինչ և այս խոտորումն մեսափրատեսի կամ այլոց. բայց ստգտանելն է գիւտն այն նոր, զի ի բաց թողեալ զանուանս պատրիարգաց յիշատակելոց ի վկայաբանէն՝ եդեալ է ոչ ոք և ինչ (մեսափր. կամ սուրիոս) զպատրիարգն աղէքսանդրու ասաելիոս ա-նուն. և զի ոմիմնթէոս կուզն էր պատրիարգ ի Ճմկին, կարծեցին ոմանք՝ թէ ոմիմնթէոսն այն կոչնւր նաև ա-սաելիոս. կամ թէ ըստ սուրիոսի և ըստ բարոնիոսի՝ կայսրն կարգեալ ինչ զուզղափառ ոչ ասաելիոս անուն ի տե-ղի ոմիմնթէոսի կուզն առն հերձուածծոլի. բայց այդո-քիկ են մոացածին հնարք, զոր իրաւամբք ասէ պա-գիոս ի ծան. բարոն. յամի 521:

(4) Անվրէպ է և հանրական ասացուածծ Ճ. յալագա քրիստոնէութե բնակչաց նենդրանայ՝ առանց որոշելոյ զժամանակ. զի ասէ. * Ա յս քալաք յերկնուստ (կամ ,, յորմէհետէ) լուսաւորեցաւ, պաշտեր տակաւին զՔ ,, և զվիսանական երկրորդութին, ընկալեալ զայս հա-,, ւաստեաւ զվճռութին ի նը և յծծազգեաց հարցն՝ ,, յերկայն և ի հին ժամանակաց ||: Ոչ կամ մեսա-փրատես, և կամ լատին թարգմանն նր յաւելեալ է, թէ երկայն ժամանակն այն հայի յաւուրս կոստանդեայ որդւոյ կոստանդիանոսի. որոյ չղեալ ասէ գեսպան առ արքայն սաբայ կամ ոմերիտացւոց՝ եթ չինել ի նեգրան քալաքի եկեղեցիս, և կարգեայ նց հովիւ բարեպաշտ զոմն միայնակեաց. որ և հրաշիւք դարձուցեալ էցէ զբազումս, ևն:

Բայց պնդէ պագիոս յամի 522, թէ այդ է յայտնի սխալ. զի նոքա յաւաջնմէ իսկ առ կոստանդիանոսիւ յամի 327. լեալ էին ասէ քրիստոնեայ. իսկ միայնա-կեացն այն մեծանուն թէոփիլոս անուամբ՝ արքանեակ կոստանդեայ կայսեր հակամիտելոյ զհետ հեռևողացն արիոսի՝ էր արիոսական և մոլորեցուցիչ բնակչաց տեղ-ւոյն՝ յամի 354. յորոյ վր սուս հրաշս յօդէ աղանդա-կիցն վիլոատորգիոս. այլեւթոյ ընորհօք ոն ի ձեռն

ուշ.

ուղղափառ քարոզչաց մաքրեցաւ սեղին յաղանդոյ արիւն
նոսայ : Եւ այսպէս ուր ուրեք խոտորի՝ ի մէնջ լին՝
Թերցուճածն վեսաւիրատեան կամ սուրբոսեան, ոչ արդ
պարանոյ առ քննիչս :

(5) Մեսաւիր • այսչափ միայն գրէ վասն հարկաց, թէ
ձևանայր խնդրել այնչափ ինչ՝ որչափ յաւելադոյն առ
նոյր : Իսկ ճ՝ լինով բացատրէ զնոյն մեթին բանիւքս,
զորովք զանց արարաք • * Եւ վ՚ն հաւաքեալոյ տարուցյս
,, միակ լ՚ն սովորութիւն տուճեալ լ՚ն գլխոյ իւրաքանչիւր
,, անձին առն և կնոջ, ծառայի և ազատի, տղայի և
,, ծերոյ, երկրագործի և ձեռնարուճեսա(ի) յաղկադէ
,, մինչէ • և այս պատիւր Թէրսական և Թէոփպայեցւոց
,, կշռոնին, որ ունի լ՚ յուննայ Թուճոյն երկոտասան • ոմ
,, զի ժողովել ամի ամի զսահմանեալ հասն յատացեալ
,, քաղաքէն նենդրանայ ոսկի տասղանդս հարիւր և երե
,, սուն • և է տաղանդն ևԹովպայեցւոց և ամերիտաց
,, ւոց ՃԼին երեքտասան լիտր || : Ա յս բանիք ալիտոյ լին
նին բանասիրաց :

Պիտոյ է և վասն Ճագրաց գրեալն անդանօր ի ճ •
* Եւ էր Ճն ոմերիտացւոց ի հարաւոյ կուսէ կոչե
,, ցեալ այժմ՚ի փիւնիկոսէ հեռի երեսուն օԹևանօք •
,, որ ունի ըարձակուն օԹևանս քսան և հինգ՝ կալեալ
,, լ՚ն նմանուճե հոսանուտ աղբերական : Իսկ հնդկային
,, Ճն՝ ուսոյ գային անուշահոտ խունդք, պղպեղ, և
,, մետակս, և մեծագին մարգարիտս, է հեռի եօԹա
,, նասուն օԹևանաւ : Իսկ յոյնք լ՚ն կողմանս հիւսիսոյ
,, յոմերիտացւոց Ճէն վաճառուն օԹևանաւ՝ լ՚ն ցամաք
,, Ճին գնացից Ճանապարհաւ • և ճգի ՚ի ծովն կարմիր
,, յոմերիտացւոց Ճին մինչև ՚ի հնդիկս և ՚ի պարսս ||:

Ուր մեսաւիր. Թուել զայսոսիկ՝ զայլ ինչ նշանակէ,
Թէ ոմերիտացիք կամ սաբացիք ծագեալ էին յաբրահա
մէ ՚ի քեսուրական ծննդոց :

(6) Ձիք առ մեսաւիր. և այս Թիւճ որոշ վ՚ն նահատա
կելոց եկեղեցականաց, ուր Հ. փոխանակ գնելոյ նիէ.
գնէ մնէ :

(7) Կարևոր է զառաջնիկայս բան ամբողջ գնել և ըստ
ոճոյ մեսաւիրատեսի • զոր ըօրինակեն և այլք ը՚ն բա
նիտան կարգինալն՝ առանց ը՚ն բանս ինչ ածելոյ, կամ
յիշելոյ՝ Թէ ժրպիտի համբաւ չար ափեալ էր զհռոմ
մոյ յայնմ ժամանակի յարևելս իբրև զհամահոտիկ նեա
տուրն • ոմ և առանց իմանալոյ՝ Թէ զիարդ խոհեմուՃ
ըարձակէ մեսաւիրատես զմոլորութիւն նեատուրի ՚ի բե

լա-

բանոյ հրէին, և զուղղափառութի 'ի բերանոյ խարի-
թեանց՝ առաւել յայսմ վայրի: Բան նր է այս ը լա-
տին թարգմանութեան (զի զյունականն չունիմք 'ի ձե-
ռին). * Ապա և նմին իսկ խարեթայ ինքնին թգրն
,, զնոյն խրատ տայր (հրէանալ), 'ի վր ածելով, թէ
,, ահա և նոքին իսկ հոռոմք ծանեան՝ եթէ մարդ խա-
,, չեցին հարք նր. քանզի զիարդ մարթ է ասէր ձաղ-
,, կիլ գաւազանաւ՝ այ, որ բնութբ անմարմին է. և
,, զիարդ մահ ճաշակէր չարաչար և անարգական՝ ան-
,, մահն բնութեամբ. ապա թէ ոչ՝ բազումք և 'ի հո-
,, ռոմոց, որք առ ձեզս են, պարծելով վդպ ունել
,, անձանց զնեստորիոս՝ ինքեանք ևս յաւելուն ասել.
,, թէ ոչ իբրև ած, այլ որպէս մարդ և մարգարէ ոմն
,, պարտ է մեզ մեծարել զքս: Որ եթէ չլինէր ճշմա-
,, րիտ, և ոչ ես յայնչափ անմտութի բերեալ լինէի,
,, զի ուրացայց զ'ի քս հաւատս, և զձեզ 'ի նոյնպիսի
,, ուրացութի հրաւիրեցից. (ուր 'ի զուր կարծէ բա-
րոնիոս՝ թէ դովնաս բնիկ քրիստոնեայ իցէ ուրա-
,, ցօղ.) քանզի զոր օրինակ զօրէնսն պինդ ունիմ և
,, պաշտպանեմ, և զհայրենի սովորութի և զաւանդս
,, ողջագուրեմ, և զամ նորաձևութի մերժեմ, ը նմին
,, և զյս ատեամ, մարդ մի՝ որ ածութեան թեկն էած:
,, Չի ոչ եթէ արեգական և լուսնի, և ոչ այլ արարա-
,, ծոց, և ոչ դից հեթանոսաց հարկեմ զձեզ պաշտօն
,, մատուցանել. քաւ լիցի ինձ այդչափ անմտանալ.
,, այլ միայն այ, որ զամ արար, և հայր է իրաց ծնե-
,, լոց (կմ եղելոց). որ անախտական գոլով և աննիւ-
,, թական՝ ոչ գիտէ ծնանիլ ախտաբար:
,, Առ այս ասէ քաջն խարեթաս ընկերօքն հանդերձ.
,, առ 'ի մէ զայդպիսիս խօսեցար արքայ. մեք իսկ չա-
,, սեմք, թէ ած ախտաբար ծնանի, այլ անախտաբար,
,, ոպ միաք ծնանին զբան: Եւ խոստովանիմք, թէ նա
,, գթացել 'ի մերս բնութի՝ առաքեաց զորդին 'ի մարդ-
,, կան բարութի, մինչև մարմին զգենուլ 'ի կոյս օրիոր-
,, դէ. և ամիւ նման մեզ եղեալ՝ բաց 'ի մեղաց, զամն
,, ելից՝ որ ինչ զնմանէ ասացան 'ի մարդարէից յառաջ
,, քան զամս յոլովս. որոց և դու գիտակ իսկ ես՝ ըն-
,, թերցեալ զնց գիրս: Որ և բազում անգամ 'ի ձեռն
,, սքանչելեաց՝ որ 'ի վեր են քան զմարդոյ կար, եցոյց
,, զածութի իւր. և ոչ ժխտեաց զառնուլն իւր զմար-
,, մին: Չի՞նչ ևս յաւելից. մեք զնա ած և որդի այ
,, դաւանեմք, և վս բովանդակ քաղաքիս տամք պխնի,
,, և

,, և վը այլոց ևս քրիստոնէից՝ որ են ը մեօք. և չիք
,, ազգ ատնջանաց, զոր չիցեմը պատրաստ կրել վը նը-
,, ղի ոմի մեհենացէ զմեզ՝ ի սկզբան քո՝ եթէ չիք մեր բա-
,, ժին ը նեստօրի, կամ ը այլոց՝ ոչք նովին ախուէք
,, վարեալին. որը զմարդն՝ որ առանց բաժանման և են,
,, Թակայութ միացաւ ը բանին այ, յեսին անմոռնթը
,, քակտեալ յածպային եղեռնակայուէ բանին, ը ինքեան
,, եղեռնակացոյ և սոսկ մարդ յանգիտեցան ասել զբանն
,, ի մարմնի երևեալ, որը և ըստ արժանւոյն ի ձեռն
,, ծնդազգեաց հալց՝ ի բաց ընկեցան ի գասէ ուղղա-
,, փառաց, և մանտեցան ի մշանջենաւոր նզովս։ Բայց
,, զայս քաջ գիտեա՛, զի ոչ ներեսցէ ած, զոր գուշ
,, թշնամանեա, այլ արագ արագ ածցէ զպատուհաս
,, յանդուգն գործոց քոց. ոյն և միւսոյն հայհոյուէ
,, քո, և երդմանդ՝ զոր առ ոսն հարեր և ատելեր ոմ
,, անօրէն և ամպարիշտ ॥։

Ապաքէն որ միանգամ բաղդատեւ զայս ասի ը գրելոցն ի մէնջ բանիւ՝ ճառընդրին, թէպէտև զմի և զնոյն իմաստ գասնէ, բայց թէ խորագոյնս զննեսցէ՝ ի միս առնու, թէ էր ի այսպէս այլաձևէ ևեռագրատեսս. ը նախ ի ցուցանել զողջմտութեի հոգւոյց, զորոց չա-
րախօսէր գոլեաս իբրև զնեստորականաց. երկիր ի ցու-
ցանել զուղղափառութեի սը՛ց խարիեթանց, թէպէտև էին յայգէ եթէովպացւոց ը հասէչիք։ Բայց պարտ էր մեռափրատեսի և զայն իմաստասիրել, թէ ասմա-
թէոս կուզ պատրիարգ ազգքսնդրու էր սերմանող չարախօսութե ը գէմ հոգւոյց՝ ի լուր եթէովպացւոց՝ քրիստոնէից և հրէից. և ապա՛յն քրիստոնէայք ոչ ան-
այլն այնպիսի բանից. այլ ը հանրապէս ասէին, թէ * չիք մեր բաժին ը նեստորի, կամ ը այլոց՝ ոչք նովին ,, ախուէք վարակին ॥. և երանի թէ միայ ի նմին բա-
նի կային, և ոչ հովհաննին զնովի՝ ի բարեկամութե՛ հո-
ռոմոց. ոյն հետ գշեռե հովացուցին ազգքսնդրացիք թեևնածուք կուզին։ Եթ ոչ է գել գարմանոյ ը գէմ այգմ ցաւոյ՝ դնել ի մեռափրատեսի, թէ ատեբրիոս ոմն ուղղափառ պատրիարգ էր յայնժամ յատքսանդրիա։ Զայսոսիկ և նշանակեցաք ի սկզա ածաբանից, և ոչ ի սկզա ռանիաց, որք անգէտ են եկեղեցական պատ-
մութե՛ց ժամանակին։

(8) Մեռափր. առաջին գուստր ասէ, որ է երէցն, ժը ամաց. այլ մեզ հաձոյ է մեր ընթերցուած։
(9) Հ. դնէ ատա. ը՛ե և ֆ. բայց համաձայն հնագրեաց

բի գնան և Ա և մեասփր. գ՚ին։

(10) Մ՚եասփր. քանզի վիճագոյն յերկարեաց զվիշտն ի բերանոյ սիլն խարեցոյ մի գայտառան բանին յՅ՝, ասասիոր կարձէ։

(11) Սոփեր ընձեռցաւծով Ճառընարին մերոյ ուղղաբերելի և հոմանաձայնութենին, որ կոչ ի լատին Թարգմանութենէ սուբիսոն, * գովեմ զքեզ ով Թիֆր, զի երկայն՚՚ համառեցեր, և ոչ չիտնեցար ևիմ հատեր զանձս իմ, ՚՚ ոչ սովորութենի էր երբեմն Թիֆրաց ՚՚ որ պհակառակ միաս Թոռին ընծայեցուցանել։

(12) Ա՚յս պարագայ ծերութենէ սիլն խարեցոյ պահասի առ մեասփր. բայց զոյգ ընդ Ճ՝. գրէ և Յ՝. բան. յատեղն. * Սիլն խարեցոյս ծեր գոլով, և ոչ կարելով ՚՚ քայլել, անկեալ գներ. վիշ ի լատինէն գնաց գլխատուել՝ ՚՚ յայլոց բարձեալ լիներ. և ածեալ գլխատեցաւ ՚՚։

(13) Յայսմ է Թէ բանն է զպատկերէն քրիստոսի որ յեկեղեցոջ. որպս և Հ՝. պարզէ այսպես. * մայր իմ ցուցաներ յեկեղեցին յետ օր զպատկերն նոյ ՚՚։ Ի նոյն միտս և բարձրնոս յատելոյ պարզաբանութենի յայսմ երացս՝ այսպես. * ԵՒ՚ա որ պատկեր փրկչին՝ որ ի՚ս ան՚՚ վորութենէ նկարեալ կայր յեկեղեցոջ, անկարկեալ՚՚ մանկանն, զայսօրինակ խօսի մանուկն երբեմն մանուկ ՚՚։

(14) Ճ՝. յերեսց նախ վկայս 421. ապա և 340. ոմն և 10 գլխաւոր կանոյս, և անկին այլն երկու գտեալքըդ, և կին մի հանգերձ մանկամբն. որոց գուժասքն լինի 776. իսկ զայլ բազումն արանց և կանանց, ծերոյ և ազոյոյ առանց համարոյ նշանակեաց. մինչ զի ոչ պակաս, այլ աւելի քան զերեսս մի յայսո առնէ. վայ և ի սաոյգ օրինակաց առեալ երևի Թիֆն ժ՚ և ՃՀ՝ նշանակեալ ի ոռնացուցեի. (ինչ գՀՀէ գերբեցին՝ որ միօրինակ գրի ի Ճ՝. և ի Հ՝. ոճիւ. ուր մեասփր. ոչ գնէ Թիֆ որոշ, այլ բազում հաղարս առէ։

(15) Ճ՝. գրէ զերևութեաս այսպես. * Էր ասն յանկարծակի հուր բազում՚ երևեցաւ յոյժ յերկնից ի վերոյ եօթնասաւիղոց հայկին, և եղեգ զգուշոյ երկինս. և յահ և յերկիւղ և ի յանդիմանութենէ ամենայն այգ պատերազմին ընդ ան, աւուրս քառասուն յերկարեաց յերկնաւորեալ մինչև ի ՄՀ գիշերի, երբեմն գշնոյ ջերմ եղեալ (կի՚ հեղեալ) ի վերն երկրի. զոր տեսեալ ամենայն օրհնութենի ոչ, փառաւորեալ զհայր և զորդի և զսրբ հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանս։ Ամէն ՚՚։ և այնպես աւարած զպատմութենին։ Իսկ մեասփր.

տափր. առ սուր. ասէ. * Երևեցաւ հուր զաւուրս
ինչ զա՞մ գիշերն լցեալ զօգս, որ ահացուցանէր ըզ-
դունաան և զզօրս նր՞. և յայտ առնէր զբարկութի՞ն
ա՞յ՝ որ գալոց էր 'ի մօտոյ 'ի վերայ ամպարշտաց. և
ապա նաև հուր 'ի վերուստ տեղաց յերկիր, որ էր
հարուած կատարեալ. սակայն և ոչ այնպէս խրատե-
ցաւ ամպարշտութի՞ն ||. և՝ն։ Ոպ՞ և Հ. * Եւ յայնմ
օրէ ի՞ գիշեր մեծ և ահեղ նշանս երևեցաւ յերկինս
մերձ 'ի բազմաստեղն. և ընդ առաւօտն հուրն իբրև
զփոշի հոսէր 'ի վերայ երկրին. և յոյժ զարհուրեցոյց
զհրէայսն ||։ Զմնացեալ գործս ընդարձակ գրէ մե-
տափր. և Հ. համառօտիւ. կայ և առ ասողկայ պատ-
մութի՞ ինչ նման նմին։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ՞յն Արտեմեայ նշանագործ վկային։

Հ. հոկտ. 19։ Յ. Լ. հոկտ. 20։ Ճառընտ. Ա. ոլգ՞ = ոլշ՞։ Մետափր. առ սուրիոսի. հատ. ե՞. երես. 969 = 983։ Բարոնիոս յամի տ՞ն. 362։ (1)



ԿԱՏԱՐԵԱԼՆ ԱՐՈՒ-թ՞ և առաքինութ՞ հոգւոյ և մարմնոյ քաջն արտեմիս կամ արտեմիոս (որ թարգմանի ամբողջ կամ ողջանդամ), էր 'ի զուարթածաղիկ հասակէ զինուորեալ 'ի զօրս մեծին կոստանդիանոսի. ը՞ որում առաջիկայ գտաւ և 'ի պատերազմին ը՞դէմ մաքսենտիոսի, ը՞ նմին

և

և ականատես լուսանիշ խաչին երևութա-
ցելոյ յօդս։ Եւ յետ այնորիկ յա՜մի յառա-
ջադէմ գտեալ 'ի քրիստոնէական բարեպաշ-
տութե՛ և յարքունի ծառայութե՛ դրան ինք-
նակալին՝ ընկալաւ 'ի նմանէ զպատիւ՛ պատր-
կութե՛. և էր սիրելի յաչս ն՜ր և ա՜մ աւա-
դանւոյն վ՜ն անարատ վարուցն և մեծամեծ
հանդիսից քաջուե՛. և եռայր հոգւով 'ի քա-
կել զպաշտամունս հեթանոսաց, և 'ի հաս-
տատել զկրօնս ա՜ծպաշտութե՛։

Եւ եղև յաւուրս կոստանդեայ որդւոյ կոս-
տանդիանոսի՝ կարգեցաւ զկնի բասոսի ե-
պարքոսի՝ եպարքոս թ՜գրել՛ քղ՜քին, ՝ր՜ քաղա-
քապետ հռովմայ կ՜մ կոստանդնուպօլսոյ. և
ապա 'ի ծերուե՛ օգոստական դուքս աղեք-
սանդրիոյ, այն է իշխան հրամանատար ար-
քունի զօրաց յա՜մ երկիրն եգիպտացւոց։
Ուր և եկաց արին արտեմիս ա՜մ գովելի կար-
գօք մինչև ցթ՜գրուի՝ յուլիանոսի ուրացողի՝
եղբօրորդւոյ կոստանդիանոսի։

Արդ 'ի խաղալ յուլիանոսի 'ի վ՜ր պարսից՝
յորժամ եհաս յանտիոք, յղեաց պատու՛էր
և առ արտեմիս դուքս՝ գալ հասանել առ
ինքն 'ի քաղաքն անտիոքացւոց։ Եւ քանզի
ինքն իսկ արտեմիս խորհէր գալ առ նա, զի
խրատեսցէ զնա յետս կալ 'ի նեղելոյ զհա-
ւատացեալս ք՜ն՝ի, անյապաղ փութով անկաւ
'ի Ճանապարհ. և եղև նմա ժամանել անդր
յաւուրսն յայնոսիկ՝ յորս ուրացօղ կայսրն
տանջէր վ՜ն 'ի ք՜ն հաւատոց զպատու՛ական
քահանայսն ա՜յ զեւգինէոս և զմակարիոս՝

 տմար-

տմարդի պատժովք. ոպ ասացաւ յառանձին
վարս նց (՚ի վերջն ապայից)։

Ընդ այս չկարաց ժոյժ ունել երանելի և
բարեպաշտ դուքսն, այլ համարձակութ՚ը
յառաջ մատուցեալ՝ ասէ ցբռնաւորն. դի-
տացի՛ր ո՛վ թագաւոր զայն՝ որ պարդևեաց
քեզ զթ՚գրութ՚իդ, և մի՛ ա՛ծընդդէմ ոգո-
րիր՝ չարչարելով զհաւատարիմ պաշտօնեայս
նր։ Ես իսկ այսպէս համարիմ, եթէ որ՚պս
զյովբ խնդրեաց սատանայ, և ետ զնա տ՚ր
՚ի ձեռս նր՚ ՚ի յանդիման կացուցանել զհամ-
բերութ՚ի առաքինւոյն, այսպէս և զքեզ ը՚
հակառակն խնդրեաց ՚ի վ՚ր մեր սատանայ,
զի զնմանօղսն քո զանմիտսն մշակս իւր կա-
ցուսցէ։

Իբրև լու՛աւ զայս յուլիանոս՚ի մեծէ դքսէն,
լի եղև անտանելի սրտմտութ՚ը և բարկու-
թ՚ը. և զի մի՛ առ չարութ՚ե իւրոյ երևեսցի
պատուհասել զյանդիմանիչն իւր զայնպիսի
այր երևելի, յարոյց ՚ի վ՚ր նր՚ չարախօսս ՚ի
հեթանոսաց աղեքսանդրացւոց, ոպ թէ գը-
տեալ իցէ զնա յանցաւոր և վնասակար յիրս
արքունի. և այնպիսի պատճառանօք սկսաւ
թափել ՚ի նա զա՛մ ցասումն, զի կա՛մ ուրաս-
ցի զք՚ս, և կմ չարաչար կորիցէ (2)։ Բայց
տեսեալ զանյեղ լի միտս նորա ՚ի ք՚ս, և զա-
ներկիւղ պ՚խնատու՛ութ՚իս ՚ի յանդիմանութ՚ի
իւր, հրամայեաց ՚ի բաց մերկացուցանել
զնա յիշխանական պատու՛ոյն, և հարկանել
զնա դալար արջառաջլօք. մինչև փոխեցան
ութ այր ՚ի հարկանելն։

Եւ իբրև դադարեցին, ասէ ցնա բռնաւորն. ո՛վ արտեմիս 'ի ձեռն յանդգնութեան քո ստիպեցեր զիս՝ անարգել զքեզ և զազգն քո. արդ հնազանդեա՛ ինձ և զոհեա՛ ապողոնի. և արարից զքեզ դարձեալ եպարքոս ապարանիցն արքունի. ապա եթէ ոչ հաւանիս, սրով հատից զգլուխ քո վաղվաղակի. և տեսից, եթէ զի՞նչ օգնեսցէ քեզ խաչելեալն, զոր դու ասես՝ թէ ա՜ծ է:

Եւ արտեմիս ծիծաղեալ ը՜ բանս ուրացողին, և այպն արարեալ զնա՝ ասէ. պի՛ղծ և տմարդի՛ չար՝ զմտա՛ւ ած, թէ ո՞վ պահպանեաց զքեզ 'ի կոչեցեալ քղ՜քիս անտիոք՝ յաւուրս հակառակութ՜ քո և քոյոցդ ը՜դէմ կոստանդեայ, և կոտորածի եղբարց քոց և ազգականաց լաւագունից ք՜ զքեզ. ո՞չ ապաքէն քս ա՜ծ փրկիչ այնոցիկ, որ յուսան 'ի նա, ո՜պ 'ի ժամուն ապաւինեցար յեկեղեցին ը՜ հովանեաւ քհ՜նայիցն ա՜յ. և որ յայնժամ երկայնամիտ եղև առ քեզ, նոյնպէս և այժմ մ՜նայ դարձի քում երկայնամիտ եղեալ 'ի վ՜ր չարեաց քոց. ծանի՛ր զբարերարն քո, հայեա՛ց 'ի սքանչելիս ն՜ր՝ որ յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ. նայեա՛ և տե՛ս զբարձրութ՜ երկնից, որ ո՛չ ժամանակօք և ո՛չ ամօք հրաշագործեցան, այլ միայն յական թօթափելն՝ ո՜պ խորան ձգեցան 'ի հրամանէ արարչին. տարտարոսք սարսեն յակնարկելոյ ն՜ր. դողայ և ծով ահիւ՛ մեծաւ, որ 'ի վ՜ր իւր բառնայ զմրրիկսն, որ շարժի 'ի խորոց անդնդոց, և ը՜ վճռոյ գրոյն ո՛չ ադահէ ծածկել

զցա-

զցամաքս . և դու քոյին յիմարութիդ՝ որ
զանձն առ խնաստունս ունիս , անարգես
զայծ զարարօղն ամենեցուն , և տանջես ըզ-
սքես նր . յիմար և կոյր՝ ծանիր զհրաշագոր-
ծօղն ամենեցուն . և նմա միայնոյ երկրպա-
գեա , և պաշտեա ըստ գրոյն :

Օ այս ամ իբրև լուաւ յուլիանոս , հրա-
մայեաց երկաթի եղեգամբք հրացելովք
խոցոտել զթիկունսն մինչև յերիկամունսն,
և սրեալ բևեռս վարել ընդ գարշապարս նր ,
և երկաթի եղնգամբք քերել զկողս նորա և
զարտևանունս : Յայնժամ աղաղակեաց բազ-
մուն ամբոխին անտիոքացւոց , և ասէ . ոմն
թագաւոր՝ ոչ զբազմուն բարբարոսաց հնա-
զանդեցուցեր՝ ոչ խորհէիր , և ոչ այլ ինչ
բարի քաղաքիս այսմիկ արարեր՝ ոչ խոստա-
նայիր . և այժմ զաղնուականն և զնբ այրդ
զայդ տանջես անօրէնութիբ :

Իբրև լուաւ զայս անմարդին այն , հրամայ-
եաց ի բաց առնուլ զտանջանսն ի նմանէ .
և կոչեցեալ առ ինքն զնբն՝ ասէ ցնա . ահա
եասիկ բնակիչք քաղաքիս հեծեծն մ՚ը քո սրտ-
ցաւութիբ , և ես այսուհետև զթացայց ի
քեզ . ոտդ զոհեա դիայ և աւկղեպիոսի . և
նբ բժշկեն զքեզ ի ցաւոցդ : Այն արտեմիս
ասէ . ի հնուր գեհենին երթիցես ընդ քեզ ոմ
ուրացօղ և տաճարակապուտ , որ լուծիցէ քեզ
և թողցէ զարարօղն երկնի և երկրի , և եր-
կիրպագանիցէ ամենագալոյ ճշմոյ քոյ : Յամ
ոմ ամբարիշտ , զի ոչ հաւանեցայց բառնուել
քոյ , և ոչ կռոց քոց խլեց և համերց զոհե-

ցից. քանզի զա՞ծն երկնից պաշտեմ, և նմա միայն հաւատամ. և նա է բժիշկ կենաց իմոց և փրկութի՞ ։

Իսկ բռնաւորն հրամայեաց արկանել զնա 'ի բանտ խաւարին մինչև յաւուրս հնգետասան, և ո՛չ հաց մատուցանել նմա և ո՛չ ջուր ։ Այլ 'ի բանտի անդ առաքեցաւ նմա կերակուր 'ի տ՞նէ 'ի ձեռն հրեշտակի, որ և ողջացոյց զվէրս անձին նորա. և 'ի վերջին աւուր բանտարկութե՞ երևեալ նմա 'ի նմանութի՞ փրկչին՝ ասէ. քաջալերեա՛ և զօրացի՛ր 'ի վ՞ր սատանայի, զի ես ը՞ քեզ եմ. և վ՞ս զի խոստովանեցար զիս առաջի թ՞գրաց և իշխանաց, ես պսակեցից զքեզ առաջի հրեշտակաց և հրեշտակապետաց. քաջալերեա՛, զի այսօր ը՞ իս իցես 'ի դրախտին ։

Իսկ թագաւորն նստեալ 'ի վ՞ր բեմի զկնի հնգետասան աւուր՝ հրամայեաց ածել առաջի իւր զս՞բ վկայն, և սկսաւ ողոքանօք խրատել զնա. և ասէ. մինչև ցե՞րբ յիմարեցուցանես զայդքան իմաստուի՞դ, և հեղուս անարգանս զմեծուբ՞ քո, և ոչ զոհես տ՞ծոցն ։ Իսկ ս՞բն արտեմիս կշտամբեաց զլրբենի քաղցրութի՞ ուրացողին՝ որ լին էր տ՞մ դառնութ՞բ, և ասէ ցնա. ը՞էր կատաղիս գարշելի՛ և ան՞ս՞բ. զի թողեալ զմարտնչել ընդ հեթանոսս, և զմարմնաւոր պատերազմն առաջիկայ, պարապեցեր 'ի ծառայս տ՞յ՝ մարտ դնելով ընդ հոգիս ։ Բայց ա՛ղէ դու տո՛ւր վ՞ճիռ 'ի վ՞ր իմ, ո՛րպէս և կամքդ յօժարեսցին. ես՝ այնմ, որ յերկինս է, և օծելոյ ն՞ր յի՞ քի՞, և համա-

գոյակ-

գոյակցի նր՝ ն՝ք հոգւոյն երկիրպագանեմ։
Իբրև լուաւ զայս յուլիանոս, հրամայեաց
կոչել քարակոփս, և ասէ ցն՝ն. պատրաստե-
ցէք վէմ մի ը՝ն կամաց իմոց, և խզեցէք յեր-
կուս, և արկէք զարտեմիս 'ի մէջ նորա։ Եւ
ն՝ք փութապէս կատարեցին զհրամայեալն.
և ծածկեցին վէմքն զերանելին, մինչև չե-
րևիլ նմա արտաքոյ պատառուածոյ վիմին.
այլ կարծել ամենեցուն՝ թէ խորտակեցան
ա՝մ անդամք ն՝ր, և փորոտիք ն՝ր 'ի վայր վայ-
թեցան։ Իսկ նա աղօթէր և ասէր. 'ի վիմի
բարձր արարեր զիս. և ահա բարձրացաւ
գլուխ իմ 'ի վ՝ր թշնամեաց իմոց. և հաս-
տատեցեր 'ի վ՝ր վիմի զոտս իմ, և ուղղեցեր
զշաւիղս իմ. և արկեր 'ի բերան իմ օրհնու-
թի՝ նոր. և արդ ընկա՛լ զոգի իմ միածին որ-
դի ա՝յ։
Եւ բռնաւորն համարեալ՝ թէ վաղ իսկ մե-
ռաւ, հրամայեաց քարակոփացն բանալ ըզ-
վէմն. և իբրև հանին զն՝բն, յոտն եկաց և
սաղմոսէր ասելով. ա՝ր է իմ օգնական, և
ես ո՛չ երկեայց, զի՞նչ արասցէ ինձ մարդ։
Եւ քանզի 'ի ծանրութի՝ վիմին արտաքս ոս-
տուցեալ էին աչք ն՝բյն, ասէ ցնա յուլիանոս.
զի՞նչ օգտեցար ա՛յ թշուառական. ահաւա-
սիկ զրկեցար յաչաց քոց, և բովանդակ յան-
պիտանութի՝ փոխեցար. արդ հաւանեա՛ ինձ,
և զոհեա՛ ածոցն. և լիցիս բարեկամ ն՝ց, և
ազատեսցիս 'ի տանջանացդ։
Պ՝խնի ետ ն՝բն արտեմիս, և ասէ. անամօթ
և վայրենի՝ զմտա՛ւ ած զոր ի՛նչ և կամիս տան-

ջանարանս, և տանջեա՛. զի ես պսակեցայց, և դու անկանիցիս 'ի հուր գեհենին։ Յայն-ժամ հրամայեաց բռնաւորն տանել գլխա-տել զնա. և ն̄բն յերթալ իւրում 'ի տեղի կատարման՝ աղօթէր և ասէր. Ա՛ծ յա̄յ, լո՛յս 'ի լուսոյ, միայն 'ի միայնոյ, թագաւոր թա-գաւորաց, որ ես 'ի յերկինս ը̄ աջմէ ծնողին քում՝ ա̄յ և հօր, և յերկրի բնակեցար վ̄ս փրկութե՛ ամենեցուն. որ ես պսակ այնոցիկ՝ որ բարեպաշտութ̄ նահատակին վ̄ս քո. լո՛ւր ինձ տնանկիս, և ընկա՛լ խաղաղութ̄ զոգի իմ. և հանգո՛ ընդ ն̄բս քո՝ որք բարիոք հա-ճոյացան առաջի փառաց քոց։ Եւ եղև ձայն առ նա, և ասէ. լսելի եղեն աղօթք քո, և տուն՛ան քեզ շնորհք բժշկութ̄. փութա՛ այսու-հետև յասպարէզդ. և ընկա՛լ զբրաբիոնն փառաց, որ պատրաստեալ է այնոցիկ՝ որ սի-րեցին զյայտնութ̄ փրկչին։ Եւ անդէն հա-տաւ սրով գլուխ երանելւոյն 'ի հոկտեմբե-րի ի̄, յաւուր ուրբաթու, յամի ա̄ն 362, յան-տիոք քաղաքի, 'ի տեղւոջն՝ որ կոչի դափնի։ Իսկ զմարմին երանելւոյ վկային խնդրեալ էառ կին ոմն բարեպաշտ և երկիւղած յա̄յ՝ առիստէ անուն, որ ասի լինել սարկաւագու-հի եկեղեցւոյն անտիոքացւոց (3). և արա-րեալ տապան կապարեայ, և զմռեալ զն̄բն հանդերձ իւղովք անուշիւք՝ առաքեաց 'ի հոյակապ քաղաքն բիւզանդիա, հանգուցա-նել զնա 'ի նշանաւոր տեղւոջ. քանզի խոր-հէր երթալ շինել անդ վկայարան 'ի պատիւ՛ փառաց ն̄բյ վկային. և զի չեղև ձեռնհաս,

հան-

Հանդուցին զնա պատուով յեկեղեցին՝ որպէս յօրհնանս կարապետի. ուր և փայլեաց բազմապատիկ աքսանչելեօք. վասն և ի՝ որպէս արտեսիս՝ ըստ խոստման երկնաւոր ձայնին՝ մի՛ ի նշանագործ վկայից. և վա՛ ձմլելոյ նը ըստ վճռաբ՝ բարեխօս ունելին զնա բազումք վա՛ համայնաւոց աղեաց և փորոտեաց։ (4)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ա ԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Ա՛ռաքինութիւն մեր՝ որում առաւել զհետ գնացաք ի վկայաբանութեաս, երևի քաղեալ յընտրական վկայաբանութենէ ուստեք հատառաւմ ոճով. ուր ըստ հակառակն մեծ տարբերութիւն ի նմին ազգերիկ առեալ՝ երևի ձորացուցեալ բազմօք ոչ միայն ըստ սահմանութեաց, այլև ըստ պատգամն տեղեկութեաց ի կայսերական և յեկեղեցական պատմութեաց. զորովք մեք զանց արարաք. զի չամ են և գրեալքս առ խնդալ զվնճակ ժամանակին և զանցս հնամաակութեաց։ Որ բարւոք նշանակէ մեծարարութիւն։ * Ա՛յլ զգաւառ նը և զազգ սը զը ի գիր արձանացոյց. բայց զայն ևս եթ, թէ էր ի մեծ և ի պայծառ տեղւոջէ ծնեալ այրն երանելի, և յաղնուական ծնողաց փայլելոց առաքինութեամբ և մեծութեամբ։ Գրեալ կայ և այն, թէ ըստ նչխարաց առաքելոցն քո՝ անգրելի և զուարկ և սիմրեցայ, սա ինքն է՝ որ հոգացաւ զխնդրելիսն հրամանաւ կուսանաց գեայ ։ ոգ և մեք յիշատակեցաք ի վարս նոյն առաքելոց։

(2) Ջոր օրինակ սովորութեան էր հալածելոյ ի վերնապետման ոբոյն գնել պատճառանս իմն յանցաւորութեան եգեմ արքունի հրամանաց, ևս առաւել ուրացօղն յուզեանոս պէսպէս ինասս արկանէր զվկայիւք, մանաւանդ զակնաւոր արամբ. և ըստ այսմ հեթանոսաբար քարախօսեն զսրբն հեթանոս մատնագիրն ամմիանոս, ի նը գիրս։ գրելով այսպէս։ * Յայնժամ և արտեմիոս՝ երբեմն դուքս եգիպտոսի (զորոյ և զեպարքոսն էր նեղչիչ եր ի ժէ գիրս), ի սահպիլելոյ աղբեսանդ

„ դրացւոց՝ վ֊ծանր ծանր յանցանաց զգլխատարտուք
„ ընկալաւ զպատուհաս ։ Զինչ այլ յուսալի էր Ի
կաթողիկոսէ պատմագրէ Ի վկայուն մարտիրոսուք կա֊
տարեալ քրիստոնէի կոչմանողն զբադինս կուռց. գու֊
ցէ և ըստ կարծելոյ մետափրատեան՝ նաև պատճառս յո֊
դեաց յուլիանոս, ոմն Թէ ոչն արտեմիս համախտհլեալ
ևցէ Ի մահ եղբօր նորա պատերազմի սպանելոյ հրամանաւ
կոստանդեայ. բայց ոչ կարէր ասել զայդ, ուր ոչն
արտեմիս քաջ գիտէր՝ Թէ ոմք եղեն սպանօղք այլոց, և
ոմք ապրեցուցիչք յուլիանոսի. ոմն և յուշ առնէր նմա
յայտնդիման ։ Ապա յանցանք ոչն էր ծածկաշուքն
նր, որ է սկիզբն և աւարտ ամ արդարուքե ։ Յայս
հայի ասելն Թէոդորետոսի. գիրք. Գ. գլ. 17. զյուլիա֊
նոսէ, և զՀեթանոսաց՝ ոմք գովուքե խոսեցան զնմա֊
նէ. * Սոյն սա բռնաւոր զարտեմիոս գուքս զօրաց է֊
„ ղեկոց յեգիպտոս, վ֊ խորտակելոյ նր զբազում դրօ֊
„ շեալ՝ յորժամ էառ զայն վերակացուն առ կոստան֊
„ գեաս, ոչ միայն մերկացոյց Ի պատուհոյ և յընչից,
„ այլև գլխատեաց ։ Ա֊յս են առենահեղձն այնորիկ
„ և սանձոյն բարկուքե, ոմ առնճանն զնա այսպի֊
„ սեօք ամպարիշտք, պանծալի գործք ||, ՚ի արհնհե֊
ղուքեք ։

(3) Ճ. լոկ կին բարեպաշտ ասէ. իսկ մետափր. առ֊
հասս սարկաւագուհի անուճանէ. որ Ի Հ. եպեալ է
առհասս սարկաւագ ։

(4) Հ. գրէ Ի մանաւորի զբժշկուքեն փոշմանկաց առ
տապանի սքին արտեմեայ. զոր բազմօք շարձակէ ժա֊
մագրօք յոնոց անալի հանգամանօք ։ Լաւ և ս գրէն
ճշմարտուքե Ի բանիցեան յայտնաւորս նց. * սար֊
գևէ զբժշկուքեն՝ որոց հաւատով մատչին առ նա ||։
Անհասս գրատեաւ՝ ընդ նշխարս սքց ամփոփեալս Ի
հռոմ Ի տաճար սքյն սեղբեատրոսի Ի սերգիոս պա֊
պէն յամէ ան իբր 746. յորմէ զնշխարս սքյն արտեմեայ
վկայի. որ կարէ լինել և յոակերաց այլոց հանդուն վկայի
հռոմայեցւոց ։ Ի կն. և Ի լտ. անուն վկայիս կոչի ար֊
տեմիոս. իսկ արտեմիան առ յոյնս է անուն իգական,
այն իսկ է անահիտ. քայց Ի մեզ անխտիր արտեմիս
գրի՝ փոկ արտեմիոսի, և արտեմիդեայ կմ անահտայ ։
Որպէս և դեմետրէ իգական, և դեմետրիոս արականն՝
անխտիր դեմետր կոչի Ի մեզ ։

ՎԿԱՅ.

Վ. ԿԱ. ՅԱՐԱ. ՆՈՒԹԻՒՆ

Սբյն Դեմետրեայ նշանագործ վկային։

Հ. հոկտ. 25։ Յ. հոկ. 26։ Լ. հոկ. 8։ Ճա-
ռընտ. Ա. ՏԺԳ = ՌՂՀ։ Մ. ետաֆր. առ սուր.
հատ. Ե. երես. 701 = 706։ (1)

Մ ԵԾ ԵՒ ՓԱՌԱՒՈ-
րեալ սքանչելագործ վկայն
քոի դեմետրիոս (որոյ անունն
թարգմանի մայր երկրի, կամ
արմտիք,) էր 'ի ժամանակս թգրուն դիոկ-
ղետիանոսի և մաքսիմիանոսի, ծննդեամբ
'ի թեսաղոնիկեայ՝ յաղնիւ և 'ի բարեպաշտ
ծնողաց, համարեալ ըստ յունաց՝ առ որս հան-
դիսացեալ է յոյժ յոյժ, գոլ 'ի սերնդոց նախնի
մակեդոնացւոց փիլիպպեանց և աղեքսանդ-
րեանց, այր քաջ և առաքինի՝ զուարթ դի-
մօք և բարուք. որ 'ի տղայ տիոց ցարբունս
հասակի բազմօք արտափայլէր զբարեմաս-
նութիւն հոգւոյ և մարմնոյ՝ գերազանցեալ
զբազում առաքինեօք, կիրթ յածպաշտուն
և յաջողակ յամի. քանզի և 'ի կարգի զօրա-
կանութեան յառաջադէմ գտեալ՝ ընկալաւ և
զաւագութիւն երևելի, կարգեալ առ ժամա-
նակ մի և անթիպատոս յելլադա, ոյ փոխա-
նակ

նակ բդեշխի 'ի յունաստան ։

Եւ եղև 'ի յառնել հալածանաց ԸԴԷՄ քրիս-
տոնէից՝ յորժամ եկն մաքսիմիանոս հերակ-
լէս կայսր 'ի քղքն Թեսաղոնիկեցւոց, քաջն
դեմետրիոս ոչ 'ի քաղաքէն փախեաւ, և ոչ
զանձն ծածկեաց. այլ առաւել սրտապնդէր
զհաւատացեալս, և քարոզ լինէր ճշմարտու-
թեան առ հակառակորդս ։ Զի ոպ Թէ ոչինչ
զանգիտէր յերկիւղէ մահու՝ որ տնկեալ է
'ի բնութիս, անտես արարեալ զահագին սպառ-
նալիս Թագաւորին՝ յայտնապէս քարոզէր
զանձն քրիստոնեայ գոլ. և զփրկչական ա-
նունն՝ զոր յանձին իւրում բարձեալ ունէր,
բազում համարձակութեամբ 'ի ժամու և 'ի տա-
րաժամու՝ ամենեցուն մերձեցելոցն 'ի նա
աւանդէր. մինչև ձգել և զբազումս 'ի խա-
ւարէ հեթանոսութեան 'ի լոյս ա̅ծգիտութեան ։
Եւ յոյժ խելամուտ գոլով երանելիս այս
ա̅ծեղէն գրոց, զծածկեալ կենդանարար խոր-
հուրդսն՝ որ 'ի նմ՝ առաջի ամենեցուն Թարգ-
մանէր ։ Ստէպ վ̅դպէր զայսոսիկ կարևոր
բանս, Թէ զմարդն առաջին անհնազանդու-
թիւն մոլորեցոյց 'ի ճշմարտութեան. ուստի և
մահկանացու եղաք, և կռապաշտութիւն եմուտ
յՇս. յաղագս այսորիկ ամենիմաստ բանն
ա̅ծ յա̅յ հօրէ անճառաբար ծնեալն՝ եկն յՇս
և մարմին զգեցաւ, և զինքն լոյս Ֆի ծա-
գեաց. կանգնեաց զանկեալն, և յարոյց ըզ-
գլորեալն. եգիտ զկորուսեալն, և սրբեաց
յա̅մ աղտոյ մեղաց ։ Եւ ոչ միայն զայս բա-
րեգործեաց, այլ և ուսոյց ա̅մ ընդունողաց

զբան

զբան նր՝ զարդարուի սրբուե, զհեզուի և
զհանդարտուի, զսէր և զխաղաղուի. արհա-
մարհել զառժամանակեայս, և յուսով հան-
դերձելոցն ը՛ունել զառհաւատչեայ մշտնջե-
նաւոր և անժամանակեայ կենաց։ Ա՛յսպի-
սի բանիւք միսիթարէր երանելին զբազմու-
թի՛ն, որք ընթանային 'ի լուր համբաւոյ նր՝.
և զօրութ՛ն ա՛ն առնէր և նշանս և բժշկու-
թի՛ս. վ՛ոյ և դիւրաւ զձեռամբ ածին զնա
խնդրակքն արքունի, և առեալ տանէին յա-
տեան ա՛ծամարտին մաքսիմիանոսի իբրև մեծ
ինչ որս ըմբռնեալ։

Իսկ թագաւորին դէպ եղև յայնմ ժամու
ելանել նստիլ 'ի տեղի ասպարիսի քաղաքին,
ուր հանդերձեալ էին ըմբիշք մենամարտիլ
'ի տես ա՛մ ռամկին. և տեղին իսկ տախտա-
կամած կազմեալ էր և քարակոփ շինեալ առ
'ի յընդունել զայնոսիկ՝ որք անդ եկեալ նըս-
տէին։ Ա՛րդ յայն ասպարէս ածին դահիճքն՝
առաջի կացուցին արքայի զդեմետրիոս. և
թագաւորն քանզի լո՛ւեալ էր զհամբաւ նր՝,
կամեցեալ որսալ զայրն երևելի, և նովաւ
զայլսն, անդէն սկսաւ հարցանել զնա, և
մեծամեծ խոստմամբք հրապուրել 'ի մոլո-
րութի՛ իւր. և մեծամեծս սպառնալ՝ եթէ
ոչ հաւանեսցի պաշտել զդիս։

Յայնժամ առաքինի վկայն ը՛ս միոյ միոյ 'ի
հարցո՛ւածոց արար պ՛խնի աներկիւղ. և 'ի
վ՛ր էած. ես յայնժամ դժո՛ւարիմ ասէ ընդ
չարչարանս, յորժամ դահիճք քո խնայելով
տանջիցեն, իբրև հեղդացեալք յայն ինչ՝

զոր

զոր ես ուխտիւք խնդրեմ. իսկ պատիւ քո
և մեծութիւն զոր ասես տալ որոց քեզն հնա-
զանդին, զիա՞րդ ամոքեսցեն զիս. որ և զնա-
խանձելի կարծեցեալ ծիրանիս և զթագ ար-
քայութեդ ա՞մ գանձիւք հանդերձ՝ ոչինչ
ը՞հատ 'ի փոշւոյ համարիմ և քամահեմ. այլ
զմահն՝ որ վ՞ս քս՞ի, մեծա՞պս տենչմամբ ող-
ջունեմ՝ իբրև պատճառք ճշմարիտ կենաց
յանանց արքայութ՞ երկնաւոր թագաւորին:
Օ արմացեալ մաքսիմիանոսի ը՞ համարձա-
կութ՞ի և ը՞ իմաստութ՞ վկային՝ ո՛չ կամեցաւ
'ի պայքար մտանել ընդ նմա առաջի ամբո-
խին, զի մի զամօթ կրեսցէ. և դարձեալ
զի մի խափան ինչ լինիցի առաջիկայ հանդի-
սի մենամարտութ՞ է. այլ որ՞պ թէ պարապ
տալով նմա խորհելոյ 'ի զգաստանալ՝ հրա-
մայեաց տանել զնա 'ի կամար հնոցի բաղա-
նեացն, որ մերձ էր 'ի տեղի ասպարիսին. և
դնել իբրև 'ի դիպահոջ բանտի, մինչև ժո-
ղովն արձակեսցի:
Մ՝ինչդեռ անդ էր երանելին՝ երևեցաւ առ
ոտամբք ն՞ր կարիճ մի. որոյ ձգեալ զտուտն՝
կամէր հարկանել զնա. այլ ը՞ խաչակնքել
ս՞բյն՝ առժամայն սատակեցաւ, 'ի նշանակ
յաղթութ՞ նահատակին ը՞դէմ աներևոյթ
գաղանին: Եւ անդէն վաղվաղակի երևե-
ցաւ հրեշտակ ա՞յ՝ պսակ 'ի ձեռին. զոր եդեալ
'ի գլուխ դեմետրիոսի՝ ասէր, խաղաղութ՞ի
ը՞ քեզ նահատակդ քս՞ի. քաջալերեա՛ց և զօ-
րացի՛ր, զի փութով ընկալցիս զպսակն վկա-
յական. և նա զուարթութ՞ խօսէր ը՞ ա՞յ՝
ծա-

Ծաղաւեալ ըմպել զբաժակն մարտիրոսուե։
Յայմմ վայրի քարոզն աղաղակեր, եթէ ով
կամիցի մենամարտիլ ընդ լեռոսի հակային առա-
ջի Թագաւորին, բազում պարգեւս ընկալցի
ի նմանէ։ Կանգնի եր լեռոն այն (որ և լիւ-
սոս կոչ ղևիոս) ըմբիշ անուանի ի մէջ հե-
թանոսաց յազգէ վանդալաց՝ յաղթանդամ
և սկայաղօր։ որ յայժ զարհուրեալ դողացու-
ցանէր զամենեսեան, և անագորոյն բարուք
սպանանէր զնոմա ախոյեան իւր։ Վայ սիրեցեալ
եր յաչս մաքսիմիանոսի իբրև դլուխ գօտե-
մարտից կամ անմման պատերազմողաց սասպա-
րիզի։ Կայր յարոյց ընդդէմ նմին իբրև զդա-
ւիթ ընդդէմ գողղաթեայ մանուկ մի ի քրիս-
տոնէից՝ նեստոր կոչնեստորիոս անուն, հա-
մարեալ ընդ աշակերտս քաջին դեմետրեայ։
քանզի սա վստահացեալ աւրէ յաղթել առն
հեթանոսի՝ եկն փութապէս առ երանելին
դեմետրիոս, և ինդրեաց զաղօթս նմին։ և նա
օրհնեալ զնա՝ մարգարէացաւ, թէ անուանաւ
ես մերոյ յի քէ յաղթեսցես լեռոսի, և վճռ նո
մարտիւրոսանաս։ (2)

Կարդ յարուցեալ նեստորիոսի պատանւոյն՝ ի
մէջ առնելին՝ ի բաց եդ զխնդերձս իւր, և
զսպեկ զինքն միով պատուհանաւ՝ վազեաց
ի տափարակ անդր հանդիսին յանդիման
կայսեր։ Ձայն ետ առ լեռս՝ մենամարտիլ ընդ
նմա։ Իսկ Թագաւորն տեսեալ զաղայութի
հասակի նորա՝ զարմացաւ։ կոչեաց առ ինքն
զնեստորիոս, թէ զարդիր լինիցէ նմա՝ այսպէս
սահուլ։ գիտեմ ոմդեակ, թէ վճռ առաւել
ինչս

ինչս ստանալոյ՝ յերեսաց աղքատութեան քո՝ այդպէս ցանկաս վրիպիլ 'ի կենացս 'ի ձեռն զօրաւոր և յաղթանդամ առնն լէոսի. արդ ես գթամ 'ի վայելչութիւն մանկութեան քո, որ զարդարեալ ես ամ գեղեցկութ. տամ քեզ ինչս բազումս. միայն 'ի բաց կաց 'ի ցանկութեէդ առ 'ի մարտնչելոյ ը սկայազօր և յաղթօղ այրն. և երթ խնդա և ուրախ լեր ընդ գեղեցկութիւն քո:

Իսկ նեստորիոս ոչ ետ տեղի բանից թագաւորին, այլ վստահացեալ 'ի մարգարէութիւն դեմետրիոսի, և ոյժ առեալ 'ի զօրութէն քոյ, արար պիւնի այսպս. ես ով թագաւոր ոչ վս ընչից և կամ անցաւոր կենացս եկեալ եմ այսր. այլ զի ընտիր կացուցանեմ զիս ք զլէոս, և լաւագոյն կենացն հասանիցեմ: Իբրև լուաւ զայս թգրն և որ շուրջ զնովաւ մեծամեծք ամ, լի եղեն սրտմտութ՝ հպարտութիւն զասացեալսն 'ի նեստորիոսէ վարկանելով. և դրգռէին զլէոս մենամարտել ընդ նմա և կարեվէր խոցել, ոպ զի առժամայն մեռցի:

Յայնժամ 'ի դիմի հարկանէին միմեանց. և մանուկն նեստորիոս զօրացել հոգւով՝ գոչեաց և ասէ. ած դեմետրիոսի՝ տուր ինձ, որ փոքր եմ հասակաւ իբրև զդաւիթ, նշաւակել զլէոս ոպ զգողիաթ. և անդէն թափ տուեալ զդետնեաց զլէոս. որ և առժամայն սատակեցաւ (3): Ցայն տեսեալ թագաւորին՝ բարկացաւ յոյժ. մանաւանդ յորժամ ստուգեաց՝ թէ քրիստոնեայ ևս իցէ նեստորիոս.

րիոս. և փոխանակ խոստմանցն եղելոց առ
յաղթօղն՝ հրամայեաց գլխատել զմանուկն
երանելի 'ի ձեռն մինուտիանոսի դահճապե-
տի, որ հանդիսադիրն էր մենամարտկաց։
Բայց 'ի խոր խոցեցաւ թագաւորն, և տրտ-
մեցաւ յոյժ ը̄ եղեալսն. ք̄զի և երկոցունց
մենամարտից մահն ցաւ էր նմա. և յարու-
ցեալ 'ի տեղւոջէն տխուր դիմօք՝ կամեցաւ
գնալ յապարանս։ Յայնժամ չարախօսք ո-
մանք բանսարկու եղեն առ նա, իբրև այն
թէ դեմետրիոս եղև պատճառք այսր ա̄մի։
Իսկ նա զայրագնեալ իբրև զգազան ինչ
վայրենի՝ անդէն յատենի անդ հրամայեաց
երթալ գեղարդեամբ հարկանել զնա 'ի
տեղին արգելանաց. և այսպ̄ս կատարեցաւ
ն̄բն դեմետրիոս բարի խոստովանուբ̄ 'ի ք̄ս,
որ օր քսան և վեց էր հոկտեմբերի ամսոյ,
յամի տ̄ն իբր 300։

Պատմութ̄ն նշխարաց և սքանչելեաց սբ̄յն դեմետրի։

Յետ կատարման սբ̄յն դեմետրի՝ յորժամ
ընկեցիկ 'ի գետնի կայր մարմին նորա,
ոմանք երկիւղածք և վկայասէրք երթեալ
գիշերայն՝ բարձին զայն և պատեցին. և ար-
կեալ զնովաւ մոխիր՝ թաղեցին 'ի տան միում
մօտ 'ի տեղի կատարման ն̄ր 'ի թեսաղոնի-
կէ. նոյնպէս և զնշխարս նեստորիոսի թա-
ղեցին յայլում վայրի, մինչև այց արասցէ
տ̄ր և յայտնեսցէ զնշխարս սբ̄ցն։ Իսկ մի ոմն
'ի

'ի ծառայից սբ̄յն դեմետրեայ լուպոս անուն՝ առաջիկայ գտեալ մահու նր̄, ը̄ կալի ժողովեաց զպատուական արիւն նր̄ յուսանոց նորին սբ̄յ. Եառ և զմատանին՝ որ էր 'ի մատին սբ̄յն. և զայն ևս օծեալ արեամբ նր̄, առնէր նովաւ բազում նշանս բժշկութեաց. մինչև հնչեաց համբաւն սքանչելեաց ը̄ ա̄մ քաղաքն Թեսաղոնիկեցւոց, և եհաս յականջս մաքսիմիանոսի. վ̄ն̄յ ըմբռնեցաւ իսկ և իսկ սքանչելին լուպոս, և սպանաւ 'ի հրամանէ բռնաւորին:

Յետ այսորիկ յաւուրս քրիստոնէութեան՝ յորժամ տարածեցաւ նշանագործութիւն սբ̄յն դեմետրեայ 'ի մակեդոնիա և 'ի Թեսսաղիա, ղևոնդիոս ոմն այր պայծառափառ և ջերմ յոյժ 'ի հաւատս քն̄ի, որ էր եպարքոս լիւրիկեցւոց, 'ի դալ իւրում 'ի Թեսաղոնիկ՝ խօթացաւ առ 'ի մահ. և իբրև լքին զնա բըժիշկք, ապաւինեցաւ այրն 'ի սբ̄ն դեմետրիոս, և հրամայեաց տանել զինքն 'ի տեղի գերեզմանի նր̄. ուր և իսկ և իսկ ընկալաւ զկատարեալ առողջութիւն: Եւ 'ի յիշատակ շնորհաց՝ զոր ընկալաւ, ետ քակել ըզտունն փոքրիկ և անձուկ՝ յորում էր տապան ն̄բյն 'ի միջոցի անդ բաղանեաց և ասպարիսին, և կանգնեաց 'ի հիմանց տաճար գեղեցիկ 'ի քաղաքի անդ Թեսաղոնիկեցւոց յանուն ն̄բյն դեմետրեայ: Եւ 'ի կամիլ առնուլ մասն յոսկերաց սբ̄յն՝ արգելաւ տեսլեամբ. ապա առեալ զքղամիդ վկային ներկեալ պատուական արեամբ սբ̄յն, և մասն

մի յուսանոցէ նոր՝ որ և ուրար կոչիւր, խոր-
հէր դարձ առնել ի լիւբկիկ. և ի ձմերայնի
ձգէ արարել երկիրն սիրմիոյ, և անցեալ
ընդ մեծ առանձին աբանչելաբար սքեմ՝ որ
երևեցաւ նմա ի տեսլեան, շինեաց միւս և
եկեղեցի ի սիրմիոն ի պատիւ դեմետրեայ
վկային մծոտ ի տաճար սրբոյն անաստա-
սիայ։

Եւ վ֊ա այսր ամի փոյթ եղև յայնմ հետ
ճշմարտն Թեսաղոնիկեայ՝ չհնդղոլ ումեք
առնուլ մասն ինչ ի նշխարաց սքեանն. որոյ վ֊ա
և համբաւեին՝ թէ թէպետև ի տաճարի
անդ է տապան վկային, այլ անյայտ է տեղի
ոսկերաց նորա. մինչև յուստինիանոս կայսրն՝
որ շինեաց ի կոստանդինուպոլիս զերդն սո-
փի և զայլ բազում եկեղեցիս, առաքեաց
արս ի Թեսաղոնիկ հանդերձ արքունի հրո-
վարտակաւ առ եպս տեղւոյն, և խնդրեաց
մասն ինչ ի նշխարաց մեծին դեմետրեայ։
Եւ մինչդեռ որք ի նմանէ առաքեալ էին
արուճեստաւորք՝ հանդերձ երիցամբք և
պսիսկոպոսին՝ ձեռն ի գործ առնէին, ի բը-
րել և ի մերձենալ նոցա ի մարտիրոսական
տապանն՝ հնար ահագին լուսապիւռ ցոլա-
ցաւ ընդառաջ նոր. և ձայն ի հրոյ անտի ա֊
ընկից և ընդարմացուցիչ յայնոսիկ բար-
բառեալ՝ ասեր. դադարեցէք յայլ ևս փոր-
ձելոյ. յորմէ ասասպեալ արանցն՝ մանուկին
ղերեաս իւրեանց ի գեհին. և միայն հող
առեալ անտի՝ կէս մի եդին ի պահարանի,
և կէս մի առաքեցին առ թագաւորն ի սրբ-

բուն, նշանակեալ զանցս ամ։

Եւ եղև յորժամ թգրեաց մաւրիկիոս, որ և մօրիկ հայկազն, բարեպաշտ և ածասէր կամօք խնդիր արարեալ բազմաց սբց՝ որ 'ի թեսաղոնիկեցւոց քաղաքին կատարեալ էին, և'ս առաւել երանելւոյն դեմետրիոսի՝ վ ս առաւել համբաւոյ սքանչելեաց նր, գրեաց թուղթ առ եւսեբիոս եպս թեսաղոնիկեայ, ոպ զի առաքեսցէ նմա մասն ինչ 'ի նշխարաց նբյն դեմետրիոսի։ Յայնժամ գրեաց եւսեբիոս պխնի թգրին այսպէս։

* Գիտեմք և մեք ով թագաւոր, զի վ ս ճշմարիտ հաւատոյ է խնդիրդ քո, զոր ունիս առ սբ վկայսն քսի. բայց լուր և պատմեցից քում բարեպաշտութեդ զհաւատս թեսաղոնիկեցւոց և զեղեալ սքանչելիսն. վ ս զի ոչ այսպիսի հաւատս ունի քաղաքս այս, եթէ զգալի իրօք կամիցի պաշտել զած և պատուել զսբս նր, այլ զնորին հակառակսն՝ իմանալի աչօք հաստատեալ են 'ի սէրն այ և սբց նր, ընկալեալ զհաւատս 'ի տն սբց վկայութէն, եթէ հոգի է ած, և երկրպագուաց նր պարտ է հոգւով և ճշմարտութբ երկիրպագանել. և վ ս այնորիկ ծածկեալ են 'ի քաղաքիս յայսմիկ մարմինք սբցն՝ ամենևին անյայտ 'ի մարդկանէ։

Զոր և ածասէր հայրն ձեր (ոյ նախորդն) յուստինիանոս, որ ձերային բարեպաշտութ նախանձուդ էր լցեալ, դոյնպէս փորձեալ եգիտ. վ ս զի և նա վկայասէր կամօք գրեաց թուղթ առ որ յառաջ քան զմեզ այսր քղքի

եպս էր, ոպ և քո բարեպաշտութիդ առ մեզ, մասն ինչ հայցելով 'ի նշխարից փառաւորել վկային դեմետրիոսի. զոր և կամեցաւ եպսն ընուլ զածահաճոյ տարփումն սիրոյն Թագաւորին. և մտեալ 'ի վկայարան սբյն՝ բրեցին զյատակ եկեղեցւոյն, ուր կարծէին՝ Թէ անդ եդեալ է նշխարք սբյ վկային. և զայսպիսի գործ՝ երկիւղածաց քահանայից հրամայէր եպսն, զորոց հաստատուն գիտէր զարժանաւորութիւն նց։ Իսկ իբրև խոր ինչ առնէին զբրածն, շուրջ կալով այլոցն սաղմոսիւք և օրհնութիւնք և մոմեղինօք լուցելովք և անուշահոտ խնկօք, կամէին այլ և ս բրել. յայնժամ յանկարծակի հուր ելեալ 'ի ներքուստ՝ ելից զամ խորս բրածին. և շուրջ պատել զնոքօք՝ ոչ այրէր զնս։ Լ ուան ձայն՝ որ ասէր. արդ դադարեցէք յայսմ հետէ յառաւել փորձելոյ զզօրութիւն քոյ, որ միացեալ է յոսկերս սբցն։ Իսկ նց ահիւ և դողութիւն լցեալ միանգամայն, առեալ 'ի հողոյ բրածին առաքեցին առ Թգրն. և գրով ծանուցին նմա զեղեալ սքանչելիսն։

Արդ այսոքիկ ով Թագաւոր՝ առ բարեպաշտօն յուստինիանոսիւ հարբն քոյով եղև. և մեք նոյնօրինակ առաքեցաք քում ածսիրութեդ 'ի նոյն օրհնութ հողոյ, որ եդեալ կայ 'ի պահարանի յայսմ եկեղեցւոջս՝ 'ի պետս բժշկութ ախտաժետաց։ Զոր և դու ընկալեալ՝ ուրախութիւն մեծաւ առլցցիս առանց երկմտութեն իբրև զնոյն ինքն զբովանդակ վկայն ունելով առ քեզ, ոպ վայել է քում

հաւատոցդ. այլև 'ի փորձոյ անտի ծանիցես զսքանչելիսն. և ո՛չ անհնազանդ վարկցիս զմեզ ձեր ա՜ծասէր թ՜գրութ՜ե՜դ ||: (4)

Առեալ բարեպաշտին մօրկայ զայս գիր եպիսկոպոսին ը՜ հողոյն օրհնուե՜ փառս ետ ա՜յ, որ սքանչելին է 'ի սբ՜ս իւր. և այնպէս թէպէտև ոչ 'ի վեր ելին նշխարք սբ՜յն դեմետրի, բայց անպակաս էին սքանչելիք նր՜. և զի կայր սալ մարմարիոնեայ իբրև տապանաքար 'ի վ՜ր գերեզմանին, անդր գային ուխտաւորք առհասարակ, և ը՜ունէին ըզխնդիր իւրաքանչիւր ը՜ հաւատոց իւրեանց. թո՛ղ զբժշկական և զանուշահոտ ձէթն՝ որ բղխէր 'ի տապանէ անտի. ուստի կոչի սբ՜ն դեմետրիոս 'ի յունաց՝ մեծ վկայ միւռոնաբուղխ և սքանչելագործ: Այլ ախորժելի է լսել զսքանչելիս սբ՜յն:

Այր ոմն ազնո՛ական մարիանոս անուն՝ յառաջագոյն սենեկապետ եղեալ 'ի պալատան թ՜գրութ՜ե, և ապա առեալ զեպարքոսութ՜ի լիւրիկեցւոց (ը՜ ճառընտրիս մերոյ, զոր ժամագիրք յունաց կոչէ մարինոս ե՜պս լիւրիկեցւոց), եկն և նստաւ 'ի թեսաղոնիկէ: Սա զառաջինն բարեպաշտ և արդար կամօք ուղղէր զերասանակ իշխանութ՜ե՜ն, այլ յետոյ յօրացեալ 'ի մեծութ՜ս և 'ի փափկութ՜ս՝ ծուլացաւ 'ի պատո՛ւիրանս ա՜յ. և անկաւ յախտ անդամալուծութ՜ե՝ անդարմանելի 'ի հնարից բժշկութ՜ե զամս բազումս. ապա ո՛ւր ուրեմն զմտաւ ածէր յաւուր միում զըսքանչելագործ վկայն ք՜ի զսբ՜ն դեմետրիոս:

Եւ

Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր, նիր-
հեաց. և յանկարծակի երևեցաւ նմա սբ
վկայն 'ի կերպարանս բարեկամի. հարցա-
նէր՝ թէ զիա՞րդ յայնչափ ժամանակս ան
կեալ դնի յախտ անդր. իսկ նա հեծեծելով
ասէ. տէ՛ր իմ ո՛չ կարեմ պատմել զտանջանս,
զոր կրեն անդամք մարմնոյ իմոյ. վ՛ս զի ե-
թէ 'ի ջերմ մերձենամ, սառն թու՛ի մարմ-
նոյս. և յորժամ 'ի սառն, այնպէս կարծեմ՝
եթէ ջերմ է. և ա՜մ յօդու՛ածք անդամոցս
կախեալ կան առանց զօրութ՛ե. և յորժամ
շարժել կամիցիմ, ո՛չ ո՜պ կամիմ տարուբե-
րիմ. վ՛ս զի կարծին միայն՝ թէ անդամք իմ
իցեն, այլ 'ի զօրու՛է ամենևին ը՜արմացել՛ք
կան։ Եւ դու զի՞նչ արդեօք ունիս ասել
ինձ ո՛վ սիրելի բարեկամ, որ այդքան գթու-
թ՛բ հարցանես զիս. և կ՛ի զի՞նչ թելադրու-
թ՛ի մատուցանես վշտագնեալ անձին իմոյ։
Պ՛խնի ետ սբ՜ն դեմետրիոս, և ասէ. Լ ո՛ւր
ինձ ե՛ղբայր, և ասացից քեզ զարժանն, ՝թէ
ո՛րպէս կարասցես թողութ՛ե մեղաց հասա-
նել և բժշկու՛ե մարմնոյդ։ Նախ զայս խրատ
տամ. պա՛րտ է քեզ բարեմիտ լինել, և ա-
ռանց տրտնջման և գոհացողութ՛բ զցաւս
մարմնոյդ ը՜ունել, և մի՛ ընկղմել զանձնդ ան-
յուսութ՛բ 'ի խորս տրտմութ՛ե հոգոց։ Եւ
ապա 'ի միտ առնուլ, թէ ա՜մ ինչ նախախ-
նամու՛բ ներգործի 'ի մարդիկ՝ յամենեցունց
հրաշագործողէն ա՜յ առ իւրաքանչիւր օգուտ.
զի թէպէտև ը՜ն արժանեաց ինչ կիրս կրեսցէ
ոք, սակայն և զայն՝ մարդասիրութ՛ի՜ն ա՜յ 'ի

մեղաց թողութիւն համարեսցի. քանզի աստ
տալով վրէժս մեղացն՝ 'ի հանդերձեալ դա-
տաստանին մարդասիրութիւն գտցէ, ըստ մար-
գարէին նաւումայ, եթէ՝ ո՛չ կրկին վրէժ
խնդրեսցէ ա՛ծ. միայն թէ գոհութիւ՛ զցաւս
անձին յօգուտ շահիցի, այլ ո՛չ տրտմութ՛ և
տրտնջմամբ կրկին տանջանս ինքեան ստաս-
ցի: Ապա եթէ արդար իցէ՝ որ զկիրս ցա-
ւոցն ը՛ունիցի, և գոհանայցէ՝ բազում զգու-
շութի՛ առ 'ի պահել զարդարութի՛ն, աստ
ընկալցի զհատուցումն բարի, և 'ի հանդեր-
ձեալսն մեծապայծառ փառօք պսակեսցի,
իբրև զոսկի 'ի հուր մաքրեալ՝ ո՛պ զերանե-
լին յոբ:

Իսկ վտանգեալ եպարքոսն սկսաւ հարցա-
նել ցս՛ն, և ասէ. ո՞վ ես դու ա՛ր, և զի՞նչ
անուն է քո, և ո՞ւր իցէ տեղի բնակութ՛ քո,
որ զայդքան գեղեցիկ մխիթարութի՛ մատու-
ցանես ինձ: Ասէ ցնա ս՛ն. իմ տեղի բնա-
կութի՛ թագաւորական քաղաքն է. անդր
եկեալ գտցես զիս, և ուսցիս զանուն իմ:
Յայնժամ զարթուցեալ մարիանոսի՝ պատ-
մեաց զտեսիլն մերձաւորաց իւրոց. և զի ոչ
իմացաւ զբանս ն՛բյն վ՛ս թ՛գրական քաղա-
քին, կարծելով՝ թէ զկոստանդինուպօլիս
ասաց, աւաղէր զանձն և ասէր. վա՛յ ինձ
թշո՛ւառականիս. ես աստանօր անկել՛ դը-
նիմ անդամալոյծ 'ի թեսաղոնիկեցւոց քա-
ղաքիս, զքեզ ո՞րպէս կարիցեմ գտանել 'ի
կոստանդինուպօլիս, ո՛վ ա՛ր իմ և մերձաւոր
բարեկամ:

Յայն-

Յայնժամ մի ոմն յանցանէ՝ որ մերձ առ նա
կային, տեղեկացեալ 'ի նմանէ՝ եթէ յա-
ռաջ ք̄ զտեսիլն զդեմետրիոս խորհէր զնշա-
նագործ վկայն, ասէ ցմարիանոս. մի՛ վհա-
տիր տ̄ր իմ եպարքոս, ես առեալ տարայց
զքեզ առ բարեկամն քո. և ը̄է̄ր ոչ իմանաս՝
թէ նա ինքն է գովելի վկայն ք̄ս̄ի դեմետ-
րիոս. որ ո՛չ թէ յերկրաւոր թ̄գ̄րական քա-
ղաք բնակէ, այլ 'ի վերինն ե̄է̄մ՝ որ քաղաք
անմահ թ̄գ̄րին է. և ոսկերք ն̄ր̄ 'ի մերում
քաղաքիս հանգչին, վ̄ս̄ զի աստ կատարե-
ցաւ. և ո՛չ պակասի 'ի նախախնամու̄է̄ քա-
ղաքացեաց իւրոց, զի կենդանի է ք̄ս̄ յոս-
կերս ն̄բց. արդ ե՛կ տարայց զքեզ 'ի տաճար
ն̄բյն, և անդ վայելեսցես 'ի շնորհս վկային։
Յայնժամ բարձին զնա մահճօք, և տարան
եդին 'ի յատակս եկեղեցւոյն՝ որ գեղեցկա-
պէս շինեալ էր յանուն ն̄բյն։ Իսկ ն̄ր̄ նկա-
տել 'ի տաճար անդր զպատկեր երանելոյն,
և յառեալ 'ի նա զաչս՝ ասէր թախանձելով.
Ո՛վ ն̄բ և ամենաս̄ն̄բ ճգնազգեաց նահատակ
և հարազատ ծառայ ք̄ս̄ի, դու մատուցեր
զանձինս բազմաց անուշահոտ պատարագ ա̄յ,
և 'ի վ̄ր̄ ամենեցուն զքեզ ինքնին բոլորա-
պտուղ ընծայեցեր նմ. դու վ̄ս̄ բազում ա-
շակերտելոց՝ խոցեցար 'ի սէր այնորիկ, որ
վ̄ս̄ ա̄մ ծի փրկու̄է̄ ետ կամաւորաբար զկող
իւր գեղարդեանն. դու ամենեցուն բարե-
րար եղեր 'ի կենդանու̄է̄ քում, և՛ս առաւել
յետ մահու՝ յորժամ զճշմարիտ կենդանու-
թի̄դ ընկալար 'ի ք̄ս̄է. արդ աղաչեմ զքեզ

կենդանի վկայ քո՛ի՝ հե՛ղ յիս 'ի տառապելն
զշնորհս բժշկութե՛ քո, պնդեա՛ զլուծեալ
անդամս իմ։ Ա՛հաւասիկ անդամալոյծս մերձ
յաւազանս քո անկեալ դնիմ, սպասելով քեզ
փառաւորեալ հրեշտակիդ՝ առ 'ի շարժել
զողորմութե՛ իջումն կենարար ջրոյդ բժշկու-
թե՛ 'ի վ՛ր իմ. որ թէպէտ և երեսուն և ութ
ամ ոչ ունիմ հիւ՛անդութե՛ մարմնոյ, սակայն
երեսնեկին երեսուն և ութիցս առաւելութ՛
մեղաց անկեալ դնիմ։

Օ այս և առաւել քան զսոյն պաղատեալ՝
ն՛ի՛ր՛հէր այրն յաշխատութե՛ն 'ի մէջ տաճա-
րին։ Եւ ահա երևեալ նմա փառաւորեալ
վկայն քո՛ի դեմետրիոս 'ի կերպարանս առա-
ջին տեսլեանն՝ ասէ ցնա. Բարիո՛ք լու՛ար
ինձ, և եկիր այսր տէ՛ր եպարքոս. և ես վաղ-
վաղակի ա՛ւ կատարեցից զոր խոստացայ առ-
նել քեզ. բայց և զայս տ՛ն իմոյ պատու՛իրան
աւանդեցից քեզ. ահաւադիկ ողջացար, մի՛
դարձեալ մեղանչեր. զի մի՛ չար ևս լինիցի
քեզ. քանզի սովորութ՛ է լուծելոց անձանց,
զի յորժամ տրտմական ինչ տեսցեն, խոստո-
վանին 'ի բաց կալ 'ի մեղաց. և 'ի հեշտա-
կանսն թուլանան 'ի բարեաց. ը՛ն այնմ, թէ
յորժամ սպանանէր զն՛ս, դառնային խնդ-
րէին և առաւօտ առնէին առ ա՛ծ. և դար-
ձեալ՝ եկեր յակոբ և յագեցաւ, յանգուշեաց
զսիրելին. գիրացաւ ստու՛արացաւ լայնա-
ցաւ՝ եթող զտ՛ր ա՛ծ զարարիչ իւր, և յետս
եկաց յա՛յ փրկչէն իւրմէ. արդ՝ եթէ ըստու-
գապէս հաստատեսցիս 'ի ճշմարտութե՛ն,

ողոր-

ողորմութենին քոյ բժշկեացե զքեզ Թարեխաս-
տուել իմոյ ։
Պէտք է ասել Մարիանոս, և ասէ. Հաւատամ
ես՝ եթէ ոչ անցից զպատուիրանսն քոյ.
միայն եթէ ողորմեսցի ինձ քեւ Թարեխն,
և ընկալայց զբժշկուն անդամոց իմոց ։ Այլ
ես վկայն ձգել զձեռն իւր՝ շօշափեաց զնա
լուծել անդամն նր, և ասէ. Ո՞ւր ես ձեզ
ւիտ բժիշկն Հոգւոց և մարմնոց բժշկեսցէ
զքեզ, և զախտացեալ անդամն քո. այն՝ որ
յարուցանէ զանկեալսն, և կանգնէ զգլո-
րեալսն ։ Այլ զարհուցեալ Մարիանոս՝ ետես
լեռնէ անտի՝ եկաց կանգուն՝ առողջացեալ ամ
անդամօք իւրովք. և ետէպ զոհանայր զնմ
և զաթոռ վկային. և ասէր արտասուօք. ով ո՛ր-
քան խնդուն էր քաղցր Թարեխա քո՛ւ Հոգիս
իմ վկայ քոյ. մինչ դրեթէ արդ ես հնչէ՛ւ
լսելիս իմ, և ցնծացեալ պարարէ զամ ոսկերս
իմ ։ Այլ այնուհետեւ կրթեալ Մարիանոս
զինքն յամ հրահանգս առաքինութենէ՝ բարե-
պաշտութեանէ զարդարէր զինչնանութենէ իւր ։
Վասն նախանձոտ բանսարկուին տեսեալ զգո-
վելի քաղաքավարուն՝ յարեաւ՛ւ վէր նր ի-
րե՛ւ վէր յովելոյ ըստ Թոյլ տալոյն ամ. զի յե-
տոյ ակաւուց Հարաւ Մարմին եպարքոսին չարա-
չար կեղծօք. մինչ դրեթէ ամ անդամք նորա
փտեալք և քակտեալք լինէին. և ոչ ո՛ք՛ւ
բժշկաց օգտեաց նմա. և իբրև յամէ յոս-
ահաւա լինէին՝ որ իւրքն էին, ակայն նա
և առաւել գոհութեանէ առնէր զբարէչարանն
Յայնժամ ոմն՛ւ ծառայից նր շարժե՛ւ
բանս.

բանսարկուէն ըն օրինակի կնոջն յոբայ՝ խոր-
հուրդ չար և անօրէն թելադրէր յունկն տ̄ն
իւրոյ. է աստ ասէ այր մի, որ գիտէ հմայս
բժշկութեան՝ գրեալ 'ի մագաղաթի եբրայեցի
բարբառով անուանս հրեշտակաց, այլ և
արեգակունս, և այլ բազմախուռն անուանս՝
որ ոչ է ումեք յայտնի. և մագաղաթն՝ յո-
րում այս տ̄մ է, 'ի գրապանս վերարկուի ձևա-
ցուցեալ է՝ գիր ունելով յինքեան ներքոյ և
արտաքոյ. և ասէ, թէ որ զդենու զայս,
բուժել լինի յա̄մ ախտից. արդ ա՛ռ դու զնա
և զգեցի՛ր. և ազատեա՛ զմեզ 'ի տրտմութ՝է
վիրացդ՝ որ հասին 'ի վ̄ր քո. զի և մեք իբ-
րև 'ի խորս դժոխոց այնպէս թաղեալ կամք
վ̄ս քո:

Պ̄խնի ետ համբերօղ այրն և ասէ. ո՛վ մոլեգ-
նեալ թելադիրդ, որ այդքան յանդգնեալ՝
ապստամբել ուսուցանես զմեզ յա̄յ, և առ
դիւթս և կախարդս և դևս ձգես զմարմինս
առողջացուցանել, որով և զհոգիս փութաս
սպանանել. ո՛չ այդպէս. այլ լա՛ւ է ինձ մե-
ռանել այսպէս, ք̄ թէ հեռանալ յա̄յ ճշմար-
տէ: Եւ այնպ̄ս 'ի բաց վարեաց զնա յիւրմէ
իբրև զմի ոք յարանց անզգամաց խօսեցեալ.
և ապա սակաւ մի զետեղել՝ 'ի բազում վաս-
տակոց մարմնոյն նիրհէր: Եւ ահա երևե-
ցաւ նմա անդրէն ն̄բ վկայն ք̄ն̄ի դեմետրիոս.
հարցանէր զնա վշտակցաբար, թէ ո՞րպէս
իցէ: Իսկ նա յոյժ հեծեծելով ասէ ցնա.
այդպէս՝ որպ̄ տեսանես տ̄ր: Եւ ն̄բ վկայն
խանդաղատելով զնովաւ՝ ասէր. մի՛ երկնչիր
սի-

սիրելի. բժշկեսցէ զքեզ տր յս քս ածն իմ.
և զայս ասացեալ գնաց։

Եւ զարթուցեալ մարիանոս 'ի քնոյ անտի՝ յարեաւ եկաց 'ի վր ոտից իւրոց. և ահիւ և խնդութբ լցեալ՝ 'ի բաց եդ զհանդերձս հիւանդութեն, և առեալ նոր զգեցաւ. և ածեալ գօտի ընդ մէջ, և կօշիկս յոտս, յարուցեալ գնաց 'ի վկայարան նբյն. և եկեալ 'ի տեղին՝ ուր կային ծածկեալ նշխարք նր, ընկէց զինքն 'ի վր արծաթապատ կազմածին, որ տապանաձև յօրինեալ կայր առաջի նկարագիր պատկերի վկային. և սկսաւ արտասուօք գոհանալ, և հայցէր շնորհս յայ բարեխօսութբ նբյն. ոպ զի անարատ պահեսցի առաքինուի նր յամ մեքենայից բանսարկուին. և գնացեալ 'ի տուն իւր՝ ետ զամ ինչս իւր 'ի ձեռս աղքատաց. իսկ զհանդերձս մեծագինս, և այլ ևս բազում դանձս ոսկւոյ և արծաթոյ առեալ տարաւ 'ի սպաս պաշտաման տաճարի նբյն։

Դարձեալ 'ի ժամանակս մօրկայ կայսեր՝ իշխանն աբարաց յինքն գումարեաց զամ ազգս բարբարոսաց՝ տալ պատերազմ ը տրութե յունաց. դիմեաց յծն թրակացւոց և լիւրիկացւոց յաւարի առնուլ զնս. և եկեալ եհաս յածապահ քաղաքն թեսաղոնիկեցւոց, որ էր քան զամենեսեան բարգաւաճեալ բազմայարմար փարթամութբ. քանզի զայս խորհէր բարբարոսն 'ի միտս իւր. թէ զնա առից, այնուհետև դիւրաւ դիմեցից 'ի վր թգրական քաղաքին, և ղբռամբ ածից զթգրն յունաց։

նաց։ Արդ եկն եհաս յանպատրաստից 'ի վ՞ր Թեսաղոնիկեայ անհուն բազմութ՞ն յաւուր կիրակէի նախ քան զժամն առաւօտու՝ յամսեանն սեպտեմբերի, որ օր ի՞ն էր ամսոյն. և գաղտ 'ի գիշերի պատեալ պաշարեաց զքաղաքն. և զօրք ն՞ր սողելով մեղմագնաց քայլիւք մերձեցան 'ի պարիսպն, իւրաքանչիւր սանդուխս ը՞ն անձին բարձեալ. և քանզի ոչ գոյին պարսպապահք, սկսան 'ի վեր ելանել, մինչչև էր այգոյն քաջ մերկացեալ. և իբրև ելին բաղումք և քաջամարտիկք 'ի նոցանէ, սուսերամերկ եղեալ՝ կամէին 'ի քաղաքն յարձակիլ։

Յայնժամ յանկարծակի ն՞ք վկայն դեմետրիոս ել ը՞ն առաջ ն՞ց 'ի կերպարանս զինուորի, եհար զմի ոմն 'ի ն՞ցէ գեղարդեամբ, և Թափանց արարե՞ ընկէց յայնկոյս պարսպին. և զայն տեսեալ այլոցն, և զարհուրեալք 'ի տեսլենէ ն՞ր, առհասարակ 'ի վայր հոսեալք՝ արտաքս անկանէին. այս նախ առաջին հրաշագործեցաւ 'ի ձեռն ն՞ք մարտիւրոսին։ Իսկ 'ի լուսանալ աւուրն իբրև դիտացին բարբարոսքն՝ Թէ ոչ գոյ զօրք 'ի քաղաքին, յարևելեան կողմանէ պարսպին մինչև յարևմտից դուռնն՝ որչափ ինչ տեղի կայր 'ի ցամաքին 'ի ծովէ մինչև 'ի ծով՝ ասպարափակ արարեալ լցին զարտաքին խանդակսն պարսպին. և անհամար բազմութ՞ին իբր 'ի վերայ միմեանց կուտեալ՝ մօտ էին 'ի ներքս հոսիլ. մինչև անյոյս լինել ա՞մ բնակչաց քաղաքին, և հեղուլ միաբան արտասուս

իբրև

իբրև զվտակս ջուրց։ Նոյնպէս վհատէն քան զե-
ղեռնեայ առանձինն ընդէմ կենալ բարբա-
րոսաց՝ ոչ թողացուցանէր ընդ՚ի ներքս մտա-
նել. և զայսպիսի նախախնամողական տես-
չութիւն երևոյնն՝ միայն արժանաւորք ոմանք
ընդ՚ի հաւատացեալոցն տեսանէին։

Եւ յայսպիսի պաշարման եկաց քաղաքն՝
ակեալ՚ի քսանևերկուց տեսլեամբերն մին-
չև՚ի յուլիս ամիս յաջորդ տարւոյն. և՚ի ժա-
մանակս պատղոյ երկրին ցանեալ ցրուհեցան
ջորքն բարբարոսաց յայմ գաւառն, և սպա-
ռեցին զամ ցորեան և զգինի և զամ մրգս.
և Թեսաղոնիկեցիք՝ որ ոչն ունէին զպատ-
րաստութիւն, յերկարութիւն պաշարմանն՚ի յե-
տին վտանգ սովու անկանէին։ Յայնմ վայ-
րի կամեցաւ ած ցուցանել ամենեցուն, Թէ
միայն բարերարութիւնք նորով՝ որ՚ի բարե-
սուէ ածէ վհատէն, եգիտ քաղաքն զվրկուն։
Ա՛ւ զի այր ոմն էր՚ի քաղաքին՚ի պատուա-
կան աղգէ՝ յոյժ երկիւղած՚ի նմանէ, և զար-
դարեալ ամ գործովք բարեաց. սա տես-
նէր յաւուր միում՝ յորժամ նանջէր՚ի տանն
նորում, տեսիլ ինն սքանչելի. նախ զի արք
երկու լուսազգեաստք եկեն մտին՚ի վհատե-
նան՝ ածէն ցնա. ոտ Թէ պատգամաւորք
եկեալ եցեն յայ առ ածն. և ասեն ցնա. որ
յո՛ք ես առաքեաց զմեզ ոմն զարմարիկ, ոտ զի
Թողցես զքաղաքս զայս, և եկեսցես առ
նա. և՛ զի մատնելոց է զսա՚ի ձեռս բարբա-
րոսացն։ Նոյն ասեն ցնա. զիմոջ՚ի վայր նայեցեալ՝ ոչ տայր պինդ ընդ.

տես

ապա յետ այսորիկ ասէ ցնոսա. ո՛չ այդպէս
տեա՛րք իմ և ծառայակիցք, ո՛չ երթամ աս-
տի, և ո՛չ թողում զհայրենի բնակութիւնս
իմ. վ՞ս զի աստ կատարեցայ, և աստ հով-
ո՛ւեցից զհօտ իմ. այլ այսպէս ասասջիք
ցփրկիչն իմ և ա՞ծն, թէ ո՛վ տ՞ր զիա՞րդ կո-
րուսանես զայսքան ժողովուրդ՝ զոր գնեցեր
պատո՛ւական արեամբդ քով. այո՛ տ՞ր՝ մի՛ առ-
ներ ը՞ս մեզաց մարդկանս այսորիկ, այլ՝ ը՞ս
բազում ողորմութ՞ե քում. վ՞ս զի ցասումն
քո ո՛չ եթէ զկորուստ խնդրէ, այլ՝ զդարձ
և զապաշխարութ՞ի. այլ թէպէտև խրատես
տ՞ր, քաղցրութ՞բ արասցես, և մի՛ բարկու՞բ։
Եւ յասել զայս վկային մարդասէր գթով,
ողջունել՞ք 'ի նմանէ արքն պատգամաւորք՝
դարձան անդրէն, ուստի եկեալն էին։
Իսկ այրն երկիւղած զարթուցեալ 'ի քնոյ
անտի՝ ել վաղվաղակի 'ի պարիսպն. շրջէր
քաջալերէր զմարդիկն. մի՛ երկնչիք ասէ ե՛ղ-
բարք, վ՞ս զի ն՞բ վկայն քն՞ի դեմետրիոս ընդ
մեզ է. և նա խոնարհեցուցանէ զբազմա-
գութն ա՞ծ յողորմութ՞ի՝ չկորուսանել ըզ-
քաղաքս զայս վ՞ս անօրէնութ՞եց մերոց. մի-
այն փութասցո՛ւք խոստովանել և ապաշխա-
րել զմեղս մեր. և քաղցրութ՞ին ա՞յ վաղվա-
ղակի ժամանեսցէ առ մեզ։ Որ եղև իսկ, և
կատարեցաւ, և յանդ ելին աղօթք սբ՞յն.
վ՞ս զի բարբարոսքն ինքնին չո՛ւեալ գնացին
յ՞ծն իւրեանց, և քաղաքն և դաւառն ա՞մ
դարձեալ յառաջին ազնո՛ւականութ՞ե պայ-
ծառանային։

Ա.ռ

Առ այս յաւելաւ միւս ևս սքանչելիք ողորմուեն քն̄ի 'ի տեսչուէ ն̄բյն. զի յետ հնչելոյ համբաւուն՝ թէ պաշարեալ կայ թեսաղոնիկէ, ոչ գային անդ նաւք վաճառականք հացի և այլ կերակրոց. վ̄ս̄յ և յետ ազատութեան պաշարման կայր քաղաքն և գաւառն նեղեալ 'ի սովոյ։ Եւ ահա նաւք բազումք ելեալ յ̄ծէն իտալացւոց՝ նաւէին 'ի բիւզանդիոն, բարձեալ ունելով յինքեանս ցորեան բազում. յայնժամ երևել ն̄ց ն̄բն դեմետրիոս 'ի սահմանս քիոմն կղզւոյ (այն է կիւ՛, կմ սախըզ), ասէ ցնաւապետ նաւացն այնոցիկ՝ որում անուն էր ստեփաննոս, և ցընկեր ն̄ր. յո՞ նաւէք դուք ե՛ղբարք. և ն̄ք ասեն. 'ի բիւզանդիոն։ Ասէ ցն̄ս. ո՛չ այդպէս. այլ եկա՛յք զկնի իմ 'ի թեսաղոնիկէ, և անդ բազում շահս ը̄ունիցիք։ Ասէ նաւապետն. լու՛եալ է մեր, եթէ աւերել է քաղաքն այն 'ի բարբարոսացն. զիա՞րդ երթիցուք անդր։ Պ̄խնի ետ տեսիլն, և ասէ. ես եմ դեմետրիոս վկայն քն̄ի՝ որ անդ կատարեցայ, և անդ քաղաքապետ եմ. մի՛ երկընչիք, եկա՛յք զկնի իմ. վ̄ս̄ զի յ̄ա̄յ առաքեցայ ես առ ձեզ։ Եւ յուղղել վկային զառագաստն ը̄ շաւիղս հողմոյն՝ աջողակ եղեալ՝ վաղվաղակի հասին 'ի թեսաղոնիկն։ Յայսմանէ և այլ բազում նաւք եկին անդր. և ա̄մ քաղաքն և գաւառն լցելք հացիւ՛, փառաւոր առնէին զա̄ծ, որ այսպէս հրաշագործեաց առ ն̄ս 'ի ձեռն վկային իւրոյ դեմետրիոսի։ Թո՛ղ և զայլ բազմապատիկ նշանս

բը-

ԲԺՇԿՈՒԹԵՑ ԵՒ ԱՂԱՒՈՒԹԵՑ ՚Ի ԳԵՐԱՆԵՑ ԵՒ ՅՅԱՄ ՎՏԱՆԳԱՑ ՀՈԳՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ՝ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵՑԷ ՆՍՐԻՆ ՈՐՊԷՍ ՅԻՍՄ ԺԱՄԱՆԱԿԻՑ, ՚Ի ՓԱՌՍ ՀՂԱՇԱԳՈՐԾՈՂԻՆ ՍՈՅ ՚Ի ՈՐՔՍ ԼԻՐ ։

XXXX

(4) Հ. առ համառօտութեամբ չհոգեւ զանցս հրաշից եղե-
լոց առ յուստինիանոսիւ ը գործոց աւուրցն մօրկայ։
Յ. ժմ. որոշ գրե զեղեալսն յաւուրս յուստինիանոսի,
և հարեւանցի զեղեալսն առ մօրկաս. իսկ Ճ. ճոխա-
գոյն բերէ զպատմութիւն աւուրցն մօրկայ ի թվոյ
եւսեբի եդեսին, յորում փակին անդք ժմկին յուստինիա-
նոսի. և ասասի երևի առեալ՝ որ ինչ յայլոց գրի։ Նոյն-
պէս Ճ. միայն՝ լիով աւանդե ը գրելոցս զպատմութի-
մարքեանոսի, և պաշարման թեսաղոնիկեայ. զոր այլք
քանի մի տողիւք հարեւանցի նշանակեն։ Լաւ է լսել
զվերջաբանութեամբ Ճ. որ ունի այսպէս. * Եարդ զայս
„ յիշատակարանս յարմարեցաք ելլբերը ը վկայութիւն
„ սիյն. զի ամ հաւատացեալք ընթերցեալ զսա՝ մտա-
„ գիւրուի կատարեսցեն զիշատակ սիյն. վ զի նո-
„ քաք կարեմք ողորմութեամբ գտանել յայսմ ՃԻ և ի
„ հանգերձեալսումն, նաև մեզաց թողութեամբ և ի պատու-
„ հասիլ զերծուիլ, և ամ ուստիք (ՃԻ, և այլն ամ ուս
„ սի) իլչ մեզ, եթե ոչ նոցին ՃԻ աղօթիւքն. զի ամ
„ իրաք զհերձութեամբ և զմարդասիրութիւնն ՃԻ յինքեանս
„ կրեցին՝ մինչ աստ էին, և յորժամ անդր չոգան. այլև
„ սատ խաչակերեալք ը քրիստոս, և անդր թեքրեալք ը նմ,
„ բազում համարձակութիւ գամ ինչ զոր և հայցեն վա
„ մեր, ը նունին ի նմանե. Վայ և մեք բազում փուքթով
„ պիշատակս նց կատարեացուք. զի և փառաց նց արը
„ ժանի լիցուք, և ը նոսին յարաքզոշարճ բերկրանօք
„ փառաւորեացուք զՀայր և զորդի և զսը հոգին՝ այժմ
„ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Բասիլիսկոսի զօրականի, և Բասիլիոսի քահանայի։

Ի մի զօդ կատարման միաւորեմք զերկոսին փառաւորել՝ վկայքս, որք միով կոչմամբ հոմաձայնութե՛ ընկերեալ դնին ընդ դեմետրեայ վկային 'ի տօնացուցի մերում այսպէս. * դեմետրեայ վկային, և բասիլիսկոսի քահանային ‖. ուր ոմ̄ բարւոք ասի ըզդեմետրեայ 'ի թեսաղոնիկէ կատարեալ, շփոթութ՛ ասի զբասիլիսկոսէ քահանայէ յամասիա կատարեալ. կայ և օրինակ՝ յորում գրի բասիլիոս քահանայ, որ յամասիա կատարեցաւ. փոխանակ ասելոյ, * բասիլիսկոսի զօրականին ամասիացւոյ՝ որ 'ի կոմանա, և բասիլիոսի քահանային՝ որ յանկիւրիա կատարեցաւ ‖. Թո՛ղ զի զօրականն ամասիացի 'ի ճառընտիրս կոչի բասիլիկոս, և քահանայն անկիւրացի 'ի յայսմաւուրս կոչի բասիլիսկոս. և դր̄ձլ ե՛ն որ զզօրականն ե՛ս կոչեն, և ե՛ն որ զքահանայն 'ի կեսարիա ասեն նահատակեալ։ Զպատճառս շփոթութե՛ն յայտնի կացուսցուք 'ի ծանօթուի̄ս (1). ժա՛մ է աստանօր զհարազատ վկայաբանուի̄ս աւանդել, որովք բառնի ա̄մ շփոթ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Բասիլիսկոսի ամասիացւոյ, զօրականի։

Հ. մայ. 25. և մարտ. 3։ Յ. Լ. մայ. 22. և մարտ. 3 Ճառընտ. Բ. ն = ն̄իզ. և Ս. մղդ̄ = յը̄։ Բոլլանդեանք. 'ի մարտի. 3. էջ. 235 = 241. և սեպտ. 14. 'ի վարս ոսկէբ. երես. 665. 666։ (2)

ԲԱՐԵՅԱՂԹՎԿԱՅՆ քն̄ի և առաքինի զօրականն բասիլիսկոս կամ բասիլիկոս էր ամասիացի, 'ի քումէլայ կամ 'ի խուլմիաղոնէ գեղջէ ամասիայ քղ̄քին պոնտոսի կապադովկացւոց, 'ի գաւառէն արմենիակաց, եղբօրորդի մեծ վկային Թէոդորոսի. և առ նովաւ իսկ կարգեալ էր 'ի կայսերական զինուորուն̄ յաւուրս մաքսիմիանոսի արքայի՝ գաղերիոս արմենտարիոս կոչեցելոյ՝ 'ի միում գնդի ը̄ այլ երկուս յազգականաց իւրոց, որոց անուանք էին եւտրոպիոս և կղէոնիկոս։ Եւ եղև զի երեքին սոքա 'ի միասին արկան 'ի բանտ վ̄ն անուանն քն̄ի հրամանաւ ասկղեպիադեայ դատաւորին պոնտոսի. և ն̄բն եւստրոպիոս և կղէոնիկոս վա-

զագոյն յատեան ածեալ՝ կատարեցին զընթացս իւրեանց արիական նահատակութիւն յամասիա. զորոց լինի յիշատակ 'ի կարգի յայսմաւուրաց մերոց և այլոց 'ի մարտի. գ։ Բայց երանելին բասիլիսկոս յերկար պահեցաւ յարգելանս. և ապա առաւելագոյն հանդիսիւ՝ կատարեցաւ 'ի կոմանա. ոպ գրեաց ականատես վկայն եւսիգնիոս. յորմէ առեալ են և ամ վկայաբանք ըստ ճառընտիրս մեր. և ունի պատմութիւն այսպէս։

Իբրև մեռաւ ասկղեպիադէս դատաւորն պոնտոսի, առաքեցաւ անդր 'ի մաքսիմիանոսէ 'ի տեղի նր ագրիպպաս դատաւոր, առեալ իշխանութիւն հրաման տալոյ ըստ ամ կողմանս արեւելից՝ ժողովել զամ հաւատացեալս 'ի քս, զի զոհեսցեն ածոց նր. և զորս ոչ հնազանդին՝ կորուսանել ազգի ազգի տանջանօք։ Արդ յաւուրսն յայնոսիկ՝ յորժամ 'ի բանտի էր երանելին բասիլիսկոս յամասիա, լալով յաղօթս կայր և ասէր. Տէր իմ յս քս յիշեա՛ զիս զմեղաւորս, և մի՛ մոռանար զիս իսպառ. այլ և զիմ կոչն յայտնեա՛, զի մի՛ մեկնեցայց 'ի նբ վկայից քոց յընկերաց իմոց։

Եւ երևեցաւ նմա փրկիչն 'ի գիշերին յայնմիկ, և ասէ ցնա. յիշեցի զքեզ և ոչ մոռացայ. և ահա գրեցի զանուն քո ըստ առաջին վկայսն. դու տրտմեցար՝ եթէ զկնի նոցա վախճանիս, բայց ես յառաջ քան զնս արարից զանուն քո, և արարից զքեզ անուանի. այլ այժմ ե՛րթ հրաժարեա՛ յազգատոհմէն քումմէ. (զի թերևս ըստ յամենալն նորա 'ի

բան-

քանսոն՝ Ծիլիկն խորհուրդ ինչ .) և եկեալ
կատարեսցես փութով զընթացս քո , և եղիցիս կատարել . և մի երկիցես ՚ի տանջանաց ,
զի ես ընդ քեզ եմ :
Լսեր երանելի տէր վկայն Յիսուս զարթեաւ ՚ի քնոյ , եւտես զդուրս բանտին բացեալ , ընդ առաւօտ իսկ էր . սկսաւ աղաչել զպահապանն , և ասէ . շնորհեցէք ինձ աւուրս չորս՝ երթալ հրաժարել յաղգատոհմէ իմմէ , և ՚ի գեղջէն քումէլայ , և յետ այնորիկ եկից վաղվաղակի , և երթայց առ Ճշմարիտ հայրն իմ յերկինս քո , որպէս հրամայեաց ինքնին ինձ տէր : Լսեր զինուորքն ասեն ցնա . կենդանի է տէրն քո , եթէ ոչ երկնչէաք ՚ի դատաւորէն՝ որ ՚ի մօտոյ ունի մտանել ՚ի քաղաքս , քնաւ իսկ արձակէաք զքեզ . այլ երկնչիմք , գուցէ ՚ի թողուլն զքեզ՝ խնդիր լինիցի քեզ : Լսէ բասիլիսկոս . թողէք զիս հանդերձ պահապանաւ . և ես փութով դառնամ այսրէն . և հաւատացին զինուորքն , և արձակեցին զնա և գերիս զինուորս ընդ նմա :
Նա չորեաւ երթն մինչև ՚ի գիւղն , և եգիտ զընտանիս իւր . քանզի ունէր երիս եղբարս և մայր . կարդաց առ ինքն և զնոսա աղգատոհմին և զբարեկամս իւր . և խօսեցաւ առ նոսա բազմօք վասն հոգւոյ փրկութենէ և յաղագս վճռութենն քրիստոսի , և մխիթարեաց զնոսա . և ՚ի հրաժարելն իւրոյմ ասէ ցնոսա . հարք իմ և եղբարք հաստատուն կացէք դուք ՚ի հաւատսն քրիստոսի , և վասն իմ աղօթս արարէք , զի արժանի եղէց վկայութեաս . զի ահա հրաժա-

բեմ 'ի ձէնջ, և այլ ոչ և ս տեսանէք զիս մարմնով։ Յայնժամ ասեն ցնա արտասուօք. երթ և բարեխօսեա՛ վ՞ս մեր և վ՞ս ամ ազգաց, զի բարձցի կռապաշտութի՞ յԾէս, և կացցեն շնորհքն ք՞ն՝ի 'ի վերայ երկրի. զայս աղաչէին ն՞ք զն՞բն. և նա փութայր դառնալ 'ի տեղի իւր։

Իսկ դատաւորն ագրիպպաս եկն եմուտ 'ի քաղաքն ամասիա. և կոչեաց զաւագս քաղաքին, և չոգան 'ի տուն կռոցն, 'ի տեղի ասպարիզին՝ որ կոչիւր պատսոս կմ պետասոն. և կամէր զոհս մատուցանել. վ՞ս խընդիր արար կապելոցն՝ որոց անուանք կային 'ի գրի, զի եկեսցեն և զոհեսցեն. ապա թէ ոչ՝ դատաստան մահու ընկալցին։ Եւ իբրև ածին զկապեալսն, և բասիլիսկոս ոչ էր ը՞ն՝ն, եկն դահճապետն 'ի բանտն՝ խնդրել զնա. և ոչ գտեալ՝ կապեաց զբանտապետն, և տարաւ առ դատաւորն. որ և չարչարեաց զնա տանջանօք, և ասէ ցնա. ը՞էր փախուցեր զմահապարտն։

Եւ բանտապետն խնդրեալ ժամադրութի՞ ետ երաշխաւոր, զի 'ի չորս աւուրս ածցէ զնա. քանզի երկու աւուրք էին՝ յորմէ հետէ երթեալ էր 'ի գիւղն. և արձակեցին ը՞ն նմա մագիստրիանոս զոմն անագորոյն իբրև ոստիկան, և զօրականս։ Եւ դատաւորն չուեաց անտի 'ի կոմանա՝ որ և կոմանի, և զբասիլիսկոս անդր հրամայեաց ածել. զի անդ դատելոց էր զկապեալս. և պատուէր տուեալ ցմագիստրիանոսն և ցզօրականսն՝ ասէ. կապեալ

պեա՛լ ածէք զայրն տանջանօք և լլկանօք, մի՛ գուցէ խաբիցէ զձեզ, և կորնչիլ ունիք
դուք։

Եւ ելեալ գնացին 'ի գեօղն քումելայ 'ի խնդիր ն՞բյն. գնաց ը՞ն ինքնակամ և եւսիգ-նիոս դպիր յիշատակաց՝ գրօղ բանիցս. և գտին զն՞բն. և կապեցին զնա կրկին շղթայ-իւք, և արկին անուր 'ի պարանոց ն՞ր. արա-րին նմա և կօշիկս պղնձիս, և ագուցին նմա, և հարին հեղուսս երկայնս. մինչ զի եր-կաթքն ը՞ գարշապարսն 'ի վեր անցանէին, և 'ի գնալ ն՞ր գետք արեան խաղային յոտից նորա. և այնպէս դառն տանջանօք դատէին
զերանելին։

Եւ զայս իբրև տեսանէին ազգատոհմքն և բարեկամքն և գեօղ ն՞ր, ամենեքեան լային. և յղարկեցին զն՞բն՝ գնալով ը՞ նմա յերկար. և մայրն մոռացեալ զկսկիծ զաւակին՝ քա-ջալերս տայր նմա արիանալ 'ի հանդէս նա-հատակուն՞ վ՞ս փառաց անուն՞ն քն՞ի։ Ապա երանելին հրաժարեաց 'ի մօրէն և յեղբարցն և յա՞մ բազմութ՞ն. ասէ. մի՛ լայք զիս, այլ աղօ՛թս արարէք վ՞ս իմ. և համբուրեաց զա՞մ մերձաւորս իւր, և աղաչէր զն՞ս դառնալ, և ասէր. դարձե՞լ ունիմ տեսանել զձեզ յ՞ծին կենաց. և մագիստրիանոսն՝ որ գնայր հե-ծեալ յէշ, իջեալ 'ի վայր՝ սաստի՛ դարձոյց զն՞ս 'ի նմանէ։ Իսկ երանելին սկսաւ սաղմո-սել զճանապարհայն, և ասել. եթէ յարիցէ 'ի վ՞ր իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. տ՞ր է իմ օգնական, և ես տեսից 'ի թշնամիս
 իմ.

իմ . ՚ի ապրեցայ զնա ՚ի բերանոյ առիւծուց ,
և խառնեա զնա ՚ի գունդս ՚ոզց քոց ։
Յորմէ հասին ՚ի գեօղ մի՝ որում անուն էր գո-
կազարին կիմ դակոզարան (ըստ Հ. որեկան),
անդ կամեցան հանգչել վասն մի ՚ի տասնաժա-
մուն . և տիկին գեղջն այնորիկ հեթանոս
էր , և անուն նոր տիանէ կիմ տոյիանէ . որ
արար Ճաշ մագիստրիանոսի և որոց ըստ նմա .
բայց դպիրն ոչ գնաց , այլ կայր ըստ բասիլիս-
կոսի . և էր ՚ոչն կասկած ձեռս յետս , և
կայր առ ծառոյ միոջ . և բազում մարգիկ
ժողովեալ էին առ նա . և գիտէր ամ ոք , զի
ծառն գօս էր . և ՚ի մերձենալ ՚ոչն անգէն
դալարացաւ և ծաղկեցաւ . եղև և շարժումն
և ձայն ահեղ . և աղբիւր մի էլ ՚ի տեղւոջն ։
Յոր տեսեալ բազմութիւնն զսքանչելին՝ ան-
կանէին յոտս ՚ոչն բասիլիսկոսի , և ասէին .
այրս այս յայ եկեալ է , և չէ սա ՚ի մարգկա-
նէս ։ Յայնժամ բերին առաջի նր դիւահար
մի , և անդամալոյծ մի , և ս և բորոտս և այլ
ախտաժէտս , և ընկեցին առ ոտս ՚ոչն բա-
սիլիսկոսի . և նա անՀամբ ՚ոն բժշկեաց զնո-
և ոչք տեսանէին՝ փառաւոր առնէին զԱծ ,
և բազումք հաւատացին ՚ի ՚որ . ըստ որս և տի-
կին գեղջն հաւատաց յԱծ Հանդերձ որգւովք
իւրով տրայիանոսիւ . և Ամ տուն նր մկրտե-
ցան յանուն Տոյ և որգւոյ և Հոգւոյն ՚ոլյ ։
Յոր զՀարակք իսկ ՚ի լերանց դիմեցին և երբ
կիրպագին ՚ոչն , և խոնարՀեցուցեալ զծունգս՝
ցուցանէին գՀնանալ զնմանէ Թերևս վասն
բղխման ջրոյն . մինչև զարմանալ մագիս-
տրիա-

տրիանոսի և որոց ըն նմա , և ղղջանալ ընդ
չարիսն՝ զոր անցուցին ըն վկայն . և յայնմ
հետէ դիւր առնէին նմա ։

Եւ՝ ի վաղիւ անդր առաւօտուն յարեաւ մա-
գիստրիանոսն , էառ զնոքն բասիլիսկոս , և
եկն՝ ի կամրջախեղ գետոյն՝ որ կոչիւր երաս
կիմ իրիս , զի ոչ գոյր նորա այլ հուն . և կա-
մուրջն շարժեցաւ՝ ի հիմանէ՝ ի գալ ձգին .
վ՚ս զի անտեսաբար Ճանապարհակից եր քո
իւրումն վկայի՝ ասէ եւսիդնիոս , ոմն և ինքն
իսկ բասիլիսկոս յետոյ պատմեաց ինձ . յայն
ժամ յաղօթս եկաց՝ ձգն , և արձակեաց զամ
բոխն՝ որք զհետ ընթանային՝ ի գեղջէ՛ն .
և ուր և անցանէր ըն անդս երկրին կիմ ընդ
բարձր տեղիս , ծունր եդեալ յաղօթս կայր
և աստր . ըն ամ տեղիս տրուի քո ած . օրհնեա
անձն իմ զտր ։

Եւ իբրև հասին՝ ի գիւղ մի կոչեցեալ սուա
կիմասան , և կամէին Ճաշակել , ստիպէին և
զնոք վկայն առնուլ կերակուր . և նա ոչ կա-
մեցաւ , այլ՝ ասէ . զիս կերակրէ ած՛ն իմ և
տր յո՛ք ։ Եւ ասեն ցնա . այր դու գուցէ՛ ի
սովոյ մեռանիցիս , և կորնչիմք մեք վ՚ս քո .
զի ահա այս երեք աւուրք են , զի ոչինչ Ճա-
շակեցեր ։ Նոքա երանելին սկսաւ ուսուցանել
զնոսա , և ասէ . լցեալ եմ անմահ խորտիկօքն ,
և ոչ գոյ տեղի այս մահկանացուիս . զձեզ
պարարէ կերակուր , և զիս բանն ած . զձեզ
ուրախ առնէ գինի , և զիս շնորհք հոգւոյն
սրբոյ . զձեզ կերակրէ միս , և զիս աղօթք . զձեզ
ծածկեն հանդերձք ձեր , և զիս արդարութիւն
քո՛ի .

քն̄ի. դուք ցնծայք յերգս, և ես յաղօթս. դուք վայելէք յոսկւոջ, և ես յորդին ա̄յ։ Դուք յուսայք 'ի թգ̄ւորն՝ որ առժամանակ մի է, և ես յուսամ՝ որ յաւիտենիցն է. դուք յուսայք 'ի պատիւ՛ երկրիս, և ես յուսամ յերկինս. դուք յուսայք 'ի գովութի̄ս առ 'ի մարդկանէ, և ես յուսամ 'ի գովութի̄ս յաւուր յայնմիկ՝ յորժամ ասիցէ տ̄ր մեր. եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զարքայութի̄ն երկնից։

Եւ իբրև կատարեաց ն̄բն զխօսսն, հրամայեաց մագիստրիանոսն կազմել նմա գրաստ, զի նստցի 'ի վ̄ր̄ իշոյ միոյ։ Եւ իբրև ածին զգրաստն, ո՛չ կամեցաւ նստել. այլ ասէ. զձեզ հանգուցանեն երիվարք ձեր, և զիս հանգուցանէ տ̄ր յ̄ս ք̄ս։ Ասէ մագիստրիանոսն. զերիս աւուրս նօթի ընթանաս, նի՛ստ փոքր մի 'ի գրաստ. իսկ ն̄բն ասէ. զա̄մ հանգիստ և զդիւրութի̄ տայ ինձ ն̄բ հոգին։ Եւ 'ի վաղիւ՛ անդր հասին 'ի քաղաքն կոմանա. ուր լու՛ան վ̄ս բազմաց, եթէ չարչարեցին զն̄ս դառնութ̄՝ որ ոչն կամէին զոհել կռոց։ Եւ տ̄ր երևեցաւ բասիլիսկոսի, և ասէ. զօրացի՛ր և մի՛ երկնչիր 'ի սպառնալեաց անօրինաց, զի ես ը̄ քեզ եմ։

Եւ 'ի մտանել ն̄ց 'ի քաղաքն և 'ի հարցանել, թէ ո՞ւր իցէ դատաւորն, լու՛ան՝ եթէ 'ի տաճար ապողոնի երթել է՝ զոհս մատուցանել. և ամենայն քաղաքն անդր էին ժողովեալ. և եկն եմուտ մագիստրիանոսն առ դատաւորն, և ասէ. ահա ածի զբասիլիսկոսն.

կոսն։ Եւ դատաւորն ուրախ եղև, իբրև լուաւ զայս. և հրամայեաց ածել 'ի ներքս զՆբ վկայն, զի զոհեսցէ. և եթէ ոչ կամեսցի, չար մահու սպառեսցի։ Եւ ելին զինուորքն և գրգռէին զնա, և ասէին. Երթ 'ի ներքս, զի դատաւորն հրամայեաց քեզ զոհել, զի կեցցես. և եթէ ոչ, չար տանջանօք կորնչիս. զննեա՛ զքեզ, զի մի՛ անժամ մեռցիս՝ հաւատալով անպատճառ յանտես ա՛ծն։ Եւ Նբ վկայն ասէ. իմ ա՛ծն յա՛մ ժամ տեսանէ զընտրեալս իւր, և արժանաւորք իւր տեսանեն զնա 'ի ձեռն նշանաց և սքանչելեաց նորին. եթէ ես լռեմ, դոքա ասեն ձեզ՝ որ Ը՛ իսդ էին 'ի ճանապարհին, և տեսանէին զսքանչելիսն քՆի՝ ո՛ւր և անցանէաք։ Յայնժամ զօրականքն սկսան պատմել զոր տեսինն. և ասեն. արդա՛րև մեծ սքանչելիս տեսաք, ուր ոչ գոյր մոգու՛ի ինչ։ Եւ ասեն ցնա զինուորք դատաւորին. միայն միանգամ զոհեա՛, և արձակիս. և այնուհետև զի՛նչ

կամիս՝ արա՛։

Եւ մինչդեռ զայս խօսէին, եկն նուիրակապետ մի, և ասէ ցնա. կոչէ զքեզ դատաւորն, զի զոհեսցես ա՛ծոցն Նը՛։ Յայնժամ եմուտ բասիլիսկոս առաջի դատաւորին լի ուրախութ՛ը վՆ մերձենալոյ ժամուն նահատակութ՛ն. և երեսք իւր պայծառացեալ էին, և մարմինն ծաղկեալ։ Եւ ասէ ցնա դատաւորն. դո՞ւ ես բասիլիսկոսն. և նա ասէ. այո՛ ես եմ։ Դատաւորն ասէ. Ը՛էր ոչ զոհես։ Բասիլիսկոս ասաց. քեզ ո՞վ ասաց,

սաց, եթէ ոչ զոհեմ. զի ես իմոյ ա̅յն յա̅մ
ժամ մատուցանեմ պատարագ օրհնութ̅ե։
Առ այս զուարճացաւ դատաւորն, և ասէ.
շնո՛րհք ա̣ծոցն, զի բասիլիսկոսն ասաց, թէ
ես յա̅մ ժամ զոհեմ ա̣ծոցն։ Իսկ բասիլիս-
կոս մերձեցաւ առ բեմն, և ասէ ցպաշտօ-
նեայս կռոցն. զի՞նչ անուն է ա̣յն ձերոյ.
ասեն ցնա. ապողոն։ Եւ ասէ ցնս̅. բարիո՛ք
ասացիք, թէ ապողոն ասի (որ է յունարէն՝
կորուսանօղ), քանզի կորուսանէ զայնոսիկ՝
որ հաւատան 'ի դա. այլ զոր գիտեմն ես
զփառաւորել̅ն ա̅ծ, նմա մատուցանեմ պա-
տարագ օրհնութ̅ե։ Եւ դատաւորն ասէ.
որո՛ւմ կամիս՝ զոհեա՛, և ե՛րթ թափեա՛ ըզ-
մեզ 'ի քէն։
Իսկ ս̅բն բասիլիսկոս սկսաւ մատուցանել
զիւր բանաւոր պատարագս, և ասէ. Ա̣ծ՝
որ արարիչդ ես երկնի և երկրի, ա̅ր ամենա-
կալ՝ դու միայն ես ճշմարիտ ա̅ծ հանդերձ
միածնիւ՛ քով և հոգւովդ ս̅բվ. ա̅ծ անտե-
սանելի և անհասանելի, անպարագրելի և
անբովանդակելի. ա̅ծ՝ որ քաւիչդ ես մե-
ղաց, որ բազումողորմդ ես, ա̅ծ՝ որ անս-
պառդ ես, ա̅ծ՝ որ մշտնջենաւորդ ես. և ոչ
գոյ առաջի քո ակնառութ̅ի. դու ես ս̅բց քոց
յա̅մ ժամ օգնական. դու միայն ս̅բ և բա-
րերար ա̅ծ ես, և արդար յա̅մի. և յիս ցո՛յց
զքո գթութի̅դ։ Որ զերկինս ձգեցեր իբրև
զօթոց, և զերկիր հաստատեցեր 'ի վերայ
ջուրց. որ զերկնական ջահն զարեգակն ա-
րարեր լուսաւորիչ երկնի և երկրի, և նո-
վաւ

վաւ երևեցուցեր զաւուրս, զտարիս, զամիսս և զժամս, և զբուսոց աճմունս։ Տէր ամենակալ, որ զլուսինն արարեր, և բազում պէտս 'ի նմանէ պատրաստեցեր մարդկան. և զաստեղաց բազմութիւն։ Որ ետուր երկրիս գեղեցկութիւն ծառովք և բուսովք. որ պսակեալ զարդարեցեր գոյնագոյն ծաղկօք. որ զպտուղսն 'ի կերակուր շնորհեցեր մեզ։ Որ զծով արարեր, և սանձեցեր զյանդգնութիւն ալեաց նը̄ դուզնաքեայ աւազով. որ ցուցեր 'ի նմա շաւիղս նաւի։ Որ արարեր զմեզ և ստեղծեր 'ի քս̄ ն̄բ պատկերդ. կերպարանեցեր անմահութ̄բ և անձնիշխանութ̄բ. որ փչեցեր 'ի մեզ զհոգին սրբութ̄ե. որ յադամայ մինչև ցայժմ, և յայսմ հետէ և առյապայն պահես զսիրելիս քո, և փառաւորես զերկիւղածս քո. որ բառնաս զմեղս և փոխադրես զանօրէնութ̄իս. տ̄ր դու միայն ես ն̄բ և անբիծ։ Տէր ամենակալ լո́ւր ձայնի խնդրողիս քո, և ա́րկ զահդ քո 'ի վ̄ր կըռոցս այսոցիկ, որ խուլ և համր են. և յանդիմանեա́ զանօրէնութ̄ի սոցա, և ցրո́ւեա́ զստեղծեալ հաստո́ւածս սոցա. զի ծանիցեն՝ թէ դու միայն ես ա̄ծ. ցո́յց զզօրութ̄ի գիտութ̄ե քո։

Եւ անդէն վաղվաղակի եղեն ահագին շարժմունք և որոտմունք, և անկաւ հուր յերկնից 'ի տ̄նէ 'ի վ̄ր տաճարին, և այրեաց և փշրեաց զդիս նոցա, և աւերեաց զերևելի մասն տեղւոյն։ Իսկ դատաւորն իբրև ետես զայն, փախեաւ. և ա̄մ բազմութ̄ին և զօրականքն

կանքն զահի հարան յոյժ, և խոյս ետուն արտաքս. և մնաց միայն 'ի ներքս նբն, և սկսաւ սաղմոսել և ասել. յարիցէ՛ ա՛ծ, և ցրուեսցին ա՛մ թշնամիք նր. փախիցեն ատելիք նր յերեսաց նր. ո՛պ պակասէ ծուխ՝ պակասեսցին. ո՛պ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց ա՛յ:

Իբրև էանց ցասումն, կոչեաց անօրէն դատաւորն ագրիպպաս զնբն առաջի իւր, և կրճտելով զատամունս իւր 'ի վր նր՝ ասէ. ո՛վ թշնամի ա՛ծոց՝ ը՛էր ը՛ իս զայլ ինչ խօսեցար, և դու այլ ինչ արարեր. զի փոխանակ զոհելոյ՝ զտաճարն հանդերձ ա՛ծովքն այրեցեր. և եթէ ոչ էիր դու կախարդ, ապաքէն և դու այրեալ էիր 'ի տաճարին. զի դու միայն մնացեր անդ, և ոչ վնասեաց քեզ հուրն. և արդ ասա՛ ինձ, զոհ՞ս ա՛ծոց. ապաթէ ոչ՝ սպառեցից զքեզ իբրև զայր մի մահապարտ: Պ՛խնի ետ նբն. ես ո՛չ զոհեմ անօրէն և պիղծ կռոցդ քոց. այլ մատուցանեմ պատարագ օրհնութ՞ե հօր և որդւոյ և հոգւոյն նբյ: Դարձեալ ասէ ագրիպպաս. զոհեա՛ անմահ դից, զի մի՛ մատնեցից զքեզ 'ի դառն մահ: Բասիլիսկոս ասէ. վայրենի՛ ժանտ, զի՞ զիս խափանես. քանզի փութամ ես կատարել զընթացս իմ:

Բարկացաւ դատաւորն յոյժ, և հրամայեաց տանել գլխատել զնա. և հանին զնբն արտաքս. և յետ կալոյ նր յաղօթս՝ գլխատեցին 'ի տեղւոջն, որ անուանեալ է դէոսկորիոն կամ դիոսկուրացւոց: Եւ բռնաւորն

պատ-

պատուէր ետ զմարմին ՆԵՐՅՆ գետընկէց առ-
նել. և ասէր. եթէ գտանիցի ոք առեալ զմ-
արմին նորա, զնորա մարմինն գէշ գազա-
նաց արկից. այլ ՆՈՐ խափանեաց զխորհուրդս
նՐ. մինչև աղօթիւք ՆԵՐՅՆ գալ և դատաւորին
'ի հաւատս. զոր և սկսանի դրել ականատես
վկայաբանս ԸՆ օրինակիս ԸՆ այսմիկ ։

* Եւ այլ ևս բազում օրհնութիՆք են սԵՐՅՆ.
և գիտեմք զսրբութիՆ նՐ. և տեսաք զհոգի
նՐ, զի վերացաւ յերկինս. և զօրք հրեշտա-
կաց եկին ԸՆառաջ նՐ, և ընկալան զհոգի ՆԵ
վկային ։ Եւ ՆՈՐ մեր յՆ քՆ ասէր. եկ աշխա-
տեալ և վաստակեալ, և ես հանգուցանեմ
զքեզ. եկ բասիլիսկէ մուտ յերկնից արքայ-
ութիՆ յերամս արդարոց, ուր ենն և որք ըմ-
բռնեցան ԸՆ քեզ 'ի վկայութիՆ վՆ իմ ։ Եւ
մեք առհասարակ՝ որք միանգամ տեսօղք ե-
ղեաք խորհրդոյս, և լուաք զայս բարբառ
ՆՈՆ, անկեալ 'ի վՐ երեսաց՝ երկրպագեցաք
ՆՈՆ, գոհանալով զնմանէ՝ որ արժանի արար
զմեզ տեսանել զխորհուրդս զայս ։

Եւ 'ի տանել պրիսկոսի դահճապետի զմար-
մին ՆԵՐՅՆ ընկենուլ 'ի գետ, աղաչեցաք զնա
սպասել փոքր մի, և տուաք նմա գաղտ յըն-
կերաց նՐ երեսուն դահեկան ոսկի. յայն-
ժամ ասէ այրն ցընկերս իւր. երթայք դուք,
և ես գետընկէց արարեալ զդա՝ գամ առ ձեզ.
և նՐ հաւատացին նմա, և 'ի բաց չոքան. և
պրիսկոս ետ մեզ զմարմին ՆԵՐՅՆ բասիլիսկո-
սի ողջոյն, ասելով. մի՛ ոք գիտասցէ, զի մի՛
վտանգ ինձ հասանիցէ ձեօք հանդերձ ։ Եւ
'ի

'ի մեկնիլ նր առել մեր զմարմին նբ վկային՝ եդաք 'ի թաքստի. և 'ի գիշերի բերել թաղեցաք յարտավարի միոջ ('ի վարել արտի), և սերմանեցաք 'ի վր նր ոսպն. և 'ի նոյն գիշերի բուսաւ արտն. և 'ի վաղիւ անդր ծաղկեալ պտղաբերեաց:

Եւ ծարաւեաց մշակ տեղւոյն՝ որ էր հեթանոս. և 'ի խնդրել մեր յանուն սբյն ջուր 'ի տնէ՝ նոյնժամայն ել աղբիւր մի 'ի տեղւոջն, և արբ մշակն, և հաւատաց յած. արբաք և մեք, և զովացեալ գոհացաք զայ. և մինչև ցայսօր ջուր յորդառատ բղխէ յաղբերէ անտի 'ի գովեստ փառացն այ, և վկային քնի բասիլիսկոսի. և առողջութիւն լինի հիւանդաց՝ որք հաւատով արբցեն 'ի նմանէ:

Եւ ը աւուրսն ը այնոսիկ այս պիղծ հարաւ 'ի դատաւորն ագրիպպաս, և խնդրէր նա զմարմին նբյն, և ասէր. միայն թէ մերձենամ 'ի նա, անդէն ողջանամ. և ոչ ոք իշխէր ցուցանել նմա: Չոգաւ 'ի տեղին՝ ուր նբն գլխատեցաւ. և եգիտ նշան կաթ արեան, և քերեաց հանդերձ հողովն, և ծրարեաց 'ի նբ կտաւս, և արկ ը պարանոց իւր (որպէս ուսանոց). և սրբեցաւ յայսոյն պղծոյ. և հաւատաց 'ի տր մեր յս քս. և մեռաւ բարեաւ ագրիպպաս||:

Յետ այսորիկ յաւուրս քրիստոնէութեան առ մեծն կոստանդիանոսիւ շինեաց մարինոս կոմս մօտ 'ի քղքն կոմանայ մատուռն 'ի վր գերեզմանի նբյն բասիլիսկոսի. և առնէր ժողով տօնախմբութեան յանուն նբյն. և նոյն

վկայարան է՝ ուր հանգեաւ յետ ժամանակաց ՆԲն յովհան ոսկեբերան յաւուրս աքսորանաց իւրոց, յորժամ երևեցաւ ՆԲն բասիլիսկոս ԸՆ ՆԲյն զուկիանոսի քահանայի անտիոքացւոյ, և ասաց ցոսկեբերանն. զօրացի՛ր և քա՛ջ լեր եղբա՛յր յովհաննէս, զի վաղիւ՛ն 'ի միասին լինիցիմք. ոՊ և երիցու վըկայարանին երևեալ՝ ասացեալ էր նմ. պատրաստեա՛ տեղի եղբօր մերում յովհաննու. զոր և յետոյ պատմէր ամենեցուն քահանայն այն, որՊ և ԵՊս տեղւոյն ։ Եւ յայսպիսի բանից կարծեցին գրիչք ոմանք, թէ նա ինքն բասիլիսկոս ևս իցէ քահանայ կմ ԵՊս. որ ԸՆ ստոյգ պատմուԵն էր զօրական ։ Եւ եղև կատարումն ՆԲյն բասիլիսկոսի յամի ՊՆ իբր 307 կմ 308, յաւուր կիւրակէի, յամսեանն մայիսի՝ որ օր ԻԸ էր ամսոյն, ըստ Ճառընտրաց ։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Բասիլիոսի կմ̄ բասիլիսկոսի քահանայի անկիւրացւոյ ։

Հ. յունվար. 2. և 14 ։ Յ. յունվր. 2. և մարտ. 22 ։ Լ. մարտ. 22. Ասոր. փետր. 14 ։ Արաբ. մարտ. 22 ։ Բոլլանդեան՝ 'ի յնվ. 2. և 'ի մարտի. 22. էջ. 15 = 18. և 379 = 383 ։ (3)

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅՆ բասիլիոս (կմ̄ ը̄ մեզ բասիլիսկոս) էր մի յերիցանց եկեղեցւոյն ա̄յ՝ որ յանկիւրիա գաղատացւոց, առ տ̄րութ̄ կոստանդեայ կայսեր և յուլիանոսի ուրացողի, ուսուցիչ ա̄մ մարդոյ զՃանապարհն Ճշմարտուե՝ որ 'ի տ̄ր մեր յ̄ս ք̄ս, և դարձուցիչ 'ի Ճանապարհաց սատանայի և յա̄մ ներգործուե̄ց ն̄ր, իբրև ախոյեան հզօր ը̄դէմ արիանոսաց և արբանեկաց ն̄ց, ոպ̄ և ը̄դէմ հեթանոսաց և ուրացողաց ։ Բանզի ասէր. խիստ ժամանակ կայ առաջի, և բազմապատիկ են զօրավարք բանսարկու՛ին. վ̄ս զի պաշտօնեայս ունի գառնազգեստս, որք 'ի ներքոյ են գայլք յափըշտակօղք, և յածին որսալ զհոգիս անզգոյշ ընթանալեաց. զորոց զկատարածն ժամանակս

նակս յայտնի արասցէ ամենեցուն ։ Եւ արդ միաբան 'ի խորհուրդս քո̄ի կրթեալքս պընդապէս՝ զառաջնորդ հաւատոյ մերոյ մեծարեալ, և զանապական զգանձն յանմատոյց ամուրս հոգւոց պահեալ, առ ոտն կոխեսցուք զհոյլս մոլորութե̄ց բանսարկու՛ին, և փախիցուք 'ի պիղծ հրապուրանաց նը̄, զքո̄ ունելով օգնական զյաւիտենիցն վարձահատոյց ։

Եւ զայս առնէր ո̄բ քահանայն զօրհանապազ՝ շրջելով ը̄ քաղաքն ա̄մ, և յանձանձելով զա̄մ մարդ՝ պինդ ունել զհաւատս ճըշմարտուե̄ զոյգ ը̄ գործոց բարուե̄, և փախչել 'ի հանդերձելոցն չարեաց ։ Արգելուլ կամեցան արիոսեանք և մակեդոնեանք ըզքարոզութի̄ սբ̄յն, բայց ե̄պսունք ուղղափառաց հրաման ետուն նմա համարձակ քարոզել զբանն ա̄յ. քանզի և ինքն իսկ աշակերտեալ էր ա̄ծիմաստ արանց, և էր մի 'ի ծանուցելոց յարքունի պալատան. և զի ունէր վարս անպարսաւս և գովելիս առաջի ա̄յ և մարդկան, ոչ ոք իշխէր ստնանել ինչ նմա ։ Եղև զնմանէ ամբաստանուի̄ առաջի կոստանդեայ կայսեր իբրև քարոզ լինել նորաձայնութե̄. այլ այրն ա̄յ հաւատարմացոյց, եթէ ա̄միւ՛ հաստատուն պահէ զաւանդ հարցն սբ̄ց առաջնոց, և անմեկնելի կայ մ̄նայ յուղիղ դաւանութե̄ ։

Իսկ յորժամ թ̄գրեաց ուրացօղն յուլիանոս, և եհան հրաման դառնութե̄ պաշտելոյ ըզկուռս հեթանոսաց յա̄մ տեղիս, նոյնպէս և

'ի գաղատիա, ն̄բ քահանայն բասիլիոս հրա-
պարակաւ օրհնելով զա̄ծ 'ի մէջ քաղաքին
անկիւրիոյ՝ ասէր. Փրկի՛չդ Ծի քո, անշիջա-
նելի՛ լոյս, յաւիտենիցն մեծութեց գանձ,
կամօք հօր փարատիչ խաւարի, և հայրական
հոգւով ա̄մի հաստիչ, հայեա՛ց ն̄բ և ահաւոր
ակամբ քով, և ցրեա՛ զպիղծ կրօնս հակա-
ռակորդաց ճշմարտութեն քո, արգել զն̄ 'ի
ցանկութէ սրտից ն̄ց. զի խորտակեսցի փուտ
խորհուրդ ն̄ց, և մի՛ լինիցին խափան անձին
հաստատելոյ 'ի քեզ ա̄ծ կենդանի յաւի-
տենից:

Իբրև զայն լու՛ան հեթանոսք, բարկացան
յոյժ. և մին 'ի նոցանէ մակարիոս անուն
բուռն եհար զքահանայէն՝ և ասէ. ո՞վ ես
դու, որ շրջիս յարուցանես զամբոխն, և
քակես զառ յինքնակալէն գեղեցիկ պատ-
ու՛իրեալ կրօնս ա̄ծոց: Բասիլիոս ասէ. ո՛չ
եթէ ես ինչ խափանեմ, այլ ա̄ծ յերկնից
աներևոյթ զօրութ̄ խափանեսցէ զայն.
նոյն և այժմ ցրու՛եսցէ և կորուսցէ զա̄մ
խորհուրդս ձեր. զի 'ի յետին տկարութ̄ի
վատթարեալ քակտեսջիք, և ժառանգես-
ջիք զպատրաստեալն ձեզ մահ անհնազան-
դութ̄ն:

Յայնժամ բորբոքեցան ը̄դէմ ն̄ր անօրէնք.
և առեալ տարան զնա առ դատաւորն սա-
տոռնինոս, և ասեն. այրս այս ամբոխ յարու-
ցանէ 'ի քաղաքիս, և մոլորեցուցանէ զբա-
զումս. և այժմ եկեալ՝ կամէր և զբագինս
կործանել, հայհոյելով զինքնակալն: Սա-
տոռ-

տոռնինոս դատաւորն ասէ. ո՞ ես դու՝ որ ցայդ վայր յանդգնիս։ Բասիլիոս ասէ. ըզ-մեծն քան զա՜մ ասացից, քրիստոնեայ եմ։ Սատոռնինոս ասէ. եթէ քրիստոնեայ ի-ցես. զի՞ է՝ զի զքրիստոնէի գործ չգործես։ Բասիլիոս ասէ. բարիո՛ք ասես ո՛վ դատա-ւոր, զի պա՛րտ է գործոց քրիստոնէի՝ ամե-նեցուն յայտնի լինել. զայդ արդար ասացեր։ Սատոռնինոս ասէ, և զիա՞րդ խռովես զքա-ղաքդ, և զինքնակալն հայհոյես ոա՜ ուրա-ցօղ և յանցաւոր։ Բասիլիոս ասէ. ո՛չ զինք-նակալն հայհոյեմ, և ո՛չ զառ 'ի նմանէ հաս-տատեալ կրօնն. վ՜ս զի ստուգա՜ն ինքնակալ նա ինքն է ամենակալն ա՜ծ, որ ընակեալն է յերկինս. և արժանաւոր պաշտօնեայք ն՜ր կրօնասէրք՝ հարքն մեր, որք յա՜մ ժամ երկիր պագանեն նմ՜ի ն՜բ սրտէ. նա փութով կարօղ է քակել զառ 'ի ձէնջն սահմանեալ անհնա-րին անօրէնութ՜ի. իսկ թագաւորն ձեր ա՜ծ-ամարտ՝ ինքնակալ ձայնեալ, 'ի վաղիւ՛ն ան-կանի 'ի ձեռս թագաւորին մեծի երկնաւո-

րի, զի մարդ է երկրաւոր։

Ո՞ այս լուեալ դատաւորին՝ խռովեցաւ. հրա-ման ետ կախել զնա և քերել. իսկ ն՜բն 'ի կախաղանի անդ ասաց. գոհանամ զքէն ա՜ր ա՜ծ յաւիտենից, զի արժանի արարեր զիս 'ի ձեռն կատանացս տեսանել զՃանապարհ կե-նաց. զի եկեալ ը՜ այն առ քեզ՝ տեսից ըզ-խոստմանցդ ժառանգութի՜։ Եւ մինչդեռ քերէին զնա, ասէ դատաւորն. զի՞ ասես բա՛սիլիէ, առե՞ր 'ի միտ՝ թէ կարօղ է ինք-

նակալն զստամբակեալս յիւրմէ արագ տան-
ջել. արդ հնազանդեա՛ նմա, զի ը̄ փորձ
անցեր չարեաց։ Բասիլիոս ասէ. ասացի քեզ
օտա՛րդ 'ի յուսոյն քո̄ի, թէ հնազանդեալ
եմ ճշմարիտ թագաւորին. և փոխիլ յայնմ
խորհրդոյ չկարեմ։

Եւ յետ կրկին հարցափորձի՝ իբրև չէառ
վկայն յանձն զոհել, յղեաց զնա դատաւորն
'ի բանտ. և 'ի ճանապարհի ը̄առաջ ելեալ
նմա փելիքս ոմն պիղծ՝ ասէ. բա՛սիլիէ ը̄էր
կամիս ը̄ կորուստ անձինդ. մանաւանդ ապ-
րեցո՛ զանձն քո, և բարեկա՛մ լեր ոյծոց. ո-
րով և խոստմանց հասցես ինքնակալին. ա-
պաթէ ոչ՝ յիրաւի տանջիս։ Ասէ ցնա վկայն.
'ի բա՛ց գնա ո՛վ ապիրատ և անմաքուր օտա-
րացեը̄դ 'ի ճշմարիտ խոստմանց. ք̄զի զիա՞րդ
դու ինքն 'ի խաւարի գոլով՝ կարօղ իցես ակ-
նարկել 'ի ճշմարտութի՛ն, ուր ոչ տեսանես
զխաւարն որ մածեալ է զքև։ Զայս ասա-
ցեալ՝ չոքաւ եմուտ 'ի բանտն։

Իսկ դատաւորն զեկոյց ինքնակալին յուլիա-
նոսի վ̄ն բասիլիոսի, զի երևելի էր այրն և
համբաւեալ իմաստութ̄ը և առաքինութ̄ը։
Եւ թագաւորն առաքեաց զելպիդիոս ոմն
կորստեան վ̄դպ, և զպեգասիոս զկապտեը̄ն
յերկնաւոր գանձուց (ք̄զի ուրացօղք էին).
և նց̄ եկեալ նախ 'ի նիկոմիդիա՝ գտանեն
զասկղեպիոս քուրմ չա̄յն ասկղեպեայ. և ա-
ռեալ զնա ը̄ իւրեանս՝ գան երեքեան որ̄պս
զօրավարք սատանայի պատերազմել ը̄ սբ̄յն։
Իբրև հասին յանկիւրիա՝ հարցին և գիտա-
ցին,

ցին, եթէ 'ի բանտի անդ ոչ դադարէ բասի-
լիոս յօրհնելոյ և 'ի փառաւորելոյ զա՞ծ զտիւ՛
և զդիշեր։

'Ի վաղիւ՛ անդր եկն պեգասիոս 'ի բանտն,
ողջոյն ետ սբ՞յն և ասէ. ուրա՛խ լեր բա՛սի-
լիէ։ Պ՞ինի ետ ն՞բ քահանայն. ո՛չ է քեզ ու-
րախ լինել ուրացօ՛ղդ և մատնիչդ ճշմար-
տութ՞ե. որ երբեմն հաղորդ էիր աղբերն
ք՞ն, իսկ այժմ լի ժահահոտութ՞ը լու՛ա-
լեաց. երբեմն խորհրդոցն ք՞ն մասնակից,
և այժմ ատելի ք՞ն. երբեմն սեղանոյն ք՞ն
բաժանորդ, և այժմ սեղանոյ դիւ՛աց կցորդ.
երբեմն առաջնորդ լուսոյ, և այժմ խաւարի
ժառանգորդ. երբեմն վ՞դպ ճշմարտութ՞ե,
և այժմ առաջնորդ կորստեան. երբեմն տօ-
նակից ն՞բց, և այժմ պարակից զինու՛որու՞ե
դիւ՛աց. երբեմն առաջնորդ մոլորելոց 'ի խա-
ւարի, և այժմ խաւարամած. զիա՞րդ կորու-
սեր զյոյսն քո, ո՞րպէս կապտեցաւ 'ի քէն
գանձն հոգւոյ. զի՞նչ ունիս առնել, յոր-
ժամ այց արասցէ քեզ տ՞ր։

Եւ զայս ասացեալ՝ յաղօթս եկաց այսպէս.
Փա՛ռք քեզ ա՞ծ՝ որ ճանաչիս 'ի քոց ծառայից,
և լուսաւոր առնես զցանկացօղս ա՞ծութ՞եդ
քո, և մեծարես զյուսացեալս 'ի քեզ. և յա-
մօթ առնես զատեցօղս պատու՛իրանաց քոց.
որ աւետարանես հեռաւորաց զփրկու՞ի, փա-
ռաւորեա՛լդ 'ի յերկինս, և երկրպագեալդ
'ի յերկրի. կամեա՛ց ա՞ծ բարձրել՝ զա՞մ աղխս
չարին 'ի բաց խզել յանձնէ ծառայի քո, զի
մաքթացայց ճողոպրիլ 'ի հաղբից բարիա-

տեաց բանսարկութիւն, և վանել զզօրութիւն
խիզախողաց։

Եւ զայսոսիկ լուեալ պեգասիոսի՝ ել՛ի բան-
տէն տրտմութիւն, և չոքաւ պատմեաց զամն
ընկերաց իւրոց։ Իսկ նոցա դժուարեալ ընդ
տրտմութիւն նոր՝ եկին և պատմեցին դատա-
ւորին. և դատաւորն կամեցեալ բժշկել
զպեգասիոս՝ հրաման ետ ածել զարդարն
զառաջեաւ։ Արդ եկեալ նոքյն յատեան՝ կըն-
քեաց զանձն նշանաւ նոք խաչին, և ասէ ցդա-
տաւորն. զոր ինչ կամիս՝ արա՛։ Իբրև լուաւ
ելպիդիոս զհամարձակախօսութիւն նոր, ասէ.
Թափեալ է՛ի մտաց ամենապիղծդ այդ. և
արդ եթէ՛ի հնազանդութիւն գայցէ տանջա-
նօք, շահեցաւ զանձն. ապա թէ ոչ՝ քաջի
արանցն պահեսցի։

Յայնժամ դատաւորն միւսանգամ ետ կա-
խել զնա, և պրկել փոկովք ուժգին. զի առ
չժուժելոյ տանջանաց հաւանեսցի ասէ զո-
հել։ Բասիլիոս ասէ. ո՛վ անոք՝ արա՛ զոր կա-
միսդ, ըստ քեզ ունելով զհակառակորդ զօրու-
թեն զօրագլուխս. զի ո՛չ դու ինչ զօրեսցես
առ իս, և ո՛չ խորհրդակիցք քո. քանզի ու-
նիմ ինձ օգնական զքոյ։ Սատոռնինոս ասէ.
առէք երկաթս ծանունս, և արկէք զպարա-
նոցաւ դորա և զձեռօք. զի այսպս երևեսցի
յանդիման ինքնակալին. այլ այժմ՛ի բանտն
երթիցէ։

Իբրև անցին աւուրք սակաւ, դէպ եղև թա-
գաւորին խաղալ յարևելս. և իբրև եկն նա
յանկիւրիա, ըստ առաջ եղեն նմա պաշտօնեայք
սա-

սատանայի՝ ունելով ընդ իւրեանս զկուռս
եկատեայ (ոյ՞ անահտայ)։ և այն օր մտել
յապարանս՝ բաշխեաց պարգևս քրմաց։ Եւ
'ի վաղիւ՛ անդր յետ կատարման հանդիսից
տեսարանին՝ պատմեաց ելպիդիոս արքայի
զգործս բասիլիոսի քահանայի։ և նա հրա-
ման ետ ածել զնա յապարանս։ Եկն եկաց
ն՞բն բասիլիոս զու՛արթ դիմօք։ և ասէ ցնա
յուլիանոս։ զի՞նչ անուն է քո։ Սբ՞ն ասէ։ ը՞
կարդի ասացից ա՛րքայ, թէ ո՞ իցեմ։ առաջին
անուն իմ քրիստոնեայ է։ իսկ ք՞ն՝ին անուն՝
նախայաւիտեան, որ 'ի վեր է ք՞ զմարդկան
խորհուրդս։ և երկրորդ՝ բասիլիոս 'ի մարդ-
կանէ կոչիմ։ արդ եթէ անունն ք՞ն՝ի անարատ
պահեսցի 'ի մեզ, յաւուրն դատաստանի
վարձս անմահուն՝ ընկալցուք առ 'ի նմանէ։
Յուլիանոս ասէ։ մի՛ խաբիր բա՛սիլիէ, զի
չե՛մ անտեղեակ որոց առ ձեզ են խորհուրդք։
'ի նա՞ հաւատաս, որ մահու մատնեցաւ առ
պիղատոս դատաւորաւ։ Բասիլիոս ասէ։ ո՛չ
խաբիմ ա՛րքայ։ զի դու ուրացօղ լեալ՝ մեր-
ժեցեր զարքայութի՞ն ա՞յ 'ի բաց։ ուստի հա-
ւատամ ք՞ն՝ի իմոյ, զի զոր փութով արհամար-
հեցեր զտու՛օղն քեզ զթ՞գրութի՞, նա ինքն
դարձեալ փութապէս բարձցէ զայն 'ի քէն։
զի ծանիցես, թէ զո՛րպիսի ա՞ծ թողել՝լքեր։
Գիտաց յուլիանոս, եթէ սաստիկս բարբա-
ռի վկայն՝ զի մարտիրոսացի փութով։ վ՞ն՝յ
ասէ։ մոլիս, և ո՛չ արարից զքո կամս, ո՛վ
անմիտ։ Բասիլիոս ասէ։ և ո՛չ զհատուցումն
ն՞ր յիշեցեր։ և ո՛չ զն՞բ սեղանն՝ որով ապրե-

ցար, պատուհեցեր. և ո՛չ զօրէնսն՝ զոր բերա-
նով բազում անգամ քարոզէիր, պահեցեր.
և ո՛չ ինքն մեծ արքայն քս՝ յիշեսցէ զքեզ.
այլ արագ արագ բարձցէ 'ի քէն զառժամա-
նակեայդ թգ՝րութի՝. և անհնարին ցաւօք վախ-
ճանեսցիս զմահ, և մարմին քո ո՛չ լիցի ար-
ժանի հողոյ:

Յուլիանոս ասէ. ես ո՛վ անս՝ք կամէի զքեզ
արձակել. բայց քանզի յաճախագոյն անա-
մօթութ՝ բ՝ բերեալ՝ ոչ հնազանդիս ինձ, և
բազմօք իսկ թշնամանեցեր զիս, վ՝սկ հրա-
մայէ ինքնակալութ՝ի՝ս իմ ջլակոտոր առնել
զքեզ՝ հանելով 'ի մարմնոյ քումմէ օր ը՝ օրէ
փոկս եօթն: Եւ անդէն հրամայեաց փրուբե-
տիմոսի կմ փրումենտիանոսի կոմսի տանել
զնա 'ի բաց, և տալ կտրատել զմորթ նորա:
Եւ յորժամ կրէր երանելին քաջութ՝ բ՝ զայն
անմարդի տանջանս քստմնելիս, ասէ ցկոմսն.
կամէի այժմ հանդիպել արքայի, և խօսել
ը՝ նմա: Եւ ն՝ր ուրախացեալ՝ ո՝պ թէ հաւա-
նի զոհել, եմուտ և պատմեաց արքայի՝ ասե-
լով. տէր իմ ինքնակալ, բասիլիոս չհանդուր-
ժեալ տանջանաց՝ կամի յանդիման լինել
ինքնակալութ՝ է քում: Օ այն իբրև լուհաւ
թ՝գ՝ւորն, ել գնաց 'ի տաճարն ասկղեպեայ,
հրաման տուհեալ անդր բերել զարդարն:
Արդ եկեալ՝ բասիլիոսի 'ի տեղին՝ ասէ ցթ՝գ՝րն.
ո՞ւր են ա՛րքայ քուրմք քո և գէտք քո, որ
ոչն մեկնին 'ի քէն. եթէ պատմելո՞վ պատմե-
ցին քեզ զպատճառս գալստեան իմոյ առ
քեզ: Յուլիանոս ասէ. ինձ այսպէս թուհի,

եթէ զգօն եղեր, և իմաստնացեալ՝ խորհիս կցորդ մեզ լինել, և ճանաչել քեզէն այսուհետև զածսն։ Բասիլիոս ասէ. այլ զի գիտասցես ա՛րքայ, թէ ոչինչ են՝ զորս կոչես ածս. զի կուռք են խուլք և կոյրք, որք 'ի դժոխս իջուցանեն՝ զորս հաւատանն 'ի նս։ Ո այս ասացեալ՝ էառ զմի 'ի փոկից հատելոց 'ի մարմնոյ իւրմէ, և ընկէց զայն յերեսս ուրացողին՝ ասելով. ա՛ռ յուլիանէ, ա՛յս են քո փափուկ կերակուրք. այլ ինձ կեանք քս է, և մեռանելն շահ. իմ օգնականութի՛ս քս է, յոր հաւատամ, վ՛ս որոյ և չարչարիմ։ Յայնժամ յամօթ եղև ուրացօղն, և հրամայեաց տանել զնա 'ի բաց. իսկ քրիստոնեայք երանի՛ տային ՝ս՝ բյն վ՛ս 'ի քս խոստովանուէ և անտանելի կրից չարչարանաց. մինչև հեթանոսաց անգամ ողորմիլ 'ի վ՛ր նր։

Բայց կոմսն ել յերեսաց արքայի շառագունեալ. քանզի գիտաց՝ եթէ բարկացաւ ՝ն նա վ՛ս պատճառս տալոյ թշնամանացն։ Եւ մըտէ՝ կոմսին յապարանս՝ ետ անխնայ կտրատել զմորթ ՝ս՝ բյն դժնդակ և ս քան զօրըստօրէն. մինչև երևիլ և յօրինուածոյ աղեաց նորա։ Իսկ երանելին աղօթէր 'ի տանջանս անդ, և ասէր. Որհնեա՛լ ես տ՛ր ա՛ծ՝ յոյսդ քրիստոնէից, որ հաստատես զանկեալս և կանգնես զգլորեալս. որ փրկես յապականուէ՝ զյուսացեալսն 'ի քեզ, և բժշկես զբեկումն մեր, բարեսէր և բարեգութ, ողորմած և երկայնամիտ. նայեա՛ց 'ի սրբութէ՝

փա-

փառաց քոց, և տուր ինձ հաւատովք կատա-
ել զննթացս իմ, և հաստատուն պահել
՚ի հաւատս հարանց՝ արժանաւոր լինել յա-
ւիտենական և անեղծական արքայութեան
քումմ։ Եւ ՚ի մերձենալ երեկոյին հրամայ-
եաց կոմսն արկանել զինս ՚ի բանտ։
՚Ո՛վ վաղիւ անդր եւ յուլիանոս՝ ձանձրա-
առնել յանտիոք, չընկալէ՛ ՚ի տես երեսաց
իւրոց զկոմսն. վայ պատուացեալ կոմսին՝
հրամայեաց դահճին ածել զտղարն առաջի
իւր. և ասէ ցնա. զինչ ասես ՚ոմ անուիտ.
զոհեա՝ ոչ պատուիրեաց ինքնակալն, եթէ
ոչ. ընտրեա արդեօք էհատանիլ մեռ, և կորն-
չիլ գառն չարչարանօք։ Ասէ ցնա տղայն. ՚ոմ
գու անուիտ և անոքա, ոչ գիտես՝ քանի փոկա
հաներ յանցեալ աւուր ՚ի թիկանց իմոց,
մինչև ՚ամ տեառդաց ողորմիլ և գտրամիլ. և
այժմ կամօքն քով ողջանդամ յանդիմանեն եղէ
քեզ. և զինարդ չառնուս ՚ի միտ ՚ոմ անմար-
դի։ Ո՛ղէ տուր գիտել բռնաւորին քումմ
յուլիանոսի, եթէ ՚ոչնչի կարօղ է ՚ած, զոր
նա ՚ի քաց եթող, և կորոյս զհոգի իւր՝ խա-
բեալ ՚ի սատանայէ. ՚ոչ յիշեաց, եթէ ՚որպէս
ապրեցոյց զնա ՚ած ՚ի մահուընէ ՚ի ձեռն ՚աք
քաղզեցոյց իւրոց քահանայից՝ Թաքուցեալ
՚ի ՚աք և ՚ի պատանէլն սեղանի եկեղեցւոյ ՚ոմ.
տուաւ անյիշօղ լեալ՝ արտաքս վազեաց, և օգ-
տեալ՝ ՚նալածեաց զկնկնիչ իւր։ Յատատամ
և այնպէս ՚ի բռնաւորութենէ իւրմէ կորնչեաց։
Կոմսն

կոման ասէ. մոլի՛ս ցնորեցե՛ք. զի և ես որպն տիե-
զերաց անյաղթելին յուլիանոս հաւքեր[ք]
քեզ. քանզի մարդասիրութե՛ն յոյժ ցուցեալ՝
հրաման ետ քեզ ոտնակից մեզ լինել յե-
փեսալ ոխս և յանուշահոտութե՛ս կնդրկաց.
բայց դու չկամեցար հաւանել, և ընդհա-
նեցեր ո՛չ փոքր՝ նախ զինքնակալն, երկրորդ՝
և զիս առեալն արարեր. այդ և ես հատուցից
քեզ այնպիսի տանջանօք, որով վաղվաղակի
կարձեմ զքեզ ՚ի կենաց ո՛չ ակն ունիմ. քանզի
հրամայեմ այժմ շամփուրս հրացեալս մեր
յաղիս քո:

Ղուկիոս ասէ. ՚ի քուն իսկ ՚ի բռնաւորէդ
քումմէ ո՛չ երկեայ, ոմն և դու ինքնին քաջ
գիտես. և դու հաստատեցե՛ս քանութ քո այ-
դոքութ երկեղա՛ւկս ինձ արկանել: Յայնժամ
հրաման ետ կոման սրել երկաթս և հրացու-
ցանել, և նովիմբք խոցոտել զնա ընդ թի-
կունս: Ինքեզեր յայն տանջանս էր երանե-
լին՝ տարածեալ ՚ի գետին, ՚ի ձայն բարձր
կարդաց առ տէր, և ասէ. Ո՛յ իմ քե՛, յո՛յս
իմ յե, ապաւոծելոց նաւահանգիստ: Վո-
հանամ զքէն հոյլ, տէր ա՛ծ հարցն իմոց, զի
հաներ զանձն իմ՚ի դժոխոց ներքինոց. անա-
րա՛ծ պահեա զանուն քո յիս. զի զյաղթու-
թինն ՚ի դլուխ տարեալ, և զընդհատից իմ կա-
տարեալ ՚ի քեզ՝ ժառանգորդ եղէց յաւիտե-
նից հանդատեան ըստ խոստմանցն՝ որ առ
հարս մեր ՚ի ձեռն քահանայապետին մե՛ծ
յիս քի՛ տեսն մերոյ. նովաւ ՚ի խաղաղութե՛ն ըն-
կալեալ զհոգի իմ՝ յետ կալոյ միանալոյ ՚ի խոստո-
վա-

վանութեն յայսմիկ. զի դու ողորմած ես, և երկայնամիտ և բազումողորմ. և կենդանի ես և կաս և մնաս յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ իբրև կատարեաց երանելին զաղօթս, իբրև 'ի քաղցր քուն եղեալ՝ աւանդեաց զոգին ը խոցոտիչ շամփրովք, յամի տն 363, 'ի ի թ աւուր յունիսի, կմ յունվարի, 'ի փառս քն ի տ մերոյ, և 'ի պարծանս նբյ եկեղեցւոյ։

Այլ է և բասիլիոս վկայ Ծիկ 'ի քաղաքէ անտի անկիւրացւոց, որ յաւուրս նորին յուլիանոսի դատեալ 'ի նմին սատոռնինոսէ, կամ 'ի տարբեղոսէ դատաւորէ վն անուանն քն ի քերանօք, առաքեցաւ կապանօք յանկիւրիոյ 'ի կոստանդնուպօլիս. և անդ ևս փորձեալ յեպարքոսէ բազմօք՝ մինչև անցանել և ընդ հուր, առաքի և անտի կապանօք 'ի կեսարիա կապադովկացւոց. ուր արկեալ առաջի գազանաց 'ի թէատրոնի՝ գիշատեցաւ 'ի մատակ առիւծէ. զորոյ զպատուական նշխարս ժողովեալ ազգականաց նր և ծանօթից՝ շինեցին վկայարան յանուն նբյ նահատակին. և սորա ևս յիշատակ լինի 'ի հին օրինակս յայսմաւուրաց մերոց 'ի յունվարի 14. ոպ և առ յոյնս 'ի յունվարի. 2։

Ծ Ա.

XXXX

եպս գնա կարծելն վենետաիա: Բայց ի Հ. ի վարս բանիլեսկոսն չկան այսպիսի վերնագիր. սեա՛ն մայիսի 25. որ սկսանի, * Սբ վկայն քոն բանիլեսկոս ||, կամ ըստ որ ինքն: * Մարտիրոսն քոն բանիլեսկոս ||. ուր է քաղաքացի վկայաբանութեան՝ այլոյ մասամբ համաձայն ձայն Ճառընտրաց. նոյնպէս և ի յայտարարս այլոց ազգաց.

Այլ չիմանամ է ի Հ. յունվ. 2. ուր գրի. * յայտ, սեռ վկայաբանութեն ... սէյն բանիլեսկոսի քաղ, մանչարչար նահատակի (կճ վկայն) ի կեսարիա, որ ի յուլիանոսե չարչարեցաւն վո քոն ||. փոխ գրելոյ * բանիլեոսի կճ բանիլեսկոսի քահանայի յանկիւրիա ||. են. յայտ է թէ չիմանալով ըստ միւս բանիլեոսի վկայն անկիւրացւոյ, որ ի կեսարիա կատարեցաւ առ նովին յուլիանոսիէ. որոյ և յիշատակ կայ ի յունվարի 14. ըստ հին օրինակաց այսպէս. * յայտարար կատարեցաւ „ յառաջէ նը վկայն բանիլեոս յամս յուլիանոսի ի կեսարիա կապադովկացւոց ||: Եւ ահա ի բարձուցն չիմանալեցս ամի եգաք զուրըն ուրըն վկայաբանութեն միոյ միոյ ի տեցս:

(2) Հեղինակ պանծալի վկայաբանութես ճանաչի եւ սիգնիոս ոմն գրիր ականատես. զոր և նոյն համարել բոլանդեանց ըստ ոչն եւ սիգնիոսի վկայի նահատակելոյ առ նովին յուլիանոսիէ, և յիշատակելոյ ի Լ. յօգոստ. 5. առանց ըստ բան ինչ ածելոյ հաստատեն զբովանդակ գրուեթն նր. միայն ցաւին իրաւամբք, զի չեն գտեալ զբնագիրն յունական, այլ միայն զլատին թարգմանութեթն ի հին մատեանս վանաց սբոյն մաքսիմիանոսի ի տրեվիր: Նոյն ցաւ և մեզ ի ձահ պատահէ. զի թէպետ և ունիմք զհայերէն հին թարգմանութեթն ի ձառընտրի սերա մեր, այլ ի չգոյէ յունարէն օրինակի անգիտաց. նամք, մի տեսեալ ընտրելն իցէ. օրինակ մեր՝ եթէ բոլանդեանցն: Իսկ խոսիր երկոցունցն այս է:

Նախ՝ մերս է բազմօք հաստատ, նոցայն բազմօք ընդձակագոյն, և այն նաև ըստ երևելի հանգամանաց պատմութեն. Թէպետև բազում մասամբ բան առ բան ընթանան. միդ զի անհնար մարթ է ասել. Թէ մերս է ծագելաքաղ միւսոյն, կամ Թէ այն է ռեկնատանեալ ընդայնումն մերոյն: Երկրորդ՝ Թէպետև ի տեղիս տեղիս ընթերցուածք մեր երևի ուղղագոյն քան զլատինն, բայց կան և յայտնի վրիպակք անուճանց ի մերումն՝ խառնեալ ընդ զդատաւորն ըստ Թագաւորն, և այլ ևս բանք մթինք

կի՛ կեղակալծելիք· զորս իրաւամբք ուղղապրել պէտք եղեն· քայց մի առ մի ծանուցանել առ զի՛ տարբերութիւնս (զորս հաւաքեալ էր մեր երկայնմտութիւ) եւկար լինէր և աւելորդ· շատ լիցի ասել, թէ մեք հաստատակօրէն զմեր ընթերցուածս պահեցաք, և դուն ուրեք ինչ ինչ յատմարեցաք ըստ ընթերցուածոյ բուլղաթեանց· մինչև յուսական սկզբնագիր՝ ի վեր երևեսցի·

և յայնժամ քակիկ ևս ընտրութիւն լինիցի։

(3) Իսկ զերկրդ վկայաբանութիւնն՝ զորոյ զհայերէն թարգմանութիւնն չունեաք՝ ի ձեռին, մեք նորոգ թարգմանեցաք՝ փոյթ մի համառօտելով՝ ի յունական բնագրէ, զոր բերեն բուլղաթեանք՝ ի ոճե մատենէ վաստկանեան գրատան։ Գտաւճած նորին է և՝ ի 3. մարտի· 22· ոտ և արաբացիք՝ ինամին աւուր յիշեն * զբասիլեոս քահանայ և վկայ ‖։ Ծանուցանեն բուլղաթեանք՝ ի յինվ· 2· թէ * վկայաբանութիւնն գասղնբեղգիական՝ ի սյն օր վերածէ զբասիլեոս քահանայն, և զանց առնէ՝ ի 22· մարտի ‖։ Ջնոյն ունիմք ասել և մեք զյայտաւուրացս մերոց· մինչև կարծել մեզ, թէ՝ ի վաղուց հետէ կայր յամ ազգս չփոթութիւն ինչ՝ ի մէջ երից վկայից, ՚ի բասիլիսկոսի ամասիացւոյ, բասիլեոսի քահանայի անկիւրացւոյ, և միւս բասիլեոսի վկայի անկիւրացւոյ· այլ յուսամք թէ որոշուիցէ վկայաբանութենէ կարօղ են իմաստուն՝ քակ զանազանել զնա յիրերաց· և ընդմին հետևեցուցանել, թէ՝ ի ոտնել մեր զբասիլիսկոս քահանայ՝ զօրութիւնք լմացեալ լինին երկու վկայք մերձաւորք անուամբ, բասիլիսկոս զօրական, և բասիլեոս քահանայ։ Վասիլիօս յունարէն նշանակէ արքունի կամ թագաւորական, և վասիլինագօս՝ արքայիկ, կամ թագաւորազն· երկոցունց ևս կցորդի ձայնս վասիլիգօս, ՚ի արքայական· ըստ որոյ բասիլիսկոսն կոչի՝ ի մեզ նաև բասիլիկոս· ոտ է տեսանել՝ ի Ճառընտիրս, ՚ի վարս ոսկեբերանի, և յօրինակս ինչ ոտնացուցի։

՚Ի վախճանի զարմանալի Թուի մեզ և այն, զի որպէս առընթեր բասիլիսկոսի դնի՝ ի ոտնացոյցս մեր անուն քահանայ՝ արտաքոյ սովորութեանէ այլոց ազգաց, նոյնպես և՝ ի հեռաւորդ ոտնի՝ (որով ունի սկսանիլ յաջորդ հատոր գործոյս) նաև անատոս վկայն, որ երբեմն զօրական էր, և ապա կրօնաւորեցաւ, կոչի քահանայ· զոր այլք պարզապէս աբեղայ կամ միայնակեաց կոչեն՝ առանց յիշելոյ զքահանայութիւնն· ոտ տեսցի յիւրում տեղւոջ։

ՁԱՆԿ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ
ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ
որ 'ի հատորն. Է.

		երես.
ա.	Դրիգորիսի աղուանից կաթողիկոսի՝ գիւտ նշխարաց . .	5
բ.	Թաթլոյ և վարոսի և թումասու	22
գ.	Անտոնի և կրօնիդեայ . . .	33
դ.	Եօթն խոտաճարակաց . . .	41
ե.	Անանիայ առաքելոյն . . .	51
զ.	Երկոտասան վդ̄պաց. մանաւանդ Յռեթէոսի	57
է.	Մատաթեայ առաքելոյ . . .	69
ը.	Բառնաբայ առաքելոյ . . .	88
թ.	Փիլիպպոսի աւետարանչի . .	120
ժ.	Յովհաննու մարկոսի	126
ժա.	Շիղայի (և) Սիղուանոսի . .	133
ժբ.	Դիոնեսիոսի արիսպագացւոյ .	139
ժգ.	Տիմոթէոսի առաքելոյն . . .	181
ժդ.	Տիտոսի առաքելոյն	189
ժե.	Մատթէոսի աւետարանչի . .	203
ժզ.	Մարկոսի աւետարանչի . . .	222
ժէ.	Ղուկասու աւետարանչի . .	253

(Եր-

(Երկրորդումն տօնից Յովհ. աւետ. Ղուկիանոսի քահանայի. և աշակերտաց պօղոսի) 269
ժը. Տարագոսի, պրոբոսի, և անդրոնիկոսի վկայից 271
ժԹ. Պեղագեայ կուսի 'ի տարսոն . 281
Պեղագեայ կուսի յանտիոք . 289
Պեղագեայ ապաշխարողի անտիոքացւոյ 295
Ի. Ղունկիանոսի հարիւրապետի . 319
Ղոնկինոսի զինաւորի . . . 337
իա. Յովսեփայ ա̅ծահօր 362
իբ. Յովսեփայ արեմաթացւոյ . . 381
(Երկրորդումն տօնի Կանանցն իւղաբերից) . . 393
իգ. Ղազարու բարեկամին ք̅ի. և քերց ն̅ր Մարթայի և Մար". զոյգ ը̅ Մագդաղենացւոյն . 394
իդ. Թէոդորիտեայ քահանայի . . 427
իե. Եւդոքսեանց և Օենոնեանց . 447
իզ. Խարիթեանց, կմարեթեանց . 480
իէ. Ըրտեմեայ վկային 511
իը. Դեմետրեայ վկայի 521
իԹ. Բասիլիսկոսի զօրականի, և . 546
Բասիլիոսի քահանայի . . . 562

ԿԸԽՃԸԾ

Հատորիս

595







[35 ռ.]

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ՄԱՏԵՆԱՐԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1971 թ.







БИБЛИОТЕКА